ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՋԴԱԳԻՐ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ»

բաց բաժնետիրական ընկերության կողմից թողարկվող

պարտատոմսերի վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ 2026

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ»

Թողարկողի անվանումը

բաց բաժնետիրական ընկերություն

Կազմակերպաիրավական ձևը

Արամի 82-84, Երևան 0002, ՀՀ
Հեռ՝ +(374)10 31 88 88 Ֆաքս՝ +(374)10 54 34 85
Էլ. փոստ՝ acba@acba.am
Կայք՝ www.acba.am

Արժեթղթերի տեսակը՝ անվանական, արժեկտրոնային պարտատոմս,

Արժեթղթերի ձևը՝ ոչ փաստաթղթային,

Արժեթղթերի քանակը՝ Առավելագույնը՝ 500,000 (հինգ հարյուր հազար) հատ ՀՀ դրամով, 500,000 (հինգ հարյուր հազար) հատ ԱՄՆ դոլարով,

Արժեթղթերի անվանական արժեքը՝ 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար,

Արժեթղթերի թողարկման ծավալը՝ Առավելագույնը՝ 50,000,000,000 (հիսուն միլիարդ) ՀՀ դրամ, 50,000,000 (հիսուն միլիոն) ԱՄՆ դոլար,

Շրջանառության ժամկետը՝ Ենթակա է որոշման Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի կողմից պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխումից առաջ, սակայն ոչ պակաս քան 2 տարի և ոչ ավել քան 5 տարի մարման ժամկետով :

«ԱԿԲԱ ԲԱՆԿ»

Տեղաբաշխողի անվանումը

բաց բաժնետիրական ընկերություն

Կազմակերպաիրավական ձևը

Արամի 82-84, Երևան 0002, ՀՀ
Հեռ՝ +(374)10 31 88 88 Ֆաքս՝ +(374)10 54 34 85
Էլ. փոստ՝acba@acba.am
Կայք՝ www.acba.am

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ 4

ԲԱԺԻՆ 2. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ 6

2.1. Տեղեկատվություն Բանկի և նրա գործունեության վերաբերյալ 6
2.2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկեր 17
2.3. Բանկի զարգացման միտումները 19
2.4. Աուդիտն իրականացնող անձինք և խորհրդատուներ 21
2.5. Ղեկավարությունը և բաժնետերերը 21
2.6. Պարտատոմսերի հիմնական տվյալները 23
2.7. Պարտատոմսերի առաջարկի նկարագիրը 24
2.8. Ամփոփ ֆինանսական տվյալներ 25

ԲԱԺԻՆ 3. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 28

3.1. Ռիսկային գործոններ 28
3.2. Հիմնական տեղեկատվություն 29
3.3. Պարտատոմսերի վերաբերյալ տեղեկատվություն 30
3.4. Առաջարկի ժամկետները և պայմանները 46
3.5. Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը 55
3.6. Լրացուցիչ տեղեկատվություն 57

ԲԱԺԻՆ 4. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 59

4.1. Անկախ աուդիտորներ 59
4.2. Ռիսկային գործոններ 59
4.3. Տեղեկատվություն թողարկողի մասին 66
4.4. Բիզնեսի նկարագիրը 86
4.5. Թողարկողի կառուցվածքը 90
4.6. Զարգացման վերջին միտումները 91
4.7. Բանկի կառավարման մարմինները և դրանց անդամները 96
4.8. Հսկող անձինք 127
4.9. Ակտիվներ և պարտավորություններ, ֆինանսական վիճակ 127
4.10. Էական պայմանագրեր 129
4.11. Մասնագիտական կարծիքներ 129
4.12. Այլ տեղեկատվություն 129

ԲԱԺԻՆ 5. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 130

5.1. ՀԱՎԵԼՎԱԾ 1. «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կողմից թողարկված պարտատոմսերի ձեռք բերման հայտ իրավաբանական անձանց համար 130
5.2. ՀԱՎԵԼՎԱԾ 2. «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կողմից թողարկված պարտատոմսերի ձեռք բերման հայտ ֆիզիկական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար 131
5.3. ՀԱՎԵԼՎԱԾ 3. Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը 132
5.4. ՀԱՎԵԼՎԱԾ 4. Բանկի կազմակերպական կառուցվածքը 135
5.5. ՀԱՎԵԼՎԱԾ 5. Թողարկման վերջնական պայմաններ 136
5.6. ՀԱՎԵԼՎԱԾ 6. Ֆինանսական հաշվետվություններ 143

acba

ԲԱԺԻՆ 1. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը»:

Ստորագրող անձինք՝

Սոնա Իշխանյան (անուն, ազգանուն)	Խորհրդի նախագահ (պաշտոն)	(ստորագրություն)	25.08.2026թ. (ամսաթիվ)
Վարդան Ոսկանյան (անուն, ազգանուն)	Խորհրդի անդամ (պաշտոն)	(ստորագրություն)	25.08.2026թ. (ամսաթիվ)
Գայանե Հայրապետյան (անուն, ազգանուն)	Խորհրդի անդամ (պաշտոն)	(ստորագրություն)	25.08.2026թ. (ամսաթիվ)
Արամ Բաբայան (անուն, ազգանուն)	Խորհրդի անդամ (պաշտոն)	(ստորագրություն)	25.08.2026թ. (ամսաթիվ)
Հարություն Փախչանյան (անուն, ազգանուն)	Խորհրդի անդամ (պաշտոն)	(ստորագրություն)	25.08.2026թ. (ամսաթիվ)
Հարություն Պողոսյան (անուն, ազգանուն)	Խորհրդի անդամ (պաշտոն)	(ստորագրություն)	25.08.2026թ. (ամսաթիվ)

Հակոբ Անդրեասյան (անուն, ազգանուն)	Գլխավոր գործադիր տնօրեն (պաշտոն)	(ստորագրություն)	25.02.2026թ. (ամսաթիվ)
Ստյոպա Զաքինյան (անուն, ազգանուն)	Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ-Ֆինանսական տնօրեն (պաշտոն)	(ստորագրություն)	25.02.2026թ. (ամսաթիվ)
Արմեն Հակոբյան (անուն, ազգանուն)	Գլխավոր հաշվապահ (պաշտոն)	(ստորագրություն)	25.02.2026թ. (ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում եմ՝

Հակոբ Անդրեասյան (անուն, ազգանուն)	Գլխավոր գործադիր տնօրեն (պաշտոն)	(ստորագրություն)	25.02.2026թ. (ամսաթիվ)

Կ.Տ.

ԲԱԺԻՆ 2. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

Ամփոփաթերթը պետք է դիտվի որպես ազդագրի ներածական համառոտ նկարագրություն: Առաջարկվող արժեթղթերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական ծրագրային ազդագրի վրա:

Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձը կրում է քաղաքացիական պատասխանատվություն:

Ներդրողը Ծրագրային Ազդագիրը և Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը թղթային եղանակով կարող է ձեռք բերել Բանկի կենտրոնական գրասենյակում կամ մասնաճյուղերում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ Բանկի ինտերնետային կայքում՝ **www.acba.am:**

Հարկ է նշել նաև, որ Ազդագրում ներկայացված բոլոր ֆինանսական ցուցանիշները հաշվարկված են «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

2.1. Տեղեկատվություն Բանկի և նրա գործունեության վերաբերյալ

2.1.1. Թողարկողի փվյալները և կապի միջոցները

Բանկի լրիվ անվանումն է՝

հայերեն՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն
անգլերեն՝ “ACBA BANK” Open Joint Stock Company

Բանկի կրճատ անվանումն է՝
հայերեն՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ»
անգլերեն՝ “ACBA BANK”

Բանկի պետական գրանցման վայրն է՝ Արամի 82-84 շենք, 89, 99, 100 տարածքներ Երևան 0002, ՀՀ

Բանկի պետական գրանցման համարն է՝ 70

Բանկի գտնվելու վայրն է՝ Արամի 82-84 շենք, Երևան 0002, ՀՀ

Կապի միջոցները՝ Հեռ՝ +(374)10 31 88 88
Էլ. փոստ՝ **acba@acba.am**
Ինտերնետային կայք՝ **www.acba.am**

Ներդրողները պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում կարող են դիմել «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ում (այսուհետ նաև՝ Թողարկող կամ Բանկ) իրենց սպասարկող մասնաճյուղեր, ինչպես նաև Բանկի Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի աշխատակիցներին՝ հետևյալ հեռախոսահամարներով՝ +(374)10 31 88 88 (0067), և էլեկտրոնային հասցեով՝ **investment@acba.am**:

2.1.2. Թողարկողի համառոտ պատմությունը և ռազմավարությունը

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն Հայաստանում գործող ունիվերսալ բանկ է, որը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, և որի գործունեությունը կարգավորվում է ՀՀ ԿԲ կողմից: Բանկի պետական գրանցման համարն է 0170: Բանկն իր գործունեությունն իրականացնում է թիվ 70 լիցենզիայի հիման վրա և հանդիսանում է ՀՀ Ավանդների երաշխավորման հիմնադրամի անդամ:

Բանկի պատմությունն ու զարգացումը

1995թ. օգոստոսի 28-ին ստեղծվեց «Հայաստանի Գյուղացիական Փոխօգնության Բանկ» կոոպերատիվ բանկը (Հայգյուղփոխբանկ), իսկ բանկային գործունեության լիցենզիան ստացավ 1996 թվականի մարտի 29-ին: Բանկի գործունեությունն ի սկզբանե ուղղված էր նորանկախ Հայաստանի գյուղատնտեսության ֆինանսավորմանը և տվյալ ժամանակաշրջանի ֆինանսատնտեսական պայմաններում գործող գյուղատնտեսությունների աջակցությանը: 1996թ. Բանկը տրամադրում էր միայն կարճաժամկետ սեզոնային գյուղատնտեսական վարկեր: Ստեղծմանը հաջորդող տարիներին Բանկն աստիճանաբար սկսեց տրամադրել նաև վարկեր գյուղացիական միջավայրում իրականացվող ոչ գյուղատնտեսական ծրագրերի իրականացման նպատակով, իսկ 1999թ.-ից՝ նաև փոքր և միջին բիզնեսի զարգացման համար:
Նույն տարում Բանկն թղթակցային հաշիվներ բացեց ֆրանսիական Credit Agricole և հոլանդական ABN AMRO բանկերում:

2000թ. Բանկի գործունեությունը բարձր գնահատականների արժանացավ միջազգային ասպարեզում, մասնավորապես բրիտանական Financial Times հեղինակավոր կազմակերպության The Banker ամսագրի կողմից Բանկը առաջին անգամ ճանաչվեց Հայաստանում տարվա լավագույն բանկ: Հետագայում նույն պարբերականի կողմից Ակբա բանկը բազմիցս ճանաչվեց Հայաստանում տարվա լավագույն բանկ: ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ու ՀՀ ԿԲ-ի կողմից Ակբա բանկը ճանաչվեց պետական պարտատոմսերի շուկայում լավագույն դիլեր: 2000թ.-ից մինչ օրս Բանկը հանդիսանում է «Արմենիան քարդ» ՓԲԸ պրոցեսինգային կենտրոնի հիմնադիր անդամ:

2001թ. Բանկը թողարկեց իր առաջին ArCa Classic վճարային քարտը:

2002թ. Բանկը դարձավ VISA International միջազգային վճարային համակարգի լիիրավ անդամ: Հայաստանում առաջին անգամ Ակբա բանկի կողմից թողարկվեցին VISA համակարգի վճարային քարտեր՝ Electron, Classic, Business և Gold տեսակի:
Ակբա բանկը ՀՀ բանկային համակարգում տարիներ շարունակ առաջատար դիրքեր է գրանցել իրական հատվածի վարկային ներդրումների ծավալով:

Ակբա բանկը ՀՀ առաջին բանկն է, որին միջազգային աուդիտորական ընկերության կողմից շնորհվել է որակի կառավարման միջազգային համակարգի ISO 9001:2000 արտոնագիր: Նույն տարում Բանկը ձեռք է բերել VISA International վճարահաշվարկային համակարգի արտոնագիր՝ առևտրի և սպասարկման կետերում այլ բանկերի թողարկած VISA քարտերի սպասարկման համար:

2003թ. ստեղծվեց առաջին գրանցված մասնագիտացված լիզինգային ընկերությունը Հայաստանում՝ «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ-ն: Ընկերության հիմնական նպատակներն էին օժանդակել տնտեսության բոլոր ոլորտներում գործող մանր և միջին ձեռնարկություններին, գյուղացիական տնտեսություններին, ձեռք բերել սարքավորումներ և արտադրական միջոցներ միջին ժամկետի ֆինանսավորման միջոցով:

2006թ.-ից ֆրանսիական հեղինակավոր «ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Էս. Էյ.» բանկային խումբը դարձավ բանկի բաժնետեր՝ 28% մասնաբաժնով, և Բանկը նույն թվականի սեպտեմբերի 9-ին բանկի Ընդհանուր ժողովի որոշմամբ վերակազմակերպվեց ու վերանվանվեց «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության՝ գործելով այդպես մինչև 29.04.2020թ., երբ Բանկը նորից վերակազմակերպվեց:

2007թ. Fitch Ratings վարկանիշային գործակալությունը բանկին շնորհեց երկարաժամկետ թողարկողի BB վարկանիշ (կայուն հեռանկարով): Նույն տարվա օգոստոսին Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (EBRD) աշխարհում խոշորագույն բանկերից մեկի՝ Citigroup-ի հետ համատեղ, Հայաստանի բանկային պատմության մեջ առաջին անգամ բանկին տրամադրեց սինդիկացված վարկ, որն ուղղվեց Հայաստանում գործող փոքր և միջին (այդ թվում՝ Հայաստանի հեռավոր վայրերում գործող) ձեռնարկությունների վարկավորմանը:

2009թ. Բանկը, չնայած համաշխարհային տնտեսական և ֆինանսական ճգնաժամի հետևանքով ստեղծված անբարենպաստ իրավիճակին, բանկային գործունեության գրեթե բոլոր կարևորագույն ցուցանիշներով շարունակեց մնալ առաջատարը և պետական բյուջե մուծված հարկերի ծավալով ՀՀ բանկային համակարգում դարձավ առաջինը:

2010թ. Բանկն առաջին անգամ ՀՀ բանկային պատմության մեջ հատեց իրական հատվածում կատարված վարկային ներդրումների ծավալով 100 մլրդ ՀՀ դրամ սահմանագիծը: Նույն թվականին Բանկը Հայաստանի բանկային համակարգում միակն էր, որը թողարկեց և սպասարկեց միջազգային 3 խոշոր (American Express, Visa International, Mastercard) և մեկ ազգային (ArCa) վճարահաշվարկային համակարգերի քարտեր: Նույն տարվա ընթացքում միջազգային փոխանցումների կատարման բարձր որակ ապահովելու համար Գերմանական «Commerzbank AG» բանկը Ակբա բանկին շնորհեց «Որակի գերազանցության» մրցանակ:

2011թ. ՀՀ կառավարության կողմից իրականացվեց գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր, որի շրջանակում տրամադրված վարկերի ավելի քան 94%-ը տրամադրվեց Ակբա բանկի կողմից:

Նույն տարում ՈւԵՖԱ Չեմպիոնների Լիգայի հետ համատեղ Բանկը թողարկեց Mastercard UEFA Champions League քարտատեսակը և բացառիկ իրավունքով թողարկեց American Express համակարգի երկրորդ տեսակի՝ American Express Blue քարտը:

2013թ. Եվրոպայի առաջատար ակտիվների կառավարիչ «Ամունդի Ասեթ Մենեջմենթ» ընկերության հետ Ակբա բանկը հիմնադրեց «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն: Ամունդին իր կառավարման ներքո գտնվող ակտիվներով Եվրոպայի առաջատար ակտիվների կառավարիչն է:

Հանդիսանալով Հայաստանի խոշոր կազմակերպություններից մեկը՝ Բանկը ներդրեց Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության համակարգ, որի գերակա ուղղություններն էին սահմանամերձ հեռավոր բնակավայրերի աջակցությունը, շրջակա միջավայրի պաշտպանությունը, պատմամշակութային արժեքների պահպանությունը և երիտասարդությանն ուղղված ծրագրերի իրականացումը:

2015թ. Բանկը ներդրեց հեռահար բանկային ծառայությունների տրամադրման նոր գործիք՝ ACBA Mobile հավելվածը, որը թվային տրանսֆորմացիաների առաջին քայլն էր: Համակարգը փորձարկելուց հետո այն շարունակեց կատարելագործվել՝ նոր հնարավորություններ առաջարկելով հաճախորդներին:

Բանկն իրականացրեց նաև կառուցվածքային փոփոխություններ, որոնց արդյունքում ձևավորվեցին բանկային գործունեության հիմնական 3 բիզնես ուղղությունները՝ գյուղատնտեսական, մանրածախ, ՓՄՁ և կորպորատիվ:

2017թ. Ակբա բանկը և կորպորատիվ բիզնես լուծումների շուկայում ողջ աշխարհում առաջատար SAP ընկերությունը ստորագրեցին ծրագրային ապահովման ձեռքբերման պայմանագիր, որով Բանկը SAP-ի կողմից ստեղծված ժամանակակից լուծումների կիրառման միջոցով փուլային եղանակով իրականացնում է բանկի ամբողջական թվային տրանսֆորմացիա:

Բանկի թվային տրանսֆորմացիայի արդյունքում Բանկը կարողանում է ինտերակտիվ արձագանքել հաճախորդների պահանջներին և տրամադրել այն ծառայությունների փաթեթներն ու լուծումները, որոնք լավագույնս բավարարում են նրանց կարիքներին և առավելագույնս արդյունավետ են բանկի տեսանկյունից:

Նույն տարում Բանկը թողարկեց ռուսական МИР վճարային համակարգի նոր «ԱՐՔԱ-ՄԻՐ» չիպային քարտերը:

2018թ. բանկն ընդլայնեց իր գործընկերների շարքը միջազգային քարտային բիզնեսում: Այսպես, ճապոնական JCB Co. International-ի և Ակբա բանկի համագործակցության

արդյունքում Հայաստանում առաջին անգամ սկսվեց աշխարհում շուրջ 117 մլն քարտապան ունեցող JCB քարտերի սպասարկումը:

2019թ. Ակբա բանկի և չինական UnionPay International-ի համագործակցության արդյունքում Հայաստանում մեկնարկեց UnionPay քարտերի սպասարկումը:

2020թ. ապրիլի 29-ին բանկի Ընդհանուր ժողովի որոշմամբ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն վերակազմակերպվեց և վերանվանվեց «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության:

2021թ. բանկն իրականացրեց վերաբրենդավորում և հասարակությանը ներկայացավ նորովի՝ պահպանելով բանկի լավագույն արժեքներն ու ավանդույթները: Այսուհետ Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկը սկսեց հանդես գալ որպես **Ակբա բանկ**:
Նույն տարում իրականացվեց աշխատակիցների՝ Ակբա բանկի բաժնետեր դառնալու գործընթացը: Ակբա ֆինանսական խմբի աշխատակիցների շուրջ 75%-ը դարձավ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետեր, որից հետո բանկն իրականացրեց բաժնետոմսերի առաջնային հրապարակային տեղաբաշխում՝ թողարկելով 500,000 բաժնետոմս՝ ընդհանուր 7.5 մլրդ ՀՀ դրամ տեղաբաշխման ծավալով: Սահմանված ժամկետներում այս բաժնետոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվեցին: Ակբան դարձավ Հայաստանում ամենաշատ բաժնետեր ունեցող ընկերություններից մեկը: Բանկի բաժնետոմսերը ցուցակվեցին Հայաստանի ֆոնդային բորսայի ամենալիկվիդային A հարթակում:
Նույն տարում Ակբա բանկը Visa International միջազգային վճարային համակարգի հետ համագործակցության արդյունքում Հայաստանում առաջին անգամ գործարկեց վճարումների նորարարական NFC համակարգը: Արդեն 2022թ. Ակբա բանկի հաճախորդներին հասանելի դարձան Apple Pay-ը և Google Pay-ը, որոնցով վճարումներ կատարելը դարձավ ավելի հարմար, ապահով ու արագ:

2023թ. հունիսին ավարտվեց դեռևս 2021թ.-ին մեկնարկած Ակբա ֆինանսական խմբի աշխատակիցների բաժնեմասնակցության ծրագիրը, որի արդյունքում Բանկի, «ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՓԲ ընկերության, «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲ ընկերության աշխատակիցների բաժնեմասը Բանկի բաժնետիրական կապիտալում կազմեց 5.20%:
Նույն տարում Ակբա բանկը մեկնարկեց **Ակբա Բիզնես ակումբը**: Ակումբի նպատակն է Հայաստանում բիզնես ոլորտի զարգացումը, գործարար կապերի ստեղծումը, համագործակցության ավելի մեծ հնարավորություններն ու նոր հեռանկարների ստեղծումը:

2024թ. Բրիտանական աշխարհահռչակ Euromoney ֆինանսական պարբերականը ESG (բնապահպանական, սոցիալական և կառավարում) չափանիշների շրջանակում Ակբա բանկին ճանաչել է Հայաստանի «Լավագույն ESG-Բանկ» (Armenia's Best Bank for ESG):

Ակբա բանկն առաջինը Հայաստանում մեկնարկել է Չինաստանի խոշորագույն UnionPay International վճարային համակարգի UnionPay Gold և UnionPay Business միջազգային քարտերի թողարկումը:

Նույն տարում Բանկը թողարկեց 485,000 հատ հասարակ (սովորական) լրացուցիչ բաժնետոմսեր, որի արդյունքում տեղաբաշխված բաժնետոմսերի ընդհանուր քանակը կազմեց 5,985,000 (հինգ միլիոն ինը հարյուր ութսունհինգ հազար) հատ սովորական բաժնետոմս:

Լրացուցիչ թողարկված բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացվեց փակ բաժանորդագրության եղանակով, գործող բաժնետերերին առաջարկվեց օգտվել բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքից, իսկ այդ իրավունքից չօգտվելու դեպքում բաժնետոմսերն առաջարկվեցին ֆրանսիական «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» հանրային սահմանափակ ընկերությանը (այսուհետ նաև՝ «Պրոպարկո»), որը «Զարգացման ֆրանսիական գործակալության» խմբի (“Agence Française de Développement» կամ AFD) դուստր ընկերությունն է և AFD-ի կողմից մասնավոր հատվածի ֆինանսավորման թևը: Պրոպարկոն ընդհանուր առմամբ ձեռք բերեց Ակբա բանկի 598,500 հատ բաժնետոմսեր, որի արդյունքում վերջինիս մասնակցությունը Բանկի կապիտալում կազմեց 10%:

Լրացուցիչ բաժնետեմսերի տեղաբաշխման հետ միաժամանակ Բանկը համալրեց իր բաժնետիրական կապիտալը չբաշխված շահույթի հաշվին:

Լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման և բաժնետիրական կապիտալի համալրման արդյունքներով Բանկի բաժնետիրական կապիտալի չափը 2024թ. տարեվերջի դրությամբ կազմեց 89,775,000,000 (ութսունինը միլիարդ յոթ հարյուր յոթանասունհինգ միլիոն) ՀՀ դրամ:

2024 թվականին Բանկը միացավ Հայաստանի կորպորատիվ կառավարման կանոնագրքին:

Մինչ այդ, Բանկն առաջնորդվում էր սեփական Կորպորատիվ Կառավարման կանոնագրքով, որն ապավինում էր ՏՀԶԿ, Բազելյան և Մեծ Բրիտանիայի կորպորատիվ կառավարման կանոնագրքի սկզբունքներին:

2025թ. մարտին **Ակբա բանկն** առաջին անգամ Հայաստանում ներկայացրեց Augmented Reality (AR) տեխնոլոգիայով օժտված Visa Signature Limited Edition պրեմիում քարտերի շարքի առաջին թողարկումը, որը ոգեշնչված է Մարտիրոս Սարյանի լեգենդար «Հայաստան» պաննոյով և տպագրվել է ընդամենը 500 սահմանափակ օրինակով:

Նույն տարում Բանկում ներդրվեցին Էթիկայի, Վարքագծի կանոնագրքերը և ազդարարման քաղաքականությունը՝ այդ թվում՝ **Whispli**-ի կողմից գործարկվող Հայաստանի առաջին անկախ ազդարարման հարթակը:

Նույն ժամանակշրջանում Ակբան հաջողությամբ տեղաբաշխեց շուրջ **13.4 միլիարդ ՀՀ դրամով և 10 միլիոն ԱՄՆ դոլարով պարտատոմսեր**:

2025թ. ընթացքում միջազգային ֆինանսական հաստատություններից Ակբան ներգրավեց **76 միլիոն ԱՄՆ դոլարի** ֆինանսավորում՝ հիմնականում ՀՀ դրամով՝ **ՓՄՁ-ներին, գյուղատնտեսությանը և երիտասարդ ձեռնարկատերերին աջակցելու համար:**

Ակբան շարունակել է առաջատար դիրքեր ունենալ թվային բանկային գործունեության և ESG ոլորտում՝ Euromoney-ի կողմից ճանաչվելով **«Լավագույն ESG բանկ»** և **«Լավագույն թվային բանկ Հայաստանում»** անվանակարգերում:

Նույն տարում ներդրվել է նաև **SWIFT ISO 20022** ստանդարտը միջազգային փոխանցումների համար՝ ամրապնդելով միջսահմանային վճարային ենթակառուցվածքը:

Այսօր Ակբա բանկը հանդիսանում է Հայաստանի խոշորագույն ունիվերսալ բանկերից մեկը, որը մանրածախ, գյուղատնտեսական, ՓՄՁ և կորպորատիվ սեգմենտների հաճախորդներին առաջարկում է բանկային ծառայությունների լայն ու բազմազան տեսականի:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ առաքելությունն է՝

Ինքնատիպ և նորարար լուծումներով նպաստել հասարակության կայուն զարգացմանը:

Բանկի տեսլականն է՝

- Լինել առաջին ընտրության բանկը՝ մշտապես առաջարկելով ճկուն և ստեղծարար լուծումներ,
- Լինել ամենաճանաչելի ապրանքանիշը ֆինանսական շուկայում,
- Լինել ֆինանսական շուկայում առաջատարներից մեկը արդյունավետության և շահութաբերության ցուցանիշներով,
- Լինել գյուղատնտեսական ոլորտի խթանիչ,
- Լինել առաջին ընտրության գործատուն ՀՀ ֆինանսական շուկայում:

2.1.3. Բանկի բաժնետիրական *կապիտալը*

Բանկի բաժնետիրական կապիտալը կազմում է 89,775,000,000 (ութսունինը միլիարդ յոթ հարյուր յոթանասունհինգ միլիոն) ՀՀ դրամ: Բանկի բաժնետիրական կապիտալը բաժանված է 5,985,000 (հինգ միլիոն ինը հարյուր ութսունհինգ հազար) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի, յուրաքանչյուրը 15,000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

Բանկի լրացուցիչ տեղաբաշխման ենթակա (հայտարարված) սովորական բաժնետոմսերի քանակը կազմում է 2,500,000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) հատ՝ յուրաքանչյուրը 15,000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով Դրանք այն բաժնետոմսերն են, որոնք Բանկը կարող է տեղաբաշխել, բացի տեղաբաշխված բաժնետոմսերից:

Բանկի բաժնետիրական կապիտալում մեկ բաժնետիրոջը պատկանող Բանկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի առավելագույն քանակ չի սահմանվում:

Բանկի բաժնետերն են հանդիսանում՝

- «ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 75%*,
- «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» Հանրային սահմանափակ ընկերությունը (Պրոպարկո)՝ 10%*,
- Բաժնետոմսերի ազատ շրջանառվող մաս՝ 15%*:

2021թ. ապրիլին «ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՓԲ ընկերության, «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲ ընկերության և Բանկի կողմից համատեղ ներդրվեց «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետիրական կապիտալում ԱԿԲԱ խմբի աշխատակիցների բաժնեմասնակցության ծրագիր, որը բաղկացած էր 2 փուլից: Բաժնեմասնակցության ծրագրի 1-ին փուլի շրջանակներում «ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՓԲ ընկերության, «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲ ընկերության և Բանկի ընդհանուր 1,116 աշխատակիցներին 2021թ. հունիսին հատկացվեցին Բանկի 147,530 հատ բաժնետոմսեր (որը կազմել է բաժնետիրական կապիտալի 2.95%-ը):
Բաժնեմասնկցության ծրագրի 2-րդ փուլը ներդրվեց 2023թ., հունիսին որի արդյունքում էլ հատկացվեցին ընդհանուր 134,430 հատ բաժնետոմսեր:
Ընդհանուր առմամբ, աշխատակիցների բաժնեմասնակցության ծրագրի արդյունքում Բանկի, «ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՓԲ ընկերության, «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲ ընկերության աշխատակիցներին հատկացվել է 281,960 հատ բաժնետոմսեր, (որը կազմել է բաժնետիրական կապիտալի 5.20 %-ը):

2.1.4. Բանկի մասնաճյուղերը

Ներկայումս Բանկն ունի 64** մասնաճյուղ: Բանկի կենտրոնական գրասենյակը և 20 մասնաճյուղերը գտնվում են Երևան քաղաքում, իսկ մնացածը՝ շուրջ 2/3-ը՝ ՀՀ մարզերում: Մասնաճյուղերի հասցեները մանրամասն ներկայացված են **Ազդագրի 4.3.1.5 մասում**:

2.1.5. Բանկի ֆինանսական խմբի կառուցվածքը

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն ԱԿԲԱ ԽՈՒՄԲ ֆինանսական խմբի Մայր կազմակերպությունն է: Խումբը բաղկացած է Բանկից, դրա դուստր և ասոցիացված կազմակերպություններից: Բանկի դուստր կազմակերպությունն է՝ «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ-ն: Բանկի ասոցիացված կազմակերպությունն է՝ «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ն:
«ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ-ն իրականացնում է ֆինանսական լիզինգի գծով գործառնություններ և հիմնադրվել է 2003թ.-ին:
Հարկ է նշել նաև, որ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 28/04/2017թ.-ի որոշմամբ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն (ներկայումս՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ), «ԱԳԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ-ն (ներկայումս՝ «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ) և «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ

* 31.03.2026թ.-ի դրությամբ

**01.07.2026թ.-ի դրությամբ:

ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ն ճանաչվել են որպես ֆինանսական խումբ՝ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԽՈՒՄԲ» անվանմամբ:
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի 14/08/2020թ.-ի որոշմամբ ֆինանսական խումբը վերանվանվել է «ԱԿԲԱ ԽՈՒՄԲ» ֆինանսական խումբ: «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն նշանակվել է որպես «ԱԿԲԱ ԽՈՒՄԲ» ֆինանսական խմբի պատասխանատու անձ:
«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ն իրականացնում է ներդրումային ֆոնդերի կառավարման գործունեություն և հիմնադրվել է 2013թ-ին:

2.1.6. Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը

Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքը ներկայացված է ***Հավելված 4*-ում:**

2.1.7. Բիզնեսի նկարագիրը

Ակբա բանկի գործունեությունը հիմնված է հաճախորդների չորս հիմնական սեգմենտների՝ մանրածախ, գյուղատնտեսական, ՓՄՁ և կորպորատիվ սպասարկման վրա: Բանկը հաճախորդների վերոնշյալ սեգմենտներին սպասարկում է բազմազան պրոդուկտներով և ծառայություններով, սպասարկման լայն ցանցի և ապագային միտված թվային ռազմավարության միջոցով:

Նշված ուղղություններով Բանկի կողմից առաջարկվող հիմնական պրոդուկտներն և ծառայություններն են.

- խնայողական հաշիվներ և ավանդների ներգրավում,
- պարտատոմսեր,
- վարկերի տրամադրում՝ սպառողական, հիփոթեքային, ապառիկ, գյուղատնտեսական և բիզնես բնույթի,
- լիզինգ,
- կրեդիտային և դեբետային վճարային քարտերի թողարկում և սպասարկում,
- արտարժութային գործառնություններ,
- վճարումներ և փոխանցումներ (ներառյալ՝ արագ համակարգերով),
- հեռավար բանկային ծառայություններ,
- ռեեստրի վարումը և կորպորատիվ արժեթղթերի պահառություն,
- տեղական և միջազգային բրոքերային ծառայություններ,
- ֆակտորինգ և առևտրի ֆինանսավորում (ակրեդիտիվներ, երաշխիքներ),
- առևտրի և սպասարկման կետերի համար լուծումներ,
- ապահովագրական ծառայություններ (որպես ապահովագրական գործակալ),
- ոչ ֆինանսական ծառայություններ (Ակբա բիզնես ակումբ, դասընթացներ և խորհրդատվություն):

Հարկ է նշել, որ ելնելով էթիկական չափորոշիչներից և գործարար սկզբունքներից՝ Բանկը չի ֆինանսավորում շրջակա միջավայրը վնասող գործունեությունը, զենքի և զինամթերքի արտադրությունն ու առևտուրը, խաղատների և վիճակախաղերի գործունեությամբ զբաղվող կազմակերպությունները, ինչպես նաև բնապահպանական, սոցիալական և կառավարման (ԲՍԿ) բացառությունների ցանկում ներառված գործունեությամբ զբաղվող անհատներին և իրավաբանական անձանց: Բանկը ակտիվորեն գնահատում է ֆինանսավորվող նախագծերի ազդեցությունը սոցիալական և շրջակա միջավայրի վրա և խթանում է այլընտրանքային էներգիայի և կայուն գործելակերպը բոլոր սեգմենտներում:

Բանկի կողմից մատուցվող ծառայությունների մեջ հատկապես կարևոր տեղ է հատկացվում վարկային ներդրումներին, որոնք կատարվում են Հայաստանի ողջ տարածքում, ինչպես նաև ավանդների կայուն բազայի ընդլայնումը:

Վերջին տարիներին Բանկը զբաղեցնում է երրորդ առաջատար դիրքը բանկային համակարգում՝ ըստ ակտիվների, վարկերի և ավանդների ծավալի: 2025թ. վերջի դրությամբ Բանկի շուկայական մասնաբաժինը կազմել է 8.3%՝ ընդհանուր ակտիվներով, 9.6%՝ ընդհանուր վարկերով և 8.4%՝ ընդհանուր ավանդներով, ինչը վկայում է շուկայում Բանկի ամուր և կայուն դիրքերի մասին: Քարտային բիզնեսը նույնպես Բանկի գործունեության առանցքային ուղղություններից մեկն է: Տարիներ շարունակ քարտերի թողարկման ծավալներով Բանկը պահպանում է շուկայի առաջատար դիրքը: Ներկայումս Բանկը միակն է շուկայում, որ հանդիսանում 4 միջազգային՝ American Express, Visa, Mastercard, UnionPay International և 1 ազգային՝ ArCa վճարահաշվարկային համակարգերի քարտեր թողարկող և սպասարկում է 6 վճարային համակարգեր:

Բանկը հայկական շուկայում 2009թ.-ից բացառիկության հիմունքներով ներկայացնում է American Express ընկերության չորս քարտեր՝ Amex Gold, Amex Gold Debit, Blue և Cashback քարտերը, որոնք իրենց ուրույն լոյալ սեգմենտին են գտել ՀՀ բանկային համակարգում: American Express-ի հետ բացառիկ հիմունքներով համագործակցությունը պարբերաբար երկարաձգվում է:

Բանկն ունի 64* մասնաճյուղ ՀՀ ողջ տարածքում (20 Երևանում, 44 մարզերում)՝ ապահովելով հասանելիություն ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերում (ներկայացված լինելով գրեթե բոլոր քաղաքներում): Ի հավելումն մեր մասնաճյուղային ցանցին, Բանկը շուկայում առաջատար դիրք է զբաղեցնում բանկոմատա-տերմինալային ցանցով՝ ներկայացված լինելով ՀՀ բոլոր քաղաքներում: Բանկի ֆիզիկական ենթակառուցվածքը համալրված է հզոր թվային ուղիներով, AcbaMax տերմինալներով և Հեռախոսային կենտրոնով, ինչը հնարավորություն է տալիս օգտվել

* 01.07.2026թ.-ի դրությամբ:

բանկային ծառայություններից 24/7 ռեժիմով՝ ցանկացած պահի և ցանկացած վայրից: Բանկի թվային պլատֆորմները շուկայում ամենաշատ օգտագործվողներից են, իսկ թվային ծառայությունների օգտագործման կայուն աճը հաստատում է, որ թվային ուղիները դարձել են բանկային գործառնությունների հիմնական միջոց:

Ակբա բանկն ունի ամենալայն մասնաճյուղային ցանցերից մեկը, նաև՝ ավելի քան 1,900 աշխատակից, ինչի շնորհիվ հանդիսանում է Ֆինանսական շուկայի ամենախոշոր գործատուներից մեկը:

Ստեղծման օրից մինչ այսօր Ակբա բանկը գրանցել է դինամիկ զարգացման կայուն տեմպեր: Բանկն իր ֆինանսական կայունության և հուսալիության շնորհիվ ձեռք է բերել մեծ հեղինակություն և վստահություն ինչպես Հայաստանում, այնպես էլ միջազգային ֆինանսական ասպարեզում՝ ներգրավելով նոր գործընկերներ:

2.1.8. Ակտիվների որակը

Ստորև ներկայացվում է Բանկի ակտիվների և եկամտաբեր ակտիվների ամփոփ բնութագիրը.

Հազ. ՀՀ դրամ

	31.03.2026թ. (Աուդիտ չանցած)	31.12.2025թ.	31.12.2024թ.	31.12.2023թ.
Ակտիվներ, այդ թվում՝	1,090,984,824	1,062,519,621	931,697,149	783,793,780
Եկամտաբեր ակտիվներ, այդ թվում՝	945,147,454	902,746,633	772,906,890	659,439,213
Պահանջներ հաճախորդների նկատմամբ*	755,368,166	736,539,712	629,315,853	538,605,763
Պետական արժեթղթեր *	3,396,134	3,314,315	12,571,293	18,238,634
Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը *	86.6%	85.0%	83.0%	84.1%
Բանկի բարձր իրացվելի ակտիվներ/Ընդհանուր ակտիվներ Ն²1 (Աուդիտ չանցած)	27.1%	23.8%	25.4%	24.0%

* Աղյուսակում ներառված ֆինանսական տվյալները ստացվել են համապատասխան ժամանակաշրջանների աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններից, բացառությամբ «*» նշանով նշված տվյալների, որոնց հաշվարկման մանրամասները բացահայտված են Հավելված 3-ում:

2.2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկեր

2.2.1. Թողարկողին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Թողարկողին առնչվող ռիսկերի ամբողջական նկարագրությունը ներկայացված է **Ազդագրի 4.2.** մասում:

Իր գործունեության ընթացքում Բանկն առնչվում է հետևյալ հիմնական ռիսկերին.

Վարկային ռիսկ - Բանկը ենթարկվում է վարկային ռիսկի, որն իրենից ներկայացնում է ֆինանսական վնաս կրելու ռիսկը, երբ փոխառուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները Բանկի նկատմամբ, որն ազդում է վերջինիս գործունեության վրա, առաջացնում լրացուցիչ ծախսեր և բացասական անդրադառնում շահույթի վրա:

Իրացվելիության ռիսկ - Իրացվելիության ռիսկը հավանականություն է, որ Բանկը բավարար իրացվելի միջոցներ չի ունենա պարտավորությունները ժամանակին մարելու համար:

Տոկոսադրույքի ռիսկ - Տոկոսադրույքի ռիսկը շուկայում տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխություններով պայմանավորված բանկի կողմից կորուստ կրելու հավանականությունն է:

Արտարժութային ռիսկ - Արտարժութային ռիսկը հավանականություն է, որ արժույթի փոխարժեքի տատանումները բացասական ազդեցություն կունենան բանկի կապիտալի և/կամ շահույթի վրա:

Գործառնական ռիսկ – տեխնիկական անսարքության, ներքին գործընթացների, համակարգերի և մարդկային գործոնի արդյունքում առաջացող կորուստների հավանականությունն է:

Օրենսդրական և նորմատիվային դաշտի փոփոխության ռիսկ – Բանկը գործում է ՀՀ տնտեսության ամենավերահսկվող հատվածներից մեկում: Բանկային գործունեությանը վերաբերող իրավական և օրենդրական դաշտի անբարենպաստ կամ անցանկալի փոփոխությունները ներառյալ բանկերի նկատմամբ կիրառվող տնտեսական նորմատիվների հնարավոր խստացումները կարող են բացասաբար ազդել Բանկի շահութաբերության ցուցանիշների վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ օրենսդրական փոփոխությունները կարող են ազդել պարտատոմսերի գրավչության և արդյունքում՝ իրացվելիության վրա:

Համբավի ռիսկ - հավանականությունն է, որ Բանկի վերաբերյալ հանրության բացասական կարծիքը կհանգեցնի հաճախորդների թվաքանակի նվազմանը, կոնտրագենտների/հաճախորդների հետ իրականացվող գործառնությունների ծավալի կրճատմանը, ծախսատար դատական գործընթացների և եկամտաբերության անկմանը: Այս առումով Բանկը բարձր է գնահատում իր բարի համբավը և գործադրում լավագույն ջանքեր Բանկի հեղինակության պահպանման ուղղությամբ:

Երկրի ռիսկ - հավանականությունն է, որ երկրում տեղի ունեցող տնտեսական, սոցիալական և (կամ) քաղաքական պայմանները կամ իրադարձությունները բացասական ազդեցություն կունենան բանկի ռիսկի պրոֆիլի, իրացվելիության, կապիտալի և (կամ) շահույթի վրա:

Մրցակցային պայմանների ռիսկ - շուկայում մրցակից բանկերի կողմից առավել բարենպաստ պայմաններով նույնանման ծառայությունների մատուցման հետ կապված Բանկի պոտենցիալ եկամուտները կորցնելու հավանականությունն է:

2.2.2. Պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Պարտատոմսերին առնչվող ռիսկերի համալիր նկարագրությունը ներկայացված է Ազդագրի 3.1 մասում:

Վարկային կամ դեֆոլտի ռիսկ - առաջանում է, երբ կորպորատիվ պարտատոմս թողարկողն ապագայում հնարավոր ֆինանսական վիճակի վատթարացման և սնանկացման հետևանքով չի կարողանում ժամանակին վճարել արժեկտրոնային վճարումները կամ մայր գումարները:

Տոկոսադրույքի ռիսկ - հաշվի առնելով, որ շուկայական տոկոսադրույքները և պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կապի մեջ՝ շուկայական տոկոսադրույքների բարձրացումը կհանգեցնի պարտատոմսերի գների անկմանը այլ հավասար պայմաններում:

Իրացվելիության ռիսկ - ի հայտ է գալիս, երբ կորպորատիվ պարտատոմսերի շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության, Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով ներդրողը ցանկացած պահի չի կարողանում իր համար շահավետ գնով արագ իրացնել պարտատոմսերը և հետևաբար կրում է ֆինանսական կորուստներ՝ ստիպված լինելով այդ պարտատոմսերը վաճառել ցածր գնով:

Գնաճի ռիսկ - քանի որ պարտատոմսերի տոկոսային վճարումները ֆիքսված են, դրանց իրական արժեքը կարող է նվազել աճող գնաճի պայմաններում: Որքան երկար է պարտատոմսի ժամկետը, այնքան բարձր է գնաճի ռիսկը:

Վերաներդրման ռիսկ - ի հայտ է գալիս, երբ պարտատոմսից պարբերաբար ստացվող տոկոսային վճարումները հնարավոր չի լինում ներդնել նվազագույնը համարժեք եկամտաբերությամբ՝ կապված շուկայում տոկոսադրույքի նվազման հետ:

Արտարժութային ռիսկ - ի հայտ է գալիս փոխարժեքների տատանումների պատճառով և կարող է բացասական ազդեցություն ունենալ ներդրողի պարտատոմսերից ստացված եկամուտների վրա, երբ ներդրողը պարտատոմսից ստացված հասույթը գնահատում է ներդրման արժույթից տարբերվող արժույթով:

2.3. Բանկի զարգացման միտումները

2.3.1. Զարգացման միտումները

Առաջիկա ժամանակահատվածում Բանկը շարունակելու է իր գործունեությունը մանրածախ, գյուղատնտեսական, ՓՄՁ և կորպորատիվ ուղղություններով՝ հիմնվելով հաճախորդակենտրոն, տվյալահեն և նորարար մոտեցումների վրա: Բանկի գործունեությունն ուղղված է լինելու ինչպես մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնմանը, թվային կարողությունների զարգացմանը, ծախսերի կրճատմանն ու ֆինանսական արդյունքների ամրապնդմանը, այնպես էլ սպասարկման որակի և հաճախորդների լոյալության բարձրացմանը:

Առաջիկա տարիներին Բանկը հանձնառու է պահպանել ամուր ներկայություն հաճախորդների բոլոր սեգմենտներում՝ կենտրոնանալով հաճախորդների ներգրավվածության խորացման, շահութաբերության բարձրացման և թվային բանկինգում իր առաջատար դիրքերի ամրապնդման վրա: Այսպես, Բանկը նախատեսում է հաճախորդների թիրախային ներգրավում՝ առաջարկելով անհատականացված սպասարկում, բացառիկ առաջարկներ և թվային (digital-first) լուծումներ: Զուգահեռաբար, շարունակվելու է թվային հարթակների կատարելագործումը և ֆունկցիոնալ հնարավորությունների ընդլայնումը՝ նպատակ ունենալով ապահովել արագ, հարմարավետ, անվտանգ և նորարար ծառայություններ: Ներդրվելու են առաջադեմ տվյալահեն և վերլուծական գործիքներ, ինչպես նաև անձնական ֆինանսների վերլուծական և կառավարման նոր հնարավորություններ, ինչը կապահովի առավել ամբողջական, նպատակային և անհատականացված փորձառություն բոլոր սեգմենտների համար:

Վարկավորման ոլորտում Բանկը շարունակելու է գործընթացի ավտոմատացման, կատարելագործման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ գործունեությունը՝ հնարավորինս կրճատելով վերջիններիս գծով կատարվող գործառնական ծախսերը և ավելացնելով եկամտաբերությունը: Զուգահեռաբար, զգալիորեն կընդլայնվեն լիովին առցանց վարկավորման հնարավորությունները՝ ինչպես ֆիզիկական այնպես էլ իրավաբանական անձանց համար: Բանկը նախատեսում է ներդնել նոր վարկային պրոդուկտներ և նպատակային առաջարկներ՝ հարմարեցված տարբեր սեգմենտների առանձնահատկություններին՝ ապահովելով ավելի ճկուն և մրցունակ ֆինանսական լուծումներ: Այսպես, Բանկը կամրապնդի թվային հարթակներում իր առաջարկների ամբողջականությունը՝ համալրելով վարկային, վճարային, քարտային, ապահովագրական և ոչ ֆինանսական ծառայությունները ժամանակակից լուծումներով, որոնք կապահովեն ավելի հարմարավետ, հասանելի և բարելավված փորձառություն հաճախորդների համար:

Բանկը շարունակելու է բարելավել ներքին գործընթացների արդյունավետությունը՝ կիրառելով ավտոմատացման օպտիմալացման և ժամանակակից տեխնոլոգիական նոր մոտեցումներ և գործիքներ: Տեխնոլոգիական առաջընթացի հնարավորությունները լայնորեն կիրառվելու են ռեսուրսատար գործընթացների ավտոմատացման, թվայնացման, որոշումների կայացման արագացման և ընդհանուր արդյունավետության բարձրացման նպատակով: Միաժամանակ, կզարգանա Բանկի սպասարկման էկոհամակարգը՝ հիմնվելով ավելի հարմարավետ, ճկուն և հաճախորդակենտրոն մոդելների վրա: Մասնաճյուղերում կհամադրվեն հաճախորդների տարբեր սեգմենտների համար առանձնացված գոտիները, անհատական խորհրդատվությունը ինքնասպասարկման ու թվային աջակցության հետ՝ ապահովելով ավելի համապարփակ ու որակյալ սպասարկում բոլոր հաճախորդների համար: Բանկը շարունակելու է նաև բարելավել հեռահար սպասարկման մեխանիզմները՝ ապահովելով արագ, հետևողական և բարձրակարգ աջակցություն: Այս մոտեցումները հնարավորություն կտա բարձրացնել մասնաճյուղերի դերը՝ դրանք դարձնելով ավելի արդյունավետ փոխազդեցության և խորհրդատվական կենտրոնների:

2.3.2. Դատական հայցեր, սպասվող փոփոխություններ

Բանկի Գործունեության համար անհրաժեշտ բոլոր արտոնագրերը և լիցենզիաները ուժի մեջ են: Բանկը ներգրավված չէ դատական, արբիտրաժային և (կամ) վարչական իրավական վարույթների մեջ, որոնք կարող են էական բացասական ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա: Չեն սպասվում նաև կազմակերպաիրավական ձևի փոփոխություններ:
Մինչև Ազդագրի լրացման գրանցման ներկայացման օրը Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի փոփոխությունները ներկայացված են հետևյալ աղյուսակում.

Հազ. ՀՀ դրամ

Ֆինանսական ցուցանիշներ	31.12.2025թ.	31.12.2024թ.	Աճ/նվազում*
Կապիտալ	194,559,648	163,440,379	19.0%
Ակտիվներ	1,062,519,621	931,697,149	14.0%
Պարտավորություններ	867,959,973	768,256,770	13.0%

* Աղյուսակում ներառված ֆինանսական տվյալները ստացվել են համապատասխան ժամանակաշրջանների աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններից, բացառությամբ «*» նշանով նշված տվյալների, որոնց հաշվարկման մանրամասները բացահայտված են Հավելված 3-ում:

Հազ. ՀՀ դրամ

Ֆինանսական ցուցանիշներ	01.01.25-31.12.25	01.01.24-31.12.24	Աճ/նվազում*
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը	44,996,730	35,143,735	28.0%
Զուտ տոկոսային եկամուտներ	66,355,590	54,564,053	21.6%
Գործառնական եկամուտներ*	83,437,549	69,144,687	20.7%

2.4. Աուդիտն Իրականացնող անձինք և խորհրդատուներ

2022-2025թթ.-ին Բանկի տարեկան անկախ աուդիտ իրականացնում է «ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ:

«ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ - հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2, «Կամար» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ,

հեռ.՝ +374 (10) 51 21 51,

ինտերնետային կայք՝ www.pwc.com/am/en

կազմակերպության տնօրեն՝ Նինո Կադագիշվիլի:

2026թ.-ի մայիսի 27-ի Բանկի տարեկան ընդհանուր ժողովի որոշմամբ հաստատվել է Բանկի 2026 և 2027 թվականներին ավարտվող ֆինանսական տարվա տարեկան համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնելու նպատակով որպես արտաքին աուդիտ իրականացնող անձի՝ «ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ-ի թեկնածությունը:

2.5. Ղեկավարությունը և բաժնետերերը

Բանկի կանոնադրությամբ սահմանված են Բանկի կառավարման հետևյալ մարմինները՝

- Բանկի Բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ընդհանուր Ժողով),
- Բանկի Խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ),
- Բանկի Գլխավոր գործադիր տնօրենը (այսուհետ՝ Գլխավոր գործադիր տնօրեն):

Խորհուրդը և Գլխավոր գործադիր տնօրենը կառավարում են Բանկի գործունեությունը Բանկի կանոնադրությամբ իրենց տրված լիազորությունների շրջանակներում:
Բանկն ունի գլխավոր հաշվապահ, Ներքին աուդիտի ստորաբաժանում, Ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձ,

* Աղյուսակում ներառված ֆինանսական տվյալները ստացվել են համապատասխան ժամանակաշրջանների աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններից, բացառությամբ «*» նշանով նշված տվյալների, որոնց հաշվարկման մանրամասները բացահայտված են Հավելված 3-ում:

Համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձ և Կորպորատիվ քարտուղար:
Բանկի խորհրդի 02.11.2022թ.-ի և 17.10.2024թ. որոշումների հիման վրա գործում են Բանկի խորհրդին կից հետևյալ 4 հանձնաժողովները.

- Աուդիտի հանձնաժողով,
- Ռիսկերի կառավարման հանձնաժողով,
- Կառավարման, նշանակումների և վարձատրությունների հանձնաժողով,
- Ռազմավարության հանձնաժողով:

2.5.1. Բանկի բաժնետերերը

Բանկի նշանակալից բաժնետերերը ներկայացված են **Ամփոփաթերթի 2.1.3.** մասում:

2.5.2. Բանկի խորհուրդը

Բանկի խորհուրդն ունի 9 (ինը) անդամներ, ներառյալ Խորհրդի նախագահը, որոնց կազմը ներկայացվում է ստորև՝

Անուն ազգանուն	Զբաղեցրած պաշտոն	Փորձառություն
Սոնա Իշխանյան	Խորհրդի Նախագահ	Խորհրդի կազմում է 2025 թվականի մայիսից
Բրունո Շարիե	Խորհրդի ավագ անկախ անդամ, Կառավարման, նշանակումների և վարձատրությունների հանձնաժողովի նախագահ	Խորհրդի կազմում է 2019 թվականի մայիսից
Աշոտ Կարապետյան	Խորհրդի անկախ անդամ, Ռիսկերի կառավարման հանձնաժողովի նախագահ, Աուդիտի հանձնաժողովի նախագահ	Խորհրդի կազմում է 2022 թվականի ապրիլից
Բերնարդ դը Վիտ	Խորհրդի անկախ անդամ, Ռազմավարության հանձնաժողովի նախագահ	Խորհրդի կազմում է 2024 թվականի մայիսից
Վարդան Ուռուտյան	Խորհրդի անդամ	Խորհրդի կազմում է 2022 թվականի ապրիլից
Արամ Բաբայան	Խորհրդի անդամ	Խորհրդի կազմում է 2022 թվականի ապրիլից
Հարություն Փախչանյան	Խորհրդի անդամ	Խորհրդի կազմում է 2022 թվականի ապրիլից
Գայանե Հայրապետյան	Խորհրդի անդամ	Խորհրդի կազմում է 2024 թվականի մայիսից
Հարություն Պողոսյան	Խորհրդի անդամ	Խորհրդի կազմում է 2026 թվականի մայիսից

2.5.3. Բանկի Գլխավոր գործադիր տնօրենը

Բանկի գլխավոր գործադիր տնօրենն է Հակոբ Անդրեասյանը. Բանկի հետ փորձառությունն ավելի քան 30 տարի: Բանկի գլխավոր գործադիր տնօրենը ունի 4 տեղակալներ, որոնց կազմը ներկայացվում է ստորև՝

Անուն ազգանուն	Զբաղեցրած պաշտոն	Փորձառություն Բանկի հետ
Ստյոպա Զաքինյան	Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ – Ֆինանսական տնօրեն	ավելի քան 26 տարի
Նիկոլայ Հովհաննիսյան	Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ - Գործառնական տնօրեն	ավելի քան 30 տարի
Նորիկ Նազարյան	Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ - Մանրածախ բիզնեսի տնօրեն	ավելի քան 28 տարի
Տիգրան Սիմոնյան	Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ - Թվային պլատֆորմների և տեխնոլոգիաների տնօրեն	ավելի քան 17 տարի

Բանկի գլխավոր հաշվապահն է Արմեն Հակոբյանը. Բանկի հետ փորձառությունն ավելի քան 28 տարի:

Բանկի աշխատակիցների թիվը 31.03.2026թ. դրությամբ կազմել է 1,915 աշխատող:

2.6. Պարտատոմսերի հիմնական տվյալները

Թողարկվող պարտատոմսերն անվանական են, ոչ փաստաթղթային, անբաժանելի են և փոխարկելի չեն: Տոկոսային վճարումները կատարվելու են արժեկտրոնների միջոցով:
Թողարկվող պարտատոմսերը տեղաբաշխվում և մարվում են ԱՄՆ դոլարով/ՀՀ դրամով, դրանց դիմաց արժեկտրոնային վճարումները կատարվում են ըստ թողարկման արժույթի:
Թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը կազմելու է առավելագույնը՝ 50,000,000,000 (հիսուն միլիարդ) ՀՀ դրամ, 50,000,000 (հիսուն միլիոն) ԱՄՆ դոլար:
Տեղաբաշխվող (վաճառվող) պարտատոմսերի քանակը կազմելու է առավելագույնը 500,000 (հինգ հարյուր հազար) հատ ՀՀ դրամով պարտատոմսերի դեպքում, 500,000 (հինգ հարյուր հազար) հատ ԱՄՆ դոլարով պարտատոմսերի դեպքում:
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը համապատասխանաբար կազմելու է 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ և 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար:
Պարտատոմսերի մարման օրը ենթակա է որոշման Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի կողմից՝ պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտը հաշվարկվելու և վճարվելու է կիսամյակային պարբերականությամբ և ենթակա է որոշման Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի կողմից՝ պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար:

Բանկի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման հիմնական նպատակն է դիվերսիֆիկացնել Բանկի ֆինանսավորման բազան և բարելավել պարտավորությունների ժամկետայնությունը: Ներգրավված միջոցները կօգտագործվեն Բանկի վարկային գործունեության ընդլայնմանն աջակցելուն՝ մանրածախ, փոքր և միջին բիզնեսի, գյուղատնտեսության և կորպորատիվ սեգմենտի հաճախորդներին:

2.7. Պարտատոմսերի առաջարկի նկարագիրը

Թողարկողի պարտատոմսերի բաժանորդագրություն չի իրականացվելու:
Պարտատոմսերի տեղաբաշխումը սկսելու և ավարտելու օրը ենթակա է որոշման Բանկի Գործադիր տնօրենի կողմից՝ պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար: Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման առաջին օրը համընկնելու է: Պարտատոմսերի տեղաբաշխումը իրականացվելու է Բանկի կենտրոնական գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով:
Հայտերը ներկայացվում են Բանկի հաստատված տիպային օրինակով, որը հրապարակվում է նաև ինտերնետային կայքում, (այսուհետ՝ հայտ) հետևյալ եղանակներով.

- «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ ցանկացած մասնաճյուղում հայտն առձեռն ներկայացնելու միջոցնով, կամ
- ***investment@acba.am*** էլեկտրոնային հասցեին էլեկտրոնային հայտ ներկայացնելու միջոցով, կամ
- acba digital հավելվածի միջոցով էլեկտրոնային հայտ ներկայացնելու միջոցով:

Պարտատոմսերի ձեռքբերման համար հիմք է ընդունվում ներդրողների կողմից վերոնշյալ կարգով համապատասխան պարտատոմսերի ձեռքբերման հայտի ներկայացումը և պարտատոմսերի գնման համար անհրաժեշտ վճարման կատարումը, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմանների ընդունումը:

2.8 Ամփոփ ֆինանսական տվյալներ

Ստորև ներկայացվում են Բանկի 2023-2025թթ., ինչպես նաև 2026թ. 1-ին եռամսյակի ֆինանսական տվյալները՝

Հազ. ՀՀ դրամ

Ցուցանիշի անվանումը	31.03.2026թ. (Աուդիտ չանցած)	2025թ.	2024թ.	2023թ.
Հաշվետու տարվա շահույթ	7,590,032	35,856,026	28,765,089	28,392,762
Կապիտալի միջին մեծություն*	198,550,227	179,000,014	148,275,209	121,256,082
Կապիտալի շահութաբերություն (ROE) %*	15.5%	20.0%	19.4%	23.4%
Հաշվետու տարվա շահույթ	7,590,032	35,856,026	28,765,089	28,392,762
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն *	1,076,752,223	997,108,385	857,745,465	724,366,331
Ակտիվների շահութաբերություն (ROA) % *	2.9%	3.6%	3.4%	3.9%
Հաշվետու տարվա շահույթ	7,590,032	35,856,026	28,765,089	28,392,762
Գործառնական եկամուտ *	20,797,442	83,437,549	69,144,687	61,899,140
Զուտ շահույթի մարժա (NPM) % *	36.5%	43.0%	41.6%	45.9%
Գործառնական եկամուտ *	20,797,442	83,437,549	69,144,687	61,899,140
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն *	1,076,752,223	997,108,385	857,745,465	724,366,331
Ակտիվների օգտագործման գործակից (AU) % *	7.8%	8.4%	8.1%	8.5%
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն *	1,076,752,223	997,108,385	857,745,465	724,366,331

* Աղյուսակում ներառված ֆինանսական տվյալները ստացվել են համապատասխան ժամանակաշրջանների աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններից, բացառությամբ «*»-ով նշված տվյալների, որոնց հաշվարկման մանրամասները բացահայտված են Հավելված 3-ում:

Կապիտալի միջին մեծություն *	198,550,227	179,000,014	148,275,209	121,256,082
Կապիտալի մուլտիպլիկատոր (EM) % *	542.3%	557.0%	578.5%	597.4%
Զուտ տոկոսային եկամուտ	17,748,823	66,355,590	54,564,053	47,256,222
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն *	923,947,044	837,826,762	716,173,052	597,874,718
Զուտ տոկոսային մարժա (NIM) % *	7.8%	7.9%	7.6%	7.9%
Տոկոսային եկամուտ*	29,779,801	107,011,194	92,168,814	79,296,532
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն *	923,947,044	837,826,762	716,173,052	597,874,718
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն % *	13.1%	12.8%	12.9%	13.3%
Տոկոսային ծախսեր	12,030,978	40,655,604	37,604,761	32,040,310
Ծախսատար պարտավորությունների միջին մեծություն *	853,062,192	795,000,226	690,384,052	582,849,580
Ծախսատար պարտավորությունների միջին մեծություն % *	5.7%	5.1%	5.4%	5.5%
Հաշվետու տարվա շահույթ	7,590,032	35,856,026	28,765,089	28,392,762
Սովորական բաժնետոմսերի միջին կշռված քանակ	5,985,000	5,985,000	5,985,000	5,500,000
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ (EPS)	5,143.2	5,991.0	5,182.4	5,162.3
Սպրեդ*	7.4%	7.7%	7.4%	7.8%

Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ներկայացված են ***Հավելված 3-ում:***

* Աղյուսակում ներառված ֆինանսական տվյալները ստացվել են համապատասխան ժամանակաշրջանների աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններից, բացառությամբ «*» նշանով նշված տվյալների, որոնց հաշվարկման մանրամասները բացահայտված են Հավելված 3-ում:

2.8.1. Թողարկողի հիմնական ֆինանսական ցուցանիշները և այլընտրանքային կատարողական չափանիշները

Այս փաստաթղթում ներառված են որոշակի տվյալներ, որոնք Թողարկողը դիտարկում է որպես այլընտրանքային կատարողական չափանիշներ (ԱԿՉ):
Դրանք ներառում են՝ կապիտալի շահութաբերություն (ROE), Ակտիվների շահութաբերություն (ROA), Զուտ շահույթի մարժա (NPM), Ակտիվների օգտագործման գործակից (AU), Կապիտալի մուլտիպլիկատոր (EM), Զուտ տոկոսային մարժա (NIM), Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն, Ծախսատար պարտավորությունների միջին մեծություն, Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ(EPS) և Սպրեդ, որոնք բացահայտված են Հավելված 3-ում :

ԱԿՉ-ները սահմանված չեն և ներկայացված չեն ՖՀՄՍ-ի համաձայն: ԱԿՉ-ները աուդիտի չեն ենթարկվել, կամ այլ կերպ չեն ստուգվել անկախ աուդիտորի կողմից, չեն հանդիսանում ՖՀՄՍ-ի համաձայն թողարկողի գործառնական գործունեության չափորոշիչներ, և չպետք է դիտարկվեն որպես ՖՀՄՍ-ի համաձայն կատարողական չափանիշների կամ թողարկողի իրացվելիության չափանիշների այլընտրանք:

Թողարկողի համոզմամբ, ստորև նշված միջոցառումները տրամադրում են ներդրողների համար օգտակար տեղեկատվություն՝ թողարկողի ֆինանսական վիճակի և գործառնությունների արդյունքների, նրա ակտիվների որակի և գործունեության հիմունքների գնահատման նպատակով: Այնուամենայնիվ, Թողարկողի կողմից ԱԿՉ-ների կիրառման մոտեցումը և հաշվարկման մեթոդաբանությունը կարող է տարբերվել այլ ընկերությունների կողմից համանման չափանիշների կիրառման և հաշվարկման մեթոդաբանությունից:
Թողարկողի համոզմամբ, ԱԿՉ-ները տրամադրում են ներդրողների համար օգտակար տեղեկատվություն՝ թողարկողի ֆինանսական վիճակի և գործառնությունների արդյունքների, նրա ակտիվների որակի և գործունեության հիմունքների գնահատման նպատակով:

Մասնավորապես՝

ա) Թողարկողի կողմից ներկայացված գործակիցների նպատակը Հայաստանի բանկային համակարգի համատեքստում թողարկողի գործունեության որոշ ասպեկտների և ուժեղ կողմերի քանակական գնահատումն է.
բ) թեև օրենսդրական պահանջ սահմանված չէ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ կատարողական արդյունքների այլընտրանքային չափորոշիչների վերաբերյալ, սակայն դրանք թույլ են տալիս համեմատություններ կատարել տարբեր ժամանակահատվածներում այլ բանկերի միջև, և թողարկողի և ոլորտային միջին չափորոշիչների միջև և
գ) գործակիցներն արտացոլում են ղեկավարության կողմից գործունեության պարբերական հիմունքով գնահատման համար կիրառվող մոտեցումները:

ԲԱԺԻՆ 3. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

3.1. Ռիսկային գործոններ

Ներդրումները պարտատոմսերում, ինչպես նաև այլ արժեթղթերում կապված են որոշակի ռիսկերի հետ, որոնք կարող են հանգեցնել Բանկի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարմանը կամ շուկայում պարտատոմսերի գնի և իրացվելիության անկմանը: Այդ իսկ պատճառով ներդրողը ներդրում կատարելու վերաբերյալ որոշում կայացնելու ընթացքում պետք է ուսումնասիրի և վերլուծի ներդրման հետ կապված և սույն ազդագրում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը:

Պետք է հաշվի առնել նաև, որ ներկայացված ռիսկերից բացի, կարող են առաջանալ այլ անկանխատեսելի ռիսկային գործոններ, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ներդրումների վերադարձելիության և/կամ արժեքի վրա: Հետևաբար ներդրողը ներդրման որոշումը կայացնելիս պետք է լիարժեք գիտակցի ներդրման էությունը և առաջնորդվի նաև իր սեփական փորձով, նպատակներով ու ակնկալիքներով:
Ստորև ներկայացվում են Բանկի կողմից բացահայտված այն հիմնական ռիսկերը, որոնք ներդրողը պետք է կարևորի կորպորատիվ պարտատոմսերում ներդրումներ կատարելիս.
Վարկային կամ դեֆոլտի ռիսկ - առաջանում է, երբ կորպորատիվ պարտատոմս թողարկողն ապագայում հնարավոր ֆինանսական վիճակի վատթարացման և սնանկացման հետևանքով չի կարողանում ժամանակին վճարել արժեկտրոնային վճարումները կամ մայր գումարները:
Տոկոսադրույքի ռիսկ - հաշվի առնելով, որ շուկայական տոկոսադրույքները և պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կապի մեջ՝ շուկայական տոկոսադրույքների բարձրացումը կհանգեցնի պարտատոմսերի գների անկմանը այլ հավասար պայմաններում, ինչը կարող է հանգեցնել նրան, որ ներդրողը, մինչև մարումը պարտատոմսը վաճառելու դեպքում կարող է կրել վնասներ, կամ չստանալ նախատեսված եկամուտը:
Իրացվելիության ռիսկ - ի հայտ է գալիս այն դեպքում, երբ կորպորատիվ պարտատոմսերի շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության, Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով ներդրողը ցանկացած պահի չի կարողանում իր համար շահավետ գնով արագ իրացնել պարտատոմսերը և, հետևաբար, կրում է ֆինանսական կորուստներ՝ ստիպված լինելով այդ պարտատոմսերը վաճառել ցածր գնով:
Բանկը՝ որպես թողարկող, պարտատոմսերի իրացվելիության բարձրացման համար վերջիններիս նախատեսում է օժտել որոշակի ներդրումային որակներով, այն է՝ պարբերական արժեկտրոնային վճարումներ, մրցակցային եկամտաբերություն, ցուցակում և առևտրին թույլատվություն կարգավորվող շուկայում, ինչպես նաև շուկա ստեղծող

ընկերության հետ համապատասխան պայմանագրի կնքում: Այնուամենայնիվ, Բանկը չի կարող բացառել շուկայական անբարենպաստ փոփոխությունների արդյունքում իրացվելիության ռիսկի ծագման հավանականությունը:
Միևնույն ժամանակ ներդրողը պետք է հաշվի առնի որ, անկախ շուկայական պայմանների փոփոխություններից, Բանկի կողմից վճարվող անվանական արժեկտրոնների վճարման և պարտատոմսի անվանական գումարի մարման մեծություններն, արտահայտված թողարկման արժույթով, անփոփոխ են:
Ինֆլյացիոն ռիսկ - քանի որ պարտատոմսերի տոկոսային վճարումները ֆիքսված են, դրանց իրական արժեքը կարող է նվազել ինֆլյացիայի հետևանքով: Որքան երկար է պարտատոմսի ժամկետը, այնքան բարձր է ինֆլյացիոն ռիսկը:
Վերաներդրման ռիսկ - ի հայտ է գալիս, երբ պարտատոմսից պարբերաբար ստացվող տոկոսային վճարումները հնարավոր չի լինում ներդնել նվազագույնը համարժեք եկամտաբերությամբ՝ կապված շուկայում տոկոսադրույքի նվազման հետ: Հարկ է նշել, սակայն, որ վերաներդրման ռիսկը ներդրումային որոշում կայացնելու գործընթացում էական գործոն չի հանդիսանա ընթացիկ կամ կարճաժամկետ (մեկ արժեկտրոնային ժամանակամիջոցից ոչ ավել) ներդրումային նպատակներ ունեցող ներդրողների համար:
Արտարժութային ռիսկ - ի հայտ է գալիս փոխարժեքների տատանումների պատճառով և կարող է բացասական ազդեցություն ունենալ ներդրողի պարտատոմսերից ստացված եկամուտների վրա, երբ ներդրողը պարտատոմսից ստացված հասույթը գնահատում է ներդրման արժույթից տարբերվող արժույթով:
Արտարժութային ռիսկի օրինակ է, երբ ներդրողը ներդրում կատարելու համար արտարժույթը փոխարկում է ՀՀ դրամի և պարտատոմսերի մարումից հետո ստացված ՀՀ դրամը փոխարկում է արտարժույթի: ՀՀ դրամի արժեզրկման դեպքում, պարտատոմսի մարումից ստացված գումարները փոխարկելու դեպքում, արտարժույթով հաշվարկված եկամուտը կարող է նախատեսվածից քիչ լինել:

3.2. Հիմնական տեղեկատվություն

Բանկի կողմից անվանական պարտատոմսերի թողարկման և դրան հետևող տեղաբաշխման նպատակն է դիվերսիֆիկացնել Բանկի ֆինանսավորման բազան և բարելավել պարտավորությունների ժամկետայնությունը: Ներգրավված միջոցները կօգտագործվեն Բանկի վարկային գործունեության ընդլայնմանն աջակցելուն՝ մանրածախ, փոքր և միջին բիզնեսի, գյուղատնտեսության և կորպորատիվ սեգմենտի հաճախորդներին:

3.2.1. Վերջնական պայմանների հրապարակման ձևը

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի կողմից՝ պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարության հրապարակումից առնվազն 2 (երկու) օր առաջ Բանկի իտերնետային կայքում:

3.3. Պարտատոմսերի վերաբերյալ տեղեկատվություն

3.3.1. Արժեթղթերի տեսակը և դասը

Թողարկվող պարտատոմսերն անվանական արժեկտրոնային պարտատոմսեր են, անբաժանելի են և փոխարկելի չեն: Թողարկվող պարտատոմսերը դեռևս չունեն տարբերակիչ ծածկագիր:

3.3.2. Երկիրը

Պարտատոմսերը թողարկվելու են ՀՀ տարածքում՝ համաձայն ՀՀ օրենսդրության:
Դրանց շուրջ ծագող վեճերը, այդ թվում՝ դատական, ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.3.3. Արժեթղթերի ձևը

Թողարկված պարտատոմսերը ոչ փաստաթղթային են, իսկ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրը կվարի «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ (ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 26/1, Էրեբունի պլազա 5-րդ հարկ, հեռ.՝ +(374) 60 61 55 55, լրաց.111,+(374) 10 54 33 21, լրաց.136) (այսուհետ՝ Դեպոզիտարիա)՝ ըստ համապատասխան կանոնների, ընթացակարգերի:

3.3.4. Արժեթղթի անվանական արժեքը և քանակը

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը կազմում է 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ/100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար: Թողարկվող պարտատոմսերի ընդհանուր քանակը կազմելու է առավելագույնը 500,000 (հինգ հարյուր հազար) հատ ՀՀ դրամով պարտատոմսերի դեպքում/ 500,000 (հինգ հարյուր հազար) հատ ԱՄՆ դոլարով պարտատոմսերի դեպքում.

3.3.5. Թողարկման արժույթը

Թողարկման արժույթն ՀՀ դրամը /ԱՄՆ դոլարն է:

3.3.6. Պարտատոմսերի դասակարգման մասին տեղեկատվություն

3.3.6.1. Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի՝ Բանկի լուծարման դեպքում՝ մինչև

2027թ.ի հունվարի 1-ը, նրա պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ՝

ա) առաջին - ադմինիստրացիայի, լուծարային կառավարչի կողմից օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձը՝ ՀՀ ԿԲ խորհրդի կողմից հաստատված նախահաշվի շրջանակներում.

բ) երկրորդ - այն պարտատերերի պահանջները, որոնք Բանկին վարկ, փոխառություն են տրամադրել կամ Բանկում ավանդ են ներդրել կամ բանկային հաշվին դրամական միջոցներ են մուտքագրել Բանկում ադմինիստրացիա նշանակվելուց հետո՝ բացառությամբ պարտատիրոջ և ՀՀ ԿԲ-ի միջև կնքված պայմանագրով սահմանված դեպքերի.

գ) երրորդ - ՀՀ և օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ դրամով բանկային ավանդները և բանկային հաշիվներին առկա մնացորդները՝ մինչև 16 միլիոն դրամի չափով, իսկ արտարժութային ավանդների (հաշիվների) դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափով, ընդ որում՝ բանկի նկատմամբ ունեցած պահանջի գումարը 16 միլիոն դրամը (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափը) գերազանցելու դեպքում, տվյալ անձի՝ մինչև 16 միլիոն դրամի չափով (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափով) պահանջը բավարարվում է երրորդ հերթով, իսկ այդ գումարը գերազանցող պահանջը՝ չորրորդ հերթով: Մեկ անձի՝ բանկում մեկից ավելի ավանդներ (հաշիվներ) ունենալու դեպքում նրա բոլոր ավանդները միավորվում են, և դրանց հանրագումարը համարվում է մեկ ավանդ:

դ) չորրորդ - Բանկի այլ պարտավորությունները՝ ներառյալ Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից հատուցման կազմակերպման հետ կապված ծախսերը՝ բացառությամբ երկրորդ հերթում ընդգրկված բանկային ավանդների և բանկային հաշիվների մնացորդների

ե) հինգերորդ - պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ բանկի պարտավորությունները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումները.

զ) վեցերորդ - ստորադաս փոխառություններից բխող պահանջները.

է) յոթերորդ - բանկի մասնակիցների պահանջները:

Միևնույն հերթի պարտատերերն/սեփականատերերն ունեն իրենց պահանջների բավարարման հավասար իրավունքներ:

3.3.6.2. Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի փոփոխության, որն ուժի մեջ է մտնում 2027թ.-ի հունվարի մեկից՝ Բանկի լուծարման դեպքում՝ նրա պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ՝

ա) **առաջին** - ադմինիստրացիայի, լուծարային կառավարչի կողմից սույն օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձը՝ Կենտրոնական բանկի խորհրդի հաստատած նախահաշվի շրջանակում, ինչպես նաև «Բանկերի վերակառուցման մասին» օրենքով սահմանված հատուկ ղեկավարի (ղեկավարության) աշխատավարձի լիազորությունների իրականացման համար ծախսերը և բանկի վերակառուցման գործընթացի շրջանակում անկախ գնահատման հետ կապված ծախսերը.

բ) երկրորդ - այն պարտատերերի պահանջները, որոնք Բանկին վարկ, փոխառություն են տրամադրել ադմինիստրացիա նշանակվելուց հետո, կամ «Բանկերի վերակառուցման մասին» օրենքով սահմանված բանկի վերակառուցման որոշման կայացումից հետո ծագած պահանջները, բացառությամբ «Բանկերի վերակառուցման մասին» օրենքով սահմանված վերակառուցման հիմնադրամի պահանջների և պարտատիրոջ և Կենտրոնական բանկի միջև կնքված պայմանագրով սահմանված դեպքերի.

գ) երրորդ - ՀՀ և օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետության դրամով բանկային ավանդները և բանկային հաշիվներին առկա մնացորդները՝ մինչև 16 միլիոն դրամի չափով, իսկ արտարժութային ավանդների (հաշիվների) դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափով, ընդ որում՝ Բանկի նկատմամբ ունեցած պահանջի գումարը 16 միլիոն դրամը (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափը) գերազանցելու դեպքում տվյալ անձի մինչև 16 միլիոն դրամի չափով (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափով) պահանջը բավարարվում է երրորդ հերթով, իսկ այդ գումարը գերազանցող պահանջը՝ չորրորդ հերթով: Մեկ անձի՝ բանկում մեկից ավելի ավանդներ (հաշիվներ) ունենալու դեպքում նրա բոլոր ավանդները միավորվում են, և դրանց հանրագումարը համարվում է մեկ ավանդ.

դ) չորրորդ - «Բանկերի վերակառուցման մասին» օրենքով սահմանված՝ բանկի վերակառուցման որոշման կայացումից հետո ծագած՝ «Բանկերի վերակառուցման մասին» օրենքով սահմանված վերակառուցման հիմնադրամի պահանջները.

ե) հինգերորդ - Բանկի այլ պարտավորությունները, բացառությամբ երկրորդ հերթում ընդգրկված բանկային ավանդների և բանկային հաշիվների մնացորդների.

զ) վեցերորդ - պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ բանկի պարտավորությունները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումներ.

է) յոթերորդ - ութերորդ և իններորդ հերթերում չներառված ստորադաս փոխառությունների տրամադրման արդյունքում ձևավորված պահանջները.

ը) ութերորդ - «Բանկերի վերակառուցման մասին» օրենքով սահմանված ընդհանուր կապիտալի և վերակառուցման համար հասանելի ստորադաս պարտավորությունների հիմնական տնտեսական նորմատիվի հաշվարկում ներառվող՝ վերակառուցման համար հասանելի ստորադաս պարտավորությունների արդյունքում ձևավորված պահանջները.

թ) իններորդ - «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքով սահմանված ընդհանուր կապիտալի կազմում ներառվող ստորադաս փոխառությունները.
ժ) տասներորդ - «Բանկերի վերակառուցման մասին» օրենքով սահմանված դեպքերում կամ «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքով սահմանված ընդհանուր կապիտալի կազմում ներառվող ստորադաս փոխառությունների՝ կապիտալի փոխարկման արդյունքում բանկի մասնակից դարձած անձանց պահանջները՝ ըստ փոխարկման հաջորդականության.
ժա) տասնմեկերորդ - ֆինանսական կազմակերպության մասնակիցների պահանջները:
Սույն կետով սահմանված՝ Բանկի պարտատերերի պահանջների բավարարման հերթականության **«գ», «դ», «ե», «է», «ը»** և **«թ»** ենթակետերով սահմանված պարտատերերի թվից բացառություն են կազմում Բանկի մասնակիցները և Բանկի հետ կապված անձինք, որոնց նկատմամբ Բանկի պարտավորությունները բավարարում են **«ժա»** ենթակետով սահմանված հերթում:
Միևնույն հերթի պարտատերերն ունեն իրենց պահանջների բավարարման հավասար իրավունքներ, բացառությամբ սույն կետի **«ժ»** ենթակետով սահմանված հերթում ընդգրկված պահանջների:
Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի միևնույն հերթի պարտատերերի/սեփականատերերի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո:
Բանկի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից պարտատոմսերից բխող պահանջները ենթակա չեն վերադասակարգման:

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի և նույն օրենքի հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի իմաստով բանկի թողարկած պարտատոմսերով, ֆիզիկական անձանցից (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերից), ներգրավված դրամական միջոցները համարվում են բանկային ավանդ, որոնց հատուցումը երաշխավորված է նույն օրենքով սահմանված կարգով և պայմաններով, հետևյալ չափերով.

- եթե Ներդրողն անվճարունակ բանկում ունի միայն դրամային պարտատոմսեր, ապա երաշխավորված դրամական միջոցների չափը տասնվեց միլիոն ՀՀ դրամ է.
- Եթե Ներդրողն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային պարտատոմսեր, ապա երաշխավորված դրամական միջոցների չափը յոթ միլիոն ՀՀ դրամ է.
- եթե Ներդրողն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային պարտատոմսեր, և դրամային պարտատոմսերի գումարը յոթ միլիոն ՀՀ դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային պարտատոմսերի գումարը՝ մինչև տասնվեց միլիոն ՀՀ դրամով.

- եթե Ներդրողն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային պարտատոմսեր, և նրա դրամային պարտատոմսերի գումարը պակաս է յոթ միլիոն ՀՀ դրամից, ապա երաշխավորվում է դրամային պարտատոմսերի գումարն ամբողջությամբ և արտարժութային պարտատոմսերի գումարը՝ յոթ միլիոն դրամի և հատուցված դրամային պարտատոմսերի տարբերության չափով:

Ներդրողի՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները, ներառյալ պարտատոմսերում ներդրումները, համարվում են մեկ ավանդ՝ բացառությամբ չերաշխավորված ավանդների, և ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ ավանդ՝ բացառությամբ չերաշխավորված ավանդների:

Երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկելիս առաջին հերթին հաշվարկվում են դրամային ավանդները, իսկ երկրորդ հերթին՝ արտարժութային ավանդները

Ավանդի (պարտատոմսերի) հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ): Հիմնադրամի գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010 Խորենացի 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, հեռախոսահամարը՝ (37410) 583514, ինտերնետային կայքը՝ www.adgf.am:

Երաշխավորված ավանդների հատուցման դեպք (այսուհետ՝ հատուցման դեպք) է համարվում «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով բանկին անվճարունակ ճանաչելը և ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը հաստատելը կամ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով բանկին սնանկ ճանաչելը (այսուհետ՝ բոլոր դեպքերի համար՝ անվճարունակ բանկ):

Բանկային ավանդի հատուցումը կատարվում է միայն հայկական դրամով:

Արտարժութային բանկային ավանդի դրամական համարժեքությունը որոշվում է հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

Ներդրողի բանկային ավանդը չի հատուցվում, եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ ավանդը պակաս է 1,000 (հազար) հայկական դրամից:

Ներդրողի բանկային ավանդը երաշխավորված չէ, եթե՝

- Ներդրողը հանդիսանում է տվյալ բանկի ղեկավար և/կամ վերջինիս ընտանիքի անդամ,

- Ներդրողը հանդիսանում է տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և/կամ վերջինիս ընտանիքի անդամ,
- Ներդրողը, որպես ավանդի սեփականատեր (համասեփականատեր) հրաժարվել է ավանդի՝ իր մասի նկատմամբ սեփականության իրավունքից,
- Ներդրողի ավանդն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, քանի դեռ Ներդրողը հակառակը չի ապացուցել,
- Ներդրողի ավանդը տվյալ բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդրման պահին տվյալ բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանատիպ բանկային ավանդների տոկոսադրույքն առնվազն 1,5 անգամ գերազանցող տոկոսադրույքով:
- Ներդրողի ավանդը ներդրված է բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում:

Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամը հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին:

3.3.7. Արժեթղթերից բխող իրավունքները

Պարտատոմսերից բխող իրավունքները հետևյալն են.

1. Ստանալ պարտատոմսերով նախատեսված արժեկտրոնային եկամուտները և մարման գումարը՝ ըստ Ազդագրով սահմանված կարգի: Արժեկտրոնային եկամտի ստացման և շրջանառության ժամկետի վերջում պարտատոմսերի մարման գումարի ստացման իրավունքի իրականացման համար ներդրողներից լրացուցիչ գործողությունների կատարում չի պահանջվում և արժեկտրոնային եկամուտը /պարտատոմսի մարման գումարը փոխանցվում է ներդրողի բանկային հաշվին Թողարկողի կողմից: Եթե պարտատոմսերով նախատեսված արժեկտրոնային եկամտի և պարտատոմսերի մարման գումարի վճարման օրը ոչ աշխատանքային օր է, ապա արժեկտրոնի/պարտատոմսերի մարման գումարի վճարումը իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը,

2. Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ձեռնարկել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող իր պահանջների բավարարման ուղղությամբ օրենքով թույլատրվող գործողություններ,

3. գրավադրել պարտատոմսերն օրենքով սահմանված կարգով,

4. իր ցանկությամբ օտարել պարտատոմսերը ֆոնդային բորսայում (ցուցակված և առևտրին թույլատրված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ օրենքով սահմանված կարգով, ընդ որում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ ՀՀ օրենսդրությամբ չի թույլատրվում կարգավորվող շուկայից (ֆոնդային բորսա) դուրս վաճառել կարգավորվող

շուկայում առևտրին թույլատրված արժեթղթեր, բացառությամբ ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված հետևյալ դեպքերի՝

4.1. մասնավոր գործարքների համար.

- այնպիսի գործարքներ, որոնց կողմերը նախապես հայտնի են, ընդ որում՝ համաձայն ՀՀ ԿԲ-ի սահմանման՝ մասնավոր գործարքներ են համարվում ՀՀ ԿԲ-ի և ֆինանսական շուկայի մասնագիտացված ընկերությունների միջև հնարավոր գործարքները,
- թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի հետգնման կամ ձեռքբերման գործարքները,
- արժեթղթերը հանձնելու առաջարկի շրջանակներում բաժնային արժեթղթերով կատարվող գործարքները,

4.2. պարտատոմսերի տեղաբաշխման շրջանակներում տեղաբաշխողների կողմից իրականացվող գործարքների համար,

4.3. շուկայում առևտրին թույլատրված պարտատոմսերն այլ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության և վաճառելու դեպքերի համար,

5. օրենքով նախատեսված այլ իրավունքներ:

Միաժամանակ պարտատոմսերում ներդրողները պարտավոր են.

1. «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվի օպերատորներից որևէ մեկում կամ անվանատիրոջ մոտ, վերջինիս կողմից սահմանված կանոնների համաձայն իր հաշվին բացել արժեթղթերի հաշիվ,

2. «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կամ ցանկացած այլ բանկում իր անվամբ ունենալ դրամային/արտարժութային հաշիվ,

3. պարտատոմսերի թողարկման պայմաններով սահմանված ժամկետներում իրականացնել պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարների փոխանցում համապատասխան բանկային հաշվին, կատարել պարտատոմսերի ձեռքբերումից, օտարումից և այլ գործողություններից ծագող դրամային և ոչ դրամային ցանկացած պարտավորություն,

4. կրել օրենքով նախատեսված այլ պարտականություններ:

3.3.8. Անվանական տոկոսադրույքը և վճարման պայմանները

Պարտատոմսերի դիմաց հաշվարկվելու և վճարվելու է արժեկտրոնային անվանական եկամուտ, որը ենթակա է որոշման Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի կողմից՝ պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար, սակայն ՀՀ դրամով պարտատոմսերի դեպքում ոչ ավել, քան **11.50%** և ԱՄՆ դոլարով պարտատոմսերի դեպքում ոչ ավել, քան **6.50%**: Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային անվանական եկամուտը վճարվելու է կիսամյակային պարբերականությամբ: Պարտատոմսերի դիմաց

նախատեսվող արժեկտրոնային եկամուտը հաշվարկվելու և վճարվելու է ըստ թողարկման արժույթի:

Արժեկտրոնների հաշվարկման օրերը ենթակա են որոշման Բանկի Գործադիր տնօրենի կողմից՝ պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար:

Արժեկտրոնները պարտատոմսերի սեփականատերերին/անվանատերերին վճարվելու (մարվելու) են արժեկտրոնների հաշվարկման օրը: Եթե հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնի վճարման (մարման) օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Արժեկտրոնները (տոկոսագումարները) ստանալու իրավունք ունեն պարտատոմսերի արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրը պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի փակման դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք (սեփականատերերը/անվանատերերը):

Պարտատոմսերի սեփականատերերի/ անվանատերերի ռեեստրը փակվելու է պարտատոմսերի հերթական արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրվա ժամը 18:00-ին, այսինքն՝ նշված ժամից հետո ռեեստրում գրանցված սեփականատերերը/անվանատերերը չեն կարող օգտվել նախորդող արժեկտրոնային ժամանակաշրջանի համար (նախորդ կիսամյակի) վճարվող արժեկտրոնի ստացման իրավունքից:

Արժեկտրոնային վճարումների համար նախատեսվող գումարները սեփականատերերին/ անվանատերերին վճարվում են մինչև 10 ՀՀ դրամ և 0.01 ԱՄՆ դոլար ճշտությամբ (ընդ որում կլորացումը իրականացվում է թվաբանական կլորացման կանոնների համաձայն՝ մինչև ամենամոտ ամբողջ տասնավոր թիվը):

Թվաբանական կլորացման կանոնի ներքո հարկ է հասկանալ կլորացման այն մեթոդը, որի դեպքում միավորի ամբողջ թիվը չի փոխվում, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 0-ից 4-ի, և փոխվում է՝ մեծանալով մեկ միավորով, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 5-ից 9-ի:

Բանկն արժեկտրոնի գումարները վճարելու է անկանխիկ ձևով՝ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով:

Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների ճիշտ չլինելու կամ բացակայության դեպքում Բանկը հարցում կուղարկի Դեպոզիտարիա բանկային հաշվեհամարը ճշտելու և համապատասխան փոխանցում իրականացնելու համար: Վերոնշյալ բանկային հաշվեհամարների բացահայտման անհնարինության դեպքում վճարումները կիրականացվեն Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի ձեռք բերման հայտում նշված հաշվեհամարին, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ կանխիկ՝ Բանկի գլխամասային գրասենյակում:

Արժեկտրոնի գումարները կանխիկ վճարելու դեպքում ներդրողները պետք է տեղյակ լինեն, որ վերոնշյալ գումարի՝ հատուկ հաշվի վրա մնալը, մինչև դրանք իրենց

վերադարձնելու պահը, միջոցների ապօրինի պահում կամ դրանք վերադարձնելուց խուսափել չի հանդիսանում և դրանց վրա տոկոսներ չեն հաշվարկվում:
Արժեկտրոնի գումարի հաշվարկման համար հիմք է ընդունվում հետևյալ բանաձևը՝

$$ԱԳ=(FVx\ C)/k$$

ԱԳ -ն արժեկտրոնի գումարն է,
FV - մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,
C - տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,
k – մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է, հաճախականությունը (արժեկտրոնների կիսամյակային վճարման դեպքում k=2):
Արժեկտրոնի կուտակումն իրականացվելու է հետևյալ բանաձևով՝

$$AI=FV\ x\ \frac{C}{K}\ x\ \frac{DCS}{DCC}$$

AI – մեկ պարտատոմսի կուտակված արժեկտրոնային եկամուտն է,
FV – մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,
C – տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,
k – մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է, հաճախականությունը (արժեկտրոնների կիսամյակային վճարման դեպքում k=2),
Օրերի հաշվարկման պայմանականությունը Թողարկողի պարտատոմսերի համար համարվում է **Actual/Actual**-ը, ընդ որում
DCS – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D2M2Y2 - D1M1Y1],
DCC – արժեկտրոնային փուլի օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D3M3Y3 - D1M1Y1],
D1M1Y1 – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/ արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է,
D2M2Y2 – գործարքի կատարման ամսաթիվն է,
D3M3Y3 – գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:

3.3.9. Արժեթղթերի մարման ժամկետը

Պարտատոմսերի մարման օրը ենթակա է որոշման Բանկի Գործադիր տնօրենի կողմից՝ պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար:

Պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը փակվում է պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրը՝ ժամը 18:00-ին, այսինքն՝ պարտատոմսերի մարման գումարն իրավունք ունեն ստանալ մինչև ռեեստրի փակման պահը պարտատոմսերի սեփականատերերի/ անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք:

Պարտատոմսերի մարման գումարները պարտատոմսերի սեփականատերերին/ անվանատերերին վճարվում են պարտատոմսերի մարման օրը, այսինքն՝ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի փակման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ընթացքում:

Բանկը պարտատոմսերի մարման գումարները վճարում է անկանխիկ ձևով՝ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով:

Պարտատոմսերի սեփականատերերի/ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների ճիշտ չլինելու կամ բացակայության դեպքում Բանկը հարցում կուղարկի Դեպոզիտարիա բանկային հաշվեհամարը ճշտելու և համապատասխան փոխանցում իրականացնելու համար: Վերոնշյալ բանկային հաշվեհամարների բացահայտման անհնարինության դեպքում վճարումները կիրականացվեն Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի ձեռք բերման հայտում նշված հաշվեհամարին, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ կանխիկ՝ Բանկի գլխամասային գրասենյակում:

Մարման գումարները կանխիկ վճարելու դեպքում ներդրողները պետք է տեղյակ լինեն, որ վերոնշյալ գումարի՝ հատուկ հաշվի վրա մնալը, մինչև դրանք իրենց վերադարձնելու պահը, միջոցների ապօրինի պահում կամ դրանք վերադարձնելուց խուսափել չի հանդիսանում և դրանց վրա տոկոսներ չեն հաշվարկվում:

ՀՀ դրամով/ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի մարման դիմաց վճարումները կատարվելու են ՀՀ դրամով/ԱՄՆ դոլարով:

Հաշվի առնելով պարտատոմսերի անվանական արժեքի արժույթը և պարտատոմսերի մարման հետ կապված հնարավոր միջբանկային փոխանցումների անհրաժեշտությունը (եթե ներդրողի ՀՀ դրամային կամ արտարժույթով հաշիվը չի գտնվում Բանկում)՝ ներդրողները պետք է նկատի ունենան, որ մարման գումարների փոխանցման (միջբանկային փոխանցումներ) հետ կապված միջնորդավճարների ծախսերը պետք է կատարվեն ներդրողի հաշվին, հետևաբար նման ներդրողները մարման գումարները կստանան պահումներով՝ համաձայն համապատասխան Բանկում և այլ միջնորդ բանկերում (եթե այդպիսիք կլինեն) գործող սակագների:

Պարտատոմսերի վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

3.3.10. Արժեթղթերի տարեկան եկամտաբերությունը

Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար առաջնային տեղաբաշխման ողջ ժամանակահատվածի ընթացքում տեղաբաշխման տարեկան եկամտաբերությունը (մինչև մարումը տարեկան եկամտաբերություն, Yield to maturity), համարժեք է լինելու տվյալ տրանշի համար նախատեսված տարեկան արժեկտրոնային դրույքին:

3.3.11. Նոր թողարկման մասին տեղեկատվություն

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ անվանական պարտատոմսերը թողարկվում են համաձայն **2026թ. ապրիլի 27-ի Բանկի խորհրդի թիվ 173-Գ.3 որոշման**, որով սահմանվել են թողարկման և տեղաբաշխման հետևալ հիմնական պայմանները.

1. Պարտատոմսերի արժույթը՝ ՀՀ դրամ/ ԱՄՆ դոլար:
2. Թողարկման ընդհանուր ծավալը՝ առավելագույնը՝ 50,000,000,000 (հիսուն միլիարդ) ՀՀ դրամ, 50,000,000 (հիսուն միլիոն) ԱՄՆ դոլար,
3. Մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝ 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար,
4. Յուրաքանչյուր տրանշի թողարկման ծավալը ենթակա է որոշման Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի կողմից,
5. Պարտատոմսերի շրջանառության ժամկետը՝ ենթակա է որոշման Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի կողմից, սակայն այն կարող է սահմանվել ոչ պակաս քան **2** տարի և ոչ ավել քան **5** տարի մարման ժամկետով:
6. Տարեկան արժեկտրոնային դրույքը՝ ենթակա է որոշման Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի կողմից, սակայն այն կսահմանվի ՀՀ դրամով պարտատոմսերի դեպքում ոչ ավել, քան **11.50%** և ԱՄՆ դոլարով պարտատոմսերի դեպքում ոչ ավել, քան **6.50%** :
7. Արժեկտրոնների վճարման պարբերականությունը՝ կիսամյակային:
8. Արժեկտրոնների հաշվարկման օրը՝ ենթակա է որոշման Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի կողմից,
9. Պարտատոմսերի մարման օրը՝ ենթակա է որոշման Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի կողմից:
10. Պարտատոմսերի քանակը՝ Առավելագույնը՝ 500,000 (հինգ հարյուր հազար) հատ ՝ ՀՀ դրամով պարտատոմսերի դեպքում, 500,000 (հինգ հարյուր հազար) հատ ԱՄՆ դոլարով պարտատոմսերի դեպքում,
11. Մեկ ներդրողի նկատմամբ կիրառվող ձեռք բերվող պարտատոմսերի ծավալի սահմանափակումները՝ պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար ենթակա է որոշման Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի կողմից, սակայն.

11.1. ՀՀ դրամով պարտատոմսերի դեպքում՝ կարող է սահմանվել ոչ պակաս քան **5** (հինգ) և ոչ ավել քան **15,000** (տասնհինգ հազար) հատ

11.2. ԱՄՆ դոլարով պարտատոմսերի դեպքում՝ կարող է սահմանվել ոչ պակաս քան **5** (հինգ) և ոչ ավել քան **15,000** (տասհինգ հազար) հատ,

12. Պարտատոմսերի տեսակը՝ անվանական արժեկտրոնային:
13. Պարտատոմսերի ձևը՝ ոչ փաստաթղթային:
14. Պարտատոմսերի փոխարկելիությունը՝ ոչ փոխարկելի:
15. Արժեկտրոնի արժույթը՝ հաշվարկվելու է և վճարվելու է ՀՀ դրամով/ԱՄՆ դոլարով (ըստ թողարկման արժույթի):
16. Պարտատոմսերի ապահովվածությունը՝ չապահովված:
17. Պարտատոմսերի շրջանառության ձևը՝ ազատ շրջանառության իրավունքով:
18. Կարգավորվող շուկայում պարտատոմսերի ցուցակումը՝ պարտատոմսերը ենթական են ցուցակման պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի ֆոնդային բորսայում:
19. Պարտատոմսերի վաղաժամկետ մարման հնարավորություն՝ պարտատոմսերի վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

3.3.12. Շրջանառության սահմանափակումներ

Թողարկողի կանոնադրությամբ կամ պարտատոմսերի թողարկման մասին Թողարկողի համապատասխան իրավասու մարմնի որոշմամբ պարտատոմսերի թողարկման, ինչպես նաև պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ որևէ այլ սահմանափակումներ չեն սահմանվում, բացառությամբ Բանկի ֆինանսական անվտանգության քաղաքականությամբ սահմանված դեպքերի (որին կարելի է ծանոթանալ Բանկի կենտրոնական գրասենյակում) և տեղաբաշխման ընթացքում մեկ ներդրողի նկատմամբ կիրառվող ձեռք բերվող պարտատոմսերի ծավալի սահմանափակումների, որն ենթակա է որոշման Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի կողմից՝ պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար:

Պարտատոմսերի ազատ շրջանառության հետ կապված որևէ այլ սահմանափակումներ չկան՝ բացառությամբ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերի:

Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու համար, և համաձայն ՀՀ գործող օրենսդրության, պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում:

Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ առևտրին թույլտվության հայցը կարող է նաև չբավարարվել: Պարտատոմսերի առևտրի թույլտվություն չստանալու դեպքում, տեղաբաշխումը կհամարվի չեղյալ:

3.3.13. Արժեթղթերից սպացվող եկամուտների հարկումը

Կարևոր ծանուցում: Չնայած այն հանգամանքին, որ Թողարկողը, իրականացնելով իր լավագույն ջանքերը և առկա գիտելիքները, սույն բաժնում ներկայացնում է արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման մոտեցումները ՀՀ-ում, այնուամենայնիվ, Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ ներդրողներն այն չպետք է համարեն հարկային խորհրդատվություն և ներդրումներ անելիս հիմնվեն միայն այս բաժնում ներկայացված նյութի վրա: Թողարկողը չի երաշխավորում, որ ներդրողի կողմից Ազդագրի ստացման և ծանոթացման պահին հարկային օրենսդրությունը կհամապատասխանի ներկայացվածին, կամ համարժեքորեն կիրառություն կունենա ՀՀ հարկային մարմինների կողմից և ցանկացած պարագայում խորհուրդ է տալիս օգտվել մասնագիտացված հարկային խորհրդատվության ծառայություններից: Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ սույնով զերծ է մնում ցանկացած ներդրողի հնարավոր պահանջներից՝ կապված հարկային օրենսդրության և հարկման մեխանիզմների կիրառման և/կամ փոփոխության արդյունքում առաջացած ֆինանսական պահանջների նկատմամբ պատասխանատվությունից:

Թողարկողի պարտատոմսերից ստացվող եկամուտն ենթակա է հարկման ըստ հետևյալ հարկատեսակների.

1. Շահութահարկ (իրավաբանական անձանց համար)
2. Եկամտային հարկ (ֆիզիկական անձանց համար)

<u>ՀՀ-ում շահութահարկ են վճարում</u>.

1. ռեզիդենտ կազմակերպությունները, բացառությամբ ՀՀ հարկային օրենսգրքի 103-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի.
2. Հայաստանի Հանրապետությունում հաշվառված՝
   - անհատ ձեռնարկատերերը
   - նոտարները
3. Հայաստանի Հանրապետությունում հաշվառված, կանոնները գրանցած պայմանագրային ներդրումային ֆոնդերը (բացառությամբ կենսաթոշակային ֆոնդերի և երաշխիքային ֆոնդերի).
4. Ոչ ռեզիդենտ կազմակերպությունները, ինչպես նաև մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք:

Շահութահարկով հարկման օբյեկտ է համարվում՝

1. ռեզիդենտ կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների (այսուհետ՝ ռեզիդենտ շահութահարկ վճարողներ) համար՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից և (կամ) Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող կամ ստացման ենթակա (այսուհետ՝ սույն բաժնում՝ ստացվող) համախառն եկամուտը, բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների անձնական եկամուտների.
2. Հայաստանի Հանրապետությունում հաշվառված, կանոնները գրանցած ներդրումային ֆոնդերի (բացառությամբ կենսաթոշակային ֆոնդերի և երաշխիքային ֆոնդերի), ինչպես նաև «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի հիման վրա ստեղծված արժեթղթավորման հիմնադրամի համար՝ զուտ ակտիվների հանրագումարը.
3. ոչ ռեզիդենտ կազմակերպությունների, ինչպես նաև մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (այսուհետ՝ ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներ) համար՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը, բացառությամբ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող անձանական եկամուտների:

Շահութահարկի գումարը 1. և 2. կետերով սահմանված անձանց համար հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ՝ **18 տոկոս** դրույքաչափով:

Շահութահարկի գումարը 3. կետով սահմանված անձանց համար հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ՝ **10 տոկոս** դրույքաչափով:

ՀՀ հարկային օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին վճարված եկամուտների գծով ձևավորվող հարկման բազայի մասով շահութահարկը հաշվարկում և պահում է հարկային գործակալը՝ եկամտի վճարման աղբյուրի մոտ, ընդ որում՝ տվյալ դեպքում որպես հարկային գործակալ հանդես է գալիս Բանկը:

2025 թվականի մայիսի 29-ին ընդունված Հարկային օրենսգրքի փոփոխությունների համաձայն ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները ազատվում են շահութահարկի վճարումից՝

- Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) պարտատոմսերից մինչև այդ պարտատոմսերի մարումն ստացված տոկոսների կամ մարելիս զեղչի ձևով ստացված եկամուտների մասով.

- Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) պարտատոմսերից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ստացված տոկոսների կամ մարելիս զեղչի ձևով ստացված եկամուտների մասով.
- Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) պարտատոմսերի՝ մինչև այդ պարտատոմսերի մարումը օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացված եկամուտների մասով.

- Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) պարտատոմսերի՝ մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ օտարումից, մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ այլ արժեթղթերով փոխանակումից կամ մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ կատարվող նման այլ գործարքներից ստացված եկամուտների մասով:

ՀՀ-ում եկամտային հարկ են վճարում.

1. ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք
2. անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ որպես ֆիզիկական անձինք, եկամտային հարկ վճարորդներ են համարվում միայն անձնական եկամուտների մասով:

Եկամտային հարկով հարկման օբյեկտ է համարվում.

1. ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից և (կամ) Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը, բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների ձեռնարկատիրական եկամուտների.

2. ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը, բացառությամբ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ Ֆիզիկական անձանց մշտական հաստատությանը վերագրվող եկամուտների, ինչպես նաև արտաքին տնտեսական գործունեությունից ստացվող եկամուտների:

Ըստ ՀՀ Հարկային օրենսգրքի՝ տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը երկու տարուց պակաս թողարկված պարտատոմսերից ֆիզիկական անձանց կողմից ստացած տոկոսային եկամուտն ենթակա է հարկման, իսկ հարկման դրույքաչափը ներկայումս սահմանված է **10 տոկոս:**

2025 թվականի մայիսի 29-ին ընդունված Հարկային օրենսգրքի փոփոխությունների համաձայն եկամտային հարկ վճարողների հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտներ են համարվում.

- Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) պարտատոմսերից մինչև այդ պարտատոմսերի մարումն ստացված տոկոսները կամ մարելիս զեղչի ձևով ստացվող եկամուտները, բացառությամբ բանկերի թողարկած այն պարտատոմսերի, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է երկու տարուց.

- Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) պարտատոմսերից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ստացված տոկոսները կամ մարելիս զեղչի ձևով ստացվող եկամուտները, բացառությամբ բանկերի թողարկած այն պարտատոմսերի, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է երկու տարուց:

Ըստ ՀՀ Հարկային օրենսգրքի՝ նվազեցվող եկամուտ է համարվում նաև պարտատոմսերի օտարումից,այլ արժեթղթերի հետ փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտը:
Ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս եկամտային հարկը պահում (գանձում) է հարկային գործակալը, ընդ որում՝ տվյալ դեպքում ֆիզիկական անձանց համար

հարկային գործակալ է հանդիսանում Բանկը: Եկամտային հարկի պահումը (գանձումը) իրականացվում է տոկոսների յուրաքանչյուր վճարման դեպքում:

Պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկման կանոնները և եկամտային հարկի կիրառվող դրույքաչափը նույնն են ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար:

3.4. Առաջարկի ժամկետները և պայմանները

3.4.1. Առաջարկի պայմանները և վիճակագրությունը

Պարտատոմսերի բաժանորդագրություն չի նախատեսվում:

Պարտատոմսերի տեղաբաշխման օրը ենթակա է որոշման Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի կողմից:

Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը պետք է կատարվի մինչև պարտատոմսերի ձեռքբերման յուրաքանչյուր հայտի ներկայացման օրվա ժամը.

- 16:30՝ Բանկի ցանկացած մասնաճյուղում հայտն առձեռն ներկայացնելու դեպքում:
- 16:30՝ ***investment@acba.am*** էլեկտրոնային հասցեին էլեկտրոնային հայտ ներկայացնելու միջոցով:

  Ժամը 16:30-ից հետո համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտերը համարվում են անվավեր:
- 18:00՝ acba digital հավելվածի միջոցով էլեկտրոնային հայտ ներկայացնելու դեպքում:

  Ընդ որում՝ տվյալ դեպքում, եթե հայտի ներկայացումը և համապատասխան գումարի վճարումը կատարվել է մինչև տվյալ օրվա 18:00-ն ներառյալ, ապա պարտատոմսի գինը հաշվարկվում է տվյալ օրով: Ժամը 18:00-ից հետո ներկայացված և/կամ վճարված հայտի համար վճարվող գումարի չափը հաշվարկվում է տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրվա պարտատոմսի գնով:

Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը համարվում է պատշաճ կերպով կատարված թողարկման նպատակով Բանկի կողմից բացված ***220004131292000 (ՀՀ դրամով արտահայտված պարտատոմսերի համար) և/կամ 220004131136001 (ԱՄՆ դոլարով արտահայտված պարտատոմսերի համար)*** բանկային հաշիվներին դրամական միջոցների մուտքագրման պահից:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ ներկայացնողները պետք է տեղյակ լինեն, որ իրենց հայտերը չբավարարվելու կամ մասնակի բավարարվելու դեպքում պարտատոմսերի ձեռքբերման համար վճարված գումարների՝ հատուկ հաշվի վրա մնալը, մինչև դրանք իրենց վերադարձնելու պահը, միջոցների ապօրինի պահում կամ դրանք վերադարձնելուց խուսափել չի հանդիսանում և դրանց վրա տոկոսներ չեն հաշվարկվում:

Բանկային փոխանցման միջոցով պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին ապահովել հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու համար անհրաժեշտ է դրամական միջոցները մուտքագրել «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ում բացված՝ Բանկի պարտատոմսերի տեղաբաշխման միջոցների հավաքագրման ***220004131292000 (ՀՀ դրամով արտահայտված պարտատոմսերի համար) և/կամ 220004131136001 (ԱՄՆ դոլարով արտահայտված պարտատոմսերի համար)*** տարանցիկ հաշվեհամարներին:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$V = P \times Q,$$

որտեղ՝

V-ն՝ պարտատոմսերի ձեռքբերման հայտում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծությունն է, որը կլորացվում է ստորակետից հետո երկու նիշի ճշտությամբ:

P-ն՝ պարտատոմսերի ձեռք բերման հայտի Բանկ ներկայացման օրվա դրությամբ պարտատոմսի գինն է, որը հաշվարկվում է **Ազդագրի 3.4.3.1 ենթաբաժնի** համաձայն:

Q-ն՝ պարտատոմսերի այն քանակն է, որը ներդրողը ցանկանում է ձեռք բերել:

3.4.1.1. Առաջարկի ընդհանուր ծավալը

Թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը կազմում է առավելագույնը՝ 50,000,000,000 (հիսուն միլիարդ) ՀՀ դրամ, 50,000,000 (հիսուն միլիոն) ԱՄՆ դոլար, որն իրականացվելու է մի քանի տրանշով: Տեղաբաշխման յուրաքանչյուր տրանշի ծավալը ենթակա է որոշման Բանկի գլխավոր գործադիր տնօրենի կողմից:

3.4.1.2. Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը

Պարտատոմսերի տեղաբաշխման հստակ ժամանակահատվածը՝ ներառյալ տեղաբաշխումը սկսելու և ավարտելու օրը, ենթակա է որոշման Բանկի գլխավոր գործադիր տնօրենի կողմից: Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար թողարկման և տեղաբաշխման առաջին օրը համընկնելու է:

Մինչև պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի առաջնային տեղաբաշխման ավարտը չտեղաբաշխված պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ժամկետը կարող է երկարաձգվել Բանկի գլխավոր գործադիր տնօրենի որոշմամբ մինչև 20 օրացուցային օրով՝ Ազդագրում սահմանված պայմաններով, եթե Բանկի խորհրդի կողմից չի կայացվել

որոշում այդ պարտատոմսերի տեղաբաշխման պայմանների փոփոխության կամ դրանք մարելու վերաբերյալ:
Թողարկողի կողմից պարտատոմսերի առաջարկը, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է հետաձգվել կամ չեղյալ հայտարարվել միայն անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքում (Ֆորս մաժոր):
Եթե Թողարկողը տեղաբաշխման ընթացքում ներկայացնում է Ծրագրային Ազդագրի լրացում, որը կապված է ազդագրում ներառված տեղեկատվության էական փոփոխության, նոր էական հանգամանքի կամ փաստի ի հայտ գալու հետ և ապա նա ներդրողի պահանջով պարտավոր է չեղյալ համարել ներդրողի տված ակցեպտը և առնվազն նրա կողմից արժեթղթերի ձեռքբերման գնով հետ վերադարձնել տեղաբաշխման ընթացքում նրանից ստացված միջոցները կամ հետ գնել մինչև լրացման ներկայացումը ներդրողին վաճառված արժեթղթերը: Սահմանված հետգնման պահանջը պետք է տեղաբաշխողին ներկայացվի գրավոր: Հետգնման պահանջի ներկայացման ժամկետը չի կարող ավելի կարճ լինել, քան Ծրագրային Ազդագրի լրացման հրապարակումից հետո 5-րդ աշխատանքային օրը:
Արժեթղթերի հետգնումն և տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցների վերադարձն իրականացվում են Բանկի կողմից անկանխիկ եղանակով՝ ներդրողի հետգնման պահանջը գրավոր ներկայացնելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:
Տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշման կայացման և տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները ներդրողներին վերադարձվում են կուտակված արժեկտրոնային եկամուտների հետ միասին: Արժեկտրոնային եկամուտը նման դեպքում հաշվարկվում է ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռք բերման օրվա և այն դադարեցնելու մասին որոշման կայացման օրերի միջև ընկած ժամանակաշրջանի համար:
ՀՀ ԿԲ-ն իր որոշմամբ կարող է կասեցնել պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքը՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք):
Տեղաբաշխողի նախաձեռնությամբ տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել միայն ՀՀ ԿԲ համաձայնությամբ՝ առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրով:
Եթե կասեցման ժամկետն ավարտվելու պահից՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, տեղաբաշխումը չի շարունակվում, ապա Բանկը պարտավոր է կայացնել տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշում և վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցներն արժեթղթերը ձեռք բերած անձանց Օրենքով սահմանված կարգով՝ կասեցման ժամկետի ավարտից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

3.4.1.3. Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացը

Թողարկողի պարտատոմսերի բաժանորդագրություն չի իրականացվելու:
Պարտատոմսերի ձեռքբերման համար, ներդրողները ներկայացնում են պարտատոմսերի ձեռքբերման հայտերը, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն

ընդունելու իրենց պատրաստակամությունը, և որով այդ պայմանները կդառնան ներդրողների համար պարտադիր: Հայտերը ներկայացվում են Բանկի հաստատված տիպային օրինակով, որը հրապարակվում է նաև ***www.acba.am*** ինտերնետային կայքում, (այսուհետ՝ հայտ) հետևյալ եղանակներով.

- «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ ցանկացած մասնաճյուղում Բանկի աշխատակցի օգնությամբ հայտ լրացնելու և ներկայացնելու միջոցնով, կամ
- ***investment@acba.am*** էլեկտրոնային հասցեին էլեկտրոնային հայտ ներկայացնելու միջոցով, կամ
- acba digital հավելվածի միջոցով էլեկտրոնային հայտ ներկայացնելու միջոցով:

Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը պետք է կատարվի մինչև պարտատոմսերի ձեռքբերման յուրաքանչյուր հայտի ներկայացման օրվա ժամը.

- 16:30՝ Բանկի ցանկացած մասնաճյուղում Բանկի աշխատակցի օգնությամբ հայտ լրացնելու և ներկայացնելու միջոցով:
- 16:30՝ ***investment@acba.am*** էլեկտրոնային հասցեին էլեկտրոնային հայտ ներկայացնելու միջոցով:
  Ժամը 16:30-ից հետո համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտերը համարվում են անվավեր:
- 18:00՝ acba digital հավելվածի միջոցով էլեկտրոնային հայտ ներկայացնելու միջոցով:
  Ընդ որում՝ տվյալ դեպքում, եթե հայտի ներկայացումը և համապատասխան գումարի վճարումը կատարվել է մինչև տվյալ օրվա 18:00-ն ներառյալ, ապա պարտատոմսի գինը հաշվարկվում է տվյալ օրով: Ժամը 18:00-ից հետո ներկայացված և/կամ վճարված հայտի համար վճարվող գումարի չափը հաշվարկվում է տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրվա պարտատոմսի գնով:

Պարտատոմս ձեռք բերել ցանկացող անձը պետք է թողարկման նպատակով Բանկում բացված ***220004131292000*** (ՀՀ դրամով արտահայտված պարտատոմսերի համար) և/կամ ***220004131136001*** (ԱՄՆ դոլարով արտահայտված պարտատոմսերի համար) տարանցիկ հաշվեհամարներին կատարի վճարում պարտատոմսերի ձեռքբերման հայտում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու համար՝ Ազդագրի 3.4.1. մասում նշված անհրաժեշտ դրամական միջոցների մեծության հաշվարկային բանաձևի համաձայն:

Թողարկողման նպատակով Բանկում բացված համապատասխան տարանցիկ հաշվեհամարին դրամական միջոցների ստացումից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում Բանկը Դեպոզիտարիային ներկայացնում է պարտատոմսերի տեղաբաշխման հանձնարարական՝ ներդրողի արժեթղթերի հաշվին համապատասխան քանակի պարտատոմսերի փոխանցման և հաշվեգրման համար:

Պարտատոմսերի տեղաբաշխման համար նախատեսված վերջնաժամկետից հետո թողարկման նպատակով բացված ***220004131292000 (ՀՀ դրամով արտահայտված պարտատոմսերի համար) և/կամ 220004131136001 (ԱՄՆ դոլարով արտահայտված***

պարտատոմսերի համար) տարանցիկ հաշվեհամարներին ստացված գումարները ենթակա են հետ վերադարձման, իսկ դրանց համապատասխան հայտերը չեն կարող բավարարվել անկախ դրանց Բանկի կողմից ընդունման ժամկետից:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտը կհամարվի պատշաճ կերպով ընդունված Բանկի կողմից, եթե միաժամանակ առկա են ստորև նշված բոլոր հանգամանքները.

- հայտը ներկայցվել է Ազդագրում նշված կարգով, և
- պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարն ապահովվել է Ազդագրում նշված կարգով, և
- պարտատոմսերի ձեռքբերման գործարքի վերաբերյալ առկա չէ Ազդագրի ***3.3.12.*** կետով սահմանված հանգամանքները:

Իրավաբանական անձ ներդրողների համար հայտի ձևը ներկայացված է Ազդագրի ***Հավելված 1-ում***: Ֆիզիկական անձ ներդրողների համար հայտի ձևը ներկայացված է Ազդագրի ***Հավելված 2-ում***:

Պարտատոմսերի ձեռքբերմանը մասնակցել ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք կարող են ներկայացնել մեկից ավելի հայտեր:

3.4.1.4. Հայտի լրացում

Պարտատոմսերի ձեռքբերման համար ֆիզիկական և/ կամ իրավաբանական անձինք լրացնում են հայտում նշված դաշտերը, որոնց լրացումը պարտադիր է հայտի վավերականությունն ապահովելու համար:

Հայտում նշված «Ձեռք բերվող պարտատոմսերի ընդհանուր գումար» դաշտում ներդրողները պետք է նշեն «Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ» դաշտում ամրագրված թվի և «Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման գին» դաշտում ամրագրված թվի արտադրյալը:

3.4.1.5. Առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորությունը

Տեղաբաշխման ընթացքում առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորություն կարող է նախատեսվել Բանկի գլխավոր գործադիր տնօրենի կողմից:

Տեղաբաշխման կարգով պայմանավորված՝ հնարավոր է պարտատոմսերի ձեռքբերման որևէ հայտի և/կամ հայտերի մասնակի բավարարում:

Հայտի մասնակի բավարարման դեպքում, եթե առկա է լինում ներդրողին հետ վերադարձման ենթակա գումար, ապա տեղաբաշխման ավարտից հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում նշված գումարը Թողարկողի կողմից ենթակա է վերադարձման, ինչն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ համապատասխան ներդրողի բանկային հաշվին փոխանցմամբ:

3.4.1.6. Հայտը հետ կանչելու ժամանակաշրջանը

Ազդագրի 3.4.1.3. ենթաբաժնում նկարագրված պարտատոմսերի ձեռքբերման պայմանների չպահպանման դեպքում ներդրողների հայտերը համարվում են անվավեր և չեն մասնակցում տեղաբաշխմանը:
Բացի վերոնշյալ դեպքից, ներդրողները պարտատոմսերի հայտերը պատշաճ կերպով Բանկի կողմից ստանալուց և համապատասխան վճարումը կատարելուց հետո դրանք չեն կարող հետ կանչել:

3.4.1.7. Նվազագույն և առավելագույն գումարները

Թողարկման ընթացքում գոյություն են ունենալու պարտատոմսերի ձեռքբերման քանակական սահմանափակումներ, որը ենթակա է որոշման յուրաքանչյուր թողարկումից առաջ Բանկի Գործադիր տնօրենի կողմից, սակայն.

- ՀՀ դրամով պարտատոմսերի դեպքում՝ կարող է սահմանվել ոչ պակաս քան 5 (հինգ) և ոչ ավել քան 15,000 (տասնհինգ հազար) հատ,
- ԱՄՆ դոլարով պարտատոմսերի դեպքում՝ կարող է սահմանվել ոչ պակաս քան 5 (հինգ) և ոչ ավել քան 15,000 (տասնհինգ հազար) հատ:

3.4.1.8. Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելը

Թողարկողի կողմից թողարկվող պարտատոմսերի ձեռքբերման համար իրավաբանական և/կամ ֆիզիկական անձինք վճարումը կատարում են թողարկման նպատակով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ում բացված ***220004131292000 (ՀՀ դրամով արտահայտված պարտատոմսերի համար) և/կամ 220004131136001 (ԱՄՆ դոլարով արտահայտված պարտատոմսերի համար)*** տարանցիկ հաշվեհամարներին:

Պարտատոմսերի դիմաց սեփականության իրավունքը հավաստող քաղվածքները տրամադրվում են «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի հաշվի օպերատորների կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

3.4.1.9. Առաջարկի արդյունքների հրապարակումը

Տեղաբաշխման արդյունքները կհրապարակվեն Օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում: Հրապարակային տեղաբաշխումն սկսելու պահից յուրաքանչյուր 30-րդ օրվա ավարտից հետո ոչ ուշ, քան 15-րդ օրը, ինչպես նաև տեղաբաշխման ավարտից հետո՝ 30 օրվա ընթացքում, Թողարկողը պարտավոր է ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացնել հաշվետվություն՝ տեղաբաշխման ընթացքի և արդյունքների մասին՝ ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևով և կարգով: Տեղաբաշխման ավարտի վերաբերյալ ՀՀ ԿԲ ներկայացվող հաշվետվությունը հրապարակվում է նաև Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում՝ **www.acba.am**:

3.4.1.10. Նախապատվության իրավունքը

Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է ըստ պարտատոմսերի ձեռքբերման հայտերի ներկայացման և դրանց դիմաց կատարված վճարման ստացման հերթականության, այսինքն՝ առաջնահերթություն ունի այն ներդրողը ում՝ ներկայացրած հայտը և հայտի համաձայն թողարկման նպատակով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ում բացված ***220004131292000 (ՀՀ դրամով արտահայտված պարտատոմսերի համար) և/կամ 220004131136001 (ԱՄՆ դոլարով արտահայտված պարտատոմսերի համար)*** տարանցիկ հաշվեհամարներին վճարումն ավելի վաղ է ստացվել:
Թողարկվող պարտատոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեցող անձինք չկան:

3.4.2. Տեղաբաշխման պլանը

3.4.2.1. Ներդրողների խմբերը

Առաջարկն ուղղված է ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ ներառյալ որակավորված և ինստիտուցիոնալ ներդրողներին, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերին:

3.4.2.2. Հայտերի բավարարման մասին տեղեկացումը

Ներդրողները Թողարկողից տեղեկանում են իրենց հայտերի բավարարման մասին մինչև հայտի ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը: Հայտերի բավարարման մասին ներդրողին տեղեկացումը տրամադրվում է առձեռն՝ Բանկի ցանկացած մասնաճյուղում հայտն առձեռն ներկայացնելու դեպքում, կամ էլեկտրոնային եղանակով՝ acba digital հավելվածի միջոցով էլեկտրոնային հայտ ներկայացնելու դեպքում, ինչպես նաև investment@acba.am էլեկտրոնային հասցեից հաճախորդի իրավասու հասցեին ուղարկվող հաղորդագրությամբ:
Ներդրողները տեղաբաշխման արդյունքներին կարող են ծանոթանալ հետևյալ տարբերակներով՝

1. acba digital հավելվածում առկա համապատասխան բաժնում՝ հայտի հաստատման հաղորդագրությունը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:
2. investment@acba.am էլեկտրոնային հասցեից հաճախորդի իրավասու հասցեին ուղարկվող հաղորդագրությամբ:
3. Բանկի մասնաճյուղում կամ էլ.հասցեով, եթե պարտատոմսերի ձեռքբերման հայտը ընդունվել է բանկի մասնաճյուղում՝ հայտի հատատումից մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

3.4.3. Առաջարկի գինը

3.4.3.1. Արժեթղթերի գինը

Պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց, տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$P = \frac{C}{f}\sum_{t=1}^{n}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+\tau}} + \frac{100}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{n-1+\tau}}$$

որտեղ՝

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

P – Պարտատոմսի լրիվ գինն է (կլորացվում է ստորակետից հետո 4 նիշի ճշտությամբ թվաբանական կլորացման կանոնների համաձայն),

DSN - գործարքի կատարման օրից մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

DCC - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է 2 (երկու) կիսամյակային վճարումների համար),

n - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը,

C - տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց,

Y - մինչև մարում եկամտաբերություն:

Մինչև յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման սկիզբը տեղաբաշխման ամբողջ ժամանակահատվածի համար՝ ըստ օրերի, պարտատոմսերի վաճառքի գինը կհրապարակվի Բանկի ինտերնետային կայքում:

Բանկային փոխանցման միջոցով պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:

Ներդրողները պարտավոր են նաև Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշվառման անձնական դեպո հաշիվ և կրել վերջինիս հետ կապված ծախսերը:

3.4.4. Տեղաբաշխումը

3.4.4.1. Երաշխավորված տեղաբաշխում իրականացնողները

Երաշխավորված տեղաբաշխում իրականացնողներ առկա չեն:

3.4.4.2. Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնողները

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ չերաշխավորված եղանակով տեղաբաշխելու է իր կողմից թողարկվող անվանական արժեկտրոնային ոչ փաստաթղթային մինչև՝ 50,000,000,000 (հիսուն միլիարդ) ՀՀ դրամ և 50,000,000 (հիսուն միլիոն) ԱՄՆ դոլար թողարկման ընդհանուր ծավալով պարտատոմսերը:

3.4.4.3. Տեղաբաշխման պայմանները

Թողարկողը և Տեղաբաշխողը նույն իրավաբանական անձն են՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ը: Թողարկող/Տեղաբաշխողը այլ տեղաբաշխողների և/կամ խմբի հետ համատեղ տեղաբաշխման պայմանագիր չի կնքել:

3.4.4.4. Վճարում ընդունող բանկերը և պահառուները

Պարտատոմսերի դիմաց անհրաժեշտ է վճարում կատարել թողարկման նպատակով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ում (ՀՀ, Երևան 0002, Արամի փողոց, 82-84 շենք) բացված ***220004131292000 (ՀՀ դրամով արտահայտված պարտատոմսերի համար) և/կամ 220004131136001 (ԱՄՆ դոլարով արտահայտված պարտատոմսերի համար)*** տարանցիկ հաշվեհամարներին:

Թողարկողի պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումն ու (կամ) գրանցումն (սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի վարում) իրականացվելու է Դեպոզիտարիայի միջոցով, որը հանդես է գալու որպես Գլխավոր պահառու՝ համաձայն ՀՀ օրենսդրության և կազմակերպության գործունեությունը կարգավորող կանոնների:
Պարտատոմսերը կարող են հաշվառվել նաև ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված որևէ պահառուի կողմից (Դեպոզիտարիայի ենթապահառու)՝ այդ պահառուի մոտ պարտատոմսերի սեփականատիրոջ/անվանատիրոջ համար արժեթղթերի հաշիվ բացելու և վարելու միջոցով:
Դեպոզիտարիայի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 26/1, Էրեբունի պլազա 5-րդ հարկ, հեռ.՝ +(374) 60 61 55 55, (լրաց.111):
Պարտատոմսերի ռեեստրի վարման Հաշվի Օպերատոր հանդիսանում է «ԱԿԲԱ- ԲԱՆԿ» ԲԲԸ: Մինչև պարտատոմսերի ձեռքբերումը ներդրողները պարտավոր են Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշիվ:

3.5. Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

3.5.1. Առևտրին թույտվությունը

Սույն Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցելուց և պարտատոմսերը տեղաբաշխելուց հետո Բանկը դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և առևտրին թույլատրելու համար:

Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ առևտրին թույլտվության հայցը կարող է նաև չբավարարվել: Տեղաբաշխման ավարտից հետո վեց ամսվա ընթացքում կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն չստանալու դեպքում, պարտատոմսերի տեղաբաշխումը կհամարվի չեղյալ: Չեղյալ համարելու վերաբերյալ Թողարկողի որոշումն ուժի մեջ մտնելու պահից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Թողարկողը ետ է գնելու պարտատոմսերն իրենց առաջարկի գնով (ներառյալ մինչև չեղյալ համարելու որոշման ուժի մեջ մտնելու օրը հաշվեգրված արժեկտրոնի գումարները):

3.5.2. Շուկաները

Այս պահին Թողարկողի կողմից սույն Ծրագրային Ազդագրով գրանցվող պարտատոմսերը ոչ մի շուկայում թույլատրված չեն հրապարակային առևտրի:

Հարկ է նշել նաև, որ մինչ օրս Բանկն իրականացրել է պարտատոմսերի 25 թողարկում, որից տասնհինգը՝ դրամային, իսկ տասը՝ դոլարային արտահայտությամբ:

Ինչպես նաև 2021թ.-ին իրականացվեց Բանկի լրացուցիչ թողարկման բաժնետոմսերի առաջնային հրապարակային տեղաբաշխում՝ թողարկելով 500,000 (հինգ հարյուր հազար) հատ բաժնետոմս՝ ընդհանուր 7,500,000,000 (յոթ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ տեղաբաշխման գումարով: Իսկ 2024թ.-ին Ակբա բանկը իրականացրեց հասարակ (սովորական) բաժնետոմսերի լրացուցիչ տեղաբաշխում՝ 485,000 հատ բաժնետոմսերի քանակով, որի արդյունքում գործող բաժնետոմսերի ծավալը 5,500,000 (հինգ միլիոն հինգ հարյուր հազար) հատից դարձավ 5,985,000 (հինգ միլիոն ինը հարյուր ութսունհինգ հազար) հատ սովորական բաժնետոմս:

Բանկի կողմից թողարկված՝ շրջանառության մեջ առկա, պարտատոմսերի վերաբերյալ հակիրճ տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ աղյուսակում.

N	Պարտատոմսի ԱՄՏԾ	Թողարկում	Ժամկետ	Թողարկման ծավալ	Արժույթ	Արժեկտրոնային դրույք	Մարում
1.	AMACBAB2EER9	02.05.2024	30 ամիս	1,398,900,000	AMD	9.50%	02.11.2026
2.	AMACBAB2FER6	02.05.2024	30 ամիս	3,639,900	USD	4.50%	02.11.2026
3.	AMACBAB2GER4	21.10.2024	60 ամիս	5,000,000,000	AMD	11.00%	21.10.2029
4.	AMACBAB2HER2	21.10.2024	60 ամիս	13,419,700	USD	6.00%	21.10.2029
5.	AMACBAB2IER0	11.11.2024	60 ամիս	5,000,000,000	AMD	10.50%	11.11.2029
6.	AMACBAB2JER8	20.02.2025	36 ամիս	1,116,800,000	AMD	9.50%	20.02.2028
7.	AMACBAB2KER6	20.02.2025	60 ամիս	2,320,400,000	AMD	10.00%	20.02.2030
8.	AMACBAB2LER4	25.08.2025	60 ամիս	10,000,000,000	AMD	10.50%	25.08.2030
9.	AMACBAB2MER2	25.08.2025	60 ամիս	10,000,000	USD	5.50%	25.08.2030
10.	AMACBAB2NER0	15.01.2026	60 ամիս	10,000,000,000	AMD	10.50%	15.01.2031
11.	AMACBAB2OER8	15.01.2026	60 ամիս	10,000,000	USD	5.50%	15.01.2031
12.	AMACBAB2PER5	23.02.2026	60 ամիս	10,000,000,000	AMD	10.25%	23.02.2031

Բանկի կողմից թողարկված բոլոր պարտատոմսերը ցուցակվել են «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ-ում և ընդգրկվել պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում:
Բանկի բաժնետոմսերը ցուցակված են Հայաստանի ֆոնդային բորսայի (B) հարթակում:

3.5.3. Շուկա ստեղծողները

Բանկը մասնագիտացված անձանց հետ դեռ չի կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի (մարքեթ մեյքերի) ծառայություններից օգտվելու վերաբերյալ պայմանագիր:
Բանկը պարտավորվում է մասնագիտացված անձանց հետ կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի պայմանագիր, որի կնքումից հետո օրենսդրությամբ սահմանված կարգով հրապարակել անհրաժեշտ տեղեկատվությունը:

3.6. Լրացուցիչ տեղեկատվություն

3.6.1. Խորհրդատուներ

Սույն Ազդագրի պատրաստման ընթացքում Բանկը չի օգտվել այլ խորհրդատուների ծառայություններից:

3.6.2. Աուդիտորական եզրակացությունը

Բացի սույն Ծրագրային Ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվությունների, որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, սույն Ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից: Հաշվետվությունների և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունների պատճենները ներկայացված են **Ազդագրի Հավելված 6-ում**:

ԱՈՒԴԻՏՈՐԻ ՀՂՈՒՄՆԵՐ

ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա ՍՊԸ-ն աուդիտի չի ենթարկել, չի ստուգել կամ իրականացրել որևէ ընթացակարգ կապված 2025 թվականի դեկտեմբերի 31-ից հետո ֆինանսական տվյալների հետ, և համապատասխանաբար, ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա ՍՊԸ-ն կարծիք կամ հավաստիացման որևէ այլ ձև չի հայտնում նման տեղեկատվության համար:

Սույն ազդագրի որևէ մասում ներառված Բանկի և նրա դուստր ընկերությունների համախմբված ֆինանսական հաշվետվությունները առ 2025 թվականի դեկտեմբերի 31-ը և այդ ամսաթվին ավարտված տարվա համար աուդիտի են ենթարկվել ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա ՍՊԸ -ի կողմից՝ որպես անկախ աուդիտոր, ինչպես նշված է այդ հաշվետվություններում:

Սույն ազդագրի որևէ մասում ներառված Բանկի և նրա դուստր ընկերությունների համախմբված ֆինանսական հաշվետվությունները առ 2024 թվականի դեկտեմբերի 31-ը

և այդ ամսաթվին ավարտված տարվա համար աուդիտի են ենթարկվել ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա ՍՊԸ -ի կողմից՝ որպես անկախ աուդիտոր, ինչպես նշված է այդ հաշվետվություններում:

Սույն ազդագրի որևէ մասում ներառված Բանկի և նրա դուստր ընկերությունների համախմբված ֆինանսական հաշվետվությունները առ 2023 թվականի դեկտեմբերի 31-ը և այդ ամսաթվին ավարտված տարվա համար աուդիտի են ենթարկվել ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա ՍՊԸ -ի կողմից՝ որպես անկախ աուդիտոր, ինչպես նշված է այդ հաշվետվություններում:

3.6.3. Թողարկողի վարկանիշը

2025 թվականի ընթացքում Բանկի ֆինանսական կայունությունն ու վարկունակությունը վերահաստատվել են աշխարհի առաջատար վարկանիշային գործակալությունների կողմից.

- **Moody's Investors Service** գործակալությունը Բանկին շնորհել է **«Ba3»** երկարաժամկետ վարկանիշ (Long-term deposit rating)՝ **«Կայուն»** (Stable) հեռանկարով: Այս վարկանիշն արտացոլում է Բանկի ամուր դիրքերը հայաստանյան շուկայում, կապիտալիզացիայի բարձր մակարդակը և իրացվելիության բավարար պաշարները:
- **Fitch Ratings** գործակալությունը 2025 թվականի փետրվարին վերահաստատել է Բանկի էմիտենտի դեֆոլտի երկարաժամկետ վարկանիշը (Long-Term IDR) **«BB-»** մակարդակում, ինչպես նաև կենսունակության վարկանիշը (Viability Rating)՝ **«bb-»** մակարդակում: Վարկանիշների հեռանկարը գնահատվել է որպես **«Կայուն»**:

ԲԱԺԻՆ 4. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

4.1. Անկախ աուդիտորներ

Արտաքին աուդիտորը յուրաքանչյուր տարի ընտրվում է բաժնետերերի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Աուդիտի նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները՝ ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալների հետևանքով առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական եզրակացություն՝ ներառյալ աուդիտորի կարծիքը :

2022-2025թթ.-ին Բանկի տարեկան անկախ աուդիտ իրականացնում է «ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ:

«ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ-ն գլոբալ «ՓրայսուոթերհաուսԿուպերս» (PwC) միջազգային աուդիտորական և խորհրդատվական ծառայություններ մատուցող կազմակերպության անդամ է: Ընկերությունն իր գործունեությունը Հայաստանում սկսել է 2008թ.-ից:

«ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ-ի հասցեն՝ ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2, «Կամար» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ, հեռ.՝ +374 (10) 51 21 51, ինտերնետային կայքի հասցեն է՝ www.pwc.com/am/en: Կազմակերպության տնօրենն է Նինո Կադագիշվիլին:

2026թ.-ի մայիսի 27-ի Բանկի տարեկան ընդհանուր ժողովի որոշմամբ հաստատվել է Բանկի 2026 և 2027 թվականներին ավարտվող ֆինանսական տարվա տարեկան համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնելու նպատակով որպես արտաքին աուդիտ իրականացնող անձի՝ «ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ-ի թեկնածությունը:

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի անկախ աուդիտորական եզրակացությունները ներկայացված են **Հավելված 6-ում**:

4.2. Ռիսկային գործոններ

Ինչպես ցանկացած ֆինանսական գործունեություն, այնպես էլ բանկայինը, մշտապես ռիսկ է պարունակում: Ռիսկն այն բանի հավանականությունն է, որ Բանկը տվյալ գործունեության արդյունքում շահույթ չի ստանա, կստանա նախատեսված ծավալներին զգալիորեն զիջող շահույթ կամ ընդհանրապես վնաս կկրի:

Ցանկացած տնտեսական գործունեության ընթացքում, առավել ևս բանկային, անհնարին է զրոյական ռիսկի հասկացությունը և հարցը ոչ թե ընդհանրապես բացառումն է, այլ նրա ճիշտ ծավալային բնութագրի գնահատումը և արդյունավետ կառավարումը:

Ռիսկերի կառավարումը «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կառավարման համակարգի կարևորագույն մաս է կազմում և այն իրենից ներկայացնում է Բանկի պոտենցյալ վնասների

կանխարգելմանն ու նվազեցմանն ուղղված փոխկապակցված գործողությունների ամբողջություն: Ռիսկերի կառավարման գործընթացը ծայրաստիճան կարևոր է Բանկի շահութաբերության պահպանման համար:
Ստորև նշված ռիսկերից յուրաքանչյուրը կարող է հանգեցնել Բանկի ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և կանխիկ դրամական հոսքերի վատթարացմանը, ինչպես նաև շուկայական դիրքի, մրցունակության և հեռանկարային զարգացման անկմանը, ինչը իր հերթին կարող է հանգեցնել Բանկի կողմից ստանձնած պարտավորությունների՝ լրիվ կամ մասնակի չկատարմանը կամ որոշակի կերպով դժվարացնել ներդրողների կողմից ապագայում պարտատոմսերի արագ և շահավետ գնով իրացումը և արժեկտրոններով նախատեսված տոկոսագումարների ստացումը:
Ներդրողները պետք է հաշվի առնեն նաև, որ ստորև ներկայացվող ռիսկերը ոչ բոլոր ռիսկերն են, որոնք Բանկը կարող է երբևէ կրել: Ենթադրաբար կարող են լինել լրացուցիչ ռիսկեր, որոնք բանկն այժմ չի համարում էական, կամ որոնք ներկայումս հայտնի չեն նրան, և ցանկացած այդպիսի ռիսկ կարող է հանգեցնել ներդրողի կողմից ներդրված գումարի մասնակի կամ ամբողջական կորստին:
Իր գործունեության ընթացքում Բանկն առնչվում է հետևյալ հիմնական ռիսկերի հետ.

Վարկային ռիսկ - Բանկը ենթարկվում է վարկային ռիսկի, որն իրենից ներկայացնում է ֆինանսական վնաս կրելու ռիսկը, երբ փոխառուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները Բանկի նկատմամբ, որն ազդում է վերջինիս գործունեության վրա, առաջացնում լրացուցիչ ծախսեր և բացասական անդրադառնում շահույթի վրա:
Վարկային ռիսկը Բանկի հիմնական ռիսկերից մեկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Վարկային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի ու փոխատվությունների տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Բանկի ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտահաշվեկշռային ֆինանսական
գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները:

Վարկային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Բանկի Ռիսկերի կառավարման տնօրինության կողմից, և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Բանկի խորհրդին, Ռիսկերի կառավարման հանձնաժողովին և Գլխավոր գործադիր տնօրենին:

Համաձայն Բանկի վարկային պորտֆելի ռիսկայնության վերլուծությունների՝ Բանկի պորտֆելը ունի հետևյալ կառուցվածքը.

	31.03.2026թ. (Աուդիտ չանցած)	31.12.2025թ.	31.12.2024թ.	31.12.2023թ.
Հաճախորդներին տրված վարկեր, այդ թվում՝	663,921,311	643,747,186	542,700,566	460,471,333
Փուլ 1[1]	635,884,961	619,296,250	523,620,985	440,146,216
Փուլ 2[2]	8,273,360	6,854,073	6,279,163	7,191,299
Փուլ 3[3]	19,755,918	17,596,863	12,781,638	13,104,137
POCI[4]	7,073	-	18,780	29,681
Վարկային կորստի գծով պահուստ	(12,400,208)	(10,349,301)	(6,490,534)	(5,271,996)

[1] **Փուլ 1:** Վարկերի սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը պահուստ է ճանաչում 12 ամսվա ԱՎԿ-ի հիման վրա: 1-ին փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից:

[2] **Փուլ 2:** Երբ գործիքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, Խումբը պահուստը ճանաչում է վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների (ԱԿԱՎԿ) համար: 2-րդ փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից:

[3] **Փուլ 3:** Արժեզրկված համարվող վարկեր

[4] **POCI:** Ձեռք բերված կամ ստեղծված՝ արժեզրկված (POCI) ակտիվները ֆինանսական ակտիվներ են, որոնք արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ: Տվյալ ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է վարկային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա: ԱՎԿ-ն միայն ճանաչվում կամ ապաճանաչվում է այնքանով, որքանով որ հետագայում փոխվում է ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների գնահատականը:

Վարկային ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով Բանկը կարևորում է վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիան, հսկողություն սահմանում տարբեր տեսակի կենտրոնացումների վրա, շարունակաբար վերահսկում է առանձին վարկերի վիճակը և կանոնավոր կերպով գնահատում է իր հաճախորդների վճարունակությունը՝ անհրաժեշտության դեպքում փոփոխելով վարկի տրամադրման սահմանաչափերը և սքորի ընդունելի նվազագույն մակարդակը:

Բանկը կիրառում է բազմաթիվ միջոցներ վարկային ռիսկը զսպելու համար: Մասնավորապես գրավային ապահովվածության միջոցով վարկային ռիսկի կրճատում: Բանկը կանոններ է սահմանում գրավի հատուկ տեսակների ընդունելի լինելու կամ ռիսկերի զսպման վերաբերյալ:
Վարկերի և փոխատվությունների համար գրավի հիմնական տեսակներն են.

- հիփոթեքային պայմանագրերով գրավադրվող անշարժ գույքը.
- կազմակերպությունների գործառնական ակտիվները՝ շենքերը, այլ հիմնական միջոցներ, պաշարները.
- ֆինանսական գործիքները՝ պարտքային և բաժնային արժեթղթերը.
- շարժական գույք:

Տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը սովորաբար ապահովված չեն:
Իրացվելիության ռիսկն - Իրացվելիության ռիսկը հավանականություն է, որ Բանկը բավարար իրացվելի միջոցներ չի ունենա պարտավորությունները ժամանակին մարելու համար: Կարող է հանդես գալ երկու եղանակով՝ միջոցների ներգրավման անհնարինություն և ակտիվների իրացվելիության ռիսկ: Առաջինը ենթադրում է, որ Բանկը հնարավորություն չի ունենա համապատասխան ժամկետում միջոցներ ներգրավել շուկայից այնպիսի արժեքով, որը հասանելի է շուկայի այլ մասնակիցներին (օրինակ՝ բանկի վարկանիշի կամ հեղինակության անկման արդյունքում): Երկրորդ դեպքում բանկն ի վիճակի չէ շուկայում իրացնել իր ակտիվներն առանց գնային կորուստների (ոչ տարողունակ կամ ոչ իրացվելի շուկայական պայմաններում, երբ առկա են գնային զգալի տատանումներ կամ կոնկրետ բանկի ակտիվների նկատմամբ շուկայում անբավարար պահանջարկի դեպքում):
Բանկը գնահատում է այն շուկաների իրացվելիությունը, որտեղ գործունեություն է ծավալում, ինչպես նաև նախատեսում և ապահովում է իր իրացվելիության մակարդակին համարժեք կապիտալի առկայություն՝ հաշվի առնելով, որ բանկի կապիտալի մեծությունը կարող է ազդել ճգնաժամային իրավիճակներում բանկի՝ իրացվելիություն ներգրավելու հնարավորության վրա:

Այս ռիսկի զսպման նպատակով Բանկը ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ՝ ի լրումն իր հիմնական ավանդային բազայի, կառավարում է ակտիվները՝ հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը՝ օրական, շաբաթական, ամսական կտրվածքով: Բացի այդ, ՀՀ ԿԲ պահանջով Բանկը ՀՀ ԿԲ-ում թղթակցային հաշիվներին պահում է պարտադիր պահուստներ՝ իր դրամային պարտավորությունների 4%-ի չափով ՀՀ դրամով, իսկ արտարժութային պարտավորությունների 15%-ի չափով չափով արտարժույթով, որը հանդիսանում է պահուստային բուֆեր՝ հնարավոր արտահոսքի սպասարկման համար: Ստորև ներկայացվում են իրացվելիության նորմատիվները 2023-2026թթ.-ի դրությամբ.

Նորմատիվներ	ՀՀ ԿԲ սահմանած թույլատրելի մեծություն	Փաստացի մեծություն 31.03.2026թ. (Աուդիտ չանցած)	Փաստացի մեծություն 31.12.2025թ. (Աուդիտ չանցած)	Փաստացի մեծություն 31.12.2024թ. (Աուդիտ չանցած)	Փաստացի մեծություն 31.12.2023 թ. (Աուդիտ չանցած)
$Ն_2^{1*}$	Նվազագույնը 15%	27.1%	23.8%	25.4%	24.0%
$Ն_2^{2**}$	Նվազագույնը 60%	122.7%	97.6%	107.4%	103.0%
$Ն_2^{3***}$	Նվազագույնը 100%	358.0%	312.7%	321.0%	420.0%
$Ն_2^{4****}$	Նվազագույնը 100%	122.1%	121.4%	127.4%	133.0%

Տոկոսադրույքի ռիսկ - Տոկոսադրույքի ռիսկը շուկայում տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխություններով պայմանավորված բանկի կողմից կորուստ կրելու հավանականությունն է, որն արտահայտվում է ներգրավված միջոցների դիմաց վճարվող տոկոսագումարների ավելացմամբ կամ տեղաբաշխված միջոցներից ստացված եկամուտների նվազմամբ, այսինքն՝ տոկոսադրույքի ռիսկի ազդեցությունն անմիջապես արտահայտվում է բանկի տոկոսային մարժայի վրա: Հաշվի առնելով, որ բանկերի եկամուտների և ծախսերի հիմնական մասը կազմում են տոկոսային եկամուտները և ծախսերը, ակնհայտ է դառնում բանկերի ուղղակի կախվածությունը տոկոսադրույքի ռիսկից և այդ ռիսկի կարգավորման հնարավորության կարևորությունը բանկերի համար:

* Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցություն:

** Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցություն:

*** Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցություն:

**** Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցություն:

Արտարժութային ռիսկ - Արտարժութային ռիսկը հավանականություն է, որ արժույթի փոխարժեքի տատանումները բացասական ազդեցություն կունենան բանկի կապիտալի և/կամ շահույթի վրա: Վերաբերում է ինչպես առևտրային, այնպես էլ վարկային գործառնություններին: Արտարժութային ռիսկ կարող է առաջանալ, երբ արտարժութային դիրքը բաց է՝ «կարճ» (բանկի արտարժույթով ակտիվները փոքր են արտարժույթով պարտավորություններից) կամ «երկար» (ակտիվները տվյալ արժույթով գերազանցում են այդ նույն արժույթով նրա պարտավորություններից):

Բանկի կառավարման մարմինները, արտարժութային ռիսկը զսպելու նպատակով, բանկի բոլոր էական արժույթների, ինչպես նաև բանկի համախառն դիրքի նկատմամբ սահմանել են արտարժութային դիրք/ընդհանուր նորմատիվային կապիտալ սահմանաչափեր, որոնց նկատմամբ վերահսկողությունը իրականացվում է օրական պարբերականությամբ: Արտարժութային ռիսկի պահպանողական քաղաքականությունից ելնելով՝ եվրո և ՌԴ ռուբլի արտարժույթների գծով էական բաց դիրքեր չեն պահվել, իսկ ԱՄՆ դոլարով արտահայտված դիրքը գտնվել է Բանկի կողմից ընդունելի մակարդակում:

Գործառնական ռիսկ – տեխնիկական անսարքության, ներքին գործընթացների, համակարգերի և մարդկային գործոնի արդյունքում առաջացող կորուստների հավանականությունն է: Տեխնիկական միջոցների խափանման հետ կապված ռիսկերից Բանկի համար առավել մեծ նշանակություն ունեն տվյալների բազայի ամբողջական պահպանումը վտանգող ռիսկերը: Այս առումով Բանկն իրականացնում է տվյալների բազայի պարբերաբար արխիվացում, որոնց կրկնօրինակները պահվում են, ինչպես Բանկի սերվերների և համակարգիչների մեջ, այնպես և արտաքին կրիչների վրա: Մարդկային գործոններով պայմանավորված ռիսկերը նվազեցնելու նպատակով Բանկում ներդրված է ներքին հսկողության համակարգ, ինչի տարր են հանդիսանում գործարքների կրկնակի ստուգումը և առնվազն երկու անձի կողմից հաստատումը, Բանկի ներքին աուդիտորի, մշտական հսկող կողմից պարբերաբար իրականացվող ստուգումները և այլն:

Օրենսդրական և նորմատիվային դաշտի փոփոխության ռիսկ – Բանկը գործում է ՀՀ տնտեսության ամենավերահսկվող հատվածներից մեկում: Բանկային գործունեությանը վերաբերող իրավական և օրենդրական դաշտի անբարենպաստ կամ անցանկալի փոփոխությունները ներառյալ բանկերի նկատմամբ կիրառվող տնտեսական նորմատիվների հնարավոր խստացումները կարող են բացասաբար ազդել Բանկի շահութաբերության ցուցանիշների վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ օրենսդրական փոփոխությունները կարող են ազդել պարտատոմսերի գրավչության և արդյունքում՝ իրացվելիության վրա:

Համբավի ռիսկ - հավանականությունն է,որ Բանկի վերաբերյալ հանրության բացասական կարծիքը (իրականությանը համապատասխանող կամ չհամապատասխանող) կհանգեցնի հաճախորդների թվաքանակի նվազմանը, կոնտրագենտների/հաճախորդների հետ իրականացվող գործառնությունների ծավալի կրճատմանը, ծախսատար դատական գործընթացների և եկամտաբերության անկմանը: Այս առումով Բանկը բարձր է

գնահատում իր բարի համբավը և գործադրում լավագույն ջանքեր Բանկի հեղինակության պահպանման ուղղությամբ: Բանկը ձեռնարկում է միջազգային սանկցիաների պահանջների (մասնավորապես՝ ՄԱԿ-ի, Եվրամիության, Ֆրանսիայի և ԱՄՆ կողմից կիրառված) պահպանման համապատասխան միջոցառումները համբավի ռիսկ չկրելու նպատակով:

Այս տեսակ ռիսկի արդյունավետ կառավարման և զսպման նպատակով Բանկը մշակել է ներքին Ֆինանսական անվտանգության քաղաքականություն, իրավական ակտեր և հսկողության խստագույն միջոցներ՝ ապահովելու իր գործունեության համապատասխանությունը օրենքներով և կանոնակարգերով ամրագրված ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջներին: Բանկը պարբերաբար, բայց ոչ ուշ քան տարին մեկ անգամ վերանայում է իր ՓԼ/ԱՖ հնարավոր և առկա ռիսկերը:

Երկրի ռիսկ - հավանականությունն է, որ երկրում տեղի ունեցող տնտեսական, սոցիալական և (կամ) քաղաքական պայմանները կամ իրադարձությունները բացասական ազդեցություն կունենան բանկի ռիսկի պրոֆիլի, իրացվելիության, կապիտալի և (կամ) շահույթի վրա: Բանկը ռիսկերի արդյունավետ կառավարման և նվազեցման նպատակով մշակում է ռեյտինգավորման համապատասխան համակարգեր այն երկրների գծով, որոնց ռեզիդենտների հետ Բանկը կամ Բանկի հաճախորդները իրականացնում են այնպիսի ֆինանսական գործառնություններ, որոնք էական են բանկի համար երկրի ռիսկի տեսանկյունից:

Մրցակցային պայմանների ռիսկ - շուկայում մրցակից բանկերի կողմից առավել բարենպաստ պայմաններով նույնանման ծառայությունների մատուցման հետ կապված Բանկի պոտենցիալ եկամուտները կորցնելու հավանականությունն է: Մրցակցային պայմանների ռիսկը առաջանում է ՀՀ բանկային ծառայությունների շուկայում անընդհատ սրվող մրցակցության պայմաններում:

ՀՀ բանկային ծառայությունների շուկան խիստ մրցակցային է և Բանկն իր մրցունակ դիրքերն ամրապնդելու նպատակով առաջնորդվում է կորպորատիվ կառավարման սկզբունքներով, ներդնում է բանկային ինովացիոն առաջատար տեխնոլոգիաներ և բարձրացնում է մատուցվող ծառայությունների որակը:

Գիտակցելով վերը նշված ռիսկերը՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ մշտապես սահմանում և իրականացնում է այնպիսի ռազմավարություն, որը կնպաստի ռիսկերի արդյունավետ կառավարման և զսպման մեխանիզմների կիրառմանը:

4.3. Տեղեկատվություն թողարկողի մասին

4.3.1. Թողարկողի պատմությունը և զարգացումը

4.3.1.1. Թողարկողի անվանումը և կազմակերպաիրավական ձևը

Բանկի լրիվ անվանումն է՝

հայերեն՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն,
անգլերեն՝ "ACBA BANK" Open Joint Stock Company:

Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ »,
անգլերեն՝ "ACBA BANK":

Բանկը ստեղծվել է 1995թ. օգոստոսի 28-ին Ընդհանուր ժողովի որոշման և 1995թ. դեկտեմբերի 1-ին կնքված հիմնադիր պայմանագրի հիման վրա՝ որպես «Հայաստանի Գյուղացիական Փոխօգնության Բանկ» կոոպերատիվ բանկ: Այնուհետև, 1996թ. մարտի 3-ին գրանցվել է ՀՀ ԿԲ-ում (գրանցման վկայականի համար՝ թիվ 0170) և նույն թվականի մարտի 29-ին տրամադրվել է բանկային գործունեության թիվ 70 լիցենզիան: 2006թ. սեպտեմբերի 9-ին բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Բանկը վերակազմակերպվել և վերանվանվել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության: «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն 29.04.2020թ. Ընդհանուր ժողովի որոշմամբ վերակազմակերպվել և վերանվանվել է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն և վերջինիս գործունեությունը կարգավորվում է ՀՀ ԿԲ-ի կողմից:

Բանկի ապրանքային նշանն է՝

որը գրանցվել է ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից 2021թ.-ի փետրվարի 12-ին:

4.3.1.2. Պետական գրանցումը և գործունեության վայրը

Բանկի պետական գրանցման վայրն է՝ Արամի 82-84 շենք, 89, 99, 100 տարածքներ Երևան 0002, ՀՀ:

Բանկի պետական գրանցման համարն է՝ 0170:

4.3.1.3. Ստեղծման փվյալներ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ (նախկինում՝ «Հայաստանի Գյուղացիական Փոխօգնության Բանկ» կոոպերատիվ բանկ) հիմնադրվել է 1996թ.-ին Եվրամիության «TACIS» ծրագրի շրջանակում:
Ֆրանսիական «Credit Agricole» բանկի «Credit Agricole Consultant» խորհրդատվական ծառայությունը հոլանդական «Rabobank» և գերմանական «DG-Ագրոպրոգրեսս» ընկերությունների հետ համատեղ հաջողությամբ իրականացրին բանկի ստեղծման եռափուլ ծրագիրը.

- ծրագրի իրականացման առաջին փուլում (1993–1994թթ.) ուսումնասիրվեցին Հայաստանի գյուղատնտեսության ֆինանսավորման հնարավոր տարբերակները, որի արդյունքում առաջարկվեց Եվրոպական կոոպերատիվ բանկի մոդելով գյուղատնտեսական բանկի ստեղծման գաղափարը:
- 1994թ. սեպտեմբերից մինչև 1995թ. դեկտեմբերն ընկած ժամանակաշրջանում տեղի ունեցավ Բանկի կառուցվածքային հիմնադրում, որի հիմնական ձեռքբերումը եղավ 60 գյուղացիական փոխօգնության միավորումների ստեղծումը: Գյուղացիական փոխօգնության միավորումներ ստեղծվեցին Հայաստանի չորս մարզերում՝ Արմավիրում (Էջմիածին), Արարատում (Արտաշատ), Շիրակում (Գյումրի) և Վայոց Ձորում (Եղեգնաձոր):
- Գործառնական հիմնադրումը (1996թ.) նշանավորվեց Բանկի և նրա երեք մասնաճյուղերի ստեղծմամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ԿԲ-ի կողմից 1996թ. մարտի 29-ին բանկային գործառնությունների իրականացման լիցենզիայի տրամադրմամբ:

Բանկի նշանակալից բաժնետերերն են՝

- «ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» փակ բաժնետիրական ընկերությունը, որի մասնակցությունը Բանկի բաժնետիրական կապիտալում կազմում է **75.00 %***
- «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» Հանրային սահմանափակ ընկերությունը (Պրոպարկո),որի մասնակցությունը Բանկի բաժնետիրական կապիտալում կազմում է **10%***

Այժմ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ (շուկայում գործում է 30 տարի) Հայաստանի խոշորագույն և ֆինանսապես կայուն բանկերից մեկն է:

4.3.1.4. Բանկի գտնվելու վայրը, կապի միջոցները

Բանկի գտնվելու վայրն է՝ Արամի 82-84, Երևան 0002, ՀՀ:
Կապի միջոցները՝
Հեռ.՝ +(374)10 31 88 88,
էլ. Փոստ՝ acba@acba.am,
Ինտերնետային կայք՝ www.acba.am:

* 31.03.2026թ.-ի դրությամբ

Բանկի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:

4.3.1.5. Բանկի մասնաճյուղերը

Բանկն ունի 64* մասնաճյուղ և Կենտրոնական գրասենյակ:

Կենտրոնական գրասենյակի հասցեն է ՝ ք. Երևան, Արամի փողոց 82-84 շենք, 89, 99, 100 տարածքներ:

Մասնաճյուղերի հասցեներն են՝

1. «Կենտրոն» մասնաճյուղ՝ ք. Երևան, Արամի փողոց 82-84 շենք,
2. «Տերյան» մասնաճյուղ՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 7 շենք, 12 տարածք,
3. «Սայաթ-Նովա» մասնաճյուղ՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 8 շենք, 21/1 տարածք և Աբովյան 22 շենք, թիվ 1/1 տարածք,
4. «Շենգավիթ» մասնաճյուղ՝ ք. Երևան, Բագրատունյաց փողոց 16/2,
5. «Արմենիա» մասնաճյուղ՝ ք. Երևան, Վ. Սարգսյան փողոց, 10 շենք, թիվ 123,124 տարածքներ,
6. «Տիգրան Մեծ» մասնաճյուղ՝ ք. Երևան, Էրեբունի, Տիգրան Մեծի պողոտա 74 շենք, 56-57 տարածքներ,
7. «Մալաթիա» մասնաճյուղ՝ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա հ., Րաֆֆու 55 շենք, հ.1/1,
8. «Դավթաշեն» մասնաճյուղ՝ ք. Երևան, Դավթաշեն I թաղամաս, թիվ 42/2,
9. «Զեյթուն» մասնաճյուղ՝ ք. Երևան, Դ. Անհաղթի փողոց 13/5,
10. «Երիտասարդական» մասնաճյուղ՝ ք. Երևան, Աբովյան 36, թիվ 49,
11. «Կոմիտաս» մասնաճյուղ՝ ք. Երևան, Կոմիտասի պողոտա 56 շենք, 167,
12. «Արաբկիր» մասնաճյուղ՝ ք. Երևան, Սունդուկյան փողոց 64ա շենքի թիվ 2/1 ոչ բնակելի տարածք,
13. «Նոր Նորք» մասնաճյուղ՝ ք. Երևան, Գայի պողոտա 16/46,
14. «Երևան Մոլ» մասնաճյուղ՝ ք. Երևան, Արշակունյաց 34/3 համար 93 տաղ.,
15. «Կեսարիա» մասնաճյուղ՝ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Շերամի փող. 93/3,93/5,
16. «Շինարարներ» մասնաճյուղ՝ ք. Երևան, Աջափնյակ, Շինարարների փողոց 15 շենք 156 ոչ բնակելի տարածք,
17. «Արմավիր» մասնաճյուղ՝ ք. Արմավիր, Երևանյան 16,
18. «Էջմիածին» մասնաճյուղ՝ ք. Էջմիածին, Մաշտոցի փ. 30,
19. «Մեծամոր» մասնաճյուղ՝ ք. Մեծամոր, 1-ին թաղամաս, 2 բն, 1-6 հասցե,
20. «Արարատ» մասնաճյուղ՝ ք. Արտաշատ, Շահումյան փ. 31,
21. «Մասիս» մասնաճյուղ՝ ք. Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 3,
22. «Վեդի» մասնաճյուղ՝ ք. Վեդի, Արարատյան 42/2,
23. «Արաքս» մասնաճյուղ՝ ք. Արարատ, Շահումյան 45/1,
24. «Արագածոտն» մասնաճյուղ՝ ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հրապարակ 1/1,
25. «Արագած» մասնաճյուղ՝ ք. Ծաղկահովիտ, Հոկտեմբերյան փ. 1/2,
26. «Աշտարակ» մասնաճյուղ՝ ք. Աշտարակ, Երևանյան փ. 1,

* 01.07.2026թ.-ի դրությամբ

27. «Թալին» մասնաճյուղ՝ ք. Թալին, Կոմիտասի 4,
28. «Ապարան» մասնաճյուղ՝ ք. Ապարան, Բաղրամյան 37,
29. «Շիրակ» մասնաճյուղ՝ ք. Գյումրի, Աբովյան 256,
30. «Գյումրի» մասնաճյուղ՝ ք. Գյումրի, Շիրակացու փ. 18ա,
31. «Արթիկ» մասնաճյուղ՝ ք. Արթիկ, Անկախության 28/1,
32. «Աշոցք» մասնաճյուղ՝ Շիրակի մարզ, գյուղ Աշոցք,
33. «Մարալիկ» մասնաճյուղ՝ ք. Մարալիկ, Ազատության հրապարակ թիվ 13,
34. «Գեղարքունիք» մասնաճյուղ՝ ք. Գավառ, Բոշնաղյան փ. 6,
35. «Մարտունի» մասնաճյուղ՝ ք.Մարտունի, Երևանյան 52,
36. «Սևան» մասնաճյուղ՝ ք. Սևան, Նաիրյան 2-րդ նրբանցք, թիվ 2, 3,
37. «Վարդենիս» մասնաճյուղ՝ ք. Վարդենիս, Ռոմանի 5/1,
38. «Լոռի» մասնաճյուղ՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի փ. 22ա,
39. «Տաշիր» մասնաճյուղ՝ ք. Տաշիր, Կիրովի փ., թաղ. 5, թիվ 192,
40. «Սպիտակ» մասնաճյուղ՝ ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան թիվ 3,
41. «Ալավերդի» մասնաճյուղ՝ ք. Ալավերդի, Թումանյան 59,
42. «Ստեփանավան» մասնաճյուղ՝ ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի 9,
43. «Տավուշ» մասնաճյուղ՝ ք. Իջևան, Վալանսի փ. 6/4,
44. «Նոյեմբերյան» մասնաճյուղ՝ ք. Նոյեմբերյան, Բարեկամության 2,
45. «Բերդ» մասնաճյուղ՝ ք. Բերդ, Լևոն Բեկի 1/3,
46. «Դիլիջան» մասնաճյուղ՝ ք. Դիլիջան, Մյասնիկյան փ. 37/2,
47. «Կոտայք» մասնաճյուղ՝ ք. Աբովյան, Հատիսի փ. 4/2,
48. «Եղվարդ» մասնաճյուղ՝ ք. Եղվարդ, Չարենցի 48,
49. «Հրազդան» մասնաճյուղ՝ ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, 31-րդ շենքի հարակից տարածք,
50. «Չարենցավան» մասնաճյուղ՝ ք. Չարենցավան, Խանջյան փողոց 2/1-2/3,
51. «Սյունիք» մասնաճյուղ՝ ք. Կապան, Արամ Մանուկյան 4,
52. «Գորիս» մասնաճյուղ՝ ք. Գորիս, Անկախության 2/5,
53. «Սիսիան» մասնաճյուղ՝ ք. Սիսիան, Սիսական փ. 39դ,
54. «Վայոց Ձոր» մասնաճյուղ՝ ք. Եղեգնաձոր, Վ. Ձորավար փ. 37,
55. «Վայք» մասնաճյուղ՝ ք. Վայք, Շահումյան 98/3-4,
56. «Բաղրամյան» մասնաճյուղ՝ Մյասնիկյան համայնք,Երևանյան փողոց 10/1 վարչական շենք,
57. «Էրեբունի» մասնաճյուղ՝ ք. Երևան, Էրեբունի փողոց 23 շենք, թիվ 74 տարածք,
58. «Մեղրի» մասնաճյուղ՝ ք. Մեղրի, Զ.Անդրանիկի փողոց 1 կինոթատրոնի շենք,
59. «Ճամբարակ» մասնաճյուղ՝ ք. Ճամբարակ, Գ.Նժդեհի փողոց 127/2 սպասարկման գրասենյակ,
60. «Գառնի» մասնաճյուղ՝ գ.Գառնի, Ալեքյան փողոց 28, 28/1,
61. «Գարաժ մոլ» մասնաճյուղ՝ ք. Երևան, Աջափնյակ, Մազմանյան 1,
62. «Ավան» մասնաճյուղ՝ ք. Երևան, Մ. Խուդյակովի փողոց 210/2,
63. «Սեբաստիա» մասնաճյուղ՝ ք. Երևան, Սեբաստիայի փողոց 80, թիվ 50 շինություն
64. «Հոմպլեքս» մասնաճյուղ, Կոտայքի մարզ, Նաիրի համայնք, գյուղ Պռոշյան, Գ. Չաուշի խճուղի, 1/48 առևտրի սրահ:

Բանկը ՀՀ տարածքում և տարածքից դուրս գրանցված ներկայացուցչություններ չունի:

4.3.1.6 Նշանակալի դեպքեր

1995թ. օգոստոսի 28-ին ստեղծվեց «Հայաստանի Գյուղացիական Փոխօգնության Բանկ» կոոպերատիվ բանկը (Հայգյուղփոխբանկ): Բանկի գործունեությունն ի սկզբանե ուղղված էր նորանկախ Հայաստանի գյուղատնտեսության ֆինանսավորմանը և փոխված ֆինանսատնտեսական պայմաններում ապրող գյուղատնտեսություններին աջակցությանը: 1996թ. Բանկը տրամադրում էր միայն կարճաժամկետ սեզոնային գյուղատնտեսական վարկեր: Ստեղծմանը հաջորդող տարիներին բանկն աստիճանաբար սկսեց տրամադրել նաև վարկեր գյուղացիական միջավայրում իրականացվող ոչ գյուղատնտեսական ծրագրերի իրականացման նպատակով, իսկ 1999թ.-ից՝ նաև փոքր և միջին բիզնեսի զարգացման համար:

Նույն տարում բանկն թղթակցային հաշիվներ բացեց ֆրանսիական Credit Agricole և հոլանդական ABN AMRO բանկերում:

2000թ. բանկի գործունեությունը բարձր գնահատականների արժանացավ միջազգային ասպարեզում, մասնավորապես բրիտանական Financial Times հեղինակավոր կազմակերպության The Banker ամսագրի կողմից Բանկը առաջին անգամ ճանաչվեց Հայաստանում տարվա լավագույն բանկ: Հետագայում նույն պարբերականի կողմից Ակբա բանկը բազմիցս ճանաչվեց Հայաստանում տարվա լավագույն բանկ: ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ու ՀՀ ԿԲ-ի կողմից Ակբա բանկը ճանաչվեց պետական պարտատոմսերի շուկայում լավագույն դիլեր: 2000թ.-ից մինչ օրս Բանկը հանդիսանում է «Արմենիան քարդ» ՓԲԸ պրոցեսինգային կենտրոնի հիմնադիր անդամ:

2001թ. Բանկը թողարկեց իր առաջին ArCa Classic վճարային քարտը:

2002թ. Բանկը դարձավ VISA International միջազգային վճարային համակարգի լիիրավ անդամ Հայաստանում առաջին անգամ Ակբա բանկի կողմից թողարկվեցին VISA համակարգի վճարային քարտեր՝ Electron, Classic, Business և Gold տեսակի:

Ակբա բանկը ՀՀ բանկային համակարգում տարիներ շարունակ առաջատար դիրքեր է գրանցել իրական հատվածի վարկային ներդրումների ծավալով:

Ակբա բանկը ՀՀ առաջին բանկն է, որին միջազգային աուդիտորական ընկերության կողմից շնորհվել է որակի կառավարման միջազգային համակարգի ISO 9001:2000 արտոնագիր: Նույն տարում Բանկը ձեռք է բերել VISA International վճարահաշվարկային համակարգի արտոնագիր՝ առևտրի և սպասարկման կետերում այլ բանկերի թողարկած VISA քարտերի սպասարկման համար:

2003թ. ստեղծվեց առաջին գրանցված մասնագիտացված լիզինգային ընկերությունը Հայաստանում՝ «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ-ն: Ընկերության հիմնական նպատակներն էր օժանդակել տնտեսության բոլոր ոլորտներում գործող մանր և միջին ձեռնարկություններին, գյուղացիական տնտեսություններին՝ ձեռք բերել սարքավորումներ և արտադրական միջոցներ միջին ժամկետի ֆինանսավորման միջոցով:

2006թ.-ից ֆրանսիական հեղինակավոր «ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Էս. Էյ.» բանկային խումբը դարձավ բանկի բաժնետեր՝ 28% մասնաբաժնով, և Բանկը նույն թվականի սեպտեմբերի 9-ին բանկի Ընդհանուր ժողովի որոշմամբ վերակազմակերպվեց ու վերանվանվեց «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության՝ գործելով այդպես մինչև 29.04.2020թ., երբ Բանկը նորից վերակազմակերպվեց: 2006թ. Բանկը եղել է Հայաստանի բանկային համակարգի միանձնյա առաջատարը:

2007թ. Fitch Ratings վարկանիշային գործակալությունը բանկին շնորհեց երկարաժամկետ թողարկողի BB վարկանիշ (կայուն հեռանկարով): Նույն տարվա օգոստոսին Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (EBRD) աշխարհում խոշորագույն բանկերից մեկի՝ Citigroup-ի հետ համատեղ, Հայաստանի բանկային պատմության մեջ առաջին անգամ բանկին տրամադրել է սինդիկացված վարկ, որն ուղղվել է Հայաստանում գործող փոքր և միջին (այդ թվում՝ Հայաստանի հեռավոր վայրերում գործող) ձեռնարկությունների վարկավորմանը:

2009թ. Բանկը, չնայած համաշխարհային տնտեսական և ֆինանսական ճգնաժամի հետևանքով ստեղծված անբարենպաստ իրավիճակին, բանկային գործունեության գրեթե բոլոր կարևորագույն ցուցանիշներով շարունակեց մնալ առաջատարը և պետական բյուջե մուծված հարկերի ծավալով ՀՀ բանկային համակարգում դարձավ առաջինը:

2010թ. Բանկն առաջին անգամ ՀՀ բանկային պատմության մեջ հատեց իրական հատվածում կատարված վարկային ներդրումների ծավալով 100 մլրդ ՀՀ դրամ սահմանագիծը: Նույն թվականին Բանկը Հայաստանի բանկային համակարգում միակն էր, որը թողարկեց և սպասարկեց միջազգային 3 խոշոր (American Express, Visa International, Mastercard) և մեկ ազգային (ArCa) վճարահաշվարկային համակարգերի քարտեր: Նույն տարվա ընթացքում միջազգային փոխանցումների կատարման բարձր որակ ապահովելու համար Գերմանական «Commerzbank AG» բանկը Ակբա բանկին շնորհեց «Որակի գերազանցության» մրցանակ:

2011թ. ՀՀ կառավարության կողմից իրականացվեց գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր, որի շրջանակում տրամադրված վարկերի ավելի քան 94%-ը տրամադրվեց Ակբա բանկի կողմից:

Նույն տարում ՈւԵՖԱ Չեմպիոնների Լիգայի հետ համատեղ Բանկը թողարկեց Mastercard UEFA Champions League քարտատեսակը և բացառիկ իրավունքով թողարկեց American Express համակարգի երկրորդ տեսակի՝ American Express Blue քարտը:

2013թ. Եվրոպայի առաջատար ակտիվների կառավարիչ «Ամունդի Ասեթ Մենեջմենթ» ընկերության հետ Ակբա բանկը հիմնադրեց «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն: Ամունդին իր կառավարման ներքո գտնվող ակտիվներով Եվրոպայի առաջատար ակտիվների կառավարիչն է:

Հանդիսանալով Հայաստանի խոշոր կազմակերպություններից մեկը՝ Բանկը ներդրեց Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության համակարգ, որի գերակա ուղղություններն էին սահմանամերձ հեռավոր բնակավայրերի աջակցությունը, շրջակա միջավայրի պաշտպանությունը, պատմամշակութային արժեքների պահպանությունը և երիտասարդությանն ուղղված ծրագրերի իրականացումը:

2015թ. Բանկը ներդրեց հեռահար բանկային ծառայությունների տրամադրման նոր գործիք՝ ACBA Mobile հավելվածը, որը թվային տրանսֆորմացիաների առաջին քայլն էր: Համակարգը փորձարկելուց հետո այն շարունակեց կատարելագործվել՝ նոր հնարավորություններ առաջարկելով հաճախորդներին:

Բանկն իրականացրեց նաև կառուցվածքային փոփոխություններ, որոնց արդյունքում ձևավորվեցին բանկային գործունեության հիմնական 3 բիզնես ուղղությունները՝ գյուղատնտեսական, մանրածախ, ՓՄՁ և կորպորատիվ:

2017թ. Ակբա բանկը և կորպորատիվ բիզնես լուծումների շուկայում ողջ աշխարհում առաջատար SAP ընկերությունը ստորագրեցին ծրագրային ապահովման ձեռքբերման պայմանագիր, որով Բանկը SAP-ի կողմից ստեղծված ժամանակակից լուծումների կիրառման միջոցով փուլային եղանակով իրականացնում է բանկի ամբողջական թվային տրանսֆորմացիա:

Թվային տրանսֆորմացիայի արդյունքում Բանկը կարողանում է ինտերակտիվ արձագանքել հաճախորդների պահանջներին և տրամադրել այն ծառայությունների փաթեթներն ու լուծումները, որոնք լավագույնս բավարարում են նրանց կարիքներին և առավելագույնս արդյունավետ են Բանկի տեսանկյունից:

Նույն տարում Բանկը թողարկեց ռուսական МИР վճարային համակարգի նոր «ԱՐՔԱ-ՄԻՐ» չիպային քարտերը:

2018թ. Բանկն ընդլայնեց իր գործընկերների շարքը միջազգային քարտային բիզնեսում: Այսպես, ճապոնական JCB Co. International-ի և Ակբա բանկի համագործակցության

արդյունքում Հայաստանում առաջին անգամ սկսվեց աշխարհում շուրջ 117 մլն քարտապան ունեցող JCB քարտերի սպասարկումը:

2019թ. Ակբա բանկի և չինական UnionPay International-ի համագործակցության արդյունքում Հայաստանում մեկնարկեց UnionPay քարտերի սպասարկումը:

2020թ. ապրիլի 29-ին Բանկի Ընդհանուր ժողովի որոշմամբ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն վերակազմակերպվեց և վերանվանվեց «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության:

2021թ. Բանկն իրականացրեց վերաբրենդավորում և հասարակությանը ներկայացավ նորովի՝ պահպանելով Բանկի լավագույն արժեքներն ու ավանդույթները: Այսուհետ Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկը սկսեց հանդես գալ որպես ԱԿԲԱ ԲԱՆԿ:

Նույն տարում իրականացվեց աշխատակիցների՝ Ակբա բանկի բաժնետեր դառնալու գործընթացը: Ակբա ֆինանսական խմբի աշխատակիցների շուրջ 75%-ը դարձավ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետեր, որից հետո Բանկն իրականացրեց բաժնետոմսերի առաջնային հրապարակային տեղաբաշխում՝ թողարկելով 500,000 բաժնետոմս՝ ընդհանուր 7.5 մլրդ ՀՀ դրամ տեղաբաշխման ծավալով: Սահմանված ժամկետներում այս բաժնետոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվեցին: Ակբան դարձավ Հայաստանում ամենաշատ բաժնետեր ունեցող ընկերություններից մեկը: Բանկի բաժնետոմսերը ցուցակվեցին Հայաստանի ֆոնդային բորսայի ամենալիկվիդային A հարթակում:

Նույն տարում Ակբա բանկը Visa International միջազգային վճարային համակարգի հետ համագործակցության արդյունքում Հայաստանում առաջին անգամ գործարկեց վճարումների նորարարական NFC համակարգը: Արդեն 2022թ. Ակբա բանկի հաճախորդներին հասանելի դարձան Apple Pay-ը և Google Pay-ը, որոնցով վճարումներ կատարելը դարձավ ավելի հարմար, ապահով ու արագ:

2023թ. հունիսին ավարտվեց դեռևս 2021թ.-ին մեկնարկած Ակբա ֆինանսական խմբի աշխատակիցների բաժնեմասնակցության ծրագիրը, որի արդյունքում Բանկի, «ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՓԲ ընկերության, «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲ ընկերության աշխատակիցների բաժնեմասը Բանկի բաժնետիրական կապիտալում կազմեց 5. 20%:

Նույն տարում Ակբա բանկը մեկնարկեց **Ակբա Բիզնես ակումբը**: Ակումբի նպատակն է Հայաստանում բիզնես ոլորտի զարգացումը, գործարար կապերի ստեղծումը, համագործակցության ավելի մեծ հնարավորություններն ու նոր հեռանկարների ստեղծումը: Ակբա Բիզնես ակումբը բիզնես համայնք է, որը հնարավորություն է տալիս ակումբի անդամ ձեռնարկություններին ընդլայնել իրենց գործարար կապերը, մասնակցել բիզնեսին առնչվող թեմատիկ քննարկումներին և միջոցառումներին, ստանալ հատուկ առաջարկներ իրենց բիզնեսի կարիքների համար:

2024թ. փետրվարին Միջազգային հեղինակավոր Fitch վարկանիշային գործակալությունը (Fitch Ratings) բարձրացրել է Ակբա բանկին շնորհած «Երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի» B+ վարկանիշը (long-term Issuer Default Rating IDR) մինչև «BB-»-ի, իսկ Բանկի կենսունակության վարկանիշը (VR)՝ «b+»-ից «bb-»-ի: Fitch-ն ընդգծել է, որ Ակբա բանկի վարկանիշի բարձրացումը պայմանավորված է 2022-2023 թվականների ընթացքում Բանկի շահութաբերության և կապիտալիզացիայի կայուն, զգալի բարելավումներով: Ըստ Fitch-ի, վերջինս հիմնականում պայմանավորված է Հայաստանի բուռն տնտեսական աճով:
Fitch-ի կողմից հրապարակված հաշվետվությունում նաև նշվում է, որ վերջինիս ակնկալիքով տնտեսական դրական պայմանները կպահպանվեն և կնպաստեն բանկի ֆինանսական կայունության ամրապնդմանը, շահութաբերության աճին, իրացվելիության մակարդակի բարձրացմանը, իսկ բանկի ակտիվների որակը կշարունակի մնալ բարձր:

2024թ. Բրիտանական աշխարհահռչակ Euromoney ֆինանսական պարբերականը ESG (բնապահպանական, սոցիալական և կառավարում) չափանիշների շրջանակում Ակբա բանկին ճանաչել է Հայաստանի «Լավագույն ESG-Բանկ» (Armenia's Best Bank for ESG):

Ակբա բանկն առաջինը Հայաստանում մեկնարկել է Չինաստանի խոշորագույն UnionPay International վճարային համակարգի UnionPay Gold և UnionPay Business միջազգային քարտերի թողարկումը: UnionPay International-ի քարտերով այժմ վճարումներ են կատարվում աշխարհի 183 երկրում, որոնցից շուրջ 84-ում նաև թողարկվում է UnionPay-ի քարտերը: Ակբա բանկի և UnionPay International-ի համագործակցության արդյունքում Հայաստանը ևս համալրել է այդ երկրների ցանկը:

Նույն տարում Բանկը թողարկեց 485,000 հատ հասարակ (սովորական) լրացուցիչ բաժնետոմսեր, որի արդյունքում տեղաբաշխված բաժնետոմսերի ընդհանուր քանակը կազմեց 5,985,000 (հինգ միլիոն ինը հարյուր ութսունհինգ հազար) հատ սովորական բաժնետոմս:
Լրացուցիչ թողարկված բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացվեց փակ բաժանորդագրության եղանակով, գործող բաժնետերերին առաջարկվեց օգտվել բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքից, իսկ այդ իրավունքից չօգտվելու դեպքում բաժնետոմսերն առաջարկվել էին ֆրանսիական «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» հանրային սահմանափակ ընկերությանը (այսուհետ նաև՝ «Պրոպարկո»), որը «Զարգացման ֆրանսիական գործակալության» խմբի (“Agence Française de Développement» կամ AFD) դուստր ընկերությունն է և AFD-ի կողմից մասնավոր հատվածի ֆինանսավորման թևը: Պրոպարկոն ընդհանուր առմամբ ձեռք բերեց Ակբա բանկի 598,500 հատ բաժնետոմսեր, որի արդյունքում վերջինիս մասնակցությունը Բանկի կապիտալում կազմեց 10%:

Լրացուցիչ բաժնետեմսերի տեղաբաշխման հետ միաժամանակ Բանկը համալրեց իր բաժնետիրական կապիտալը չբաշխված շահույթի հաշվին:
Լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման և բաժնետիրական կապիտալի համալրման արդյունքներով Բանկի բաժնետիրական կապիտալի չափը 2024թ. տարեվերջի դրությամբ կազմեց 89,775,000,000 (ութսունինը միլիարդ յոթ հարյուր յոթանասունհինգ միլիոն) ՀՀ դրամ:

2025թ. մարտին Ակբա բանկն առաջին անգամ Հայաստանում ներկայացրեց Augmented Reality (AR) տեխնոլոգիայով օժտված Visa Signature Limited Edition պրեմիում քարտերի շարքի առաջին թողարկումը, որը ոգեշնչված է Մարտիրոս Սարյանի լեգենդար «Հայաստան» պաննոյով և տպագրվել է ընդամենը 500 սահմանափակ օրինակով:
Այն հնարավոր է օգտագործել աշխարհի ցանկացած կետում և օգտվել բազմաթիվ ճանապարհորդական և մշակութային առավելություններից, ինչպես նաև կենդանացնել Սարյանի «Հայաստան» ստեղծագործությունը և վիրտուալ կերպով հայտնվել կտավի ներսում:
Նույն տարում Բանկում ներդրվեցին Էթիկայի, Վարքագծի կանոնագրքերը և ազդարարման քաղաքականությունը՝ այդ թվում՝ Whispli-ի կողմից գործարկվող Հայաստանի առաջին անկախ ազդարարման հարթակը:
Նույն ժամանակշրջանում Ակբան հաջողությամբ տեղաբաշխեց շուրջ 13,5 միլիարդ ՀՀ դրամով և 10 միլիոն ԱՄՆ դոլարով պարտատոմսեր:
2025թ. տարեվերջին միջազգային ֆինանսական հաստատություններից Ակբան ներգրավեց 55 միլիոն ԱՄՆ դոլարի ֆինանսավորում՝ հիմնականում ՀՀ դրամով՝ ՓՄՁ-ներին, գյուղատնտեսությանը և երիտասարդ ձեռնարկատերերին աջակցելու համար:
Ակբան շարունակել է առաջատար դիրքեր ունենալ թվային բանկային գործունեության և ESG ոլորտում՝ Euromoney-ի կողմից ճանաչվելով «Լավագույն ESG բանկ» և «Լավագույն թվային բանկ Հայաստանում» անվանակարգերում:
«Լավագույն ESG բանկ» մրցանակին Ակբա բանկն արժանացել է հաշվի առնելով ESG ռազմավարության (2025-2028թթ.) հաստատումը, ԱԿԲԱ ԲԱՆԿԻ ԽՄԲԻ Բնապահպանական, սոցիալական, կառավարման (ԲՍԿ) քաղաքականության ներդրումը ինչպես նաև Կորպորատիվ կառավարման կանոնագրքի շրջանակում ԲՍԿ-ին առնչվող այլ պարտավորությունների ստանձնումը:
2025 թվականին բանկը անդամակցել է Ածխաթթու գազի արտանետման հաշվառման ֆինանսական համագործակցությանը (PCAF)՝ պարտավորվելով առաջակի տարիներին հրապարակել սահմանված ձևաչափով ֆինանսավորման արդյունքում առաջացած արտանետումների վերաբերյալ:

Նույն տարում ներդրվել է նաև **SWIFT ISO 20022** ստանդարտը միջազգային փոխանցումների համար՝ ամրապնդելով միջսահմանային վճարային ենթակառուցվածքը:

2025 թվականի նշանակալի ձեռքբերումներից է նաև Հաճախորդների պաշտպանության ոսկե մակարդակի սերտիֆիկացում (**Gold Level Client Protection Certification**) ստանալը, որը հանդիսանում է հաճախորդների հոգատարության, պաշտպանության, սպասարկման որակի և թափանցիկության ոլորտներում ճանաչման ամենաբարձր չափանիշը: Այս ձեռքբերումը ևս մեկ անգամ հաստատում է Բանկի պատասխանատու գործելակերպի հանձնառությունը՝ միաժամանակ ամրապնդելով հեղինակությունը, որպես վստահելի ֆինանսական գործընկեր:

2025 թվականի արդյունքներով Ակբան Հայաստանի առաջատար բանկերի եռյակում է՝ ըստ հիմնական ֆինանսական ցուցանիշների (ակտիվներ, կապիտալ վարկային պորտֆել, ավանդային պորտֆել, զուտ շահույթ):

Բանկն իր գործունեության 30 տարիների ընթացքում ֆինանսական տարատեսակ ծառայություններ է առաջարկում հասարակության լայն շերտերին: Բանկի գործունեությունը ուղղված է հաճախորդների չորս հիմնական սեգմենտների՝ մանրածախ, գյուղատնտեսական, ՓՄՁ և կորպորատիվ սպասարկմանը: Իր հաճախորդների հետ փոխշահավետ համագործակցությունն անընդմեջ զարգացնելու նպատակով՝ Բանկը հետագա տարիներին ևս միտված է ծանրակշիռ աշխատանքներ իրականացնել:
Իր սեգմենտային հաճախորդներին Բանկն առաջարկում է այնպիսի պրոդուկտներ և ծառայություններ, որոնց հիմքում ընկած է վերջիններիս պահանջմունքների բավարարումը: Ուսումնասիրելով հաճախորդների սպառողական վարքագիծն ու նախասիրությունները, Բանկը մշտապես իր հաճախորդներին առաջարկում է ֆինասնական լուծումներ՝ օժտված վերջիններիս պահանջներին լավագույնս համապատասխանող հատկանիշներով:
Բանկի կողմից առաջարկվող հիմնական պրոդուկտներն ու ծառայություններն են.

- խնայողական հաշիվներ և ավանդների ներգրավում,
- պարտատոմսեր,
- վարկերի տրամադրում՝ սպառողական, հիփոթեքային, ապառիկ, գյուղատնտեսական և բիզնես բնույթի,
- լիզինգ,
- կրեդիտային և դեբետային վճարային քարտերի թողարկում և սպասարկում,
- արտարժութային գործառնություններ,
- վճարումներ և փոխանցումներ (ներառյալ՝ արագ համակարգերով),
- հեռավար բանկային ծառայություններ,
- ռեեստրի վարումը և կորպորատիվ արժեթղթերի պահառություն,
- տեղական և միջազգային բրոքերային ծառայություններ,
- ֆակտորինգ և առևտրի ֆինանսավորում (ակրեդիտիվներ, երաշխիքներ),
- առևտրի և սպասարկման կետերի համար լուծումներ,

- ապահովագրական ծառայություններ (որպես ապահովագրական գործակալ),
- սպառողական և հիփոթեքային վարկերի տրամադրում,
- գյուղատնտեսական և առևտրային վարկերի տրամադրում,
- հաշիվների սպասարկում,
- ցպահանջ և ժամկետային ավանդների ներգրավում,
- տեղական և միջազգային վճարային քարտերի թողարկում և սպասարկում,
- էլեկտրոնային փոխանցումներ (ներառյալ՝ արագ համակարգերով):

Միաժամանակ, իր ակտիվների և պասիվների, իրացվելիության կառավարման, ինչպես նաև ՀՀ ԿԲ նորմատիվային պահանջների ապահովման նպատակով Բանկը զբաղվում է նաև հետևյալ հիմնական ուղղություններով՝

- ներդրումներ պարտատոմսերում,
- այլ կարճաժամկետ ներդրումներ (միջբանկային վարկեր, ավանդներ, ռեպո):

Ավելին, ելնելով էթիկական չափորոշիչներից և գործարար սկզբունքներից՝ բանկը չի ֆինանսավորում շրջակա միջավայրը վնասող գործունեությունը, զենքի և զինամթերքի արտադրությունն ու առևտուրը, խաղատների և վիճակախաղերի գործունեությամբ զբաղվող կազմակերպությունները, ինչպես նաև Բնապահպանական, սոցիալական և կառավարման (ESG) բացառությունների ցանկում ներառված գործունեությամբ զբաղվող անհատներին և իրավաբանական անձանց: Մենք ակտիվորեն գնահատում ենք ֆինանսավորվող նախագծերի ազդեցությունը սոցիալական և շրջակա միջավայրի վրա և խթանում ենք այլընտրանքային էներգիայի և կայուն գործելակերպը բոլոր սեգմենտներում:

Վերջին տարիներին Բանկը զբաղեցնում է երրորդ առաջատար դիրքը բանկային համակարգում՝ ըստ ակտիվների, վարկերի և ավանդների ծավալի: 2025թ. վերջի դրությամբ Բանկի շուկայական մասնաբաժինը կազմել է 8.3%՝ ընդհանուր ակտիվներով, 9.6%՝ ընդհանուր վարկերով և 8.4%՝ ընդհանուր ավանդներով, ինչը վկայում է շուկայում Ակբա բանկի ամուր և կայուն դիրքերի մասին:

Քարտային բիզնեսը Բանկի գործունեության կարևորագույն ուղղություններից մեկն է. տարիներ շարունակ Բանկը պահպանում է շուկայի առաջատարի դիրքը քարտերի թողարկման ծավալներով:

2026թ. մարտի 31-ի դրությամբ բանկի գործող քարտերի քանակը կազմել է ավելի քան 987,274 քարտ: ՀՀ բանկային համակարգում Բանկը ծանրակշիռ դեր ունի տեղական և միջազգային վճարային քարտերի թողարկման և սպասարկման գործում՝ նպատակ ունենալով քարտապանների համար անկանխիկ գործարքները դարձնել ժամանակակից, հասանելի, հարմարավետ և ապահով: Ներկայումս Բանկը միակն է շուկայում, որ հանդիսանում է 4 միջազգային՝ American Express, Visa, Mastercard, UnionPay International և

1 ազգային՝ ArCa վճարահաշվարկային համակարգերի քարտեր թողարկող և սպասարկում է 6 վճարային համակարգեր:

Բանկը հայկական շուկայում 2009 թ-ից բացառիկության հիմունքներով ներկայացնում է American Express ընկերության չորս քարտեր՝ Amex Gold, Amex Gold Debit, Blue և Cashback քարտերը, որոնք իրենց ուրույն տեղն ու լոյալ սեգմենտին են գտել ՀՀ բանկային համակարգում: American Express-ի հետ բացառիկ հիմունքներով համագործակցությունը պարբերաբար երկարաձգվում է:

Բանկում կարևորում է քարտային բիզնեսի զարգացումը և միջազգային լավագույն փորձի ուսումասիրման արդյուքում նոր ծառայությունների ներդրումը: Մասնավորապես, վերջին շրջանում Բանկում ներդրվել է նոր Visa Signature պրեմիում դասի քարտատեսակը, որը բացի ավանդական քարտային ծառայություններից, տրամադրում է նաև այլ ծառայություններ, ինչպիսիք են՝ ապահովագրություն, Կոնսիերժ ծառայություն, տարատեսակ զեղչային ծրագրեր, անվճար մուտքեր օդանավակայանների սպասասրահներ և այլն: Ներդրվեց նաև Visa Digital և Mastercard Digital First թվային քարտերը, որոնք հնարավորություն են տալիս մի քանի ժամվա ընթացքում ակտիվացնել վճարային քարտը: Նախատեսվում է նաև նոր քարտային և վճարային ծառայությունների ներդրում:
Ակբա բանկն այժմ անդամակցում է MoneyGram, RIA Money Transfer, UBPAY արագ դրամական փոխանցումների համակարգերին:
Բանկը թղթակցային հաշիվներ ունի միջազգային 10-ից ավելի բանկերում, այդ թվում՝ ամերիկյան, ինչը հնարավորություն է տալիս ապահովել Բանկի հաճախորդների վճարահաշվարկային սպասարկումը ցանկացած ազատ փոխարկելի արժույթով:
Իր գործունեությունն իրականացնելու համար Ակբա բանկն օգտվում է ինչպես միջազգային SWIFT վճարային, Bloomberg տեղեկատվական, այնպես էլ ՀՀ-ում գործող BankMail և CBANet համակարգերից: Ակբա բանկը մշտապես բաց է միջազգային հեղինակավոր ֆինանսաբանկային կազմակերպությունների հետ համագործակցություն սկսելու համար՝ միաժամանակ մնալով գրավիչ և վստահելի գործընկեր նշված կառույցների համար:

Բանկն այժմ ակտիվորեն համագործակցում է Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (EBRD), Հարավ-Արևելյան Եվրոպայի Եվրոպական հիմնադրամի (EFSE), Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի (IFC), ReponsAbility Investments AG-ի, Green for Growth Fund (GGF) Հիմնադրամի, Տրիոդոս Ինվեսթմենթ Մենեջմենթ (Triodos Investment Management B.V.), Վերականգնման վարկերի բանկի (KFW), Գյուղատնտեսական Զարգացման Միջազգային Հիմնադրամի (IFAD), «Միկրո, Սմոլ Էնդ Մեդիում Էնթեռփռայզիս Բոնդս ԷսԷյ»-ի (Micro, Small & Medium Enterprises Bonds SA), Եվրոպական ներդրումային բանկի (EIB) և այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ:

Բանկն ունի 64* մասնաճյուղ ՀՀ ողջ տարածքում (20 Երևանում, 44 մարզերում)՝ ապահովելով հասանելիություն ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերում: Ի հավելումն մասնաճյուղային ցանցին, շուկայում առաջատար դիրք ենք զբաղեցնում բանկոմատա-տերմինալային ցանցով՝ ներկայացված լինելով ՀՀ բոլոր քաղաքներում: Բանկի ֆիզիկական ենթակառուցվածքը համալրված է հզոր թվային ուղիներով, AcbaMax տերմինալներով և Հեռախոսային կենտրոնով, ինչը հնարավորություն է տալիս օգտվել բանկային ծառայություններից 24/7 ռեժիմով՝ ցանկացած պահի և ցանկացած վայրից: Ակբա բանկն ունի բանկոմատների, կանխիկի ընդունման տերմինալների, բանկային բազմաֆունկիոնալ տերմինալների ավելի քան 480 սարքավորում՝ տեղակայված ՀՀ ամբողջ տարածքում: 2023 թվականի դեկտեմբերից սկսած բանկի բանկոմատները աստիճանաբար փոխարինվում են acbaMax տեսակի բազմաֆունկցիոնալ տերմինալներով, որոնք հեղափոխական նորույթ են ՀՀ ֆինանսաբանկային համակարգում: Այժմ ամբողջ Հայաստանի տարածքում առկա է 113 acbaMax տեսակի տերմինալ:Բանկը ունի POS տերմինալների ամենալայն ցանցը ՀՀ տարածքում Անկանխիկ վճարումների ընդունման (Acquiring) ոլորտում բանկն ունի 33,500-ից ավել հիմնական սպասարկվող ՀԴՄ, POS և vPOS տերմինալներ, ինչպես նաև 11,500-ից ավելի ինտեգրացիաներ այլ բանկերի POS տերմինալների և ՀԴՄ-ների հետ: Ակբան իր ակտիվ մասնակցությունն ունեցավ Անկանխիկ գործառնությունների մասին ՀՀ օրենքի շրջանակում պետական ծրագրին, համաձայն որի ՀՀ երկու բանկեր պատասխանատու էին շուկայում POS տերմինալներով հագեցվածության բարձրացման համար:

Հայաստանում լինելով բանկային բազմաթիվ ծառայությունների և պրոդուկտների առաջին թողարկողը, Բանկը տարիներ շարունակ պահպանել է իր մրցակցային դիրքը՝ մշտապես առաջարկելով հաճախորդների պահանջմունքների բավարարմանն ուղղված լուծումներ: Բանկի գործունեության հիմքում են հաճախորդները, իսկ նրանց գոհունակությունն ու հավատարմությունը Բանկի համար առանցքային է: Այսպես, մշտապես ուսումնասիրվում են հաճախորդների պահանջմունքները, մշակվում և ներդրվում են նոր պրոդուկտներ և ծառայություններ, որոնք ուղղված են հաճախորդների կարիքների բավարարմանը, սպասարկման որակի բարձրացմանը, հեռահար եղանակով ծառայությունների մատուցման զարգացմանը:
Ժամանակին համահունչ թվային բիզնեսի զարգացման հիմքում պետք է ընկած լինեն արդիական տեղեկատվական տեխնոլոգիաներն ու ենթակառուցվածքները: Այս ուղղությամբ Բանկը սկսել է ռազմավարական ներդրումներ իրականացնել դեռևս 2017 թվականից: Աշխարհի առաջատար կորպորատիվ ծրագրային ապահովման լուծումներ տրամադրող գերմանական SAP-ի հետ կնքված պայմանագրով 2018թ.-ից Բանկում

* 01.07.2026թ.-ի դրությամբ:

մեկնարկել է թվային տրանսֆորմացիայի հնգամյա լայնածավալ ծրագիր, որի արդյունքում Բանկում արդեն իսկ ստեղծվել է գերժամանակակից տեղեկատվական հենք և ենթակառուցվածք: 2023 թվականին Բանկը հաջողությամբ գործարկեց **SAP S/4HANA** հարթակը և **SAP Treasury and Risk Management (TRM)** լուծումը: Այս քայլով Բանկը ստեղծեց «խելացի» ERP միջուկ, որն օգտագործում է **SAP HANA**-ի հզորությունը՝ ապահովելով տվյալների մշակումը իրական ժամանակում և բարձրացնելով ֆինանսական գործառնությունների թափանցիկությունը:
Ներկայումս Բանկն ակտիվորեն ընդլայնում է իր էկոհամակարգը՝ ներդնելով **SAP ERP**-ի լրացուցիչ ֆունկցիոնալություններ: Այն ապահովում է Բանկի բիզնես գործընթացների ճկունությունն ու անվտանգությունը՝ համապատասխանեցնելով դրանք միջազգային լավագույն փորձին:

Այս համատեքստում դեռևս 2020 թվականի ապրիլին Բանկում իրականացվեցին վարչակազմակերպական կառուցվածքի էական փոփոխություններ, ինչը թույլ տվեց ավելի արդյունավետ լուծել սահմանված ռազմավարական խնդիրները: Վերոնշյալ փոփոխությունների շրջանակում Բանկում ստեղծվել են արհեստական բանականության և մեքենայական ուսուցման (AI/ML), գործընթացների ռոբոտացման (Robotic Process Automation) և տվյալների վերլուծության մասնագիտացված ստորաբաժանումներ (Data analytics):
RPA տեխնոլոգիայի կիրառմամբ Բանկը իրագործում է **թվային աշխատուժի կոնցեպտը**, ինչը կարճաժամկետ և միջնաժամկետ ապագայում հանգեցնելու է գործառնական պրոցեսների արդյունավետության էական աճի և գործառնական ծախսերի կրճատման: Բանկում արդեն իսկ ներդրված են գործառնական գործառույթներն իրականացնող համակարգիչներ:

Իրական ժամանակի ռեժիմում աշխատող **տվյալների վերլուծական համակարգը** նպաստում է Բանկի կառավարման արդյունավետության բարձրացմանը՝ թույլ տալով կայացնել արդյունավետ կառավարչական որոշումներ՝ հիմնված տվյալների խորը և համապարփակ վերլուծությունների վրա:

Արհեստական բանականության և մեքենայական ուսուցման ալգորիթմերի կիրառությունը Բանկի գործունեության տարբեր բնագավառներում թույլ է տալիս լուծել այնպիսի խնդիրներ, որոնք ուղղակի անհնար է լուծել այլ ավանդական տեխնոլոգիաների կիրառմամբ:

Վերոնշյալ տեխնոլոգիաների շարունակական զարգացումն ու կիրառումը Բանկի պրակտիկ գործընթացներում թույլ կտան էապես բարձրացնել գործառնական արդյունավետությունը և Բանկին կտան էական մրցակցային առավելություններ:

Բանկը շարունակաբար զարգացնում է իր հեռավար և թվային բանկային ծառայությունները: Acba digital ինտերնետ բանկինգ համակարգը օգտատերերին հնարավորություն է տալիս օգտվելու բազմաթիվ բանկային ծառայություններից թե՛ web, թե՛ բջջային հավելվածի միջոցով: Acba digital ինտերնետ բանկինգ համակարգն արդեն ունի 600,000 օգտատեր:

Acba digital ինտերնետ բանկինգ համակարգում ներառված են այնպիսի լուծումներ ինչպիսիք են ընթացիկ և խնայողական հաշիվների բացումը,փակումը, ավանդների ներդրումը,դադարեցումը, սպառողական, բիզնես և գյուղատնտեսական վարկերի ստացումը, ֆիզիկական և թվային քարտերի պատվերը, միջազգային և տեղական փոխանցումները, փոխանցումները միջազգային քարտերին, գույքահարկի, աղբահանության վճարումները, այլ բանկերում առկա վարկերի մարումները, անձնական տվյալների խմբագրման, կենսաթոշակի քաղվածքի դիտարման, ապահովագրությունների կնքման հնարավորությունները, ինչպես նաև տարատեսակ այլ հնարավորություններ, որոնց միջոցով Բանկի հաճախորդները առանց Բանկ այցելելու հեռահար եղանակով կարող են իրականացնել բոլոր անհրաժեշտ բանկային գործարքները:
Acba digital հավելվածի կարևոր առավելություններից է ներդրումներ կատարելու հնարավորությունը ինչպես տեղական, այնպես էլ միջազգային շուկաներում: Հաճախորդները կարող են բացել արժեթղթերի հաշիվներ առանց բանկ այցելելու կնքել բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրեր և կատարել արժեթղթերի առք և վաճառք:
Acba digital հավելվածը հնարավորություն է տալիս նաև ՀՀ քաղաքացի հանիսացող ֆիզիկական անձանց դառնալ բանկի հաճախորդ առանց Բանկ այցելելու բիոմետիկ նույնականացման միջոցով: Այդ նպատակով Բանկը կիրառում է Thales Gemalto-ի դեմքի բիոմետրիկ նույնականացման տեխնոլոգիա հաճախորդների հեռավար նույնականացման գործընթացի անվտանգությունն ապահովելու նպատակով: Լուծումն ապահովում է «կենդանիության ստուգում» (liveness detection), ինչը թույլ է տալիս բացառել երրորդ անձանց կամ կեղծ միջոցների կիրառմամբ նույնականացման փորձերը: Բանկը կիրառում է առցանց անվտանգության ամենաժամանակակից լուծումները՝ ապահովելով հաճախորդների միջոցների, անձնական տվյալների և գաղտնիության պաշտպանությունը:

Պրոդուկտներ և ծառայություններ

Ակբա բանկի համար անկյունաքարային են հաճախորդի պահանջներն ու նորարարությունները: Ըստ այդմ, Բանկը ոչ միայն ձգտում է ստեղծել նոր ծառայություններ և պրոդուկտներ, այլև բարելավում է եղածները՝ հավելյալ արժեք ապահովելով հաճախորդների համար:

2023 թվականին, ելնելով հաճախորդների կարիքներից և ծառայությունների որակի բարելավման ընդհանուր նպատակից, ներդրվեց **Business Tab** գործիքը: Հաշվի առնելով ֆերմերների գործունեության առանձնահատկությունները և փոխադրումների դժվարությունները՝ գործիքը թույլ է տալիս հաճախորդի խորհրդատուին իրականացնել վարկային պատմության և գյուղացիական տնտեսության վերլուծություն, լրացնել հայտը և տեղեկացնել բանկի որոշման մասին՝ առանց ֆերմերին կտրելու իր հիմնական աշխատանքից:
Այս նորարարական գործիքը դեռևս միակն է ՀՀ բանկային համակարգում և թույլ է տալիս հաշված րոպեների ընթացքում առանց Բանկ այցելելու տրամադրել վարկ ու կրճատել գյուղացիական տնտեսության սպասարկման ժամկետը:

ՓՄՁ հաճախորդների համար բիզնես ուսուցում.

Շուրջ 10 տարի առաջ Ակբա բանկը IFC-ի հետ համատեղ նախաձեռնեց ևս մեկ կարևոր ծրագիր՝ նպատակ ունենալով աջակցել փոքր և միջին ձեռնարկատիրության աճին: ՓՄՁ բանկային շուկան Հայաստանում այդ ժամանակ դառնում էր ավելի ու ավելի մրցունակ, քանի որ ինչպես միջազգային, այնպես էլ տեղական բանկերը գիտակցում էին ՓՄՁ հաճախորդների սեգմենտի կողմից ներկայացված ապագա աճի և շահութաբերության հնարավորությունները:
Ակբայի հետազոտական ուսումնասիրությունը ցույց էր տվել, որ ՓՄՁ-ների բանկային և բիզնեսի աջակցության կարիքները համակողմանիորեն չեն բավարարվում միայն ավանդական բանկային հարաբերություններով: Բիզնեսի սեփականատերերի շրջանում խորհրդատվության, ուղղորդման և աջակցության մեծ պահանջ կար: Ակբան սկսեց կազմակերպել կրթական սեմինարներ և ներդրեց տեղեկատվության ավելի ազատ փոխանակման համակարգեր, ինչը դրական արձագանք գտավ ՓՄՁ-ների շրջանում:
Ակբա բանկի ռազմավարության մեջ ոչ ֆինանսական ծառայությունների ինտեգրման հիմնական նպատակը բիզնեսներին խթանելն ու հզորացնելն էր՝ զինելով նրանց հիմնական գիտելիքներով և ամուր գործարար կապերով:
Ներկայումս Ակբա բանկն առաջարկում է մի շարք ոչ ֆինանսական ծառայություններ, որոնք ուղղված են հաճախորդների գործարար փորձի հարստացմանը:ականացվել է 184 բիզնես դասընթաց, որին մասնակցել են 2084 փոքր և միջին ձեռնարկությունների 2221 որոշում կայացնողներ:
2016 թվականից գործարվեց նաև sme.acba.am բիզնեսի աջակցության հարթակը՝ նպատակ ունենալով ՓՄՁ-ներին տրամադրել աշխատանքային գործիքակազմ և առցանց ուսուցման տարբերակներ: Բիզնես պորտալը այժմ ունի կատարելագործված բովանդակություն, հագեցած է նոր ֆունկցիոնալ հնարավորություններով և գործիքակազմով:

Ինչպես նաև 2023 թվականի մարտին Ակբա բանկը Acba Business Partner ենթաբրենդի շրջանակում գործարկեց Բիզնես ակումբը իր ՓՄՁ հաճախորդների համար:

Ակբա Բիզնես ակումբ- տարիների ընթացքում Ակբայի ոչ ֆինանսական ծառայություններն ընդլայնվեցին և բանկի շուրջ ձևավորվեց ամուր բիզնես համայնք: Հենց այդ համայնքի արժեքավոր արձագանքների ու աջակցության միջոցով պաշտոնապես ընդունվեց Բիզնես ակումբի ստեղծման հայեցակարգը:

Ակբա Բիզնես ակումբը բիզնես համայնք է, որը հնարավորություն է տալիս ակումբի անդամ ձեռնարկություններին ընդլայնել իրենց գործարար կապերը, մասնակցել բիզնեսին առնչվող թեմատիկ քննարկումներին և միջոցառումներին, ստանալ հատուկ առաջարկներ իրենց բիզնեսի կարիքների համար:
Ակումբի անդամները բացառիկ հնարավորություն ունեն տեղեկանալ տարբեր ոլորտների տեղական և միջազգային փորձից, զարգացման միտումներից, քննարկել իրենց ոլորտին առնչվող ամենաարդի խնդիրները՝ համապատասխան կառույցների ներկայացուցիչների, միջազգային և տեղական խոսնակների հետ, ինչպես նաևստեղծել նոր համագործակցություններ:
2025 թվականի ավարտի դրությամբ տեղի է ունեցել Բիզնես ակումբի անդամների 13 հանդիպում:
Հանդիպումների ընթացքում գործարարների քննարկած թեմաների շրջանակը շատ լայն է և ներառում է բիզնեսի զարգացման առանցքային թեմաներ, որոնցից են աճի ռազմավարությունը և ներդրումները, , առանցքային հաճախորդների կառավարումը, հաղթող բանակցությունները, , անձնական բրենդինգը և բիզնեսների շարունակական զարգացման համար այլ արդի թեմաներ:

Կորպորատիվ կառավարումը

Ակբա բանկն իր արմատներով հասնում է եվրոպական բանկային և կորպորատիվ կառավարման լավագույն ավանդույթներին: Բանկը հիմնադրվել է 1996 թվականին ֆրանսիական Credit Agricole-ի և հոլանդական Rabobank-ի համատեղ ջանքերով, իսկ հետագայում հանդես եկել ֆրանսիական Credit Agricole բանկի կապիտալի մասնակցությամբ բանկ: Ակբա բանկը հետևողականորեն ձգտում է Հայաստանի բանկային համակարգ ներմուծել եվրոպական բիզնես աշխարհի արժեքներն ու գործելակերպը: Այդպես Բանկի կառավարումը նպատակ ունի ապահովել լավագույն միջազգային չափանիշներին համապատասխան գործունեություն Հայաստանում:
Կորպորատիվ կառավարումը Բանկում ենթադրում է լիազորությունների և պարտականությունների բաշխում: Բանկի խորհուրդը և բարձրագույն ղեկավարությունը, ներառյալ բանկի գլխավոր գործադիր տնօրենը և նրանց տեղակալները, իրականացնում են տարբեր գործունեություններ, այդ թվում.

- բանկի ռազմավարության և խնդիրների սահմանում,
- աշխատակազմի ընտրություն և վերահսկում,
- բանկի ամենօրյա բիզնես գործառնությունների իրականացում,
- ավանդատուների շահերի պաշտպանություն, բաժնետերերի հանդեպ պարտավորությունների կատարում և այլ ճանաչված շահագրգիռ կողմերի շահերի հաշվառում,
- կորպորատիվ մշակույթի, կորպորատիվ գործունեության և վարքագծի համապատասխանեցում այն ակնկալիքով, որ Բանկը կգործի անվտանգ և ապահով, բարեխիղճ և գործող օրենսդրությանը համապատասխան,
- վերահսկիչ գործառույթների սահմանում:

Կորպորատիվ կառավարման հիմնական նպատակն է պաշտպանել շահագրգիռ կողմերի շահերը կայուն հիմունքներով՝ հանրային շահերին համապատասխան: Հատկապես մանրածախ բանկերի դեպքում շահագրգիռ կողմերի մեջ բաժնետերերի շահերը ստորադասվում են ավանդատուների շահերին:

Բանկը գիտակցում է, որ լավ կորպորատիվ կառավարումը կարող է ստեղծել հետևյալ մրցակցային առավելությունները.

- արտաքին ֆինանսավորման ավելի մեծ հասանելիություն, ինչը կարող է հանգեցնել ավելի մեծ ներդրումների, ավելի մեծ աճի և ավելի շատ աշխատատեղերի բացման: Այսօր տեղական և միջազգային ներդրողները հաճախ խուսափում են ընկերություններից, որոնք չեն երաշխավորում ներդրողների իրավունքները և չեն ապահովում կորպորատիվ տեղեկատվության պատշաճ բացահայտումը և Խորհրդի հուսալի գործունեությունը:
- ավելի ցածր կապիտալ, բայց ավելի բարձր բանկի ինքնարժեք, ինչը մեծացնում է ներդրումների գրավչությունը,
- ավելի լավ գործառնական կատարում ռեսուրսների ավելի արդյունավետ բաշխման և ավելի լավ կառավարման միջոցով,
- ավելի ցածր ռիսկեր,
- ավելի լավ հարաբերություններ բոլոր շահագրգիռ կողմերի միջև, ինչը հանգեցնում է աշխատանքային հարաբերությունների բարելավմանը և սոցիալական ասպեկտների հետ կապված մթնոլորտի, ինչպիսին է շրջակա միջավայրի պահպանությունը:

2020 թվականից սկսած Բանկը, ֆրանսիական Proparco ընկերության աջակցությամբ և ուղղորդմամբ նախաձեռնեց և հիմք դրեց իր կորպորատիվ կառավարման համակարգի բարեփոխմանը: Մասնավորապես՝ բարեփոխման ծրագրի շրջանակներում ավելացվել է խորհրդի անկախ անդամների թիվը, որոնք կազմում են Խորհրդի 10 անդամներից 4-ը: Նաև, մշակվել և կիրառության մեջ են դրվել կառավարման ոլորտը կարգավորող բազմաթիվ ներքին իրավական ակտեր: Մինչև 2024 թվականի օգոստոս ամիսը Բանկն

առաջնորդվում էր սեփական մշակած Կառավարման կանոնագրքով, որն ապավինում էր ՏՀՀԿ, Բազելյան և Մեծ Բրիտանիայի կորպորատիվ կառավարման կանոնագրքի սկզբունքներին: 2024 թվականի օգոստոսին Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագիրքն ուժի մեջ մտնելուց հետո Բանկը որոշում կայացրեց անցում կատարել այդ կանոնագրքի կիրառմանը և դադարեցրեց սեփական կանոնագրքի օգտագործումը:

2022 թվականի նոյեմբերին ստեղծվել են Խորհրդի հետևյալ 3 հանձնաժողովները՝

- Աուդիտ հանձնաժողով,
- Ռիսկերի կառավարման հանձնաժողով
- Կառավարման, նշանակումների և վարձատրությունների հանձնաժողով:

Ավելի ուշ, Բանկի Խորհրդի 17.10.2024թ. որոշմամբ ստեղծվեց Խորհրդին կից Ռազմավարության հանձնաժողովը:

Խորհրդին կից հանձնաժողովների նախագահներ են նշանակված խորհրդի անկախ անդամները:

Ակբա բանկը գործում է Հայաստանի բոլոր մարզերում: Բանկի 64* մասնաճյուղերից 20-ը և Կենտրոնական գրասենյակը գործում են Երևանում, մնացածը՝ Հայաստանի 10 մարզերում: Աշխատակիցների թիվը հասնում է 1915-ի:

2026թ.-ի մարտի 31-ի դրությամբ, Ակբա բանկի ընդհանուր կապիտալը կազմում է 202,541 մլն ՀՀ դրամ, որը տոկոսային արտահայտությամբ կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալ 8.8%, ընդհանուր ակտիվները՝ 1,091 տրլն ՀՀ դրամ՝ Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր ակտիվների 8.3% իսկ վարկային պորտֆելը (վարկեր և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ) 755,368 մլն ՀՀ դրամ, որն իր հերթին կազմում է ընդհանուր բանկային համակարգի վարկային պորտֆելի 9.4%-ը:

4.3.2. Ներդրումները

4.3.2.1. Էական ներդրումներ

2023թ., 2024թ. և 2025թ. ֆինանսական տարիների ընթացքում ԱԿԲԱ ԲԱՆԿ-ի կողմից այլ անձանց կապիտալում էական ներդրումներ չեն կատարվել:

ԱԿԲԱ բանկը 2024 թվականի փետրվարին «ԵՍ ԵՄ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետիրական կապիտալում 200.0 մլն ՀՀ դրամի չափով մասնակցություն է ձեռք բերել,

* 01.07.2026թ. դրությամբ:

որի արդյունքում ԱԿԲԱ բանկի մասնակցությունը «ԵՍ ԵՄ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետիրական կապիտալում կազմում է 8.33%:

Բանկի կառավարման մարմինները չեն ստանձնել որևէ պարտավորություն ապագայում էական ներդրումներ իրականացնելու վերաբերյալ:

4.4. Բիզնեսի նկարագիրը

4.4.1. Հիմնական գործունեությունը

4.4.1.1. Բանկի առաքելություն, տեսլական և արժեքներ

Ակբա բանկի ստեղծման սկզբնական առաքելությունը եղել է Հայաստանի գյուղատնտեսության ֆինանսավորումն ու զարգացումը: Անկախացման շրջանում մանր և միջին գյուղացիական տնտեսությունները գրեթե զրկված էին վարկավորման ֆինանսական աղբյուրներից, և Ակբա բանկը (այն ժամանակ՝ Հայգյուղփոխբանկ), հիմնվելով փոխօգնության գաղափարի վրա, առաջնահերթ հասանելի դարձրեց վարկային ռեսուրսները նրանց համար:

Բանկի առաքելությունը ներկայումս ավելի ընդգրկուն է, չնայած գյուղատնտեսության ֆինանսավորումը մինչև այժմ էլ հանդիսանում է բանկի գործունեության կենտրոնական տարրերից մեկը: Գործունեության շուրջ երեք տասնյակ տարիների ընթացքում բանկն անընդհատ ամրապնդել է իր դիրքերը բանկային բոլոր հիմնական ծառայությունների ոլորտում և ներկայումս հանդիսանում է համալիր ծառայություններ մատուցող բանկ:

Ներկայումս բանկի առաքելությունն է՝ ***ինքնատիպ և նորարար լուծումներով նպաստել հասարակության կայուն զարգացմանը:***

Միջնաժամկետ և երկարաժամկետ հորիզոնում Բանկի տեսլականը հետևյալն է՝

- Լինել առաջին ընտրության բանկը՝ մշտապես առաջարկելով ճկուն և ստեղծարար լուծումներ
- Լինել ամենաճանաչելի ապրանքանիշը ֆինանսական շուկայում
- Լինել ֆինանսական շուկայում առաջատարներից մեկը արդյունավետության և շահութաբերության ցուցանիշներով
- Լինել գյուղատնտեսական ոլորտի խթանիչը
- Լինել առաջին ընտրության գործատուն ՀՀ ֆինանսական շուկայում:

Բանկն իր գործունեության ընթացքում ուղղորդվում է հետևյալ հիմնական արժեքներով՝

- **Հոգատարություն հաճախորդների հանդեպ**
- **Սոցիալական պատասխանատվություն**

- **Հավատարմություն**
- **Թափանցիկություն**
- **Նորարարություն**

4.4.2. Հիմնական շուկաները

4.4.2.1. Հիմնական շուկաները

Բանկի գործունեությունն ի սկզբանե ուղղված է եղել Հայաստանի գյուղատնտեսության ֆինանսավորմանն ու աջակցմանը: 1998թ.-ից սկսած Բանկը սկսել է ընդլայնել իր վարկային և այլ բանկային գործառնությունների շրջանակը՝ աստիճանաբար վերափոխվելով ունիվերսալ բանկի:

Այժմ Բանկը տրամադրում է բանկային լայնածավալ ծառայություններ: Բանկն ունի ամբողջական պրոդուկտների և ծառայությունների փաթեթ հետևյալ չորս հաճախորդային սեգմենտների համար.

- մանրածախ
- գյուղատնտեսական
- ՓՄՁ
- կորպորատիվ

Բանկի կողմից առաջարկվող հիմնական պրոդուկտները և ծառայություններն են.

- խնայողական հաշիվներ և ավանդների ներգրավում,
- պարտատոմսեր,
- վարկերի տրամադրում՝ սպառողական, հիփոթեքային, ապառիկ, գյուղատնտեսական և բիզնես բնույթի,
- լիզինգ,
- կրեդիտային և դեբետային վճարային քարտերի թողարկում և սպասարկում,
- արտարժութային գործառնություններ,
- վճարումներ և փոխանցումներ (ներառյալ՝ արագ համակարգերով),
- հեռավար բանկային ծառայություններ,
- ռեեստրի վարումը և կորպորատիվ արժեթղթերի պահառություն,
- տեղական և միջազգային բրոքերային ծառայություններ,
- ֆակտորինգ և առևտրի ֆինանսավորում (ակրեդիտիվներ, երաշխիքներ),
- առևտրի և սպասարկման կետերի համար լուծումներ,
- ապահովագրական ծառայություններ (որպես ապահովագրական գործակալ),
- ոչ ֆինանսական ծառայություններ (Ակբա բիզնես ակումբ, դասընթացներ և խորհրդատվություն):

Բանկն իր գործունեությունը ծավալում է Հայաստանի ամբողջ տարածքում՝ մասնաճյուղային լայն ցանցի և հեռահար ծառայությունների միջոցով:
2026թ-ի մարտի 31-ի դրությամբ Բանկի վարկային պորտֆելի (Հաճախորդների տրված վարկեր և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ) 39.1% -ը կազմում են մանրածախ վարկերը, 12.6%-ը՝ գյուղատնտեսական վարկերը, իսկ 48.3% -ը՝ ՓՄՁ և կորպորատիվ վարկերը:
2026թ-ի մարտի 31-ի դրությամբ Բանկի կողմից գեներացված տոկոսային և ոչ տոկոսային եկամուտների շուրջ 74.1%-ը բաժին է ընկնում վարկային գործառնություններին: Ներդրումային և արտարժութային գործառնություններից եկամուտները կազմում է Բանկի եկամուտների շուրջ 8.0%-ը:

Ակբա բանկը Հայաստանի բանկային համակարգի առաջատարներից է, որն իր գործունեության ամբողջ ընթացքում եղել է ոչ միայն ֆինանսական ծառայություններ մատուցող կառույց, այլև կորպորատիվ սոցիալական պատասխանատվությամբ առաջնորդվող կազմակերպություն:

Արդեն երեք տասնամյակ Ակբա բանկն իրականացնում է հասարակության համար կարևոր և հեռանկարային տարատեսակ ծրագրեր՝ նպաստելով համայնքների ենթակառուցվածքների ստեղծմանը, թարմացմանն ու համաչափ զարգացմանը, մշակութային, սոցիալական և տնտեսական խնդիրների լուծմանը:
Բացի այդ, Բանկը պարբերաբար իրականացնում է բնությունը պլաստիկից ազատելու ծրագրեր, կազմակերպում ծառատունկեր՝ խթանելով Հայաստանում բնության հանդեպ ուշադրությունն ու նպաստելով բնապահպանական խնդիրների լուծմանը, շրջակա միջավայրի բարելավմանը:

Ակբա բանկը նաև Հայաստանի բանկային համակարգում առաջինն է, որ կորպորատիվ բարեգործական նախաձեռնություններ իրականացնելու նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի հետ համագործակցությամբ դեռ 2012 թվականին թողարկեց Visa Բարերար քարտատեսակը: Այս քարտով իրականացվող յուրաքանչյուր գործարքի դիմաց բանկը սեփական հաշվից միջոցներ է տրամադրում «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ Հայաստանում առաջնային և երկարաժամկետ նախագծեր իրականացնելու համար, ինչպիսիք են վերականգնվող էներգետիկան, կրթությունը, մշակույթը, սահմանամերձ համայնքներում ենթակառուցվածքների զարգացումը և այլն:

Մշտապես բանկի ուշադրության կենտրոնում են նաև բնապահպանական և սոցիալական ծրագրերը: Այս համատեքստում բանկն իր աշխատակիցների հետ միասին յուրաքանչյուր տարի իրականացնում է ծառատունկեր, Սևանա լճի ափամերձ տարածքներում աղբի,

պլաստիկի հավաքման աշխատանքներ որոնք միաժամանակ նպաստում են շրջակա միջավայրի պահպանությանը և համայնքների կենսապայմանների բարելավմանը:

Բանկը նաև առաջինն է Հայաստանում, որ փոքր և միջին ձեռնարկատերերի համար կազմակերպում է անվճար բիզնես դասընթացներ՝ նաև գիտելիքի և փորձի փոխանցմամբ աջակցելով ՓՄՁ-ների զարգացմանը: Բանկի sme.acba.am հարթակում տեղադրվել են կայուն գյուղատնտեսության վերաբերյալ առցանց ուսուցման դասընթացներ՝ նպատակ ունենալով ագրո հաճախորդների հետ կիսվել բնական ռեսուրսները և էներգիան արդյունավետորեն օգտագործելու գործիքակազմով՝ ընդգծելով կլիմայական ռիսկերի մեղմման և հարմարվողականության արդյունքում կայուն տնտեսություն ստեղծելու կարևորությունը: Բացի այս, Ակբան Հայաստանի բանկային համակարգում կրկին առաջինն է, որ հիմնադրել է բիզնես ակումբ (Ակբա Բիզնես ակումբ)՝ նպաստելով տարբեր բիզնեսների զարգացմանը, նոր կապերի ստեղծմանը, բիզնես գաղափարների գեներացմանը և այլն:
Ակբայի գործունեության հիմքում ընկած է գաղափարսատարել հանրությանը՝ ստեղծելով կայուն և զարգացող հասարակություն:

Ընդհանուր առմամբ, Բանկի գործունեությունն ուղղված է ոչ միայն երկրի տնտեսության զարգացմանն ու բարեկեցության բարձրացմանը, այլ նաև ֆինանսական և տեխնոլոգիական նորարարական լուծումների ներդրմանը ևդրանց շարունակական զարգացմանը՝ դրանով իսկ նպաստելով ինչպես սեփական գործունեության միջավայրի, այնպես էլ երկրի ֆինանսական էկոհամակարգի կայուն զարգացմանը:

4.4.2.2.Մրցակցային դիրքը

Բանկը, լինելով ՀՀ առաջատար բանկերից մեկը և բարձր պահելով իր մրցակցային դիրքը բանկային համակարգում, արդյունավետ, համախմբված թիմային աշխատանքի և կանոնակարգված գործունեության շնորհիվ շարունակ պահպանում է իր առանցքային դերն ու կարևորությունը Հայաստանի բանկային շուկայում:
Բանկի հիմնական մրցակցային առավելություններն են՝

- վարկային պորտֆելի ցածր դոլարիզացիա,
- ավանդային պորտֆելի համեմատաբար ցածր դոլարիզացիա,
- ժամանակակից թվային ենթակառուցվածքներ,
- մեծ ակտիվ հաճախորդային բազա և հավատարմություն,
- լայն մարզային ներկայացվածություն և բարձր ճանաչելիություն հատկապես գյուղական համայնքներում,

- սերտ համագործակցություն և վստահություն միջազգային մի շարք հեղինակավոր ֆինանսաբանկային կազմակերպությունների հետ, որոնք ապահովում են Բանկին անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներով,
- պրոֆեսիոնալ և նվիրված անձնակազմ, աշխատակիցների ցածր հոսունության ցուցանիշներ, բարձր բավարարվածության մակարդակ և կարիերայի լայն հնարավորություններ,
- բարի համբավ հասարակության լայն շերտերում:

2026 թ մարտի 31-ի դրությամբ Ակբա բանկը, շարունակելով իր ակտիվ գործունեությունը Հայաստանի Ֆինանսական համակարգում և գործելով առողջ մրցակցության պայմաններում, պահպանում է իր առաջատար դիրքը բանկային համակարգում կապիտալի (4-րդ տեղ), ակտիվների (3-րդ տեղ), և վարկային պորտֆելների (3-րդ տեղ) մեծությամբ:

Նմանատիպ առաջատար դիրքերը ևս մեկ անգամ վկայում են Բանկի հուսալիության, մրցունակության և կայունության մասին:

Այսպիսով, Ակբա բանկն իր նորարական մոտեցումների, պրոֆեսիոնալ թիմի արդյունավետ աշխատանքի, մրցունակության էական հնարավորությունների շնորհիվ մշտապես ամրապնդում է տարիների ընթացքում ձևավորած արժեքները և հաճախորդների ու գործընկերների հետ ստեղծում փոխշահավետ, երկարաժամկետ համագործակցության և առաջընթացի նոր հեռանկարներ :

4.5. Թողարկողի կառուցվածքը

4.5.1. Բանկի խմբի կառուցվածքը

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն ԱԿԲԱ ԽՈՒՄԲ ֆինանսական խմբի մայր կազմակերպությունն է: Խումբը բաղկացած է Ակբա բանկից, դրա դուստր և ասոցիացված կազմակերպություններից: Բանկի դուստր կազմակերպությունն է՝ «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ-ն: Բանկի ասոցիացված կազմակերպությունն է՝ «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ն:

«ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ-ն գրանցվել է 2003թ.-ի ապրիլի 23-ին ՀՀ ԿԲ կողմից թիվ 4 արտոնագրային համարով և գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Կազմակերպությունը իրականացնում է ֆինանսական լիզինգի գծով գործառնություններ:

Հարկ է նշել նաև որ, «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն (ներկայումս՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ) 2017թ. դեկտեմբերին ֆրանսիական «ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԼԻԶԻՆԳ ԸՆԴ ՖԱԿՏՈՐԻՆԳ» ընկերությունից և 3 ֆիզիկական անձանցից գնել է վերջիններիս պատկանող՝ «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ բաժնետիրական կապիտալում ունեցած՝ ընդհանուր թվով, 92 հատ բաժնետոմսերը: Արդյունքում «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

մասնակցությունն «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ բաժնետիրական կապիտալում կազմում է 100%:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի 28.04.2017թ.-ի որոշմամբ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն, (ներկայումս՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ) «ԱԳԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ-ն (ներկայումս՝ «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ) և «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ն ճանաչվել են որպես ֆինանսական խումբ՝ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԽՈՒՄԲ» անվանմամբ: «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի 14.08.2020թ.-ի որոշմամբ ֆինանսական խումբը վերանվանվել է «ԱԿԲԱ ԽՈՒՄԲ» ֆինանսական խումբ: «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն նշանակվել է որպես «ԱԿԲԱ ԽՈՒՄԲ» ֆինանսական խմբի պատասխանատու անձ:

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ն գրանցվել է 19.11.2013թ.-ին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ (գրանցման համարը՝ 2): Կազմակերպությունը ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված է իրականացնել ներդրումային ֆոնդերի կառավարչի գործունեություն և ներկայումս հանդիսանում է ՀՀ-ում կենսաթոշակային ֆոնդերի կառավարում իրականացնող 2 ընկերություններից մեկը:

4.6. Զարգացման վերջին միտումները

4.6.1. Բանկի ծառայությունների ծավալների փոփոխման միտումները

Վերջին հաշվետու ժամանակաշրջանի ավարտից մինչև Ազդագրի ներկայացման օրն ընկած ժամանակահատվածում Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագների էական փոփոխություն չի գրանցվել, որոնք ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս: Ակնկալվում է, որ Բանկի կողմից մատուցվող ծառայությունները կաճեն, տոկոսադրույքները հիմնականում կմնան կայուն:

Ողջամիտ ներդրողի ներդրումային որոշման կայացման համար՝ Բանկը ներկայացնում է նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում ակտիվապասիվային ցուցանիշների ծավալային փոփոխությունները:

Հազ. ՀՀ դրամ

Միջոցների Ներգրավում	2023թ.	2022թ. նկատմամբ (%)*	2024թ.	2023թ. Նկատմամբ (%)*	2025թ.	2024թ. նկատմամբ (%)*
Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից*	108,939,565	6.7%	123,979,159	13.8%	171,907,351	38.7%
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	503,231,650	18.6%	584,122,036	16.1%	618,517,523	5.9%

Հազ. ՀՀ դրամ

Միջոցների տեղաբաշխում	2023թ.	2022թ. նկատմամբ (%)*	2024թ.	2023թ. նկատմամբ (%)*	2025թ.	2024թ. նկատմամբ (%)*
Հաճախորդներին տրված վարկեր և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ*	538,605,763	16.6%	629,315,853	16.8%	736,539,712	17.0%
Պահանջներ բանկերի նկատմամբ	99,410,514	95.7%	81,482,428	-18.0%	92,959,786	14.1%
Ներդրումային արժեթղթեր	21,422,936	-9.4%	62,108,609	189.9%	73,247,135	17.9%

Տնտեսական միջավայր

2025թ., ինչպես նաև նախորդ տարի, Հայաստանն ունեցել է տնտեսական աճի բարձր տեմպ, չնայած դանդաղման միտումներին և միջազգային կանխատեսումներին: Այսպես, 2025թ. ՀՀ-ում գրանցվել է 9.1% տնտեսական ակտիվության ցուցանիշ ՏԱՑ (շուրջ 0.8 տոկոսային կետով բարձր նախորդ տարվանից), ինչը հիմնականում պայմանավորված էր շինարարության, առևտրի և ծառայությունների ոլորտների արագընթաց ընդլայնմամբ:

2025թ. ՀՀ-ում շարունակվել է բարենպաստ գնաճային միջավայրը: Գնաճը պահպանվել է ՀՀ ԿԲ թիրախային 3.1% մակարդակին մոտ, ինչը թույլ է տվել իրականացնել դրամավարկային քաղաքականության պայմանների աստիճանական թուլացում: 2025թ. դեկտեմբերին (վերաֆինանսավորման) տոկոսադրույքը նվազեցվել է մինչև 6.5%:

* Աղյուսակում ներառված ֆինանսական տվյալները ստացվել են համապատասխան ժամանակաշրջանների աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններից, բացառությամբ «*» նշանով նշված տվյալների, որոնց հաշվարկման մանրամասները բացահայտված են Հավելված 3-ում:

2025թ. հայկական դրամը դրսևորել է հարաբերական կայունություն, ինչին նպաստել են կապիտալի ներհոսքը և իրականացվող զգուշավոր քաղաքականությունը: Այդուհանդերձ, արտաքին ցնցումները կարող են հանգեցնել փոխարժեքի տատանողականության:

2025թ.-ի ընթացքում Հայաստանի ֆինանսական համակարգը պահպանել է իր կայունությունը՝ դիմակայելով տարվա ընթացքում առաջ եկած բոլոր խնդիրներին և մարտահրավերներին: Մարտահրավերային է շարունակում մնալ աշխարհաքաղաքական անկայուն և լարված իրավիճակը, բարձր անորոշությունը, հարևան երկրների նկատմամբ պատժամիջոցների կիրառումը, ՀՀ տնտեսության՝ Ռուսաստանից բարձր կախվածության մակարդակը, ինչպես նաև արտահանման հետ կապված բարդությունները: Հայաստանի ֆինանսական համակարգը 2025թ.-ին շարունակել է դրսևորել դիմակայունություն ու ճկունություն: Թվայնացման արագացված տեմպերը, բանկային ենթակառուցվածքների զարգացումը և կարգավորող մարմինների աջակցությունը նպաստեցին համակարգի հիմնական ցուցանիշների կայուն աճին՝ ապահովելով ոլորտի համախմբված ադապտացումը նոր պայմաններին:

Բանկային համակարգը շարունակում է մնալ Հայաստանի ֆինանսական շուկայի խոշորագույն բաղադրիչը: 2025թ. տարեվերջի դրությամբ ՀՀ-ում գործել է 17 առևտրային բանկ՝ հանրապետության ողջ տարածքում ունենալով ընդհանուր 543 մասնաճյուղ, որոնցից 271՝ Երևանում: Հայաստանի առևտրային բանկերի աշխատակիցների ընդհանուր թվաքանակը կազմել է 16,884:

2025թ. բանկային համակարգի ակտիվներն աճել են շուրջ 16%, կապիտալը՝ 21%, վարկային պորտֆելն աճել է 22% և ավանդային պորտֆելը՝ 14%: Բանկային համակարգի զուտ շահույթն աճել է 16%-ով՝ կազմելով շուրջ 418 մլրդ ՀՀ դրամ: Բանկային համակարգի իրացվելիության և կապիտալիզացիայի մակարդակները վերջին տարիների ընթացքում նույնպես պահպանվել են բարձր մակարդակում:

Բանկային համակարգը վերափոխվում է կարգավորման բարեփոխումների, թվային առաջընթացի և կայուն զարգացման նախաձեռնությունների միջոցով: ՀՀ Կենտրոնական բանկի 2025-2027թթ. ռազմավարությունը կենտրոնանում է ֆինանսական համակարգի կայունության և կարգավորման, ռիսկերի վրա հիմնված վերահսկողության և վճարահաշվարկային համակարգի արդիականացման վրա:

Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալությունը (ՀՏՀԳ/ ISAA), որը ստեղծվել է ՀՀ Կառավարության և ԿԲ համատեղ նախաձեռնությամբ, առաջնորդում է երկրի թվային տրանսֆորմացիան՝ նպատակ ունենալով ձևավորել վստահության վրա հիմնված էլեկտրոնային հասարակություն և էլեկտրոնային տնտեսություն: Այնպիսի նախաձեռնությունների միջոցով, ինչպիսին է ազգային էլեկտրոնային նույնականացումը, ՀՏՀԳ-ն հզորացնում է կիբերանվտանգությունը, պարզեցնում ֆինանսական

ծառայությունները և խթանում անկանխիկ տնտեսությունը: Գործակալությունն աշխատում է փոխգործելիության շրջանակների ուղղությամբ՝ նպաստելու տվյալների անխափան փոխանակմանը և բարելավելու թվային կառավարումը: Էլեկտրոնային նույնականացման և անկանխիկ գործարքների ներդրումը օպտիմալացնում է բանկային գործառնությունները՝ բանկերից պահանջելով ինտեգրել արդյունավետ թվային ծառայություններ:

Բանկային ոլորտի վրա իրենց ազդեցությունը կունենան նաև բանկային ոլորտում առավել նշանակալի տենդենցները, որոնք համահունչ են Բանկի ապագա նախաձեռնություններին:

Թվայնացում և հիպերավտոմատացում. Թվայնացումը շարունակում է վերափոխել բանկային ոլորտը՝ բարձրացնելով գործառնական արդյունավետությունը, բարելավելով հաճախորդների փորձառությունը և հնարավորություն ընձեռելով արագ ու տվյալահեն որոշումների կայացմանը:

Հիպերավտոմատացումը արհեստական բանականության (AI), մեքենայական ուսուցման (ML) և ռոբոտացված գործընթացների ավտոմատացման (RPA) ինտեգրման տեխնոլոգիաների շնորհիվ օպտիմալացնում է աշխատանքային հոսքերը, նվազեցնում ծախսերն ու սխալների հավանականությունը, բարձրացնում արդյունավետությունն ու արագությունը: Այս տեխնոլոգիաները վերափոխում են ֆինանսական ծառայությունները՝ հնարավորություն տալով բանկերին ավելի լավ հասկանալ հաճախորդների վարքագիծը և առաջարկել լայնածավալ անհատականացված ծառայություններ:

Անհատականացում և հաճախորդամետ մոտեցում. Թվայնացումը և աճող մրցակցությունը բանկերից պահանջում են ստանդարտ ծառայություններից և սպասարկումից բացի մտածել հաճախորդների այլ կարիքների մասին: Հաճախորդներն այժմ ակնկալում են անխափան փորձառություն և իրենց կարիքներին հարմարեցված ֆինանսական պրոդուկտներ: Բանկերն ավելի ու ավելի շատ են օգտագործում ԱԲ-ն և մեծ տվյալները (Big Data)՝ անհատականացված առաջարկներ տրամադրելու և կանխատեսելու ֆինանսական պատկերացումները: Ակբայում մենք հավատարիմ ենք հաճախորդամետ մոտեցմանը: Նախատեսում ենք ներդնել տարբեր գործիքներ օգտատերերի փորձառությունը շարունակաբար բարելավելու համար:

Բաց բանկինգ (Open Banking). Ավանդական բանկային սահմանները վերանում են, քանի որ API-ների վրա հիմնված էկոհամակարգերը հնարավորություն են տալիս անխափան ինտեգրվել ֆինտեխների և երրորդ կողմի ծառայությունների հետ: Աշխարհում նաև կարգավորող մարմինները դրդում են բանկերին ներդնել բաց բանկինգի համակարգերը, ինչը թույլ է տալիս հաճախորդներին հասանելիություն ունենալ ֆինանսական գործիքների ավելի լայն շրջանակին: Մենք ակտիվորեն մշակում ենք API-ների վրա հիմնված լուծումներ, որոնց մի մասն արդեն իսկ ինտեգրված է acba digital հարթակում (օրինակ՝ այլ բանկերի վարկերի մարումը):

Կիբերանվտանգություն. Թվայնացման ընդլայնմանը զուգընթաց աճում են կիբերանվտանգության սպառնալիքները և զեղծարարության (ֆրոդի) ռիսկերը: Արհեստական բանականության վրա հիմնված վարքագծային վերլուծությունը և իրական ժամանակում զեղծարարության հայտնաբերումը դառնում են անվտանգության հիմնական միջոցառումները: Մեզ համար առաջնահերթություն է հաճախորդների տվյալների և ֆինանսական գործարքների պաշտպանությունը: Մշտապես մշակվում են կենսաչափական նույնականացման գործիքներ, զեղծարարության հայտնաբերման իրական ժամանակի համակարգեր և կիբերանվտանգության առաջադեմ մեխանիզմներ՝ հաճախորդների վստահությունն ու անձնական տվյալների անվտանգությունն ապահովելու համար:

Կայուն ֆինանսներ. Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ արդեն Հայաստանում կայունությունը դարձել է բանկային ռազմավարության առանցքային հենասյուներից: Բացի այդ, միջազգային գործընկերներն էլ ավելի հաճախ են նախընտրություն տալիս այն բանկերին, որոնք կրում են կայուն ֆինանսավորման պատասխանատվությունը: Ակբան համապատասխանեցնում է իր գործելաոճը՝ «կանաչ» ֆինանսավորման նախաձեռնություններին միտված լինելով և համոզված լինելով, որ ԲՍԿ ստանդարտների ներդրումը կարող է նոր հնարավորություններ ընձեռել բանկերին:

Այսպիսով, հաշվի առնելով ֆինանսական համակարգի դինամիկ զարգացման միտումները և տենդենցները, գալիս ենք այն եզրահանգման, որ կայուն աճ ապահովելու և մրցունակ լինելու համար ֆինանսական կազմակերպությունները պետք է համապատասխան ներդրումներ կատարեն նորարարական լուծումների, հաճախորդների պահանջների լավագույնս բավարարման և սպասարկման ուղղությամբ, ինչը կնպաստի նաև արտաքին աշխարհի մարտահրավերներին դիմակայելուն:

Այս համատեքստում Բանկը 2026-2028թթ. համար նպատակադրել է հիմնական ֆինանսական ցուցանիշների հետևյալ թիրախները՝

- Վարկային պորտֆելի 3 տարիների համակցված աճը կլինի շուրջ 17% CAGR* 2028թ.՝ գերազանցելով 1.0 տրիլիոն ՀՀ դրամը (ակտիվների մոտ 65%-ը):
- Ավանդային պորտֆելի աճ (ներառյալ Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի). Ակնկալվում է, որ ավանդների և պարտատոմսերի համակցված ֆինանսավորման բազան 2026–2028թթ. ընթացքում կաճի տարեկան միջին 15% CAGR-ով: Երկարաժամկետ իրացվելիության ճեղքվածքը կրճատելու նպատակով՝ բանկը 2024թ. սկսած ակտիվորեն թողարկել է 5 տարի մարման ժամկետով պարտատոմսեր (այն դեպքում, երբ ավանդների մեծ մասի մարման ժամկետը մինչև

* Compound Annual Growth Rate


2 տարի է): Նման թողարկումները կշարունակվեն նաև առաջիկա տարիներին՝ որպես ֆինանսավորման ռազմավարական կառուցվածքի մաս:Ավտոմատացման, թվային տրանսֆորմացիայի և գործընթացների օպտիմալացման շնորհիվ բանկը նպատակ ունի մինչև 2028թ. բարելավել ծախսեր եկամուտ (cost-to-income) հարաբերակցությունը մինչև 39.0% (2025թ. գրանցած 41.1%-ից):

- Վարկերի հնարավոր կորուստների գծով զուտ մասհանումներ/ վարկային պորտֆել ցուցանիշի մակարդակը Բանկի համար նախատեսվում է պահել 1-1.1% շուրջ:
- Պլանավորվող երեք տարիների ընթացքում վարկերը կազմելու են ակտիվների շուրջ 63 տոկոսի շրջանակում, իսկ վերջիններիս համար որպես ֆինանսավորման աղբյուր հանդես են գալու ինչպես հաճախորդների ավանդները, այնպես էլ միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրաված միջոցները:
- Ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշը կպահպանվի 18%նորմատիվից բարձր՝ շուրջ 20 տոկոսի շրջանակներում:
- Իրացվելիության կառավարման արդյունքում բանկի Բարձր իրացվելի ակտիվներ հարաբերած Ընդհանուր ակտիվներ նորմատիվի մեծությունը նախատեսվում է պահել 23%-ի շուրջ,
- Առաջիկա երեք տարիներին Բանկը նպատակ ունի պահպանել կապիտալի և ակտիվների շահութաբերության ցուցանիշը համապատասխանաբար 19%-ի և 3.6% -ի շուրջ:

4.7. Բանկի կառավարման մարմինները և դրանց անդամները

4.7.1. Կառավարման մարմինները և կառուցվածքը

Համաձայն Բանկի կանոնադրության՝ Բանկն ունի կորպորատիվ կառավարման հետևյալ կառուցվածքը՝



Բանկն ունի Գլխավոր հաշվապահ, Ներքին աուդիտի ստորաբաժանում, Ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձ և

Համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձ և Կորպորատիվ քարտուղար:

Խորհրդին կից գործում են հետևյալ հանձնաժողովները.

- Աուդիտի հանձնաժողով,
- Ռիսկերի կառավարման հանձնաժողով,
- Կառավարման, նշանակումների և վարձատրությունների հանձնաժողով
- Ռազմավարության հանձնաժողով:

4.7.1.1. Բանկի Բաժնետերերի ընդհանուր ժողով

Բանկի Բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ընդհանուր Ժողով) ֊ Բանկի բարձրագույն կառավարման մարմինն է:

Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

1. Բանկի կանոնադրության հաստատումը (ներառյալ՝ կազմակերպա-իրավական ձևի փոփոխությունը, գործունեության ժամկետի փոփոխությունը կամ երկարաձգումը, գրանցման վայրի փոփոխությունը), դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,
2. Բանկի վերակազմակերպումը (միաձուլումները, միացումները, բաժանումները, առանձնացումները, վերակազմավորումները), հարկային ռեզիդենտության կամ կորպորատիվ տեսակի փոփոխությունները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ,
3. Բանկի լուծարումը, կամավոր լուծարումը և/կամ գործունեության դադարեցումը, ընթացիկ բիզնեսի փոխանցման նպատակով ակտիվների մասնակի օտարումը կամ բիզնես լիզինգով տրամադրումը,
4. Ընդհանուր ժողովի վարման կարգի հաստատումը,
5. Բանկի Ընդհանուր ժողովի և Խորհրդի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի, մասնավորապես՝ Ընդհանուր Ժողովի և Խորհրդի կանոնակարգերի, հաստատումը,
6. Ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը,
7. Խորհրդի քանակական կազմի հաստատումը, Խորհրդի կազմում անդամների թվի կրճատման կամ ավելացման վերաբերյալ ցանկացած որոշման կայացումը, օրենքով նախատեսված դեպքերում Խորհրդի անդամների ընտրությունը, նրանց պաշտոնավարման ժամկետի սահմանումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան Ընդհանուր ժողովներում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, երբ Խորհրդի քանակական կազմը կարող է հաստատվել արտահերթ Ընդհանուր ժողովում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ Ընդհանուր

ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,

8. Խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը,
9. Հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,
10. Օրենքով սահմանված արտաքին աուդիտն իրականացնող անձանց նշանակումը և ազատումը,
11. Բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Բանկի կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Բանկի կողմից ձեռք բերված կամ հետգնված բաժնետոմսերի մարման ճանապարհով բաժնետիրական կապիտալի չափի նվազեցումը,
12. Օրենքով նախատեսված դեպքերում Բանկի կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման և հետգնման հարցերի որոշումը,
13. Բանկի կողմից իր բաժնետոմսերը հետ գնելու դեպքում բաժնետիրական կապիտալի նվազեցման կամ տվյալ բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) իրացման մասին որոշման ընդունումը,
14. Բանկի կողմից իրականացվող բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման ձևերի (բաց կամ փակ բաժանորդագրություն) սահմանումը,
15. Բանկի բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող այլ արժեթղթերի նկատմամբ Բանկի բաժնետերերին նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ,
16. Լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով բաժնետիրական կապիտալի ավելացումը, բաժնային կամ պարտքային այնպիսի արժեթղթերի և/կամ այլ այնպիսի արժեթղթերի թողարկումը, որոնք Բանկի բաժնետիրական կապիտալում մասնակցության կամ ձայնի իրավունքի որոշակի հնարավորություն են տալիս, ներառյալ՝ ցանկացած օպցիոններ կամ օպցիոններին նման այլ ֆինանսական գործիքներ, ինչպես նաև աշխատողների և ավագ ղեկավարների շահույթի բաշխման ցանկացած պլան, բացառությամբ փոխարկելի ստորադաս վարկերի, այնքանով, որքանով որ փոխարկումն անհրաժեշտ է ՀՀ Կենտրոնական բանկի տնտեսական նորմատիվներով վարկը Բանկի կապիտալի հաշվարկներում ներառելու կամ պարտադիր փոխարկման համաձայն արժեթղթերի տեղաբաշխման համար: Սույն կետի իմաստով պարտադիր փոխարկում նշանակում է ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած կարգերի և (կամ) տնտեսական նորմատիվների համաձայն՝ Բանկին տրված վարկի փոխարկումը բաժնետիրական կապիտալի,
17. Մեկ տարվա ընթացքում մեկ ընկերության կամ ընկերությունների խմբի հետ նշանակալի ակտիվների օտարման կամ գնման ցանկացած գործարքի հաստատումը, որը գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 20 տոկոսը,

18. Մեկ տարվա ընթացքում Բանկի ընդհանուր կապիտալի 20 տոկոսից ավել ակտիվների նկատմամբ (ներառյալ ցանկացած բաժնետոմս կամ այլ գույքային իրավունք) ապահովված իրավունքի, երաշխավորության կամ գրավի իրավունքի տրամադրման հաստատումը,
19. Բանկին պատկանող և Բանկի ընթացիկ կամ ապագա գործունեության համար անհրաժեշտ ցանկացած մտավոր սեփականության իրավունքի վաճառքի, օտարման, փոխանցման կամ լիցենզիայի տրամադրման հետ կապված ցանկացած որոշում,
20. Օրենքով նախատեսված դեպքում՝ շահագրգռվածության առկայությամբ գործարքի կնքման մասին որոշման ընդունումը,
21. Օրենքով սահմանված խոշոր համարվող այնպիսի գործարքի մասին որոշման կայացումը, որի առարկա հանդիսացող գույքի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-50 տոկոսը, սակայն որի կնքման մասին որոշումը չի ընդունվել Խորհրդի կողմից, և Խորհուրդը որոշում է կայացրել այդ գործարքի մասին հարցը Ընդհանուր ժողովի կողմից քննարկելու մասին,
22. Օրենքով սահմանված խոշոր համարվող այնպիսի գործարքի մասին որոշման կայացումը, որի առարկա հանդիսացող գույքի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսից ավելին,
23. ՍԵՅՖ պայմանագրի կնքման մասին որոշման ընդունումը,
24. Բանկի աշխատակիցների բաժնետիրացման ծրագրի հաստատումը, ինչպես նաև նշված ծրագրերի հետ կապված կամ այդ ծրագրերից բխող ցանկացած որոշման ընդունումը,
25. Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման, դրանց չափի, վճարման կարգի և պայմանների մասին որոշման ընդունումը, շահութաբաժիններ չվճարելու մասին որոշման ընդունումը,
26. Ֆինանսական տարվա ավարտի ամսաթվի ցանկացած փոփոխության հաստատումը, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ,
27. Բաժնետոմսերի համախմբումը և բաժանումը,
28. Արժեթղթերի հրապարակային առաջարկի, ցուցակման կամ ապացուցակման վերաբերյալ ցանկացած որոշում, ներառյալ այդպիսի ցուցակման պայմանների սահմանումը: Սույն ենթակետի իմաստով արժեթղթեր են համարվում ցանկացած բաժնետոմս կամ Բանկի կողմից թողարկված կամ թողարկման ենթակա այլ արժեթուղթ, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն, անմիջապես կամ ապագայում կտրամադրի հասանելիություն Բանկի բաժնետիրական կապիտալին, շահույթին,

լուծարային արժեքին կամ ձայնի իրավունքին, ինչպես նաև այդ արժեթղթերի ցանկացած մաս,

29. Բանկի հետ կապված անձանց հետ ուղղակիորեն կամ անուղղակիորեն այնպիսի գործարքների կնքումը, եթե գործարքը կամ մեկից ավել փոխկապակցված գործարքների խումբը կնքվում են Բանկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի կամ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի փոխարկվող այլ արժեթղթերի տեղաբաշխման նպատակով, որոնց արժեքը գերազանցում է Բանկի ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 2 տոկոսը,

30. Ցանկացած որոշում, որը վերաբերում է այնպիսի պետությունում ներդրման կատարմանը, որտեղ Բանկի Խումբը նախկինում էական գործունեություն չի ծավալել կամ Բանկի Խմբի ընկերությունների գրանցման վայր հանդիսացող պետության փոփոխությունը, բացառությամբ օտարերկրյա պետական և կորպորատիվ արժեթղթերով գործարքների կնքման, այլ ֆինանսական հաստատությունների հետ գործարքների կնքման, ներառյալ թղթակցային հաշիվների և դրանց մնացորդների հետ կապված գործարքները, արժեթղթերի հաշիվների հետ կապված գործարքները, ավանդները, սվոփերը, ռեպո գործարքները և ածանցյալ ֆինանսական գործարքները,

31. Բանկի կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով,

32. Հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,

33.Հաստատված օրակարգի շրջանակում՝ օրենքով Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասություն համարվող այլ հարցեր:

Վերոնշյալ բոլոր կետերով նախատեսված բոլոր հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Բանկի կառավարման այլ մարմիններին: Ընդհանուր ժողովը չի կարող քննարկել և որոշում ընդունել իր իրավասությանը չվերաբերող հարցերի վերաբերյալ:

4.7.1.2. Բանկի խորհուրդ

Խորհուրդը Բանկի Խմբի նկատմամբ իրականացնում է իր վերահսկողական գործառույթները՝ օրենսդրությամբ սահմանված սահմաններում և միջազգային լավագույն փորձին համապատասխան՝ հաշվի առնելով Խմբի կառուցվածքը, գործունեության բնույթը և ռիսկերը:

Խորհուրդը պատասխանատու է Բանկի Խմբի կառավարման հստակ շրջանակի սահմանման համար, որը բաշխում է լիազորությունները և պատասխանատվությունները թե՛ մայր ընկերության, և թե՛ դուստր ընկերությունների մակարդակում՝ միաժամանակ

հարգելով դուստր ընկերությունների խորհուրդների իրավական և կառավարման ինքնուրույնությունը:

Խորհրդի իրավասություններն են՝

1. Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը,
2. Բանկի Խմբի ընկերությունների կողմից իրենց գործունեության շրջանակներից դուրս էական գործունեության ծավալումը կամ Բանկի Խմբի ընկերությունների բիզնեսի կամ գործունեության տեսակի փոփոխությունը, բացառությամբ Բանկի կողմից ցանկացած նոր գործունեության ծավալման, որը թույլատրելի է իր բանկային գործունեության լիցենզիայով և իր ֆինանսական կազմակերպություն հանդիսացող դուստր ընկերության կողմից այնպիսի նոր գործունեության ծավալման, որը թույլատրելի է իր վարկային կազմակերպության լիցենզիայով,
3. Ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը, այդ թվում՝ բաժնետերերին Ընդհանուր ժողովի գումարման ձևի (բաժնետերերի համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով քվեարկության միջոցով), անցկացման մասին ծանուցման կարգի, բաժնետերերին տրամադրվող նյութերի ցանկի, քվեաթերթիկի ձևի ու բովանդակության հաստատումը,
4. Բանկի վարձատրության քաղաքականության հաստատումը,
5. Բանկի Խմբի ընկերությունների գործադիր մարմնի (այդ թվում՝ Բանկի գործադիր մարմնի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձի), գործադիր մարմնի ղեկավարի տեղակալների, և Բանկի գործադիր մարմնի այլ անդամների նշանակումը, վարձատրության պայմանների հաստատումը (ներառյալ ցանկացած տեսակի բնեղենով օգուտների տրամադրումը, շահույթի բաշխման սխեմաները և ծախսերի փոխհատուցումները), սերնդափոխության (իրավահաջորդության) պլանավորման վերահսկումը, լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, պաշտոնավարման ժամկետի փոփոխությունները,
6. Բանկի Խմբի ընկերությունների այնպիսի աշխատակիցների կամ ղեկավարների՝ Բանկի գործադիր մարմնի կողմից աշխատանքի ընդունման, նրանց վարձատրության պայմանների սահմանման (ներառյալ ցանկացած տեսակի բնեղենով օգուտների տրամադրումը և շահույթի բաշխման սխեմաները), աշխատանքից ազատման և աշխատանքային պայմանագրերում փոփոխությունների հաստատման վերաբերյալ համաձայնության տրամադրումը, որոնց տարեկան ընդհանուր վարձատրության չափը (հաստատուն և փոփոխական) գերազանցում է 120,000,000 (հարյուր քսան միլիոն) ՀՀ դրամը,

7. Բանկի գործադիր մարմնի անդամների կողմից վճարովի այլ աշխատանք (բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքներից) կատարելու վերաբերյալ համաձայնության տրամադրումը,
8. Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը,
9. Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,
10. Բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով բաժնետիրական կապիտալի ավելացումը,
11. Բանկի Խմբի ընկերությունների կողմից ներդրումային ծառայություններ մատուցող ընկերության կամ տեղաբաշխողի ընտրության հետ կապված ցանկացած որոշման ընդունումը, ներառյալ ժամկետների և պայմանների սահմանումը,
12. Ֆինանսական միջնորդի կամ ներդրումային ծառայություններ մատուցող ընկերության նշանակման վերաբերյալ ցանկացած որոշման ընդունումը՝ կապված 5 տոկոսից ավելի բաժնեմասնակցություն ունեցող բաժնետիրոջ կողմից դուրս գալու հետ,
13. Բանկի շահութաբաժնային քաղաքականության ցանկացած փոփոխության հաստատումը,
14. Տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի վերաբերյալ Ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն Բանկի այն մասնակիցները, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի տարեկան Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ,
15. Բանկի կողմից ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը,
16. Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ընդհանուր ժողովին ներկայացումը,
17. Բանկի Խորհրդին վերապահված ներքին իրավական ակտերի, Բանկի տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բաշխումը,
18. Ընդհանուր ժողովի հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը,
19. Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը,
20. Ցանկացած ժամանակ Բանկի արտաքին աուդիտի հրավիրումը,
21. Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում անհրաժեշտության դեպքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը,

22. Դուստր և կախյալ ընկերությունների ստեղծումը, այդ ընկերություններին մասնակցությունը, մասնակցության չափի փոփոխությունները և դադարեցումները,
23. Այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունը խոշոր գործարք չէ,
24. Առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը և/կամ մասնակցությունը,
25. Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը, այլ առանձնացված ստորաբաժանումների հիմնադրման մասին որոշումների ընդունումը,
26. Բանկի Խմբի ընկերությունների կողմից ցանկացած տեսակի ընկերակցության կամ համատեղ գործունեության մասին որոշման ընդունման (այդ թվում՝ համատեղ գործունեության մասին պայմանագիր կնքելու կամ նոր իրավաբանական անձ հիմնադրելու եղանակով) կամ նույն բիզնես ոլորտի ընկերությունների հետ շահույթի բաշխման վերաբերյալ հարաբերությունների (բացառությամբ ֆինանսական ծառայություններին կամ պրոդուկտներին առնչվող) հաստատման և դրանց փոփոխությունների վերաբերյալ որոշումների ընդունումը,
27. Բանկի Խմբի ընկերությունների պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը, որոնք հասանելիություն են տրամադրում բաժնետիրական կապիտալին կամ ձայնի իրավունքների, այդ թվում՝ օպցիոններ, օպցիոնների նման այլ ֆինանսական գործիքներ, ինչպես նաև աշխատակիցների և ավագ ղեկավարների համար շահույթի բաշխման ցանկացած պլանի մասին որոշումների ընդունումը,
28. Բանկի պահուստային և այլ հիմնադրամների ստեղծումը, համալրումներն ու օգտագործումը,
29. Բանկի Խմբի ընկերությունների հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, մեթոդների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը, և ցանկացած փոփոխության հաստատումը.
30. Բանկի Գույքի շուկայական արժեքի սահմանման որոշման ընդունումը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, երբ շուկայական արժեքը որոշվում է դատարանի, այլ մարմնի կամ անձի կողմից, ինչպես նաև Բանկի Գույքի շուկայական արժեքի որոշման համար օրենքով սահմանված կարգով անկախ գնահատողի ծառայություններից օգտվելու մասին որոշումը.
31. Բանկի տեղաբաշխված պարտատոմսերի և այլ արժեթղթերի (բացառությամբ բաժնետոմսերի) ձեռքբերումը.
32. Բանկի Խմբի ընկերությունների կողմից մեկ տարվա ընթացքում մեկ ընկերության կամ ընկերությունների խմբի հետ նշանակալի ակտիվների օտարման կամ գնման

ցանկացած գործարքի հաստատումը, որը կազմում է Բանկի ընդհանուր կապիտալի 10-ից 20 տոկոսը,

33. Խոշոր գործարք կնքելու մասին որոշումը, որի առարկա է հանդիսանում գույքը, և որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից 50 տոկոսը,

34. Բանկի Խմբի ընկերությունների կողմից ցանկացած այնպիսի պայմանագրի կնքման կամ դրանում փոփոխությունների վերաբերյալ որոշման ընդունումը, որն իր բնույթով բիզնեսի բնականոն շրջանակներից դուրս է կամ չի համապատասխանում շուկայական պայմաններին,

35. Բանկի Խմբի ընկերությունների կողմից ցանկացած այնպիսի արտաքին ծառայություններ մատուցողի ներգրավման, փոխհատուցման, ծառայությունների դադարեցման և պայմանների փոփոխության վերաբերյալ որոշումների ընդունումը, որի համախառն տարեկան փոխհատուցման չափը (հաստատուն և, ըստ կիրառելիության՝ փոփոխական) գերազանցում է 300,000,000 (երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամը,

36. Բանկի կողմից փոխարկելի ստորադաս փոխառությունների ներգրավման վերաբերյալ որոշումների ընդունումը, որքանով որ փոխարկումն անհրաժեշտ է ՀՀ Կենտրոնական բանկի տնտեսական նորմատիվներով վարկը Բանկի կապիտալի հաշվարկներում ներառելու համար,

37. Բանկի կողմից այնպիսի գործարքների կնքումը, որտեղ օրենսդրության համաձայն առկա է շահագրգռվածություն,

38. Բանկի կողմից «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն Բանկի հետ կապված անձ համարվող անձանց հետ գործարքների և դրանց փոփոխությունների կամ այդպիսի գործարքների պայմանները սահմանող ներքին իրավական ակտի հաստատումը,

39. Բանկի Խմբի ընկերությունների կողմից օրենսդրության համաձայն՝ նշանակալի բաժնետիրոջ, խորհրդի անդամի, գլխավոր գործադիր տնօրենի, գլխավոր գործադիր տնօրենի տեղակալի, ներքին աուդիտի ղեկավարի, գործադիր ղեկավարի, կառավարման մարմի այլ անդամի կամ նշված ցանկի անձանց ընտանիքի անդամների հետ գործարքների և դրանց փոփոխությունների, կամ այդպիսի գործարքների պայմանները սահմանող ներքին իրավական ակտի հաստատումը,

40. Մեկ տարվա ընթացքում Բանկի ընդհանուր կապիտալի 10-ից 20 տոկոսը կազմող ակտիվների նկատմամբ (ներառյալ ցանկացած բաժնետոմս կամ այլ գույքային իրավունք) ապահովված իրավունքի, երաշխավորության կամ գրավի իրավունքի տրամադրման հաստատումը,

41. Խորհրդի և գործադիր մարմնի անդամների և մասնակիցների շահերի հնարավոր բախումների, ներառյալ՝ Բանկի ակտիվների ոչ իրավաչափ օգտագործման և

շահագրգռվածության առկայությամբ գործարքների վերահսկումն ու կառավարումը.

42. Օրենքով նախատեսված դեպքերում Խորհրդի անդամության թեկնածուների վերաբերյալ առաջարկների քննարկումը և տարեկան ժողովում կամ թեկնածուների ցանկում ընդգրկելու կամ ընդգրկելը մերժելու մասին որոշման ընդունումը,

43. Բանկի գլխավոր հաշվապահի նշանակումը,

44. Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի կանոնակարգի կամ կանոնադրության հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,

45. Բանկի հսկողական գործառույթների իրականացման համար պատասխանատու անձանց (այդ թվում՝ ռիսկերի կառավարման, համապատասխանության ապահովման)՝ լիազորությունների ու պարտականությունների սահմանումը, Բանկի գործադիր մարմնի կողմից նշանակման, լիազորությունների դադարեցման, գործունեության պարբերական գնահատման, վարձատրության պայմանների հաստատման, խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման համար համաձայնության տրամադրումը,

46. Յուրաքանչյուր հսկողական գործառույթի համար շահերի բախման հնարավոր դեպքերի կարգավորման վերաբերյալ քննարկումը ու լուծումը, եթե այն չի կարող կարգավորվել Բանկի գործադիր մարմնի կողմից,

47. Ներքին հսկողության համակարգի ձևավորումը և վերջինիս կենսագործունեության և արդյունավետության ապահովումը,

48. Բանկի ռիսկերի կառավարման ռազմավարության, ռիսկի ընդունելի սահմանաչափի, ռիսկի ախորժակի, ինչպես նաև առանձին ռիսկերի կառավարման քաղաքականությունների հաստատումը,

49. Ռիսկերի կառավարման համակարգում յուրաքանչյուր գործառնության հաստատումը, որը կարող է հանգեցնել ռիսկերի կառավարման ռազմավարությունից, ռիսկի ախորժակից և (կամ) ռիսկի սահմանաչափերից չթույլատրված շեղմանը,

50. Բանկի Գործադիր մարմնի, Գլխավոր հաշվապահի, ներքին աուդիտի, հսկողական գործառույթի համար պատասխանատու անձանց կողմից, ինչպես նաև ներքին իրավական ակտերով սահմանված Խորհրդին ներկայացվող հաշվետվությունների ձևի, կարգի, բովանդակության հաստատումը և ներկայացված հաշվետվությունների քննարկումը, ինչպես նաև պարբերականության սահմանումը, եթե ՀՀ օրենսդրությամբ պարբերականություն սահմանված չէ,

51. Բանկի վերականգնման ծրագրի հաստատումը,

52. Բանկի բաժնետոմսերի թողարկման ազդագրի հաստատումը՝ բաց բաժանորդագրության ձևով բաժնետոմսերի տեղաբաշխման դեպքում,

53. Բանկի գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկությունների ցանկի սահմանումը,

54. Բանկի կորպորատիվ արժեքների սահմանումը,

55. Կորպորատիվ ռազմավարության, հիմնական գործողությունների պլանների, տարեկան բյուջեների և գործարար ծրագրերի դիտարկումն ու ուղղորդումը, կատարողականի թիրախային ցուցանիշների սահմանումը, կորպորատիվ ծրագրերի իրագործման և գործունեության, կապիտալ ծախսերի, ձեռքբերումների և վաճառքների վերահսկումը,

56. Կառավարման արդյունավետության մշտադիտարկումը և, ըստ անհրաժեշտության, փոփոխությունների իրականացումը,

57. ՀՀ Կորպորատիվ կառավարման կանոնագրքի պահանջների համապատասխանության ապահովումը,

58. Օրենքներով և իրավական ակտերով նախատեսված այլ իրավասություններ:

Նշված որոշումները Խորհրդի կողմից ընդունվում են հետևյալ կարգով.

1) իրավասությունների 2, 5, 6, 11, 12, 13, 26, 27, 29, 32, 34, 35, 36, 37, 38, 39, 40 ենթակետերում նշված որոշումներն ընդունվում են ձայների որակյալ մեծամասնությամբ՝ Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների 3/4-ով: Նշված որոշումները համարվում են ընդունված՝ քվեարկելիս «ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՓԲԸ կողմից չնշանակված կամ վերջինիս կողմից չառաջադրված առնվազն երկու խորհրդի անդամների համաձայնության առկայության պարագայում: Ընդ որում, 13-րդ ենթակետում նշված որոշումը համարվում է ընդունված՝ քվեարկելիս Խորհրդի կազմում Պրոպարկո ընկերության (Տնտեսական համագործակցության խթանման և մասնակցության ընկերություն) ներկայացուցչի համաձայնության առկայության պարագայում, 33 ենթակետում նշված հարցերով որոշումներն ընդունվում են Խորհրդի կողմից միաձայն:

2) մնացած ենթակետերում նշված որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

Բանկի խորհուրդը կազմված է 9 անդամից, որոնք ընտրվում են Ընդհանուր ժողովի կողմից սահմանված ժամկետով:

Բանկի խորհրդի նախագահին ընտրվում է Խորհրդի կողմից Խորհրդի անդամների կազմից:

Խորհուրդն արդյունավետ ղեկավարելու համար Խորհրդի նախագահը պետք է տիրապետի առաջնորդության, հաղորդակցման և կառավարման անհրաժեշտ հմտություններին:

Խորհրդի նախագահը՝

- կազմակերպում և համակարգում է Խորհրդի և Խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքը.
- սահմանում և հաստատում է Խորհրդի նիստերի օրակարգը,
- հրավիրում և նախագահում է Խորհրդի նիստերը,
- ապահովում է նիստերի արձանագրությունների վարումը, դրանց ճշգրտությունը և պահպանումը,
- Խորհրդում խթանում է բազմազանության, ներառականության և կառուցողական բանավեճի մշակույթը,
- խրախուսում է Խորհրդի բոլոր անդամների ակտիվ ներգրավվածությունը՝ հիմնվելով նրանց անհատական հմտությունների վրա,
- կազմակերպում է Խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքը,
- հանդիսանում է կապող օղակ գործադիր մարմնի համար,
- արդյունավետ աշխատանքային հարաբերություններ է պահպանում գլխավոր գործադիր տնօրենի հետ, հարգելով վերջինիս պատասխանատվության շրջանակը՝ տրամադրում է խորհրդատվական աջակցություն,
- ապահովում է, որ անհրաժեշտության դեպքում վերահսկողական գործառույթներ իրականացնող անձինք ուղղակի հաղորդակցության հնարավորություն ունենան Խորհրդի նախագահի հետ՝ առանց գլխավոր գործադիր տնօրենի ներկայության,
- ղեկավարում է կորպորատիվ կառավարման զարգացումը,
- վերահսկում է Բանկի կորպորատիվ կառավարման շրջանակի իրագործումը, մոնիթորինգը և շարունակական կատարելագործումը,
- ապահովում է, որ կառավարման համակարգը մշտապես համապատասխանի միջազգային լավագույն փորձին և ժամանակին արձագանքի կանոնակարգային զարգացումներին, շահակիցների ակնկալիքներին և Բանկի ռազմավարական առաջնահերթություններին,
- առաջնորդում է կառավարման հետ կապված վերափոխումները, այդ թվում՝ Խորհրդի կառուցվածքի, գնահատման և հաշվետվողականության ոլորտներում:

<u>Արտաքին ներկայացուցչություն և այլ պարտականություններ.</u>

- Խորհրդի անունից կնքում է արտաքին աուդիտն իրականացնող անձի հետ պայմանագիրը,
- Խորհրդի անունից կնքում է գլխավոր գործադիր տնօրենի աշխատանքային կամ ծառայությունների մատուցման պայմանագիրը՝ Խորհրդի որոշմամբ սահմանված կարգով,
- նախագահում է Ընդհանուր ժողովում,
- իրականացնում է Կանոնակարգով, Բանկի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառույթներ:

4.7.1.3. Բանկի գլխավոր գործադիր տնօրենը

Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Գլխավոր գործադիր տնօրենը: Գլխավոր գործադիր տնօրենը կարող է ունենալ տեղակալներ:
Գլխավոր գործադիր տնօրենը նշանակվում է Խորհրդի կողմից, Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալները՝ Խորհրդի կողմից՝ Գլխավոր գործադիր տնօրենի ներկայացմամբ:
Գլխավոր գործադիր տնօրենը, որպես իր բացառիկ իրավասություն, ներկայացնում է Բանկը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, Բանկի անունից կնքում է գործարքներ, գործում է Բանկի անունից առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր:
Գլխավոր գործադիր տնօրենը՝

1. Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Խորհրդի կողմից հաստատվող ներքին իրավական ակտերը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը,
2. ապահովում է Ընդհանուր ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը,
3. ներկայացնում է արտահերթ ժողով գումարելու պահանջ,
4. Բանկի անունից կնքում է այնպիսի գործարքներ, որոնք օրենքով և Բանկի կանոնադրությամբ վերապահված չեն Խորհրդի և Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը,
5. տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
6. հաստատում է աշխատատեղերը, աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Բանկի աշխատակիցներին,
7. Բանկի աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
8. կատարում է Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալների միջև պարտականությունների բաշխումը, եթե տեղակալները չեն հանդիսանում Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ,
9. Խորհրդի սահմանած կարգով իր գործունեության վերաբերյալ Խորհրդին պարբերական, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ ներկայացնում է հաշվետվություններ,
10. բացում է Բանկի հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,
11. Խորհրդի որոշմամբ և օրենքով նախատեսված դեպքերում՝ գործարկում է վերականգնման ծրագիրը.
12. Խորհրդի համաձայնությամբ՝ նշանակում է հսկողական գործառույթների իրականացման համար պատասխանատու անձանց, վաղաժամկետ դադարեցնում է նրանց լիազորությունները, հաստատում է վարձատրության պայմանները, պարբերաբար գնահատում է գործունեությունը, կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

13. ապահովում է ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետ կիրառումը, ինչպես նաև Խորհրդի կողմից հաստատված ընթացակարգերի և այլ ներքին իրավական ակտերի՝ ամբողջ Բանկում արդյունավետ շրջանառությունը,
14. ապահովում է կապիտալի համարժեքության գնահատման ներքին գործընթացների մշակումը, սահմանում է Բանկի ռիսկայնության նկարագրին և ռիսկերի կառավարման միջավայրին համարժեք կապիտալի նպատակային մակարդակը, ինչպես նաև ներդնում է կապիտալի մակարդակը ստանձնած ռիսկերին համապատասխանեցնելու համակարգը,
15. ապահովում և կազմակերպում է սթրես-թեստերի հետևողական իրականացումը,
16. հաշվետու ժամանակահատվածում ներկայացնում է Բանկի կատարողականի զեկույցը, ներառյալ՝ հիմնական ռիսկերի (այդ թվում՝ սոցիալական, բնապահպանական) վերլուծության, գործունեության կանխատեսումների և հնարավոր ռիսկերի, դրանք կառավարելու եղանակների վերաբերյալ, որը ներառվում է Բանկի տարեկան հաշվետվությունում,
17. իրականացնում է Բանկի կանոնադրությամբ, ինչպես նաև Խորհրդի կողմից սահմանված իրավական ակտերի շրջանակներում նախատեսված՝ Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ:

Գլխավոր գործադիր տնօրենի որոշումները, որպես կանոն, իրագործվում են նրա հրամանների և կարգադրությունների հիման վրա:
Գլխավոր գործադիր տնօրենը Խորհրդին, պարբերաբար, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ, ներկայացնում է իր գործունեության վերաբերյալ հաշվետվություններ՝ Խորհրդի սահմանած կարգով:

4.7.1.4. Բանկի գլխավոր հաշվապահը

1. Բանկի գլխավոր հաշվապահն իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:
2. Բանկի գլխավոր հաշվապահը նշանակվում է Խորհրդի կողմից՝ Գլխավոր գործադիր տնօրենի ներկայացմամբ:
3. Բանկի գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել Ընդհանուր ժողովին, Խորհրդին, գործադիր մարմնի անդամներին, ներքին աուդիտի ստորաբաժանմանը կամ այլ անձի:
4. Բանկի գլխավոր հաշվապահն առնվազն եռամսյակը մեկ անգամ Խորհրդին և Գլխավոր գործադիր տնօրենին է ներկայացնում ֆինանսական հաշվետվություն՝ Խորհրդի հաստատած ձևով և բովանդակությամբ:

Բանկի գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Բանկի հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին

ներկայացնելու, ինչպես նաև Բանկի մասնակիցներին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Բանկի մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան:

4.7.1.5. Ներքին աուդիտի ստորաբաժանումը

1. Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և անդամները նշանակվում են Խորհրդի կողմից: Ներքին աուդիտի անդամ չեն կարող լինել Բանկի կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներ ու աշխատակիցներ, ինչպես նաև գործադիր մարմնի անդամների հետ փոխկապակցված անձինք:
Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները պարտավոր են պահպանել Բանկի աշխատակիցների համար սահմանված աշխատանքային կարգապահությունը:

2. Բանկի ներքին աուդիտը Բանկի Խորհրդի հաստատած կանոնակարգի համաձայն՝
2.1. անկախ գնահատական է տալիս Բանկի ներքին հսկողության, այդ թվում՝ ռիսկերի կառավարման համակարգերի, Բանկի կառավարման համակարգի և գործընթացների որակի, համարժեքության և արդյունավետության վերաբերյալ,
2.2. եզրակացություններ և առաջարկություններ է տալիս բանկի Խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ:
Ներքին աուդիտի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել Բանկի կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:

3. Ներքին աուդիտի ղեկավարը Խորհրդին և Գլխավոր գործադիր տնօրենին է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները՝
3.1. հերթական՝ տարեկան ծրագրով սահմանված ստուգումների արդյունքների մասին,
3.2. արտահերթ, եթե բացահայտվել են ներքին աուդիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ, ընդ որում, եթե խախտումները հետևանք են Գլխավոր գործադիր տնօրենի կամ Խորհրդի գործողությունների կամ անգործության, ապա հաշվետվությունը ներկայացվում է անմիջապես Խորհրդի նախագահին:
Սույն մասով նախատեսված դեպքերում հաշվետվությունները ներկայացվում են խախտումը հայտնաբերելուց առավելագույնը երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Ներքին աուդիտն օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում պարտավոր է դրանք գրավոր ներկայացնել Խորհրդին՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ:

4.7.1.6. Ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը

1. Խմբի ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը՝

1.1. բացահայտում, գնահատում է Խմբի գործունեությանը բնորոշ ռիսկերը, տալիս է բանկի ռիսկի ընդհանուր նկարագիրը.

1.2. հսկողություն և մոնիտորինգ է իրականացնում բացահայտված ռիսկերի նկատմամբ, ապահովում է դրանց արդյունավետ կառավարումը.

1.3. խորհրդի հաստատմանն է ներկայացնում Խմբի ռիսկերի կառավարման համակարգը, Ռիսկի ախորժակի համակարգը և Ռիսկի ախորժակի հայտարարությունը, ինչպես նաև առանձին ռիսկերի կառավարման քաղաքականությունները, խորհրդի սահմանած պարբերականությամբ խորհուրդ և գործադիր մարմին հաշվետվություն է ներկայացնում **Խմբի** ռիսկերի նկարագրի և ռիսկերի կառավարման գործընթացների վերաբերյալ.

1.4. իրականացնում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ռիսկերի կառավարմանն առնչվող այլ գործառույթներ:

2. Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կարող են սահմանվել Խմբի ռիսկերի կառավարման գործառույթի արդյունավետ իրականացման նվազագույն պահանջներ:

4.7.1.7. Համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը

1. Բանկի համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու(ներ)ն. ՝

1.1. Մշակում են Խմբի համապատասխանության համակարգը՝ միջազգային լավագույն փորձին և կարգավորողի պահանջներին համապատասխան:

1.2. Մշակում են համապատասխանության հետ կապված ներքին իրավական ակտեր իրենց լիազորության շրջանակներում և դրանք ներկայացնում են Խորհրդի կամ Խորհրդին կից հանձնաժողովների կամ Գործադիր մարմնի հաստատմանը կամ հաստատում են ինքնուրույն:

1.3. Պարբերաբար գնահատում են համապատասխանության ռիսկի կառավարման արդյունավետությունը իրենց տիրույթում և նախաձեռնում են բարելավումներ:

1.4. Սահմանում են համապատասխանության ռիսկի ախորժակը և այն ինտեգրում Խմբի Ռիսկի ախորժակի համակարգում:

1.5. Խմբում խթանում են բարեվարքությունը և էթիկական չափանիշները:

1.6. Համապատասխանության հարցերի վերաբերյալ ինքնուրույն և անմիջականորեն զեկուցում են Խորհրդին, Խորհրդին կից հանձնաժողով(ներ)ի ն և Գործադիր մարմնին:

1.7. Ունեն համապատասխանության խախտումները կամ ռիսկերը անմիջապես Խորհրդին, Խորհրդին կից հանձնաժողովին և Գործադիր մարմնին փոխանցելու իրավասություն:

4.7.1.8 Կորպորատիվ քարտուղարը

Բանկն ունի Կորպորատիվ քարտուղար, որն աջակցում է Խորհրդի աշխատանքներին: Խորհուրդը, հիմք ընդունելով Խորհրդին կից համապատասխան հանձնաժողովի առաջարկությունը, նշանակում է Կորպորատիվ քարտուղար:

1. Բանկի Կորպորատիվ քարտուղարը՝
   - **1.1.** Կորպորատիվ քարտուղարը, ի թիվս այլնի, աջակցում է Խորհրդին և կից հանձնաժողովներին իրենց իրավասությունների արդյունավետ իրականացման շրջանակներում՝ իրականացնելով հետևյալ պարտականությունները՝
   - **1.2.** աջակցում է Խորհրդի և կից հանձնաժողովների նիստերի նախապատրաստմանը, ժամանակացույցի կազմմանը և կազմակերպմանը,
   - **1.3.** ժամանակին պատրաստում և տարածում է Խորհրդի և կից հանձնաժողովների նիստերի օրակարգերը և կից փաստաթղթերը,
   - **1.4.** ապահովում է Խորհրդի և կից հանձնաժողովների նիստերի ճշգրիտ փաստաթղթավորումը, ներառյալ արձանագրությունների պատրաստումը և տարածումը,
   - **1.5.** պահպանում է Խորհրդի որոշումների և քաղաքականությունների մշտապես թարմացված ռեեստր,
   - **1.6.** աջակցում է Խորհրդի նոր անդամների ներգրավմանը, ինչպես նաև Խորհրդի անդամների շարունակական վերապատրաստումների կազմակերպմանը,
   - **1.7.** ապահովում է Խորհրդի գործընթացներին վերաբերող օրենսդրական և ներքին կանոններին համապատասխանություն, այդ թվում՝ շահերի բախման իրավիճակների արձանագրումը և կապված անձանց հետ կնքված գործարքների բացահայտումը,
   - **1.8.** աջակցում է Խորհրդի և գործադիր մարմնի, անհրաժեշտության դեպքում նաև Խորհրդի անդամների միջև արդյունավետ հաղորդակցությանը,
   - **1.9.** համագործակցելով Խորհրդին կից համապատասխան հանձնաժողովի հետ՝ համակարգում է Խորհրդի գործունեության գնահատման գործընթացը,
   - **1.10.** աջակցում է բաժնետերերի հետ հաղորդակցությանը և կորպորատիվ կառավարման վերաբերյալ տեղեկատվության հրապարակման նախապատրաստմանը,
   - **1.11.** պահպանում է Խորհրդի անդամների որակավորումների ռեեստր և հետևում է կանոնակարգային և կառավարման պահանջներին Խորհրդի կազմի համապատասխանությանը,
   - **1.12.** հետևում է կորպորատիվ կառավարմանը վերաբերող կանոնակարգերի և լավագույն փորձի զարգացումներին և Խորհրդին տրամադրում է համապատասխան խորհրդատվություն,

1.13. Խորհրդի Կանոնակարգով կամ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում իրականացնում է այլ գործառույթներ:

4.7.1.9. Խորհրդին կից հանձնաժողովները

1. Բանկի խորհրդի 02.11.2022թ.-ի որոշմամբ Բանկի խորհրդին կից ստեղծվեցին հետևյալ 3 հանձնաժողովները.
   - Աուդիտի հանձնաժողով,
   - Ռիսկերի կառավարման հանձնաժողով,
   - Կառավարման, նշանակումների և վարձատրությունների հանձնաժողով:

2. Բանկի Խորհրդի 17.10.2024թ. որոշմամբ ստեղծվեց Խորհրդին կից Ռազմավարության հանձնաժողովը:
3. Խորհրդին կից հանձնաժողովների նախագահներ են նշանակված խորհրդի անկախ անդամները:

4.7.1.9.1 Աուդիտի հանձնաժողովը վերահսկում և վերանայում է.

- ֆինանսական հաշվետվությունների, ֆինանսական արդյունքների վերաբերյալ պաշտոնական հայտարարությունների և բացահայտումների ամբողջականությունը,
- ներքին աուդիտի գործառույթի և արտաքին աուդիտն իրականացնող անձի արդյունավետությունը,
- ֆինանսական հաշվետվողականության նկատմամբ ներքին հսկողության համակարգերի արդյունավետությունը,
- այլ հարցեր, որոնք կարող են ներկայացվել Հանձնաժողովին Խորհրդի կողմից:

Աուդիտի հանձնաժողովը բաղկացած է 3 անդամներից:

4.7.1.9.2. Ռիսկերի կառավարման հանձնաժողովն իրականացնում է.

- ռիսկերի հետ կապված հարցերի, ինչպես նաև Բանկի և իր դուստր ու ասոցիացված ընկերությունների (այսուհետ միասին՝ Խումբ) վրա ազդող ռիսկերի, ռիսկերի կառավարման և ներքին հսկողության համակարգերի (բացառությամբ՝ ներքին ֆինանսական հսկողության համակարգերի) նկատմամբ հսկողություն իրականացնելու գործառույթ:

Ռիսկերի կառավարման հանձնաժողովը բաղկացած է 3 անդամներից:

4.7.1.9.3. Կառավարման, նշանակումների և վարձատրությունների հանձնաժողովը պատասխանատու է.

- Բանկի կորպորատիվ կառավարման շրջանակը վերահսկելու և մշտադիտարկելու համար, ինչպես նաև Խորհրդին առաջարկություններ ներկայացնելու համար, որի

նպատակն է ապահովել, որ այդ շրջանակը համապատասխանի կորպորատիվ կառավարման ստանդարտներին և լավագույն փորձին,

- Խորհրդի և կից հանձնաժողովների կազմը դիտարկման ներքո պահելու և Խորհրդում ու կից հանձնաժողովներում նշանակումների գործընթացը ղեկավարելու հարցերում Խորհրդին աջակցելու համար,
- թեկնածուների պլանավորման և գնահատման շարունակական և պրոակտիվ գործընթացը վերահսկելու համար, որի նպատակն է ապահովել, որ Բանկում առկա լինի Խորհրդի անդամների, Խմբի գործադիր ղեկավարների և այլ ավագ ղեկավարների կանոնավոր իրավահաջորդություն,
- բավարարված լինելու համար, որ Բանկի աշխատուժի համար առկա են լավ վարձատրության շրջանակներ և պրակտիկաներ:

Կառավարման, նշանակումների և վարձատրությունների հանձնաժողովը բաղկացած է 4 անդամներից:

4.7.1.9.4. Ռազմավարության հանձնաժողովը պատասխանատու է.

- Բանկի ընդհանուր կորպորատիվ նպատակը և առանցքային բիզնես առաջնահերթությունները հստակեցնելու համար,
- Ֆինանսական պլանավորման և կատարողականի նկատմամբ մշտադիտարկում իրականացնելու համար,
- Կապիտալի, առանցքային գործընկերների, ինչպես նաև միացումների ու ձեռքբերումների (M&A) հետ կապված հարցերում առաջնորդելու համար,
- Տեխնոլոգիաների և կիբերանվտանգության ոլորտում ընդհանուր վերահսկողության համար,
- Բնապահպանական, սոցիալական և կառավարչական (ԲՍԿ/ESG) սկզբունքների ինտեգրման և մշտադիտարկման համար:

Ռազմավարության հանձնաժողովը բաղկացած է 6 անդամներից:

4.7.3. Թողարկողի կառավարման մարմինների անդամները

4.7.3.1. Բանկի խորհրդի անդամները

Սույն ազդագրի լրացումը կազմելու պահին Բանկի խորհուրդն ուներ 9 (ինը) անդամներ, ներառյալ Խորհրդի նախագահը: Խորհրդի անդամներից 3-ը համարվում են անկախ անդամներ: Ստորև ներկայացվում է տեղեկատվություն ըստ յուրաքանչյուր կառավարման մարմնի անդամի՝

1. Բանկի խորհրդի նախագահ՝ Սոնա Իշխանյան

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան
Փորձառությունը	Խորհրդի կազմում 1-ին անգամ նշանակվել է 2025 թվականի մայիսին: Մինչ այդ, Սոնա Իշխանյանը ավելի քան 24 տարվա մասնագիտական փորձ ունի ներքին աուդիտի, ձեռնարկությունների ռիսկերի կառավարման և ֆինանսական ծառայությունների ոլորտներում: Նա ավելի

	քան 13 տարի աշխատել է որպես աուդիտի հանձնաժողովների նախագահ և անդամ ՝ Ուկրաինայի, Վրաստանի, Հայաստանի և Մոլդովայի ՊՐՈԿՐԵԴԻՏ Բանկերում: Նրա մասնագիտական գործունեությունը ներառում է 18 տարի ներքին աուդիտի և ռիսկերի կառավարման մասնագիտացում, ինչպես նաև 4 տարվա փորձ Deloitte & Touché LLP (Սան Ֆրանցիսկո, ԱՄՆ) ընկերությունում:
Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեություն	Ներկայում հանդիսանում է Պրո-Կրեդիտ Հոլդինգի (Ֆրանկֆուրտ, Գերմանիա) խմբային աուդիտի տարածքային կոորդինատոր: Հանդիսանում է ՆԱԻ (IIA – Institute of Internal Auditors) անդամ և ունի CIA որակավորում (Certified Internal Auditor):
Մասնակցությունը Խորհրդին կից հանձնաժողովներին	Հանդիսանում է Աուդիտի հանձնաժողովի անդամ, Կառավարման, նշանակումների և վարձատրությունների հանձնաժողովի անդամ, Ռազմավարության հանձնաժողովի անդամ, Ռիսկերի կառավարման հանձնաժողովի անդամ:

2. Բանկի խորհրդի անդամ՝ Բրունո Շարիե

Բնակության վայրը	Ֆրանսիա, ք. Ժընե
Փորձառությունը	Խորհրդի կազմում 1-ին անգամ նշանակվել է 2019 թվականի հունիսին: Մինչ այդ, 1974 թվականից մինչև 2016 թվականն աշխատել է հեղինակավոր ֆրանսիական «Կրեդիտ Ագրիկոլ» բանկային խմբի տարբեր ընկերություններում: 2013-2016 թվականներին՝ Կրեդիտ Ագրիկոլ Սերբիայի Գործադիր խորհրդի նախագահի և Կրեդիտ Ագրիկոլ Լիզինգ Սերբիայի Գործադիր խորհրդի նախագահի պաշտոնները: Ավելի վաղ հանդիսացել է Հունաստանում Էմպորիկի բանկի գործադիր տնօրենի տեղակալը:
Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեություն	Անցել է թոշակի
Մասնակցությունը Խորհրդին կից հանձնաժողովներին	Հանդիսանում է Կառավարման, նշանակումների և վարձատրությունների հանձնաժողովի նախագահը, ինչպես նաև Ռիսկերի կառավարման և Ռազմավարության հանձնաժողովների անդամ:

3. Բանկի խորհրդի անկախ անդամ՝ Աշոտ Կարապետյան

Բնակության վայրը	Կանադա, ք. Տորոնտո
Փորձառությունը	Խորհրդի կազմում 1-ին անգամ նշանակվել է 2022 թվականի ապրիլին: Մինչ այդ, 1995-2002 և 2004-2007 թվականներին աշխատել է ՀՀ կենտրոնական բանկում՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ: 2007 թվականից բնակություն է հաստատել Կանադայում և աշխատանքի անցել Կանադայի

	հիփոթեքային և բնակարանային կորպորացիայում՝ զբաղեցնելով Շուկայի վերլուծաբան/տնտեսագետի, Կապիտալի շուկաների վարչության Արժեթղթավորման քաղաքականության ավագ վերլուծաբանի և Արժեթղթավորման ռիսկերի կառավարման, ռազմավարության և պրոդուկտների ավագ մասնագետի պաշտոնները
Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեություն	Կանադայի հիփոթեքային և բնակարանային կորպորացիայի Արժեթղթավորման ռիսկերի կառավարման, ռազմավարության և պրոդուկտների ավագ մասնագետ
Մասնակցությունը Խորհրդին կից հանձնաժողովներին	Հանդիսանում է Ռիսկերի կառավարման և Աուդիտի հանձնաժողովների նախագահը, ինչպես նաև Ռազմավարության հանձնաժողովի անդամ:

4. Բանկի խորհրդի անկախ անդամ՝ Բերնարդ դը Վիտ

Բնակության վայրը	Ֆրանսիա, ք. Ռամբյուրե
Փորձառությունը	Խորհրդի կազմում 1-ին անգամ նշանակվել է 2024 թվականի մայիսին: Մինչ այդ՝ 1983-1989թթ. աշխատել է ֆրանսիական Générale de Banque բանկային խմբում (ներկայիս՝ BNP Paribas խումբ)՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ մանրածախ ցանցի կառավարման և միջազգային առևտրի ֆինանսավորման ուղղություններում: 1989-1992թթ. աշխատել է ֆրանսիական Crédit Agricole-ի Caisse Régionale du Loiret տարածաշրջանային բանկում (Crédit Agricole խմբի մաս)՝ զբաղեցնելով կառավարման վերահսկողության ղեկավարի, ապա՝ Գլխավոր ֆինանսական տնօրենի և գործադիր խորհրդի անդամի պաշտոնները: 1992-2000թթ. աշխատել է ֆրանսիական K.P.M.G. Peat Marwick-ում՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ, ներառյալ ավագ կառավարիչ, այնուհետև՝ Բանկային և Ֆինանսական ծառայությունների վարչության գործընկեր, Եվրոպայի Ֆինանսական ռիսկերի կառավարման ծառայության (սկսած 1997թ.) ղեկավար, բանկերի, ապահովագրական ընկերությունների և ներդրումային ընկերությունների համար տրված բազմաթիվ առաջադրանքների ստորագրող գործընկեր: 2000-2009թթ. պարոն դը Վիտը աշխատել է ֆրանսիական Crédit Agricole խմբում՝ հանդիսանալով միջազգային մասնաճյուղերի դեպարտամենտի ղեկավարի տեղակալ՝ պատասխանատու լինելով փոքր բաժնեմասնակցությունների և Լատինական Ամերիկայի ցանցի համար (2001 – 2005թթ.), այնուհետև՝ միջազգային մանրածախ բանկային բիզնեսի ղեկավարի տեղակալ, միջազգային մանրածախ բանկային գործունեության գլխավոր ֆինանսական տնօրեն (2005 – 2009թթ.):

	2010 թվականի դեկտեմբերից մինչ օրս Բերնարդ դը Վիտը աշխատում է հեղինակավոր Ամունդի խմբում՝ զբաղեցնելով տարբեր առանցքային պաշտոններ, մասնավորապես. 2009-2010թթ. հանդիսացել է Գործադիր տնօրենի խորհրդականը Crédit Agricoleի և Société Générale-ի միաձուլման շրջանակներում, 2010-2013թթ. հանդիսացել է Ռիսկերի գլխավոր տնօրենը, 2013-2017թթ. եղել է Աջակցության և զարգացման գծով Գործադիր տնօրենի տեղակալը, 2017-2023թթ. զբաղեցրել է բիզնեսի աջակցության և վերահսկողության գծով Գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնը:
Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեություն	Ամունդի խմբի Գործադիր տնօրենի խորհրդական (կես դրույքով, նախնական կենսաթոշակային աշխատանքային պայմանագրի հիման վրա)
Մասնակցությունը Խորհրդին կից հանձնաժողովներին	Հանդիսանում է Ռազմավարության հանձնաժողովի նախագահը:

5. Բանկի խորհրդի անդամ՝ Վարդան Ուռուտյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Փորձառությունը	Խորհրդի կազմում 1-ին անգամ նշանակվել է 2022 թվականի ապրիլին: Մինչ այդ, 2000 թվականի սեպտեմբերից, որպես դասախոս և հետազոտող, աշխատանքի է անցել Ագրարային համալսարանի, ԱՄՆ գյուղդեպարտամենտի և Տեխասի A&M համալսարանի կողմից հիմնադրված Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնում (ԱՈւԿ): 2005 թվականին նշանակվել է կենտրոնի փոխտնօրեն, իսկ 2008 թվականի սեպտեմբերից մինչև 2018 թվականի օգոստոսը՝ Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնի տնօրեն և ՀԱԱՀ ագրոբիզնեսի դեպարտամենտի պետ: 2010 թվականի փետրվարից հանդիսանում է Տեխասի A&M համալսարանի Գյուղատնտեսական էկոնոմիկայի դեպարտամենտի հրավիրյալ պրոֆեսոր: 2018-2023թթ. զբաղեցրել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտորի պաշտոնը:
Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեություն	Հանդիսանում է Agri Camp AgroTwin թիմի ղեկավար, ICARE-ում, Տեխասի A&M համալսարանի Գյուղատնտեսական էկոնոմիկայի դեպարտամենտի հրավիրյալ պրոֆեսոր, ՀԱԱՀ Ճշգրիտ գյուղատնտեսության կենտրոնի խորհրդատու, Ագրոբիզնեսի դեպարտամենտի դասախոս, ինչպես նաև Մի շարք միջազգային, ագրոբիզնեսի կառավարման և գյուղատնտեսական էկոնոմիկայի հեղինակավոր մասնագիտական ասոցիացիաների անդամ (IFAMA, AAEA, EAAE, ICA RC, IAAE):
Մասնակցությունը Խորհրդին կից հանձնաժողովներին	Հանդիսանում է Աուդիտի հանձնաժողովի անդամ:

6. Բանկի խորհրդի անդամ՝ Արամ Բաբայան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Փորձառությունը	Խորհրդի կազմում 1-ին անգամ նշանակվել է 2022 թվականի ապրիլին: 2005-2009 թվականներին աշխատել է Հայաստանի պետական ագրարային համալսարանում՝ դասավանդելով հաշվապահական հաշվառում և աուդիտ: 2009 թվականից անցել է աշխատանքի Գերմանական միջազգային համագործակցությունում (GIZ)՝ տարբեր ծրագրերում զբաղեցնելով փորձագետի, ծրագրերի համակարգողի, ղեկավարի տեղակալի և ղեկավարի պաշտոնները: Ներկայումս Արամ Բաբայանը հանդիսանում է Գերմանական միջազգային համագործակցության (GIZ) «Հարավային Կովկասում մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում» ծրագրի թիմի ղեկավարը
Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեություն	Գերմանական միջազգային համագործակցության (GIZ) «Հարավային Կովկասում մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում» ծրագրի թիմի ղեկավար
Մասնակցությունը Խորհրդին կից հանձնաժողովներին	Հանդիսանում է Ռազմավարության և Կառավարման, նշանակումների և վարձատրությունների հանձնաժողովների անդամ:

7. Բանկի խորհրդի անդամ՝ Հարություն Փախչանյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Փորձառությունը	Խորհրդի կազմում 1-ին անգամ նշանակվել է 2022 թվականի ապրիլին: 2008-2009 թվականներին աշխատել է Ադիդաս Արմենիայում որպես մենեջեր, 2009-2010 թվականներին ՎիվաՍել-ՄՏՍ-ում որպես պահեստի մասնագետ, 2011-2012 թվականներին Պիցցա Էքսպրեսս ընկերությունում (Լոնդոն, Մեծ Բրիտանիա) որպես մենեջերի օգնական, 2012-2014 թվականներին աշխատել է Գոնդոլա Գրուպում (Լոնդոն, Մեծ Բրիտանիա) որպես ֆինանսական վերահսկող: 2015 թվականից հանդիսանում է «ԱՐՄԲԵՐՐԻ» ընկերության գլխավոր տնօրենը:
Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեություն	«ԱՐՄԲԵՐՐԻ» ընկերության գլխավոր տնօրեն
Մասնակցությունը Խորհրդին կից հանձնաժողովներին	Հանդիսանում է Կառավարման, նշանակումների և վարձատրությունների կառավարման հանձնաժողովի անդամ:

8. Բանկի խորհրդի անդամ՝ Գայանե Հայրապետյան

Բնակության վայրը	ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գառնի
Փորձառությունը	Խորհրդի կազմում 1-ին անգամ նշանակվել է 2024 թվականի մայիսին: Մինչ այդ, 1995-2023թթ. զբաղեցրել է Բժշկակենսաբանական միջազգային հետբուհական ուս. կենտրոն ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնը: Հանդիսանում է «Կոտայքի Գյուղացիական Փոխօգնության Մարզային Միավորում» հասարակական կազմակերպության Խորհրդի անդամ:
Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեություն	2023թ. առ այսօր հանդիսանում է «ՍԵԼ» ՍՊ ընկերության Գլխավոր մենեջեր: Հանդիսանում է նաև Ակտիտուր ընկերության համահիմնադիրը և «7 Քար» համալիրի հիմնադիրը:
Մասնակցությունը Խորհրդին կից հանձնաժողովներին	Հանդիսանում է Ռազմավարության հանձնաժողովի անդամ:

9. Բանկի խորհրդի անդամ՝ Հարություն Պողոսյան

Բնակության վայրը	ՀՀ, Երևան
Փորձառությունը	Խորհրդի կազմում 1-ին անգամ նշանակվել է 2026 թվականի մայիսին: Հարություն Պողոսյանը 1995 թվականից մասնակցել է Եվրամիության "Տասիս" ծրագրի շրջանակներում Հայգյուղփոխբանկի (հետագայում՝ Ակբա Բանկ) ստեղծման գործընթացին: Նրա մասնագիտական ուղին շարունակվել է 1998 թվականին Ֆրանսիայում, որտեղ նա զբաղեցրել է «Fruivial» կոոպերատիվների միության՝ արևմտյան երկրների գծով մարքեթինգի պատասխանատուի պաշտոնը: Հարությունը Պողոսյանը Ակբա Բանկի ստեղծման ժամանակաշրջանից մինչև 2017 թվականները՝ շուրջ 19 տարի, զբաղեցրել է տարբեր ղեկավար պաշտոններ: Այդ ժամանակահատվածում նա հանդիսացել է Աուդիտի և մարքեթինգի պատասխանատու, Մարքեթինգի և որակի ապահովման բաժնի ղեկավար, ինչպես նաև Մարքեթինգի վարչության ղեկավար:
Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեություն	2017 թվականին Հարություն Պողոսյանը նշանակվել է Ակբա Ֆեդերացիա ՓԲԸ-ի Գլխավոր տնօրեն և առ այսօր շարունակում է զբաղեցնել այդ պաշտոնը: Ի հավելումն իր գործադիր պաշտոնների՝ 2019թ. թվականին նա ներգրավվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանում խորհրդի անդամ՝ իր հարուստ փորձն ու մասնագիտական գիտելիքները ներդնելով բուհի կառավարման գործում:

Բանկի խորհրդի անդամների իրավասություններն ու պարտականությունները ներկայացվում են ստորև.

Յուրաքանչյուր Խորհրդի անդամ իրավունք ունի՝

1. իր լիազորությունների իրականացման նպատակով Խորհրդի նախագահի և Խորհրդի քարտուղարի միջոցով պահանջել և ստանալ լիարժեք, ճշգրիտ և ժամանակին տեղեկատվություն,
2. առաջարկել հարցեր Խորհրդի նիստի օրակարգում ընդգրկելու համար և քննարկման ներկայացնել որոշումների նախագծեր,
3. արտահայտել իր կարծիքը և քվեարկել բոլոր այն հարցերի շուրջ, որոնք դրվում են Խորհրդի քննարկմանը,
4. պահանջել Խորհրդի արտահերթ նիստի գումարում՝ Բանկի կանոնադրությամբ սահմանված կարգով,
5. տարբերվող/հատուկ կարծիք հայտնել Խորհրդի որոշումների վերաբերյալ և պահանջել, որպեսզի իր տարբերվող/հատուկ կարծիքը ներառվի նիստի արձանագրության մեջ,
6. ստանալ վարձատրություն և փոխհատուցում՝ իր պարտականությունների կատարման ընթացքում կատարված ծախսերի համար՝ Ընդհանուր ժողովի որոշման հիման վրա,
7. իր լիազորությունները պատշաճ իրականացնելու նպատակով, անհրաժեշտության դեպքում Խորհրդի նախնական համաձայնությամբ, Բանկի միջոցների հաշվին ներգրավել արտաքին խորհրդատուների կամ փորձագետների,
8. մասնակցել մասնագիտական վերապատրաստումների և կարողությունների զարգացման ծրագրերի՝ խորհրդի անդամի դերի հետ առնչվող ոլորտներում,
9. հրաժարվել իր պաշտոնից՝ ներկայացնելով գրավոր ծանուցում Խորհրդի նախագահին:

Խորհրդի անդամը պարտավոր է՝

1. մասնակցել Խորհրդի նիստերին,
2. իր լիազորությունների շրջանակում գործել ելնելով Բանկի լավագույն շահերից,
3. իր իրավունքներն օգտագործել և պարտականությունները կատարել անհրաժեշտ հոգատարությամբ, բարեխղճորեն և պատշաճ կերպով,
4. տեղեկացված որոշումներ ընդունել՝ ուսումնասիրելով իրեն հասանելի ողջ տեղեկատվությունը,
5. բոլոր քննարկումների և որոշումների կայացման ընթացքում կիրառել անկախ դատողություն՝ առանց արտաքին ազդեցության,
6. տրամադրել բավարար ժամանակ և ուշադրություն իր լիազորությունների պատշաճ իրականացմանը՝ դրսևորելով անհրաժեշտ ջանասիրություն,
7. իր պարտականությունները իրականացնելիս դրսևորել պրոֆեսիոնալիզմ, արդյունավետություն և ռազմավարական մտածողություն,

8. խուսափել շահերի բախումից և անհապաղ տեղեկացնել Խորհրդին ցանկացած փաստացի կամ պոտենցիալ շահերի բախման իրավիճակի մասին,
9. չընդունել երրորդ անձանց կողմից տրված այնպիսի արտոնություններ կամ օգուտներ, որոնք կարող են դիտարկվել որպես ոչ ողջամիտ կամ կարող են հանգեցնել շահերի բախման Բանկի կամ նրա հետ փոխկապակցված անձանց հետ,
10. ապահովել նույն դասի բաժնետերերի նկատմամբ հավասար և արդար վերաբերմունք,
11. պահպանել չհրապարակված բոլոր տեղեկությունների գաղտնիությունը, ներառյալ Խորհրդում իր լիազորությունների դադարելուց հետո,
12. Խորհրդին զեկուցել կիրառելի օրենսդրության, Բանկի կանոնադրության կամ սույն Կանոնակարգի խախտումների մասին, եթե այդպիսիք հայտնի դառնան նրան,
13. վերապատրաստումների և մասնագիտական զարգացման միջոցով շարունակաբար զարգացնել իր գիտելիքներն ու հմտությունները,
14. նպաստել Բանկի երկարաժամկետ հաջողությանը և աջակցել նրա ռազմավարական նպատակների ձևավորմանն ու իրագործմանը:

Խորհրդի անդամը կարող է ունենալ օրենսդրությամբ, Բանկի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

Բանկի խորհրդի նախագահը, բացի վերոնշյալ իրավասություններից ու պարտականություններից իրականացնում է նաև հետևյալ գործառույթները.

- կազմակերպում է Խորհրդի աշխատանքները.
- գումարում և նախագահում է Խորհրդի նիստերը.
- կազմակերպում է Խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը.
- նախագահում է Բանկի ընդհանուր ժողովում.
- կազմակերպում է Խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքը, եթե այդպիսիք առկա են:

4.7.3.2. Բանկի գլխավոր գործադիր տնօրենը

Բանկի գործունեության ընթացիկ ղեկավարումն իրականացնում է Բանկի գլխավոր գործադիր տնօրենը: Բանկի գլխավոր գործադիր տնօրենը ունի 4 տեղակալներ, որոնց փոխլրացնող փորձառությունը, որակավորումն ու հմտությունները անմիջականորեն անդրադառնում են Բանկի գործադիր կառույցի գործունեության արդյունավետության վրա:

Գլխավոր գործադիր տնօրեն՝ Հակոբ Անդրեասյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասություններն ու պարտականությունները	**Ռազմավարական առաջնորդություն.** **ա)**սահմանում է Բանկի տեսլականը, ռազմավարական ուղղությունը և ընդհանուր բիզնես նպատակները, **բ)**առաջնորդում և մոտիվացնում է ավագ ղեկավարներին՝ Բանկի ռազմավարությունը իրականացնելու համար,

	գ)վերահսկում է աճի, կայունության և շահութաբերության երկարաժամկետ ռազմավարությունների մշակումն ու իրականացումը, **Գործառնական վերահսկողություն.** **ա)**կառավարում և վերահսկում է Բանկի գործառնությունների ընդհանուր կատարողականը, **բ)**ապահովում է կառուցվածքային միավորներում քաղաքականությունների և գործառնական ընթացակարգերի իրականացումը, **գ)**խթանում է Բանկում նորարարությունն ու թվային փոխակերպումը, **Ֆինանսական կառավարում.** **ա)**ապահովում է Բանկի տարեկան բյուջեի հաստատումը, ֆինանսական թիրախները և խոշոր ներդրումները, **բ)**վերահսկելում է Բանկի ֆինանսական վիճակը՝ ապահովելով շահութաբերության և իրացվելիության թիրախային ցուցանիշների իրագործումը, **գ)**իրականացնում է ռիսկերի, ֆինանսական կատարողականի և շուկայական պայմանների մոնիթորինգ, **Կորպորատիվ կառավարում և համապատասխանություն.** **ա)**ապահովում է Բանկի համապատասխանությունը իրավական, կարգավորողի և գործարար վարվելակերպի չափանիշներին, **բ)**խթանում է արդյունավետ կորպորատիվ կառավարումը, պատասխանատվությունը և հաշվետվողականությունը, **գ)**հաշվետվություն է ներկայացնում Խորհրդին Բանկի ռազմավարական ուղղվածության, կատարողականի, ռիսկերի և համապատասխանության կարգավիճակի մասին, **Արտաքին հարաբերություններ.** **ա)**ներկայացնում է Բանկը կարգավորողների, ներդրողների, լրատվամիջոցների և այլ շահառուների հետ փոխհարաբերություններում, **բ)**ձևավորում և պահպանում է հարաբերություններ առանցքային արտաքին գործընկերների և շահառուների հետ, **գ)**ներկայացնում է Բանկը ոլորտային համաժողովներում և քաղաքականություններ մշակողների հետ քննարկումներում, **Ճգնաժամերի կառավարում.** **ա)**առաջնորդում է ճգնաժամային իրավիճակների հաղթահարումը, ներառյալ՝ ֆինանսական անկումները, գործառնական խափանումները կամ իրավական խնդիրները, **բ)**ճգնաժամային իրավիճակներում կայացնում է ռազմավարական որոշումներ՝ Բանկի կայունության և հեղինակության պահպանման համար, **գ**) Գլխավոր գործադիր տնօրենը, ի թիվս վերոնշյալ գործառույթների, իրականացնում է նաև «Բանկերի և

	բանկային գործունեության մասին» օրենքի 2110 հոդվածի 3-րդ մասով նախատեսված գործառույթները:
Փորձառությունը	Ավելի քան 30 տարի
Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեություն	«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ խորհրդի նախագահ, «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ խորհրդի նախագահ, ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ, ԱՌԵՎՏՐԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ-ի խորհրդի անդամ, «ԱԿԲԱ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՓԲԸ խորհրդի նախագահ, «Հայաստանի Ալիանս Ֆրանսեզ» ՀԿ խորհրդի նախագահ, «ՌԵՎՈԼՈՒՇՆԱՐԻ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՓԲԸ խորհրդի նախագահ:

1. Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ-ֆինանսական տնօրեն՝ Ստյոպա Զաքինյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասություններն ու պարտականությունները	**ա)**վերահսկում է Բանկի ֆինանսական կառավարումը և հաշվապահական հաշվառումը, **բ)**կառավարում է ֆինանսական պլանավորումը, բյուջետավորումը և հաշվետվողականությունը, **գ)** ապահովում է համապատասխանությունը ֆինանսական ոլորտի կանոնակարգերին և օրենքներին, **դ)** իրականացնում է իրացվելիության, կապիտալի համարժեքության և շահութաբերության մշտադիտարկում, **ե)** ապահովում է ֆինանսական հաշվետվությունների, ներառյալ՝ կարգավորողին ներկայացման ենթակա, ինչպես նաև Բանկի վերաբերյալ ամփոփ տվյալներ պարունակող այլ հաշվետվությունների պատրաստումը, **զ)** համակարգում է աուդիտորների հետ ֆինանսական աուդիտի իրականացման գործընթացը, **է)**կառավարում է Բանկի ներդրողների հետ հարաբերությունները, ինչպես նաև ներդրումային և ֆինանսական ռիսկերը, **ը)**մշակում և իրականացնում է Բանկի ֆինանսական քաղաքականությունը, **թ)** ապահովում է ֆինանսական կայունությունը, **ժ)**համակարգում է Բանկի ռազմավարության մշակման գործընթացը, **ժա)** կառավարում է Բանկի նախագծերի կատարումը:
Փորձառությունը	Ավելի քան 25 տարի
Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեություն	Բերդի տարածաշրջանի զարգացման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ

2. Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ-գործառնական տնօրեն՝ Նիկոլայ Հովհաննիսյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասություններն ու պարտականությունները	**ա)** վերահսկում է կանխիկի կառավարումը, բեք օֆիսի գործառնությունները և հաճախորդների աջակցությունը,

	բ) իրականացում և կառավարում է գնումների գործընթացը, **գ)** համակարգում է Բանկի ակտիվների ձեռքբերումը, կառավարումը, պահպանումը և օտարումը, **դ)** համակարգում և վերահսկում է Բանկում անվտանգության միջոցառումների մշակումն ու իրականացումը, **ե)** համակարգում և վերահսկում է Բանկի կորպորատիվ ոճի (կորպորատիվ դիզայն) գործառույթների մշակումն ու կատարելագործումը, **զ)** ապահովում է գործառնական համապատասխանությունը կարգավորող ստանդարտներին, **է)** վերահսկում է Բանկի մասնաճյուղերի և ստորաբաժանումների ամենօրյա գործունեությունը, **ը)** ապահովում է գործառնական գործընթացների և հաճախորդների սպասարկման արդյունավետությունը, **թ)**իրականացնում է հաճախորդի փորձի ուսումնասիրություն, վերլուծություն և կառավարում է հաճախորդների բողոքները, **ժ)** իրականացնում է գործընթացների բարելավում և գործառնական ավտոմատացում, **ժա)** ապահովում է ֆինանսական գործարքների ինքնաշխատ սարքերի տեխնիկական սպասարկումը, **ժբ)** մշակում և իրականացնում է Բանկի մարքեթինգային քաղաքականությունը, **ժգ)** մշակում և իրականացնում է Բանկի կորպորատիվ հաղորդակցության և հանրային կապերի ռազմավարություններ: Կազմակերպում և վերահսկում է հանրային կապերի միջոցառումներ:
Փորձառությունը	Ավելի քան 30 տարի
Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեություն	

3. Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ - մանրածախ բիզնեսի տնօրեն՝ Նորիկ Նազարյան

Բնակության վայրը	ՀՀ, ք Երևան
Իրավասություններն ու պարտականությունները	**ա)** ապահովում է Բանկի մանրածախ հաճախորդներին ծառայությունների և պրոդուկտների տրամադրումը, **բ)** մշակում և կառավարում է Բանկի մանրածախ հաճախորդների ներգրավման և պահպան-ման ռազմավարությունները, **գ)** մշակում է մանրածախ հաճախորդների համար ֆինանսական պրոդուկտներ, ինչպիսիք են խնայողությունները, վարկերը, քարտերը և այլն, **դ)** կառավարում է Բանկի մասնաճյուղային ցանցը, **ե)** մշակում է մանրածախ բիզնեսը զարգացնելու և շուկայում Բանկի մասնաբաժինը ընդլայնելու ռազմավարությունները, **զ)** համագործակցում է մարքեթինգի ստորաբաժանման հետ մանրածախ ծառայությունների առաջխաղացման նպատակով,

	է) պլանավորում է մանրածախ բիզնեսի ծախսերը և եկամուտները, **ը)** կառավարում է մանրածախ բիզնեսի ծախսերը և եկամուտները, **թ)** իրականացնում է պարտքերի հավաքագրում՝ առանց դատական գործընթացների, **ժ)** ապահովում է հաճախորդների սպասարկումը և խորհրդատվությունը ինչպես մասնաճյուղերում, այնպես էլ թվային ուղիներով, հեռախոսի, էլ.փոստի, սոցիալական մեդիայի և չաթ հարթակների միջոցով: Մանրածախ բիզնեսի տնօրինության հաճախորդներն են՝ • ֆիզիկական անձինք, • մինչև 5 մլն ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթի սահմաններում գյուղատնտեսական կամ ՓՄՁ նպատակով ֆինանսավորում ստացած ֆիզիկական անձինք, իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը
Փորձառությունը	Ավելի քան 28 տարի
Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեություն	Բանկի գործունեությունից դուրս որևէ գործունեություն չի ծավալում:

4. Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ - թվային պլատֆորմների և տեխնոլոգիաների տնօրեն՝ Տիգրան Սիմոնյան

Բնակության վայրը	ՀՀ, ք Երևան
Իրավասություններն ու պարտականությունները	**ա)** մշակում է Բանկի թվային և տեխնոլոգիական պլատֆորմների զարգացման ռազմավարությունը և ապահովում դրա արդյունավետ իրականացումը, **բ)** կառավարում է Բանկի տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքը, ծառայություն-ները, թվային պլատֆորմները և համակարգերը, **գ)** մշակում, շահագործում և սպասարկում է Բանկի ծրագրային ապահովումն ու համակարգերը, **դ)** համակարգում է Բանկի թվային փոխակերպման աշխատանքները և օժանդակում կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներին պրոդուկտների թվայնացման և գործառնական պրոցեսների ավտոմատացման գործընթացում, **ե)** կառավարում է թվային պլատֆորմների և տեխնոլոգիաների ռեսուրսները, ներառյալ՝ սարքավորումները, ծրագրային ապահովումը և տեխնիկական աջակցությունը, **զ)** ապահովում է թվային պլատֆորմների և տեխնոլոգիաների զարգացման ռազմավարության համապատասխանությունը Բանկի ընդհանուր բիզնես նպատակներին, **է)** ապահովում է նորարար տեխնոլոգիաների կիրառումը, ինչպիսիք են՝ մեքենայական ուսուցումը, արհեստական բանականությունը և ռոբոտացման միջոցով գործընթացների

	ավտոմատացման (RPA) տեխնոլոգիաները, տվյալների վերլուծության տեխնոլոգիական հարթակները, **ը)** մշակում է տվյալների հավաքագրման, վերլուծության և կառավարման ռազմավարությունը և ապահովում դրա արդյունավետ իրականացումը, **թ)** ապահովում և զարգացնում է միջազգային վճարային համակարգերի հետ քարտային տեխնոլոգիաների և թվային պրոդուկտների գծով համագործակցությունը, **ժ)** ապահովում է քարտերի սպասարկման ենթակառուցվածքների կառավարումը և զարգացումը, **ժա)** համակարգում և ապահովում է Բանկի և պրոցեսինգային կենտրոնի միջև իրականացվող ծրագրերը, ինտեգրացիաները և շահագործման աշխատանքները, **ժբ)** իրականացնում է թվային և հեռահար ուղիներով մատուցվող ծառայությունների և քարտային գործառնությունների գծով մոնիթորինգ
Փորձառությունը	Ավելի քան 16 տարի
Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեություն	«ԻՄ ԱՅԴԻ» ՓԲԸ Խորհրդի նախագահ

4.7.3.3. Բանկի Գլխավոր հաշվապահը

Սույն Ազդագիրը կազմելու պահին Բանկի Գլխավոր հաշվապահն է Արմեն Հակոբյանը:

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասություններն ու պարտականությունները	Բանկի Գլխավոր հաշվապահը պատասխանատու է Բանկի հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, ֆինանսական հաշվետվություններն ՖՀՄՍ-երի պահանջներին համապատասխան կազմելու և օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված մարմիններին ժամանակին ներկայացնելու համար, ինչպես նաև Բանկի մասնակիցներին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Բանկի մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և Բանկի կանոնադրությանը համապատասխան:
Փորձառությունը	Ավելի քան 27 տարի
Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեություն	ՀՊՏՀ <<Ֆինանսական հաշվառում>> ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի անդամ, պալատի որակավորման հանձնաժողովի անդամ, ՀՀ ԲԿԳԿ-ի <<Տնտեսագիտության>> մասնագիտական խորհրդի անդամ Հաշվապահների և Աուդիտորների Եվրասիական Խմբի Որակավորման և կրթության հանձնաժողովների անդամ

4.7.4. Թողարկողի մասնաճյուղերի կառավարիչները

Սույն Ազդագրի պատրաստման պահին Բանկի «Արմենիա» մասնաճյուղը կենտրոնացրել էր Բանկի ակտիվների շուրջ 7.1 տոկոսը: «Արմենիա» մասնաճյուղի ակտիվները հաշվետու օրվա դրությամբ կազմել է 77,364,229 հազար ՀՀ դրամ: «Արմենիա» մասնաճյուղի կառավարիչն է Էմիլ Հարությունյանը: Բնակության վայրը՝ ՀՀ, ք. Երևան: Փորձառությունը՝ շուրջ 22 տարի: Էմիլ Հարությունյանը իրականացնում է մասնաճյուղի օպերատիվ գործունեության ղեկավարումը և կոորդինացումը, ղեկավարում ակտիվների և պարտավորությունների վիճակի ու շարժի վերաբերյալ տեղեկությունների տնօրինումը, սահմանում վերահսկողություն վարկավորման և ավանդային բաժնի աշխատանքների նկատմամբ, տրված լիազորությունների սահմաններում ներկայացնում է Բանկն այլ մարմիններում:

4.7.5. Շահերի բախումը

Բանկի և Բանկի կառավարմանը մասնակցող անձանց միջև շահերի բախումը բացակայում է և կարգավորվում է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ վարվելակերպի և ներքին կարգապահության կանոնների մասին քաղաքականությամբ:

4.8. Հսկող անձինք

«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի իմաստով Բանկը գտնվում է ներքոնշյալ անձի **ուղղակի** հսկողության տակ՝

- **«ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» փակ բաժնետիրական ընկերություն** – ունի ուղղակի նշանակալից մասնակցությունը Բանկի կապիտալում՝ 75%* (4,488,993 բաժնետոմս):
- **«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» Հանրային սահմանափակ ընկերությունը (Պրոպարկո)**՝ 10%* (598,500 բաժնետոմս):

4.9. Ակտիվներ և պարտավորություններ, ֆինանսական վիճակ

4.9.1. Պատմական և միջանկյալ ֆինանսական տեղեկատվություն

Բանկի 2023-2025թթ. աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունները և անկախ աուդիտորական եզրակացությունները (պատճենները), ինչպես նաև 2026թ.-ի 1-ին եռամսյակի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները, ներկայացված են սույն ազդագրի ***Հավելված* 6-ում:**
Ցանկության դեպքում ներդրողները Բանկի ֆինանսական հաշվետվությունները կարող են բեռնել նաև Բանկի ինտերնետային կայքից հետևյալ հասցեով՝ www.acba.am:

* 31.03.2026թ.-ի դրությամբ

4.9.2. Բանկի ֆինանսական վիճակի էական փոփոխություններ

2025թ.-ի տարեվերջի դրությամբ Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի փոփոխությունները ներկայացված են հետևյալ աղյուսակում.

Հազ. ՀՀ դրամ

Ֆինանսական ցուցանիշներ	31.12.2025թ.	31.12.2024թ.	Աճ/նվազում*
Կապիտալ	194,559,648	163,440,379	19.0%
Ակտիվներ	1,062,519,621	931,697,149	14.0%
Պարտավորություններ	867,959,973	768,256,770	13.0%

Հազ. ՀՀ դրամ

Ֆինանսական ցուցանիշներ	01.01.25-31.12.25	01.01.24-31.12.24	Աճ/նվազում*
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը	44,996,730	35,143,735	28.0%
Զուտ տոկոսային եկամուտներ	66,355,590	54,564,053	21.6%
Գործառնական եկամուտներ*	83,437,549	69,144,687	20.7%

4.9.3. Դատական, արբիտրաժային և վարչական վարույթներ

Սույն Ծրագրային ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամսվա ընթացքում Բանկը ներգրավված չէ դատական, արբիտրաժային և (կամ) վարչական իրավական վարույթներում, որոնք կարող են էական բացասական ազդել Բանկի ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա և/կամ կարող են ունենալ կամ վերջերս ունեցել են էական բացասական ազդեցություն:

* Աղյուսակում ներառված ֆինանսական տվյալները ստացվել են համապատասխան ժամանակաշրջանների աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններից, բացառությամբ «*»-ով նշված տվյալների, որոնց հաշվարկման մանրամասները բացահայտված են Հավելված 3-ում:

4.10. Էական պայմանագրեր

Բանկում առկա չեն Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 1 տարվա ընթացքում Բանկի կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող պայմանագրեր, որոնց գինը գերազանցում է Բանկի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5 տոկոսը:

4.11. Մասնագիտական կարծիքներ

Բացի ֆինանսական աուդիտի ենթարկված և Ազդագրում ներկայացված Բանկի ֆինանսական հաշվետվություններից, Ազդագրի որևէ մասում այլ անձանց մասնագիտական կարծիք կամ երրորդ անձանցից վերցված տեղեկատվություն չի օգտագործվել:

4.12. Այլ տեղեկատվություն

Ծրագրային ազդագրի կիրառության ողջ ժամկետի ընթացքում Բանկի կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, աուդիտորական եզրակացությունները մշտապես հասանելի են հանրությանը էլեկտրոնային տարբերակով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են Բանկի պաշտոնական կայքում՝ www.acba.am հասցեով:
Հարկ է նշել նաև, որ Ազդագրում ներկայցված բոլոր ֆինանսկան ցուցանիշները հաշվարկված են «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի և նրա դուստր ընկերության «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՓԲԸ-ի համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

ԲԱԺԻՆ 5. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1: «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կողմից թողարկված պարտատոմսերի ձեռք բերման հայտ իրավաբանական անձանց համար

ՀԱՎԵԼՎԱԾ 2: «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կողմից թողարկված պարտատոմսերի ձեռք բերման հայտ ֆիզիկական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար

ՀԱՎԵԼՎԱԾ 3: Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը

Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) = (Հաշվետու տարվա շահույթ / Կապիտալի միջին տարեկան մեծություն վերջին երկու տարվա) x 100:

Ակտիվների շահութաբերություն (ROA) = (Հաշվետու տարվա շահույթ / Ընդհանուր ակտիվների միջին տարեկան մեծություն վերջին երկու տարվա) x 100:

Զուտ շահույթի մարժա (NPM) = Հաշվետու տարվա շահույթ / Գործառնական եկամուտ (Զուտ տոկոսային եկամուտ,Միջնորդավճարների գծով եկամուտ, Միջնորդավճարների գծով ծախս, Զուտ օգուտ/(վնաս) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից, Զուտ օգուտ/(վնաս) արտարժույթի առքուվաճառքից, Զուտ օգուտ/(վնաս) փոխարժեքային տարբերություններից և Այլ եկամուտ հոդվածների հանրագումար):

Ակտիվների օգտագործման գործակից (AU) = Գործառնական եկամուտ (Զուտ տոկոսային եկամուտ,Միջնորդավճարների գծով եկամուտ, Միջնորդավճարների գծով ծախս, Զուտ օգուտ/(վնաս) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից, Զուտ օգուտ/(վնաս) արտարժույթի առքուվաճառքից, Զուտ օգուտ/(վնաս) փոխարժեքային տարբերություններից և Այլ եկամուտ հոդվածների հանրագումար) / Ընդհանուր ակտիվների միջին տարեկան մեծություն վերջին երկու տարվա:

Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM) = Ընդհանուր ակտիվների միջին տարեկան մեծություն վերջին երկու տարվա / Կապիտալի միջին տարեկան մեծություն վերջին երկու տարվա:

Զուտ տոկոսային մարժա (NIM) = Զուտ տոկոսային եկամուտ / Եկամտաբեր ակտիվների միջին տարեկան մեծություն վերջին երկու տարվա (Պահանջներ բանկերի նկատմամբ, Ներդրումային արժեթղթեր, Հաճախորդներին տրված վարկեր և Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ հոդվածների միջին տարեկան մեծություն վերջին երկու տարվա):

Եկամտաբեր ակտիվներ = Պահանջներ բանկերի նկատմամբ, Ներդրումային արժեթղթեր, Հաճախորդներին տրված վարկեր և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ հոդվածների հանրագումար:

Պահանջներ հաճախորդների նկատմամբ = Հաճախորդներին տրված վարկեր և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ հոդվածների հանրագումար:

Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը = Եկամտաբեր ակտիվներ / Ընդամենը ակտիվներ x 100:

Պետական արժեթղթեր = ՀՀ կառավարության արժեթղթեր՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝ բանկի կողմից պահվող պարտքային գործիքներ, ՀՀ կառավարության արժեթղթեր՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային և այլ բաժնային գործիքներ հանրագումար:

Գործառնական եկամուտ = Զուտ տոկոսային եկամուտ, Զուտ միջնորդավճարների գծով եկամուտ, Զուտ օգուտ/(վնաս) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից, Զուտ օգուտ/(վնաս) արտարժույթի առքուվաճառքից, Զուտ օգուտ/(վնաս) փոխարժեքային տարբերություններից և Այլ եկամուտ հոդվածների հանրագումար:

Սեփական կապիտալի միջին մեծություն = Վերջին երկու տարիների տարեվերջյան Սեփական կապիտալի հանրագումարի կեսը:

Ընդհանուր ակտիվների միջին մեծություն = Վերջին երկու տարիների տարեվերջյան Ընդհանուր ակտիվների հանրագումարի կեսը:

Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն = Վերջին երկու տարիների տարեվերջյան Եկամտաբեր ակտիվների հանրագումարի կեսը:

Տոկոսային եկամուտ = Տոկոսային հասույթ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, Այլ տոկոսային եկամուտ հոդվածների հանրագումար:

Ծախսատար պարտավորությունների միջին մեծություն = Բանկերից ներգրավված միջոցներ, Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ, Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ, Թողարկված պարտքային արժեթղթեր, Այլ փոխառու միջոցներ և Ստորադաս վարկեր հոդվածների վերջին երկու տարվա միջին տարեկան մեծություն:

Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցներ = Բանկերից ներգրավված միջոցներ, Այլ փոխառու միջոցներ, Ստորադաս վարկեր հոդվածների հանրագումար:

Հաճախորդներին տրված վարկեր և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ = Հաճախորդներին տրված վարկեր և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ հոդվածների հանրագումար:

Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն = Տոկոսային եկամուտներ / Եկամտաբեր ակտիվների միջին տարեկան մեծություն վերջին երկու տարվա (Պահանջներ բանկերի նկատմամբ, Ներդրումային արժեթղթեր, Հաճախորդներին տրված վարկեր և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ հոդվածների միջին տարեկան մեծություն վերջին երկու տարվա):

Ծախսատար պարտավորությունների միջին տարեկան մեծություն վերջին երկու տարվա % = Տոկոսային ծախսեր / Ծախսատար պարտավորությունների միջին տարեկան մեծություն վերջին երկու տարվա (Բանկերից ներգրաված միջոցներ, հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ, Թողարկված պարտքային արժեթղթեր, Այլ փոխառու միջոցներ և Ստորադաս վարկեր հոդվածների միջին տարեկան մեծություն վերջին երկու տարվա):

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ (EPS) = Հաշվետու տարվա շահույթ / Սովորական բաժնետոմսերի միջին կշռված քանակ:

Սպրեդ = (Տոկոսային եկամուտներ / Եկամտաբեր ակտիվների միջին տարեկան մեծություն վերջին երկու տարվա (Պահանջներ բանկերի նկատմամբ, Ներդրումային արժեթղթեր, Հաճախորդներին տրված վարկեր և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ հոդվածների միջին տարեկան մեծություն վերջին երկու տարվա)) - (Տոկոսային ծախսեր/ Ծախսատար պարտավորությունների միջին տարեկան մեծություն վերջին երկու տարվա (Բանկերից ներգրաված միջոցներ, Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ, Թողարկված պարտքային արժեթղթեր, Այլ փոխառու միջոցներ և Ստորադաս վարկեր հոդվածների միջին տարեկան մեծություն վերջին երկու տարվա)):

ՀԱՎԵԼՎԱԾ 4: Բանկի կազմակերպական կառուցվածքը

ՀԱՎԵԼՎԱԾ 5: Թողարկման վերջնական պայմաններ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
(Թողարկողի անվանումը)

Անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի պարտատոմս

(արժեթղթի տեսակը)

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռք բերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ծրագրային ազդագիրը (գրանցված է _____ _____ 2025թ.), դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները գտնվում են «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ում՝ ՀՀ, 0002, ք. Երևան, Արամի 82-84 հասցեում:

1. Ընդհանուր տեղեկություններ (Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:)		
1.1.	Թողարկողը (Թողարկողի անվանումը)	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
1.2.	Երաշխավորողը	Նախատեսված չէ ներգրավել երաշխավոր
1.3.	Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը)	
1.4.	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	
1.5.	Արժեթղթերի դակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը ՝ ըստ ստորադասության	Մանրամասն ներկայացված է **Ծրագրային Ազդագրի 3.3.6** մասում

1.6.	Թողարկման արժույթը	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար
1.7.	Առաջարկի գինը	Պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց, տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ կերպ. $$P = \frac{C}{f}\sum_{t=1}^{n}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+\tau}} + \frac{100}{\left(1+\frac{y}{100*f}\right)}$$ որտեղ՝ $$\tau = \frac{DSN}{DCC}$$ **P** – Պարտատոմսի լրիվ գինն է (կլորացվում է ստորակետից հետո 4 նիշի ճշտությամբ թվաբանական կլորացման կանոնների համաձայն), **DSN** - գործարքի կատարման օրից մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում, **DCC** - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանա-կանության դեպքում, **f** - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է 2 (երկու) կիսամյակային վճարումների համար), **n** - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը, **C** - տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց, **Y** - մինչև մարում եկամտաբերություն: Յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի տվյալ օրվա գինը տեղաբաշխման ողջ ընթացքի համար Բանկը պարտավոր է հրապարակել իր ինտերնետային կայքում՝ www.acba.am
1.8.	Անվանական արժեքը	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ /100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար

1.9.	Քանակը	Առավելագույնը՝ 500,000 (հինգ հարյուր հազար) հատ ՀՀ դրամով և 500,000 (հինգ հարյուր հազար) հատ ԱՄՆ դոլարով պարտատոմսերի դեպքում
1.10.	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխություն)	ենթակա է որոշման Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի կողմից
1.11.	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխություն)	ենթակա է որոշման Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի կողմից
1.12.	Արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր	
1.13.	Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը (լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի»)	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի 27.04.2026թ. թիվ 173-Գ.3 որոշման
2. Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ		
2.1.	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը	ենթակա է որոշման Բանկի Գործադիր տնօրենի կողմից և համընկնում է տեղաբաշխման առաջին օրվա հետ
2.2.	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե Արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից է (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/ դրա փոփոխության մասին տեղեկատվություն	Ենթակա է որոշման Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի կողմից, պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխումից առաջ, ՀՀ դրամով պարտատոմսերի դեպքում ոչ ավել, քան 11.50% և ԱՄՆ դոլարով պարտատոմսերի դեպքում ոչ ավել, քան 6.5% :
2.3.	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)	ենթակա է որոշման Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի կողմից
2.4.	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրնակ 30/360, Act/Act, Act/360 և այլն)	Փաստացի օրեր արժեկտրոնի փուլի ընթացքում/ Փաստացի օրեր տարվա ընթացքում (Actual/Actual)
2.5.	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը	«ոչ կիրառելի»

2.6.	Արժեկտրոնի հաշվարկման այլ Էական պայմաններ	
2.7.	Զրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	«ոչ կիրառելի»
3. Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկատվություն		
3.1.	Մարման (մասնակի մարումների) ժամկետը	ենթակա է որոշման Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի կողմից, սակայն այն կարող է սահմանվել ոչ պակաս քան 2 տարի և ոչ ավել քան 5 տարի մարման ժամկետով:
3.2.	Մարման (մասնակի մարումների) արժեքը, եթե հանրավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ 1 պարտատոմսի համար / 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար 1 պարտատոմսի համար
3.3.	Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	«ոչ կիրառելի
3.4.	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	«ոչ կիրառելի»
3.4.1	Ժամկետ(ներ)ը	
3.4.2	Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում)	«ոչ կիրառելի»
3.4.3	Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեք	«ոչ կիրառելի»
3.4.4	Այլ տեղեկություններ	
3.5.	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փութ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	«ոչ կիրառելի»
3.5.1	Ժամկետ(ներ)ը	
3.5.2	Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում)	«ոչ կիրառելի»

3.5.3	Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը)	
4. Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ		
4.1.	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ, ՀՀ, 0002, ք. Երևան, Արամի 82-84
4.2.	Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն ազդագրում)	ենթակա է որոշման Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի կողմից
5. Այլ տեղեկություններ		
5.1.	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը)	Արժեթղթերը դեռ թույլատրված չեն կարգավորվող շուկայում առևտրին
5.2.	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը հնարավորության դեպքում))	Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում՝ «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ-ում, ցուցակելու համար, և համաձայն ՀՀ գործող օրենսդրության պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում: Առևտրին թույլտվության հայցը կարող է նաև չբավարարվել:
5.3.	Արժեթղթերի վարկանիշը	Արժեթղթերը վարկանիշ չունեն
5.4.	Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը	Ներկայացված է **Ծրագրային Ազդագրի 3.4** մասում

Թողարկողը պատասխանատու է սույն *«Թողարկման վերջնական պայմաններում»* Ներառված տեղեկությունների համար: Թողարկողը հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են Ծրագրային Ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:

Սոնա Իշխանյան	Խորհրդի նախագահ		25.08.2026թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Վարդան Ուռուտյան	Խորհրդի անդամ		25.08.2026թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արամ Բաբայան	Խորհրդի անդամ		25.08.2026թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Հարություն Փախչանյան	Խորհրդի անդամ		25.08.2026թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Գայանե Հայրապետյան	Խորհրդի անդամ		25.08.2026թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Հարություն Պողոսյան	Խորհրդի անդամ		25.08.2026թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Հակոբ Անդրեասյան	Գլխավոր գործադիր տնօրեն		25.08.2026թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ստյոպա Զաքինյան	Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ-Ֆինանսական տնօրեն		25.08.2026թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արմեն Հակոբյան	/Գլխավոր հաշվապահ		25.08.2026թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում եմ՝

Հակոբ Անդրեասյան	Գլխավոր գործադիր տնօրեն		25.08.2026թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ 6: Ֆինանսական հաշվետվություններ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

ՖՀՄՍ համապատասխան՝
Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

2026թ. առաջին եռամսյակի համար

Բովանդակություն

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն 1
Ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն 2
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն 3
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն 4
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն 5
Ներածություն 6
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 7

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն 2026թ. մարտի 31-ի դրությամբ

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	31/03/2026թ. (չստուգված)	31/12/2025թ. (չստուգված)
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7	79,838,284	99,170,819
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	8	62,982	35,996
Պահանջներ բանկերի նկատմամբ	9	107,078,483	98,248,127
Ներդրումային արժեթղթեր	*10*		
- Բանկի կողմից պահվող		82,700,805	73,247,135
- վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված		-	-
Հաճախորդներին տրված վարկեր	11	651,521,103	633,803,003
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	12	103,847,063	103,041,353
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	36	3,120,283	2,588,014
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	13	32,882,948	31,929,561
Այլ ակտիվներ	16	29,932,873	25,639,299
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**1,090,984,824**	**1,067,703,307**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Բանկերից ներգրավված միջոցներ	17	1,008,129	2,007,915
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	18	617,453,986	622,061,677
Թողարկված պարտքային արժեթղթեր	19	70,709,467	51,798,299
Այլ փոխառու միջոցներ	20	161,606,588	157,877,342
Ընթացիկ հարկային պարտավորություններ	14	5,909,012	4,828,716
Հետաձգված հարկային պարտավորություններ	14	1,473,673	1,155,632
Այլ պարտավորություններ	22	17,427,631	19,876,758
Ստորադաս վարկեր	21	12,855,533	13,152,984
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**888,444,019**	**872,759,323**
ԿԱՊԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ	23	89,775,000	89,775,000
Էմիսիոն եկամուտ	23	3,811,978	3,811,978
Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գծով պահուստ	24	3,517,422	3,517,422
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ		5,272,232	5,277,052
Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ		585,836	579,047
Գլխավոր պահուստ		13,466,250	13,466,250
Չբաշխված շահույթ		86,112,086	78,517,235
Ընդամենը կապիտալ		**202,540,805**	**194,943,984**
ԸՆԴԱՄԵՆԸ ԿԱՊԻՏԱԼ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**1,090,984,824**	**1,067,703,307**

Հաստատվել է հրապարակման համար և ստորագրվել է Բանկի տնօրինության անունից 2026թ. ապրիլի 15-ին:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Շահույթի և վնասի մասին համախմբված հաշվետվություն 2026թ. մարտի 31-ին ավարտված ժամանակաշրջանի համար

Հազ. ՀՀ դրամ	**Ծան.**	**01/03/2026-31/03/2026թ. (չստուգված)**	**01/01/2026-31/03/2026թ. (չստուգված)**	**01/01/2025-31/03/2025թ. (չստուգված)**	**01/01/2025-31/03/2025թ. (չստուգված)**
Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ	26	25,781,523	25,781,523	21,630,223	21,630,223
Այլ տոկոսային եկամուտ	26	3,998,278	3,998,278	3,278,065	3,278,065
Տոկոսային ծախս	26	(12,030,978)	(12,030,978)	(9,849,897)	(9,849,897)
Զուտ տոկոսային եկամուտ		**17,748,823**	**17,748,823**	**15,058,392**	**15,058,392**
Վարկային կորստի գծով ծախս	15	(2,294,626)	(2,294,626)	(1,146,732)	(1,146,732)
Զուտ տոկոսային եկամուտ վարկային կորստի գծով ծախսից հետո		**15,454,198**	**15,454,198**	**13,911,659**	**13,911,659**
Միջնորդավճարների գծով եկամուտ	27	4,683,785	4,683,785	3,973,388	3,973,388
Միջնորդավճարների գծով ծախս	27	(2,275,801)	(2,275,801)	(1,913,080)	(1,913,080)
Զուտ (վնաս)՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից		(76,762)	(76,762)	(202,498)	(202,498)
Զուտ օգուտ արտարժույթի առքուվաճառքից		1,270,236	1,270,236	1,461,465	1,461,465
Զուտ (վնաս)/օգուտ փոխարժեքային տարբերություններից		(412,945)	(412,945)	515,626	515,626
Ասոցիացված կազմակերպությունների շահույթի մասնաբաժին	36	534,636	534,636	390,048	390,048
Այլ (վնաս)/եկամուտ	28	(139,894)	(139,894)	18,785	18,785
Ոչ տոկոսային եկամուտ		**3,583,255**	**3,583,255**	**4,243,734**	**4,243,734**
Անձնակազմի գծով ծախսեր		(5,992,694)	(5,992,694)	(5,360,134)	(5,360,134)
Մաշվածություն և ամորտիզացիա	13	(1,302,715)	(1,302,715)	(1,070,662)	(1,070,662)
Այլ գործառնական ծախսեր	29	(806,052)	(806,052)	(721,906)	(721,906)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	30	(1,362,070)	(1,362,070)	(1,182,584)	(1,182,584)
Ոչ տոկոսային ծախս		**(9,463,531)**	**(9,463,531)**	**(8,335,286)**	**(8,335,286)**
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը		**9,573,922**	**9,573,922**	**9,820,107**	**9,820,107**
Շահութահարկի գծով ծախս	14	(1,983,890)	(1,983,890)	(2,036,546)	(2,036,546)
Հաշվետու տարվա շահույթ		**7,590,032**	**7,590,032**	**7,783,561**	**7,783,561**
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ					
Բազային և նոսրացված, մայր կազմակերպության բաժնետերերին վերագրելի, ՀՀ դրամ	23	1,268.18	1,268.18	1,300.51	1,300.51

Հազ. ՀՀ դրամ	Ծանո.	01/01/2026-31/03/2026թ. (չստուգված)	01/01/2026-31/03/2026թ. (չստուգված)	01/01/2025-31/03/2025թ. (չստուգված)	01/01/2025-31/03/2025թ. (ստուգված)
Հաշվետու տարվա շահույթ		**7,590,032**	**7,590,032**	**7,783,561**	**7,783,561**
Այլ համապարփակ եկամուտ					
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ					
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների գծով իրական արժեքի փոփոխություն		11,550	11,550	(89,845)	(89,845)
Ակնկալվող վարկային կորուստների պահուստի փոփոխությունները		43	43	4,197	4,197
Շահութահարկ այլ համապարփակ եկամտի տարրերի գծով	14	(2,087)	(2,087)	15,417	15,417
Հաջորդ ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող զուտ այլ համապարփակ եկամուտ		**9,506**	**9,506**	**(70,231)**	**(70,231)**
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ					
Շենքերի և փոխադրամիջոցների վերագնահատում		-	-	-	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային գործիքների գծով շահույթ/(վնաս)		(426)	(426)	249	249
Շահութահարկ այլ համապարփակ եկամտի տարրերի գծով	14	77	77	(45)	(45)
Ընդամենը հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ		**(349)**	**(349)**	**204**	**204**
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող					
Ասոցիացված կազմակերպությունների այլ համապարփակ եկամտի մասնաբաժին		(2,367)	(2,367)	9,815	9,815
Շահութահարկ այլ համապարփակ եկամտի տարրերի գծով	14	-	-	-	-
Ընդամենը ասոցիացված կազմակերպությունների այլ համապարփակ համապարփակ եկամտի մասնաբաժին		**(2,367)**	**(2,367)**	**9,815**	**9,815**
Տարվա այլ համապարփակ վնաս՝ առանց հարկերի		**6,790**	**6,790**	**(60,212)**	**(60,212)**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ		**7,596,821**	**7,596,821**	**7,723,349**	**7,723,349**

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն 2026թ. մարտի 31-ին ավարտված ժամանակաշրջանի համար

Հազ. ՀՀ դրամ	**Բաժնե-տիրական կապիտալ**	**Էմիսիոն եկամուտ**	**Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գծով պահուստ**	**Հիմնական միջոցների վերա-գնահա տումից աճ**	**Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների վերագնահատման պահուստ**	**Գլխավոր պահուստ**	**Չբաշխված շահույթ**	**Ընդամենը կապիտալ**
2026թ. հունվարի 1-ի դրությամբ (չստուգված)	**89,775,000**	**3,811,978**	**3,517,422**	**5,277,052**	**579,047**	**13,466,250**	**78,517,235**	**194,943,984**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք								
Հաշվետու տարվա շահույթ	-	-	-	-	-	-	7,590,032	**7,590,032**
Այլ համապարփակ եկամուտ	-	-	-	-	6,790	-		**6,790**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	**-**	**-**	**-**	**-**	**6,790**	**-**	**7,590,032**	**7,596,821**
Հիմնական միջոցների վաճառքի արդյունքում վերագնահատման ավելցուկի փոխանցումը չբաշխված շահույթին	-	-	-	**(4,820)**	**-**	**-**	**4,820**	**-**
Բաժնետիրական կապիտալի թողարկում	-	-	-	-	-		-	**-**
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-	-	-	-	-	**-**
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	-	-	-	-	-	-	**-**	**-**
2026թ. մարտի 31-ի դրությամբ (չստուգված)	**89,775,000**	**3,811,978**	**3,517,422**	**5,272,232**	**585,836**	**13,466,250**	**86,112,086**	**202,540,804**
2025թ. հունվարի 1-ի դրությամբ (չստուգված)	**89,775,000**	**3,811,978**	**3,517,422**	**3,757,943**	**381,633**	**8,250,000**	**53,624,005**	**163,117,982**
Հաշվետու տարվա շահույթ	-	-	-	-	-		7,783,561	**7,783,561**
Այլ համապարփակ վնաս	-	-	-	-	(60,212)		-	**(60,212)**
Հիմնական միջոցների վաճառքի արդյունքում վերագնահատման ավելցուկի փոխանցումը չբաշխված շահույթին	**-**	**-**	**-**	**(13,960)**	**-**	**-**	**13,960**	**-**
Գլխ. պահուստի համալրում էմիսիոն եկամտի հաշվին						5,216,250	(5,216,250)	**-**
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-	-	-	-	-	**-**
2025թ. մարտի 31-ի դրությամբ (չստուգված)	**89,775,000**	**3,811,978**	**3,517,422**	**3,743,983**	**321,421**	**13,466,250**	**56,205,275**	**170,841,329**

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	01/01/2026-31/03/2026թ. (չստուգված)	01/01/2025-31/03/2025թ. (չստուգված)
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Ստացված տոկոսներ (հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով)		22,700,389	19,646,800
Ստացված այլ տոկոսներ		3,998,278	3,278,065
Վճարված տոկոսներ		(10,102,798)	(8,697,829)
Ստացված միջնորդավճարներ		4,683,785	3,973,388
Վճարված միջնորդավճարներ		(2,275,801)	(1,913,080)
Զուտ (ելք)/մուտք շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ածանցյալ ֆինանսական գործիքներից		(86,501)	(252,317)
Զուտ մուտքեր փոխարժեքային տարբերություններից		1,270,236	1,461,465
Վճարված այլ գործառնական ծախսեր		(810,736)	(747,762)
Ստացված այլ եկամուտ		(139,894)	18,785
Աշխատավարձ և աշխատակազմին վճարված այլ գումարներ		(8,481,121)	(7,803,558)
Վճարված այլ ընդհանուր վարչական ծախսեր		(1,362,070)	(1,182,584)
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունները		**9,393,767**	**7,781,373**
Գործառնական ակտիվների զուտ (ավելացում)/ նվազում			
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ		(17,277)	126,889
Պահանջներ բանկերի նկատմամբ		(9,029,427)	18,326,228
Հաճախորդներին տրված վարկեր		(23,035,098)	(26,813,230)
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ		(1,198,720)	(2,276,709)
Այլ ակտիվներ		(1,200,363)	2,708,336
Բանկերից ներգրավված միջոցներ		(977,752)	(1,110,411)
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ		(2,237,588)	(28,566,870)
Այլ պարտավորություններ		270,092	(357,296)
(Գործառնական գործունեությամբ օգտագործված)/ ստացված զուտ դրամական միջոցներ մինչև շահութահարկը		**(28,032,366)**	**(30,181,690)**
Վճարված շահութահարկ		(587,563)	(756,007)
Գործառնական գործունեությամբ (օգտագործված)/ստացված զուտ դրամական միջոցներ		**(28,619,929)**	**(30,937,697)**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(2,256,179)	(610,667)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր		4,684	25,856
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում		(13,937,176)	(3,001,381)
Ներդրումային արժեթղթերի վաճառք		4,311,328	18,562,413
Ստացված շահաբաժիններ	36	-	-
Ներդրումային գործունեությամբ ստացված/(օգտագործված) զուտ դրամական միջոցներ		**(11,877,343)**	**14,976,221**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից			
Բաժնետիրական կապիտալի թողարկումից մուտքեր		-	-
Թողարկված պարտքային արժեթղթերից մուտքեր		23,664,077	2,962,144
Թողարկված պարտքային արժեթղթերից մարումներ		(4,596,298)	684,042
Այլ փոխառությունների ներգրավումից մուտքեր		12,968,797	7,422,956
Այլ փոխառությունների ներգրավումից մարումներ		(9,050,067)	(5,224,963)
Ստորադաս վարկերից մուտքեր		-	-
Ստորադաս վարկերի մարումներ		-	-
Վճարված շահաբաժիններ	23	-	-
Ֆինանսական գործունեությամբ ստացված/(օգտագործված) զուտ դրամական միջոցներ		**22,986,509**	**5,844,179**
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(1,788,000)	665,625
Արժեզրկման պահուստի փոփոխությունների ազդեցությունը		(33,772)	16,706
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում		**(19,332,535)**	**(9,434,966)**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբին		**99,170,819**	**106,030,069**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջին	**7**	**79,838,284**	**96,595,103**

Ներածություն

«ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ «Բանկ») մայր կազմակերպությունն է Խմբում, որը բաղկացած է Բանկից և իր դուստր կազմակերպություններից՝ «ԱԿԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ից և «ԱԿԲԱ Տեխնոլաբ» ՍՊԸ-ից (այսուհետ՝ «Խումբ»):

Բանկը հիմնադրվել է 1996թ.-ին, որպես միացյալ սեփականությամբ կոոպերատիվ բանկ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության: 2006թ. այն վերակազմակերպվել է փակ բաժնետիրական ընկերության և վերանվանվել «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ: 2021թ. Բանկը ենթարկվել է ևս մեկ կազմակերպչական ձևի փոփոխության՝ իրավական կառուցվածքը վերափոխելով բաց բաժնետիրական ընկերության, և վերանվանվելով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ: Նույն թվականին Բանկը գործարկել է «Աշխատակիցների բաժնետմասնակցության ծրագիր» և հաջողությամբ ներկայացրել է առաջնային հրապարակային առաջարկ, որից հետո Բանկի բաժնետոմսերը ցուցակվել են Հայաստանի ֆոնդային բորսայում (AMX): Բանկը գործունեություն է իրականացնում ՀՀ Կենտրոնական բանկի (այսուհետ՝ «ԿԲ») կողմից տրված ընդհանուր բանկային լիցենզիայի հիման վրա և հանդիսանում է ՀՀ ավանդների ապահովագրության պետական համակարգի անդամ:

Հիմնական գործունեության նկարագրություն. Բանկն առաջարկում է մի շարք ֆինանսական ծառայություններ, ներառյալ ավանդների ընդունումը, վարկերի տրամադրումը, ներքին և միջազգային վճարումների մշակումը, դեբետային և վարկային քարտերի թողարկումն ու ձեռքբերումը, տարադրամի փոխանակումը և այլ բանկային ծառայություններ ինչպես մանրածախ, այնպես էլ կորպորատիվ հաճախորդներին: Գլխամասային գրասենյակը գտնվում է Երևանում: Բանկն ունի 65 մասնաճյուղ Երևանում և Հայաստանի այլ մարզերում:
Իրավաբանական հասցեն և գործունեության վայրը. Բանկի գրանցման իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 0002, Արամի փողոց 82-84:

Դուստր ձեռնարկություններ.
• **«ԱԿԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ.** հիմնադրվել է 2003թ.-ի մարտի 30-ին որպես փակ բաժնետիրական ընկերություն Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Ընկերության հիմնական գործունեությունը ֆինանսական վարձակալության գծով գործառնություններն են իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների հետ: Այն ունի ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տրված վարկային կազմակերպության լիցենզիա և ամբողջությամբ պատկանում է Բանկին:
• **«ԱԿԲԱ ՏԵԽՆՈԼԱԲ» ՍՊԸ.** Բանկի 100% դուստր ձեռնարկություն հանդիսացող «ԱԿԲԱ ՏԵԽՆՈԼԱԲ» ՍՊԸ-ն 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված հաշվետու տարվա ընթացքում սկսել է իր գործունեության փակման գործընթացը: Դուստր ընկերության հիմնական գործառույթները հիմնականում ներառում են Խմբի աշխատակիցների համար ուսումնական ծրագրերի իրականացումը: Դուստր ընկերությունը պաշտոնապես լուծարվել է 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված հաշվետու տարվա ընթացքում:

Ստորև ներկայացված է Բանկի բաժնետերերի կազմը 2026թ. մարտի 31-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Բաժնետեր	**31/03/2026թ. , %**	**31/12/2025թ. , %**
«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ	75.00	75.00
Société de Promotion et de Participation pour la Coopération Economique («Proparco»)	10.00	10.00
«ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ	2.1	1.8
Sacam International SAS	-	-
Այլ	12.9	13.2
Ընդամենը	**100.0**	**100.0**

Բաժնետերերի կառուցվածքը.
- **«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ**. Բանկի ամենախոշոր բաժնետերն է և չունի մեկ վերահսկող կողմ: «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ - հիմնադրվել է 2017թ. մայիսի 6-ին՝ Բանկի նախկին բաժնետերեր հանդիսացող Գյուղական փոխօգնության 10 ասոցիացիաների կողմից, որոնք նախկինում հանդիսանում էին Բանկի ուղղակի բաժնետեր: Այս ասոցիացիաները գործում են որպես ոչ կառավարական կազմակերպություններ (ՀԿ) Հայաստանի 10 մարզերում, ստեղծվել

են գյուղատնտեսության զարգացմանը նպաստելու համար և միասին վերցրած ունեն մոտ 74,306 անդամ:

- **«Société de Promotion et de Participation pour la Coopération Economique» («Proparco»).** Ֆրանսիական զարգացման ֆինանսավորման կառույց է, որը հանդիսանում է Զարգացման ֆրանսիական գործակալության («AFD») դուստր ձեռնարկություն, և զբաղվում է զարգացող երկրներում մասնավոր ներդրումների խթանմամբ: Այն աջակցում է այնպիսի ոլորտային ծրագրերի, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, ենթակառուցվածքները և վերականգնվող էներգիան՝ զարգացող շուկաների տնտեսական աճը խթանելու նպատակով:
- **«ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ.** հայաստանյան ներդրումային ընկերություն է, որն իր հաճախորդներին տրամադրում է ֆինանսական և ներդրումային ծառայություններ:
- **«SACAM International»-ը** ֆրանսիական օրենսդրության համաձայն հիմնադրված ընկերություն է և ամբողջությամբ պատկանում է «SAS Rue de la Boétie» հոլդինգային ընկերությանը, որը վերահսկում է «Crédit Agricole SA»-ի կապիտալը:
- **Այլ բաժնետերերը** ներառում են իրավաբանական և ֆիզիկական անձինք, ներառյալ աշխատակիցները, որոնք միասին տիրապետում են բաժնետոմսերի մնացած մասին:

Բանկի բաժնետոմսերը ցուցակված են Հայաստանի ֆոնդային բորսայում:

Խումբն ունի ներդրումների պորտֆել և ռազմավարական շահեր: Խմբի նշանակալի գործընկերներից է **«Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն**, որտեղ Խումբին է պատկանում բաժնետոմսերի 49%-ը:

Ներկայացման արժույթ: Սույն համախմբված ֆինանսսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով («ՀՀ դրամ»), եթե այլ բան նշված չէ:

1 Խմբի գործառնական միջավայրը

Ընդհանուր

Բնապահպանական, սոցիալական և կառավարում (ԲՍԿ): 2023թ. Խումբն իրականացրել է կլիմայի փոփոխության ազդեցության գնահատում Բանկի գյուղատնտեսական պորտֆելի որակական ցուցանիշների վրա, որի արդյունքների համաձայն, ՀՀ պաշտոնական տվյալներով կլիմայի փոփոխության մինչև 2030թ. կանխատեսումային տվյալները էական ազդեցություն չեն ունենա գյուղատնտեսական վարկերի պորտֆելի որակը բնութագրող փոփոխականների վրա: Քանի որ այս կանխատեսումներում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել, 2024թ, համար լրացուցիչ երկարաժամկետ կանխատեսումային վերլուծությունները անհրաժեշտ չեն համարվել: Այնուամենայնիվ, Խումբը ապագայում կարող է անհրաժեշտության դեպքում վերանայել իր վերլուծությունը:

Պատերազմ Ռուսաստանի և Ուկրաինայի միջև. 2022թ. փետրվարից հետո, Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև ռազմական հակամարտության պատճառով մի շարք երկրներ պատժամիջոցներ սահմանեցին Ռուսաստանի Դաշնության դեմ: Հակամարտությունը ազդում է ոչ միայն երկու երկրների տնտեսական ակտիվության վրա, այլև համաշխարհային տնտեսության վրա: Պատժամիջոցների հետևանքով աշխարհի շատ երկրներում ապրանքների և պարենային ապրանքների գները բարձրացել են, ռեսուրսների մատակարարման միջև հաստատված կապերը խաթարվել են, գնաճը նույնպես ազդում է գների վրա, և վերլուծաբանները կանխատեսում են նաև տնտեսական հետևանքներ համաշխարհային տնտեսության ոլորտների համար:

Ռուսաստան-Ուկրաինա պատերազմի բռնկումից ի վեր ԵՄ արտահանման հոսքերի կողմնորոշվածությունը շարունակաբար ավելի մեծ ծավալով փոխվում է դեպի Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի այլ տնտեսություններ: Այս կողմնորոշվածության փոփոխությունը խթանել է հարակից առևտրային և տրանսպորտային ծառայությունները, կրճատել է մրցակցությունը դեպի Ռուսաստան հայրենական արտադրանքի արտահանման համար և տարածաշրջանում ակտիվացրել է նախկինում պասիվ ներդրումները:

2022թ. մարտից ԵՄ-ի առևտրային պատժամիջոցները գրեթե կիսով չափ կրճատել են բլոկի ապրանքների արտահանումը Ռուսաստան և Բելառուս:

Կարճաժամկետ հեռանկարում հակամարտությունը բանակցային ճանապարհով կարգավորելու հավանականությունը մնում է ցածր, և կարելի է ակնկալել երկարատև պատերազմ և առևտրային

պատժամիջոցների շարունակում: Սա, ամենայն հավանականությամբ, երկարատև ազդեցություն կունենա համաշխարհային առևտրի օրինաչափությունների վրա: Առևտրային հոսքերի փոփոխությունը և տնտեսական ակտիվության ներհոսքը Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում կայուն ազդեցություն կունենա ենթակառուցվածքների զարգացման, SS և արտադրության ոլորտների վրա: Կառավարությունները պետք է զգուշորեն հավասարակշռեն Ռուսաստանի հետ կապերի պահպանման տնտեսական օգուտները՝ երկրորդական պատժամիջոցներից խուսափելու համար:
Թեև Ռուսաստանից դրամական փոխանցումների ներհոսքի անկումը շարունակվում է, Հայաստանի տնտեսությունը 2024թ. գրանցել է կայուն աճ՝ 5.9% (2023թ.՝ 8.7%): Ըստ տնտեսության ոլորտների վերլուծելիս՝ տնտեսական ակտիվությունը կշարունակի պայմանավորված լինել շինարարության, առևտրի և արդյունաբերության ոլորտների աճով:

Խումբը իր PD-ի կանխատեսումները և ԱՎԿ-ի հաշվարկները պատրաստելիս հաշվի է առել վերը նշված դիտարկումներն ու ակնկալիքները:

Հայաստանը վերջին տարիներին ենթարկվել է մի շարք էական սոցիալ-քաղաքական և տնտեսական ցնցումների, ընդ որում, 2020թ.՝ երկակի ուժով՝ հաշվի առնելով COVID-19 համավարակի մարտահրավերները և Ադրբեջանի հետ լարվածության մեծացումը: Առանձնահատուկ ուշադրության արժանի իրադարձություններից է 2023թ. ավելի քան 100,000 էթնիկ հայերի ներհոսքը Լեռնային Ղարաբաղից Հայաստան՝ պայմանավորված անվտանգային լարվածության աճով՝ Ադրբեջանի կառավարության կողմից Լեռնային Ղարաբաղը լիովին վերահսկողության տակ վերցնելու հետևանքով:

Ըստ կարգավորող մարմնի գնահատականների, չնայած վերջին երկու տարիներին թողարկման ճեղքվածքը դրական է եղել, այն այժմ հիմնականում կրճատվել, և ակնկալվում է, որ ՀՆԱ-ն կվերադառնա իր ներուժի մակարդակին: Միևնույն ժամանակ, ԿԲ-ի թողարկման ճեղքվածքի գնահատականները արտացոլում էին ոչ ներառական աճը՝ հաշվի առնելով ապագա տնտեսական պայմանների վերաբերյալ երկարատև անորոշությունները: Այս դինամիկան կապված է ոչ կառուցվածքային աճի հետ, քանի որ վերջին տնտեսական ընդլայնման մեծ մասը կարող է պայմանավորված լինել ժամանակավոր կամ նեղ ոլորտային գործոններով, այլ ոչ թե արտադրողականության, կարողությունների և երկարաժամկետ աճի բաղադրիչների կայուն բարելավմամբ:

Ակնկալվում է, որ 2025թ.-ին գնաճը կհասնի 2.8 տոկոսի՝ տոկոսադրույքների կրճատման և արժույթի թուլացման պատճառով:

Ապագայի կանխատեսումների առումով, թեև տնտեսական հեռանկարը շարունակում է դրական մնալ՝ 2025թ. 5% կայուն աճի կանխատեսումներով, երկարաժամկետ աճը շարունակում է մնալ սահմանափակված՝ ելնելով համակարգային մի շարք խնդիրներից, ինչպիսիք են Հայաստանի կախվածությունը ապրանքների արտահանումից, լոգիստիկ մարտահրավերները և Ադրբեջանի հետ շարունակվող աշխարհաքաղաքական լարվածությունը: Այս գործոնները կշարունակեն ռիսկ ներկայացնել, հատկապես տարածաշրջանային անվտանգության զարգացող դինամիկայի ներքո:

Fitch Ratings-ը հաստատել է Հայաստանի երկարաժամկետ արտարժույթով թողարկողի դեֆոլտի վարկանիշը (IDR) «BB-»՝ կայուն կանխատեսմամբ, 2025թ. հունվարի 24-ին:
Ընթացիկ և ապագա տնտեսական իրավիճակի երկարաժամկետ ազդեցությունները դժվար է գնահատել, և ղեկավարության ներկա ակնկալիքներն ու գնահատականները կարող են տարբերվել իրական արդյունքներից:

Ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) չափման նպատակով Խումբն օգտագործում է հիմնավորելի կանխատեսումային տեղեկատվություն, ներառյալ մակրոտնտեսական ցուցանիշների պաշտոնական կանխատեսումներ հուսալի աղբյուրներից: Այնուամենայնիվ, ինչպես ցանկացած տնտեսական կանխատեսումներում, այս կանխատեսումների գծով ևս՝ ենթադրությունները և դրանց տեղի ունենալու հավանականությունը բնորոշվում է անորոշության բարձր աստիճանով, ուստի փաստացի արդյունքները կարող են էապես տարբերվել կանխատեսումներից: Ծանոթագրություն 4-ը ներառում է ավելի մանրամասն տեղեկատվություն այն մասին, թե ինչպես է Խումբը կանխատեսումային տեղեկատվությունը ներառել ակնկալվող վարկային կորուստների չափման մոդելներում:

2 Պատրաստման հիմքը

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀՄՍԽ կողմից հրապարակված՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան (այսուհետ՝ «ՖՀՄՍ հաշվառման ստանդարտներ»):

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, փոփոխված՝ իրական արժեքով ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչմամբ, տարածքների և սարքավորումների (հող, շենք և փոխադրամիջոց) վերագնահատմամբ, ֆինանսական գործիքների՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով (“FVTPL”) և իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով դասակարգմամբ («FVOCI») և սովորական բաժնետոմսերի իրական արժեքով դասակարգմամբ՝ աշխատակիցների բաժնեմասնակցության ծրագրի համար: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական սկզբունքները ներկայացված են ստորև: Այդ սկզբունքները հետևողականորեն կիրառվել են այն բոլոր ժամանակաշրջանների համար, որոնք ներկայացված հաշվետվություններում, եթե այլ բան նշված չէ:

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները հասցեագրված են դրանց առաջնային օգտագործողներին, որոնք են՝ ներդրողները, որոնք վարկով տրամադրում կամ հատկացնում են կապիտալ հաշվետու կազմակերպությանը: Այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում ենթադրվել է, որ դրանց առաջնային օգտագործողները տիրապետում են բավարար գիտելիքների բիզնեսի և տնտեսական գործունեության վերաբերյալ և կատարում են տեղեկատվության հանգամանալից վերանայում և վերլուծություն: Այնուամենայնիվ լինում են դեպքեր, երբ նույնիսկ իրազեկ և հանգամանալից օգտագործողները կարող են կարիք ունենալ խորհրդատուի օգնության՝ այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բարդ տնտեսական երևույթների մասին տեղեկատվությունը ըմբռնելու համար:

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների նպատակն է՝ բացահայտել միայն այն տեղեկատվությունը, որը ղեկավարությունը համարում է էական առաջնային օգտագործողների համար: Ղեկավարությունը ձգտում է չնվազեցնել այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հասկանալիությունը՝ էական տեղեկատվությունը ոչ էական տեղեկատվությամբ քողարկելու միջոցով: Հետևաբար, համապատասխան բացահայտումներին վերաբերող ծանոթագրություններում բացահայտվում են միայն հաշվապահական հաշվառման քաղաքականության էական դրույթները, ըստ կիրառելիության:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական դրույթներ

Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում. Ասոցիացված կազմակերպություն-ներում ներդրումները հաշվառվում են բաժնեմասնակցության մեթոդով և սկզբնապես ճանաչվում են ձեռքբերման արժեքով՝ ներառյալ գուդվիլը:

Հաշվեկշռային արժեքի ապագա փոփոխությունները արտացոլում են համախմբումից հետո ասոցիացված կազմակերպության զուտ ակտիվներում Խմբի մասնաբաժնի փոփոխությունները: Խմբի մասնաբաժինը ասոցիացված կազմակերպության շահույթում կամ վնասում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների համախմբված հաշվետվությունում, իսկ պահուստների փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Իրական արժեքի չափում. Խումբը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով պահվող ֆինանսական գործիքները և ոչ ֆինանսական ակտիվները չափում է իրական արժեքով՝ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Իրական արժեքը չափվում է ՖՀՄՍ 13-ի պահանջներին համապատասխան: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքները բացահայտված են Ծանոթագրություն 34-ում:

Սկզբնական ճանաչում. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների բոլոր կանոնավոր գնումներն ու վաճառքները ճանաչվում են գործարքի ամսաթվին, այսինքն՝ այն ամսաթվին, երբ Խումբը պարտավորվում ձեռք բերել ակտիվը կամ պարտավորությունը: Կանոնավոր են համարվում ֆինանսական ակտիվների և պարտավորությունների այնպիսի

գնումները կամ վաճառքները, որոնք պահանջում են ակտիվի մատակարարում տվյալ շուկայում գործող նորմերով կամ գործարար սովորույթներով սահմանված ժամկետի ընթացքում:

Սկզբնական չափում. Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական գործիքների դասակարգումը կախված է դրանց պայմանագրային պայմաններից և գործիքների կառավարման բիզնես մոդելից: Ֆինանսական գործիքներն ի սկզբանե չափվում են իրենց իրական արժեքով և որը ճշգրտվում է գործարքին ուղղակիորեն վերագրելի միջնորդավճարների և ծախսերի չափով այն գործիքների դեպքում, որոնք իրական արժեքով չեն վերագնահատվում շահույթի կամ վնասի միջոցով:

Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական գործիքի իրական արժեքի լավագույն ապացույցը գործարքի գինն է: Եթե Խումբը գտնում է, որ սկզբնական ճանաչման ժամանակ իրական արժեքը տարբերվում է գործարքի գնից, և եթե այդ իրական արժեքը հիմնված է շուկայում նմանատիպ ակտիվի կամ պարտավորության գնանշված գնի վրա, կամ հիմնված է գնահատման տեխնիկայի վրա, որն օգտագործում է միայն դիտարկելի շուկաների տվյալները, ապա սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը ճանաչում է իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերությունը շահույթում կամ վնասում. բոլոր մյուս դեպքերում, ֆինանսական գործիքի սկզբնական չափումը ճշգրտվում է այնպես, որ սկզբնական ճանաչման ժամանակ իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերությունը փոխանցվի ապագա ժամանակաշրջաններին: Սկզբնական ճանաչումից հետո Խումբը ճանաչում է հետաձգված տարբերությունը որպես շահույթ կամ վնաս, միայն այն դեպքում, երբ մուտքային տվյալները դառնում են դիտարկելի կամ եթե գործիքը ապաճանաչվում է:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների չափման կատեգորիաներ. Խումբը դասակարգում է իր բոլոր ֆինանսական ակտիվները՝ հիմնվելով ակտիվների կառավարման բիզնես մոդելի և ակտիվի պայմանագրային պայմանների վրա, չափումն իրականացնելով՝

- Ամորտիզացված արժեքով
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով,
- Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Խումբը իր ածանցյալ և առևտրային պորտֆելը դասակարգում և չափում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Խումբը դասակարգում է Visa C-ի բաժնետոմսերը որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող պարտքային գործիքներ: Խումբը կարող է հաշվառել ֆինանսական գործիքները իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, եթե այդ կերպ վերանում է կամ զգալիորեն նվազեցվում են չափման կամ ճանաչման անհամապատասխանությունները:

Ֆինանսական պարտավորությունները, բացի վարկային հանձնառություններից և երաշխիքների պայմանագրերից, չափվում են ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, երբ դրանք պահվում են վաճառքի համար, ածանցյալ գործիքներ են կամ կիրառվում է իրական արժեքով հաշվառում:

Բանկերի նկատմամբ պահանջները, հաճախորդներին տրված վարկեր, ներդրումային արժեթղթերը չափվում են ամորտիզացված արժեքով

Խումբը չափում է բանկերի նկատմամբ պահանջները, հաճախորդներին տրված վարկեր, ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթերը միայն այն դեպքում, եթե միաժամանակ բավարարվում են հետևյալ երկու պայմանները՝

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ֆինանսական ակտիվները պահել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով.
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և դրա չմարված մասի դիմաց տոկոսների վճարումներ (SPPI):

Այս պայմանների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 4-ում:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ. Խումբը կիրառում է իրական արժեքով՝ այլ համապարփակ

ֆինանսական արդյունքի միջոցով պարտքային գործիքների դասակարգում, եթե միաժամանակ առկա են հետևյալ երկու պայմանները.

- Գործիքը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ինչպես պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը, այնպես էլ ֆինանսական ակտիվների վաճառքը,
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բավարարում են SPPI ստուգման չափանիշներին:

Երաշխիքներ, ակրեդիտիվներ և վարկային պարտավորություններ. Խումբը տրամադրում է ֆինանսական և կատարողական երաշխիքներ, ակրեդիտիվներ և վարկային պարտավորություններ:
Երաշխիքի պայմանագրերը ֆինանսական հաշվետվություններում սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, որը ստացված վարձատրությունն է: Սկզբնական ճանաչումից հետո ամեն երաշխիքի համար Խմբի պարտավորությունը չափվում է հետևյալ գումարներից առավելագույնի չափով. սկզբնական ճանաչված արժեք՝ հանած կուտակված ամորտիզացիա, և ԱՎԿ պահուստ:

Վարկավորման չօգտագործված պարտավորվածությունները և ակրեդիտիվները պարտավորվածություններ են, որի շրջանակներում պարտավորվածության տևողության ընթացքում Խումբը հաճախորդին պետք է տրամադրի վարկ՝ նախապես սահմանված պայմաններով: Ինչպես ֆինանսական երաշխիքի պայմանագրերի դեպքում՝ այդ պայմանագրերը ընդգրկված են ակնկալվող վարկային կորուստների պահանջների մեջ:

Ֆինանսական վարձակալության համար տրված կանխավճարներ. Խումբը վարձակալներից ստացված կանխավճարները և մատակարարներին տրված կանխավճարները դիտարկում է որպես դրամական հոդվածներ և ճանաչում է դրանց գծով ֆինանսական պարտավորությունները և ֆինանսական ակտիվները:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերադասակարգում. Խումբը չի վերադասակարգում իր ֆինանսական ակտիվները՝ դրանց սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն բացառիկ հանգամանքների, որոնց դեպքում Խումբը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ. Դրամական միջոցներ և դրանց համարժեքները ներառում են կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, բանկերում Նոստրո հաշիվները և ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցները, ներառյալ պարտադիր պահուստները ՀՀ դրամով՝ զերծ պայմանագրային սահմանափակումներից: Երեք ամսից ավելի ժամկետով սահմանափակված միջոցները բացառվում են դրամական միջոցներից և դրանց համարժեքներից, ինչպես ֆինանսական վիճակի մասին, այնպես էլ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում:

Դրամական միջոցները և դրամական միջոցների համարժեքները հաշվառվում են ԱՀ-ում, քանի որ. (i) դրանք պահվում են պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով, և այդ դրամական միջոցների հոսքերն իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և տոկոսագումարի վճարում, և (ii) դրանք չեն որոշված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Պարտադիր դրամական մնացորդներ ԿԲ-ում. ԿԲ-ում պարտադիր դրամական մնացորդները հաշվառվում են ամորտիզացված արժեքով և ներկայացնում են անտոկոս պարտադիր պահուստային ավանդներ, որոնք հասանելի չեն Խմբի ամենօրյա գործունեությունը ֆինանսավորելու համար, և, հետևաբար, չեն համարվում դրամական միջոցների և դրանց համարժեքների մաս դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունում:

Հետգնման ու հակադարձ հետգնման պայմանագրեր և արժեթղթերի գծով փոխառության գործառնություններ. Վաճառքի և հետգնման պայմանագրերը («ռեպո») դիտվում են որպես ապահովված ֆինանսավորման գործարքներ: Վաճառքի և հետգնման պայմանագրերով վաճառված արժեթղթերը շարունակում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում և եթե ստացողը պայմանագրով կամ գործարար սովորույթի համաձայն իրավունք ունի դրանք վաճառել կամ վերագրավադրել, վերադասակարգվում են որպես վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է բանկերի կամ

հաճախորդների միջոցների կազմում: Հետադարձ վաճառքի պայմանագրով արժեթղթերի ձեռքբերումը (հակադարձ ռեպո) արտացոլվում է բանկերում տեղաբաշխված միջոցների կամ հաճախորդներին տրված վարկերի կազմում՝ կախված իրավիճակից: Վաճառքի գնի և ձեռք բերման գնի միջև տարբերությունը դիտարկվում է որպես տոկոսային եկամուտ և հաշվեգրվում ռեպո պայմանագրի ժամկետի ընթացքում՝ արդյունավետ եկամտաբերության մեթոդով:
Առ 31մարտի 2026թ.	635,884,961	8,273,360	19,755,918	7,073	**663,921,311**

Հազ. ՀՀ դրամ	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**POCI**	**Ընդամենը**
ԱՎԿ պահուստ 2026թ. հունվարի 1-ի դրությամբ	**2,065,780**	**480,753**	**7,800,759**	**2,008**	**10,349,301**
Ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա ազդող փոփոխություններ.					
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	557,393	-	-	-	**557,393**
Մարված ակտիվներ	(154,867)	(5,671)	(174,204)	(15)	**(334,757)**
Տեղափոխումներ Փուլ 1	19,032	(19,032)	-	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 2	(72,907)	72,907	-	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 3	(242,670)	(369,922)	612,593	-	**-**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը					
ԱՎԿ ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ	(10,582)	461,840	832,532	-	**1,283,790**
ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ	92,922	1,273	578,748	1,062	**674,006**
Ընդամենը տեղափոխումներ՝ ժամանակաշրջանի ընթացքում վարկային կորստի գծով պահուստի վրա ազդեցությամբ.	**188,321**	**141,395**	**1,849,668**	**1,047**	**2,180,431**
Տեղափոխումներ՝ առանց ժամանակաշրջանի ընթացքում վարկային կորստի գծով պահուստի վրա ազդեցության					
Ձեղչի հակադարձում (նվազեցված տոկոսային հասույթից)	-	-	241,192	-	**241,192**
Դուրս գրված գումարներ	-	-	(343,266)	-	**(343,266)**
Արտարժույթի ճշգրտումներ	(2,941)	(168)	(24,340)	-	**(27,450)**
Առ 31 մարտի 2026թ.	**2,251,160**	**621,980**	**9,524,013**	**3,055**	**12,400,208**

Վարկերը առավելապես տրամադրվել են ՀՀ հաճախորդներին, որոնք իրենց գործունեությունը իրականացնում են տնտեսության հետևյալ ոլորտներում.

Հազ. ՀՀ դրամ	**31/03/2026թ.**	**31/12/2025թ.**
Ֆիզիկական անձինք	365,139,522	356,589,860
Սննդի և ըմպելիքների արտադրություն	95,755,133	94,867,549
Առևտուր	51,327,420	49,207,650
Շինարարություն	55,939,695	55,483,275
Արտադրություն	20,011,054	17,500,659
Գյուղատնտեսություն	40,098,685	34,201,007
Տրանսպորտ	9,453,996	9,468,450
Ֆինանսական հատված	12,117,059	12,693,588
Էներգիա	12,469,942	12,666,320
Այլ	1,608,804	1,473,947
Արժեզրկման գծով պահուստ	(12,400,208)	(10,349,301)
Հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով, զուտ	**651,521,103**	**633,803,003**

12 Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ

Հազ. ՀՀ դրամ	**31/03/2026թ.**	**31/12/2025թ.**
Ֆինանսական վարձակալություն կորպորատիվ հաճախորդներին	97,151,415	96,459,134
Ֆինանսական վարձակալություն մանրածախ հաճախորդներին	7,624,346	7,137,569
Համախառն ներդրումներ ֆինանսական վարձակալությունում	**104,775,761**	**103,596,703**
Արժեզրկման գծով պահուստ	(928,698)	(555,350)
Զուտ ներդրումները ֆինանսական վարձակալությունում, հանած արժեզրկումը	**103,847,063**	**103,041,353**

Խումբը վարձակալություններ է տվել ֆիզիկական անձանց, փոքր և միջին ձեռնարկություններին, տնտեսության տարբեր ոլորտներում գործող գյուղացիական տնտեսություններին սարքավորումներ և արտադրական ռեսուրսներ ձեռք բերելու համար:

2026թ. մարտի 31-ի դրությամբ ֆինանսական վարձակալության դեբիտորական պարտքերի հետ կապված համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ-ի փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Համախառն հաշվեկշռային արժեքը 2026թ. հունվարի 1-ի դրությամբ	**101,775,817**	**778,317**	**1,042,568**	**103,596,703**
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	13,591,359	-	-	**13,591,359**
Մարված ակտիվներ	(11,503,877)	(115,023)	(243,742)	**(11,862,643)**
Տեղափոխումներ Փուլ 1	326,456	(326,456)	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 2	(1,050,129)	1,050,129	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 3	(63,620)	(147,139)	210,759	**-**
Արտարժույթի ճշգրտումներ	(499,461)	(2,224)	(7,889)	**(509,574)**
Դուրսգրում	-	-	(40,084)	**(40,084)**
Առ 31 մարտի 2026թ.	**102,576,543**	**1,237,606**	**961,611**	**104,775,761**

Հազ. ՀՀ դրամ	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
ԱՎԿ պահուստ 2026թ. հունվարի 1-ի դրությամբ	**181,101**	**12,971**	**361,278**	**555,350**
Ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա ազդող փոփոխություններ.				
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	54,730	-	-	**54,730**
Մարված ակտիվներ	(2,169)	(133)	(52,736)	**(55,038)**
Տեղափոխումներ Փուլ 1	2,819	(2,819)	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 2	(4,549)	4,549	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 3	(16,250)	(6,421)	22,671	**-**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը				
ԱՎԿ ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ	(1,694)	36,913	83,549	**118,768**
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	110,557	13,908	163,567	**288,031**
Ընդամենը տեղափոխումներ՝ ժամանակաշրջանի ընթացքում վարկային կորստի գծով պահուստի վրա ազդեցությամբ.	**143,445**	**45,996**	**217,050**	**406,490**
Տեղափոխումներ՝ առանց ժամանակաշրջանի ընթացքում վարկային կորստի գծով պահուստի վրա ազդեցության				
Ձեղչի հակադարձում (ճանաչված տոկոսային հասույթում)	-	-	13,040	**13,040**
Դուրսգրում	-	-	(40,084)	**(40,084)**
Արտարժույթի ճշգրտումներ	(1,521)	(25)	(4,552)	**(6,097)**
Առ 31 մարտի 2026թ.	**323,025**	**58,942**	**546,731**	**928,698**

Բռնագանձված ակտիվներ. Ժամանակաշրջանի ընթացքում բռնագանձված և 2026թ. մարտի 31-ի դրությամբ պահվող ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմում է 122,989 հազ. ՀՀ դրամ (2025 թ.՝ 81,753 հազ. ՀՀ դրամ):

Ֆինանսական վարձակալության պորտֆելի ճյուղային և աշխարհագրական վերլուծություն Կորպորատիվ հաճախորդների գծով ֆինանսական վարձակալությունը հիմնականում Հայաստանի Հանրապետությունում գտնվող հաճախորդների գծով է, որոնք գործում են հետևյալ տնտեսական ոլորտներում.

Հազ. ՀՀ դրամ	**31/03/2026թ.**	**31/12/2025թ.**
Շինարարություն	20,067,069	20,574,887
Սննդի և խմիչքների արտադրություն	14,781,214	15,818,078
Գյուղատնտեսություն	9,062,061	9,377,692
Ֆինանսական վարձակալություն մանրածախ հաճախորդներին	7,624,346	7,137,569
Առևտուր	10,494,197	10,250,094
Ծառայությունները	17,772,418	17,604,361
Արտադրություն	13,301,120	12,661,523
Տրանսպորտ	5,101,788	4,121,002
Հիդրոէլեկտրակայաններ	5,108,198	4,608,875
Կաշվե իրերի արտադրություն	26,795	36,913
Այլ	1,436,555	1,405,709
Արժեզրկման գծով պահուստ	(928,698)	(555,350)
Զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում	**103,847,063**	**103,041,353**

13 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հիմնական միջոցների, օգտագործման իրավունքի ձևով ակտիվների և ոչ նյութական ակտիվների տեղաշարժերը հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	**Հող**	**Շենքեր**	**Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր**	**Սարքա-վորումներ**	**Հարմարանքներ և կցամասեր**	**Փոխադրա-միջոցներ**	**Ծրագրային ապահովում և լիցենզիաներ**	**Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ**	**Ընդամենը**
Արժեքը/վերագնահատված գումարը									
31 դեկտեմբերի 2025թ.	**1,274,570**	**10,957,607**	**2,112,199**	**14,842,597**	**4,208,445**	**544,154**	**10,217,701**	**6,997,619**	**51,154,892**
Ավելացումներ	-	257,401	153,747	618,617	616,576	-	206,869	332,910	**2,186,121**
Օտարումներ և դուրսգրումներ	-	-	(257,401)	(13,146)	(23,991)	(6,683)	(122,938)	(278,374)	**(702,533)**
Վերագնահատման ազդեցությունը շահույթի կամ վնասի վրա	-	-	-	-	-	-	-	-	**-**
Վերագնահատման ազդեցությունը այլ համապարփակ ֆինանսական արդյունքի վրա	-	-	-	-	-	-	-	-	**-**
Փոփոխություն	-	-	-	-	-	-	-	219,803	**219,803**
Շահույթին կամ վնասին վերագրվող արժեզրկում	-	-	-	-	-	-	-	-	**-**
31 մարտի 2026թ.	**1,274,570**	**11,215,009**	**2,008,546**	**15,448,068**	**4,801,030**	**537,470**	**10,301,631**	**7,271,958**	**52,858,282**
Կուտակված մաշվածություն, ամորտիզացիա և արժեզրկում 31 դեկտեմբերի 2025թ.	**-**	**41,258**	**995,552**	**7,152,404**	**2,430,944**	**11,525**	**5,181,106**	**3,412,543**	**19,225,332**
Մաշվածության գծով ծախս	-	59,996	181,947	271,082	62,010	16,379	393,612	317,689	**1,302,715**
Օտարումներ և դուրսգրումներ	-	-	(300,406)	(10,668)	(16,804)	(175)	(104,598)	(120,062)	**(552,714)**
Վերագնահատման ազդեցությունը այլ համապարփակ ֆինանսական արդյունքի վրա									
Փոփոխություն	-								
31 մարտի 2026թ.	**-**	**101,254**	**877,093**	**7,412,818**	**2,476,150**	**27,729**	**5,470,120**	**3,610,170**	**19,975,334**
Զուտ հաշվեկշռային արժեք 31 մարտի 2026թ.	**1,274,570**	**11,113,755**	**1,131,452**	**8,035,250**	**2,324,880**	**509,742**	**4,831,511**	**3,661,788**	**32,882,948**

Հազ. ՀՀ դրամ	**Հող**	**Շենքեր**	**Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր**	**Սարքա-վորումներ**	**Հարմարանքներ և կցամասեր**	**Փոխադրա-միջոցներ**	**Ծրագրային ապահովում և լիցենզիաներ**	**Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ**	**Ընդամենը**
Արժեքը/վերագնահատված գումարը									
31 դեկտեմբերի 2024թ.	**1,531,165**	**9,889,432**	**1,491,240**	**13,650,510**	**4,008,910**	**610,657**	**9,309,796**	**6,282,550**	**46,774,260**
Ավելացումներ	-	29,531	620,959	2,014,695	451,918	159,055	1,356,671	794,859	**5,427,688**
Օտարումներ և դուրսգրումներ	(13,200)	(791,239)	-	(822,608)	(252,383)	(251,700)	(448,767)	(82,421)	**(2,662,318)**
Վերագնահատման ազդեցությունը շահույթի կամ վնասի վրա	(54,379)	(234,303)	-	-	-	(3,896)	-	-	**(292,577)**
Վերագնահատման ազդեցությունը այլ համապարփակ ֆինանսական արդյունքի վրա	(189,016)	2,064,186	-	-	-	30,038	-	-	**1,905,208**
Փոփոխություն	-	-	-	-	-	-	-	2,631	**2,631**
Շահույթին կամ վնասին վերագրվող արժեզրկում	-	-	-	-	-	-	-	-	**-**
31 դեկտեմբերի 2025թ.	**1,274,570**	**10,957,607**	**2,112,199**	**14,842,597**	**4,208,445**	**544,154**	**10,217,701**	**6,997,619**	**51,154,892**
Կուտակված մաշվածություն, ամորտիզացիա և արժեզրկում 31 դեկտեմբերի 2024թ.	**-**	**395,901**	**684,654**	**6,851,549**	**2,443,913**	**143,619**	**4,573,031**	**2,567,509**	**17,660,176**
Մաշվածության գծով ծախս	-	230,195	354,461	991,338	218,474	79,054	1,040,388	1,002,034	**3,915,944**
Օտարումներ և դուրսգրումներ	-	(584,838)	(43,563)	(690,483)	(231,443)	(211,148)	(432,313)	(157,000)	**(2,350,788)**
Վերագնահատման ազդեցությունը այլ համապարփակ ֆինանսական արդյունքի վրա									
Փոփոխություն	-								
31 դեկտեմբերի 2025թ.	**-**	**41,258**	**995,552**	**7,152,404**	**2,430,944**	**11,525**	**5,181,106**	**3,412,543**	**19,225,332**
Զուտ հաշվեկշռային արժեք 31 դեկտեմբերի 2025թ.	**1,274,570**	**10,916,349**	**1,116,647**	**7,690,193**	**1,777,501**	**532,629**	**5,036,594**	**3,585,076**	**31,929,561**

14 Հարկում

Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է հետևյալ հոդվածներից.

Հազ. ՀՀ դրամ	**31/03/2026թ.**	**31/03/2025թ.**
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	1,667,859	2,004,951
Հետաձգված հարկային կրեդիտ	316,031	31,595
Շահութահարկի գծով ծախս	**1,983,890**	**2,036,546**

2026թ-ի մարտի 31-ի դրությամբ ընթացիկ և հետաձգված հարկերի համար կիրառելի հարկային դրույքաչափը 18% է (2025թ.՝ 18%): Շահութահարկի արդյունավետ դրույքաչափը տարբերվում է շահութահարկի՝ օրենքով սահմանված դրույքաչափից: Օրենքով սահմանված դրույքաչափի հիման վրա շահութահարկի գծով ծախսի համաձայնեցումը իրականի հետ հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	**31/03/2026թ.**	**31/03/2025թ.**
Շահույթ մինչև հարկումը	**9,573,922**	**9,820,107**
Օրենքով սահմանված հարկի դրույքաչափ	18%	18%
Շահութահարկի գծով ծախս՝ օրենքով սահմանված դրույքաչափով	**1,723,306**	**1,767,619**
Չնվազեցվող ծախսեր, զուտ	260,584	268,927
Շահութահարկի գծով ծախս	**1,983,890**	**2,036,546**

Չնվազեցվող ծախսերը/եկամուտները հիմնականում վերաբերում են ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից ստացված օգուտներին/վնասներին, աշխատակիցներին տրվող այլ հատուցումներին, ներկայացուցչական որոշ ծախսերին, որոշ անդամավճարներին, պայմանական պարտավորությունների պահուստին և այլն: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները և դրանց շարժը հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված է ստորև.

Հազ. ՀՀ դրամ	**Մնացորդ առ 1 հունվարի 2025թ.**	**Ժամանակավոր տարբերությունների ծագում և հակադարձում**		**Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2025թ.**	**Ժամանակավոր տարբերությունների ծագում և հակադարձում**		**Մնացորդ առ 31 մարտի 2026թ.**
		Շահույթի կամ վնասի մասին հաշվե-տվությու-նում	**Այլ համա-պարփակ ֆինան-սական արդյուն-քի մասին հաշվե-տվությու նում**		**Շահույթի կամ վնասի մասին հաշվե-տվությու-նում**	**Այլ համա-պարփակ ֆինան-սական արդյուն-քի մասին հաշվե-տվությունում**	
Հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**5,449**	(1,350)	-	**4,099**	6,079	-	**10,178**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	**(13,094)**	10,210	-	**(2,884)**	1,131	-	**(1,753)**
Պահանջներ բանկերի նկատմամբ	**(6,235)**	(23,858)	-	**(30,094)**	(15,393)	-	**(45,486)**
Ներդրումային արժեթղթեր	**(652,112)**	(54,620)	(37,550)	**(744,282)**	1,280	(2,087)	**(745,089)**
Հաճախորդներին տրված վարկեր	**(537,410)**	(24,216)	-	**(561,626)**	(188,250)	-	**(749,876)**
Ֆինանսական վարձակալություն	**70,753**	104,791	-	**175,543**	(7,466)	-	**168,077**
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	**(297,377)**	(106,219)	-	**(403,596)**	(87,495)	-	**(491,091)**
Հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	**(580,654)**	(149,382)	(337,029)	**(1,067,065)**	(55,834)	77	**(1,122,822)**
Այլ ակտիվներ	**20,033**	20,636	-	**40,669**	(37,341)	-	**3,328**
Այլ փոխառու միջոցներ	**723,284**	(157,527)	-	**565,756**	28,238	-	**593,995**
Այլ պարտավորություններ	**839,548**	99,970	-	**939,518**	39,020	-	**978,537**
Այլ ֆինանսական գործիքներ ամորտիզացված արժեքով և պահուստներ	**(77,952)**	6,281	-	**(71,671)**	6,281	-	**(71,671)**
Հետաձգված հարկային պարտավորություններ, զուտ	**(505,767)**	**(275,286)**	**(374,579)**	**(1,155,632)**	**(316,031)**	**(2,010)**	**(1,473,673)**

Ճանաչված Խմբի ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում.

Հազ. ՀՀ դրամ	**31/03/2026թ.**	**31/12/2025թ.**
Հետաձգված հարկային ակտիվներ	-	-
Հետաձգված հարկային պարտավորություններ	**(1,473,673)**	**(1,155,632)**

15 Վարկային կորստի գծով ծախսի հակադարձում

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս 2026թ. մարտի 31-ին ավարտված ժամանակաշրջանի համար շահույթի կամ վնասի մասին համախմբված հաշվետվությունում ֆինանսական գործիքների գծով ԱՎԿ հատկացումները.

Հազ. ՀՀ դրամ	**Ծան.**	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**POCI**	**Ընդամենը**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7	(33,772)	-	-	-	**(33,772)**
Պահանջներ բանկերի նկատմամբ	9	(455)	-	-	-	**(455)**
Ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթեր	10	1,815	-	-	-	**1,815**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	10	43	-	-	-	**43**
Հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով	11	(188,321)	(141,395)	(1,849,668)	(1,047)	**(2,180,431)**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	12	(143,445)	(45,996)	(217,050)	-	**(406,490)**
Այլ ֆինանսական ակտիվներ	16	4,865	-	-	-	**4,865**
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	25	(1)	(1)	-	-	**(1)**
Վարկերի, վարկային գծերի և վարկային քարտերի գծով պարտավորություններ	25	7,765	1,375	(1,268)	-	**7,872**
Վերականգնում դուրս գրված վարկերից		-	-	311,929	-	**311,929**
Ընդամենը վարկային կորստի գծով պահուստի հակադարձում		**(351,505)**	**(186,017)**	**(1,756,057)**	**(1,047)**	**(2,294,626)**

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս 2025թ. մարտի 31-ին ավարտված ժամանակաշրջանի համար շահույթի կամ վնասի մասին համախմբված հաշվետվությունում ֆինանսական գործիքների գծով ԱՎԿ հատկացումները.

Հազ. ՀՀ դրամ	**Ծան.**	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**POCI**	**Ընդամենը**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7	16,706	-	-	-	**16,706**
Պահանջներ բանկերի նկատմամբ	9	33,193	-	-	-	**33,193**
Ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթեր	10	(2,596)	-	-	-	**(2,596)**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	10	4,197	-	-	-	**4,197**
Հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով	11	(194,894)	(89,168)	(1,237,558)	-	**(1,521,620)**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	12	14,564	3,573	(11,266)	-	**6,871**
Այլ ֆինանսական ակտիվներ	16	14,341				**14,341**
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	25	(153)	(0)	0	-	**(153)**
Վարկերի, վարկային գծերի և վարկային քարտերի գծով պարտավորություններ	25	628	862	(1,369)	-	**121**
Վերականգնում դուրս գրված վարկերից		-	-	302,208	-	**302,208**
Ընդամենը վարկային կորստի գծով պահուստի հակադարձում		**(114,014)**	**(84,732)**	**(947,985)**	**-**	**(1,146,732)**

16 Այլ ակտիվներ

Այլ ակտիվները ներառում են.

Հազ. ՀՀ դրամ	**31/03/2026թ.**	**31/12/2025թ.**
Այլ դեբիտորական պարտքեր	1,411,441	2,408,427
Արժեզրկման գծով պահուստ	19,435,101	(15,145)
Վարձակալված գույքի մատակարարներին վճարվող կանխավճարներ	(10,280)	14,157,401
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	**20,836,262**	**16,550,683**
Աշխատողների տարաբնույթ հատուցումներ՝ անձնակազմին տրված փոխառություններ	3,109,120	3,194,197
Վարձակալության ենթակա գույք	150,023	278,114
Բռնագանձված ակտիվներ	1,850,162	1,913,386
Կանխավճարներ մատակարարներին	1,902,942	2,248,677
Հաշվանցման ենթակա ԱԱՀ	1,364,556	1,345,443
Պաշարներ	658,367	357,006
Վերադարձված վարձակալական գույք	122,989	81,753
Այլ	732,637	464,225
Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ	**9,890,796**	**9,882,801**
Հանած՝ արժեզրկման գծով ծախս	(794,185)	(794,185)
Ընդամենը այլ ակտիվներ	**29,932,873**	**25,639,299**

2026թ. մարտի 31-ի դրությամբ և 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա այլ ֆինանսական ակտիվների գծով ԱՎԿ-ների փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	**Փուլ 1**	**Փուլ 3**	**Ընդամենը**
ԱՎԿ պահուստ 2026թ. հունվարի 1-ի դրությամբ	**15,145**	-	**15,145**
Ստեղծված կամ վերականգնված նոր ակտիվներ (զուտ)	(4,865)	-	**(4,865)**
Տեղափոխումներ Փուլ 3	-		
Դուրսգրում	-	-	**-**
Առ 31 մարտի 2026թ.	**10,280**	-	**10,280**

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա այլ ֆինանսական ակտիվների գծով ԱՎԿ-ների փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	**Փուլ 1**	**Փուլ 3**	**Ընդամենը**
ԱՎԿ պահուստ 2025թ. հունվարի 1-ի դրությամբ	**23,032**	-	**23,032**
Ստեղծված կամ վերականգնված նոր ակտիվներ (զուտ)	(7,887)	-	**(7,887)**
Տեղափոխումներ Փուլ 3	-		
Դուրսգրում	-	-	**-**
Առ 31 դեկտեմբերի 2025թ.	**15,145**	-	**15,145**

17 Բանկերից ներգրավված միջոցներ

Բանկերից ներգրավված միջոցները ներառում են հետևյալը.

Հազ. ՀՀ դրամ	**31/03/2026թ.**	**31/12/2025թ.**
Թղթակցային հաշիվներ և օվերնայթ տեղաբաշխումներ այլ բանկերում	664,049	1,712,088
Բանկերում կարճաժամկետ տեղաբաշխումներ	344,080	295,827
Ընդամենը բանկերից ներգրավված միջոցներ	**1,008,129**	**2,007,915**

18 Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

Հաճախորդների ընթացիկ հաշիվները և ավանդները ներառում են հետևյալը.

Հազ. ՀՀ դրամ	**31/03/2026թ.**	**31/12/2025թ.**
Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ		
Մանրածախ	101,411,930	109,709,134
Կորպորատիվ	145,677,576	162,276,256
Չմարված գործարքներ	2,689,223	6,925,673
Ժամկետային ավանդներ		
Մանրածախ	278,938,245	271,377,115
Կորպորատիվ	88,737,012	71,773,499
Ընդամենը	**617,453,986**	**622,061,677**

Չմարված գործարքները ներառում են հաշվետու ամսաթվերի դրությամբ չմարված գումարները Խմբի հաճախորդների հաշիվներում: Այս գումարը մարվել են հաջորդիվ առաջին աշխատանքային օրերին:

Համաձայն Հայաստանի օրենսդրության, Խումբը պարտավոր է ավանդները մարել ավանդատուի պահանջով: Եթե ժամկետային ավանդը մարվում է ավանդատուի պահանջով մինչև մարման ժամկետը, ապա դրա նկատմամբ տոկոսները վճարվում են ցպահանջ ավանդների տոկոսադրույքի հիման վրա, եթե պայմանագրում այլ տոկոսադրույք նախատեսված չէ:

19 Թողարկված պարտքային արժեթղթեր

Թողարկված պարտքային արժեթղթերի կազմը.

Հազ. ՀՀ դրամ	**31/03/2026թ.**	**31/12/2025թ.**
ՀՀ-ում թողարկված պարտատոմսեր	70,709,467	51,798,299
Թողարկված պարտքային արժեթղթեր	**70,709,467**	**51,798,299**

2026 թվականին հունվարի 15-ից մինչև 2026 թվականի մարտի 31-ը ներառյալ Բանկը տեղաբաշխել է ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով արտահայտված պարտատոմսեր 20,000,000 հազ. ՀՀ դրամ անվանական արժեքով և 3,492,992 ԱՄՆ դոլար անվանական արժեքով:

2025 թվականին փետրվարի 20-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 18-ը ներառյալ Բանկը տեղաբաշխել է ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով արտահայտված պարտատոմսեր 13,437,200 հազ. ՀՀ դրամ անվանական արժեքով և 3,813,600 ԱՄՆ դոլար անվանական արժեքով:

Տեղաբաշխված պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքը և մարման ժամկետները հետևյալն են.

	ՀՀ դրամ	**ԱՄՆ դոլար**	**Մարման ամսաթիվը**
2023թ. թողարկված պարտատոմսեր	11.5%	5.0%	2026թ.
2024թ. թողարկված պարտատոմսեր	9.5%	4.5%	2026թ.
2024թ. թողարկված պարտատոմսեր	11%	6%	2029թ.
2024թ. թողարկված պարտատոմսեր	10.5%	-	2029թ.
2025թ. թողարկված պարտատոմսեր	9.5%	-	2028թ.
2025թ. թողարկված պարտատոմսեր	10%	-	2030թ.
2025թ. թողարկված պարտատոմսեր	10.5%	5.5%	2030թ.
2026թ. թողարկված պարտատոմսեր	10.5%	5.5%	2031 թ.
2026թ. թողարկված պարտատոմսեր	10.3%	-	2031 թ.

20 Այլ փոխառու միջոցներ

Այլ փոխառու միջոցների կազմը.

Հազ. ՀՀ դրամ	**31/03/2026թ.**	**31/12/2025թ.**
Փոխառություններ միջազգային ֆինանսական կազմակերպություններից	106,045,120	105,154,337
Փոխառություններ ՀՀ կառավարությունից	49,086,462	46,362,273
Փոխառություններ տեղական ֆինանսական հաստատություններից	2,442,488	2,485,094
Վարձակալության գծով պարտավորություններ	4,032,518	3,875,638
Այլ փոխառու միջոցներ	**161,606,588**	**157,877,342**

Միջազգային ֆինանսական կազմակերպություններից փոխառությունները ներառում են ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և եվրոյով փոխառություններ մի քանի ֆինանսավորման ծրագրերով, որոնք ենթակա են մարման 2026թ-ից մինչև 2041թ. :

ՀՀ կառավարությունից ստացված փոխառությունները հիմնականում ներառում են ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման ծրագրերով տրամադրված ՀՀ դրամով փոխառությունները, որոնք ենթակա են մարման 2026-2033 թվականների ընթացքում:

Տեղական ֆինանսական հաստատություններից ստացված փոխառությունները ներառում են են հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման ծրագրերով դրամային փոխառություններ՝ որոնք ենթակա են մարման 2026-2035թթ. ընթացքում:

Պայմանագրային դրույթների խախտում. 2026թ. մարտի 31-ի դրությամբ Խումբը պահպանել է պայմանագրերի պայմանները:

21 Ստորադաս վարկեր

2026 թվականի մարտի 31-ի դրությամբ Խումբն ունի ստորադաս վարկեր՝ 12,855,533 հազ. ՀՀ դրամ համախառն գումարով (2025 թ.՝ 13,152,984 հազ. ՀՀ դրամ): Ստորադաս վարկերը ներառում են ԱՄՆ դոլարով և եվրոյով արտահայտված վարկերը՝ 2027-2031թթ. մարման ժամկետով և 5. 8%-ից մինչև 8. 9% տոկոսադրույքով:

22 Այլ պարտավորություններ

Հազ. ՀՀ դրամ	**31/03/2026թ.**	**31/12/2025թ.**
Կրեդիտորական պարտքեր	5,757,090	6,567,872
Վարձակալներից ստացված կանխավճարներ	6,153,211	5,287,098
Աշխատավարձի գծով կրեդիտորական պարտքեր	2,522,311	5,150,438
Հետաձգված երաշխիքային վճարներ	1,695,825	1,405,956
Պարտավորությունների գծով պահուստ	-	-
Կենսաթոշակային պարտավորություններ	-	-
Երաշխիքների և ակրեդիտիվների գծով պահուստ	611	610
Վարկային բնույթի պարտավորությունների գծով պահուստ	87,559	95,748
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	**16,216,607**	**18,507,722**
Շահութահարկից բացի այլ հարկային պարտավորություններ	690,552	788,636
Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին վճարվելիք միջոցներ	228,016	196,115
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	292,456	384,285
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	**1,211,024**	**1,369,036**
Ընդամենը այլ պարտավորություններ	**17,427,631**	**19,876,758**

23 Կապիտալ

Թողարկված կապիտալ. 2026թ. մարտի 31-ի դրությամբ Խմբի բաժնետիրական կապիտալը կազմում է 89,775,000 հազ. ՀՀ դրամ (2025թ.՝ 89,775,000 հազ. ՀՀ դրամ): Հաստատված, թողարկված և չմարված բաժնետիրական կապիտալը բաղկացած է 5,985 հազար սովորական բաժնետոմսերից (2024թ.՝ 5,985 հազար սովորական բաժնետոմս), յուրաքանչյուրը 15,000 ՀՀ դրամ (2024թ.՝ 15,000 ՀՀ դրամ) անվանական արժեքով: Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժիններ և քվեարկել Խմբի տարեկան և ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմսը մեկ ձայն սկզբունքով:

Բաժնետիրական կապիտալի թողարկում
2024թ. նոյեմբերի 22-ին Բանկի բաժնետերերը հաստատել են 485,000 սովորական բաժնետոմսերի թողարկում՝ 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով և մեկ բաժնետոմսի համար 14,251.5 ՀՀ դրամ առաջարկի գնով: Այս բաժնետոմսերի դիմաց ստացված ընդհանուր հատուցումը կազմել է 6,911,978 հազ. ՀՀ դրամ: Անվանական արժեքի և ստացված դրամական հատուցման տարբերությունը ճանաչվել է էմիսիոն եկամուտ՝ 2,061,978 հազ. ՀՀ դրամ: Բաժնետոմսերի այս թողարկումը գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

Բաժնետիրական կապիտալի համալրում չբաշխված շահույթի հաշվին 2024թ. հոկտեմբերի 25-ին Բանկի խորհուրդը որոշեց ավելացնել Բանկի բաժնետիրական կապիտալը՝ չբաշխված շահույթից 29,925,000 հազար ՀՀ դրամ ուղղելով բաժնետիրական կապիտալին: Արդյունքում կապիալն աճել է մինչև 89,775,000 հազ. ՀՀ դրամ: Բաժնետիրական կապիտալի ավելացումն իրականացվել է նաև առկա բաժնետոմսերի անվանական արժեքի 10,000 դրամից 15,000 ՀՀ դրամի ավելացմամբ:

Պահուստների բնույթը և նպատակը

Հողի, շենքերի և փոխադրամիջոցների վերագնահատումից աճ. Հողի, շենքերի և փոխադրամիջոցների վերագնահատումից աճը ներառում է մինչև հողի, շենքերի և

փոխադրամիջոցների ապաճանաչումը կամ արժեզրկումը դրանց կուտակային դրական վերագնահատված արժեքը:

Գլխավոր պահուստի համալրում Էմիսիոն եկամտի հաշվին 2024թ. հոկտեմբերի 25-ին Բանկի խորհուրդը որոշել է Էմիսիոն եկամուտից 5,216,250 հազ. ՀՀ դրամ փոխանցել Բանկի պահուստային ֆոնդ, որը ներկայացված է սույն հաշվետվության մեջ «Չբաշխված շահույթ» բաժնում: 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի պահուստային կապիտալը կազմում է 13,466,250 հազ. ՀՀ դրամ (2023 թ.՝ 8,250,000 հազ. ՀՀ դրամ):

Պահուստային ֆոնդը ստեղծվել է Բանկի կանոնադրության համաձայն, որը նախատեսում է այդ նպատակների համար պահուստի ստեղծում Բանկի նորմատիվային հաշվետվողականության պահանջների ներքո ներկայացված կանոնադրական կապիտալի ոչ պակաս, քան 15%-ի չափով: Պահուստային ֆոնդը չբաշխվող պահուստ է, որը ստեղծվում է նորմատիվային կանոնակարգերով սահմանված կարգով՝ ընդհանուր բանկային ռիսկերի, ներառյալ ապագա կորուստների և այլ չնախատեսված ռիսկերի կամ պայմանական դեպքերի առնչությամբ:

Շահաբաժիններ. 2025թ. մայիսի 29-ի բաժնետերերի ժողովում Բանկը 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար հայտարարել է շահաբաժիններ՝ ընդհանուր 6,583,500 հազ. ՀՀ դրամ (2024թ.՝ 5,500,000 հազ. ՀՀ դրամ) սովորական բաժնետոմսերի համար՝ 1,100 ՀՀ դրամ մեկ բաժնետոմսի դիմաց (2024թ.՝ 1,000 ՀՀ դրամ մեկ բաժնետոմսի դիմաց): Շահաբաժինները վճարվել են 2025թ հունիսին:

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը հաշվարկվում է որպես մայր կազմակերպության բաժնետերերին վերագրելի տարեկան շահույթի և տարվա ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի միջին կշռված քանակի հարաբերություն:

Հազ. ՀՀ դրամ	**31/03/2026թ.**	**31/03/2025թ.**
Մայր կազմակերպության սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վերագրվող շահույթ	**7,590,032**	**7,783,561**
Սովորական բաժնետոմսերի միջին կշռված քանակ	5,985,000	5,985,000
Մեկ բաժնետոմսի գծով շահույթ, Բազային և նոսրացված, մայր կազմակերպության բաժնետերերին վերագրելի, ՀՀ դրամ	**1,268.18**	**1,300.51**

24 Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ

«ԱԿԲԱ Բանկ» Բաց Բաժնետիրական Ընկերության կապիտալում աշխատակիցների բաժնեմասնակցության ծրագիր

2021թ. «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ-ն, «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ն և «ԱԿԲԱ Լիզինգ» ՓԲԸ-ն գործարկել են Աշխատակիցների բաժնեմասնակցության երկփուլ ծրագիր (այսուհետ՝ «Ծրագիր»), որը մոտ 1100 աշխատակցի հնարավորություն է տվել դառնալ «ԱԿԲԱ Բանկ»-ի, «ԱԿԲԱ Ֆեդերացիայի» և «ԱԿԲԱ Լիզինգ»-ի բաժնետեր՝ Խմբի աշխատանքի վարձատրության, առաջխաղացման, հավատարմության և տաղանդների կառավարման համակարգի շրջանակներում:

Ծրագրի շրջանակներում «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ-ն ստանձնել է հանձնառություն՝ «ԱԿԲԱ ֆեդերացիա» ՓԲԸ-ի, «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ի և «ԱԿԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի աշխատակիցներին նվիրաբերելու Բանկի 300,000 (երեք հարյուր հազար) սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

2021թ. Դեկտեմբերին Խմբի աշխատակիցները «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ-ից ստացել են Բանկի 145,980 սովորական բաժնետոմս (Փուլ 1): 2023թ. Դեկտեմբերին նրանք ստացել են ևս 133,380 սովորական բաժնետոմս՝ տրամադրման ամսաթվի դրությամբ (Փուլ 2) մեկ բաժնետոմսի դիմաց 12,591 ՀՀ դրամ իրական արժեքով, առանց որևէ հատուցման և նախապայմանների:

2023թ. Դեկտեմբերի 30-ի դրությամբ Ծրագրով տրամադրված բաժնետոմսերի ընդհանուր իրական արժեքը կազմել է 3,517,422 հազ. ՀՀ դրամ: Այս գումարից 440,927 հազ. ՀՀ դրամը ճանաչվել է որպես անձնակազմի գծով ծախս՝ 2023թ. շահույթի կամ վնասի մասին համախմբված

հաշվետվությունում և որպես բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գծով պահուստ՝ սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունում (2022թ. ՝ 624,238 հազ. ՀՀ դրամ):

Բանկի բաժնետոմսերի իրական արժեքի գնահատման նպատակով «ԱԿԲԱ Ֆեդերացիա»-ն և «ԱԿԲԱ Բանկ»-ը ներգրավել են անկախ խորհրդատուների: Բաժնետոմսերի գնահատման համար օգտագործվել է շահաբաժինների զեղչման մեթոդը, որ ներառում է.

- Ֆինանսական մոդելի ընդհանուր ենթադրությունների և կառուցվածքի որոշում.
- Բանկի և նրա դուստր ձեռնարկությունների հաշվեկշռի կանխատեսում.
- Բանկի և նրա դուստր ձեռնարկությունների ֆինանսական արդյունքի կանխատեսում.
- Շահաբաժինների կանխատեսում՝ հաշվի առնելով կապիտալի համարժեքության և իրացվելիության պահանջները.
- Զեղչի դրույքաչափի որոշում.
- Բանկի մնացորդային արժեքի որոշում.
- Ֆինանսական արդյունքների կանխատեսման մեջ չներառված ակտիվների և պարտավորությունների վերլուծություն.
- Բանկի սեփական կապիտալի 100%-ի հաշվարկ:

25 Պայմանական դեպքեր և պարտավորություններ

Գործառնական միջավայր. Հայաստանի Հանրապետությունը շարունակում է տնտեսական բարեփոխումները և իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերի զարգացումը՝ շուկայական տնտեսության պահանջներին համապատասխան: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը առավելապես կախված է այս բարեփոխումներից և զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից իրականացվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետությունից:

Ղեկավարությունը կարծում է, որ ձեռնարկում է համապատասխան միջոցներ՝ աջակցելու Խմբի բիզնեսի կայունությանը ներկա պայմաններում:

Իրավական միջավայր. Իր բնականոն գործունեության ընթացքում Խմբի դեմ կարող են հարուցվել դատական հայցեր և պահանջներ: Ղեկավարության համոզմամբ նման հայցերի և պահանջների արդյունքում ծագող հնարավոր պարտավորությունները (առկայության դեպքում) էական բացասական ազդեցություն չեն ունենա Խմբի ֆինանսական վիճակի կամ հետագա գործունեության արդյունքների վրա:

Հարկեր. ՀՀ-ում հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնութագրվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն անորոշ են, հակասական և ենթակա են տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր, տուգանքներ և տոկոսային վճարներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմինների կողմից լրացուցիչ հարկերի, տուգանքների կամ տուգանքների գծով պարտավորություններ չեն կարող առաջադրվել, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները կարող են ՀՀ-ում ստեղծել ավելի էական հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը կարծում է, որ հարկային պարտավորությունները կատարվել են պատշաճ կերպով՝ հիմնվելով Հայաստանի գործող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբեր լինել, և ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը, եթե իշխանությունները հաջողությամբ իրականացնեին իրենց մեկնաբանությունները, կարող էր զգալի լինել:

Վարկային բնույթի պարտավորություններ. 2026թ. մարտի 31-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի պայմանական և պայմանագրային պարտավորությունները ներառում են հետևյալ հոդվածները.

Հազ. ՀՀ դրամ	***31/03/2026 թ.***	***31/12/2025 թ.***
Վարկային բնույթի պարտավորություններ		
Վարկերի, վարկային գծերի և վարկային քարտերի գծով պարտավորություններ	37,161,112	39,106,268
Ակրեդիտիվներ և երաշխիքներ	64,795,355	57,031,566
Պայմանական դեպքեր և պարտավորություններ	**101,956,467**	**96,137,834**

2026թ. մարտի 31-ի դրությամբ ԱՎԿ-ների փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Վարկեր և վարկային գծեր և վարկային քարտերի գծով պարտավորություններ *Հազ. ՀՀ դրամ*	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
ԱՎԿ պահուստ 2026թ. հունվարի 1-ի դրությամբ	**86,884**	**2,278**	**6,586**	**95,748**
Նոր ակտիվներ	7,656	-	-	**7,656**
Մարված ակտիվներ	(7,053)	(773)	(839)	**(8,666)**
Տեղափոխումներ Փուլ 1	522	(522)	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 2	(145)	145	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 3	(206)	(713)	919	**-**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ	(488)	470	17	**(1)**
ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ	(8,050)	19	1,171	**(6,861)**
Արտարժույթի ճշգրտումներ	(367)	(1)	(23)	**(391)**
Առ 31 մարտի 2026թ.	**78,752**	**902**	**7,831**	**87,484**

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՎԿ-ների փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Վարկեր և վարկային գծեր և վարկային քարտերի գծով պարտավորություններ *Հազ. ՀՀ դրամ*	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
ԱՎԿ պահուստ 2025թ. հունվարի 1-ի դրությամբ	**67,633**	**1,950**	**5,972**	**75,555**
Նոր ակտիվներ	25,939	-	-	**25,939**
Մարված ակտիվներ	(19,303)	(1,348)	(1,886)	**(22,537)**
Տեղափոխումներ Փուլ 1	135	(135)	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 2	(405)	405	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 3	(1,070)	(76)	1,146	**-**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ	(92)	1,670	2,139	**3,717**
ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ	13,738	(190)	(779)	**12,769**
Արտարժույթի ճշգրտումներ	310	0	(5)	**305**
Առ 31 Դեկտեմբերի2025թ.	**86,884**	**2,278**	**6,586**	**95,748**

2026թ. մարտի 31-ի հաշվետու ժամանակաշրջանի համար երաշխիքների և ակրեդիտիվների հետ կապված համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ-ի փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Երաշխիքներ և ակրեդիտիվներ *Հազ. ՀՀ դրամ*	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Համախառն հաշվեկշռային արժեքը 2026թ. հունվարի 1-ի դրությամբ	**55,732,439**	**128,060**	**1,171,067**	**57,031,566**
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	22,027,937	-	-	**22,027,937**
Մարված ակտիվներ	(14,104,701)	(19,625)	(110,647)	**(14,234,973)**
Տեղափոխումներ Փուլ 1	-	-	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 2	(110,465)	110,465	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 3	(40,400)	-	40,400	**-**
Արտարժույթի ճշգրտումներ	(29,174)	-	-	**(29,174)**
Առ 31 մարտի 2026թ.	**63,475,636**	**218,900**	**1,100,820**	**64,795,356**

Երաշխիքներ և ակրեդիտիվներ *Հազ. ՀՀ դրամ*	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
ԱՎԿ պահուստ 2026թ. հունվարի 1-ի դրությամբ	**602**	**1**	**7**	**610**
Ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա ազդող փոփոխություններ.				
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	292	-	-	**292**
Մարված ակտիվներ	(294)	-	(1)	**(295)**
Տեղափոխումներ Փուլ 1	-	-	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 2	(1)	1	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 3	-	-	-	**-**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ	-	-	-	**-**
ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ	4	-	-	**4**
Արտարժույթի ճշգրտումներ	-	-	-	**-**
Ընդամենը տեղափոխումներ՝ ժամանակաշրջանի ընթացքում վարկային կորստի գծով պահուստի վրա ազդեցությամբ.	**602**	**2**	**7**	**611**

2025թ. դեկտեմբերի 31-ի հաշվետու ժամանակաշրջանի համար երաշխիքների և ակրեդիտիվների հետ կապված համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ-ի փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Երաշխիքներ և ակրեդիտիվներ *Հազ. ՀՀ դրամ*	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Համախառն հաշվեկշռային արժեքը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ	**36,682,010**	**68,010**	**1,048,834**	**37,798,854**
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	46,035,333	-	-	**46,035,333**
Մարված ակտիվներ	(26,430,620)	(7,375)	(364,626)	**(26,802,621)**
Տեղափոխումներ Փուլ 1	-	-	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 2	(67,425)	67,425	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 3	(486,859)	-	486,859	**-**
Արտարժույթի ճշգրտումներ	-	-	-	**-**
Առ 31 Դեկտեմբերի 2025թ.	**55,732,439**	**128,060**	**1,171,067**	**57,031,566**

Երաշխիքներ և ակրեդիտիվներ *Հազ. ՀՀ դրամ*	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
ԱՎԿ պահուստ 2025թ. հունվարի 1-ի դրությամբ	**412**	**1**	**8**	**421**
Ժամանակահատվածի ընթացքում վարկային				

կորստի պահուստի վրա ազդող փոփոխություններ.				
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	531	-	-	**531**
Մարված ակտիվներ	(317)	-	(3)	**(320)**
Տեղափոխումներ Փուլ 1	-	-	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 2	-	-	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 3	(4)	-	4	**-**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ	-	-	-	**-**
ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ	(20)	-	(1)	**(21)**
Արտարժույթի ճշգրտումներ	-	-	-	**-**
Ընդամենը տեղափոխումներ՝ ժամանակաշրջանի ընթացքում վարկային կորստի գծով պահուստի վրա ազդեցությամբ.	**602**	**1**	**7**	**610**

26 Զուտ տոկոսային եկամուտ

Զուտ տոկոսային եկամտի կազմը.

Հազ. ՀՀ դրամ	**01/01/26-31/03/26թ.**	**01/01/25-31/03/25թ.**
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր	22,930,753	19,436,774
Հակադարձ հետգնման պայմանագրերով ստացվելիք գումարներ	1,112,986	814,683
Պահանջներ բանկերի նկատմամբ	263,425	241,776
Այլ	50	25
	24,307,214	**20,493,258**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ		
Պարտքային գործիքներ	1,474,309	1,136,966
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	**25,781,523**	**21,630,224**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	3,991,033	3,255,885
Այլ տոկոսային եկամուտ	7,245	22,180
Այլ տոկոսային եկամուտ	**3,998,278**	**3,278,065**
Ընդամենը տոկոսային եկամուտ	**29,779,801**	**24,908,289**
Տոկոսային ծախս		
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	7,310,414	6,562,331
Այլ փոխառու միջոցներ և ստորադաս փոխառություններ, բացառությամբ վարձակալության պարտավորությունների	3,158,232	2,234,107
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	9,819
Հետգնման պայմանագրերով վճարման ենթակա գումարներ	106,045	1,979
Այլ	35,074	29,927
Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային ծախս	**11,926,125**	**9,741,938**
Վարձակալության գծով պարտավորություններ	104,853	107,959
Տոկոսային ծախս	**12,030,978**	**9,849,897**
Զուտ տոկոսային եկամուտ	**17,748,823**	**15,058,392**

27 Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ

Միջնորդավճարների գծով զուտ եկամտի կազմը.

Հազ. ՀՀ դրամ	**01/01/26-31/03/26թ.**	**01/01/25-31/03/25թ.**
Պլաստիկ քարտերի սպասարկում	3,183,001	2,816,989
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	355,308	452,354
Դրամական փոխանցումներ	276,621	255,761
Բանկային հաշիվների սպասարկման վճարներ	174,972	149,257
Ապահովագրական գործակալ հանդես գալու միջ.	149,917	100,195
Միջնորդավճարներ վարձակալության սարքավորումների մատակարարներից	80,600	45,392
Կանխիկացման ծառայություններ	94,707	84,898
Այլ	368,659	68,541
Միջնորդավճարների գծով եկամուտ	**4,683,785**	**3,973,388**
Պլաստիկ քարտերի սպասարկում	2,038,215	1,697,903
Դրամական փոխանցումներ	41,245	44,592
Այլ	196,341	170,585
Միջնորդավճարների գծով ծախս	**2,275,801**	**1,913,080**
Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ	2,407,984	2,060,309

28 Այլ եկամուտ/ծախս

Հազ. ՀՀ դրամ	**01/01/26-31/03/26թ.**	**01/01/25-31/03/25թ.**
Այլ ակտիվների վաճառքից ստացված միջոցներ	6,925	6,676
Ստացված շահաբաժիններ	-	1,932
Այլ ծախս/եկամուտ	(146,819)	10,177
Ընդամենը այլ եկամուտ/ծախս	**(139,894)**	**18,785**

29 Այլ գործառնական ծախսեր

Գործառնական այլ ծախսերը ներառում են.

Հազ. ՀՀ դրամ	**01/01/26-31/03/26թ.**	**01/01/25-31/03/25թ.**
Երաշխիքային վճարներ ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին	245,698	232,835
Ծրագրային ապահովման և սպասարկման վճարներ	141,357	97,085
Շահութահարկից բացի այլ հարկեր	81,262	78,232
Հիմնական միջոցների օտարումից վնաս	11,692	28,699
Ֆինանսական համակարգի հաշտարարի վճարումներ	47,707	42,448
Ինկասացիայի գծով ծախսեր	34,854	33,150
Վարկերի հավաքագրման գծով ծախսեր	31,304	31,124
Արժեթղթերի ռեեստրի վարման վճար	16,396	11,131
Վճարված տույժեր և տուգանքներ	16,001	162
Այլ	179,781	167,040
Այլ գործառնական ծախսեր	**806,052**	**721,906**

30 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

Հազ. ՀՀ դրամ	01/01/26-31/03/26թ.	01/01/25-31/03/25թ.
Վերանորոգում և սպասարկում	336,250	339,941
Գովազդային և մարքեթինգային ծառայություններ	167,128	131,729
Կոմունալ ծառայություններ և գրասենյակային պարագաներ	109,879	98,128
Կառավարչական այլ ծախսեր	115,166	94,906
Կապ	136,099	111,732
Ծրագրային ապահովման սպասրկման ծախսեր	78,060	80,727
Ապահովագրություն	61,883	70,625
Անվտանգություն	55,271	65,663
Ներկայացուցչական ծախսեր	20,237	41,553
Գործառնական վարձակալության գծով ծախս	31,752	4,136
Այլ	250,345	143,444
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	**1,362,070**	**1,182,584**

31 Այլ արժեզրկման և պահուստների հակադարձում/(ծախս)

Հազ. ՀՀ դրամ	01/01/26-31/03/26թ.	01/01/25-31/03/25թ.
Պարտավորությունների գծով պահուստի հատկացում	-	-
Ոչ նյութական ակտիվների արժեզրկման գծով ծախս	-	-
Բռնագանձված ակտիվների արժեզրկման պահուստի (ծախս)	-	-
Այլ արժեզրկման և պահուստների գծով ծախս	**-**	**-**

32 Ռիսկերի կառավարում

Ներածություն. Խմբի ռիսկերի կառավարման համակարգը, Խմբի ռազմավարությանը համահունչ, ներառում է ռիսկերի կառավարման նորարարական և միջազգային գործիքներ, ռիսկերի կառավարման սկզբունքները սահմանող փաստաթղթեր և Խմբում ռիսկի մշակույթի պահպանման և տարածմանն ուղղված գործողություններ: Ռիսկը բնորոշ է Խմբի գործունեությանը և կառավարվում է ռիսկի նույնականացման, չափման, կառավարման, մոնիտորինգի և հաշվետվության համակարգերի շարունակական գործընթացի միջոցով, և վերահսկվում է ղեկավարության կողմից: Այս գործընթացը կարգավորվում է ռիսկերի սահմանաչափերով, ինչը ենթակա է մշտական վերահսկողության: Խմբում կատարվում է ռիսկի ազդեցության կառավարման պատասխանատվության բաշխում, ընդ որում յուրաքանչյուր անձ պատասխանատու է իր իրավասության ներքո գտնվող ռիսկերի համար:

Հիմնական ռիսկերը, որոնց ենթակա է Խումբը, վարկային, իրացվելիության, շուկայական (որը ներառում է առևտրային և ոչ առևտրային ռիսկերը) և գործառնական ռիսկերն են: Բացի այդ, Խումբը ուշադրությամբ հետևում նոր առաջացող ռիսկերին, ինչպիսիք են կիբերանվտանգության սպառնալիքները, և ապահովում է ռիսկերի կառավարման գործելակերպը կարգավորող չափանիշների պահպանումը: Կանոնավոր կերպով իրականացվում են այս ռիսկերի քանակական գնահատումներ՝ որոշումների կայացման գործընթացներին օժանդակելու և Խմբի շահութաբերությունն ու կայունությունը պահպանելու նպատակով:

Ռիսկերի նույնականացում. Ռիսկերի նույնականացումը Խմբի ներսում շարունակական գործընթաց է և իրականացվում է ռիսկերի կանոնավոր գնահատման, պորտֆելների շարունակական մոնիտորինգի, նոր բիզնես գործունեության և գործընթացների ռիսկերի գնահատման, բարդ և արտասովոր բիզնես գործարքների ռիսկերի գնահատման և ընդհանուր ռիսկի պրոֆիլի կանոնավոր մոնիտորինգի միջոցով:

Ռիսկերի չափման և կառավարման համակարգեր. Խումբը կիրառում է հատուկ մոտեցում տարբեր տեսակի ռիսկերի վերլուծության և գնահատման համար՝ օգտագործելով վիճակագրական մոդելներ, զգայունության վերլուծություններ և վերահսկելով հիմնական ռիսկերի ցուցանիշները: Անհրաժեշտության դեպքում Խումբը ձեռնարկում է համապատասխան միջոցներ՝ հնարավոր ռիսկերը լուծելու համար: Այս մոդելները ենթարկվում են կանոնավոր հակադարձ թեստավորման և վավերացման՝ դրանց ճշգրտությունը հաստատելու համար: Խումբը նաև իրականացնում է սթրես թեստային վերլուծություններ՝ գնահատելու ծայրահեղ, ցածր

հավանականության իրադարձությունների ազդեցությունը: Ռիսկերի կառավարման իր համապարփակ ռազմավարության ներքո Խումբը օգտագործում է ածանցյալ գործիքներ և այլ ֆինանսական գործիքներ՝ տոկոսադրույքների, արտարժույթի, սեփական կապիտալի շուկաների, վարկային ռիսկերի և ակնկալվող գործարքների հետ կապված ռիսկերի հեջավորման համար: Ավելին, Խումբն ակտիվորեն օգտագործում է վարկային ռիսկի մեղմման տարբեր գործիքներ:

Ռիսկերի մոնիտորինգ և վերահսկում. Խումբը հիմնականում մշտադիտարկման է ենթարկում և վերահսկում է ռիսկերը՝ պահպանելով նախատեսված սահմանաչափերը, որոնք որոշվել են ըստ Խմբի բիզնես ռազմավարության, շուկայական պայմանների և ռիսկի ախորժակի, առանձնահատուկ ուշադրություն դարձնելով կոնկրետ ճյուղերին՝ օպտիմալ դիվերսիֆիկացման մակարդակի հասնելու համար: Բացի այդ, Խումբը շարունակաբար գնահատում է իր ընդհանուր ռիսկ կրելու կարողությունը՝ կապված բոլոր ռիսկերի տեսակների և գործունեության բոլոր ռիսկերի ազդեցության հետ: Պարբերական ծանուցումներ են տրվում ռիսկի սահմանաչափերի խախտման դեպքում՝ ելնելով խախտման տեսակից և հրատապությունից: Այս ծանուցումները փոխանցվում են Խմբի համապատասխան ստորաբաժանումներին, ինչպես նաև գլխավոր գործադիր տնօրենին՝ քննարկելու և համապատասխան գործողություններ ձեռնարկելու համար:

Ռիսկերի կառավարման հաշվետվության համակարգ. Բոլոր բիզնես ուղղությունների համապատասխան տվյալները ուսումնասիրվում և մշակվում են ռիսկերը բացահայտելու, կառավարելու և մեղմելու և դրանք Խմբի յուրաքանչյուր կազմակերպության համար ռիսկերի ախորժակին համապատասխանեցնելու նպատակով: Բանկն ունի երկու հիմնական հաշվետվության գիծ՝ Ռիսկերի կառավարման հանձնաժողով՝ Գործադիր ղեկավարությանը և Ռիսկերի կառավարման հանձնաժողով՝ Խորհրդին: Ռիսկերի կառավարման հանձնաժողովին ներկայացվող հաշվետվությունը ներառում է ընդհանուր վարկային ռիսկի ենթարկվածության վերլուծություն, մանրամասն մակրոտնտեսական վերլուծություն, վարկերի համակենտրոնացման սահմանաչափերի մշտադիտարկում, ճեղքվածքների (GAP) վերլուծություն, VaR գնահատում, իրացվելիության գործակիցներ և նպատակային ցուցանիշների վերլուծություն, սթրես թեստ վերլուծություն, ընդհանուր ռիսկի ախորժակի վերահսկում և Խմբի յուրաքանչյուր կազմակերպության ռիսկերի պրոֆիլի փոփոխություններ:

Ռիսկերի կառավարման հանձնաժողովը քննարկում է ռիսկերի հետ կապված էական խնդիրները և հաստատում քայլերը՝ ուղղված դրանց նվազեցմանը և կառավարմանը: Խորհուրդը եռամսյակային կտրվածքով ստանում է ռիսկերի համապարփակ հաշվետվություն, որը ներկայացնում է առանցքային տվյալներ՝ ընդհանուր ռիսկի ենթարկվածությունը գնահատելու և տեղեկացված որոշումներ կայացնելու համար: Ռիսկերի մանրամասն հաշվետվությունները պատրաստվում և տարածվում են կազմակերպության բոլոր մակարդակներում՝ ապահովելով կիրառելի և արդիական տեղեկատվության հասանելիություն յուրաքանչյուր ստորաբաժանման համար:

Բանկի ռիսկերի կառավարման կառուցվածքը.

Խորհուրդ. կրում է կազմակերպության ներսում ռիսկերի հայտնաբերման և վերահսկման հիմնական պատասխանատվությունը: Այնուամենայնիվ, առկա են առանձին անկախ մարմիններ, որոնք պատասխանատու են ռիսկերի կառավարման և մոնիթորինգի համար: Բանկի խորհուրդը պատասխանատու է ընդհանուր ռիսկերի կառավարման քաղաքականության, ռիսկերի կառավարման ռազմավարության և սկզբունքների հաստատման համար: Խորհուրդը վերահսկում է ռիսկերի կառավարումը՝ հաստատելով ռիսկերի ախորժակի շրջանակը, վերահսկողության շրջանակը և ռիսկերի կառավարման համապատասխան քաղաքականությունն ու սահմանաչափերը:

Խորհրդին առընթեր Ռիսկերի կառավարման հանձնաժողով. աջակցում է Խորհրդին՝ Բանկի ռիսկերի պրոֆիլը և սահմանված ռիսկի ախորժակի համեմատ արդյունքները վերահսկելու նպատակով: Խորհրդին առընթեր Ռիսկերի կառավարման հանձնաժողովը կանոնավոր կերպով վերանայում է ռիսկերի կառավարման հաշվետվությունը և Խորհրդին է ներկայացնում բացահայտումներ և առաջարկություններ ռիսկի ընդհանուր բնութագրի և շուկայի իրավիճակի վերաբերյալ:

Գլխավոր գործադիր տնօրեն. Գլխավոր գործադիր տնօրենը պատասխանատվություն է կրում ռիսկերի կառավարման ընդհանուր գործընթացի մշտադիտարկման և կառավարման համար՝

շարունակաբար գնահատելով կազմակերպության ռիսկերի պրոֆիլը, վերահսկելով ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ռիսկերի կառավարման շրջանակը ինտեգրելով կազմակերպության ռազմավարությունում և բիզնես գործընթացներում:

Ռիսկերի կառավարման հանձնաժողով (գործադիր ղեկավարությանը). Ռիսկերի կառավարման հանձնաժողովն ընդհանուր պատասխանատվություն է կրում Բանկի ռազմավարությանը և Ռիսկերի կառավարման շրջանակին ռիսկի պրոֆիլի համապատասխանությունը ստուգելու համար:

Ռիսկերի կառավարման և համապատասխանության ստորաբաժանում. Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը պատասխանատու է բոլոր տեսակի ռիսկերի սահմանման, գնահատման, վերահսկողության և կառավարման համար: Անկախ վերահսկման գործընթաց ապահովելու համար, յուրաքանչյուր քայլից հետո ներկայացվում է հաշվետվություն: Ռիսկերի կառավարման և համապատասխանության բաժինը վերահսկում է Բանկի բոլոր կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումները՝ ռիսկերի բացահայտման և կառավարման ուղղությամբ:

Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժին. Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինը պատասխանատու է Բանկի ակտիվների և պասիվների և ընդհանուր ֆինանսական կառուցվածքի կառավարման համար: Այն նաև գլխավորապես պատասխանատու է Բանկի ֆինանսավորման, իրացվելիության և տոկոսադրույքի ռիսկերի համար:

Ներքին աուդիտ. Բանկի կողմից իրականացվող ռիսկերի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Բանկի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի ստորաբաժանումը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Ներքին Աուդիտի հանձնաժողովին:

Դուստր կազմակերպությունում գործում է Բանկի ռիսկերի կառավարման կառուցվածքին համանման կառուցված, որը համահունչ է իր կոնկրետ գործառույթներին և կազմակերպչական կառուցվածքին: Թեև նրա դերերն ու պարտականությունները կարող են տարբեր լինել՝ ելնելով իր շրջանակից և գործողություններից, այն սովորաբար առաջնորդվում է որոշումների կայացման, ռիսկերի կառավարման և գործառնական վերահսկողության այնպիսի, որոնք համանման են Բանկի սկզբունքներին:

Խումբը ենթարկվում է ռիսկի մի քանի տեսակների, որոնց ամենատարածված տեսակները ներկայացված են ստորև:

Պարտքային ռիսկ

Վարկային ռիսկը առաջանում է այն ժամանակ, երբ մի կողմը չի կատարում մյուս կողմի նկատմամբ ունեցած ֆինանսական պարտավորությունները: Վարկային ռիսկը կարող է դրսևորվել հետևյալ ձևերով.

- Պարտապանը չի վճարում վարկի տոկոսները կամ մայր գումարը (սնանկության ռիսկ կամ դեֆոլտի ռիսկ)
- Պարտապանի կամ կոնտրագենտի վարկանիշը իջեցվում է (վարկանիշի նվազման ռիսկ)՝ ինչը վկայում է ռիսկի աճի մասին, որը կարող է անմիջապես հանգեցնել վարկին հարակից ապահովության միջոցի արժեքի կորստի. և
- Շուկայական առևտրի դեպքում կոնտրագենտը չի կատարում իր պարտավորությունները (կոնտրագենտի ռիսկ), ներառյալ մարումը:

Խումբը կառավարում և վերահսկում է վարկային ռիսկը՝ բանկի և նրա դուստր կազմակերպության համար սահմանելով ռիսկի ախորժակը, հանդուրժողականությունը և կարողությունների սահմանաչափերը: Իր ռիսկի ախորժակի մասին հաշվետվությունում կազմակերպությունը սահմանում է վարկային ռիսկի համապատասխան սահմանաչափեր՝ համակենտրոնացման ռիսկը կառավարելու և վարկային պորտֆելի օպտիմալ դիվերսիֆիկացման մակարդակ ապահովելու համար:

Խումբը հաստատել է վարկային որակի ստուգման գործընթաց՝ ապահովելու գործընկերների վարկունակության հնարավոր փոփոխությունների վաղ բացահայտումը, ներառյալ գրավների պարբերաբար վերանայումը: Վարկերի որակի ստուգման գործընթացը Խմբին թույլ է տալիս գնահատել հնարավոր վնասը այն ռիսկերի հետևանքով, որոնց նկատմամբ այն զգայուն է, և ձեռնարկել ուղղիչ գործողություններ:

Խումբը ներդրել է վարկային ռիսկերի կառավարման համապարփակ համակարգ, որը բաժանված է երկու լրացուցիչ ոլորտների.

- Վարկային ռիսկերի կառավարման համակարգ անհատական մակարդակում
- Վարկային ռիսկերի կառավարման համակարգ՝ պորտֆելի մակարդակում

Անհատական մակարդակում վարկային ռիսկի կառավարման համակարգը ներառում է հաճախորդի վարկունակության գնահատման համակարգեր, կորպորատիվ հաճախորդների վարկանիշային համակարգեր, ինչպես նաև կիրառական և վարքագծային միավորների մոդելների հիման վրա ստեղծված ֆինանսական և տնտեսական վերլուծական ավտոմատացված համակարգեր, որոնք ներդրվել են Խմբի բոլոր երեք բիզնես ուղղությունների համար՝ (Մանրածախ, կորպորատիվ և գյուղատնտեսական):

Վարկային պորտֆելի մակարդակում ռիսկերի կառավարման համակարգը ներառում է ինչպես ակնկալվող, այնպես էլ անսպասելի կորուստների գնահատում: Վերջինիս հիման վրա Կազմակերպությունը հաշվարկում է իր տնտեսական կապիտալը վարկային ռիսկի համար: ՖՀՄՍ 9-ի տեսանկյունից Կազմակերպությունը կիրառում է վարկային պորտֆելի սեգմենտավորում և մշակում մոդելներ յուրաքանչյուր հատվածի համար PD, LGD և EAD գնահատելու համար:

Ածանցյալ ֆինանսական գործիքների ռիսկը. Ածանցյալ ֆինանսական գործիքներից ծագող վարկային ռիսկը ցանկացած պահի սահմանափակվում է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված դրական իրական արժեքով:

Վարկային պարտավորությունների հետ կապված ռիսկեր. Խումբը իր հաճախորդներին տրամադրում է բանկային երաշխիքների և ակրեդիտիվների ստացման հնարավորություն, որոնց գծով Խմբի մոտ կարող է անհրաժեշտություն ծագել հաճախորդների անունից կատարելու վճարումներ: Հաճախորդները վճարումները կատարում են պայմանագրերում ամրագրված պայմանների համաձայն: Խումբը կրում է ռիսկեր, որոնք համարժեք են վարկային ռիսկերին, և նվազեցվում են նույն ընթացակարգերի և ռիսկի վերահսկման քաղաքականության վարման շնորհիվ:

Վարկային ռիսկի առավելագույն չափը ֆինանսական գործիքների գծով. Ռիսկի առավելագույն չափը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության տարրերի վրա, ներառյալ ածանցյալ գործիքները, զտման և գրավի պայմանագրերի միջոցներով ռիսկը մեղմացնելու ազդեցությունից առաջ, ներկայացված է հաշվեկշռային արժեքով:

Իրական արժեքով ներկայացված ֆինանսական գործիքների դեպքում, հաշվեկշռային արժեքը արտահայտում է ընթացիկ վարկային ռիսկը, բայց ոչ ռիսկի առավելագույն չափը, որը կարող է առաջանալ արժեքի փոփոխությունից:

Ֆինանսական գործիքների յուրաքանչյուր մակարդակի վարկային ռիսկի առավելագույն չափի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է առանձին ծանոթագրություններում: Ապահովման միջոցների և ռիսկի նվազեցման այլ մեթոդների ազդեցությունը ներկայացված է Ծանոթագրություններ 12-ում և 13-ում:

Արժեզրկման գնահատում. Խումբը հաշվարկում է ակնկալվող վարկային կորուստը (ԱՎԿ) հավանականությամբ կշռված երեք սցենարների միջոցով՝ գնահատելու դրամական միջոցների ակնկալվող պակասը՝ զեղչված սկզբնավորման պահին արդյունավետ տոկոսադրույքով (EIR): Դրամական միջոցների պակասորդը սահմանվում է որպես կազմակերպությանը վճարման ենթակա պայմանագրային դրամական միջոցների հոսքերի և ակնկալվող դրամական միջոցների հոսքերի միջև տարբերությունը, որը կազմակերպությունն ակնկալում է ստանալ՝ հաշվի առնելով հնարավոր վարկային ռիսկը: ԱՎԿ-ի հաշվարկների մեխանիզմը մանրամասն ներկայացված է ստորև՝ առանցքային բաղադրիչներով, ներառյալ.

PD Դեֆոլտի հավանականությունը (PD) ներկայացնում է սահմանված ժամանակային տիրույթում դեֆոլտի հավանականության գնահատումը: Դեֆոլտ կարող է առաջանալ գնահատված ժամանակահատվածի ցանկացած պահի, եթե գործիքը շարունակում է մնալ պորտֆելում և նախկինում չի ապաճանաչվել:

EAD Դեֆոլտի դեպքում գործիքի արժեքը (EAD)ապագա դեֆոլտի ամսաթվի դրությամբ գործիքի գնահատված արժեքն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո ակնկալվող փոփոխությունների ազդեցությունը, Սա ներառում է մայր գումարի և տոկոսների պլանավորված կամ չպլանավորված մարումները, պարտավորված միջոցների ակնկալվող գումարները և բաց թողնված վճարումների արդյունքում կուտակված տոկոսները:

LGD Դեֆոլտի դեպքում կորստի չափը դրամական միջոցների կորստի գնահատումն է, որն առաջանում է, երբ որոշակի պահի տեղի է ունենում դեֆոլտ: Դա պայմանագրային դրամական միջոցների հոսքերի և այն դրամական միջոցների հոսքերի տարբերությունն է, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավների իրացումից միջոցները: Սովորաբար, LGD-ն արտահայտվում է որպես դեֆոլտի դեպքում գործիքի արժեքից (EAD) տոկոս

ԱՎԿ պահուստը հիմնվում է վարկային վնասների վրա, որոնք ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի կյանքի ընթացքում (ակտիվի կյանքի ընթացքում ակնկալվող վարկային վնաս կամ ԱԿԱՎԿ): Այն դեպքում, եթե առկա չէ վարկային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչումից հետո, ապա պահուստը հիմնվում է 12 ամսվա ընթացքում ակնկալվող վարկային վնասի վրա (12ամԱՎԿ): 12ամԱՎԿ-ը ԱԿԱՎԿ-ի այն մասն է, որը ներկայացնում է ֆինանսական գործիքի գծով պարտավորությունների չկատարման դեպքերի արդյունք հանդիսացող ԱՎԿ-ները, որոնք հնարավոր են հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում: Ինչպես ԱԿԱՎԿ-ն, այնպես էլ 12ամԱՎԿ-ն հաշվարկվում են անհատական կամ խմբային հիմունքով՝ ելնելով ֆինանսական գործիքների համապատասխան պորտֆելի բնույթից:

Խումբը սահմանել է քաղաքականություն՝ գնահատելու յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի վարկային ռիսկի զգալի աճի հայտանիշները՝ սկզբնական ճանաչման պահից ի վեր, հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացորդային ժամկետի ընթացքում տեղի ունեցող դեֆոլտի ռիսկի փոփոխությունը: Վերոնշյալ գործընթացի հիման վրա, Խումբը խմբավորում է իր վարկերը՝ ըստ փուլերի, ինչպես նկարագրված է ստորև.

Փուլ 1. Վարկերի սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը պահուստ է ճանաչում 12 ամսվա ԱՎԿ-ի հիման վրա: 1-ին փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից:

Փուլ 2. Երբ գործիքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, Խումբը պահուստը ճանաչում է վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների (ԱԿԱՎԿ) համար: 2-րդ փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից:

Փուլ 3. Արժեզրկված համարվող վարկեր:

POCI. Ձեռք բերված կամ ստեղծված՝ արժեզրկված (POCI) ակտիվները ֆինանսական ակտիվներ են, որոնք արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ: Տվյալ ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է վարկային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա: ԱՎԿ-ն միայն ճանաչվում կամ ապաճանաչվում է այնքանով, որքանով որ հետագայում փոխվում է ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների գնահատականը:

Դեֆոլտի սահմանումը. Խումբը ֆինանսական գործիքը համարում է դեֆոլտի ենթարկված և, հետևաբար, Փուլ 3 (վարկային տեսանկյունից արժեզրկված) ԱՊԿ-ի հաշվարկների համար բոլոր այն դեպքերում, երբ.

- վարկառուի պայմանագրային վճարումների գծով ավելի քան 90 օր կետանցը.
- տվյալ վարկառուի բոլոր պարտավորությունները, եթե դրանցից առնվազն մեկը Բանկում և/կամ այլ ֆինանսական կազմակերպություններում 90 օրից ավելի ժամկետանց է (ներառյալ ֆիզիկական անձի և անհատ ձեռնարկատիրոջ պատկանելությունը).

- տվյալ վարկառուի բոլոր պարտավորությունները, եթե փոխկապակցված անձանց պարտավորություններից առնվազն մեկը Բանկում 90 օրից ավելի ժամկետանց է.
- վարկառուի անբարենպաստ ֆինանսական վիճակի պատճառով վերաֆինանսավորված կամ վերանայված ակտիվներ, որոնք Բանկում ավելի քան 30 օր ժամկետանց են:

Ֆինանսական գործիքը նաև համարվում է արժեզրկված՝ հիմք ընդունելով սահմանված այլ քանակական և որակական գործոններ, ինչպիսիք են.

- փոխկապակցված անձանց տրամադրված վարկերի որակը.
- վերանայման կարգավիճակը.
- ֆինանսական մոնիտորինգի արդյունքները, որոնք հաստատվում են ղեկավարության կողմից:
- վարկի ապահովման նվազեցում՝ գրավատուի կողմից գրավի լրիվ կամ մասնակի կորստի, ֆիզիկական վնասի կամ ապօրինի վաճառքի կամ շուկայական արժեքի նվազման պատճառով վարկի ապահովության գործակցի նվազման հետևանքով.
- վարկերի կենտրոնացում այլ անձանց, ներառյալ ընտանիքի անդամների մոտ, վարկառուի կողմից վարկերի մարումից հրաժարում և 30-ից ավելի ժամկետանց օրերի առկայություն. Այս չափանիշը վերագրվում է բոլոր այն վարկերին, որոնց նկատմամբ կիրառվում է մոնիտորինգի եզրակացությունը:
- ֆորս-մաժորային հանգամանքները՝ վարկառուի կամ միակ սեփականատիրոջ մահը, հաշմանդամությունը, ծանր հիվանդությունները: Այս չափանիշը կիրառվում է հաճախորդի բոլոր վարկերի նկատմամբ, և
- բնական աղետներ կամ համաճարակներ. Այս չափանիշը վերագրվում է բոլոր այն վարկերին, որոնց նկատմամբ կիրառվում է մոնիտորինգի եզրակացությունը:

Հաճախորդի անվճարունակության որակական գնահատման շրջանակներում Խումբը նաև դիտարկում է մի շարք դեպքեր, որոնք կարող են վկայել վճարելու անհավանականության մասին՝ հիմնվելով ղեկավարության դատողության վրա: Երբ նման իրադարձություններ են տեղի ունենում, Խումբը դիտարկում է, թե արդյոք այդ իրադարձությունը պետք է հանգեցնի նրան, որ հաճախորդը պետք է դիտարկվի որպես չկատարված և հետևաբար գնահատվի որպես Փուլ 3 ԱՎԿ-ի հաշվարկների համար, թե արդյոք 2-րդ փուլը տեղին է:

Ընկերության քաղաքականությունն է ֆինանսական գործիքը դիտարկել որպես «վերականգնված» և, հետևաբար, վերադասակարգմամբ դուրս բերել 3-րդ փուլից, երբ դեֆոլտի չափանիշներից ոչ մեկը գոյություն չունի առնվազն վեց ամիս անընդմեջ և կետանցի օրերի թիվը չի գերազանցել յոթ օրացուցային օրը:: Ակտիվի վերականգնումից հետո այն 2-րդ կամ 1-ին փուլ դասակարգելու որոշումը կախված է վարկառուի կողմից պարտքի սպասարկման օրինաչափությունից և գնահատման ամսաթվի դրությամբ այլ ոչ առաջնային ՎՌՆԱ (SICR) չափանիշների առկայությունից:

Հաճախորդներին տրված վարկեր

Խմբավորում. Հաճախորդներին տրված 1-ին և 2-րդ փուլերի վարկերի, ինչպես նաև 3-րդ փուլի վարկերի համար, որոնք առանձին-առանձին ենթակա չեն արժեզրկման, Խումբը հաշվարկում է ԱՎԿ-ը պորտֆելի մակարդակով: Բանկի կողմից առանձնացված են հետևյալ պորտֆելները, որոնք, PD PIT մատրիցները գնահատելու նպատակով հետագայում բաժանվում են ավելի փոքր թիրախային խմբերի:

- Կորպորատիվ վարկեր.
- Սպառողական վարկեր.
- Գյուղատնտեսական վարկեր.
- Հիփոթեքային վարկեր.

Դեֆոլտի հավանականության գնահատման գործընթացը

Գանձապետական և միջբանկային հարաբերություններ. Խմբի գանձապետական և միջբանկային հարաբերությունները և գործընկերները իրենցից ներկայացնում են ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպություններ, բանկեր, բրոքերներ-դիլերներ, արտարժույթի առքուվաճառք իրականացնող ընկերություններ և քլիրինգային ընկերություններ: Այս հարաբերությունների առումով Խմբի ֆինանսական ռիսկերի կառավարման բաժինը

գնահատում է հիրապարակայնորեն հասանելի տեղեկատվությունը, մասնավորապես ֆինանսական տեղեկատվությունը և այլ արտաքին տվյալներ, օր՝ արտաքին վարկանիշները:

Հաճախորդներին տրված վարկերի գծով դեֆոլտի հավանականությունը հիմնվում է անցյալ ժամանակաշրջանների տեղեկությունների վրա և հաշվարկվում է հավանականության փոփոխության մատրիցաներով՝ հիմք ընդունելով վարկային պորտֆելների ժամկետայնության վերաբերյալ առկա տեղեկությունները: Հավանականությունները հաշվարկվում են որպես 12 ամիս ժամանակաշրջանի ընթացքում դեֆոլտ կատեգորիաների միջև փոխանցվող վարկերի մասնաբաժինը ընդհանուր վարկերի նկատմամբ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ: Դեֆոլտի հավանականությունը հաշվարկելիս Խումբը դիտարկում է կանխատեսվող մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք ունեն էական ազդեցություն դեֆոլտի հավանականության վրա՝ հաշվարկված ըստ ժամանակային շարքերի ռեգրեսիայի վերլուծության: Դեֆոլտի հավանականության կանխատեսումները գնահատվում են՝ հիմնվելով պաշտոնապես հասանելի հեռանկարային մակրոտնտեսական պարամետրերի վրա: Ժամանակային շարքի ռեգրեսիոն վերլուծությունը գնահատվում է հետևյալ ոլորտներով՝ գյուղատնտեսություն, բիզնես, սպառողական և հիփոթեքային վարկեր, որոնց արդյունքն այնուհետև աստիճանական իջեցվում է մինչև վարկերի կանխորոշված ենթախմբեր՝ հասնելու դեֆոլտի հավանականության PIT անցումային մատրիցներին:

Հիմք ընդունելով ընտրված մակրոտնտեսական պարամետրերի պատմական կանխատեսումների գնահատված շեղումը փաստացի միտումներից, հեռանկարային մակրոտնտեսական զարգացման երեք սցենարներ ուղղված են երեք PD PIT անցումային մատրիցների վերջնական արդյունքին, որոնք կշռված են 15%, 70% հավանականություններով՝. լավատեսական, բազային և հոռետեսական սցենարներին համապատասխան:

Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը (EAD) իրենից ներկայացնում է արժեզրկման գնահատման ենթակա ֆինանսական գործիքների համախառն հաշվեկշռային արժեքը, որը հաշվի է առնում ինչպես հաճախորդի ունակությունը մեծացնելու իր վարկի գումարը առաջիկա դեֆոլտի դեպքում, այնպես էլ հնարավոր վաղաժամկետ մարումները: Փուլ 1-ում գտնվող ակտիվների համար Խումբը գնահատում է 12 ամսվա ընթացքում հնարավոր դեֆոլտի հավանականությունը: Փուլ 2-ին, Փուլ 3-ին և POCI դասին պատկանող ֆինանսական ակտիվների համար դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը դիտարկվում է գործիքների ողջ կյանքի տևողության ընթացքում տեղի ունեցող դեպքերի համար:

Դեֆոլտի ժամանակ կորստի չափը. Խումբը դեֆոլտի ժամանակ կորստի չափը հաշվարկելու նպատակով օգտագործում է դեֆոլտի ամսաթվից հետո վերականգնումների վերաբերյալ պատմական տվյալները բոլոր դեֆոլտի ենթարկված վարկերի կտրվածքով: Դեֆոլտի ժամանակ կորստի չափը հաշվարկելու համար PD PIT-ի գնահատման համար օգտագործվող նախնական խմբավորումը հետագայում ենթարկվում է ենթախմբավորման ՝ ըստ գրավի տեսակի: Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը հավաքագրվում է դեֆոլտի ամսաթվից հետո ՝ ըստ LGD խմբերի: Ժամանակային կտրվածքով վերջին ժամկետանց վարկերի համար հնարավոր վերադարձի հավանականությունը գնահատվում է նախկինում ժամկետանց վարկերի պոպուլյացիայի զարգացման գործակցով: Տվյալ շրջանակներում հաշվի են առնվում հավաքագրման քաղաքականության ցանկացած փոփոխություն: Հավաքագրվում է դեֆոլտի ամսաթվից հետո դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը և զեղչվում դեֆոլտի ամսաթվի դրությամբ՝ միջին արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի օգտագործմամբ, յուրաքանչյուր LGD խմբի գծով: Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է բոլոր տեսակի դրամական ներհոսքերը ժամկետանց վարկերի գծով (վարկերի մարումից ստացված միջոցներ, երաշխավորից ստացված միջոցներ, գրավի առարկայի վաճառքից ստացված միջոցներ և այլն):

Վարկային ռիսկի զգալի աճ. Խումբը սահմանել է քաղաքականություն՝ գնահատելու յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի վարկային ռիսկի զգալի աճի հայտանիշները՝ սկզբնական ճանաչման պահից ի վեր հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացորդային ժամկետի ընթացքում տեղի ունեցող դեֆոլտի ռիսկի փոփոխությունը: .: Խմբի կողմից օգտագործվող օբյեկտիվ չափանիշը վարկերի ժամկետանց օրերի մասին տեղեկատվությունն է: Խումբը եզրակացնում է, որ կա ակտիվների վարկային ռիսկի զգալի աճ, երբ փոխառուի այդ ակտիվների հետ կապված վճարումները ժամկետանց են ավելի քան 30 օրով:

Բանկի ղեկավարությունը նաև հաշվի է առնում հետևյալ գործոնները՝ վարկային ռիսկի աճը որոշելու համար.

- Հայաստանի այլ ֆինանսական հաստատություններում վարկառուի ժամկետանց օրերը.
- Նախասահմանված փոխկապակցված կողմերի ժամկետանց օրերը.
- Վարկառուի ֆինանսական պայմաններում զգալի դժվարությունները.
- Վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով առաջացած վարկի պայմանների վերանայումը.
- Վարկառուի գործունեության ֆինանսական մոնիտորինգի արդյունքը.

Կանխատեսումային տեղեկատվություն և բազմակի տնտեսական սցենարներ

ԱՎԿ մոդելներում Խումբը հիմնվում է կանխատեսումային տեղեկատվության լայն շրջանակի վրա, մասնավորապես այնպիսի տնտեսական ելակետային տվյալների, ինչպիսիք են՝

2024թ.

- Համախառն ներքին արդյունքի աճ, %
- ՀՀ դրամ/ԱՄՆ դոլարի փոխարժեք, միջին ամսական
- ՀՀ դրամ-ԱՄՆ դոլարի փոխարժեք, տարեվերջին
- Արդյունաբերական արտադրանքի ծավալ, տարեկան աճ %
- Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալ, տարեկան աճ %
- Ծառայությունների ծավալ (առանց առևտրի), տարեկան աճ %
- ՀՀ պետական բյուջե, դեֆիցիտ/ավելցուկ.

2023թ.

- Համախառն ներքին արդյունքի աճ, %
- ՀՀ դրամ/ԱՄՆ դոլարի փոխարժեք, միջին ամսական
- ՀՀ դրամ-ԱՄՆ դոլարի փոխարժեք, տարեվերջին
- Արտահանման աճ %, մլն ԱՄՆ դոլար
- Արդյունաբերական արտադրանքի ծավալ, տարեկան աճ %
- Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալ, տարեկան աճ %
- Ծառայությունների ծավալ (առանց առևտրի), տարեկան աճ %
- ՀՀ պետական բյուջե, դեֆիցիտ/ավելցուկ.

Խումբը կանխատեսումային տեղեկատվությունը ստանում է երրորդ կողմի աղբյուրներից (Տնտեսական հետախուզության գրասենյակ, ՀՀ ԿԲ, ինչպես նաև ՀՀ Ֆինանսների նախարարություն): 15%, 70% և 15% հավանականությունները վերագրվում են համապատասխան սցենարներից յուրաքանչյուրին՝ լավատեսական, բազային և հոռետեսական սցենարներին:

Իրացվելիության ռիսկ և ֆինանսավորման կառավարում:
Խումբը ենթարկվում է իրացվելիության ռիսկի՝ ինչպես ֆինանսավորման, այնպես էլ առևտրային իրացվելիության ռիսկի առումով: Ֆինանսավորման իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը կարող է չունենալ բավարար իրացվելի դրամական միջոցներ և ակտիվներ՝ իր պարտավորությունները կատարելու համար:

Առևտրային իրացվելիության ռիսկը ակտիվների արժեքի կորստի ռիսկն է, երբ շուկաները ժամանակավոր սեղմվում են, ինչը կարող է ստիպել Խմբին կիրառել անսովոր ցածր գին կամ զրկել Խմբին ցանկացած գնով ակտիվը դրամական միջոցների և ֆինանսավորման վերածելու հնարավորությունից:

Խմբի ներսում սթրեսային սցենարը, որը ընկած է մոդելի հիմքում և կարևոր է կառավարման նպատակների համար, հաշվի է առնում ինչպես Խմբին բնորոշ սթրեսային դեպքերը, այնպես էլ ավելի լայնածավալ շուկայական ճգնաժամերը:

Ֆինանսավորման իրացվելիության ռիսկը սահմանափակելու համար ղեկավարությունը դիվերսիֆիկացնում է ֆինանսավորման աղբյուրները, ի լրում իր հիմնական ավանդային բազայի: Այդ գործընթացը ներառում է ակնկալվող դրամական միջոցների գնահատում և առաջնակարգ

ապահովման միջոցի առկայություն, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորման ստացման համար:

Առևտրային իրացվելիության ռիսկը սահմանափակելու համար Խումբը պահպանում է բարձր իրացվելի և տարաբնույթ ակտիվների պորտֆել (բարձր իրացվելի ակտիվներ), որոնք կարող են հեշտությամբ իրացվել դրամական միջոցների հոսքերի չնախատեսված ընդհատման դեպքում:

Խումբը ունի նաև վարկային գծեր, ինչից այն կարող է օգտվել իրացվելիության կարիքների դեպքում: Բացի այդ, Խումբը ՀՀ ԿԲ-ում պահում է դրամային ավանդ (պարտադիր պահուստ), որի գումարը կախված է ներգրավված միջոցների ծավալից:

Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է Խմբի կողմից՝ հիմնվելով Կենտրոնական բանկի կողմից սահմանված իրացվելիության որոշակի գործակիցների վրա: Ի հավելումն նորմատիվային իրացվելիության ցուցանիշի, Խումբը իր «Ռիսկի ախորժակի մասին» հաշվետվությունում սահմանում է իրացվելիության ռիսկի ախորժակը, հանդուրժողականությունը, կարողությունների մակարդակները և իրացվելիության ռիսկի այլ համապատասխան սահմանաչափեր: Իրացվելիության ընդունելի մակարդակը պահպանելու համար Խումբը պահում է բարձր իրացվելի ակտիվներ, ներառյալ դրամական միջոցներ, նոստրո հաշիվներ, Հայաստանի կառավարության կողմից թողարկված պարտքային արժեթղթեր և կորպորատիվ պարտքային արժեթղթեր, որոնց համար առկա է ակտիվ և իրացվելի շուկա, որոնք գրավադրված չեն կամ որոնց օգտագործումը որևէ կերպ սահմանափակված չէ: Ցպահանջ վճարման ենթակա պարտավորությունները ներառում են հաճախորդների ընթացիկ հաշիվները և ցպահանջ ավանդները, ինչպես նաև ցանկացած այլ պարտավորություն, որը ենթակա է ցպահանջ վճարման:

Շուկայական ռիսկ. Շուկայական ռիսկը պոտենցիալ ֆինանսական վնասի ռիսկն է, որը պայմանավորված է շուկայական գների (տոկոսադրույքներ, ապրանքներ, վարկային սպրեդներ, փոխարժեքներ և սեփական կապիտալի գներ) կամ այլ պարամետրերի փոփոխություններով, որոնք ազդում են գների վրա, ինչպես, օրինակ, տատանումները և հարաբերակցությունները:

Արժութային ռիսկ. Արժութային ռիսկն արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է Տնօրինությունը սահմանել է արտարժութային դիրքերի ավելի խիստ սահմանաչափեր, քան ԿԲ կողմից սահմանված նորմատիվներն են: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների:

2026թ. մարտի 31	**ՀՀ դրամ**	**I Խմբի արտարժույթ**	**II Խմբի արտարժույթ**	**Ընդամենը**
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	34,052,862	42,911,837	2,873,585	**79,838,284**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	54,395	8,587	-	**62,982**
Պահանջներ բանկերի նկատմամբ	62,891,803	43,598,604	588,076	**107,078,483**
Ներդրումային արժեթղթեր	67,949,373	14,751,432	-	**82,700,805**
Հաճախորդներին տրված վարկեր	518,170,779	133,247,802	102,522	**651,521,103**
ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	79,711,168	24,135,895	-	**103,847,063**
Այլ ֆինանասական ակտիվներ	20,765,086	8,550,393	617,394	**29,932,873**
Ընդամենը	**783,595,466**	**267,204,550**	**4,181,577**	**1,054,981,593**
Պարտավորություններ				
Բանկերի ավանդներ և մնացորդներ	340,886	667,243	-	**1,008,129**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	438,193,023	176,323,454	2,937,509	**617,453,986**
Թողարկված պարտքային արժեթղթեր	55,286,396	15,423,071	-	**70,709,467**
Այլ փոխառություններ	94,607,021	66,535,895	463,672	**161,606,588**
Այլ պարտավորություններ	8,693,701	1,362,772	6,922	**10,063,395**
Ստորադաս վարկեր	-	12,855,533	-	**12,855,533**
Ընդամենը	**597,121,027**	**273,167,968**	**3,408,103**	**873,697,098**
Զուտ դիրք	**186,474,439**	**(5,963,418)**	**773,474**	**181,284,495**

2025թ. Դեկտեմբերի 31	**ՀՀ դրամ**	**I Խմբի արտարժույթ**	**II Խմբի արտարժույթ**	**Ընդամենը**
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	47,508,807	44,777,053	6,884,959	**99,170,819**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	34,617	1,379	-	**35,996**
Պահանջներ բանկերի նկատմամբ	52,094,377	46,055,613	98,137	**98,248,127**
Ներդրումային արժեթղթեր	57,646,959	15,600,176	-	**73,247,135**
Հաճախորդներին տրված վարկեր	498,885,333	133,736,505	1,181,166	**633,803,003**
ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	78,039,121	25,002,232	-	**103,041,353**
Այլ ֆինանասական ակտիվներ	19,889,371	5,676,751	73,177	**25,639,299**
Ընդամենը	**754,098,585**	**270,849,709**	**8,237,439**	**1,033,185,733**
Պարտավորություններ				
Բանկերի ավանդներ և մնացորդներ	(569,023)	673,166	1,903,772	**2,007,915**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	439,030,721	180,047,430	2,983,526	**622,061,677**
Թողարկված պարտքային արժեթղթեր	37,891,722	13,906,577	-	**51,798,299**
Այլ փոխառություններ	87,103,325	65,897,811	4,876,206	**157,877,342**
Այլ պարտավորություններ	11,935,434	1,277,221	7,968	**13,220,623**
Ստորադաս վարկեր	-	13,152,984	-	**13,152,984**
Ընդամենը	**575,392,179**	**274,955,189**	**9,771,472**	**860,118,840**
Զուտ դիրք	**178,706,406**	**(4,105,480)**	**(1,534,033)**	**173,066,893**

Գործառնական ռիսկ. Գործառնական ռիսկը համակարգի խափանման, ներքին գործընթացների անհամապատասխանության կամ ձախողման, աշխատակազմի կողմից թույլ տրված սխալների, խարդախությունների կամ արտաքին գործոնների հետևանքով հնարավոր կորուստի ռիսկն է: Երբ ներքին վերահսկողության համակարգը դադարում է գործել, գործառնական ռիսկերը կարող են վնաս հասցնել համբավին, ունենալ իրավական հետևանքներ կամ բերել ֆինանսական վնասներ: Խումբը չի ենթադրում, որ բոլոր գործառնական ռիսկերը վերացված են, սակայն ներքին վերահսկողության համակարգի օգնությամբ և հնարավոր ռիսկերի որոշման և համապատասխան ռեակցիայի միջոցով Խումբը կարող է կառավարել նման ռիսկերը: Գործառնական ռիսկերի կառավարման շրջանակում Խումբը ներդրել է պաշտպանության երեք գիծ. Պաշտպանության առաջին գիծն ապահովում է առաջնագծի անձնակազմը և գործառնական ղեկավարությունը, երկրորդը՝ ռիսկերի կառավարման և համապատասխանության ուղղությունը, իսկ երրորդը՝ ներքին աուդիտը:

Գործառնական ռիսկերի կառավարման համակարգը ներառում է հետևյալ հիմնական ասպեկտները՝ ռիսկերի քարտեզագրում, միջադեպերի վերլուծություն և մշտական վերահսկողության գործառույթ: Ներքին վերահսկողության համակարգը ընդգրկում է պարտավորությունների արդյունավետ բաժանման, մուտքի թույլատվության, համադրման և հաստատման ընթացակարգեր, աշխատակազմի ուսուցում և գնահատում:

33 Իրական արժեքի չափում

Իրական արժեքի չափման գործընթաց. Խմբի ղեկավարությունը սահմանում է ինչպես իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, օրինակ՝ չգնանշվող առևտրային, իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող արժեթղթերի, ածանցյալ ֆինանսական գործիքների, ներդրումային գույքի և շենքերի համար, այնպես էլ իրական արժեքի ոչ պարբերաբար չափման քաղաքականությունը, օրինակ՝ վաճառքի համար պահվող ակտիվների համար:

Արտաքին գնահատողները ներգրավվում են նշանակալի ակտիվների գնահատման համար, ինչպիսիք են հողը և շենքերը, փոխադրամիջոցները: Արտաքին գնահատողների ներգրավումը որոշվում է ղեկավարության կողմից: Ընտրությունը կատարվում է՝ հիմնվելով այնպիսի չափանիշների վրա, ինչպիսիք են շուկայի մասին տեղեկացվածությունը, վարկանիշը, անկախությունը և մասնագիտական ստանդարտների պահպանումը:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին ղեկավարությունը վերլուծում է այն ակտիվների և պարտավորությունների արժեքների փոփոխությունները, որոնք ենթակա են վերագնահատման Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն: Այս վերլուծության համար ղեկավարությունը ստուգում է հիմնական տվյալները, որոնք կիրառվել են նախորդ գնահատման ժամանակ՝ համադրելով գնահատման հաշվարկի տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի հետ: Ղեկավարությունը Խմբի անկախ գնահատողների հետ միասին համեմատում է յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական արժեքի փոփոխությունը յուրաքանչյուր համապատասխան արտաքին աղբյուրների հետ՝ որոշելու համար տվյալ փոփոխության հիմնավորված լինելը:

Իրական արժեքի հիերարխիա. Խումբն օգտագործում է ֆինանսական գործիքների իրական արժեքների բացահայտման և գնահատման մեթոդների հետևյալ հիերարխիան ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշելու և բացահայտելու համար:

- 1-ին մակարդակ – համանման ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկայում գնանշված գներ (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ. գնահատման այլ մեթոդ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալները, որոնք ունեն նշանակալի ազդեցություն իրական արժեքի գնահատման համար, ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից:
- 3-րդ մակարդակ. մոդելներ, որոնք օգտագործում են մոդելներ, որոնք ունեն նշանակալի ազդեցություն գրանցված իրական արժեքի վրա, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա:

Իրական արժեքի բացահայտման նպատակով Խումբը որոշել է ակտիվների և պարտավորությունների դասեր՝ հիմնվելով ակտիվի կամ պարտավորության բնույթի,

բնութագրերի և ռիսկերի և իրական արժեքի հիերարխիայի մակարդակի վրա, ինչպես նկարագրված է վերևում:

Հազ. ՀՀ դրամ

31 մարտի 2026թ.	**Իրական արժեքի չափում՝ օգտագործելով**			
	Ակտիվ շուկաների գնանշումներ (Մակարդակ 1)	**Նշանակալից դիտարկելի ելակետային տվյալներ (Մակարդակ 2)**	**Նշանակալից ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (Մակարդակ 3)**	**Ընդամենը**
Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ				
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ				
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	62,982	-	**62,982**
Բաժնային գործիքներ	2,901,154	-	-	**2,901,154**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
Պարտքային գործիքներ	-	3,396,134	-	**3,396,134**
Բաժնային գործիքներ	398,370	-	-	**398,370**
Չգնանշված բաժնային արժեթղթեր – տեղական ընկերություններ	-	-	-	**-**
Ոչ ֆինանսական ակտիվներ				
Հիմնական միջոցներ - հող և շենքեր, տրանսպորտային միջոցներ	-	-	12,898,067	**12,898,067**
Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	28,525,939	51,312,345	-	**79,838,284**
Պահանջներ բանկերի նկատմամբ	-	40,092,993	66,985,490	**107,078,483**
Պարտքային արժեթղթեր ամորտիզացված արժեքով	-	76,005,147	-	**76,005,147**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	-	-	103,847,063	**103,847,063**
Այլ ֆինանսական ակտիվներ	-	-	20,836,262	**20,836,262**
Հաճախորդներին տրված վարկեր	-	-	651,521,102	**651,521,102**
Պարտավորություններ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	-	247,089,506	370,364,480	**617,453,986**
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	70,709,467	-	**70,709,467**
Բանկերից ներգրավված միջոցներ	-	664,049	344,080	**1,008,129**
Ստորադաս վարկեր	-	-	12,855,533	**12,855,533**
Այլ փոխառու միջոցներ	-	-	161,606,588	**161,606,588**
Այլ ֆինանսական պարտավորություններ	**-**	-	16,216,607	**16,216,607**

Հազ. ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2025թ.	**Իրական արժեքի չափում՝ օգտագործելով**			
	Ակտիվ շուկաների գնանշումներ (Մակարդակ 1)	**Նշանակալից դիտարկելի ելակետային տվյալներ (Մակարդակ 2)**	**Նշանակալից ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (Մակարդակ 3)**	**Ընդամենը**
Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ				
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ				
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	35,996	-	**35,996**
Բաժնային գործիքներ	3,521,820	-	-	**3,521,820**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
Պարտքային գործիքներ	-	3,314,315	-	**3,314,315**
Բաժնային գործիքներ	398,796	-	-	**398,796**
Չգնանշված բաժնային արժեթղթեր – տեղական ընկերություններ	-	-	-	**-**
Ոչ ֆինանսական ակտիվներ				
Հիմնական միջոցներ - հող և շենքեր, տրանսպորտային միջոցներ	-	-	12,723,548	**12,723,548**
Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	28,676,392	70,494,427	-	**99,170,819**
Պահանջներ բանկերի նկատմամբ	-	51,335,353	46,912,774	**98,248,127**
Պարտքային արժեթղթեր ամորտիզացված արժեքով	-	66,012,204	-	**66,012,204**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	-	-	103,041,353	**103,041,353**
Այլ ֆինանսական ակտիվներ	-	-	2,393,282	**2,393,282**
Հաճախորդներին տրված վարկեր	-	-	633,803,002	**633,803,002**
Պարտավորություններ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	-	271,985,390	350,076,287	**622,061,677**
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	51,798,299	-	**51,798,299**
Բանկերից ներգրավված միջոցներ	-	672,009	1,335,906	**2,007,915**
Ստորադաս վարկեր	-	-	13,152,984	**13,152,984**
Այլ փոխառու միջոցներ	-	-	157,877,342	**157,877,342**
Այլ ֆինանսական պարտավորություններ	**-**	-	13,220,624	**13,220,624**

2026թ. մարտի 31-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքները մոտ են դրանց հաշվեկշռային արժեքներին:

Գնահատման մեթոդաբանություն և ենթադրություններ Ստորև նկարագրված են այն մեթոդներն ու ենթադրությունները, որոնք օգտագործվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում իրական արժեքով արտացոլված ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը որոշելու համար, ինչպես նաև իրական արժեքով չարտացոլված այն հոդվածների իրական արժեքը որոշելու համար, որոնց իրական արժեքը բացահայտվում է:

Ակտիվներ, որոնց իրական արժեքը մոտ է հաշվեկշռային արժեքին

Բարձր իրացվելի կամ կարճաժամկետ մարման ժամկետով (երեք ամսից պակաս) ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համար ենթադրվում է, որ դրանց հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին: Այս ենթադրությունը կիրառվում է նաև ցպահանջ ավանդների և անժամկետ խնայողական հաշիվների նկատմամբ:

Ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափումը

Գույքի իրական արժեքը որոշվել է շուկայական համադրելի մեթոդի կիրառմամբ: Հողի և շենքերի գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում: Սա նշանակում է, որ գնահատողի կողմից կատարված գնահատումները հիմնված են շուկայական գործարքների գների վրա, էական ճշգրտմամբ՝ հաշվի առնելով կոնկրետ գույքի բնույթը, գտնվելու վայրը կամ վիճակը: Այդ ակտիվների իրական արժեքները գնահատվում են անկախ, մասնագիտական որակավորում ունեցող և անհրաժեշտ լիցենզիաների տիրապետող՝ գույքի գնահատողների կողմից իրականացված գնահատումների հիման վրա: Նշանակալից ելակետային տվյալները և ենթադրությունները մշակվում են ղեկավարության հետ սերտ խորհրդակցությամբ: Լրացուցիչ տեղեկություններ ներկայացված են ստորև:
Հող և շինություններ

Գրասենյակի հողերի և շենքերի իրական արժեքները գնահատվում են եկամտի և շուկայական մոտեցումներով: Եկամուտի մոտեցումը կիրառվել է վարձակալությունից ստացված եկամտի գնահատված հոսքի կապիտալացմամբ՝ առանց կանխատեսվող գործառնական ծախսերի, օգտագործելով շուկայական եկամտաբերությունից բխող զեղչման դրույքաչափը, որը ենթադրվում է նմանատիպ անշարժ գույքի գծով վերջին գործարքներից: Երբ փաստացի վարձավճարը էականորեն տարբերվում է գնահատված վարձավճարներից, ճշգրտումներ են կատարվում վարձակալության գնահատված արժեքի նկատմամբ: Վարձակալված գույքից դրամական միջոցների ներհոսքը գնահատելիս հաշվի է առնվում զբաղվածության ներկա մակարդակը, առկա վարձակալության պայմանները և ապագա վարձակալություններից վարձակալական վճարների ակնկալիքները շենքերի շահագործման մնացած տևողության ընթացքում:

Առավել նշանակալի ելակետային տվյալները, որոնցից որևէ մեկը դիտարկելի չէ, վարձակալության գնահատված արժեքն է, թափուրության մակարդակի և զեղչի դրույքաչափի վերաբերյալ ենթադրությունները: Գնահատված իրական արժեքը մեծանում է, եթե գնահատված վարձակալությունը մեծանում է, թափուրության մակարդակը նվազում է կամ եթե զեղչման տոկոսադրույքը (շուկայական եկամտաբերությունը) նվազում է: Ընդհանուր գնահատումները զգայուն են բոլոր երեք ենթադրությունների նկատմամբ: Ղեկավարությունը համարում է, որ ողջամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրությունների շրջանակը ամենամեծն է վարձակալության արժեքների և թափուրության մակարդակների համար, և որ կա նաև փոխկապակցվածություն այս տվյալների միջև:

Շուկայական մոտեցումն արտացոլում է նմանատիպ գույքի համար վերջին շուկայական գործարքների դիտարկելի գները և ներառում է գույքին բնորոշ գործակիցներով ճշգրտումներ՝ ներառյալ չափը, գտնվելու վայրը, շենքի շինարարական-ինժեներական առանձնահատկությունները, տեխնիկական (ֆիզիկական) վիճակը, ծանրաբեռնվածությունը և օգտագործման նպատակը:

Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներից է՝ ճշգրտումը գույքին բնորոշ գործակիցներով: Այս ճշգրտման չափն ու ուղղությունը կախված է նմանատիպ գույքի դիտարկելի շուկայական գործարքների քանակից և բնութագրերից, որոնք օգտագործվում են որպես գնահատման մեկնարկային կետ: Չնայած այս ելակետային տվյալը սուբյեկտիվ դատողության արդյունք է, ղեկավարությունը գտնում է, որ ընդհանուր առմամբ ողջամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրությունները էական ազդեցություն չեն ունենա գնահատման վրա:

Շենքերի իրական արժեքը դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում՝ հաշվի առնելով գնահատման տեխնիկայի դիտարկելի ելակետային տվյալների նշանակալից դիտարկելի ճշգրտումները (գործակիցները): Համաձայն Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ գնահատման ենթակա գույքը վերագնահատվում է 3 տարին մեկ անգամ, եթե շուկայում էական շեղումներ տեղի չեն ունենում: 2025թ.-ի համար կատարվել է կատարվել է հիմնական միջոցների վերագնահատում:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ. Ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք գնահատվում են օգտագործելով շուկայական ելակետային տվյալներ, հիմնականում տոկոսային և արժութային սվոպեր են և արտարժութային ֆորվարդ պայմանագրեր: Ամենահաճախ կիրառվող գնահատման մեթոդները ներառում են ֆորվարդների գնորոշման և սվոփ մոդելներ՝ օգտագործելով ներկա արժեքի հաշվարկներ: Այս մոդելները հաշվի են առնում տարբեր ելակետային տվյալներ, ինչպիսիք են՝ գործընկերների վարկունակությունը, արտարժույթի սփոթ և ֆորվարդ դրույքները և տոկոսադրույքի կորը:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ Գնահատման մեթոդների և գնորոշման մոդելների միջոցով գնահատված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերը հիմնականում բաղկացած են ՀՀ Կառավարության պարտատոմսերից: Այդ արժեթղթերը գնահատվում են եկամտաբերության կորի միջոցով, ինչը ընդգրկում է շուկայի կողմից դիտարկելի և ՀՀ ԿԲ կողմից հրապարակված տվյալներ:

34 Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս ակտիվների և պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ դրանց ակնկալվող վերականգնման կամ մարման ժամկետների:

31 մարտի 2026թ. *Հազ. ՀՀ դրամ*	**Խնդրահարույց/ ժամկետանց վարկեր**	**Ժամկե-տանց**	**Ցպահանջ և մինչև 1 ամիս**	**1-3 ամիս**	**3-12 ամիս**	**1- 5 տարի**	**Ավելի քան 5 տարի**	**Անժամկետ**	**Ընդամենը**
Ֆինանսական ակտիվներ									
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ			79,838,284						**79,838,284**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ			62,982						**62,982**
Պահանջներ բանկերի նկատմամբ			63,597,954	-	-	-	-	43,480,529	**107,078,483**
Ներդրումային արժեթղթեր			16,715,853	14,702,952	18,468,255	24,046,159	5,468,061	3,299,524	**82,700,805**
Հաճախորդներին տրված վարկեր	1,031,244	15,620,767	15,661,047	32,383,930	138,204,978	300,473,754	148,145,383	-	**651,521,103**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	159,310	1,567,521	5,315,016	6,866,705	28,036,970	55,557,009	6,344,533	-	**103,847,063**
Այլ ֆինանսական ակտիվներ			20,836,262						**20,836,262**
Ընդամենը	**1,190,555**	**17,188,287**	**202,027,397**	**53,953,587**	**184,710,203**	**380,076,922**	**159,957,977**	**46,780,053**	**1,045,884,981**
Ֆինանսական պարտավորություններ									
Բանկերից ներգրավված միջոցներ			688,844	319,285	-	-	-	-	**1,008,129**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ			242,713,314	42,863,827	199,715,950	129,301,375	2,859,520		**617,453,986**
Թողարկված պարտքային արժեթղթեր - թողարկված ՀՀ պարտատոմսեր				11,650,097	3,296,204	55,763,166	-		**70,709,467**
Այլ փոխառու միջոցներ			4,621,099	5,589,022	20,574,985	80,869,518	49,951,964	-	**161,606,588**
Այլ ֆինանսական պարտավորություններ			13,606,812		2,609,795				**16,216,607**
Ստորադաս վարկեր				177,710	25,340	12,112,118	540,366	-	**12,855,533**
Ընդամենը			**261,630,069**	**60,599,941**	**226,222,274**	**278,046,176**	**53,351,849**	**-**	**879,850,310**
Իրացվելիության կուտակային բացը	**1,190,555**	**17,188,287**	**(59,602,672)**	**(6,646,354)**	**(41,512,071)**	**102,030,746**	**106,606,128**	**46,780,053**	**166,034,671**
Իրացվելիության կուտակային բացը			**(41,223,830)**	**(47,870,185)**	**(89,382,255)**	**12,648,490**	**119,254,618**	**166,034,671**	

31 Դեկտեմբերի 2025թ. *Հազ. ՀՀ դրամ*	**Խնդրահարույց/ ժամկետանց վարկեր**	**Ժամկե-տանց**	**Ցպահանջ և մինչև 1 ամիս**	**1-3 ամիս**	**3-12 ամիս**	**1- 5 տարի**	**Ավելի քան 5 տարի**	**Անժամկետ**	**Ընդամենը**
Ֆինանսական ակտիվներ									
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ			99,170,819						**99,170,819**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ			35,996						**35,996**
Պահանջներ բանկերի նկատմամբ			39,113,760	-	-	-	-	59,134,367	**98,248,127**
Ներդրումային արժեթղթեր			2,507,670	2,580,464	38,798,565	13,637,608	13,654,071	2,068,756	**73,247,135**
Հաճախորդներին տրված վարկեր	859,733	10,124,700	13,249,891	34,422,129	128,432,643	293,159,379	153,554,529	-	**633,803,003**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	91,209	982,297	5,398,351	7,150,271	22,819,694	60,304,223	6,295,308	-	**103,041,353**
Այլ ակտիվներ	-	-	2,393,282			3,194,197		20,051,820	**25,639,299**
Ընդամենը	**950,942**	**11,106,997**	**161,869,769**	**44,152,864**	**190,050,902**	**370,295,407**	**173,503,908**	**81,254,944**	**1,033,185,733**
Ֆինանսական պարտավորություններ									
Բանկերից ներգրավված միջոցներ			1,740,407	267,508	-	-	-	-	**2,007,915**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ			272,223,644	56,913,202	193,302,947	96,696,879	2,925,005		**622,061,677**
Թողարկված պարտքային արժեթղթեր - թողարկված ՀՀ պարտատոմսեր			-	7,107,727	12,322,035	32,368,537	-	-	**51,798,299**
Այլ փոխառու միջոցներ			7,455,411	2,488,504	22,849,505	81,965,434	43,118,489	-	**157,877,342**
Այլ ֆինանսական պարտավորություններ			7,974,439	-	5,246,186	-	-		**13,220,624**
Ստորադաս վարկեր			-	75,127	39,405	10,152,677	2,885,775	-	**13,152,984**
Ընդամենը			**289,393,901**	**66,852,068**	**233,760,077**	**221,183,526**	**48,929,269**	**-**	**860,118,841**
Իրացվելիության կուտակային բացը	**950,942**	**11,106,997**	**(127,524,132)**	**(22,699,204)**	**(43,709,175)**	**149,111,880**	**124,574,639**	**81,254,944**	**173,066,891**
Իրացվելիության կուտակային բացը			**(115,466,193)**	**(138,165,397)**	**(181,874,572)**	**(32,762,692)**	**91,811,948**	**173,066,891**	

35 Կապակցված կողմերի բացահայտումներ

Համաձայն «Կապակցված կողմերի բացահայտումներ» ՀՀՄՍ 24-ի, կողմերը համարվում են փոխկապակցված, եթե կողմերից մեկն ունի մյուս կողմին վերահսկելու կամ ֆինանսական կամ գործառնական որոշումներ կայացնելիս զգալի ազդեցություն գործադրելու կարողություն: Յուրաքանչյուր հնարավոր փոխկապակցված կողմի հարաբերություն դիտարկելիս ուշադրություն է դարձվում հարաբերության բնույթի, այլ ոչ միայն իրավական ձևի վրա:
Կապակցված կողմերը կարող են այնպիսի գործարքներ իրականացնել, որոնք չէին իրականացվի չկապակցված կողմերի միջև, և կապակցված կողմերի միջև իրականացվող գործարքների գներն ու պայմանները կարող են տարբերվել չկապակցված կողմերի հետ գործարքների գներից և պայմաններից:

Կապակցված կողմերի հետ գործառնությունների գծով մնացորդները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկայացված են ստորև.

Հազ. ՀՀ դրամ	31 մարտի 2026թ.			31 դեկտեմբերի 2025թ.		
	Մայր ընկերություն	**Առանցքային ղեկավար անձնակազմ և նրանց ընտանիքի մերձավոր անդամներ**	**Ասոցիացված ընկերու-թյուններ**	**Մայր ընկերություն**	**Առանցքային ղեկավար անձնակազմ և նրանց ընտանիքի մերձավոր անդամներ**	**Ասոցիացված ընկերու-թյուններ**
Համախառն չմարված վարկեր հունվարի 1-ի դրությամբ	**5,717,828**	**2,396,487**	**-**	**2,230,251**	**2,447,809**	**-**
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	215,244	137,771	-	4,508,591	924,104	-
Տարվա ընթացքում մարված վարկեր	(274,296)	(181,472)	-	(1,282,442)	(980,444)	-
Այլ փոփոխություններ	(143,410)	4,749	-	261,428	5,019	-
Հաշվետու ամսաթվի դրությամբ չմարված վարկեր, համախառն	**5,515,366**	**2,357,535**	**-**	**5,717,828**	**2,396,487**	**-**
Հանած՝ արժեզրկման գծով պահուստը	(8,454)	(25,721)	-	(6,383)	(21,462)	-
Հաշվետու ամսաթվի դրությամբ չմարված վարկեր, զուտ	**5,506,913**	**2,331,815**	**-**	**5,711,445**	**2,375,025**	**-**
Վարկերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը	8.5%	7.9%	-	8.5%	7.9%	-
Ընթացիկ հաշիվներ և ավանդներ առ1 հունվարի	**4,780,228**	**2,764,767**	**3,616,684**	**735,585**	**2,683,200**	**2,676,335**
Տարվա ընթացքում ներգրավված ընթացիկ հաշիվներ և ավանդներ	-	1,072,194	2,704,995	18,977,862	3,814,141	12,646,171
Տարվա ընթացքում մարված ընթացիկ հաշիվներ և ավանդներ	(687,689)	(24,608)	(1,424,719)	(14,932,927)	(3,645,271)	(11,705,822)
Այլ փոփոխություններ	(32,340)	(58,725)	(1,087)	(292)	(87,303)	-
Ընթացիկ հաշիվներ և ավանդներ հաշվետու ամսաթվի դրությամբ	**4,060,199**	**3,753,628**	**4,895,874**	**4,780,228**	**2,764,767**	**3,616,684**

36 Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում

Խումբն ունի բաժնեմաս «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ում, որտեղ Խմբին է պատկանում բաժնետոմսերի 49%-ը (31 դեկտեմբերի 2024թ.՝ 49%): Խմբի ասոցիացված կազմակերպությունը հիմնադրվել է 2013թ.-ին և կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ: Ասոցիացված կազմակերպության հիմնական գործունեությունը պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կառավարումն է: Ասոցիացված կազմակերպության գործունեությունը վերահսկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից: 2025թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ ներդրման հաշվեկշռային արժեքը կազմել է 2,133,542 հազ. ՀՀ դրամ (2024թ.՝ 2,044,092 հազ. ՀՀ դրամ):

Ստորև ներկայացված է էական ասոցիացված կազմակերպությունների ամփոփ ֆինանսական տեղեկատվությունը

Հազ. ՀՀ դրամ	**31/03/2026թ.**	**31/12/2025թ.**
Ընդամենը ակտիվներ	7,629,531	6,436,721
Ընդամենը պարտավորություններ	1,261,606	1,155,060
Զուտ ակտիվներ	**6,367,925**	**5,281,661**
Խմբի մասնաբաժինը զուտ ակտիվներում	**3,120,283**	**2,588,014**

Ասոցիացված կազմակերպության շահույթում կամ վնասում և այլ համապարփակ եկամտում խմբի մասնաբաժինը հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	**31/03/2026թ.**	**31/12/2025թ.**
Հաշվետու տարվա շահույթ	**534,636**	**1,653,350**
Այլ համապարփակ եկամուտ/(վնաս)	(2,367)	102,459
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	**532,269**	**1,755,809**

Խումբը 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար ստացել է 1,211,888 հազ. ՀՀ դրամ շահաբաժիններ (2023թ.՝ 1,019,337 հազ. ՀՀ դրամ):

37 Կապիտալի համարժեքություն

Խմբի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են՝ ապահովել Խմբի կապիտալի համարժեքությունը վերահսկողի կողմից սահմանված պահանջներին, և Խմբի կայուն վարկային վարկանիշի և ուժեղ կապիտալի ցուցանիշների պահպանումը՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու նպատակով:

Խումբը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումներ տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Խումբը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարվա համեմատ, քաղաքականությունում և գործընթացներում նպատակների փոփոխություններ չեն եղել:

ՀՀ Կենտրոնական բանկը սահմանում և վերահսկում է Բանկի կապիտալի նկատմամբ պահանջները:

Խումբը որպես կապիտալ է ճանաչում այն հոդվածները, որոնք կարգավորման համաձայն սահմանվում են որպես կապիտալ վարկային կազմակերպությունների համար: ՀՀ ԿԲ-ի՝ կապիտալի նկատմամբ պահանջների համաձայն, որոնք հիմնված են Բազելյան համաձայնագրի դրույթների վրա, Բանկի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցությունը (նորմատիվային կապիտալի գործակից) պետք է գերազանցի սահմանված նվազագույն մակարդակը: 2026թ. մարտի 31-ի դրությամբ այս նվազագույն մակարդակը կազմում էր 11% (2025թ. դեկտեմբերի 31՝ 11%): Խումբը 2026թ. մարտի 31-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պահպանում է կանոնադրական կապիտալի գործակցի գծով պահանջը:

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս կապիտալի համարժեքության կազմը, որը հաշվարկվել է ըստ ՀՀ Կենտրոնական բանկի կանոնակարգի՝ հետագա փոփոխություններով, ներառյալ

շուկայական ռիսկերը ներառող փոփոխությունը հաշվետու ամսաթվի և 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Հազ. ՀՀ դրամ	**31/03/2026թ. (աուդիտ չանցած)**	**31/12/2025թ. (աուդիտ չանցած)**
1-ին դասի կապիտալ	177,403,182	175,840,275
2-ին դասի կապիտալ	24,218,198	23,257,523
Ընդամենը կապիտալ	**201,621,380**	**199,097,798**
Ընդամենը ռիսկով կշռված ակտիվներ	**916,289,655**	**859,582,232**
Ընդամենը կապիտալ՝ արտահայտված որպես ռիսկով կշռված ակտիվների տոկոս (ընդհանուր կապիտալի ցուցանիշ)	**22.00%**	**23.16%**

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկերի կշռման գործակիցների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի ու պայմանագրային կողմի հետ կապված վարկային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականները՝ հաշվի առնելով ցանկացած գրավ կամ երաշխիք: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային պարտավորությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր վնասի՝ առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

38 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

2026թ. հունվարի 15-ից Խումբը սկսել է հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխել ՀՀ դրամով պարտատոմսեր՝ 10,000,000,000 ՀՀ դրամ (տասը միլիարդ) անվանական արժեքով և 10,000,000 ԱՄՆ դոլար (տասը միլիոն) անվանական արժեքով՝ համապատասխանաբար 10.5% և 5.5% արժեկտրոնային տոկոսադրույքներով: Պարտատոմսերն ունեն 60 ամիս շրջանառության ժամկետ: Տեղաբաշխումը շարունակվելու է մինչև 2026թ. մայիսի 15-ը ներառյալ: Հաշվետու ամսաթվի դրությամբ արդեն իսկ տեղաբաշխված պարտատոմսերի ծավալների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է 19-րդ ծանոթագրությունում:

Հաշվետու ժամանակաշրջանից հետո կամ հաշվետվության ամսաթվի դրությամբ տեղի չեն ունեցել այլ նշանակալի իրադարձություններ, որոնք ենթակա են ներկայացման այս ֆինանսական հաշվետվություններում:

39 Հիմնական տերմինները

Հապավում	**Բացատրություն**
ՖՀՄՍ	Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ
ՀՀՄՍԽ	Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդ
ԱՄՍ	Աուդիտի միջազգային ստանդարտներ
ՀՀ ԿԲ	Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ
IPO	Նախնական հրապարակային առաջարկ
ԱԲՄՊ	Աշխատակիցների բաժնեմասնակցության պլան
ECL	Ակնկալվող վարկային կորուստ
PD	Դեֆոլտի հավանականություն
LGD	Դեֆոլտի ժամանակ կորստի չափը
FVTPL	Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ
FVOCI	Իրական արժեքով այլ համապարփակ ֆիանսական արդյունքի միջոցով
POCI	Ձեռքբերված կամ ստեղծված վարկային արժեզրկված
EAD	Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը
SOFR	Ապահովված օվերնայթ ֆինանսավորման տոկոսադրույք
LIBOR	Լոնդոնի միջբանկային առաջարկի դրույքաչափ
EURIBOR	Եվրոյի միջբանկային առաջարկի դրույքաչափ
SICR	Վարկային ռիսկի զգալի աճ
PIT	Ժամանակային կետ
EIR	Արդյունավետ տոկոսադրույք
IRR	Տնտեսական շահութաբերության ներքին դրույք
FX	Արտարժույթի փոխարկում
SPPI	Միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՄԻՑԱԶԳԱՅԻՆ ԳԱԲԵՏՅՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՏԱՏՈՒՐՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԱԿԱՆ ՄԱՍԻՆ

31 Մարտ 2020

«ԱՐԿԱ ԲԱՆԿ» ԲԲԸ, ք. Երևան, Սուպի 82-84

Բանկի անվանումը, գտնվելու վայրը

Հոդվ. N և անուն	Ծան.	Ընթացիկ միջանկյալ հաշվետվության 01/01/20-31/03/20 (չաուդիտված)	Ընթացիկ ֆինանսական տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը կազմած միջանկյալ հաշվետվության 01/01/20-31/03/20 (չաուդիտված)	Նախորդ ֆինանսական տարվա համապատասխան միջանկյալ հաշվետվության 01/01/19-31/03/19 (աուդիտված)	Նախորդ ֆինանսական տարվա վերջից մինչև հաշվետու ամսաթիվը կազմած միջանկյալ հաշվետվության 01/01/19-31/03/19 (աուդիտված)
Տոկոսային եկամուտ/ հաշվարկված այլ եկամուտներ տոկոսադրույքի մեթոդով	26	25,781,523	25,781,523	21,630,223	21,630,223
Այլ տոկոսային եկամուտ	26	3,968,278	3,968,278	3,279,065	3,279,065
Տոկոսային ծախս	26	(12,030,978)	(12,030,978)	(8,949,897)	(8,949,897)
Զուտ տոկոսային եկամուտ		**17,748,823**	**17,748,823**	**15,959,392**	**15,959,392**
Վատթարման նկատառմամբ պահուստ	10	(2,284,626)	(2,284,626)	(1,146,732)	(1,146,732)
Զուտ տոկոսային եկամուտ վատթարման նկատառմամբ պահուստը հանելուց հետո		**15,464,198**	**15,464,198**	**13,811,659**	**13,811,659**
Միջնորդավաճառքից պահ եկամուտ	27	4,683,765	4,683,765	3,973,388	3,973,388
Միջնորդավաճառքի պահ ծախս	27	(2,275,801)	(2,275,801)	(1,913,080)	(1,913,080)
Զուտ վճարահ եկամուտ/ վնաս՝ գործառ հետ կապված արտարժ գործառնություններից		(76,762)	(76,762)	(282,458)	(282,458)
Զուտ օպերատիվ եկամուտներ այլ գործառնություններից		1,270,238	1,270,238	1,491,465	1,491,465
Զուտ վճարհ/ եկամուտ ներդրումային արժեթղթերից		(412,945)	(412,945)	515,626	515,626
Ստացված դիվիդենդներ	30	534,036	534,036	380,049	380,049
Արժեզրկման և արժեւտության ծախսերի պահ հատկացումներ	31	-	-	-	-
Այլ եկամուտ	28	(139,894)	(139,894)	16,785	16,785
Ընդ տարեկան եկամուտ		**3,583,255**	**3,583,255**	**4,243,134**	**4,243,134**
Անձնակազմի պահ ծախսեր		(5,982,694)	(5,982,694)	(5,360,134)	(5,360,134)
Աշխատավարձ և աշխատավճար	13	(1,382,715)	(1,382,715)	(1,070,662)	(1,070,662)
Այլ գործառնական ծախսեր	29	(886,052)	(886,052)	(721,906)	(721,906)
Այլ վերակազմ գործառնական ծախսեր	30	(1,382,070)	(1,382,070)	(1,182,584)	(1,182,584)
Ընդ տարեկան ծախս		**(9,463,531)**	**(9,463,531)**	**(8,335,286)**	**(8,335,286)**
Եկամուտ մինչև շահութահարկով հարկումը		**9,573,932**	**9,573,932**	**9,826,107**	**9,826,107**
Շահութահարկի պահ ծախս	14	(1,993,890)	(1,993,890)	(2,035,540)	(2,035,540)
Հաշվետու տարվա շահույթ		**7,580,032**	**7,580,032**	**7,790,561**	**7,790,561**
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ					
Բաշխելի և նոտրագրված, մեկ դասակարգային բաժնետոմսին վերաբերող, %% դրամ	25	1,288.19	1,288.19	1,380.01	1,308.01
Այլ համապարփակ եկամուտ					
Հաջորդող ժամանակաշրջաններում դրամ շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ					
Իրականաց գործառ/ այլ հատկապրտվող ֆինանսական արդյունքներ մերգրվ շահույթ (վնաս) մասին արձանագրե պահ կապված արդիք գուտ փոփոխություն		11,550	11,550	(89,640)	(89,640)
Իրականաց գործառ/ այլ հատկապրտվող ֆինանսական արդյունքներ մերգրվ շահույթ (վնաս) մասին արձանագրե սահմանային շահութահարկ կրկնակի կիրառումից պահ ազատում/ փոփոխություններ		40	40	4,197	4,197
Շահութահարկ՝ այլ հատկապրտվող եկամտի տարրերի պահ	14	(2,007)	(2,007)	15,417	15,417
Հաջորդ ժամանակաշրջաններում դրամ շահույթում (վնասում) վերադասակարգվող գուտ այլ համապարփակ եկամուտ		**9,606**	**9,606**	**(70,031)**	**(70,031)**
Հաջորդող ժամանակաշրջաններում դրամ շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ					
Ընդհանուր կապիտալի վերագնահատում		-	-	-	-
Իրականաց գործառ/ այլ հատկապրտվող ֆինանսական արդյունքների մերգրվ շահույթ (վնաս) մասին արձանագրե գուտ փոփոխություն		(428)	(428)	249	249
Շահութահարկ՝ այլ հատկապրտվող եկամտի տարրերի պահ	14	77	77	(45)	(45)
Մերգրվից հաջորդող ժամանակաշրջաններում դրամ շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ		**(348)**	**(348)**	**204**	**204**
Հաջորդող ժամանակաշրջաններում դրամ շահույթ կամ վնաս չվերադասակարգվող					
Ներդրումների գործառնություններ այլ հատկապրտվող եկամուտ տարրերում		(2,367)	(2,367)	9,810	9,810
Այլ համապարփակ եկամուտ բաժնեգրվելուն վերաբերող շահութահարկ	14	-	-	-	-
Մերգրվից հաջորդող կապիտալի վերագնահատում/ վերադասակարգվող եկամտի տարրերին		**(2,367)**	**(2,367)**	**9,810**	**9,810**
Հաջորդող տարվա այլ համապարփակ եկամուտ հաշվետվից հետո		**6,790**	**6,790**	**(60,212)**	**(60,212)**
Մերգրվից հաշվետու տարվա համապարփակ եկամուտ		**7,586,821**	**7,586,821**	**7,730,349**	**7,730,349**

Հաշվետվության պատրաստման ամսաթիվը՝ 15.04.2020թ

Գլխավոր գործադիր տնօրեն Գ. Մարտիրոսյան

Գլխավոր հաշվապահ Ա. Գալոյան

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ
31 Մարտ 2026

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ, ք. Երևան, Արամի 82-84
Բանկի անվանումը, գտնվելու վայրը

Տող.ՊՊ դրամ	Ծան.	31/03/2026 (ստուգված)	31/12/2025 (ստուգված)
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7	79,838,284	99,170,819
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	8	62,982	35,996
Պահանջներ բանկերի նկատմամբ	9	107,078,483	98,248,127
Ներդրումային արժեթղթեր	10		
- Բանկի կողմից պահվող		82,700,805	73,247,135
- Վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված		-	-
Հաճախորդներին տրված վարկեր	11	651,521,103	633,803,003
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	12	103,847,063	103,041,353
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	36	3,120,283	2,588,014
Ըստ կարգավորող մարմնի գնահատականների, չնայած վերջին երկու տարիներին թողարկման ճեղքվածքը դրական է եղել, այն այժմ հիմնականում փակվել է, և ՀՆԱ-ն գրեթե վերադարձել է իր ներուժի մակարդակին: Միևնույն ժամանակ, ԿԲ-ի թողարկման ճեղքվածքի գնահատականները արտացոլում էին ոչ ներառական աճը՝ հաշվի առնելով ապագա տնտեսական պայմանների վերաբերյալ առկա անորոշությունները: Այս դինամիկան կապված է ոչ կառուցվածքային աճի հետ, քանի որ վերջին տնտեսական ընդլայնման մեծ մասը կարող է պայմանավորված լինել ժամանակավոր կամ նեղ ոլորտային գործոններով, այլ ոչ թե արտադրողականության, կարողությունների և երկարաժամկետ աճի բաղադրիչների կայուն բարելավմամբ:

Ակնկալվում է, որ 2026թ. -ին գնաճը կհասնի 3.5%-ի՝ տոկոսադրույքների կրճատման և արժույթի թուլացման պատճառով:

Ապագայի կանխատեսումների առումով, թեև տնտեսական հեռանկարը շարունակում է դրական մնալ, 2026թ. 4.75% կայուն աճի կանխատեսումներով, սակայն երկարաժամկետ աճը շարունակում է լինել սահմանափակ՝ ելնելով համակարգային մի շարք խնդիրներից, ինչպիսիք են Հայաստանի կախվածությունը ապրանքների արտահանումից, լոգիստիկ մարտահրավերները և ընթացիկ տարածաշրջանային լարվածությունը: Այս գործոնները կշարունակեն ռիսկ ներկայացնել, հատկապես տարածաշրջանային անվտանգության զարգացող դինամիկայի ներքո:

«Fitch Ratings» միջազգային վարկանիշային գործակալությունը վերանայել է Հայաստանի երկարաժամկետ արտարժույթով (LTFC) Էմիտենտի դեֆոլտի վարկանիշի (IDR) կանխատեսումը՝ «Կայուն» վարկանիշից դեպի «Դրական», և 2026թ. հունվարի 16-ին հաստատել է IDR վարկանիշը «BB-» մակարդակում:

Ընթացիկ և ապագա տնտեսական իրավիճակի երկարաժամկետ ազդեցությունները դժվար է գնահատել, և ղեկավարության ներկա ակնկալիքներն ու գնահատականները կարող են տարբերվել իրական արդյունքներից:

Կայունություն

Խումբը ենթարկվում է կլիմայական ռիսկերի, որոնք առաջանում են ինչպես ֆիզիկական, այնպես էլ անցումային գործոնների ազդեցության հետևանքով: ԲՍԿ և կլիմայական ռիսկերի կառավարման և բացահայտման վերաբերյալ կանոնակարգային դաշտի զարգացումները ունեն շարունակվող բնույթ: Չնայած կարգավորող մարմինը չի ներդրել կլիմայական պայմաններին կապակցված կապիտալի կամ իրացվելիության պահանջներ, ինչպես նաև պարտադիր կլիմայական սթրես-թեստի պահանջներ, սակայն բանկերի համար սահմանել է պահանջ՝ բարելավելու ԲՍԿ-ին վերաբերող բացահայտումները, ներառյալ կորպորատիվ կառավարման, ռիսկերի կառավարման գործելակերպերի և բնապահպանական և սոցիալական ռիսկերի ենթարկվածության ուղղություններով:

Բանկը ներկայումս չի առաջարկում կանաչ հիփոթեքային վարկեր, կանաչ բիզնես վարկեր, կլիմայական պայմանների հետ կապակցված պայմանագրեր կամ KPI-ների հետ կապակցված գնագոյացման մեխանիզմներ: Փոխարենը, Խումբը կիրառում է բնապահպանական և սոցիալական (ԲևՍ) ռիսկերի գնահատման ընդգրկուն գործընթաց իր ամբողջ վարկային պորտֆելի համար: 18 միլիոն ՀՀ դրամը գերազանցող և ավելի քան 36 ամիս ժամկետ ունեցող յուրաքանչյուր վարկի դեպքում սահմանվում է ԲևՍ ռիսկի մակարդակ, որը ազդում է վարկային ապահովման, մոնիթորինգի և ընդհանուր ռիսկի գնահատման վրա:

Խումբը կառավարում է կայունության հետ կապված ռիսկերը հետևյալ միջոցներով՝

- վարկառուի ԲԱՍ ստուգում
- միջին և բարձր ԲԱՍ ռիսկայնության հաճախորդների համալիր ուսումնասիրություն
- բարձր ռիսկային սեգմենտների մոնիթորինգ պորտֆելի մակարդակով
- ԲԱՍ նկատառումների ինտեգրում վարկային կոմիտեներում և վարկավորման որոշումներում

Ընթացիկ և ապագա տնտեսական իրավիճակի երկարաժամկետ հետևանքները դժվար է գնահատել, և ղեկավարության ներկայիս ակնկալիքները և գնահատականները կարող են տարբերվել իրական արդյունքներից: Ակնկալվող վարկային կորուստների («ԱՎԿ») չափման նպատակով Խումբն օգտագործում է հիմնավորելի կանխատեսումային տեղեկատվություն, ներառյալ մակրոտնտեսական փոփոխականների կանխատեսումներ: Այնուամենայնիվ, ինչպես ցանկացած տնտեսական կանխատեսումներում, այս կանխատեսումների գծով ևս՝ ենթադրությունները և դրանց տեղի ունենալու հավանականությունը բնորոշվում է անորոշության բարձր աստիճանով, ուստի փաստացի արդյունքները կարող են էապես տարբերվել կանխատեսումներից: Ծանոթագրություններ 4-ը և 33-ը ներառում են ավելի մանրամասն տեղեկատվություն առ այն, թե ինչպես է Խումբը կանխատեսումային տեղեկատվությունը ներառել ակնկալվող վարկային կորուստների չափման մոդելներում:

2 Պատրաստման հիմունքները

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀՄՍԽ կողմից հրապարակված՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝«ՖՀՄՍ ստանդարտներ»):

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, փոփոխված՝ իրական արժեքով ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչմամբ, հողերի, շենքերի և փոխադրամիջոցների վերագնահատմամբ, ֆինանսական գործիքների՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով (“FVTPL”) և իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով դասակարգմամբ («FVOCI») և սովորական բաժնետոմսերի իրական արժեքով դասակարգմամբ՝ աշխատակիցների բաժնեմասնակցության ծրագրի համար: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական սկզբունքները ներկայացված են ստորև: Այդ սկզբունքները հետևողականորեն կիրառվել են այն բոլոր ժամանակաշրջանների համար, որոնք ներկայացված հաշվետվություններում, եթե այլ բան նշված չէ:

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները հասցեագրված են դրանց առաջնային օգտագործողներին, որոնք են՝ ներդրողները, որոնք վարկով տրամադրում կամ հատկացնում են կապիտալ հաշվետու կազմակերպությանը: Այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում ենթադրվել է, որ դրանց առաջնային օգտագործողները տիրապետում են բավարար գիտելիքների բիզնեսի և տնտեսական գործունեության վերաբերյալ և կատարում են տեղեկատվության հանգամանալից վերանայում և վերլուծություն: Այնուամենայնիվ լինում են դեպքեր, երբ նույնիսկ իրազեկ և հանգամանալից օգտագործողները կարող են կարիք ունենալ խորհրդատուի օգնության՝ այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բարդ տնտեսական երևույթների մասին տեղեկատվությունը ըմբռնելու համար:

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների նպատակն է՝ բացահայտել միայն այն տեղեկատվությունը, որը ղեկավարությունը համարում է էական առաջնային օգտագործողների համար: Ղեկավարությունը ձգտում է չնվազեցնել այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հասկանալիությունը՝ էական տեղեկատվությունը ոչ էական տեղեկատվությամբ քողարկելու միջոցով: Հետևաբար, համապատասխան բացահայտումներին վերաբերող ծանոթագրություններում բացահայտվում են միայն հաշվապահական հաշվառման քաղաքականության էական դրույթները, ըստ կիրառելիության:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական դրույթներ

Ասոցիացված կազմակերպու-թյուններում ներդրումները հաշվառվում են բաժնեմասնակցության մեթոդով և սկզբնապես ճանաչվում են ձեռքբերման արժեքով՝ ներառյալ գուդվիլը:

Հաշվեկշռային արժեքի ապագա փոփոխությունները արտացոլում են համախմբումից հետո ասոցիացված կազմակերպության զուտ ակտիվներում Խմբի մասնաբաժնի փոփոխությունները:

.

Խմբի մասնաբաժինը ասոցիացված կազմակերպության շահույթում կամ վնասում ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, իսկ պահուստների փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Խումբը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով պահվող ֆինանսական գործիքները և ոչ ֆինանսական ակտիվները չափում է իրական արժեքով՝ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Իրական արժեքը չափվում է ՖՀՄՍ 13-ի պահանջներին համապատասխան: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքները բացահայտված են Ծանոթագրություն 34-ում:

. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների բոլոր կանոնավոր գնումներն ու վաճառքները ճանաչվում են գործարքի ամսաթվին, այսինքն՝ այն ամսաթվին, երբ Խումբը պարտավորվում ձեռք բերել ակտիվը կամ պարտավորությունը: Կանոնավոր են համարվում ֆինանսական ակտիվների և պարտավորությունների այնպիսի գնումները կամ վաճառքները, որոնք պահանջում են ակտիվի մատակարարում տվյալ շուկայում գործող նորմերով կամ գործարար սովորույթներով սահմանված ժամկետի ընթացքում:

. Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական գործիքների դասակարգումը կախված է դրանց պայմանագրային պայմաններից և գործիքների կառավարման բիզնես մոդելից: Ֆինանսական գործիքներն ի սկզբանե չափվում են իրենց իրական արժեքով և որը ճշգրտվում է գործարքին ուղղակիորեն վերագրելի միջնորդավճարների և ծախսերի չափով այն գործիքների դեպքում, որոնք իրական արժեքով չեն վերագնահատվում շահույթի կամ վնասի միջոցով:

Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական գործիքի իրական արժեքի լավագույն ապացույցը գործարքի գինն է: Եթե Խումբը գտնում է, որ սկզբնական ճանաչման ժամանակ իրական արժեքը տարբերվում է գործարքի գնից, և եթե այդ իրական արժեքը հիմնված է շուկայում նմանատիպ ակտիվի կամ պարտավորության գնանշված գնի վրա, կամ հիմնված է գնահատման տեխնիկայի վրա, որն օգտագործում է միայն դիտարկելի շուկաների տվյալները, ապա սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը ճանաչում է իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերությունը շահույթում կամ վնասում. բոլոր մյուս դեպքերում, ֆինանսական գործիքի սկզբնական չափումը ճշգրտվում է այնպես, որ սկզբնական ճանաչման ժամանակ իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերությունը փոխանցվի ապագա ժամանակաշրջաններին: Սկզբնական ճանաչումից հետո Խումբը ճանաչում է հետաձգված տարբերությունը որպես շահույթ կամ վնաս, միայն այն դեպքում, երբ մուտքային տվյալները դառնում են դիտարկելի կամ եթե գործիքը ապաճանաչվում է:

Խումբը դասակարգում է իր բոլոր ֆինանսական ակտիվները՝ հիմնվելով ակտիվների կառավարման բիզնես մոդելի և ակտիվի պայմանագրային պայմանների վրա, չափումն իրականացնելով՝

- Ամորտիզացված արժեքով
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով,
- Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Խումբը իր ածանցյալ և առևտրային պորտֆելը դասակարգում և չափում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Խումբը դասակարգում է Visa C-ի բաժնետոմսերը որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող պարտքային գործիքներ: Խումբը կարող է հաշվառել ֆինանսական գործիքները իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, եթե այդ կերպ վերանում է կամ զգալիորեն նվազեցվում են չափման կամ ճանաչման անհամապատասխանությունները:

Ֆինանսական պարտավորությունները, բացի վարկային հանձնառություններից և երաշխիքների պայմանագրերից, չափվում են ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, երբ դրանք պահվում են վաճառքի համար, ածանցյալ գործիքներ են կամ կիրառվում է իրական արժեքով հաշվառում:

Բանկերի նկատմամբ պահանջները, հաճախորդներին տրված վարկեր, ներդրումային արժեթղթերը չափվում են ամորտիզացված արժեքով:

.

Խումբը չափում է բանկերի նկատմամբ պահանջները, հաճախորդներին տրված վարկեր, ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթերը միայն այն դեպքում, եթե միաժամանակ բավարարվում են հետևյալ երկու պայմանները՝

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ֆինանսական ակտիվները պահել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով.
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և դրա չմարված մասի դիմաց տոկոսների վճարումներ (SPPI):

Այս պայմանների մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 4-ում:

Խումբը կիրառում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով պարտքային գործիքների դասակարգում, եթե միաժամանակ առկա են հետևյալ երկու պայմանները.

- Գործիքը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ինչպես պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը, այնպես էլ ֆինանսական ակտիվների վաճառքը,
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բավարարում են SPPI ստուգման չափանիշներին:

Խումբը տրամադրում է ֆինանսական և կատարողական երաշխիքներ, ակրեդիտիվներ և վարկային պարտավորություններ:

Երաշխիքները ֆինանսական հաշվետվություններում սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, որը ստացված վարձատրությունն է: Սկզբնական ճանաչումից հետո ամեն երաշխիքի համար Խմբի պարտավորությունը չափվում է հետևյալ գումարներից առավելագույնի չափով. սկզբնական ճանաչված արժեք՝ հանած կուտակված ամորտիզացիա, և ԱՎԿ պահուստ:

Վարկավորման չօգտագործված պարտավորվածությունները և ակրեդիտիվները պարտավորվածություններ են, որի շրջանակներում պարտավորվածության տևողության ընթացքում Խումբը հաճախորդին պետք է տրամադրի վարկ՝ նախապես սահմանված պայմաններով: Ինչպես ֆինանսական երաշխիքի պայմանագրերի դեպքում՝ այդ պայմանագրերը ընդգրկված են ակնկալվող վարկային կորուստների պահանջների մեջ:

Խումբը վարձակալներից ստացված կանխավճարները և մատակարարներին տրված կանխավճարները դիտարկում է որպես դրամական հոդվածներ և ճանաչում է դրանց գծով ֆինանսական պարտավորությունները և ֆինանսական ակտիվները:

Խումբը չի վերադասակարգում իր ֆինանսական ակտիվները՝ դրանց սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն բացառիկ հանգամանքների, որոնց դեպքում Խումբը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը:

. Դրամական միջոցներ և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցներ դրամարկղում, բանկերում Նոստրո հաշիվները և ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցները, ներառյալ պարտադիր պահուստները ՀՀ դրամով՝ զերծ պայմանագրային սահմանափակումներից: Երեք ամսից ավելի ժամկետով սահմանափակված միջոցները բացառվում են դրամական միջոցներից և դրանց համարժեքներից, ինչպես ֆինանսական վիճակի մասին, այնպես էլ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում:

Դրամական միջոցները և դրամական միջոցների համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, քանի որ. (i) դրանք պահվում են պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով, և այդ դրամական միջոցների հոսքերն իրենցից ներկայացնում են

.

միայն մայր գումարի և տոկոսագումարի վճարում, և (ii) դրանք չեն որոշված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

ԿԲ-ում պարտադիր դրամական մնացորդները հաշվառվում են ամորտիզացված արժեքով և ներկայացնում են անտոկոս պարտադիր պահուստային ավանդներ, որոնք հասանելի չեն Խմբի ամենօրյա գործունեությունը ֆինանսավորելու համար, և, հետևաբար, չեն համարվում դրամական միջոցների և դրանց համարժեքների մաս դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունում:

. Այս գործարքները ապաճանաչվում են մարման ամսաթվին, որը շահառուի կողմից միջոցների ստացման ամսաթիվն է, այլ ոչ թե փոխանցման մեկնարկի ամսաթիվը:

. Վաճառքի և հետգնման պայմանագրերը («ռեպո») դիտվում են որպես ապահովված ֆինանսավորման գործարքներ: Վաճառքի և հետգնման պայմանագրերով վաճառված արժեթղթերը շարունակում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում և եթե ստացողը պայմանագրով կամ գործարար սովորույթի համաձայն իրավունք ունի դրանք վաճառել կամ վերագրավադրել, վերադասակարգվում են որպես վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է բանկերի կամ հաճախորդների միջոցների կազմում: Հետադարձ վաճառքի պայմանագրով արժեթղթերի ձեռքբերումը (հակադարձ ռեպո) արտացոլվում է բանկերի նկատմամբ պահանջների կամ հաճախորդներին տրված վարկերի կազմում՝ կախված իրավիճակից: Վաճառքի գնի և ձեռք բերման գնի միջև տարբերությունը դիտարկվում է որպես տոկոսային եկամուտ և հաշվեգրվում ռեպո պայմանագրի ժամկետի ընթացքում՝ արդյունավետ եկամտաբերության մեթոդով:

Արժեթղթերը, որոնք փոխառության են տրվել գործընկերներին, շարունակվում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում: Փոխառության միջոցով ներգրավված արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում միայն երրորդ անձանց վաճառքի դեպքում: Այս դեպքում առքուվաճառքի գործարքները հաշվառվում են ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում՝ եկամուտների կազմում՝ հանած առևտրային արժեթղթերի հետ կապված գործառնությունների ծախսերը: Այդպիսի արժեթղթերի վերադարձի պարտավորությունը արտացոլվում է առևտրային գործառնությունների գծով պարտավորություններում՝ իրական արժեքով:

Փոխառությունները ներառում են ՀՀ ԿԲ-ի նկատմամբ պարտավորությունները, բանկերի նկատմամբ պարտավորությունները, հաճախորդների նկատմամբ պարտավորությունները, թողարկված պարտատոմսերը, այլ փոխառու միջոցները և ստորադաս վարկերը: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Օգուտները և վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում, երբ փոխառությունները ապաճանաչվում են, ինչպես նաև ամորտիզացիայի գործընթացում:

Ստորադաս պարտքը հաշվառվում է ամորտիզացված արժեքով:

Թողարկված պարտքային արժեթղթերը ներառում են մուրհակները, Խմբի կողմից թողարկված պարտատոմսերը: Պարտքային արժեթղթերը ներկայացվում են ամորտիզացված արժեքով:

. Խումբը կիրառել է ճանաչման և չափման միասնական մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների: Խումբը ճանաչում է վարձակալության գծով պարտավորություններ՝ վարձակալության գծով վճարումներ կատարելու համար և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ, որոնք ներկայացնում են պայմանագրի հիմքում ընկած ակտիվները օգտագործելու իրավունքը:

.

. Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների գումարը, սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումներ, վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումներ:

Վարձակալության վճարների ներկա արժեքը հաշվարկելիս Խումբը օգտագործում է սկզբնական կիրառման ամսաթվին լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, եթե վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել:

. Խումբը կիրառում է կարճաժամկետ վարձակալությունների ճանաչման բացառությունը կարճաժամկետ վարձակալությունների համար (այն վարձակալությունները, որոնց վարձակալության ժամկետը մեկնարկի ամսաթվի դրությամբ 12 ամիս է կամ դրանից պակաս, և չեն պարունակում գնման օպցիոն): Խումբը կիրառում է նաև ցածրարժեք ակտիվների վարձակալության ճանաչման բացառությունը այն ակտիվների վրա, որոնք համարվում են փոքրարժեք (2,500 հազ. ՀՀ դրամը չգերազանցող):

. Վարձակալական եկամուտը ճանաչվում է գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում է այլ եկամտի կազմում համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում, քանի որ գործառնական բնույթի է: Գործառնական վարձակալության բանակցությունների և պայմանավորվածությունների գծով կրած սկզբնավորման ուղղակի ծախսումները ավելացվում են տրամադրված ակտիվի հաշվեկշռային արժեքին և ճանաչվում են որպես ծախս վարձակալության ժամկետի ընթացքում նույն հիմունքով, որը կիրառվում է վարձակալական եկամուտը ճանաչելիս:

. Ֆինանսական վարձակալության ժամկետի մեկնարկի պահից Խումբը ճանաչում է ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ՝ վարձակալությունում զուտ ներդրումներին հավասար գումարով:

Ֆինանսական եկամտի ճանաչումը հիմնված է ժամանակացույցի վրա, որը սահմանում է հաստատուն պարբերական տոկոսադրույք վարձատուի կողմից վարձակալության ներքո զուտ ներդրումների դիմաց: Վարձակալությունից ստացված ֆինանսական եկամուտը գրանցվում է «Այլ տոկոսային հասույթի» կազմում՝ շահույթում կամ վնասում: Սկզբնական ուղղակի ծախսումները ներառվում են ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների սկզբնական գնահատման մեջ:

Վարկային կորստի պահուստը ճանաչվում է ընդհանուր ԱՎԿ մոդելի համաձայն: ԱՎԿ-ը որոշվում է նույն կերպ, ինչ ամորտիզացված արժեքով չափվող պահանջների դեպքում: Տոկոսային եկամուտը ճանաչվում է համախառն հաշվեկշռային արժեքով, բացառությամբ Փուլ 3-ի արժեզրկված վարկերի, որոնց դիմաց տոկոսային եկամուտը ճանաչվում է զուտ հաշվեկշռային արժեքով:

Հնարավորության դեպքում Խումբը փորձում է վերակառուցել վարկերը՝ գրավի առարկայի առգրավման փոխարեն: Դա կարող է տեղի ունենալ վճարումների ժամկետների երկարաձգման կամ նոր պայմաններով վարկային պայմանագրի կնքման միջոցով:

Խումբը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, ինչպիսին է հաճախորդին տրված վարկը, երբ պայմաններն այն աստիճան են վերանայվել, որ այն դարձել է հիմնովին նոր վարձակալություն, և տարբերությունը ճանաչվում է որպես ապաճանաչումից օգուտ կամ վնաս այն չափով, որքանով արժեզրկումից կորուստը դեռ չի ճանաչվել: Նոր ճանաչված վարկերը ակնկալվող վարկային կորուստների չափման նպատակով դասակարգվում են 1-ին փուլում, քանի դեռ նոր վարկը չի համարվում ձեռք բերված կամ ստեղծված արժեզրկված (POCI): Երբ Խումբը գնահատում է՝ արդյոք պետք է ապաճանաչել հաճախորդին տրված վարկը թե ոչ, հաշվի է առնում, մասնավորապես, հետևյալ գործոնները՝

- Վարկի արժույթի փոփոխությունը,
- Գործընկերոջ փոփոխությունը,

Եթե փոփոխությունն այնպիսին է, որ գործիքն այլևս չի բավարարում SPPI չափանիշին:

.

Այն փոփոխությունների համար, որոնք չեն հանգեցնում ապաճանաչման, Խումբը նաև վերագնահատում է, թե արդյոք եղել է վարկային ռիսկի զգալի աճ կամ արդյոք ակտիվները պետք է դասակարգվեն որպես արժեզրկված: Երբ ակտիվը դասակարգվում է որպես արժեզրկված, այն պետք է մնա 3-րդ փուլում: 3-րդ փուլի վարկերը կարող են վերադասակարգվել, եթե բավարարվեն հետևյալ պայմանները.

1. Ամսական մարման ժամանակացույցով վարկեր – Հաճախորդն ամբողջությամբ մարում է ժամկետանց գումարը, այնուհետև կատարում է մայր գումարի և տոկոսների 6 անընդմեջ վճարում՝ համաձայն մարման վերանայված ժամանակացույցի, ընդ որում ոչ ժամկետանց օրերը պետք է գերազանցեն 7 օրացուցային օրը: Բացի այդ, վարկը կարող է վերադասակարգվել միայն այն դեպքում, եթե տվյալ պահին չկան այլ գործոններ, որոնք պահանջում են ավելի խիստ փուլի դասակարգում:
2. Ճկուն մարման ժամանակացույցով վարկեր – Հաճախորդն ամբողջությամբ մարում է ժամկետանց գումարը, այնուհետև հաջորդ 6-12 ամիսների ընթացքում կատարում է մայր գումարի և տոկոսների վճարումներ ըստ ժամանակացույցի, ընդ որում ոչ ժամկետանց օրերը պետք է գերազանցեն 7 օրացուցային օրը: Բացի այդ, վարկը կարող է վերադասակարգվել միայն այն դեպքում, եթե տվյալ պահին չկան այլ գործոններ, որոնք պահանջում են ավելի խիստ փուլի դասակարգում:

Եթե վարկի պայմանները բազմաթիվ անգամ ենթարկվել են վերանայման, ապա ամենավերջին վերանայումը կնշանակի փորձաշրջանի սկիզբ: Այդ դեպքում, մարումների ժամանակացույցը վերականգնվում է, և պետք է կատարվեն հաճախորդի բոլոր վարկերի համար պահանջվող վճարումները:

Եթե փորձաշրջանի ընթացքում առաջանում է ուշացում, ապա փորձաշրջանի հաշվարկը վերսկսվում է այն օրվանից, երբ վերսկսվում են ըստ ժամանակացույցի մարումները:

. Ֆինանսական ակտիվները ամբողջությամբ կամ մասամբ դուրս են գրվում այն ժամանակ, երբ Խումբը սպառել է դրանց վերականգնման բոլոր գործնական հնարավորությունները և եզրակացրել է, որ չկան այդպիսի ակտիվների վերականգնման հիմնավորված ակնկալիքներ: Դուրսգրումն իրենից ներկայացնում է ակտիվի ապաճանաչում: Խումբը կարող է դուրս գրել դեռևս հարկադիր բռնագանձման գործընթացում գտնվող ֆինանսական ակտիվները, այն դեպքում, երբ Խումբը փորձում է բռնագանձել պայմանագրային պարտավորության գումարները՝ առանց վերականգնման ողջամիտ ակնկալիքի:

Եթե դուրս գրվող գումարը գերազանցում է կուտակված կորուստների պահուստը, տարբերությունը նախ ավելացվում է պահուստին, որը այնուհետև կիրառվում է համախառն հաշվեկշռային արժեքի հանդեպ:

. Շահութահարկի գծով ընթացիկ ծախսը հաշվարկվում է ՀՀ օրենսդրության համաձայն:

Ընթացիկ հարկը ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա ակնկալվող շահութահարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ, ինչպես նաև նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջինները հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

. Հիմնական միջոցները արտացոլվում են սկզբնական արժեքով առանց ամենօրյա սպասարկման ծախսերի՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումը: Այդ գումարը ներառում է սարքավորման փոխարինման ժամանակ կատարված ծախսերը, եթե դրանք բավարարում են ճանաչման չափանիշներին:

Սկզբնական արժեքով սկզբնական ճանաչումից հետո հողը, շենքերը և փոխադրամիջոցները արտացոլվում են վերագնահատված արժեքով: Վերագնահատումն իրականացվում է բավարար

.

պարբերականությամբ, որպեսզի վերագնահատված ակտիվի իրական արժեքը էականորեն չտարբերվի դրա հաշվեկշռային արժեքից:

Հիմնական միջոցների միավորի նկատմամբ սեփական կապիտալում ներառված վերագնահատումից աճն ուղղակիորեն փոխանցվում է չբաշխված շահույթին, երբ ակտիվն ապաճանաչվում է:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով՝ ակտիվների ներքոնշյալ օգտակար ծառայության գնահատված ժամկետների ընթացքում՝

	Տարիներ
Շենքեր	46
Սարքավորումներ	7-20
Փոխադրամիջոցներ	8
Այլ	7-15

Վարձակալված ակտիվի բարելավումները կապիտալացվում և ամորտիզացվում են վարձակալության ժամկետի և դրանց օգտակար ծառայության ժամանակահատվածից նվազագույնով՝ գծային հիմունքներով:

Ակտիվի մնացորդային արժեքները, օգտակար ծառայության ժամկետները և մաշվածության հաշվարկման մեթոդները վերանայվում և, եթե անհրաժեշտ է, փոփոխվում են յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում:

Վերանորոգումների և արդիականացման հետ կապված ծախսումները ծախսագրվում են կատարման ժամանակ և ներառվում են այլ գործառնական ծախսերի կազմում բացառությամբ, եթե դրանք որակավորվում են որպես կապիտալացվող:

Ամորտիզացիան հաշվարկվում է գծային հիմունքով՝ ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ընթացքում՝ հետևյալ կերպ. Գնահատված օգտակար ծառայության ժամկետը 1-ից 10 տարի է:

. Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և զուտ իրացվելի արժեքի նվազագույնով:

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը վերաբերող ուղղակի ծախսերը, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության միավորման դեպքերի, արտացոլվում են սեփական կապիտալում որպես թողարկման գծով մուտքերից նվազեցում: Իրական արժեքի այն մասը, որը գերազանցում է թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքը, գրանցվում է որպես էմիսիոն եկամուտ:

Հաշվետու ամսաթվի դրությամբ շահաբաժինները նվազեցվում են սեփական կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն միայն այն դեպքում, երբ դրանք հայտարարվել են մինչև հաշվետու ամսաթիվը ներառյալ: Մինչև հաշվետու ամսաթիվը առաջարկված կամ հաշվետու ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը առաջարկված կամ հայտարարված շահաբաժինները բացահայտվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում:

.

Հավատարմագրային կառավարման շրջանակներում գտնվող ակտիվները չեն արտացոլվում Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում, քանի որ չեն հադիսանում Խմբի ակտիվներ:

. Խումբը հաշվարկում է տոկոսային եկամուտ ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվների համախառն արժեքի նկատմամբ, բացառությամբ արժեզրկված ակտիվների: Հաշվարկի ժամանակ հաշվի են առնվում ֆինանսական գործիքի գծով բոլոր պայմանագրային պայմանները (օրինակ՝ ժամկետից շուտ մարման իրավունքը) և միջնորդավճարների գծով կամ լրացուցիչ ծախսերը, որոնք անմիջականորեն կապված են գործիքի հետ և որոնք արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ

.

մաս են կազմում, սակայն հաշվի չեն առնվում ապագա վնասները: Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքները ճշգրտվում են Խմբի կողմից միջոցների ելքերի կամ մուտքերի գնահատումների վերանայման դեպքում: Ճշգրտված հաշվեկշռային արժեքը հաշվարկվում է սկզբնական արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա, իսկ հաշվեկշռային արժեքի փոփոխությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ կամ ծախս:

Եթե Փուլ 3-ում դասակարգված ֆինանսական ակտիվի գծով վարկային ռիսկը հետագայում բարելավվի այնպես, որ ակտիվն այլևս վարկային արժեզրկված չլինի, և բարելավումը հնարավոր լինի օբյեկտիվորեն վերագրել իրադարձության, որը տեղի է ունեցել այն բանից հետո, երբ ակտիվը սահմանվել է որպես վարկային արժեզրկված (այսինքն ակտիվը դառնում է վերականգնման ենթակա), ակտիվը վերադասակարգվում է 3-րդ փուլից և տոկոսային հասույթը հաշվարկվում է՝ կիրառելով EIR-ը համախառն հաշվեկշռային արժեքի վրա: Լրացուցիչ տոկոսային եկամուտը, որը նախկինում շահույթում և վնասում չէր ճանաչվել՝ ելնելով ակտիվի Փուլ 3 բնույթից, սակայն որը ներկայումս ակնկալվում է ստանալ ակտիվի վերականգնումից հետո, ճանաչվում է որպես արժեզրկման հակադարձում:

Ֆինանսական վարձակալության դիմաց տրված կանխավճարներից և ֆինանսական վարձակալության գծով ճանաչված հասույթից տոկոսային եկամուտը ճանաչվում է շահույթի կամ վնասի համախմբված հաշվետվությունում «Այլ տոկոսային եկամուտ» տողում՝ պայմանագրային տոկոսադրույքով:

Հաճախորդներին տրված վարկերի տույժերից տոկոսային եկամուտը ներկայացվում է համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ «Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ» հոդվածում:

. Խումբը հաճախորդներին մատուցվող տարբեր ծառայություններից ստանում է միջնորդավճարների գծով եկամուտ: Միջնորդավճարների գծով եկամուտը կարող է բաժանվել հետևյալ երկու խմբի.

,

Միջնորդավճարների գծով եկամուտը, որը ստացվում է որոշակի ժամանակահատվածում մատուցվող ծառայություններից, հաշվեգրվում է այդ ժամանակահատվածի ընթացքում, քանի որ համապատասխան կատարողական պարտավորությունները բավարարված են: Այս վճարները ներառում են միջնորդավճարներ տարբեր գործունեության տեսակներից, ներառյալ քարտերի թողարկումը և ձեռքբերումը, դրամական փոխանցումները, երաշխիքների և ակրեդիտիվների տրամադրումը, հաշվի սպասարկումը և նմանատիպ եկամուտներ: Վարկերի տրամադրման գծով պարտավորության դիմաց միջնորդավճարները, եթե վարկի օգտագործման հավանականությունը բարձր է, և վարկերի հետ կապված այլ միջնորդավճարները հետաձգվում են (վարկերի տրամադրման հետ կապված ցանկացած լրացուցիչ ծախսումների հետ միասին) և ճանաչվում են որպես վարկի արդյունավետ տոկոսադրույքի ճշգրտում:

`

Երրորդ անձի անունից գործարքի բանակցություններն անցկացնելու և մասնակցելու համար (օրինակ՝ երբ Խմբի կատարողական պարտավորությունն է բաժնետոմսերի կամ այլ արժեթղթերի առքը, կամ ընկերության առք ու վաճառքի համաձայնագրի կնքումը) ստացված կոմիսիոն վճարները ճանաչվում են այդ գործարքի ավարտից հետո:

Խումբն առաջարկում է հաճախորդների հավատարմության մի շարք ծրագրեր: Նման ծրագրերի հաշվապահական հաշվառումը տարբերվում է՝ կախված նրանից, թե ով է ճանաչվում որպես հաճախորդ, և/կամ Խումբը որպես գործակալ, թե որպես պայմանագրի գլխավոր կողմ է հանդես գալիս: Միավորների վրա հիմնված ծրագրերի դեպքում, Խումբը, ընդհանուր առմամբ, ճանաչում է պարտավորություն կուտակված միավորների համար, որոնք ակնկալվում է, որ օգտագործվելու են հաճախորդների կողմից, որը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով, երբ միավորները լրանում են: Պլաստիկ քարտերով գործառնություններից քեշբեքերը նվազեցնում են միջնորդավճարների գծով եկամուտը:

Եկամուտը ճանաչվում է, երբ հաստատվում է Խմբի վճարումը ստանալու իրավունքը:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով, որը Բանկի և նրա դուստր ձեռնարկությունների գործառնական արժույթն է: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված գործարքների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության «Փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտներ/(վնասներ)» հոդվածում:

Արտարժույթով գործարքի պայմանագրային փոխարժեքի և գործարքի օրվա դրությամբ Կենտրոնական բանկի փոխարժեքի տարբերությունները ներառված են Զուտ օգուտ /(վնաս) արտարժույթի առքուվաճառքից տողում ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական փոխարժեքները 2025թ. դեկտեմբերի 31-ին և 2024թ. դեկտեմբերի 31-ին կազմել են, համապատասխանաբար, 381.36 ՀՀ դրամ և 396.56 դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց, և 449.01 ՀՀ դրամ և 413.89 ՀՀ դրամ 1 եվրոյի դիմաց:

Խմբի աշխատակիցները (ներառյալ ղեկավարները) կարող են վարձատրություն ստանալ բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների տեսքով: Այսպիսով աշխատակիցները ծառայություններ են մատուցում բաժնային գործիքների դիմաց (բաժնետոմսով մարվող գործարքներ) վարձատրության նկատառումով:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գծով առանցքային գնահատականներ և դատողություններ

Խումբը կատարում է գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների և հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա: Գնահատումները և դատողությունները շարունակական կերպով վերանայվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ինչպիսիք են հետագա իրադարձությունների ակնկալիքները, որոնք առկա պայմաններում տրամաբանական են համարվում: Գնահատականներից բացի, ղեկավարությունը կատարում է նաև որոշակի այլ դատողություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գործընթացում: Մասնագիտական դատողությունները, որոնք առավել նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված արժեքների վրա, և գնահատականները, որոնք կարող են հիմք հանդիսանալ հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներում նշանակալի ճշգրտման համար, ներկայացված են ստորև.

Եթե համախմբված ֆինանսական հաշվետվություններում արտացոլվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը հնարավոր չէ որոշել ակտիվ շուկայի գների հիման վրա, ապա այն որոշվում է տարբեր գնահատման մոդելների կիրառմամբ, ներառյալ՝ մաթեմատիկական մոդելները: Այդպիսի մոդելների համար ելակետային տվյալները որոշվում են որպես դիտարկվող շուկաների տվյալներ, եթե դա հնարավոր է: Հակառակ դեպքում իրական արժեքի որոշման համար անհրաժեշտ է կիրառել դատողություններ: Լրացուցիչ տեղեկատվություն ներկայացված է Ծանոթագրություն 34-ում:

. Գույքի իրական արժեքը որոշվում է շուկայական համադրելի մեթոդի կիրառմամբ: Սա նշանակում է, որ գնահատողի կողմից կատարված գնահատումները հիմնված են շուկայական գործարքների գների վրա, ճշգրտված ըստ կոնկրետ գույքի բնույթի, գտնվելու վայրի կամ վիճակի: Խումբը յուրաքանչյուր տարի գնահատում է շուկայի փոփոխությունները՝ էական փոփոխությունների տեսանկյունից, և ներգրավում է անկախ փորձագետների՝ իր տարածքների և փոխադրամիջոցների գնահատման համար, ըստ անհրաժեշտության և կիրառելիության (ծանոթագրություն 34):

.

. Ֆինանսական ակտիվների բոլոր կատեգորիաներում արժեզրկումից կորուստների չափումը պահանջում է դատողություն, մասնավորապես, ապագա դրամական հոսքերի և գրավի արժեքների գումարի և ժամկետների գնահատում արժեզրկումից կորուստները և վարկային ռիսկի զգալի աճի գնահատականը որոշելիս: Այս գնահատումները պայմանավորված են մի շարք գործոններով, որոնց փոփոխությունները կարող են հանգեցնել տարբեր մակարդակների պահուստների: Բացի այդ, գործունեության լայնածավալ խափանումները կարող են առաջացնել իրացվելիության խնդիրներ որոշ կազմակերպությունների և սպառողների համար: Խմբի ԱՎԿ հաշվարկները ելնում են բարդ մոդելներից, որոնց հիմքում ընկած են մի շարք ենթադրություններ՝ փոփոխական մուտքային տվյալների ընտրության և նրանց փոխկապակցվածության վերաբերյալ: ԱՎԿ մոդելների տարրերը, որոնք համարվում են հաշվապահական դատողություններ և գնահատումներ, ներառում են.

- Վիճակագրական մոդելներ պարտազանցման տեղի ունենալու հավանականությունը (PD), պարտազանցման դեպքում գործիքի արժեքը (EAD) և պարտազանցման դեպքում կորստի չափը (LGD) խմբային հիմունքով գնահատելու համար,
- Ֆինանսական ակտիվների սեգմենտավորումը, երբ դրանց ԱՎԿ-ն հաշվարկված է խմբային հիմունքով,
- ԱՎԿ մոդելների մշակումը, ներառյալ տարբեր բանաձևերը և մուտքային տվյալների ընտրությունը,
- Մակրոտնտեսական սցենարների և տնտեսագիտական մուտքային տվյալների միջև կապվածության որոշումը, ինչպիսիք են իրական հատվածի փոփոխականները և գրավի արժեքները, և ազդեցությունը պարտազանցման տեղի ունենալու հավանականության (PD), պարտազանցման դեպքում գործիքի իրական արժեքի (EAD) և պարտազանցման դեպքում կորստի չափի (LGD) վրա,
- Հեռանկարային մակրոտնտեսական սցենարների ընտրությունը և դրանց հավանականության կշիռը՝ տնտեսական տվյալները ԱՎԿ մոդելների մեջ արտացոլելու համար

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված վարկերի և ֆինանսական վարձակալության արժեզրկման գծով պահուստը կազմել է 10,904,651 հազ. ՀՀ դրամ (2024թ.՝ 7,251,520 հազ. ՀՀ դրամ): Մանրամասները ներկայացված են Ծանոթագրություններ 12 և 13:

. Բնականոն գործունեության ընթացքում Խումբը գործարքի մեջ է մտնում իր կապակցված կողմերի հետ: ՖՀՄՍ 9-ը պահանջում է ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչում՝ հիմնված նրանց իրական արժեքի վրա: Կիրառվում է դատողություն՝ որոշելու, թե արդյոք գործարքները գնահատված են շուկայական կամ ոչ շուկայական տոկոսադրույքներով, եթե այդ գործարքների համար ակտիվ շուկա առկա չէ: Դատողության համար հիմք է հանդիսանում չկապակցված կողմերի հետ նմանատիպ գործարքների գնահատումը և արդյունավետ տոկոսադրույքով վերլուծությունները: Կապակցված կողմերի հաշվեկշռի պայմաններն ու դրույթները բացահայտվում են Ծանոթագրություն 36-ում:

5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին

Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2025թ. հունվարի 1-ից.

.

2023թ. օգոստոսին ՀՀՄՄԽ-ն փոփոխություններ է կատարել ՀՀՄՍ 21-ում, որը նպատակ ունի օգնել կազմակերպություններին գնահատելու երկու արժույթների միջև փոխանակելիությունը և որոշել սփոթ փոխարժեքն այն դեպքում, երբ փոխանակելիություն առկա չէ: Փոփոխությունները ազդում են կազմակերպության վրա այն ժամանակ, երբ ընկերությունն ունի գործարք կամ գործառնություն արտարժույթով, որը չափման ամսաթվին որոշակի նպատակով չի կարող փոխանակվել այլ արժույթի: ՀՀՄՍ 21-ի փոփոխությունները չեն ներկայացնում սփոթ փոխարժեքը գնահատելու վերաբերյալ մանրամասն պահանջներ: Փոխարենը, սահմանվում է շրջանակ, որի համաձայն կազմակերպությունը կարող է որոշել սփոթ փոխարժեքը գնահատման ամսաթվի դրությամբ: Նոր պահանջները կիրառելիս չի թույլատրվում համեմատական տեղեկատվության վերաներկայացում: Անհրաժեշտ է ազդեցության ենթարկվող գումարները փոխարկել սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ գնահատված սփոթ փոխարժեքներով՝ չբաշխված շահույթի կամ կուտակային փոխարժեքային

տարբերությունների պահուստի ճշգրտմամբ: Վերոնշյալ փոփոխությունների կիրառումը էական ազդեցություն չի ունեցել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Հրապարակվել են 2026թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո տարեկան ժամանակահատվածների համար պարտադիր մի շարք նոր ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնց վաղ կիրառում չի իրականացվել Ընկերության կողմից:

2024թ. մայիսի 30-ին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ՝ հետևյալ նպատակներով.

(ա) պարզաբանել որոշ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ճանաչման և ապաճանաչման ամսաթիվը, սահմանելով նոր բացառություն էլեկտրոնային դրամական փոխանցումների համակարգի միջոցով մարվող որոշ ֆինանսական պարտավորությունների համար.
(բ) պարզաբանել և լրացուցիչ ուղեցույց ներկայացնել՝ բացառապես մայր գումարի և տոկոսների վճարման չափանիշին ֆինանսական ակտիվի համապատասխանությունը գնահատելու համար.
(գ) ավելացնել նոր բացահայտումներ պայմանագրային ժամկետներ ունեցող որոշակի գործիքների գծով, որոնք կարող են առաջացնել դրամական միջոցների հոսքերի փոփոխություն (օրինակ՝ բնապահպանական, սոցիալական և կառավարման (ԲՍԿ) նպատակների իրագործմանը կապակցված որոշ գործիքներ). և
(դ) թարմացնել իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով (FVOCI) չափվող բաժնային գործիքների բացահայտումները:

Խումբը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

2024թ. ապրիլին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է նոր ստանդարտ՝ ՖՀՄՍ 18 «Ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում», որը առանձնահատուկ անդրադառնում է շահույթի կամ վնասի մասին հաշվետվություններին առնչվող թարմացումներին: ՖՀՄՍ 18-ում ներկայացված առանցքային նոր հասկացությունները առնչվում են հետևյալին՝

- շահույթի կամ վնասի հաշվետվության կառուցվածքը.
- ֆինանսական հաշվետվություններում պահանջվող բացահայտումները շահույթի կամ վնասի չափման որոշակի դիրքերի գծով, որոնք ներկայացվում են կազմակերպության ֆինանսական հաշվետվություններից դուրս (այսինքն՝ ղեկավարության կողմից սահմանված չափման դիրքերը). և
- համախմբման և տարանջատման ընդլայնված սկզբունքները, որոնք կիրառելի են հիմնական ֆինանսական հաշվետվությունների, և ընդհանուր առմամբ ծանոթագրությունների նկատմամբ:

ՖՀՄՍ 18-ը կփոխարինի ՀՀՄՍ 1-ին. ՀՀՄՍ 1-ում ներառված սկզբունքներից շատերը պահպանվում են՝ սահմանափակ փոփոխություններով: ՖՀՄՍ 18-ը չի ազդի ֆինանսական հաշվետվությունների հոդվածների ճանաչման կամ չափման վրա, սակայն կարող են փոփոխվել կազմակերպության կողմից որպես «գործառնական շահույթ կամ վնաս» ներկայացվող դիրքերը: ՖՀՄՍ 18-ը կկիրառվի 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Այն կիրառելի է նաև համեմատական տեղեկատվության նկատմամբ: Խումբը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 19-ը իրավասու դուստր ձեռնարկություններին հնարավորություն է տալիս ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման

ստանդարտները կիրառել կրճատված բացահայտումներով: Սույն ստանդարտով սահմանված բացահայտման կրճատված պահանջները կիրառելի չեն Խմբի համար:

ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտները առաջին անգամ կիրառող կազմակերպություններին ՖՀՄՍ 14-ը հնարավորություն է ընձեռում շարունակել դրույքաչափերի կարգավորման հետ կապված գումարների ճանաչումը իրենց նախորդ հաշվապահական հաշվառման ստանդարտի պահանջների համաձայն: Այնուամենայնիվ, ՖՀՄՍ Հաշվապահական հաշվառման ստանդարտներն արդեն կիրառող և այդ գումարները չճանաչող կազմակերպությունների հետ համադրելիությունը մեծացնելու նպատակով, ստանդարտը պահանջում է դրույքաչափերի կարգավորման ազդեցությունը ներկայացնել այլ հոդվածներից առանձին: Այն կազմակերպությունը, որն իր ֆինանսական հաշվետվությունները արդեն ներկայացնում է ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն, իրավասու չէ կիրառել ստանդարտը: Այս ստանդարտի ուժի մեջ մտնելու ամսաթիվը դեռ պետք է որոշվի ՀՀՄՄԽ-ի կողմից:

Այս փոփոխությունները վերաբերում են ներդրողի և իր ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկումների միջև ակտիվների վաճառքին կամ հատկացմանը վերաբերող՝ ՖՀՄՍ 10-ի և ՀՀՄՍ 28-ի պահանջների միջև գոյություն ունեցող անհամապատասխանությանը: Փոփոխությունների կիրառման հիմնական հետևանքն այն է, որ շահույթը կամ վնասը ճանաչվում է ամբողջությամբ այն դեպքում, երբ գործարքը առնչվում է ձեռնարկատիրական գործունեությանը: Շահույթը կամ վնասը ճանաչվում է մասնակիորեն այն դեպքում, երբ ակտիվը չի առնչվում ձեռնարկատիրական գործունեությանը, նույնիսկ եթե այդ ակտիվները պատկանում են դուստր կազմակերպությանը: 2015թ. ՀՀՄՄԽ-ն որոշել է անորոշ ժամանակով հետաձգել այս փոփոխությունների ուժի մեջ մտնելու ժամկետը:

ՀՀՄՄԽ կողմից հրապարակվել են մի շարք փոփոխություններ, որոնց նպատակն է՝ օժանդակել ընկերություններին բարելավել բնությունից կախված էլեկտրաէներգիայի պայմանագրերի ֆինանսական հետևանքների գծով իրենց հաշվետվողականությունը, հաշվի առնելով, որ այդ պայմանագրերը որպես կանոն կազմված են որպես էլեկտրաէներգիայի գնման պայմանագրեր (ԷԳՊ): Ընթացիկ հաշվապահական հաշվառման պահանջները կարող են բավարար չափով չարտացոլել ընկերության գործունեության վրա այս պայմանագրերի ազդեցության եղանակը: Որպեսզի ընկերությունները հնարավորություն ունենան այս պայմանագրերն ավելի պատշաճ կերպով արտացոլել ֆինանսական հաշվետվություններում, ՀՀՄՄԽ-ն թիրախային փոփոխություններ է կատարել ՖՀՄՍ 9՝ «Ֆինանսական գործիքներ», և ՖՀՄՍ 7՝ «Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ» ստանդարտներում: Փոփոխությունները ներառում են՝ (ա) «սեփական օգտագործման» պահանջների կիրառման պարզաբանում, (բ) որոշակի հեջային հաշվառման պահանջների մեղմացում այն դեպքերում, երբ տվյալ պայմանագրերն օգտագործվում են որպես հեջավորման գործիքներ, և (գ) նոր բացահայտման պահանջների ավելացում, որոնց նպատակն է՝ ներդրողներին հնարավորություն տալ ընկալել այս պայմանագրերի ազդեցությունը ընկերության ֆինանսական ցուցանիշների և դրամական միջոցների հոսքերի վրա: Խումբը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՄ 1-ով պարզաբանվել է, որ ՖՀՄՄ հաշվառման ստանդարտներին անցնելուց հետո հեջը պետք է դադարեցվի, եթե այն չի համապատասխանում «որակավորման չափանիշներին», այլ ոչ թե հեջի հաշվառման «պայմաններին»: Սա նպատակ ունի լուծել ՖՀՄՄ 1-ի և ՖՀՄՄ 9-ի հեջի հաշվառման պահանջների միջև անհամապատասխանության հետևանքով առաջացող հնարավոր տարընթերցումը: ՖՀՄՄ 7-ով պահանջվում են օգուտի կամ վնասի բացահայտումներ՝ կապված այն ֆինանսական ակտիվների ապաճանաչման հետ, որտեղ կազմակերպությունը ունի ընթացիկ մասնակցություն, այդ թվում, պահանջվում է բացահայտել՝ արդյոք իրական արժեքի չափումները ներառում են «նշանակալի ծավալով ոչ դիտարկելի մուտքային տվյալներ»: Այս նոր ձևակերպումը փոխարինում է «նշանակալի մուտքային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա» արտահայտությանը: Փոփոխության նպատակն է՝ ձևակերպումը համապատասխանեցնել ՖՀՄՄ 13-ին: Բացի այդ, պարզաբանվել են ՖՀՄՄ 7-ի կիրառման ուղեցույցի որոշ օրինակներ և ավելացվել է տեքստ առ այն, որ օրինակները հնարավոր է՝ չարտացոլեն ՖՀՄՄ 7-ի նշված պարբերությունների բոլոր պահանջները: ՖՀՄՄ 16-ում կատարվել է փոփոխություն՝ պարզաբանելով, որ երբ վարձակալը որոշում է, որ վարձակալության գծով պարտավորությունը մարվել է համաձայն ՖՀՄՄ 9-ի, ապա վարձակալը պետք է կիրառի ՖՀՄՄ 9-ի ուղեցույցը՝ արդյունքում առաջացող շահույթը կամ վնասը ճանաչելու համար: Այս պարզաբանումը վերաբերում է վարձակալության գծով պարտավորություններին, որոնք մարվել են կազմակերպության կողմից այդ փոփոխությունը առաջին անգամ կիրառելու հաշվետու տարեկան ժամանակաշրջանի սկզբում կամ դրանից հետո: ՖՀՄՄ 9-ի և ՖՀՄՄ 15-ի միջև անհամապատասխանությունը վերացնելու նպատակով այժմ պահանջվում է, որ առևտրային դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվեն «ՖՀՄՄ 15-ի կիրառման միջոցով որոշված գումարով» այլ ոչ թե «գործարքի գնով» (ինչպես սահմանված է ՖՀՄՄ 15-ում)»: ՖՀՄՄ 10-ի փոփոխությամբ օգտագործելով պակաս միանշանակ ձևակերպում «դե-ֆակտո գործակալ» հանդիսացող կազմակերպության համար, և պարզաբանվել է, որ ՖՀՄՄ 10-ի Բ74 պարագրաֆում նկարագրված հարաբերությունը միայն մեկ օրինակ է այն հանգամանքներից, որոնց դեպքում պահանջվում է դատողություն՝ որոշելու, թե արդյոք կողմը հանդես է գալիս որպես դե ֆակտո գործակալ: ՀՀՄՄ 7-ում կատարվել է ճշտում՝ հեռացվել են «ինքնարժեքի մեթոդի» վկայակոչումները, որը հանվել է ՖՀՄՄ հաշվառման ստանդարտներից 2008թ. մայիսին, երբ ՀՀՄՄԽ-ն հրապարակեց «Ներդրման արժեքը դուստր ձեռնարկությունում, համատեղ վերահսկվող կազմակերպությունում կամ ասոցիացված կազմակերպությունում»:

Բացառությամբ վերը նշված դեպքերի, չի ակնկալվում, որ սույն նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները որևէ էական ազդեցություն կունենան Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

7 Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն

Կառավարման նպատակներով Խումբը կազմված է հինգ գործառնական սեգմենտներից՝ ըստ մատուցվող պրոդուկտների և ծառայությունների.

Մանրածախ բանկային գործունեություն	Ֆիզիկական անձ հաճախորդների սպառողական վարկերի և հիփոթեքային վարկերի տրամադրում, ավանդների և ընթացիկ հաշիվների բացում և սպասարկում, վարկային քարտերի գործիքներ, դրամական փոխանցումներ, արտարժույթի փոխանակման գործարքներ և այլն:
Կորպորատիվ բանկային գործունեություն	Կորպորատիվ և ինստիտուցիոնալ հաճախորդներին առևտրային վարկերի և այլ վարկային միջոցների տրամադրում, ավանդների և ընթացիկ հաշիվների բացում և սպասարկում, դրամական փոխանցումներ, արտարժույթի փոխանակման գործարքներ և այլն:
Գյուղատնտեսություն	Գյուղատնտեսական ոլորտի հաճախորդներին վարկերի տրամադրում, ավանդների և ընթացիկ հաշիվների բացում և սպասարկում, դրամական փոխանցումներ, արտարժույթի փոխանակման գործարքներ և այլն:
Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն	Գանձապետական և ֆինանսական, ներդրումային բանկային ծառայություններ և այլ կենտրոնացված գործառնություններ:

Ֆինանսական վարձակալություն	Կորպորատիվ և ֆիզիկական անձ հաճախորդներին ֆինանսական վարձակալության գծով ծառայությունների մատուցում:

Ղեկավարությունը առանձին վերահսկում է յուրաքանչյուր սեգմենտի գործառնական և ֆինանսական արդյունքները՝ ռեսուրսների բաշխման և կատարողականի գնահատման վերաբերյալ որոշումներ կայացնելու համար: Խումբը չափում է զուտ տոկոսային եկամուտը հետևյալ սեգմենտներից յուրաքանչյուրի համար՝ մանրածախ բանկային գործունեություն, կորպորատիվ բանկային գործունեություն, գյուղատնտեսություն և առևտրային և ներդրումային բանկային գործունեություն: 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Խումբը վերանայել է ոչ տոկոսային ծախսերի և ոչ տոկոսային եկամուտների ՝ գործառնական սեգմենտների բաշխման իր մոտեցումը: Նախկինում նման ծախսերը և եկամուտները բաշխվում էին ըստ յուրաքանչյուր սեգմենտի զուտ տոկոսային եկամտի համամասնության: Սկսած 2025թ. -ից ոչ տոկոսային ծախսերը և ոչ տոկոսային եկամուտները բաշխվում են ծախսերի բաշխման հայտանիշների հիման վրա, ինչպիսիք են ծավալի և քանակի վրա հիմնված չափորոշիչները, որոնք ավելի պատշաճ կերպով են արտացոլում յուրաքանչյուր սեգմենտում ռեսուրսների բնույթը և սպառումը: Ֆինանսական վարձակալության սեգմենտի համար (ԱԿԲԱ Լիզինգ Վարկային կազմակերպություն ՓԲԸ) Խումբը կիրառում է լրիվ առանձնացված չափում: Շահութահարկը կառավարվում է Խմբի մակարդակով և համապատասխանաբար բաշխվում ըստ գործառնական սեգմենտների:

Գործառնական սեգմենտների միջև տրանսֆերային գնագոյացումը, ինչպես երրորդ կողմերի հետ գործարքներում, սահմանված է անկախ կողմերի միջև շուկայական պայմաններով:

Տոկոսաբեր ակտիվները ներառում են հաճախորդներին տրված վարկերը, ածանցյալ ֆինանսական ակտիվները, ներդրումային արժեթղթերը, այլ բանկերի նկատմամբ պահանջները և ֆինանսական վարձակալության դեբիտորական պարտքերը:

Տոկոսակիր ֆինանսական պարտավորությունները ներառում են հաճախորդների ավանդները, փոխառու միջոցները, ստորադաս փոխառությունները, բանկերից ներգրավված միջոցները և թողարկված պարտքային արժեթղթերը:

Հետևյալ աղյուսակները ներկայացնում են շահույթի կամ վնասի և որոշ ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն Խմբի գործառնական սեգմենտների համար:

2025թ.	Մանրածախ բանկային գործունե-ություն	Կորպորատիվ բանկային գործունե-ություն	Գյուղատն-տեսություն	Առևտրային և ներդրումային բանկային գործունե-ություն	Ֆինանսական վարձակալության գործունե-ություն	Ընդամենը
Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ	35 349 713	29,192,569	19,853,505	8,378,577	-	**92,774,364**
Այլ տոկոսային եկամուտ	-	-	-	64,661	14,172,169	**14,236,830**
Տոկոսային ծախս	(12,880,019)	(11,631,693)	(7,450,765)	(2,745,577)	(5,947,550)	**(40,655,604)**
Զուտ տոկոսային եկամուտ	**22,469,694**	**17,560,876**	**12,402,740**	**5,697,661**	**8,224,619**	**66,355,590**
Վարկային կորստի գծով ծախս/ (հակադարձում)	(4,208,959)	(939,200)	(40,098)	724,492	173,591	**(4,290,174)**
Զուտ տոկոսային եկամուտ վարկային կորստի գծով ծախսից հետո	**18,260,735**	**16,621,676**	**12,362,642**	**6,422,153**	**8,398,210**	**62,065,416**
Միջնորդավճարների գծով եկամուտ	9,777,500	6,072,900	2,401,897	-	459,170	**18,711,467**
Միջնորդավճարների և այլ վճարների գծով ծախս	(4,901,831)	(3,044,575)	(1,204,162)	-	(14,428)	**(9,164,996)**
Զուտ վնաս իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից	-	-	-	(319,309)	-	**(319,309)**
Զուտ օգուտ /(վնաս) արտարժույթի առքուվաճառքից	2,575,704	3,665,777	358,548	-	(115,585)	**6,484,444**
Զուտ (վնաս)/օգուտ փոխարժեքային տարբերություններից	257,265	366,143	35,812		(1,819)	**657,401**
Ասոցիացված կազմակերպությունների շահույթի մասնաբաժին	-	-	-	1 658 322	-	**1 658 322**
Այլ արժեզրկման և պահուստների հակադարձում/(ծախս)	(23,383)	(15,159)	(10,706)	-	-	**(49,248)**
Այլ եկամուտներ	176,850	89,991	51,530	220,848	173,733	**712,952**
Ոչ տոկոսային եկամուտ	**7,862,105**	**7,135,077**	**1,632,919**	**1,559,861**	**501,071**	**18,691,033**
Անձնակազմի գծով ծախսեր	(12,376,274)	(5,593,016)	(4,076,911)	(464,683)	(631,963)	**(23,142,847)**
Մաշվածություն և ամորտիզացիա	(2,152,582)	(771,181)	(595,803)	(75,782)	(111,738)	**(3,707,086)**
Այլ գործառնական ծախսեր	(1,818,587)	(651,524)	(503,358)	(64,023)	(110,765)	**(3,148,257)**
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(3,286,080)	(1,177,265)	(909,537)	(115,686)	(272,961)	**(5,761,529)**
Ոչ տոկոսային ծախս	**(19,633,523)**	**(8,192,986)**	**(6,085,609)**	**(720,174)**	**(1,127,427)**	**(35,759,719)**
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը	**6,489,317**	**15,563,767**	**7,909,952**	**7,261,840**	**7,771,854**	**44,996,730**
Շահութահարկի գծով ծախս	(1,095,132)	(2,626,530)	(1,334,878)	(2,501,127)	(1,583,037)	**(9,140,704)**
Տարվա շահույթ	**5,394,185**	**12,937,237**	**6,575,074**	**4,760,713**	**6,188,817**	**35,856,026**
Սեգմենտի տոկոսաբեր ակտիվներ	279,154,637	263,973,020	90,270,230	76,299,370	103,141,827	**812,839,084**
Սեգմենտի տոկոսակիր պարտավորություններ	393,619,487	285,105,861	60,774,317	14,573,559	88,149,949	**842,223,173**

Այս հանգամանքները կարող են ՀՀ-ում ստեղծել ավելի էական հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը կարծում է, որ հարկային պարտավորությունները կատարվել են պատշաճ կերպով՝ մեկնաբանելով Հայաստանի գործող հարկային օրենսդրությունը, պաշտոնական հայտարարությունները և դատական որոշումները: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբեր լինել, և ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը, եթե իշխանությունները հաջողությամբ իրականացնեին իրենց մեկնաբանությունները, կարող էր զգալի լինել:

. Դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի պայմանական և պայմանագրային պարտավորությունները ներառում են հետևյալ հոդվածները.

	2025թ.	2024թ.
Վարկային բնույթի պարտավորություններ		
Վարկերի, վարկային գծերի և վարկային քարտերի գծով պարտավորություններ	39,106,267	35,710,592
Ակրեդիտիվներ	181,187	128,016
Ոչ ֆինանսական երաշխիքներ	7,075,461	31,596,404
Ֆինանսական երաշխիքներ	49,774,918	6,074,434
Պայմանական դեպքեր և պարտավորություններ	**96,137,833**	**73,509,446**

Ստորև ներկայացված է 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում վարկերի, վարկային գծերի և վարկային քարտերի պարտավորությունների գծով ԱՎԿ-ների փոփոխությունների վերլուծությունը.

Վարկեր և վարկային գծեր և վարկային քարտերի գծով պարտավորություններ

	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
ԱՎԿ 2025թ. հունվարի 1-ի դրությամբ	**67,633**	**1,950**	**5,972**	**75,555**
Նոր ակտիվներ	25,939	-	-	**25,939**
Ժամկետանց ակտիվներ	(19,303)	(1,348)	(1,886)	**(22,537)**
Տեղափոխումներ Փուլ 1	135	(135)	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 2	(405)	405	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 3	(1,070)	(76)	1,146	**-**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ	(92)	1,670	2,139	**3,717**
ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ	13,738	(190)	(779)	**12,769**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	310	-	(5)	**305**
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**86,885**	**2,276**	**6,587**	**95,748**

Ստորև ներկայացված է 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում վարկերի, վարկային գծերի և վարկային քարտերի պարտավորությունների գծով ԱՎԿ-ների փոփոխությունների վերլուծությունը.

Վարկեր և վարկային գծեր և վարկային քարտերի գծով պարտավորություններ

	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
ԱՎԿ 2024թ. հունվարի 1-ի դրությամբ	**60,857**	**928**	**4,202**	**65,987**
Նոր ակտիվներ	23,001	-	-	**23,001**
Ժամկետանց ակտիվներ	(17,955)	(354)	(1,615)	**(19,924)**
Տեղափոխումներ Փուլ 1	123	(123)	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 2	(280)	280	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 3	(903)	(51)	954	**-**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ	(107)	1,263	1,940	**3,096**
ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ	3,281	13	527	**3,821**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(384)	(6)	(36)	**(426)**
31 դեկտեմբերի 2024թ.	**67,633**	**1,950**	**5,972**	**75,555**

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում երաշխիքների և ակրեդիտիվների հետ կապված համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ-ի փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Երաշխիքներ և ակրեդիտիվներ

	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Համախառն հաշվեկշռային արժեքը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ	**36,682,010**	**68,010**	**1,048,834**	**37,798,854**
Սկզբնավորված կամ նոր ձեռք բերված երաշխիքներ և ակրեդիտիվներ	46,035,333	-	-	**46,035,333**
Ժամկետը լրացած կամ մարված երաշխիքներ և ակրեդիտիվներ	(26,430,620)	(7,375)	(364,626)	**(26,802,621)**
Տեղափոխումներ Փուլ 1	-	-	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 2	(67,425)	67,425	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 3	(486,859)	-	486,859	**-**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	-	-	-	**-**
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**55,732,439**	**128,060**	**1,171,067**	**57,031,566**

Երաշխիքներ և ակրեդիտիվներ

	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
ԱՎԿ 2025թ. հունվարի 1-ի դրությամբ	**412**	**1**	**8**	**421**
Ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա ազդող փոփոխություններ.				
Սկզբնավորված կամ նոր ձեռք բերված երաշխիքներ և ակրեդիտիվներ	531	-	-	**531**
Ժամկետը լրացած կամ մարված երաշխիքներ և ակրեդիտիվներ	(317)	-	(3)	**(320)**
Տեղափոխումներ Փուլ 1	-	-	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 2	-	-	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 3	(4)	-	4	**-**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ	-	-	-	**-**
ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ	(20)	-	(1)	**(21)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	-	-	-	**-**
ԱՎԿ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**602**	**1**	**8**	**611**

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում երաշխիքների և ակրեդիտիվների հետ կապված համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ-ի փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Երաշխիքներ և ակրեդիտիվներ

	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Համախառն հաշվեկշռային արժեքը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ	**31,257,294**	**573,493**	**292,629**	**32,123,416**
Սկզբնավորված կամ նոր ձեռք բերված երաշխիքներ և ակրեդիտիվներ	29,639,881	-	-	**29,639,881**
Ժամկետը լրացած կամ մարված երաշխիքներ և ակրեդիտիվներ	(23,595,156)	(123,493)	(242,502)	**(23,961,151)**
Տեղափոխումներ Փուլ 1	-	-	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 2	(68,010)	68,010	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 3	(548,707)	(450,000)	998,707	**-**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(3,292)	-	-	**(3,292)**
31 դեկտեմբերի 2024թ.	**36,682,010**	**68,010**	**1,048,834**	**37,798,854**

Երաշխիքներ և ակրեդիտիվներ

	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
ԱՎԿ 2024թ. հունվարի 1-ի դրությամբ	**8,750**	**9**	**5**	**8,764**
Ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա ազդող փոփոխություններ.				
Սկզբնավորված կամ նոր ձեռք բերված երաշխիքներ և ակրեդիտիվներ	353	-	-	**353**
Ժամկետը լրացած կամ մարված երաշխիքներ և ակրեդիտիվներ	(8,620)	(2)	(4)	**(8,626)**
Տեղափոխումներ Փուլ 1	-	-	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 2	(1)	1	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 3	(5)	(7)	12	**-**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ	-	-	(5)	**(5)**
ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ	(65)	-	-	**(65)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	-	-	-	**-**
ԱՎԿ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**412**	**1**	**8**	**421**

26 Զուտ տոկոսային եկամուտ

Զուտ տոկոսային եկամուտը ներառում է.

	2025թ.	2024թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր	84,395,737	70,281,544
Հակադարձ հետգնման պայմանագրերով ստացվելիք գումարներ	2,376,591	3,994,841
Պահանջներ բանկերի նկատմամբ	1,050,875	1,133,912
Այլ	50	46,578
	87,823,253	**75,456,875**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ		
Պարտքային գործիքներ	4,951,111	4,187,172
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	**92,774,364**	**79,644,047**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	14,172,169	12,351,284
Այլ տոկոսային եկամուտ	64,661	173,483
Այլ տոկոսային եկամուտ	**14,236,830**	**12,524,767**
Ընդամենը տոկոսային եկամուտ	**107,011,194**	**92,168,814**
Տոկոսային ծախս		
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	25,948,617	26,480,071
Այլ փոխառու միջոցներ և ստորադաս փոխառություններ, բացառությամբ վարձակալության պարտավորությունների	9,974,871	8,334,913
Թողարկված պարտքային արժեթղթեր	4,072,034	2,310,867
Հետգնման պայմանագրերով վճարման ենթակա գումարներ	106,045	1,979
Այլ	145,189	35,255
Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային ծախս	**40,246,756**	**37,163,085**
Վարձակալության գծով պարտավորություններ	408,848	441,676
Տոկոսային ծախս	**40,655,604**	**37,604,761**
Զուտ տոկոսային եկամուտ	**66,355,590**	**54,564,053**

27 Միջնորդավճարների գծով եկամուտ, զուտ

Զուտ միջնորդավճարները ներառում են.

	2025թ.	2024թ.
Պլաստիկ քարտերի և գործարքների վճարներ	13,263,494	11,404,952
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	1,411,924	281,338
Դրամական փոխանցումներ	1,187,188	1,060,129
Այլ	740,798	281,981
Ընթացիկ հաշվի վճարներ	658,639	584,093
Միջնորդավճարներ՝ որպես ապահովագրական գործակալ հանդես գալու գծով	560,183	430,960
Միջնորդավճարներ վարձակալության սարքավորումների մատակարարներից	459,170	213,756
Կանխիկացման ծառայություններ	430,071	449,599
Միջնորդավճարների գծով եկամուտ	**18,711,467**	**14,706,808**
Պլաստիկ քարտեր	8,357,058	6,057,748
Այլ	629,129	356,997
Դրամական փոխանցումներ	178,809	184,739
Միջնորդավճարների գծով ծախս	**9,164,996**	**6,599,484**
Միջնորդավճարների գծով եկամուտ, զուտ	**9,546,471**	**8,107,324**

28 Այլ եկամուտներ

	2025թ.	2024թ.
Հիմնական միջոցների օտարումից օգուտ	120,337	501,396
Կրեդիտորական պարտքերի դուրսգրումից եկամուտ	33,146	18,256
Ստացված փոխհատուցում	2,368	13,386
Շահաբաժիններ	1,932	2,174
Ստացված տույժեր և տուգանքներ	851	773
Քարտով գործարքներից ստացված եկամուտ, զուտ	296	743
Այլ	554,022	300,425
Ընդամենը այլ եկամուտներ	**712,952**	**837,153**

29 Անձնակազմի գծով ծախսեր

	2025թ.	2024թ.
Աշխատավարձեր և գործավարձեր	15,738,998	14,098,521
Պարգևավճարներ և կատարողական խթաններ	5,826,037	5,475,461
Այլ անձնակազմի գծով ծախսեր	1,577,812	1,448,493
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	**23,142,847**	**21,022,475**

30 Այլ գործառնական ծախսեր

Գործառնական այլ ծախսերը ներառում են.

	2025թ.	2024թ.
Երաշխիքային վճարներ ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին	852,255	838,384
Ծրագրային ապահովման և սպասարկման վճարներ	460,156	297,735
Շահութահարկից բացի այլ հարկեր	368,873	290,353
Հողի և շենքերի վերագնահատումից վնաս	292,577	-
Հիմնական միջոցների օտարումից վնաս	-	198,323
Ֆինանսական համակարգի հաշտարարի վճարումներ	169,796	145,257
Ինկասացիոն ծախսեր	135,003	150,917
Վարկի հավաքագրման գծով ծախսեր	124,893	174,648
Արժեթղթերի ռեեստրի վարման վճար	43,124	19,724
Վճարված տույժեր և տուգանքներ	573	10,560
Այլ	701,007	436,544
Այլ գործառնական ծախսեր	**3,148,257**	**2,562,445**

31 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

	2025թ.	2024թ.
Վերանորոգում և սպասարկում	1,459,146	1,437,348
Գովազդային և մարքեթինգային ծառայություններ	1,063,345	888,284
Կոմունալ ծառայություններ և գրասենյակային պարագաներ	436,553	443,592
Այլ կառավարչական ծախսեր	435,119	495,010
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	411,789	497,759
Ծրագրային ապահովման սպասարկման ծախս	387,080	359,532
Ապահովագրություն	254,583	233,335
Անվտանգության գծով ծախսեր	245,134	282,344
Ներկայացուցչական ծախսեր	168,040	83,869
Գործառնական վարձակալության գծով ծախս	69,469	33,944
Այլ	831,271	605,932
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	**5,761,529**	**5,360,949**

«Այլ» տողը ներառում է 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ֆինանսական տարվա համար Խմբին մատուցված աուդիտորական ծառայությունները՝ 65,640 հազ. ՀՀ դրամ (2024թ.՝ 57,240 հազ. ՀՀ դրամ), աուդիտ չհանդիսացող հավաստիացման ծառայությունները՝ 21,227 հազ. ՀՀ դրամ (2024թ.՝ 38,683 ՀՀ դրամ) և աուդիտ չհանդիսացող այլ ծառայությունները՝ զրո (2024թ. ՝ զրո): Բոլոր գումարները ներառում են ԱԱՀ:

32 Այլ արժեզրկման և պահուստների գծով ծախս

	2025թ.	2024թ.
Բռնագանձված ակտիվների արժեզրկման գծով ծախս	(49,248)	(88,096)
Այլ արժեզրկման և պահուստների գծով ծախս	**(49,248)**	**(88,096)**

33 Ռիսկերի կառավարում

Խմբի ռիսկերի կառավարման համակարգը, Խմբի ռազմավարությանը համահունչ, ներառում է ռիսկերի կառավարման նորարարական և միջազգային գործիքներ, ռիսկերի կառավարման սկզբունքները սահմանող փաստաթղթեր և Խմբում ռիսկի մշակույթի պահպանման և տարածմանն ուղղված գործողություններ: Ռիսկը բնորոշ է Խմբի գործունեությանը և կառավարվում է ռիսկի նույնականացման, չափման, կառավարման, մոնիտորինգի և հաշվետվության համակարգերի շարունակական գործընթացի միջոցով, և վերահսկվում է ղեկավարության կողմից: Այս գործընթացը կարգավորվում է ռիսկերի սահմանաչափերով, ինչը ենթակա է մշտական վերահսկողության: Խմբում կատարվում է ռիսկի ազդեցության կառավարման պատասխանատվության բաշխում, ընդ որում յուրաքանչյուր անձ պատասխանատու է իր իրավասության ներքո գտնվող ռիսկերի համար:

Հիմնական ռիսկերը, որոնց ենթակա է Խումբը, վարկային, իրացվելիության, շուկայական (որը ներառում է առևտրային և ոչ առևտրային ռիսկերը, մասնավորապես՝ տոկոսադրույքի ռիսկը և արտարժույթի ռիսկը) և գործառնական ռիսկերն են: Բացի այդ, Խումբը ուշադրությամբ հետևում նոր առաջացող ռիսկերին, ինչպիսիք են կիբերանվտանգության սպառնալիքները, և ապահովում է ռիսկերի կառավարման գործելակերպը կարգավորող չափանիշների պահպանումը: Կանոնավոր կերպով իրականացվում են այս ռիսկերի քանակական գնահատումներ՝ որոշումների կայացման գործընթացներին օժանդակելու և Խմբի շահութաբերությունն ու կայունությունը պահպանելու նպատակով:

Ռիսկերի նույնականացումը Խմբի ներսում շարունակական գործընթաց է և իրականացվում է ռիսկերի կանոնավոր գնահատման, պորտֆելների շարունակական մոնիտորինգի, նոր բիզնես գործունեության և գործընթացների ռիսկերի գնահատման, բարդ և արտասովոր բիզնես գործարքների ռիսկերի գնահատման և ընդհանուր ռիսկի պրոֆիլի կանոնավոր մոնիտորինգի միջոցով:

Խումբը կիրառում է հատուկ մոտեցում տարբեր տեսակի ռիսկերի վերլուծության և գնահատման համար՝ օգտագործելով վիճակագրական մոդելներ, զգայունության վերլուծություններ և վերահսկելով հիմնական ռիսկերի ցուցանիշները: Անհրաժեշտության դեպքում Խումբը ձեռնարկում է համապատասխան միջոցներ՝ հնարավոր ռիսկերը լուծելու համար: Այս մոդելները ենթարկվում են կանոնավոր հակադարձ թեստավորման և վավերացման՝ դրանց ճշգրտությունը հաստատելու համար: Խումբը նաև իրականացնում է սթրես

.

թեստային վերլուծություններ՝ գնահատելու ծայրահեղ, ցածր հավանականության իրադարձությունների ազդեցությունը: Ռիսկերի կառավարման իր համապարփակ ռազմավարության ներքո Խումբը օգտագործում է ածանցյալ գործիքներ և այլ ֆինանսական գործիքներ՝ տոկոսադրույքների, արտարժույթի, սեփական կապիտալի շուկաների, վարկային ռիսկերի և ակնկալվող գործարքների հետ կապված ռիսկերի հեջավորման համար: Ավելին, Խումբն ակտիվորեն օգտագործում է վարկային ռիսկի մեղմման տարբեր գործիքներ:

Խումբը հիմնականում մշտադիտարկման է ենթարկում և վերահսկում է ռիսկերը՝ պահպանելով նախատեսված սահմանաչափերը, որոնք որոշվել են ըստ Խմբի բիզնես ռազմավարության, շուկայական պայմանների և ռիսկի ախորժակի, առանձնահատուկ ուշադրություն դարձնելով կոնկրետ ճյուղերին՝ օպտիմալ դիվերսիֆիկացման մակարդակի հասնելու համար: Բացի այդ, Խումբը շարունակաբար գնահատում է իր ընդհանուր ռիսկ կրելու կարողությունը՝ կապված բոլոր ռիսկերի տեսակների և գործունեության բոլոր ռիսկերի ազդեցության հետ: Պարբերական ծանուցումներ են տրվում ռիսկի սահմանաչափերի խախտման դեպքում՝ ելնելով խախտման տեսակից և հրատապությունից: Այս ծանուցումները փոխանցվում են Խմբի համապատասխան ստորաբաժանումներին, ինչպես նաև գլխավոր գործադիր տնօրենին՝ քննարկելու և համապատասխան գործողություններ ձեռնարկելու համար:

. Բոլոր բիզնես ուղղությունների գծով ռիսկերի համապատասխան տվյալները ուսումնասիրվում և մշակվում են ռիսկերը բացահայտելու, կառավարելու և մեղմելու և դրանք Խմբի յուրաքանչյուր կազմակերպության համար ռիսկերի ախորժակին համապատասխանեցնելու նպատակով: Խումբն ունի երկու հիմնական հաշվետվության գիծ՝ Ռիսկերի կառավարման հանձնաժողով՝ Գործադիր ղեկավարությանը և Ռիսկերի կառավարման հանձնաժողով՝ Խորհրդին: Ռիսկերի կառավարման հանձնաժողովին ներկայացվող հաշվետվությունը ներառում է ընդհանուր վարկային ռիսկի ենթարկվածության վերլուծություն, մանրամասն մակրոտնտեսական վերլուծություն, վարկերի համակենտրոնացման սահմանաչափերի մշտադիտարկում, ճեղքվածքների (GAP) վերլուծություն, VaR գնահատում, իրացվելիության գործակիցներ և նպատակային ցուցանիշների վերլուծություն, սթրես թեստ վերլուծություն, ընդհանուր ռիսկի ախորժակի վերահսկում և Խմբի յուրաքանչյուր կազմակերպության ռիսկերի պրոֆիլի փոփոխություններ:

Ռիսկերի կառավարման հանձնաժողովը քննարկում է ռիսկերի հետ կապված էական խնդիրները և հաստատում քայլերը՝ ուղղված դրանց նվազեցմանը և կառավարմանը: Խորհուրդը եռամսյակային կտրվածքով ստանում է ռիսկերի համապարփակ հաշվետվություն, որը ներկայացնում է առանցքային տվյալներ՝ ընդհանուր ռիսկի ենթարկվածությունը գնահատելու և տեղեկացված որոշումներ կայացնելու համար: Ռիսկերի մանրամասն հաշվետվությունները պատրաստվում և տարածվում են կազմակերպության բոլոր մակարդակներում՝ ապահովելով կիրառելի և արդիական տեղեկատվության հասանելիություն յուրաքանչյուր ստորաբաժանման համար:

կրում է կազմակերպության ներսում ռիսկերի հայտնաբերման և վերահսկման հիմնական պատասխանատվությունը: Այնուամենայնիվ, առկա են առանձին անկախ մարմիններ, որոնք պատասխանատու են ռիսկերի կառավարման և մոնիթորինգի համար: Բանկի խորհուրդը պատասխանատու է ընդհանուր ռիսկերի կառավարման քաղաքականության, ռիսկերի կառավարման ռազմավարության և սկզբունքների հաստատման համար: Խորհուրդը վերահսկում է ռիսկերի կառավարումը՝ հաստատելով ռիսկերի կառավարման շրջանակը, ռիսկի ախորժակի շրջանակը, ռիսկի ախորժակի մասին հայտարարությունը և դրան առնչվող ռիսկերի կառավարման քաղաքականությունները և սահմանաչափերը:

աջակցում է Խորհրդին՝ Խմբի ռիսկերի պրոֆիլը և սահմանված ռիսկի ախորժակի համեմատ արդյունքները վերահսկելու նպատակով: Խորհրդին առընթեր Ռիսկերի կառավարման հանձնաժողովը կանոնավոր կերպով վերանայում է ռիսկերի կառավարման հաշվետվությունը և Խորհրդին է ներկայացնում բացահայտումներ և առաջարկություններ ռիսկի ընդհանուր բնութագրի և շուկայի իրավիճակի վերաբերյալ:

. Բանկի գլխավոր գործադիր տնօրենը պատասխանատվություն է կրում Խմբի ռիսկերի կառավարման շրջանակների արդյունավետ

.

կիրառման և ներքին իրավական ակտերի շրջանառության ապահովման, իր լիազորությունների շրջանակներում ռիսկերի կառավարման հետ կապված որոշումների կայացման համար լիազորությունների բաշխման սահմանման, ռիսկերի հետ կապված ներքին իրավական ակտերի վերանայման և դրանք խորհրդի հաստատմանը ներկայացման, ինչպես նաև ռիսկերի կառավարման գործառույթների արդյունավետ կիրառման նպատակով բավարար մարդկային և տեխնիկական ռեսուրսների հատկացման համար:

. Գործադիր մակարդակում գործող Ռիսկերի կառավարման կոմիտեն ընդհանուր պատասխանատվություն է կրում ռիսկերի բնութագրերի վերանայման, Խմբի ռազմավարությանը և Ռիսկերի կառավարման շրջանակին համապատասխանության ստուգման, ռիսկի ախորժակի ցուցանիշների, ահազանգերի և պատասխանատու ստորաբաժանումների համապատասխան հաշվետվությունների վերանայման, ինչպես նաև ստորաբաժանումների միջև համակարգման համար, և ըստ անհրաժեշտության ապահովում է ժամանակին իրազեկումը Բանկի գործադիր տնօրենին կամ խորհրդին:

. Ռիսկերի կառավարման վարչությունը հիմնականում պատասխանատու է իր իրավասության շրջանակներում ռիսկերի բացահայտման, չափման, մոնիթորինգի և կառավարման համար, որից հետո յուրաքանչյուր քայլին հաջորդում է համապարփակ հաշվետվությունների ներկայացումը՝ անկախ վերահսկողության գործընթաց ապահովելու նպատակով: Ռիսկերի կառավարման վարչությունը օգնում է ձևավորել ռիսկի բարձր մշակույթ Խմբի բոլոր մակարդակներում, ապահովում է ռիսկերի վերաբերյալ իրազեկվածությունը և հաշվետվողականությունը:

. Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինը պատասխանատու է Խմբի ակտիվների և պասիվների և ընդհանուր ֆինանսական կառուցվածքի կառավարման համար: Այն նաև գլխավորապես պատասխանատու է Բանկի ֆինանսավորման, իրացվելիության և տոկոսադրույքի ռիսկերի համար:

. Խմբի կողմից իրականացվող ռիսկերի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Խմբի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի վարչությունը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Աուդիտի կոմիտեին և Խորհրդին:

Դուստր կազմակերպությունում գործում է Բանկի ռիսկերի կառավարման կառուցվածքին համանման կառուցված, որը համահունչ է իր կոնկրետ գործառույթներին և կազմակերպչական կառուցվածքին: Թեև նրա դերերն ու պարտականությունները կարող են տարբեր լինել՝ ելնելով իր շրջանակից և գործողություններից, այն սովորաբար առաջնորդվում է որոշումների կայացման, ռիսկերի կառավարման և գործառնական վերահսկողության այնպիսի, որոնք համանման են Բանկի սկզբունքներին:

Խումբը ենթարկվում է ռիսկի մի քանի տեսակների, որոնց ամենատարածված տեսակները ներկայացված են ստորև:

Վարկային ռիսկ.

Վարկային ռիսկը առաջանում է այն ժամանակ, երբ մի կողմը չի կատարում մյուս կողմի նկատմամբ ունեցած ֆինանսական պարտավորությունները: Վարկային ռիսկը կարող է դրսևորվել հետևյալ ձևերով.

- Պարտապանը չի վճարում վարկի տոկոսները կամ մայր գումարը (սնանկության ռիսկ կամ պարտազանցման ռիսկ)
- Պարտապանի կամ կոնտրագենտի վարկանիշը իջեցվում է (վարկանիշի նվազման ռիսկ)՝ ինչը վկայում է ռիսկի աճի մասին, որը կարող է անմիջապես հանգեցնել վարկին հարակից ապահովության միջոցի արժեքի կորստի. և

.

- Շուկայական առևտրի դեպքում կոնտրագենտը չի կատարում իր պարտավորությունները (կոնտրագենտի ռիսկ), ներառյալ մարումը:

Խումբը կառավարում և վերահսկում է վարկային ռիսկը՝ սահմանելով ռիսկի ախորժակը, հանդուրժողականությունը և կարողությունների սահմանաչափերը: Իր ռիսկի ախորժակի մասին հաշվետվությունում Խումբը սահմանում է վարկային ռիսկի համապատասխան սահմանաչափեր՝ համակենտրոնացման ռիսկը կառավարելու և վարկային պորտֆելի օպտիմալ դիվերսիֆիկացման մակարդակ ապահովելու համար:

Խումբը հաստատել է վարկային որակի ստուգման գործընթաց՝ ապահովելու գործընկերների վարկունակության հնարավոր փոփոխությունների վաղ բացահայտումը, ներառյալ գրավների պարբերաբար վերանայումը: Վարկերի որակի ստուգման գործընթացը Խմբին թույլ է տալիս գնահատել հնարավոր վնասը այն ռիսկերի հետևանքով, որոնց նկատմամբ այն զգայուն է, և ձեռնարկել ուղղիչ գործողություններ:

Խումբը ներդրել է վարկային ռիսկերի կառավարման համապարփակ համակարգ, որը բաժանված է երկու լրացուցիչ ոլորտների.
- Վարկային ռիսկերի կառավարման համակարգ անհատական մակարդակում
- Վարկային ռիսկերի կառավարման համակարգ՝ պորտֆելի մակարդակում

Անհատական մակարդակում վարկային ռիսկի կառավարման համակարգը ներառում է հաճախորդի վարկունակության գնահատման համակարգեր, կորպորատիվ հաճախորդների վարկանիշային համակարգեր, ինչպես նաև կիրառական և վարքագծային միավորների մոդելների հիման վրա ստեղծված ֆինանսական և տնտեսական վերլուծական ավտոմատացված համակարգեր, որոնք ներդրվել են Խմբի համար:

Վարկային պորտֆելի մակարդակում ռիսկերի կառավարման համակարգը ներառում է ինչպես ակնկալվող, այնպես էլ անսպասելի կորուստների գնահատում: Վերջինիս հիման վրա Կազմակերպությունը հաշվարկում է իր տնտեսական կապիտալը վարկային ռիսկի համար: ՖՀՄՍ 9-ի տեսանկյունից Կազմակերպությունը կիրառում է վարկային պորտֆելի սեգմենտավորում և մշակում մոդելներ յուրաքանչյուր հատվածի համար PD, LGD և EAD գնահատելու համար:

Ածանցյալ ֆինանսական գործիքներից ծագող վարկային ռիսկը ցանկացած պահի սահմանափակվում է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված դրական իրական արժեքով:

Խումբը իր հաճախորդներին տրամադրում է բանկային երաշխիքների և ակրեդիտիվների ստացման հնարավորություն, որոնց գծով Խմբի մոտ կարող է անհրաժեշտություն ծագել հաճախորդների անունից կատարելու վճարումներ: Հաճախորդները վճարումները կատարում են պայմանագրերում ամրագրված պայմանների համաձայն: Խումբը կրում է ռիսկեր, որոնք համարժեք են վարկային ռիսկերին, և նվազեցվում են նույն ընթացակարգերի և ռիսկի վերահսկման քաղաքականության վարման շնորհիվ:

. Ռիսկի առավելագույն չափը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության տարրերի վրա, ներառյալ ածանցյալ գործիքները, զտման և գրավի պայմանագրերի միջոցներով ռիսկը մեղմացնելու ազդեցությունից առաջ, ներկայացված է հաշվեկշռային արժեքով:

Իրական արժեքով ներկայացված ֆինանսական գործիքների դեպքում, հաշվեկշռային արժեքը արտահայտում է ընթացիկ վարկային ռիսկը, բայց ոչ ռիսկի առավելագույն չափը, որը կարող է առաջանալ արժեքի փոփոխությունից:

Ֆինանսական գործիքների յուրաքանչյուր մակարդակի վարկային ռիսկի առավելագույն չափի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է առանձին ծանոթագրություններում: Ապահովման միջոցների և ռիսկի նվազեցման այլ մեթոդների ազդեցությունը ներկայացված է Ծանոթագրություններ 12-ում և 13-ում:

.

. Խումբը հաշվարկում է ակնկալվող վարկային կորուստը (ԱՎԿ) հավանականությամբ կշռված երեք սցենարների միջոցով՝ գնահատելու դրամական միջոցների ակնկալվող պակասը՝ զեղչված սկզբնավորման պահին արդյունավետ տոկոսադրույքով (EIR): Դրամական միջոցների պակասուրդը սահմանվում է որպես կազմակերպությանը վճարման ենթակա պայմանագրային դրամական միջոցների հոսքերի և ակնկալվող դրամական միջոցների հոսքերի միջև տարբերությունը, որը կազմակերպությունն ակնկալում է ստանալ՝ հաշվի առնելով հնարավոր վարկային ռիսկը: ԱՎԿ-ի հաշվարկների մեխանիզմը մանրամասն ներկայացված է ստորև՝ առանցքային բաղադրիչներով, ներառյալ.

Պարտազանցման հավանականություն (PD)	Պարտազանցման տեղի ունենալու հավանականությունը (PD) ներկայացնում է սահմանված ժամանակային տիրույթում պարտազանցման հավանականության գնահատումը: Պարտազանցում կարող է առաջանալ գնահատվող ժամանակահատվածում ցանկացած պահի, եթե գործիքը շարունակում է մնալ պորտֆելում և նախկինում չի ապաճանաչվել:
Պարտազանցման դեպքում գործիքի արժեքը (EAD)	Պարտազանցման ժամանակ գործիքի արժեքը (EAD) պարտազանցման ապագա ամսաթվի դրությամբ գործիքի գնահատված արժեքն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո ակնկալվող փոփոխությունների ազդեցությունը, Սա ներառում է մայր գումարի և տոկոսների պլանավորված կամ չպլանավորված մարումները, պարտավորված միջոցների ակնկալվող գումարները և բաց թողնված վճարումների արդյունքում կուտակված տոկոսները:
Պարտազանցման դեպքում կորստի չափը (LGD)	Պարտազանցման դեպքում կորստի չափը (LGD) դրամական միջոցների կորստի գնահատումն է, որը կառաջանա, եթե որոշակի պահի տեղի ունենա պարտազանցում: Դա պայմանագրային դրամական միջոցների հոսքերի և այն դրամական միջոցների հոսքերի տարբերությունն է, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավների իրացումից միջոցները: Սովորաբար, LGD-ն արտահայտվում է որպես պարտազանցման դեպքում գործիքի արժեքի (EAD) նկատմամբ հաշվարկված տոկոսային մեծություն:

ԱՎԿ պահուստը հիմնվում է վարկային կորուստների վրա, որոնք ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի կյանքի ընթացքում (ակտիվի կյանքի ընթացքում ակնկալվող վարկային կորուստ կամ LT ECL): Այն դեպքում, եթե առկա չէ վարկային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչումից հետո, ապա պահուստը հիմնվում է 12 ամսվա ընթացքում ակնկալվող վարկային կորուստի վրա: 12ամԱՎԿ-ը ԱԿԱՎԿ-ի այն մասն է, որը ներկայացնում է ֆինանսական գործիքի գծով պարտավորությունների չկատարման դեպքերի արդյունք հանդիսացող ԱՎԿ-ները, որոնք հնարավոր են հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում: Ինչպես ԱԿԱՎԿ-ն, այնպես էլ 12ամԱՎԿ-ն հաշվարկվում են անհատական կամ խմբային հիմունքով՝ ելնելով ֆինանսական գործիքների համապատասխան պորտֆելի բնույթից:

Խումբը սահմանել է քաղաքականություն՝ գնահատելու յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի վարկային ռիսկի զգալի աճի հայտանիշները՝ սկզբնական ճանաչման պահից ի վեր, հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացորդային ժամկետի ընթացքում տեղի ունեցող պարտազանցման ռիսկի փոփոխությունը: Վերոնշյալ գործընթացի հիման վրա, Խումբը խմբավորում է իր վարկերը՝ ըստ փուլերի, ինչպես նկարագրված է ստորև.

.

Փուլ 1.	Վարկերի սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը պահուստ է ճանաչում 12 ամսվա ԱՎԿ-ի հիման վրա: 1-ին փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից:
Փուլ 2.	Երբ գործիքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, Խումբը պահուստը ճանաչում է վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների (ԱԿԱՎԿ) համար: 2-րդ փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից:
Փուլ 3.	Արժեզրկված համարվող վարկեր:
Ձեռք բերված կամ ստեղծված՝ արժեզրկված (POCI)	Ձեռք բերված կամ ստեղծված՝ արժեզրկված (POCI) ակտիվները ֆինանսական ակտիվներ են, որոնք արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ: Տվյալ ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է վարկային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա: ԱՎԿ-ն միայն ճանաչվում կամ ապաճանաչվում է այնքանով, որքանով որ հետագայում փոխվում է ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների գնահատականը:

. Խումբը ֆինանսական գործիքը համարում է պարտազանցված և, հետևաբար, Փուլ 3 (վարկային տեսանկյունից արժեզրկված) ԱՎԿ-ի հաշվարկների համար բոլոր այն դեպքերում, երբ.

- վարկառուի պայմանագրային վճարումների գծով ավելի քան 90 օր կետանցը.
- տվյալ վարկառուի բոլոր պարտավորությունները, եթե դրանցից առնվազն մեկը Խմբում և/կամ այլ ֆինանսական կազմակերպություններում 90 օրից ավելի ժամկետանց է (ներառյալ ֆիզիկական անձի և անհատ ձեռնարկատիրոջ պատկանելությունը).
- տվյալ վարկառուի բոլոր պարտավորությունները, եթե փոխկապակցված անձանց պարտավորություններից առնվազն մեկը Խմբում 90 օրից ավելի ժամկետանց է.
- վարկառուի անբարենպաստ ֆինանսական վիճակի պատճառով վերաֆինանսավորված կամ վերանայված ակտիվներ, որոնք Խմբում ավելի քան 30 օր ժամկետանց են:

Ֆինանսական գործիքը նաև համարվում է արժեզրկված՝ հիմք ընդունելով սահմանված այլ քանակական և որակական գործոններ, ինչպիսիք են.

- փոխկապակցված անձանց տրամադրված վարկերի որակը.
- վերանայման կարգավիճակը.
- ֆինանսական մոնիտորինգի արդյունքները, որոնք հաստատվում են ղեկավարության կողմից:
- վարկի ապահովման նվազեցում՝ գրավատուի կողմից գրավի լրիվ կամ մասնակի կորստի, ֆիզիկական վնասի կամ ապօրինի վաճառքի կամ շուկայական արժեքի նվազման պատճառով վարկի ապահովության գործակցի նվազման հետևանքով.
- վարկերի կենտրոնացում այլ անձանց, ներառյալ ընտանիքի անդամների մոտ, վարկառուի կողմից վարկերի մարումից հրաժարում և 30-ից ավելի ժամկետանց օրերի առկայություն. Այս չափանիշը վերագրվում է բոլոր այն վարկերին, որոնց նկատմամբ կիրառվում է մոնիտորինգի եզրակացությունը:
- ֆորս-մաժորային հանգամանքները՝ վարկառուի կամ միակ սեփականատիրոջ մահը, հաշմանդամությունը, ծանր հիվանդությունները: Այս չափանիշը կիրառվում է հաճախորդի բոլոր վարկերի նկատմամբ, և
- բնական աղետներ կամ համաճարակներ. Այս չափանիշը վերագրվում է բոլոր այն վարկերին, որոնց նկատմամբ կիրառվում է մոնիտորինգի եզրակացությունը:

Հաճախորդի անվճարունակության որակական գնահատման շրջանակներում Խումբը նաև դիտարկում է մի շարք դեպքեր, որոնք կարող են վկայել վճարելու անհավանականության մասին՝ հիմնվելով ղեկավարության դատողության վրա: Երբ նման իրադարձություններ են տեղի ունենում, Խումբը դիտարկում է, թե արդյոք այդ իրադարձությունը պետք է հանգեցնի նրան, որ հաճախորդը պետք է դիտարկվի որպես չկատարված և հետևաբար գնահատվի որպես Փուլ 3 ԱՎԿ-ի հաշվարկների համար, թե արդյոք 2-րդ փուլը տեղին է:

.

Ընկերության քաղաքականությունն է ֆինանսական գործիքը դիտարկել որպես «վերականգնված» և, հետևաբար, վերադասակարգմամբ դուրս բերել 3-րդ փուլից, երբ պարտազանցման չափանիշներից ոչ մեկը գոյություն չունի առնվազն վեց ամիս անընդմեջ և կետանցի օրերի թիվը չի գերազանցել յոթ օրացուցային օրը:: Ակտիվի վերականգնումից հետո այն 2-րդ կամ 1-ին փուլ դասակարգելու որոշումը կախված է վարկառուի կողմից պարտքի սպասարկման օրինաչափությունից և գնահատման ամսաթվի դրությամբ այլ ոչ առաջնային ՎՈՒՆԱ (SICR) չափանիշների առկայությունից:

. Հաճախորդներին տրված 1-ին և 2-րդ փուլերի վարկերի, ինչպես նաև 3-րդ փուլի վարկերի համար, որոնք առանձին-առանձին ենթակա չեն արժեզրկման, Խումբը հաշվարկում է ԱՎԿ-ը պորտֆելի մակարդակով: Բանկի կողմից առանձնացված են հետևյալ պորտֆելները, որոնք որոշակի ժամանակային կետում պարտազանցման տեղի ունենալու հավանականության (PD PIT) մատրիցները գնահատելու նպատակով հետագայում բաժանվում են ավելի փոքր թիրախային խմբերի:

- Կորպորատիվ վարկեր
- Սպառողական վարկեր
- Գյուղատնտեսական վարկեր
- Հիփոթեքային վարկեր

Լիզինգի համար վարձակալությունը համարվում է հիմնական թիրախային խումբ: Վարկային քարտերի հետ կապված ռիսկերը ներառված են սպառողական վարկերի խմբում:

D

. Խմբի գանձապետական և միջբանկային հարաբերությունները և գործընկերները իրենցից ներկայացնում են ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպություններ, բանկեր, բրոքերներ-դիլերներ, արտարժույթի առքուվաճառք իրականացնող ընկերություններ և քլիրինգային ընկերություններ: Այս հարաբերությունների առումով Խմբի ֆինանսական ռիսկերի կառավարման բաժինը գնահատում է հրապարակայնորեն հասանելի տեղեկատվությունը, մասնավորապես ֆինանսական տեղեկատվությունը և այլ արտաքին տվյալներ, օր՝ արտաքին վարկանիշները:

Հաճախորդներին տրված վարկերի գծով դեֆոլտի հավանականությունը հիմնվում է անցյալ ժամանակաշրջանների տեղեկությունների վրա և հաշվարկվում է հավանականության փոփոխության մատրիցաներով՝ հիմք ընդունելով վարկային պորտֆելների ժամկետայնության վերաբերյալ առկա տեղեկությունները: Հավանականությունները հաշվարկվում են որպես 12 ամիս ժամանակաշրջանի ընթացքում պարտազանցման կատեգորիաների միջև փոխանցվող վարկերի մասնաբաժինը ընդհանուր վարկերի նկատմամբ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ: Պարտազանցման տեղի ունենալու հավանականությունը հաշվարկելիս Խումբը դիտարկում է կանխատեսվող մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք ունեն էական ազդեցություն պարտազանցման տեղի ունենալու հավանականության վրա՝ հաշվարկված ըստ ժամանակային շարքերի ռեգրեսիայի վերլուծության: Պարտազանցման հավանականության կանխատեսումները գնահատվում են՝ հիմնվելով պաշտոնապես հասանելի հեռանկարային մակրոտնտեսական պարամետրերի վրա: Ժամանակային շարքի ռեգրեսիոն վերլուծությունը գնահատվում է հետևյալ ոլորտներով՝ գյուղատնտեսություն, բիզնես, սպառողական և հիփոթեքային վարկեր, որոնց արդյունքն այնուհետև աստիճանական իջեցվում է մինչև վարկերի կանխորոշված ենթախմբեր՝ հասնելու դեֆոլտի հավանականության PIT անցումային մատրիցներին:

Հիմք ընդունելով ընտրված մակրոտնտեսական պարամետրերի պատմական կանխատեսումների գնահատված շեղումը փաստացի միտումներից, հեռանկարային մակրոտնտեսական զարգացման երեք սցենարներ ուղղված են երեք PD PIT անցումային մատրիցների վերջնական արդյունքին, որոնք կշռված են 15%, 70% հավանականություններով՝. լավատեսական, բազային և հոռետեսական սցենարներին համապատասխան: Նույն կշիռները կիրառվել են նաև 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված հաշվետու տարում:

D . Պարտազանցման ժամանակ գործիքի արժեքը իրենից ներկայացնում է արժեզրկման գնահատման ենթակա ֆինանսական գործիքների

համախառն հաշվեկշռային արժեքը, որը հաշվի է առնում ինչպես հաճախորդի ունակությունը մեծացնելու իր վարկի գումարը առաջիկա պարտազանցման դեպքում, այնպես էլ հնարավոր վաղաժամկետ մարումները: Փուլ 1-ում գտնվող ակտիվների համար Խումբը գնահատում է 12 ամսվա ընթացքում հնարավոր պարտազանցման հավանականությունը: Փուլ 2-ին, Փուլ 3-ին և POCI դասին պատկանող ֆինանսական ակտիվների համար պարտազանցման ժամանակ գործիքի արժեքը դիտարկվում է գործիքների ողջ կյանքի տևողության ընթացքում տեղի ունեցող դեպքերի համար:

D. Խումբը պարտազանցման ժամանակ կորստի չափը հաշվարկելու նպատակով օգտագործում է պարտազանցման ամսաթվից հետո վերականգնումների վերաբերյալ պատմական տվյալները բոլոր պարտազանցման ենթարկված վարկերի կտրվածքով: Դեֆոլտի ժամանակ կորստի չափը հաշվարկելու համար PD PIT-ի գնահատման համար օգտագործվող նախնական խմբավորումը հետագայում ենթարկվում է ենթախմբավորման՝ ըստ գրավի տեսակի: Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը հավաքագրվում է պարտազանցման ամսաթվից հետո՝ ըստ LGD խմբերի: Ժամանակային կտրվածքով վերջին ժամկետանց վարկերի համար հնարավոր վերադարձի հավանականությունը գնահատվում է նախկինում ժամկետանց վարկերի պոպուլյացիայի զարգացման գործակցով: Տվյալ շրջանակներում հաշվի են առնվում հավաքագրման քաղաքականության ցանկացած փոփոխություն: Հավաքագրվում է պարտազանցման ամսաթվից հետո դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը և զեղչվում պարտազանցման ամսաթվի դրությամբ՝ միջին արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի օգտագործմամբ, յուրաքանչյուր LGD խմբի գծով: Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է բոլոր տեսակի դրամական ներհոսքերը ժամկետանց վարկերի գծով (վարկերի մարումից ստացված միջոցներ, երաշխավորից ստացված միջոցներ, գրավի առարկայի վաճառքից ստացված միջոցներ և այլն):

Խումբը սահմանել է քաղաքականություն՝ գնահատելու յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի վարկային ռիսկի զգալի աճի հայտանիշները՝ սկզբնական ճանաչման պահից ի վեր հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացորդային ժամկետի ընթացքում տեղի ունեցող պարտազանցման ռիսկի փոփոխությունը: .: Խմբի կողմից օգտագործվող օբյեկտիվ չափանիշը վարկերի ժամկետանց օրերի մասին տեղեկատվությունն է: Խումբը եզրակացնում է, որ կա ակտիվների վարկային ռիսկի զգալի աճ, երբ փոխառուի այդ ակտիվների հետ կապված վճարումները ժամկետանց են ավելի քան 30 օրով:

Խմբի գործադիր մարմինը նաև հաշվի է առնում հետևյալ գործոնները՝ վարկային ռիսկի աճը որոշելու համար.

- Հայաստանի այլ ֆինանսական հաստատություններում վարկառուի ժամկետանց օրերը.
- Նախասահմանված փոխկապակցված կողմերի ժամկետանց օրերը.
- Վարկառուի ֆինանսական պայմաններում զգալի դժվարությունները.
- Վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով առաջացած վարկի պայմանների վերանայումը.
- Վարկառուի գործունեության ֆինանսական մոնիտորինգի արդյունքը:

Կանխատեսումային տեղեկատվություն և բազմակի տնտեսական սցենարներ

ԱՎԿ մոդելների մշակման ընթացքում Խումբը հիմնվում է կանխատեսումային տեղեկատվության լայն շրջանակի վրա, մասնավորապես այնպիսի տնտեսական ելակետային տվյալների, ինչպիսիք են՝

2025թ.

- Տնտեսական ակտիվության ինդեքս, %
- ՀՀ դրամ/ԱՄՆ դոլարի փոխարժեք, միջին ամսական
- ՀՀ դրամ-ԱՄՆ դոլարի փոխարժեք, տարեվերջին
- Արդյունաբերական արտադրանքի ծավալ, տարեկան աճ %
- Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալ, տարեկան աճ %
- Ծառայությունների ծավալ (առանց առևտրի), տարեկան աճ %
- ՀՀ պետական բյուջե, դեֆիցիտ/ավելցուկ:

2024թ.

- Համախառն ներքին արդյունքի աճ, %
- ՀՀ դրամ/ԱՄՆ դոլարի փոխարժեք, միջին ամսական
- ՀՀ դրամ-ԱՄՆ դոլարի փոխարժեք, տարեվերջին
- Արդյունաբերական արտադրանքի ծավալ, տարեկան աճ %
- Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալ, տարեկան աճ %
- Ծառայությունների ծավալ (առանց առևտրի), տարեկան աճ %
- ՀՀ պետական բյուջե, դեֆիցիտ/ավելցուկ:

Խումբը կանխատեսումային տեղեկատվությունը ստանում է երրորդ կողմի աղբյուրներից (Տնտեսական հետախուզության գրասենյակ, ՀՀ ԿԲ, ինչպես նաև ՀՀ Ֆինանսների նախարարություն): 15%, 70% և 15% հավանականությունները վերագրվում են համապատասխան սցենարներից յուրաքանչյուրին՝ լավատեսական, բազային և հոռետեսական սցենարներին:

Աղյուսակները ցույց են տալիս 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՎԿ հաշվարկների համար օգտագործվող տնտեսական սցենարներից յուրաքանչյուրում օգտագործված հիմնական կանխատեսումային տնտեսական փոփոխականների/ենթադրությունների արժեքները: Մակրո-փոփոխականները ընտրվում են հետահայաց ընտրության մեթոդով, և յուրաքանչյուր պարամետր ընտրվում է՝ ելնելով դրա վիճակագրական նշանակությունից:

Աղյուսակները ցույց են տալիս 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՎԿ հաշվարկների համար օգտագործվող տնտեսական սցենարներից յուրաքանչյուրում օգտագործված հիմնական կանխատեսումային տնտեսական փոփոխականների/ենթադրությունների արժեքները: Սա ներառում է յուրաքանչյուր սցենարի ներքո ստուգված բոլոր հնարավոր փոփոխականները, որոնք ներառում են վերոնշյալ ԱՎԿ վերջնական մոդելներում օգտագործված փոփոխականների վերանայված ենթաբազմությունը:

Հիմնական ցուցանիշներ	ԱՎԿ սցենար	Վերագրված հավանակա-նություն, %	2026թ.	2027թ.	2028թ.
ՀՀ դրամ/ԱՄՆ դոլարի փոխարժեք, միջին ամսական	Լավատեսական	15%	360.59	362.72	367.72
	Ելակետային	70%	407.86	410	415
	Հոռետեսական	15%	455.13	457.27	462.27
Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալ, տարեկան աճ %	Լավատեսական	15%	7.32%	7.42%	7.42%
	Ելակետային	70%	0.20%	0.30%	0.30%
	Հոռետեսական	15%	-6.92%	-6.82%	-6.82%
ՀՀ պետական բյուջե, դեֆիցիտ/ավելցուկ.	Լավատեսական	15%	(428,457)	(340,157)	(283,357)
	Ելակետային	70%	(535,400)	(447,100)	(391,300)
	Հոռետեսական	15%	(642,342)	(554,042)	(498,242)
Ծառայությունների ծավալ (առանց առևտրի), տարեկան աճ %	Լավատեսական	15%	14.80%	14.70%	14.70%
	Ելակետային	70%	5.60%	5.50%	5.50%
	Հոռետեսական	15%	-3.60%	-3.70%	-3.70%
Արդյունաբերական արտադրանքի ծավալ, տարեկան աճ %	Լավատեսական	15%	7.96%	8.06%	8.06%
	Ելակետային	70%	3.70%	3.80%	3.80%
	Հոռետեսական	15%	-0.56%	-0.46%	-0.46%
ՀՀ դրամ-ԱՄՆ դոլարի փոխարժեք, տարեվերջին	Լավատեսական	15%	359.72	369.72	369.72
	Ելակետային	70%	410	420	420
	Հոռետեսական	15%	460.27	470.27	470.27
Տնտեսական ակտիվության ինդեքս, %	Լավատեսական	15%	10.67%	10.31%	9.94%
	Ելակետային	70%	5.71%	5.35%	4.98%
	Հոռետեսական	15%	0.75%	0.39%	0.02%

Աղյուսակները ցույց են տալիս 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՎԿ հաշվարկների համար օգտագործվող տնտեսական սցենարներից յուրաքանչյուրում օգտագործված հիմնական կանխատեսումային տնտեսական փոփոխականների/ենթադրությունների արժեքները:

Հիմնական ցուցանիշներ	ԱՎԿ սցենար	Վերագրված հավանակա-նություն, %	2025թ.	2026թ.	2027թ.
ՀՀ դրամ/ԱՄՆ դոլարի փոխարժեք, միջին ամսական	Լավատեսական	15%	349.83	382.14	372.44
	Ելակետային	70%	377.04	437.84	456.93
	Հոռետեսական	15%	404.26	463.80	487.15
Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալ, տարեկան աճ %	Լավատեսական	15%	6.00%	6.60%	7.30%
	Ելակետային	70%	0.50%	0.20%	0.30%
	Հոռետեսական	15%	-5.00%	-6.20%	-6.70%
ՀՀ պետական բյուջե, դեֆիցիտ/ավելցուկ.	Լավատեսական	15%	(380,460)	(312,542)	(227,633)
	Ելակետային	70%	(615,800)	(553,900)	(472,700)
	Հոռետեսական	15%	(851,140)	(795,258)	(717,767)
Ծառայությունների ծավալ (առանց առևտրի), տարեկան աճ %	Լավատեսական	15%	10.87%	11.87%	12.22%
	Ելակետային	70%	5.30%	5.60%	5.50%
	Հոռետեսական	15%	-0.27%	-0.67%	-1.22%
Արդյունաբերական արտադրանքի ծավալ, տարեկան աճ %	Լավատեսական	15%	6.67%	7.03%	7.59%
	Ելակետային	70%	4.00%	3.70%	3.80%
	Հոռետեսական	15%	1.33%	0.37%	0.01%
ՀՀ դրամ-ԱՄՆ դոլարի փոխարժեք, տարեվերջին	Լավատեսական	15%	349.88	382.20	372.49
	Ելակետային	70%	377.1	437.9	457
	Հոռետեսական	15%	404.32	463.87	487.22
Համախառն ներքին արդյունքի աճ, %	Լավատեսական	15%	10.43%	11.07%	11.70%
	Ելակետային	70%	4.90%	4.60%	4.60%
	Հոռետեսական	15%	-0.63%	-1.87%	-2.50%

Մակրոտնտեսական ելակետային ենթադրություններին վերագրված կշռի փոփոխությունը 10%-ով դեպի անմիջական հոռետեսական ուղղությամբ՝ կհանգեցնի 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՎԿ-ի աճի 51,563 հազ. ՀՀ դրամով (2024թ.՝ 18,238 հազ. ՀՀ դրամով): Լավատեսական ենթադրությունների ուղղությամբ համապատասխան փոփոխությունը կհանգեցնի ԱՎԿ-ի նվազմանը 42,614 հազ. ՀՀ դրամով 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (2024թ.՝ 15,019 հազ. ՀՀ դրամով):

PD-ի գնահատումների 10% աճը կհանգեցնի 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող վարկային կորուստների ընդհանուր պահուստի աճի՝ 254,653 հազ. ՀՀ դրամի չափով (2024թ.՝ 176,960 հազ. ՀՀ դրամ): PD-ի գնահատումների 10% նվազումը կհանգեցնի 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող վարկային կորուստների ընդհանուր պահուստի նվազման՝ 254,653 հազ. ՀՀ դրամի չափով (2024թ.՝ 176,960 հազ. ՀՀ դրամ): LGD-ի գնահատումների 10% աճը կհանգեցնի 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող վարկային կորուստների ընդհանուր պահուստի աճի՝ 775,729 հազ. ՀՀ դրամի չափով (2024թ.՝ 495,152 հազ. ՀՀ դրամ): LGD-ի գնահատումների 10% նվազումը կհանգեցնի 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող վարկային կորուստների ընդհանուր պահուստի նվազման՝ 776,766 հազ. ՀՀ դրամի չափով (2024թ.՝ 496,544 հազ. ՀՀ դրամ):

Վարկի որակը ֆինանսական ակտիվների դասի համար. Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է տեղեկատվություն իրավաբանական և ֆիզիկական անձանց զուտ վարկերի և ֆինանսական վարձակալությունից դեբիտորական պարտքերի վերաբերյալ 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

2025թ.	Ծան.		Բարձր կարգ	Ստանդարտ կարգ	Ենթա-ստանդարտ կարգ	Արժեզրկված	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով	**12**						
Կորպորատիվ վարկեր		Փուլ 1	378,511	256,078,131	-	-	**256,456,642**
		Փուլ 2	-	-	2,987,518	-	**2,987,518**
		Փուլ 3	-	-	-	4,528,859	**4,528,859**
		POCI	-	-	-	-	**-**
Գյուղատնտեսական վարկեր		Փուլ 1	210,309	87,814,481	-	-	**88,024,790**
		Փուլ 2	-	-	774,427	-	**774,427**
		Փուլ 3	-	-	-	1,471,013	**1,471,013**
Սպառողական վարկեր		Փուլ 1	5,175,910	156,682,021	-	-	**161,857,931**
		Փուլ 2	13,353	-	1,430,922	-	**1,444,275**
		Փուլ 3	52,608	-	-	2,025,582	**2,078,190**
Վարկային քարտեր		Փուլ 1	1,158,382	13,913,187	-	-	**15,071,569**
		Փուլ 2	6,268	-	168,250	-	**174,518**
		Փուլ 3	13,132	-	-	520,334	**533,466**
Հիփոթեքային վարկեր		Փուլ 1	-	95,819,532	-	-	**95,819,532**
		Փուլ 2	-	-	992,587	-	**992,587**
		Փուլ 3	-	-	-	1,181,413	**1,181,413**
		POCI	-	-	-	1,155	**1,155**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	13	Փուլ 1	-	101,732,074	-	-	**101,732,074**
		Փուլ 2	-	-	765,347	-	**765,347**
		Փուլ 3	-	-	-	644,406	**644,406**
Ընդամենը			**7,008,473**	**712,039,426**	**7,119,051**	**10,372,762**	**736,539,712**

2024թ.	Ծան.		Բարձր կարգ	Ստանդարտ կարգ	Ենթա-ստանդարտ կարգ	Արժեզրկված	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով	**12**						
Կորպորատիվ վարկեր		Փուլ 1	153,530	216,651,673	-	-	**216,805,203**
		Փուլ 2	-	-	3,113,823	-	**3,113,823**
		Փուլ 3	2,677	-	-	3,206,559	**3,209,236**
		POCI	-	-	-	-	**-**
Գյուղատնտեսական վարկեր		Փուլ 1	366,696	82,876,374	-	-	**83,243,070**
		Փուլ 2	-	-	834,303	-	**834,303**
		Փուլ 3	-	-	-	1,431,376	**1,431,376**
Սպառողական վարկեր		Փուլ 1	4,216,812	125,403,005	-	-	**129,619,817**
		Փուլ 2	5,172	-	1,190,617	-	**1,195,789**
		Փուլ 3	33,632	-	-	2,096,008	**2,129,640**
Վարկային քարտեր		Փուլ 1	1,031,049	12,353,401	-	-	**13,384,450**
		Փուլ 2	4,079	-	133,702	-	**137,781**
		Փուլ 3	9,965	-	-	342,834	**352,799**
Հիփոթեքային վարկեր		Փուլ 1	-	79,069,484	-	-	**79,069,484**
		Փուլ 2	-	-	726,827	-	**726,827**
		Փուլ 3	-	-	-	937,653	**937,653**
		POCI	-	-	-	18,781	**18,781**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	13	Փուլ 1	-	92,015,673	-	-	**92,015,673**
		Փուլ 2	-	-	654,387	-	**654,387**
		Փուլ 3	-	-	-	435,761	**435,761**
Ընդամենը			**5,823,612**	**608,369,610**	**6,653,659**	**8,468,972**	**629,315,853**

Ստորև բերված աղյուսակները ներկայացնում են հաճախորդներին տրված վարկերի և ֆինանսական վարձակալության դեբիտորական պարտքերի միջին PD-ները՝ ըստ ելակետային սցենարի՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

2025թ.	**Կարգ**	**Միջին PD**
Կորպորատիվ վարկեր	Ստանդարտ	0.61%
	Ենթաստանդարտ	5.96%
	Արժեզրկված	100.00%
Գյուղատնտեսական վարկեր	Ստանդարտ	0.51%
	Ենթաստանդարտ	3.91%
	Արժեզրկված	100.00%
Սպառողական վարկեր	Ստանդարտ	2.03%
	Ենթաստանդարտ	31.37%
	Արժեզրկված	100.00%
Վարկային քարտեր	Ստանդարտ	1.44%
	Ենթաստանդարտ	14.75%
	Արժեզրկված	100.00%
Հիփոթեքային վարկեր	Ստանդարտ	0.19%
	Ենթաստանդարտ	8.77%
	Արժեզրկված	100.00%
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	Ստանդարտ	0.65%
	Ենթաստանդարտ	10.95%
	Արժեզրկված	100.00%

2024թ.	**Կարգ**	**Միջին PD**
Կորպորատիվ վարկեր	Ստանդարտ	0.78%
	Ենթաստանդարտ	7.27%
	Արժեզրկված	100.00%
Գյուղատնտեսական վարկեր	Ստանդարտ	0.78%
	Ենթաստանդարտ	4.13%
	Արժեզրկված	100.00%
Սպառողական վարկեր	Ստանդարտ	1.59%
	Ենթաստանդարտ	21.33%
	Արժեզրկված	100.00%
Վարկային քարտեր	Ստանդարտ	1.17%
	Ենթաստանդարտ	16.69%
	Արժեզրկված	100.00%
Հիփոթեքային վարկեր	Ստանդարտ	0.35%
	Ենթաստանդարտ	9.82%
	Արժեզրկված	100.00%
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	Ստանդարտ	0.88%
	Ենթաստանդարտ	11.72%
	Արժեզրկված	100.00%

* Բարձր կարգի վարկերը, որոնք ապահովված են դրամական միջոցների գրավով, չեն պարունակում պարտազանցման տեղի ունենալու հավանականություն (PD), քանի որ դրանց համար անհրաժեշտ չէ ակնկալվող վարկային կորստի (ԱՎԿ) հաշվարկ: Բարձր կարգի վարկերի ենթարկվածությունը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 7,008,473 հազ. ՀՀ դրամ (պայմանագրի գումարը՝ 11,760,689 հազ. ՀՀ դրամ, այդ վարկերի դրամական միջոցներով ապահովվածությունը կազմել է 12,865,325 հազ. ՀՀ դրամ):

Ստորև ներկայացված ֆինանսական ակտիվների վարկային որակը կառավարվում է Խմբի կողմից՝ հիմնվելով արտաքին վարկանիշների վրա: Չվարկանշված ազդեցությունները դասակարգվում են Ստանդարտ դասում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք արժեզրկված չեն:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

.	Ծան.		Բարձր կարգ	Ստանդարտ կարգ	Ենթա-ստանդարտ կարգ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (առանց կանխիկ միջոցների)	8	Փուլ 1	21,765,815	48,182,487	568,896	**70,517,198**
Պահանջներ բանկերի նկատմամբ	10	Փուլ 1	1,078,206	91,965,988	-	**93,044,194**
Ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթեր	11	Փուլ 1	-	66,111,276	-	**66,111,276**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	11	Փուլ 1	-	3,713,111	-	**3,713,111**
Ընդամենը			22,844,021	209,972,862	568,896	**233,385,779**

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

.	Ծան.		Բարձր կարգ	Ստանդարտ կարգ	Ենթա-ստանդարտ կարգ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (առանց կանխիկ միջոցների)	8	Փուլ 1	836,549	77,442,541	927,855	**79,206,945**
Պահանջներ բանկերի նկատմամբ	10	Փուլ 1	630,373	80,916,055	-	**81,546,428**
Ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթեր	11	Փուլ 1	-	45,608,635	-	**45,608,635**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	11	Փուլ 1	-	13,265,904	-	**13,265,904**
Ընդամենը			**1,466,922**	**217,233,135**	**927,855**	**219,627,912**

Ստորև ներկայացված է Խմբի դասակարգման համակարգի և գործընկերների արտաքին վարկանիշների համեմատությունը 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

2025թ.

Արտաքին միջազգային վարկանիշային գործակալության (Moody's) վարկանիշ	Ներքին վարկանիշի նկարագրությունը	Պարտազանցման հավանականություն (PD)
Aaa-ից A3	Բարձր կարգ	0-0.05%
Baa1-ից B3	Ստանդարտ	0.17% -3.10%
Caa1-ից Ca	Ենթաստանդարտ կարգ	8.96%
C	Արժեզրկված	100%

2024թ.

Արտաքին միջազգային վարկանիշային գործակալության (Moody's) վարկանիշ	Ներքին վարկանիշի նկարագրությունը	Պարտազանցման հավանականություն (PD)
Aaa-ից A3	Բարձր կարգ	0-0.05%
Baa1-ից B3	Ստանդարտ կարգ	0.17% -3.15%
Caa1-ից Ca	Ենթաստանդարտ կարգ	8.94%
C	Արժեզրկված	100%

.

Իրացվելիության ռիսկ և ֆինանսավորման կառավարում. Խումբը ենթարկվում է իրացվելիության ռիսկի՝ ինչպես ֆինանսավորման, այնպես էլ առևտրային իրացվելիության ռիսկի առումով: Ֆինանսավորման իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը կարող է չունենալ բավարար իրացվելի դրամական միջոցներ և ակտիվներ՝ իր պարտավորությունները կատարելու համար:

Առևտրային իրացվելիության ռիսկը ակտիվների արժեքի կորստի ռիսկն է, երբ շուկաները ժամանակավոր սեղմվում են, ինչը կարող է ստիպել Խմբին կիրառել անսովոր ցածր գին կամ զրկել Խմբին ցանկացած գնով ակտիվը դրամական միջոցների և ֆինանսավորման վերածելու հնարավորությունից:

Խմբի ներսում սթրեսային սցենարը, որը ընկած է մոդելի հիմքում և կարևոր է կառավարման նպատակների համար, հաշվի է առնում ինչպես Խմբին բնորոշ սթրեսային դեպքերը, այնպես էլ ավելի լայնածավալ շուկայական ճգնաժամերը:

Ֆինանսավորման իրացվելիության ռիսկը սահմանափակելու համար ղեկավարությունը դիվերսիֆիկացնում է ֆինանսավորման աղբյուրները, ի լրում իր հիմնական ավանդային բազայի: Այդ գործընթացը ներառում է ակնկալվող դրամական միջոցների գնահատում և առաջնակարգ ապահովման միջոցի առկայություն, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորման ստացման համար:

Առևտրային իրացվելիության ռիսկը սահմանափակելու համար Խումբը պահպանում է բարձր իրացվելի և տարաբնույթ ակտիվների պորտֆել (բարձր իրացվելի ակտիվներ), որոնք կարող են հեշտությամբ իրացվել դրամական միջոցների հոսքերի չնախատեսված ընդհատման դեպքում:

Խումբը ունի նաև վարկային գծեր, ինչից այն կարող է օգտվել իրացվելիության կարիքների դեպքում: Բացի այդ, Խումբը ՀՀ ԿԲ-ում պահում է դրամային ավանդ (պարտադիր պահուստ), որի գումարը կախված է ներգրավված միջոցների ծավալից:

Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է Խմբի կողմից՝ հիմնվելով Կենտրոնական բանկի կողմից սահմանված իրացվելիության որոշակի գործակիցների վրա: Ի հավելումն նորմատիվային իրացվելիության ցուցանիշի, Խումբը իր «Ռիսկի ախորժակի մասին» հաշվետվությունում սահմանում է իրացվելիության ռիսկի ախորժակը, հանդուրժողականությունը, կարողությունների մակարդակները և իրացվելիության ռիսկի այլ համապատասխան սահմանաչափեր: Իրացվելիության ընդունելի մակարդակը պահպանելու համար Խումբը պահում է բարձր իրացվելի ակտիվներ, ներառյալ դրամական միջոցներ, նոստրո հաշիվներ, Հայաստանի կառավարության կողմից թողարկված պարտքային արժեթղթեր և կորպորատիվ պարտքային արժեթղթեր, որոնց համար առկա է ակտիվ և իրացվելի շուկա, որոնք գրավադրված չեն կամ որոնց օգտագործումը որևէ կերպ սահմանափակված չէ: Ցպահանջ վճարման ենթակա պարտավորությունները ներառում են հաճախորդների ընթացիկ հաշիվները և ցպահանջ ավանդները, ինչպես նաև ցանկացած այլ պարտավորություն, որը ենթակա է ցպահանջ վճարման:

Առանցքային ղեկավար անձնակազմին ներքին կարգով տրամադրված տեղեկատվության հիման վրա՝ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված իրացվելիության գործակիցները հետևյալն էին. 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ն2.1 «Ն2.1-Ընդհանուր իրացվելիություն» (բարձր իրացվելի ակտիվներ / ընդհանուր ակտիվներ) հարաբերակցությունը կազմել է 23.83% (2024թ.՝ 25.36%): 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ N2.2 Ն2.2 «Ընթացիկ իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ)» հարաբերակցությունը կազմել է 97.55% (2024թ.՝ 107.39%): 2025թ. և 2024թ. ընթացքում Խումբը պահպանել է իրացվելիության բոլոր արտաքին պարտադիր նորմատիվային պահանջները:

. Ստորև ներկայացվում է դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների՝ պայմանագրային չզեղչված պարտավորությունների հիման վրա. Պարտավորությունները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, դասակարգվում են այնպես, ինչպես եթե մարման պահանջը ներկայացված լիներ ամենավաղ հնարավոր ամսաթվով: Սակայն Խումբը գտնում է, որ շատ հաճախորդներ չեն պահանջի վճարումը այն ամենավաղ հնարավոր ամսաթվի դրությամբ, որով Խումբը պարտավորված կլինի կատարել վճարումը, և աղյուսակը չի արտացոլում ակնկալվող դրամական

հոսքերը՝ հաշվարկված Խմբի կողմից՝ անցյալ ժամանակաշրջաններում ավանդները պահանջելու պատմական վիճակագրության հիման վրա:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մինչև 3 ամիս	3 - 12 ամիս	1 - 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
Ֆինանսական պարտավորություններ					
Պահանջներ բանկերի նկատմամբ	5,576,560				**5,576,560**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	329,720,649	205,447,383	107,439,158	4,903,919	**647,511,109**
Թողարկված պարտքային արժեթղթեր	5,925,912	16,406,571	42,525,005	-	**64,857,488**
Ստորադաս վարկեր	154,265	862,085	15,879,293	829,023	**17,724,666**
Այլ փոխառու միջոցներ, բացառությամբ վարձակալության պարտավորությունների	5,875,298	27,545,406	93,699,629	47,324,917	**174,445,250**
Այլ ֆինանսական պարտավորություններ	17,803,588	-	-	-	**17,803,588**
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**365,056,272**	**250,261,445**	**259,543,085**	**53,057,859**	**927,918,661**
Վարկերի և վարկային գծերի պարտավորություններ	39,106,267	-	-	-	**39,106,267**
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	57,031,566	-	-	-	**57,031,566**

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մինչև 3 ամիս	3 - 12 ամիս	1 - 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
Ֆինանսական պարտավորություններ					
Պահանջներ բանկերի նկատմամբ	466,357	-	-	-	**466,357**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	265,002,669	248,821,646	87,844,566	6,721,813	**608,390,694**
Թողարկված պարտքային արժեթղթեր	149,683	5,378,482	34,434,092	-	**39,962,257**
Ստորադաս վարկեր	155,688	809,413	5,268,710	11,668,654	**17,902,465**
Այլ փոխառու միջոցներ, բացառությամբ վարձակալության պարտավորությունների	5,901,799	25,342,204	61,286,693	29,851,430	**122,382,126**
Այլ ֆինանսական պարտավորություններ	15,543,196	-	-	-	**15,543,196**
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**287,219,392**	**280,351,745**	**188,834,061**	**48,241,897**	**804,647,095**
Վարկերի և վարկային գծերի պարտավորություններ	35,710,592	-	-	-	**35,710,592**
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	37,798,854	-	-	-	**37,798,854**

Հայաստանի օրենսդրությանը համապատասխան, Բանկը պարտավոր է ավանդատուի պահանջով մարել ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները: Այս ավանդները դասակարգված են վերը նշված աղյուսակում՝ ըստ իրենց սահմանված մարման ժամկետների:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարձակալության պարտավորությունների վերլուծությունը հետևյալն է.

	Մինչև 1 տարի	1 - 2 տարի	2- 3 տարի	3 -4 տարի	4 - 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
Վարձակալության գծով պարտավորություններ	1,088,948	1,163,787	1,011,146	650,408	474,794	702,641	**5,091,724**

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարձակալության գծով պարտավորությունների վերլուծությունը հետևյալն է.

	Մինչև 1 տարի	1 - 2 տարի	2- 3 տարի	3 -4 տարի	4 - 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
Վարձակալության գծով պարտավորություններ	1,006,199	776,424	693,797	569,903	282,842	688,821	**4,017,986**

Ժամկետայնության վերլուծությունը չի արտացոլում ընթացիկ հաշիվների և կայունության նախորդ ժամանակաշրջանների տվյալները: Նրանց լուծարումը նախկին ժամանակաշրջաններում տեղի է ունեցել ավելի երկար ժամանակահատվածում, քան նշված է վերը նշված աղյուսակներում: Այս մնացորդները ներառված են վերը նշված աղյուսակներում երեք ամսից պակաս ժամկետում վճարման ենթակա գումարներում:

Շուկայական ռիսկը պոտենցիալ ֆինանսական վնասի ռիսկն է, որը պայմանավորված է շուկայական գների (տոկոսադրույքներ, ապրանքներ, վարկային սպրեդներ, փոխարժեքներ և սեփական կապիտալի գներ) կամ այլ պարամետրերի փոփոխություններով, որոնք ազդում են գների վրա, ինչպես, օրինակ, տատանումները և հարաբերակցությունները:

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում: Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Խմբի շահույթի կամ վնասի համախմբված հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքների ողջամտորեն հնարավոր փոփոխության նկատմամբ՝ բոլոր մյուս փոփոխականների կայուն մնալու դեպքում: Դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունեցել է ոչ առևտրային ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, որոնց համար տոկոսադրույքները որոշվում են լողացող տոկոսադրույքների հիման վրա: Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս զուտ տոկոսային եկամտի զգայունությունը տոկոսադրույքների ողջամիտ հնարավոր փոփոխության պայմաններում: Կապիտալի զգայունությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսադրույքների թույլատրելի փոփոխությունների հանդեպ հաշվարկվում է՝ վերագնահատելով ֆիքսված տոկոսադրույքով իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները՝ հիմնվելով այն ենթադրության վրա, որ առկա են եկամտաբերության կորի զուգահեռ տեղաշարժեր:

	2025թ.		
	Ելակետերի աճ/նվազում	Զուտ տոկոսային եկամտի զգայունությունը	Սեփական կապիտալի զգայունությունը
ՀՀ դրամ	150	717,971	717,971
ԱՄՆ դոլար	125	(133,146)	(133,146)
Եվրո	125	(16,282)	(16,282)

	2024թ.		
	Ելակետերի աճ/նվազում	Զուտ տոկոսային եկամտի զգայունությունը	Սեփական կապիտալի զգայունությունը
ՀՀ դրամ	150	246,445	246,445
ԱՄՆ դոլար	125	(135,156)	(135,156)
Եվրո	125	(66,144)	(66,144)

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս Խմբի լողացող տոկոսադրույքով ակտիվների վրա ազդեցությունը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

31 դեկտեմբերի 2025թ.	Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ՝ հաշվեկշռային արժեք	Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ՝ հաշվեկշռային արժեք	Ածանցյալ գործիքներ՝ անվանական արժեք
EURIBOR	236,910	1,539,463	-
SOFR ԱՄՆ դոլար (6 ամիս)	11,234,698	21,886,414	-
ԱՄՆ գանձապետական պարտատոմսեր	70,699,573	22,834,864	-

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս Խմբի լողացող տոկոսադրույքով ակտիվների վրա ազդեցությունը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

31 դեկտեմբերի 2024թ.	Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ՝ հաշվեկշռային արժեք	Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ՝ հաշվեկշռային արժեք	Ածանցյալ գործիքներ՝ անվանական արժեք
EURLIBOR	738,291	6,029,849	-
SOFR ԱՄՆ դոլար (6 ամիս)	6,673,108	17,485,572	-
ԱՄՆ գանձապետական պարտատոմսեր	28,139,323	11,709,636	-

Արժութային ռիսկն արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է Տնօրինությունը սահմանել է արտարժութային դիրքերի ավելի խիստ սահմանաչափեր, քան ԿԲ կողմից սահմանված նորմատիվներն են: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են այն արժույթները, որոնցով 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը ունի էական արժութային դիրքեր: Վերլուծությունը հաշվարկում է ՀՀ դրամի նկատմամբ արժույթի փոխարժեքի ողջամտորեն ակնկալելի հնարավոր փոփոխության ազդեցությունը շահույթի կամ վնասի մասին համախմբված հաշվետվության վրա (արժույթի նկատմամբ զգայուն դրամական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի գծով)՝ մնացած բոլոր փոփոխականների կայունության պայմաններում: Կապիտալի վրա ազդեցությունը չի տարբերվում ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության վրա ազդեցությունից: Աղյուսակի բացասական մեծություններն արտացոլում են շահույթի կամ վնասի կամ կապիտալի պոտենցիալ զուտ նվազումը, դրական մեծությունները՝ պոտենցիալ զուտ աճը: Տնօրինությունը սահմանել է արտարժույթի և տոկոսադրույքի ռիսկի թույլատրելի ռիսկի սահմանաչափ: Խորհուրդը նաև հաստատել է ռիսկի ախորժակի, ռիսկի հանդուրժողականության և ռիսկատարության սահմանաչափերը տարբեր IRR և FX սահմանաչափերի գծով:

	2025թ.		2024թ.	
	Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն %	Ազդեցությունը մինչև հարկումը շահույթի վրա	Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն %	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը
ԱՄՆ դոլար	20.00%	(4,419,100)	20.00%	(37,785)
ԱՄՆ դոլար	(20.00%)	4,419,100	(20.00%)	37,785
Եվրո	20.00%	3,152,854	20.00%	(86,348)
Եվրո	(20.00%)	(3,152,854)	(20.00%)	86,348

Գործառնական ռիսկ. Գործառնական ռիսկը համակարգի խափանման, ներքին գործընթացների անհամապատասխանության կամ ձախողման, աշխատակազմի կողմից թույլ տրված սխալների, խարդախությունների կամ արտաքին գործոնների հետևանքով հնարավոր կորուստի ռիսկն է: Երբ ներքին վերահսկողության համակարգը դադարում է գործել, գործառնական ռիսկերը կարող են վնաս հասցնել համբավին, ունենալ իրավական հետևանքներ կամ բերել ֆինանսական վնասներ: Խումբը չի ենթադրում, որ բոլոր գործառնական ռիսկերը վերացված են, սակայն ներքին վերահսկողության համակարգի օգնությամբ և հնարավոր ռիսկերի որոշման և համապատասխան

ռեակցիայի միջոցով Խումբը կարող է կառավարել նման ռիսկերը: Խմբում գործառնական ռիսկերի կառավարումը կազմակերպված է «Վերահսկողության երեք գծերի» մոդելով, ինչպես սահմանված է Խմբի Ռիսկերի կառավարման շրջանակով և Գործառնական ռիսկերի կառավարման շրջանակով: Խմբի վերահսկողության առաջին գիծը (1-ին ՎԳ) պատասխանատու է ներքին վերահսկողության ներդրման և իրենց գործունեությունից բխող ռիսկերի կառավարման համար: Նրանք պատասխանատու են ապահովելու բիզնես գործընթացների իրականացումը սահմանված ռիսկի հանդուրժողականության և վերահսկողության մեխանիզմների շրջանակներում: 1-ին ՎԳ-ն ընդգրկում է բիզնես ստորաբաժանումները և վերահսկող խմբերը: Խմբի երկրորդ վերահսկողության գիծը (2-րդ ՎԳ) աջակցում և ուղղորդում է վերահսկողության իրականացման ընթացքում, մշակում է ռիսկերի կառավարման և համապատասխանության շրջանակները և վերահսկում դրանց շարունակական իրագործումը: 2-րդ ՎԳ-ն ընդգրկում է բանկի հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները՝ Ռիսկերի կառավարման վարչություն, Համապատասխանության բաժին, Տեղեկատվական անվտանգության և կիբերանվտանգության վարչություն, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և պատժամիջոցների վարչություն: Խմբի վերահսկողության երրորդ գիծը (3-րդ ՎԳ) ապահովում է կառավարման, ռիսկերի կառավարման, համապատասխանության և ընդհանուր ներքին վերահսկողության համակարգերի արդյունավետության անկախ գնահատումը: 3-րդ ՎԳ-ն իրականացվում է բանկի ներքին աուդիտի վարչության կողմից:

Գործառնական ռիսկերի կառավարման համակարգը ներառում է հետևյալ հիմնական ասպեկտները՝ ռիսկերի քարտեզագրում, միջադեպերի վերլուծություն և մշտական վերահսկողության գործառույթ: Ներքին վերահսկողության համակարգը ընդգրկում է պարտավորությունների արդյունավետ բաժանման, մուտքի թույլատվության, համադրման և հաստատման ընթացակարգեր, աշխատակազմի ուսուցում և գնահատում:

34 Իրական արժեքի չափում

. Խմբի ղեկավարությունը սահմանում է քաղաքականություն և ընթացակարգեր՝ իրական արժեքի կանոնավոր չափման համար, ինչպիսիք են FVPL-ով և FVOCI-ով չգնանշված առևտրային արժեթղթերը, ածանցյալ գործիքները, ներդրումային գույքը և շենքերը, մեքենաները, ինչպես նաև ոչ կանոնավոր չափման համար՝ ինչպիսիք են վաճառքի համար պահվող ակտիվները:

Արտաքին գնահատողները ներգրավվում են նշանակալի ակտիվների գնահատման համար, ինչպիսիք են հողը և շենքերը, փոխադրամիջոցները: Արտաքին գնահատողների ներգրավումը որոշվում է ղեկավարության կողմից: Ընտրությունը կատարվում է՝ հիմնվելով այնպիսի չափանիշների վրա, ինչպիսիք են շուկայի մասին տեղեկացվածությունը, վարկանիշը, անկախությունը և մասնագիտական ստանդարտների պահպանումը:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին ղեկավարությունը վերլուծում է այն ակտիվների և պարտավորությունների արժեքների փոփոխությունները, որոնք ենթակա են վերագնահատման Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն: Այս վերլուծությունների համար ճշտվում են հիմնական տվյալները, որոնք կիրառվել են նախորդ գնահատման ժամանակ՝ համադրելով գնահատման հաշվարկի տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի հետ: Ղեկավարությունը Խմբի անկախ գնահատողների հետ միասին համեմատում է յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական արժեքի փոփոխությունը յուրաքանչյուր համապատասխան արտաքին աղբյուրների հետ՝ որոշելու համար տվյալ փոփոխության հիմնավորված լինելը:

. Ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշելու և բացահայտելու համար Խումբն օգտագործում է իրական արժեքի ճանաչման և չափման հետևյալ հիերարխիան.

- 1-ին մակարդակ – համանման ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկայում գնանշված գներ (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ. գնահատման այլ մեթոդ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալները, որոնք ունեն նշանակալի ազդեցություն իրական արժեքի գնահատման համար, ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից:

- 3-րդ մակարդակ. մոդելներ, որոնք օգտագործում են մոդելներ, որոնք ունեն նշանակալի ազդեցություն գրանցված իրական արժեքի վրա, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա:

Իրական արժեքի բացահայտման նպատակով Խումբը որոշել է ակտիվների և պարտավորությունների դասեր՝ հիմնվելով ակտիվի կամ պարտավորության բնույթի, բնութագրերի և ռիսկերի և իրական արժեքի հիերարխիայի մակարդակի վրա, ինչպես նկարագրված է վերևում:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Իրական արժեքի չափում՝ օգտագործելով			
	Ակտիվ շուկաների գնանշումներ (Մակարդակ 1)	Նշանակալից դիտարկելի ելակետային տվյալներ (Մակարդակ 2)	Նշանակալից ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (Մակարդակ 3)	Ընդամենը
Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ				
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ				
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	35,996	-	**35,996**
Բաժնային գործիքներ	3,521,820	-	-	**3,521,820**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
Պարտքային գործիքներ	-	3,314,315	-	**3,314,315**
Բաժնային գործիքներ	398,796	-	-	**398,796**
Չգնանշված բաժնային արժեթղթեր – տեղական ընկերություններ	-	-	-	-
Ոչ ֆինանսական ակտիվներ				
Հիմնական միջոցներ - հող և շենքեր, տրանսպորտային միջոցներ	-	-	12,723,550	**12,723,550**
Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	28,676,392	70,494,427	-	**99,170,819**
Պահանջներ բանկերի նկատմամբ	-	51,335,353	41,624,433	**92,959,786**
Ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթեր	-	66,012,204	-	**66,012,204**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	-	-	103,141,827	**103,141,827**
Այլ ֆինանսական ակտիվներ	-	-	16,476,194	**16,476,194**
Հաճախորդներին տրված վարկեր	-	-	633,397,885	**633,397,885**
Պարտավորություններ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	-	246,015,849	372,501,674	**618,517,523**
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	51,798,299	-	**51,798,299**
Բանկերից ներգրավված միջոցներ	-	672,009	4,904,551	**5,576,560**
Ստորադաս վարկեր	-	-	13,152,984	**13,152,984**
Այլ փոխառու միջոցներ	-	-	153,177,807	**153,177,807**
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	-	17,803,588	**17,803,588**

31 դեկտեմբերի 2024թ.	Իրական արժեքի չափում՝ օգտագործելով			
	Ակտիվ շուկաների գնանշումներ (Մակարդակ 1)	Նշանակալից դիտարկելի ելակետային տվյալներ (Մակարդակ 2)	Նշանակալից ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (Մակարդակ 3)	Ընդամենը
Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ				
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ				
Աճանցյալ ֆինանսական ակտիվներ	-	158,180	-	**158,180**
Բաժնային գործիքներ	3,300,159	-	-	**3,300,159**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
Պարտքային գործիքներ	-	12,867,997	-	**12,867,997**
Բաժնային գործիքներ	101,203	-	-	**101,203**
Չգնանշված բաժնային արժեթղթեր – տեղական ընկերություններ	-	-	296,704	**296,704**
Ոչ ֆինանսական ակտիվներ				
Հիմնական միջոցներ - հող և շենքեր, տրանսպորտային միջոցներ	-	-	11,491,734	**11,491,734**
Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	26,853,397	79,176,672	-	**106,030,069**
Պահանջներ բանկերի նկատմամբ	-	34,478,757	47,003,671	**81,482,428**
Ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթեր	-	45,542,546	-	**45,542,546**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	-	-	93,105,821	**93,105,821**
Այլ ֆինանսական ակտիվներ	-	-	14,338,049	**14,338,049**
Հաճախորդներին տրված վարկեր	-	-	536,210,032	**536,210,032**
Պարտավորություններ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	-	262,448,448	321,673,588	**584,122,036**
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	39,408,576	-	**39,408,576**
Բանկերից ներգրավված միջոցներ	-	418,616	44,181	**462,797**
Ստորադաս վարկեր	-	-	12,632,502	**12,632,502**
Այլ փոխառու միջոցներ	-	-	110,883,860	**110,883,860**
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	-	15,543,196	**15,543,196**

Իրական արժեքով չհաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը Ստորև բերված է Խմբի ֆինանսական գործիքների հաշվեկշռային արժեքների և իրական արժեքների համեմատությունն ըստ դասերի, որոնք իրական արժեքով չեն հաշվառվում ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում: Աղյուսակը չի ներառում ոչ ֆինանսական ակտիվների և ոչ ֆինանսական պարտավորությունների իրական արժեքները:

	2025թ.			2024թ.		
	Հաշվե-կշռային արժեք	Իրական արժեք	Չճանաչ-ված օգուտ/ (վնաս)	Հաշվե-կշռային արժեք	Իրական արժեք	Չճանաչ-ված օգուտ/ (վնաս)
Ֆինանսական ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	99,170,819	99,170,819	-	106,030,069	106,030,069	-
Պահանջներ բանկերի նկատմամբ	92,959,786	92,959,786	-	81,482,428	81,482,428	-
Ներդրումային արժեթղթեր - ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթեր	66,012,204	66,814,141	(801,937)	45,542,546	45,395,619	146,927
Հաճախորդներին տրված վարկեր	633,397,885	633,700,098	(302,213)	536,210,032	535,770,247	439,785
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	103,141,827	103,141,827	-	93,105,821	93,105,821	-
Այլ ֆինանսական ակտիվներ	16,476,194	16,476,194	-	14,338,049	14,338,049	-
Ֆինանսական պարտավորություններ						
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	618,517,523	618,159,189	358,334	584,122,036	584,122,036	-
Թողարկված պարտքային արժեթղթեր –	51,798,299	52,089,315	(291,016)	39,408,576	39,408,576	-
Բանկերից ներգրավված միջոցներ	5,576,560	5,576,560	-	462,797	462,797	-
Ստորադաս վարկեր	13,152,984	13,559,352	(406,368)	12,632,502	12,283,346	349,156
Այլ փոխառու միջոցներ	153,177,807	157,135,087	(3,957,280)	110,883,860	108,622,714	2,261,146
Այլ ֆինանսական պարտավորություններ	17,803,588	17,803,588	-	15,543,196	15,543,196	-
Ընդամենը իրական արժեքի չճանաչված փոփոխություն			**5,400,480**			**3,197,014**

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, բոլոր ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքները, բացառությամբ հաճախորդներին տրված վարկերի, ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթերի, այլ փոխառությունների և ստորադաս վարկերի, հաճախորդներից ստացված ավանդների, թողարկված պարտքային արժեթղթերի, գնահատվել են մոտավորապես հավասար դրանց հաշվեկշռային արժեքներին:

2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը ՀՀ ունեցել է Կենտրոնական բանկին չմարված փոխառություններ՝ արտահայտված ՀՀ դրամով, 4%-ից մինչև 8. 5% անվանական տոկոսադրույքներով: Այս վարկերը համարվում են առանձին շուկայական սեգմենտի մաս, և Խմբի գնահատմամբ, վարկերը ձեռք են բերվել շուկայական տոկոսադրույքներով:

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքները գնահատելու համար ղեկավարության կողմից օգտագործվում են հետևյալ ենթադրությունները. 6.74%-ից 12.89% միջակայքում տոկոսադրույքներ՝ ՀՀ դրամով արտահայտված արժեթղթերի համար և 5.28% -ից 8.67% միջակայքում տոկոսադրույքներ՝ արտարժույթով արտահայտված արժեթղթերի համար:
Հաճախորդներին տրված վարկերի գնահատված իրական արժեքները համարվում են մոտ դրանց հաշվեկշռային արժեքներին, ընդ որում շուկայական գներից էականորեն տարբերվող ակտիվները ներկայացվում են շուկայական գներով ՝ նվազագույնի հասցնելով անհամապատասխանությունը: Հաճախորդներին տրված վարկերի իրական արժեքները գնահատելու համար ղեկավարությունը օգտագործում է հետևյալ ենթադրությունները. զեղչերի տոկոսադրույքները տատանվում են 12.5%-ից 16.6% (2024թ.՝ 12.7% -ից 16.3%) ՀՀ դրամով արտահայտված վարկերի համար, և 9.2%-ից 10.4% արտարժույթով արտահայտված վարկերի համար (2024թ. ՝ 10.4-ից 11.5%). որը կիրառվում է

.

հաճախորդներին տրված վարկերից և կանխավճարներից ապագա դրամական հոսքերը զեղչելու համար:

Այլ փոխառու միջոցների և ստորադաս փոխառությունների իրական արժեքները գնահատելու համար ղեկավարությունն օգտագործում է հետևյալ ենթադրությունները. տոկոսադրույքները տատանվում են 10.37%-ից 1՝ ՀՀ դրամով արտահայտված միջոցների համար և 5.05%-ից 9.24%՝ արտարժույթով արտահայտված միջոցների համար:

Ստորև նկարագրված են այն մեթոդներն ու ենթադրությունները, որոնք օգտագործվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում իրական արժեքով արտացոլված ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը որոշելու համար, ինչպես նաև իրական արժեքով չարտացոլված այն հոդվածների իրական արժեքը որոշելու համար, որոնց իրական արժեքը բացահայտվում է:

,

Բարձր իրացվելի կամ կարճաժամկետ (երեք ամսից պակաս) ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար ենթադրվել է, որ հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին: Այս ենթադրությունը կիրառվում է նաև ցպահանջ ավանդների և անժամկետ խնայողական հաշիվների նկատմամբ:

Գույքի իրական արժեքը որոշվել է շուկայական համադրելի մեթոդի կիրառմամբ: Հողի և շենքերի գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում: Սա նշանակում է, որ գնահատողի կողմից կատարված գնահատումները հիմնված են շուկայական գործարքների գների վրա, էական ճշգրտմամբ՝ հաշվի առնելով կոնկրետ գույքի բնույթը, գտնվելու վայրը կամ վիճակը: Այդ ակտիվների իրական արժեքները գնահատվում են անկախ, մասնագիտական որակավորում ունեցող և անհրաժեշտ լիցենզիաների տիրապետող՝ գույքի գնահատողների կողմից իրականացված գնահատումների հիման վրա: Նշանակալից ելակետային տվյալները և ենթադրությունները մշակվում են ղեկավարության հետ սերտ խորհրդակցությամբ: Լրացուցիչ տեղեկություններ ներկայացված են ստորև:

Գրասենյակի հողերի և շենքերի իրական արժեքները գնահատվում են եկամտի և շուկայական մոտեցումներով: Եկամուտի մոտեցումը կիրառվել է վարձակալությունից ստացված եկամտի գնահատված հոսքի կապիտալացմամբ՝ առանց կանխատեսվող գործառնական ծախսերի, օգտագործելով շուկայական եկամտաբերությունից բխող զեղչման դրույքաչափը, որը ենթադրվում է նմանատիպ անշարժ գույքի գծով վերջին գործարքներից: Երբ փաստացի վարձավճարը էականորեն տարբերվում է գնահատված վարձավճարներից, ճշգրտումներ են կատարվում վարձակալության գնահատված արժեքի նկատմամբ: Վարձակալված գույքից դրամական միջոցների ներհոսքը գնահատելիս հաշվի է առնվում զբաղվածության ներկա մակարդակը, առկա վարձակալության պայմանները և ապագա վարձակալություններից վարձակալական վճարների ակնկալիքները շենքերի շահագործման մնացած տևողության ընթացքում:

Առավել նշանակալի ելակետային տվյալները, որոնցից որևէ մեկը դիտարկելի չէ, վարձակալության գնահատված արժեքն է, թափուրության մակարդակի և զեղչի դրույքաչափի վերաբերյալ ենթադրությունները: Գնահատված իրական արժեքը մեծանում է, եթե գնահատված վարձակալությունը մեծանում է, թափուրության մակարդակը նվազում է կամ եթե զեղչման տոկոսադրույքը (շուկայական եկամտաբերությունը) նվազում է: Ընդհանուր գնահատումները զգայուն են բոլոր երեք ենթադրությունների նկատմամբ: Ղեկավարությունը համարում է, որ ողջամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրությունների շրջանակը ամենամեծն է վարձակալության արժեքների և թափուրության մակարդակների համար, և որ կա նաև փոխկապակցվածություն այս տվյալների միջև:

Շուկայական մոտեցումն արտացոլում է նմանատիպ գույքի համար վերջին շուկայական գործարքների դիտարկելի գները և ներառում է գույքին բնորոշ գործակիցներով ճշգրտումներ՝ ներառյալ չափը, գտնվելու վայրը, շենքի շինարարական-ինժեներական առանձնահատկությունները, տեխնիկական (ֆիզիկական) վիճակը, ծանրաբեռնվածությունը և օգտագործման նպատակը:

.

Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներից է՝ ճշգրտումը գույքին բնորոշ գործակիցներով: Այս ճշգրտման չափն ու ուղղությունը կախված է նմանատիպ գույքի դիտարկելի շուկայական գործարքների քանակից և բնութագրերից, որոնք օգտագործվում են որպես գնահատման մեկնարկային կետ: Չնայած այս ելակետային տվյալը սուբյեկտիվ դատողության արդյունք է, ղեկավարությունը գտնում է, որ ընդհանուր առմամբ ողջամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրությունները էական ազդեցություն չեն ունենա գնահատման վրա:

Շենքերի իրական արժեքը դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում՝ հաշվի առնելով գնահատման տեխնիկայի դիտարկելի ելակետային տվյալների նշանակալից դիտարկելի ճշգրտումները (գործակիցները): Համաձայն Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ գնահատման ենթակա գույքը վերագնահատվում է 3 տարին մեկ անգամ, եթե շուկայում էական շեղումներ տեղի չեն ունենում:

. Ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք գնահատվում են օգտագործելով շուկայական ելակետային տվյալներ, հիմնականում տոկոսային և արժութային սվոպեր են և արտարժութային ֆորվարդ պայմանագրեր: Ամենահաճախ կիրառվող գնահատման մեթոդները ներառում են ֆորվարդների գնորոշման և սվոփ մոդելներ՝ օգտագործելով ներկա արժեքի հաշվարկներ: Այս մոդելները հաշվի են առնում տարբեր ելակետային տվյալներ, ինչպիսիք են՝ գործընկերների վարկունակությունը, արտարժույթի սփոթ և ֆորվարդ դրույքները և տոկոսադրույքի կորը:

Գնահատման մեթոդների և գնորոշման մոդելների միջոցով գնահատված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերը հիմնականում բաղկացած են ՀՀ Կառավարության պարտատոմսերից: Այս արժեթղթերը գնահատվում են եկամտաբերության կորի միջոցով, որը ներառում է շուկայական դիտարկելի տվյալներ և ԿԲ-ի կողմից հրապարակված տվյալները:

35 Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս ակտիվների և պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ դրանց ակնկալվող վերականգնման կամ մարման ժամկետների:

Խմբի պայմանագրային չզեղչված պարտավորությունների մարման վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է Ծանոթագրություն 33-ում՝ «Ռիսկերի կառավարում»:

	2025թ.			2024թ.		
	Մինչև 1 տարի	Ավելի քան 1 տարի	Ընդամենը	Մինչև 1 տարի	Ավելի քան 1 տարի	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	99,170,819	-	**99,170,819**	106,030,069	-	**106,030,069**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	35,996	-	**35,996**	158,180	-	**158,180**
Պահանջներ բանկերի նկատմամբ	92,959,786	-	**92,959,786**	40,970,224	40,512,204	**81,482,428**
Ներդրումային արժեթղթեր	43,886,699	29,360,436	**73,247,135**	32,252,658	29,855,951	**62,108,609**
Հաճախորդներին տրված վարկեր	187,972,424	445,425,461	**633,397,885**	173,626,601	362,583,431	**536,210,032**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	41,045,305	62,096,522	**103,141,827**	30,520,026	62,585,795	**93,105,821**
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	-	2,592,986	**2,592,986**	-	2,044,092	**2,044,092**
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	32,183,874	**32,183,874**	-	29,114,084	**29,114,084**
Այլ ֆինանսական ակտիվներ	16,476,194	-	**16,476,194**	14,338,049	-	**14,338,049**
Ընդամենը	**481,547,223**	**571,659,279**	**1,053,206,502**	**397,895,807**	**526,695,557**	**924,591,364**

	2025թ.			2024թ.		
	Մինչև 1 տարի	Ավելի քան 1 տարի	Ընդամենը	Մինչև 1 տարի	Ավելի քան 1 տարի	Ընդամենը
Բանկերից ներգրավված միջոցներ	5,576,560	-	**5,576,560**	462,797	-	**462,797**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	267,508	-	**267,508**			
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	518,895,639	99,621,884	**618,517,523**	498,142,903	85,979,133	**584,122,036**
Թողարկված պարտքային արժեթղթեր	19,429,762	32,368,537	**51,798,299**	5,524,007	33,884,569	**39,408,576**
Այլ փոխառու միջոցներ	28,060,264	125,117,543	**153,177,807**	27,588,736	83,295,124	**110,883,860**
Ստորադաս վարկեր	114,532	13,038,452	**13,152,984**	110,838	12,521,664	**12,632,502**
Ընթացիկ հարկային պարտավորություններ	4,602,577	-	**4,602,577**	3,313,374	-	**3,313,374**
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	1,556,734	**1,556,734**	-	505,767	**505,767**
Այլ ֆինանսական պարտավորություններ	17,803,588	-	**17,803,588**	15,543,196	-	**15,543,196**
Ընդամենը	**594,750,430**	**271,703,150**	**866,453,580**	**550,685,851**	**216,186,257**	**766,872,108**
Զուտ	**(113,203,207)**	**299,956,129**	**186,752,922**	**(152,790,044)**	**310,509,300**	**157,719,256**

Ժամկետայնության վերլուծությունը չի արտացոլում հաճախորդների ընթացիկ հաշիվների և ավանդների կայունության նախորդ ժամանակաշրջանների տվյալները: Նրանց մարումը նախկին ժամանակաշրջաններում տեղի է ունեցել ավելի երկար ժամանակահատվածում, քան նշված է վերը նշված աղյուսակներում: Այս մնացորդները վերը նշված աղյուսակներում ներառված են Մինչև մեկ տարի սյունակում:

Համաձայն Հայաստանի օրենսդրության, Խումբը պարտավոր է ավանդները մարել ավանդատուի պահանջով: Տես Ծանոթագրություն 19:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունը՝ ըստ մարման ժամկետների.

31 դեկտեմբերի 2025թ.	Խնդրա-հարույց/ Ժամկե-տանց վարկեր	Ժամկե-տանց	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ									
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ			99,170,819						**99,170,819**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ			35,996						**35,996**
Պահանջներ բանկերի նկատմամբ			38,409,626	-	-	-	-	54,550,160	**92,959,786**
Ներդրումային արժեթղթեր			2,507,671	2,580,464	38,798,565	12,184,544	13,654,071	3,521,820	**73,247,135**
Հաճախորդներին տրված վարկեր	859,733	11,008,027	13,249,891	34,422,129	128,432,643	291,870,933	153,554,529	-	**633,397,885**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	86,196	928,308	5,101,645	6,757,275	28,171,880	55,795,076	6,301,447	-	**103,141,827**
Այլ ֆինանսական ակտիվներ	-	-	-	16,476,194	-	-	-	-	**16,476,194**
Ընդամենը	**945,929**	**11,936,335**	**158,475,648**	**60,236,062**	**195,403,088**	**359,850,553**	**173,510,047**	**58,071,980**	**1,018,429,642**

31 դեկտեմբերի 2025թ.	Խնդրա-հարույց/ Ժամկե-տանց վարկեր	Ժամկե-տանց	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ընդամենը
Ֆինանսական պարտավորություններ									
Բանկերից ներգրավված միջոցներ			5,576,560	-	-	-	-	-	**5,576,560**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ			267,508	-	-	-	-	-	**267,508**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ			268,679,491	56,913,202	193,302,946	96,696,879	2,925,005	-	**618,517,523**
Թողարկված պարտքային արժեթղթեր - թողարկված ՀՀ պարտատոմսեր			-	5,608,181	13,821,581	32,368,537	-	-	**51,798,299**
Այլ փոխառու միջոցներ			2,593,309	2,517,725	22,949,229	79,982,745	45,134,799	-	**153,177,807**
Այլ ֆինանսական պարտավորություններ			-	17,803,588	-	-	-	-	**17,803,588**
Ստորադաս վարկեր			-	75,127	39,405	12,286,131	752,321	-	**13,152,984**
Ընդամենը			**277,116,868**	**82,917,823**	**230,113,161**	**221,334,292**	**48,812,125**	**-**	**860,294,269**
Իրացվելիության զուտ բացը	**945,929**	**11,936,335**	**(118,641,220)**	**(22,681,761)**	**(34,710,073)**	**138,516,261**	**124,697,922**	**58,071,980**	**158,135,373**
Իրացվելիության կուտակային բացը			**(105,758,956)**	**(128,440,717)**	**(163,150,790)**	**(24,634,529)**	**100,063,393**	**158,135,373**	

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունը՝ ըստ մարման ժամկետների.

31 դեկտեմբերի 2024թ.	Խնդրա-հարույց/ Ժամկե-տանց վարկեր	Ժամկե-տանց	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ									
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ			106,030,069						**106,030,069**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ			158,180						**158,180**
Պահանջներ բանկերի նկատմամբ			40,970,224	-	-	2,012,814	-	38,499,390	**81,482,428**
Ներդրումային արժեթղթեր			4,146,867	15,455,860	12,649,931	17,515,377	10,840,130	1,500,444	**62,108,609**
Հաճախորդներին տրված վարկեր	1,023,795	8,557,096	11,302,579	30,064,541	122,678,590	225,255,628	137,327,803	-	**536,210,032**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	41,286	371,276	4,510,471	5,773,971	19,823,022	56,897,498	5,688,297	-	**93,105,821**
Այլ ֆինանսական ակտիվներ	-	-	-	14,338,049	-	-	-	-	**14,338,049**
Ընդամենը	**1,065,081**	**8,928,372**	**167,118,390**	**65,632,421**	**155,151,543**	**301,681,317**	**153,856,230**	**39,999,834**	**893,433,188**
Ֆինանսական պարտավորություններ									
Բանկերից ներգրավված միջոցներ			462,797	-	-	-	-	-	**462,797**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ			263,139,900	43,154,555	191,848,448	81,534,015	4,445,118	-	**584,122,036**
Թողարկված պարտքային արժեթղթեր - թողարկված ՀՀ պարտատոմսեր			-	145,525	5,378,482	33,884,569	-	-	**39,408,576**
Այլ փոխառու միջոցներ			2,259,998	3,838,338	21,490,400	54,919,994	28,375,130	-	**110,883,860**
Այլ ֆինանսական պարտավորություններ			-	15,543,196	-	-	-	-	**15,543,196**
Ստորադաս վարկեր			-	76,816	34,022	1,655,560	10,866,104	-	**12,632,502**
Ընդամենը			**265,862,695**	**62,758,430**	**218,751,352**	**171,994,138**	**43,686,352**	**-**	**763,052,967**
Իրացվելիության զուտ բացը	**1,065,081**	**8,928,372**	**(98,744,305)**	**2,873,991**	**(63,599,809)**	**129,687,179**	**110,169,878**	**39,999,834**	**130,380,221**
Իրացվելիության կուտակային բացը			**(88,750,852)**	**(85,876,861)**	**(149,476,670)**	**(19,789,491)**	**90,380,387**	**130,380,221**	

36 Կապակցված կողմերի բացահայտումներ

Համաձայն «Կապակցված կողմերի բացահայտումներ» ՀՀՄՍ 24-ի, կողմերը համարվում են կապակցված, եթե կողմերից մեկն ունի մյուս կողմին վերահսկելու կամ ֆինանսական կամ գործառնական որոշումներ կայացնելիս զգալի ազդեցություն գործադրելու կարողություն: Յուրաքանչյուր հնարավոր կապակցված կողմի հարաբերություն դիտարկելիս ուշադրություն է դարձվում հարաբերության բնույթի, այլ ոչ միայն իրավական ձևի վրա:

Կապակցված կողմերը կարող են այնպիսի գործարքներ իրականացնել, որոնք չէին իրականացվի չկապակցված կողմերի միջև, և կապակցված կողմերի միջև իրականացվող գործարքների գներն ու պայմանները կարող են տարբերվել չկապակցված կողմերի հետ գործարքների գներից և պայմաններից:

Կապակցված կողմերի հետ գործառնությունների գծով մնացորդները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկայացված են ստորև.

	2025թ.			2024թ.		
	Մայր ընկերություն	Առանցքային ղեկավար անձնակազմ և նրանց ընտանիքի մերձավոր անդամներ	Ասոցիացված ընկերություններ	Մայր ընկերություն	Առանցքային ղեկավար անձնակազմ և նրանց ընտանիքի մերձավոր անդամներ	Ասոցիացված ընկերություններ
Համախառն չմարված վարկեր հունվարի 1-ի դրությամբ	2,230,251	1,634,775	-	2,275,152	1,164,527	-
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	4,854,732	1,474,616	-	436,198	1,783,779	-
Տարվա ընթացքում մարված վարկեր	(1,367,156)	(609,425)	-	(572,857)	(1,319,921)	-
Այլ փոփոխություններ	-	(2,241)	-	91,758	6,390	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված վարկեր, համախառն	**5,717,827**	**2,497,725**	**-**	**2,230,251**	**1,634,775**	-
Հանած՝ արժեզրկման գծով պահուստ դեկտեմբերի 31-ի դրությամբ	(6,383)	(21,523)	-	(6,621)	(24,197)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված վարկեր, զուտ	**5,711,444**	**2,476,202**	**-**	**2,223,630**	**1,610,578**	**-**
Վարկերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը	**8.5%**	**7.9%**	**-**	**8.5%**	**7.2%**	**-**
Ժամկետային ավանդներ առ1 հունվարի	700,424	1,447,996	2,676,335	562,364	1,660,409	2,152,010
Տարվա ընթացքում ներգրավված ավանդներ	1,970,829	5,011,948	3,266,631	4,617,755	4,455,453	12,030,829
Տարվա ընթացքում մարված ավանդներ	(2,671,253)	(3,547,469)	(2,366,881)	(4,477,679)	(4,616,094)	(11,506,504)
Այլ փոփոխություններ	-	(37,452)	207	(2,016)	(51,772)	-
Ժամկետային ավանդներ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**-**	**2,875,023**	**3,576,292**	**700,424**	**1,447,996**	**2,676,335**

Կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները ներառում են 2026-2039թթ. մարման ժամկետով և 2%-ից 22% տոկոսադրույքով վարկեր, 8.35% միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքով:

Կապակցված կողմերի գործարքներից առաջացող եկամուտներն ու ծախսերը հետևյալն են.

	31 դեկտեմբերի 2025թ.			31 դեկտեմբերի 2024թ.		
	Մայր ընկերություն	Առանցքային ղեկավար անձնակազմ և նրանց ընտանիքի մերձավոր անդամներ	Ասոցիացված ընկերություններ	Մայր ընկերություն	Առանցքային ղեկավար անձնակազմ և նրանց ընտանիքի մերձավոր անդամներ	Ասոցիացված ընկերություններ
Տոկոսային եկամուտ վարկերի գծով	346,141	153,470	-	181,120	146,475	-
Տոկոսային ծախս ավանդների գծով	6,628	214,864	198,382	112,792	288,112	209,513

Առանցքային ղեկավար անձնակազմին փոխհատուցումը.

	2025թ.	2024թ.
Աշխատավարձ	1,544,760	1,350,346
Կարճաժամկետ հատուցումներ	1,584,481	1,506,260
Ընդամենը առանցքային ղեկավար անձնակազմին փոխհատուցումներ	**3,129,241**	**2,856,606**

37 Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում

Խումբն ունի բաժնեմաս «Ամուլսարի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ում, որտեղ Խմբին է պատկանում բաժնետոմսերի 49%-ը (31 դեկտեմբերի 2024թ.՝ 49%): Խմբի ասոցիացված կազմակերպությունը հիմնադրվել է 2013թ.-ին և կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ: Ասոցիացված կազմակերպության հիմնական գործունեությունը պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կառավարումն է: Ասոցիացված կազմակերպության գործունեությունը վերահսկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներդրման հաշվեկշռային արժեքը կազմել է 2,592,986 հազ. ՀՀ դրամ (2024թ.՝ 2,044,092 հազ. ՀՀ դրամ):

Ստորև ներկայացված է էական ասոցիացված կազմակերպությունների ամփոփ ֆինանսական տեղեկատվությունը

	2025թ.	2024թ.
Ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	40,391	81,744
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	3,564,257	2,588,590
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	1,925,643	1,685,666
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	110,738	140,635
Վարձակալված ակտիվների օգտագործման իրավունք	35,620	57,851
Հետաձգված հարկային ակտիվ	30,482	25,033
Այլ ակտիվներ	616,030	449,032
Ընդամենը ակտիվներ	**6,323,161**	**5,028,551**
Պարտավորություններ		
Վարձակալության գծով պարտավորություն	45,449	70,883
Վճարման ենթակա շահութահարկ	665,431	500,857
Կրեդիտորական պարտքեր և հաշվեգրված ծախսեր	320,472	285,194
Ընդամենը պարտավորություններ	**1,031,352**	**856,934**
Զուտ ակտիվներ	**5,291,809**	**4,171,617**
Խմբի մասնաբաժինը զուտ ակտիվներում	**2,592,986**	**2,044,092**

	2025թ.	2024թ.
Եկամուտ կառավարման վճարներից	6,133,132	4,654,586
Տոկոսային եկամուտ	212,640	167,233
Եկամուտ ֆինանսական խորհրդատվությունից	10,743	9,933
Այլ եկամուտներ	5,033	2,506
Զուտ վնաս արտարժութային գործարքներից	(12,925)	(7,628)
Վարձակալության պարտավորությունների գծով տոկոսային ծախսեր	(7,551)	(8,922)
Անձնակազմի գծով ծախսեր	(504,549)	(410,872)
Միջնորդավճարների գծով ծախս	(824,440)	(642,765)
Վարչական և այլ ծախսեր	(853,091)	(714,192)
Շահույթ նախքան հարկումը	**4,158,992**	**3,049,879**
Շահութահարկի գծով ծախս	(774,661)	(576,639)
Տարվա շահույթ	**3,384,331**	**2,473,240**
Այլ համապարփակ եկամուտ		
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումների գծով չիրացված օգուտ/(վնաս)	209,100	155,125
Տարվա այլ համապարփակ եկամուտ/(վնաս)՝ հարկերից զուտ	**209,100**	**155,125**
Շահույթ և ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	**3,593,431**	**2,628,365**

Ասոցիացված կազմակերպության շահույթում կամ վնասում և այլ համապարփակ եկամտում խմբի մասնաբաժինը հետևյալն է.

	2025թ.	2024թ.
Հաշվետու տարվա շահույթ	**1 658 322**	**1,211,887**
Այլ համապարփակ եկամուտ/(վնաս)	102,459	76,011
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	**1,760,781**	**1,287,898**

Խումբը 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար ստացել է 1,211,887 հազ. ՀՀ դրամ շահաբաժիններ (2024թ.՝ 1,019,337 հազ. ՀՀ դրամ):

38 Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորությունների փոփոխություններ

	Ծան.	Թողարկված պարտքային արժեթղթեր	Այլ փոխառու միջոցներ	Ստորադաս վարկեր	Ընդամենը պարտավորություններ ֆինանսավորման գործունեությունից
Հաշվեկշռային արժեքը 31 դեկտեմբերի 2023թ. դրությամբ	**20, 21,22**	**21,087,118**	**95,125,094**	**12,661,577**	**128,873,789**
Թողարկումից մուտքեր		18,438,324	50,390,846	703,613	**69,532,783**
Մարում		(137,535)	(35,940,115)	(3,957)	**(36,081,607)**
Վճարված տոկոսներ		(2,307,642)	(6,879,233)	(1,831,275)	**(11,018,150)**
Անկանխիկ գործարքներ					**-**
Արտարժույթի փոխարկում		17,444	(775,278)	(728,731)	**(1,486,565)**
Վարձակալության պարտավորություններ (ՖՀՄՍ 16)		-	2,458,908		**2,458,908**
Տոկոսային ծախս		2,310,867	6,503,638	1,831,275	**10,645,780**
Հաշվեկշռային արժեքը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**20, 21,22**	**39,408,576**	**110,883,860**	**12,632,502**	**162,924,938**
Թողարկումից մուտքեր		17,250,800	72,873,718	-	**90,124,518**
Մարում		(4,380,205)	(31,001,968)	-	**(35,382,173)**
Վճարված տոկոսներ		(4,064,448)	(9,999,835)	(929,610)	**(14,993,893)**
Անկանխիկ գործարքներ					**-**
Արտարժույթի փոխարկում		(488,458)	(423,537)	520,481	**(391,514)**
Վարձակալության պարտավորություններ (ՖՀՄՍ 16)		-	1,391,461		**1,391,461**
Տոկոսային ծախս		4,072,034	9,454,108	929,611	**14,455,753**
Հաշվեկշռային արժեքը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**20,21,22**	**51,798,299**	**153,177,807**	**13,152,984**	**218,129,090**

Խումբը դասակարգում է վճարված տոկոսագումարները որպես գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր:

39 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Հիմնական հաշվանցման և համանման պայմանագրերի ներքո հաշվանցման ենթակա ֆինանսական գործիքները հետևյալն են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Ֆինանսական ակտիվների/պարտավորությունների տեսակները	Համախառն գումարները մինչև հաշվանցումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված համախառն գումարներ	Զուտ գումարը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցումից հետո	Հիմնական հաշվանցման և համանման պայմանագրերի ներքո հաշվանցման ենթակա գումարներ՝ չհաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում		Զուտ ազդեցության չափը
ԱԿՏԻՎՆԵՐ						
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ						
Տոկոսադրույքի սվոփ	17,402	(312)	17,090	17,090	-	-
Արժութային սվոփ	18,906	-	18,906	18,906	-	-
Ներդրումային արժեթղթեր						
Հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրեր այլ բանկերի հետ	34,619,241	-	34,619,241	34,619,241	-	-
Հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրեր	6,176,131	-	6,176,131	6,176,131	-	-
Ընդամենը հիմնական հաշվանցման և համանման պայմանագրերի ներքո հաշվանցման ենթակա ակտիվներ	**40,831,680**	**(312)**	**40,831,368**	**40,831,368**	-	-
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ						
Բանկերից ներգրավված միջոցներ						
Ընդամենը հիմնական հաշվանցման և համանման պայմանագրերի ներքո հաշվանցման ենթակա պարտավորություններ	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**

Հիմնական հաշվանցման և համանման պայմանագրերի ներքո հաշվանցման ենթակա ֆինանսական գործիքները հետևյալն են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Ֆինանսական ակտիվների/պարտավորությունների տեսակները	Համախառն գումարները մինչև հաշվանցումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված համախառն գումարներ	Զուտ գումարը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցումից հետո	Հիմնական հաշվանցման և համանման պայմանագրերի ներքո հաշվանցման ենթակա գումարներ՝ չհաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում		Զուտ ազդեցության չափը
ԱԿՏԻՎՆԵՐ						
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ						
Տոկոսադրույքի սվոփ	83,236	(1,736)	81,500	81,500	-	-
Արժութային սվոփ	76,880	-	76,680	76,680	-	-
Ներդրումային արժեթղթեր						
Հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրեր այլ բանկերի հետ	38,747,711	-	38,747,711	38,747,711	-	-
Հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրեր	7,616,833	-	7,616,833	7,616,833	-	-
Ընդամենը հիմնական հաշվանցման և համանման պայմանագրերի ներքո հաշվանցման ենթակա ակտիվներ	**46,524,660**	**(1,736)**	**46,522,724**	**46,522,724**	**-**	**-**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ						
Բանկերից ներգրավված միջոցներ						
Վաճառքի և հետգնման պայմանագրեր այլ բանկերի հետ	-	-	-	-	-	-
Ընդամենը հիմնական հաշվանցման և համանման պայմանագրերի ներքո հաշվանցման ենթակա պարտավորություններ	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**

40 Կապիտալի կառավարում

Խմբի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են՝ ապահովել Խմբի կապիտալի համարժեքությունը վերահսկողի կողմից սահմանված պահանջներին, և Խմբի կայուն վարկային վարկանիշի և ուժեղ կապիտալի ցուցանիշների պահպանումը՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու նպատակով:

Խումբը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումներ տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Խումբը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարվա համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

ՀՀ Կենտրոնական բանկը սահմանում և վերահսկում է Բանկի կապիտալի նկատմամբ պահանջները:

Խումբը որպես կապիտալ է ճանաչում այն հոդվածները, որոնք կարգավորման համաձայն սահմանվում են որպես կապիտալ վարկային կազմակերպությունների համար: ՀՀ ԿԲ-ի՝ կապիտալի նկատմամբ պահանջների համաձայն, որոնք հիմնված են Բազելյան համաձայնագրի դրույթների վրա, Բանկի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցությունը (նորմատիվային կապիտալի գործակից) պետք է գերազանցի սահմանված նվազագույն մակարդակը:

Առանցքային ղեկավար անձնակազմին ներքին կարգով տրամադրված տեղեկատվության հիման վրա՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի կողմից կառավարվող կապիտալի չափը կազմել է 210,337,162 հազ. ՀՀ դրամ (2024թ.՝ 177,145,472 հազ. ՀՀ դրամ), առաջին մակարդակի կապիտալը կազմել է 175,840,275 հազ. ՀՀ դրամ (2024թ.՝ 141,555,340 հազ. ՀՀ դրամ), ընդհանուր կարգավորող կապիտալը կազմել է 199,097,798 հազ. ՀՀ դրամ (2024թ.՝ 161,023,841 հազ. ՀՀ դրամ): Խումբը և Բանկը 2025թ. և 2024թ. ընթացքում պահպանել են համապատասխանությունը կապիտալի արտաքին բոլոր պահանջներին:

41 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

2026թ. հունվարի 15-ից Խումբը մեկնարկել հրապարակային առաջարկի միջոցով պարտատոմսերի տեղաբաշխումը՝ 10,000,000,000 (տասը միլիարդ) ՀՀ դրամ անվանական արժեքով և 10,000,000 (տասը միլիոն) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, համապատասխանաբար 10.5% և 5.5% արժեկտրոնային տոկոսադրույքներով: Պարտատոմսերի մարման ժամկետը 60 ամիս է: Տեղաբաշխումը կշարունակվի մինչև 2026թ. մայիսի 15-ը ներառյալ: 2026թ. փետրվարիի 23-ից Խումբը մեկնարկել հրապարակային առաջարկի միջոցով պարտատոմսերի ևս մեկ տեղաբաշխում՝ 10,000,000,000 (տասը միլիարդ) ՀՀ դրամ անվանական արժեքով, համապատասխանաբար 10.25% արժեկտրոնային տոկոսադրույքով: Պարտատոմսերի մարման ժամկետը 60 ամիս է: Տեղաբաշխումը կշարունակվի մինչև 2026թ. հունիսի 23-ը ներառյալ: 2026թ. հունվարի 15-ից մինչև ապրիլի 22-ը ընկած ժամանակահատվածում Խումբը տեղաբաշխել է ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով պարտատոմսեր՝ համապատասխանաբար 20,000,000,000 ՀՀ դրամ և 9,692,300 ԱՄՆ դոլար անվանական արժեքով: Պարտատոմսերի տեղաբաշխումը շարունակվում է այս հաշվետվության հաստատման ամսաթվի դրությամբ:

Հաշվետու ժամանակաշրջանից հետո կամ հաշվետվության ամսաթվի դրությամբ տեղի չեն ունեցել այլ նշանակալի իրադարձություններ, որոնք ենթակա են բացահայտման այս ֆինանսական հաշվետվություններում:

42 Հիմնական տերմինները

Հապավում	Սահմանում
EAD	Պարտազանցման ժամանակ գործիքի արժեքը
EIR	Արդյունավետ տոկոսադրույք
EURIBOR	Եվրոյի միջբանկային առաջարկի դրույքաչափ

.

Հապավում	Սահմանում
FVOCI	Իրական արժեքով՝ Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ
FVTPL	Իրական արժեքով՝ Շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ
FX	Արտարժույթի փոխարկում
IPO	Նախնական հրապարակային առաջարկ
IRR	Տնտեսական շահութաբերության ներքին դրույք
LGD	Պարտազանցման ժամանակ կորստի չափը
LIBOR	Լոնդոնի միջբանկային առաջարկի դրույքաչափ
PD	Պարտազանցման տեղի ունենալու հավանականություն (PD)
PIT	Ժամանակային կետ
POCI	Ձեռքբերված կամ ստեղծված վարկային արժեզրկված
SICR	Վարկային ռիսկի զգալի աճ
SOFR	Ապահովված օվերնայթ ֆինանսավորման տոկոսադրույք
SPPI	Միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ
ԱՄՍ	Աուդիտի միջազգային ստանդարտներ
ԱՎԿ	Ակնկալվող վարկային կորուստ
ՀՀ ԿԲ	Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ
ՀՀՄՍԽ	Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդ
ՖՀՄՍ	Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան՝

«ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ

ՖՀՄՍ համապատասխան՝
Համախմբված ֆինանսական
հաշվետվություններ և
Անկախ աուդիտորական եզրակացություն

31 դեկտեմբերի 2024թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն 1
Ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն 2
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն 3
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն 4
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն 5

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ներածություն. 6
1 Խմբի գործառնական միջավայրը 7
2 Պատրաստման հիմքը 8
3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական դրույթներ 9
4 Առանցքային հաշվապահական դատողություններ և գնահատումներ 17
5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին 18
6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ 19
7 Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն 22
8 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 26
9 Ածանցյալ ֆինանսական գործիքներ 27
10 Պահանջներ բանկերի նկատմամբ 28
11 Ներդրումային արժեթղթեր 29
12 Հաճախորդներին տրված վարկեր 32
13 Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ 51
14 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ 56
15 Հարկում 58
16 Վարկային կորստի ծախս/ (հակադարձում) 60
17 Այլ ակտիվներ 61
18 Բանկերի նկատմամբ պահանջներ 62
19 Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ 62
20 Թողարկված պարտքային արժեթղթեր 62
21 Այլ փոխառու միջոցներ 63
22 Ստորադաս վարկեր 64
23 Այլ պարտավորություններ 64
24 Կապիտալ 64
25 Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ 66
26 Պայմանական դեպքեր և պարտավորություններ 67
27 Զուտ տոկոսային եկամուտ 70
28 Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ 70
29 Այլ եկամուտներ 71
30 Այլ գործառնական ծախսեր 71
31 Այլ ընդհանուր վարչական ծախսեր 71
32 Այլ արժեզրկման և պահուստների (ծախս)/հակադարձում 72
33 Ռիսկերի կառավարում 72
34 Իրական արժեքի չափում 88
35 Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն 94
36 Կապակցված կողմերի բացահայտումներ 97
37 Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում 99
38 Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորությունների փոփոխություններ 100
39 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում 101
40 Կապիտալի կառավարում 103
41 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր 103
42 Հիմնական տերմինները 104

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ Բաժնետերերին և Խորհրդին

Մեր կարծիքը

Մեր կարծիքով, համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ «Բանկ») և նրա դուստր ձեռնարկությունների (այսուհետև միասին՝ «Խումբ») համախմբված ֆինանսական վիճակն առ 2024թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև Խմբի՝ այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքները և համախմբված դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ՖՀՄՍ հաշվապահական ստանդարտների:

Աուդիտի առարկան

Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են.

- ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունն՝ առ 31 դեկտեմբերի 2024թ.,
- այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, և
- համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության էական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Կարծիքի հիմքը

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Անկախություն

Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից թողարկված՝ Պրոֆեսիոնալ հաշվապահների միջազգային վարքագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտների) («ՀԷՄՄԽ Վարքագիրք») սկզբունքների, ինչպես նաև էթիկական պահանջների, որոնք կիրառելի են Հայաստանի Հանրապետությունում համախմբված ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ: Մենք կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այս պահանջների և ՀԷՄՄԽ Վարքագրքին համապատասխան:

«ՓրայսուոթերհաուսՔուփերս Արմենիա» ՍՊԸ
Հայաստան, ք. Երևան, Կազգեն Սարգսյան 2, ԿԱՄՄԱ՚ բիզնես կենտրոն, 8-րդ հարկ
http://www.pwc.com/am Հեռ. (+374 10) 51 21 51, Ֆաքս. (+ 374 10) 52 10 00, www.pwc.com/am

Մեր աուդիտի մոտեցումը

Նկարագիր



- Խմբի ընդհանուր էականությունը՝ 1,757,000 հազ. ՀՀ դրամ, որը ներկայացնում է մոտավորապես 5%-ը Խմբի 2024թ. շահույթ մինչև շահութահարկով հարկումից (ԵՄՀ):
- Մենք ամբողջ ծավալով աուդիտորական աշխատանք ենք իրականացրել Խմբի երկու նշանակալի բաղադրիչների գծով: Երրորդ բաղադրիչը գնահատվել է որպես ոչ նշանակալի, որի գծով համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի տեսանկյունից էական գործարքներ տեղի չեն ունեցել: Մեր աուդիտի շրջանակը ապահովել է մոտավորապես 100% ծածկույթ Խմբի տոկոսային և միջնորդավճարների եկամտի գծով, մոտավորապես 100% ծածկույթ Խմբի շահույթ մինչև շահութահարկով հարկումի գծով և մոտավորապես 100% ծածկույթ Խմբի ընդամենը ակտիվների գծով:
- Համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում առավել բարձր նշանակալիություն ունեցող աուդիտի հարց է համարվել հաճախորդներին տրված վարկերի գծով ակնկալվող վարկային կորստի պահուստը:

Մեր աուդիտի նախագծման շրջանակներում մենք սահմանել ենք էականությունը և գնահատել ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը: Մասնավորապես, մենք դիտարկել ենք այն ոլորտները, որտեղ ղեկավարությունը կատարել է սուբյեկտիվ դատողություններ, օրինակ, նշանակալի հաշվապահական գնահատումների առնչությամբ, որոնք պահանջում են ենթադրություններ և իրենց էությամբ անորոշ ապագա իրադարձությունների դիտարկում: Ինչպես մեր բոլոր աուդիտների դեպքում, մենք նաև անդրադարձել ենք ղեկավարության կողմից ներքին հսկողության շրջանցման ռիսկերին, ներառյալ, ի թիվս այլ հարցերի, դիտարկել ենք, թե արդյոք առկա են կողմնակալության վկայություններ, որոնք պարունակում են խարդախության հետևանքով էական խեղաթյուրման ռիսկ:

Էականություն

Մեր աուդիտի շրջանակի վրա ազդեցություն է ունեցել մեր կողմից էականության սկզբունքի կիրառումը: Աուդիտը նախագծվում է այնպես, որ ծեռք բերվի ողջամիտ հավաստիացում առ այն, թե արդյոք համախմբված ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից: Խեղաթյուրումներ կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով: Խեղաթյուրումները համարվում են էական, եթե կարելի է ողջամտորեն ակնկալել, որ դրանք առանձին, կամ միասին վերցված, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա օգտագործողների կողմից կայացվող տնտեսական որոշումների վրա:

Մեր մասնագիտական դատողության հիման վրա մենք սահմանել ենք էականության որոշակի քանակական շեմեր, ներառյալ՝ Խմբի գծով ընդհանուր էականությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, որպես ամբողջություն, ինչպես ներկայացված է ստորև բերված աղյուսակում: Դրանց միջոցով, որակական նկատառումների հետ միասին, մենք որոշել ենք մեր աուդիտի շրջանակը և մեր աուդիտորական ընթացակարգերի բնույթը, ժամկետները և ծավալը, և գնահատել ինչպես առանձին, այնպես էլ միասին վերցված՝ խեղաթյուրումների ազդեցությունը, եթե առկա է, համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա, որպես ամբողջություն:

Հարի գծով ընդհանուր հանդանարժեք	1,757,000 հազ. ՀՀ դրամ
Ինչպես է այն որոշվել	տարեկան ԸՄՁ-ի 5%-ը
Հանդանարժեքի հաշվարկման մեթոդի որոշման հիմնավորումը	Մենք որպես հաշվառական մեթոդ ընտրել ենք ԸՄՁ-ն, քանի որ, մեր կարծիքով, դա ամենահարմար չափորոշիչն է, որի միջոցով հնարավոր կլինի կատարողական արդյունքները առավել հաճախ գնահատել են օգտագործողների կողմից, և համապատասխանում է հաշվետվողականության ընդունված չափանիշը: Մենք ընտրել ենք 5%-ը, ինչը համապատասխանում է ֆինանսական ծառայությունների ոլորտի՝ չափազանց մեծ ազդեցություն ունեցող ընկերությունների համար օգտագործվող ընդհանուր ընդունված շեմերին:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, ըստ մեր մասնագիտական դատողության, առավել նշանակալի են եղել ընթացիկ ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ընդհանուր առմամբ համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում և հաշվետվությունների վերաբերյալ կարծիքի ձևավորման համար, և մենք չենք արտահայտում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ:

Աուդիտի առանցքային հարց	Ինչպես է աուդիտի առանցքային հարցը ոլորտվել մեր աուդիտի ընթացքում
Հաճախորդներին տրված վարկերի գծով սպասվող վարկային կորստի ապահովում Տես Ծանոթագրություն 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական դրույթներ, Ծանոթագրություն 4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գծով առանցքային գնահատականներ և դատողություններ և Ծանոթագրություն 12. Հաճախորդներին տրված վարկեր Մենք առանձնահատուկ անդրադարձել ենք այս ոլորտին, քանի որ հաճախորդներին տրված վարկերի գծով ակնկալվող վարկային կորուստների («ԱՎԿ») պահուստների վերաբերյալ դեկավարության գնահատումները և ենթադրությունները բարդ են և պահանջում են դատողության զգալի աստիճան: Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», դեկավարությունից պահանջվում է գնահատել ԱՎԿ պահուստ՝ հաշվապատասխան այն կորուստների, որոնք ակնկալվում է, որ տեղի կունենան Փուլ 1 վարկերի գծով առաջիկա 12 ամիսների ընթացքում, և Փուլ 2 և 3 վարկերի գծով ողջ տևողության ընթացքում: Դեկավարությունը նաև հաշվի է առնում ապագա տարբեր մակրոտնտեսական պայմանների ազդեցությունը ԱՎԿ-ի որոշման հարցում: Դեկավարությունը մշակել և ներդրել է մի շարք մոդելներ՝ ՖՀՄՍ 9-ի պահանջներին և կատարման քաղաքականությանը համապատասխանության ապահովման նպատակով: Առավել նշանակալից ոլորտները վերաբերում են ԱՎԿ-ի որոշման համար օգտագործվող չափորոշիչների գնահատման առնչությամբ դեկավարության կողմից կիրառված մոդելի մեթոդաբանությունների և առանցքային դատողությունների և ենթադրությունների տեղին լինելուն: Սա ներառում է. • Վարկային ռիսկի նշանակալի աճի բացահայտման համար կիրառվող դատողության չափանիշները, ներառյալ՝ հսկի պորտֆելներին առնչվող վարկատուների վարկունակության որակական գնահատումը. • Առանցքային ենթադրությունները, որոնք կիրառվել են դեֆոլտի դեպքում կորստի և դեֆոլտի հավանականության որոշման ժամանակ, և. • Դեռևս պարզին տեղեկատվության հետ կապված առանցքային ենթադրությունների գնահատումը, ներառյալ սցենարային կշիռների և մակրոտնտեսական փոփոխականների տեղին լինելը:	Մենք գնահատել ենք դեկավարության կողմից մշակված ՖՀՄՍ 9-ի ներքո ԱՎԿ մոդելավորման մեթոդաբանությունների տեղին լինելը՝ ներգրավելով փորձագին ռիսկերի մոդելավորման մեր մասնագետներին և կիրառելով ոլորտի մեր գիտելիքները: Մասնավորապես, գնահատել ենք վարկային ռիսկի նշանակալի աճը արձանագրելու նպատակով դեկավարության կողմից սահմանված դատողության չափանիշները (կորպորատիվ, ՓՄՁ և մանրածախ պորտֆելների համար կիրառելի), ինչպես նաև դեֆոլտի դեպքում կորստի և դեֆոլտի հավանականության որոշման ժամանակ կիրառված առանցքային դատողությունները և ենթադրությունները: Մենք պատկերացում ենք ձեռք բերել և գնահատել ենք ԱՎԿ պահուստի որոշման հիմնական հսկողությունների նախագծման վերաբերյալ, և ստուգել ենք դրանց գործառնական արդյունավետությունը: Այդ հսկողությունները ներառում էին, մասնավորապես. • Մոդելի կատարողական արդյունքների մշտադիտարկման նկատմամբ հսկողությունը, ներառյալ քաղաքականության և մոդելների պարբերական վերանայումները, փաստացի արդյունքների համեմատ մոդելի գնահատումների ստուգումները և մոդելի մեթոդաբանության փոփոխությունների հաստատումը, այդ թվում՝ հիմնական չափորոշիչների հաշվարկների նկատմամբ հսկողությունը հաշվարկային գործիքի միջոցով. • ԱՎԿ հաշվարկման և արդյունքների վերլուծության նկատմամբ հսկողությունը, և. • ԱՎԿ հաշվարկների համար տվյալների փոխանցման նկատմամբ հսկողությունը: Ի լրումն, մենք իրականացրել ենք ստորև նկարագրված բովանդակային ընթացակարգերը: Մենք կատարել ենք ԱՎԿ հաշվարկի անկախ ստուգում և գնահատել ենք ԱՎԿ-ի հաշվարկների համապատասխանությունը հաստատված մոդելային մեթոդաբանություններին: Մենք դեկավարության հետ քննարկել ենք մակրոտնտեսական մոդելների համապատասխանության, ինչպես նաև յուրաքանչյուր մակրոտնտեսական սցենարի համար կիրառված կշիռների հիմնավորվածությունը: Մենք նաև գնահատել ենք բացահայտումների ճշգրտությունն ու ամբողջականությունը:

pwc

Ինչպես ենք մենք մշակել խմբի աուդիտի շրջանակը

Մենք խմբի աուդիտի շրջանակը մշակել ենք այնպես, որ իրականացվող ընթացակարգերի ծավալը բավարար լինի կարծիք արտահայտելու համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ, որպես ամբողջություն՝ հաշվի առնելով խմբի կառուցվածքը, հաշվապահական հաշվառման գործընթացները և հսկողությունը, ինչպես նաև խմբի գործունեության ոլորտը:

Խումբն իր գործունեությունը հիմնականում իրականացնում է Հայաստանում: Խմբի հիմնական գործառնությունները առնչվում են բանկային և լիզինգային ոլորտներին: Բանկային գործունեությունը կազմում է խմբի ամենամեծ բաղադրիչը, որը ներկայացնում է խմբի ընդամենը ակտիվների մոտավորապես 88%-ը և խմբի շահույթ՝ մինչև շահութահարկով հարկումի 71%-ը: Խմբի մնացած գործունեությունը հիմնականում վերագրելի է լիզինգային բիզնեսին: Խմբի աուդիտի թիմը կատարել է անհրաժեշտ աուդիտորական ընթացակարգեր ինչպես բանկային, այնպես էլ լիզինգային բաղադրիչների գծով:

Մեր աուդիտի մոտեցումը և թիմը ձևավորվել են խմբի կառուցվածքն արտացոլելու տեսանկյունից: Երկու նշանակալի հաշվետու միավորների նկատմամբ իրականացված մեր ընթացակարգերի հիման վրա մեր աուդիտի շրջանակը և ծածկույթը կազմել է խմբի տոկոսային և միջնորդավճարների եկամտի մոտավորապես 100%-ը, խմբի շահույթ մինչև շահութահարկով հարկումի գծով մոտավորապես 100%-ը և խմբի ընդամենը ակտիվների մոտավորապես 100%-ը:

Այլ տեղեկատվություն

Այլ տեղեկատվության համար պատասխանատու է ղեկավարությունը: Այլ տեղեկատվությունը ներառում է Տարեկան հաշվետվությունը (առանց համախմբված ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացության), որը ակնկալվում է, որ մեզ կներկայացվի այս աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի ներառում այլ տեղեկատվությունը, և մենք այդ տեղեկատվության վերաբերյալ չենք արտահայտելու որևէ տեսակի հավաստիացման գծով եզրահանգում:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի առնչությամբ մեր պատասխանատվությունն է՝ ծանոթանալ վերոնշյալ այլ տեղեկատվությանը, դրա հասանելիության դեպքում, և այդպիսով դիտարկել, թե արդյոք առկա է էական անհամապատասխանություն այլ տեղեկատվության և համախմբված ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում մեր կողմից ձեռք բերված տվյալների միջև, և՝ արդյոք այլ տեղեկատվությունը առերևույթ պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Եթե Տարեկան հաշվետվությանը ծանոթանալու արդյունքում մենք եզրահանգենք, որ դրանում առկա է էական խեղաթյուրում, մեզնից պահանջվում է այդ խնդիրը հաղորդել կառավարման օղակներում գտնվող անձանց:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունները համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ հաշվապահական ստանդարտների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է խմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու, համապատասխան դեպքերում՝ անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և խմբի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել խումբը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները՝ ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալների հետևանքով առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կբացահայտի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով, և համարվում են էական, երբ ողջամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կարող են ազդեցություն ունենալ օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի շրջանակներում, մենք աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն, մենք.

- Որոշում և գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումների ռիսկը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում՝ մեր աուդիտորական կարծիքը արտահայտելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի բարձր է սխալի հետևանքով առաջացածի համեմատ, քանի որ խարդախությունը կարող է ներառել դավադրություն, կեղծիք, դիտավորյալ բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին վերահսկողության շրջանցում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Խմբի գործունեության անընդհատությունը պահպանելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մենք պարտավոր ենք մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են հանգեցնել նրան, որ Խումբը դադարեցնի անընդհատության սկզբունքով գործունեությունը:
- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, այդ թվում՝ բացահայտումները ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Պլանավորում և իրականացնում ենք Խմբի աուդիտը ձեռք բերելու բավարար չափով պատշաճ աուդիտորական ապացույցներ Խմբի կազմում գտնվող կազմակերպությունների կամ տնտեսական միավորների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ որպես

pwc

համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու հիմք: Մենք պատասխանատու ենք խմբի աուդիտի նպատակով իրականացվող աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկողության և ստուգման համար: Մենք հանդիսանում ենք պատասխանատու միայն մեր արտահայտած աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդում ենք աուդիտորական առաքադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Մենք նաև հայտարարում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց, որ մենք կատարել ենք անկախության վերաբերյալ համապատասխան էթիկական պահանջները, և նրանց հաղորդում ենք բոլոր այն հարաբերությունների և այլ հարցերի վերաբերյալ, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, ազդում են մեր անկախության վրա, և, անհրաժեշտության դեպքում, ձեռնարկվում են գործողություններ՝ սպառնալիքները վերացնելու կամ երաշխիքներ կիրառելու ուղղությամբ:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդված հարցերից մենք առանձնացնում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում և, հետևաբար հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ կարգավորող ակտերով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ, խիստ բացառիկ հանգամանքներում, մենք գտնում ենք, որ տվյալ հարցը աուդիտորական եզրակացությամբ ներկայացնելը նպատակահարմար չէ, քանի որ կարելի է ողջամտորեն ակնկալել, որ նման ներկայացման բացասական հետևանքները կգերակշռեն դրա հանրային շահ պարունակող օգուտները:

Այս Անկախ աուդիտորական եզրակացության համար հիմք հանդիսացած աուդիտորական աշխատանքների գծով պատասխանատու աուդիտոր է հանդիսանում Լևան Կանկավան:

Լևան Կանկավա
Պատասխանատու աուդիտոր

Նինո Կադագիշվիլի
Տնօրեն

16 ապրիլի 2025թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն

PricewaterhouseCoopers Armenia LLC

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	106,030,069	78,159,849
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	9	158,180	199,957
Պահանջներ բանկերի նկատմամբ	10	81,482,428	99,410,514
Ներդրումային արժեթղթեր	11		
- Բանկի կողմից պահվող		62,108,609	21,422,936
Հաճախորդներին տրված վարկեր	12	536,210,032	455,199,337
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	13	93,105,821	83,406,426
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	37	2,044,092	1,775,530
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	14	29,114,084	27,110,978
Այլ ակտիվներ	17	21,443,834	17,108,253
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**931,697,149**	**783,793,780**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Բանկերից ներգրավված միջոցներ	18	462,797	1,152,894
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	19	584,122,036	503,231,650
Թողարկված պարտքային արժեթղթեր	20	39,408,576	21,087,118
Այլ փոխառու միջոցներ	21	110,883,860	95,125,094
Ընթացիկ հարկային պարտավորություններ		3,313,374	3,812,792
Հետաձգված հարկային պարտավորություններ	15	505,767	732,149
Այլ պարտավորություններ	23	16,927,858	12,880,467
Ստորադաս վարկեր	22	12,632,502	12,661,577
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**768,256,770**	**650,683,741**
ԿԱՊԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ	24	89,775,000	55,000,000
Էմիսիոն եկամուտ	24	3,811,978	1,750,000
Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գծով պահուստ	25	3,517,422	3,517,422
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ		3,757,943	3,909,911
Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ		304,799	151,526
Գլխավոր պահուստ		13,466,250	8,250,000
Չբաշխված շահույթ		48,806,987	60,531,180
Ընդամենը կապիտալ		**163,440,379**	**133,110,039**
ԸՆԴԱՄԵՆԸ ԿԱՊԻՏԱԼ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**931,697,149**	**783,793,780**

Հաստատվել է հրապարակման համար և ստորագրվել է Բանկի տնօրինության անունից 2025թ. ապրիլի 16-ին:

Հակոբ Ավդալբեգյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Արմեն Հակոբյան
Գլխավոր հաշվապահ

Հազ. ՀՀ դրամ	**Ծան.**	**2024թ.**	**2023թ.**
Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ	27	79,644,047	68,851,092
Այլ տոկոսային եկամուտ	27	12,524,767	10,445,440
Տոկոսային ծախս	27	(37,604,761)	(32,040,310)
Զուտ տոկոսային եկամուտ		**54,564,053**	**47,256,222**
Վարկային կորստի (ծախս)/ հակադարձում	16	(2,350,038)	565,530
Զուտ տոկոսային եկամուտ վարկային կորստի գծով ծախսից հետո		**52,214,015**	**47,821,752**
Միջնորդավճարների գծով եկամուտ	28	14,706,808	13,097,686
Միջնորդավճարների գծով ծախս	28	(6,599,484)	(5,014,623)
Զուտ օգուտ՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից		581,991	400,019
Զուտ օգուտ արտարժույթի առքուվաճառքից		4,995,441	5,333,764
Զուտ օգուտ/(վնաս) փոխարժեքային տարբերությունից		58,725	(27,845)
Ասոցիացված կազմակերպությունների շահույթի մասնաբաժին	37	1,211,887	1,019,338
Այլ արժեզրկման և պահուստների (ծախս)/հակադարձում	32	(88,096)	2,783,748
Այլ եկամուտ	29	837,153	853,917
Ոչ տոկոսային եկամուտ		**15,704,425**	**18,446,004**
Անձնակազմի գծով ծախսեր		(21,022,475)	(20,325,827)
Մաշվածություն և ամորտիզացիա	14	(3,828,836)	(3,312,788)
Այլ գործառնական ծախսեր	30	(2,562,445)	(3,032,516)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	31	(5,360,949)	(4,831,447)
Ոչ տոկոսային ծախս		**(32,774,705)**	**(31,502,578)**
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը		**35,143,735**	**34,765,178**
Շահութահարկի գծով ծախս	15	(6,378,646)	(6,372,416)
Հաշվետու տարվա շահույթ		**28,765,089**	**28,392,762**
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ			
Բազային և նոսրացված, մայր կազմակերպության բաժնետերերին վերագրելի, ՀՀ դրամ	24	5,182.44	5,162.32

Հազ. ՀՀ դրամ	**Ծան.**	**2024թ.**	**2023թ.**
Հաշվետու տարվա շահույթ		**28,765,089**	**28,392,762**
Այլ համապարփակ եկամուտ			
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների գծով իրական արժեքի փոփոխություն		95,083	(981,961)
Ներառյալ՝ ակնկալվող վարկային կորուստների պահուստի փոփոխությունները		(25,386)	(735,920)
Շահութահարկ այլ համապարփակ եկամտի տարրերի գծով	15	(17,115)	176,753
Հաջորդ ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող զուտ այլ համապարփակ եկամուտ/(վնաս)		**77,968**	**(805,208)**
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքների գծով (վնաս)/օգուտ		(861)	705
Շահութահարկ այլ համապարփակ եկամտի տարրերի գծով	15	155	(127)
Ընդամենը հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ (վնաս)/եկամուտ		**(706)**	**578**
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող ասոցիացված կազմակերպություններ			
Ասոցիացված կազմակերպությունների այլ համապարփակ եկամտի մասնաբաժին	37	76,011	96,166
Շահութահարկ այլ համապարփակ եկամտի տարրերի գծով	15	-	(17,310)
Ընդամենը ասոցիացված կազմակերպությունների այլ համապարփակ եկամտի մասնաբաժին		**76,011**	**78,856**
Տարվա այլ համապարփակ եկամուտ/(վնաս)՝ առանց հարկերի		**153,273**	**(725,774)**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ		**28,918,362**	**27,666,988**

Հազ. ՀՀ դրամ	Բաժնե-տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գծով պահուստ	Հիմնական միջոցների վերագնահատումից աճ	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների վերագնահատման պահուստ	Գլխավոր պահուստ*	Չբաշխված շահույթ	Ընդամենը կապիտալ
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	**55,000,000**	**1,750,000**	**3,076,495**	**4,985,941**	**877,300**	**8,250,000**	**35,462,388**	**109,402,124**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք								
Հաշվետու տարվա շահույթ	-	-	-	-	-	-	28,392,762	28,392,762
Այլ համապարփակ վնաս	-	-	-	-	(725,774)	-	-	(725,774)
Հիմնական միջոցների վաճառքի արդյունքում վերագնահատման ավելցուկի փոխանցումը չբաշխված շահույթին	-	-	-	(1,076,030)	-	-	1,076,030	-
Գործարքներ սեփականատերերի հետ՝ ուղղակիորեն գրանցված կապիտալում								
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-	-	-	-	(4,400,000)	(4,400,000)
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**(4,400,000)**	**(4,400,000)**
Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ (Ծան. 25)	-	-	440,927	-	-	-	-	440,927
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**55,000,000**	**1,750,000**	**3,517,422**	**3,909,911**	**151,526**	**8,250,000**	**60,531,180**	**133,110,039**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք								
Հաշվետու տարվա շահույթ	-	-	-	-	-	-	28,765,089	**28,765,089**
Այլ համապարփակ եկամուտ	-	-	-	-	153,273	-		**153,273**
Հիմնական միջոցների վաճառքի արդյունքում վերագնահատման ավելցուկի փոխանցումը չբաշխված շահույթին	**-**	**-**	**-**	(151,968)	-	-	151,968	**-**
Գործարքներ սեփականատերերի հետ՝ ուղղակիորեն գրանցված կապիտալում								
Բաժնետիրական կապիտալի համալրում չբաշխված շահույթից	29,925,000	-	-	-	-	-	(29,925,000)	**-**
Բաժնետիրական կապիտալի թողարկում	4,850,000	2,061,978	-	-	-	-	-	**6,911,978**
Գլխավոր պահուստի համալրում	-	-	-	-	-	5,216,250	(5,216,250)	**-**
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-	-	-		(5,500,000)	**(5,500,000)**
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	**34,775,000**	**2,061,978**	**-**	**-**	**-**	**5,216,250**	**(40,641,250)**	**1,411,978**
Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ (Ծան. 25)	-	-	-	-	-		-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**89,775,000**	**3,811,978**	**3,517,422**	**3,757,943**	**304,799**	**13,466,250**	**48,806,987**	**163,440.379**

* Թափանցիկ ներկայացումը բարելավելու նպատակով Գլխավոր պահուստի գումարը ներկայացված է առանձին սյունակով:

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	2024թ.	2023թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Ստացված տոկոսներ (հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով)		75,767,634	65,435,119
Ստացված այլ տոկոսներ		12,524,767	10,445,440
Վճարված տոկոսներ		(36,541,492)	(29,840,347)
Ստացված միջնորդավճարներ		14,706,808	13,097,686
Վճարված միջնորդավճարներ		(6,599,484)	(5,014,623)
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով ածանցյալ ֆինանսական գործիքների գծով զուտ մուտք/(վճարում):		509,248	(663,718)
Զուտ մուտքեր փոխարժեքային տարբերություններից		4,995,441	5,333,764
Վճարված այլ գործառնական ծախսեր		(4,386,019)	(2,985,401)
Ստացված այլ եկամուտ		347,986	854,113
Աշխատավարձ և աշխատակազմին վճարված այլ գումարներ		(20,806,431)	(18,700,666)
Վճարված այլ ընդհանուր վարչական ծախսեր		(5,360,949)	(3,755,177)
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունները		**35,157,509**	**34,206,190**
Գործառնական ակտիվների զուտ (աճ)/ նվազում			
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ		113,203	317,095
Պահանջներ բանկերի նկատմամբ		17,641,851	(48,347,859)
Հաճախորդներին տրված վարկեր		(88,310,951)	(40,369,750)
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ		(9,618,295)	(30,196,753)
Այլ ակտիվներ		(1,280,097)	(1,262,502)
Գործառնական պարտավորությունների զուտ աճ/(նվազում)			
Բանկերի ավանդներ և մնացորդներ		(626,281)	(8,637,177)
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ		86,140,124	71,747,907
Այլ պարտավորություններ		4,502,742	(5,658,758)
Գործառնական գործունեությամբ ստացված/(օգտագործված) զուտ դրամական միջոցներ մինչև շահութահարկը		**43,719,805**	**(28,201,607)**
Վճարված շահութահարկ		(7,121,405)	(7,383,676)
Գործառնական գործունեությամբ ստացված/(օգտագործված) զուտ դրամական միջոցներ		**36,598,400**	**(35,585,283)**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(2,089,494)	(2,444,064)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր		586,500	1,217,572
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում		(52,730,602)	(13,364,866)
Ներդրումային արժեթղթերի վաճառք		12,327,722	16,049,251
Ստացված շահաբաժիններ	37	1,019,336	701,763
(Ներդրումային գործունեությամբ օգտագործված)/ստացված զուտ դրամական միջոցներ		**(40,886,538)**	**2,159,656**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից			
Բաժնետիրական կապիտալի թողարկումից ստացված միջոցներ	24	6,911,978	-
Թողարկված պարտքային արժեթղթերից ստացված միջոցներ	38	18,438,324	18,339,013
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	38	(137,535)	(3,684,744)
Այլ փոխառությունների ներգրավումից ստացված միջոցներ	38	50,390,846	34,345,599
Այլ փոխառությունների մարում	38	(35,940,115)	(27,032,928)
Ստացված ստորադաս վարկեր	38	703,613	4,479,000
Ստորադաս վարկերի մարում	38	(3,957)	-
Վճարված շահաբաժիններ	24	(5,500,000)	(4,400,000)
Ֆինանսական գործունեությամբ ստացված զուտ դրամական միջոցներ		**34,863,154**	**22,045,940**
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(2,681,458)	1,123,992
Արժեզրկման պահուստի փոփոխությունների ազդեցությունը		(23,338)	46,259
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)		**27,870,220**	**(10,209,436)**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբին		**78,159,849**	**88,369,285**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջին	**8**	**106,030,069**	**78,159,849**

Ներածություն

«ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ «Բանկ») մայր կազմակերպությունն է Խմբում, որը բաղկացած է Բանկից և իր դուստր կազմակերպություններից՝ «ԱԿԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ից և «ԱԿԲԱ Տեխնոլաբ» ՍՊԸ-ից (այսուհետ՝ «Խումբ»):

Բանկը հիմնադրվել է 1996թ.-ին, որպես միացյալ սեփականությամբ կոոպերատիվ բանկ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության: 2006թ. այն վերակազմակերպվել է փակ բաժնետիրական ընկերության և վերանվանվել «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ: 2021թ. Բանկը ենթարկվել է ևս մեկ կազմակերպչական ձևի փոփոխության՝ իրավական կառուցվածքը վերափոխելով բաց բաժնետիրական ընկերության, և վերանվանվելով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ: Նույն թվականին Բանկը գործարկել է «Աշխատակիցների բաժնետմասնակցության ծրագիր» և հաջողությամբ ներկայացրել է առաջնային հրապարակային առաջարկ, որից հետո Բանկի բաժնետոմսերը ցուցակվել են Հայաստանի ֆոնդային բորսայում (AMX): Բանկը գործունեություն է իրականացնում ՀՀ Կենտրոնական բանկի (այսուհետ՝ «ԿԲ») կողմից տրված ընդհանուր բանկային լիցենզիայի հիման վրա և հանդիսանում է ՀՀ ավանդների ապահովագրության պետական համակարգի անդամ:

Հիմնական գործունեության նկարագրություն. Բանկն առաջարկում է մի շարք ֆինանսական ծառայություններ, ներառյալ ավանդների ընդունումը, վարկերի տրամադրումը, ներքին և միջազգային վճարումների մշակումը, դեբետային և վարկային քարտերի թողարկումն ու ձեռքբերումը, տարադրամի փոխանակումը և այլ բանկային ծառայություններ ինչպես մանրածախ, այնպես էլ կորպորատիվ հաճախորդներին: Գլխամասային գրասենյակը գտնվում է Երևանում: Բանկն ունի 65 մասնաճյուղ Երևանում և Հայաստանի այլ մարզերում:
Իրավաբանական հասցեն և գործունեության վայրը. Բանկի գրանցման իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 0002, Արամի փողոց 82-84:

Դուստր ձեռնարկություններ.
• **«ԱԿԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ.** հիմնադրվել է 2003թ.-ի մարտի 30-ին որպես փակ բաժնետիրական ընկերություն Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Ընկերության հիմնական գործունեությունը ֆինանսական վարձակալության գծով գործառնություններն են իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների հետ: Այն ունի ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տրված վարկային կազմակերպության լիցենզիա և ամբողջությամբ պատկանում է Բանկին:
• **«ԱԿԲԱ ՏԵԽՆՈԼԱԲ» ՍՊԸ.** Հիմնադրվել է 2021թ. դեկտեմբերի 23-ին և ամբողջությամբ պատկանող այս դուստր ձեռնարկությունը գործում է որպես կրթական կենտրոն, որի նպատակն է՝ իրականացնել կրթական ծրագրեր և ներգրավել որակյալ մասնագետների:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերի կառուցվածքը հետևյալն է.

Բաժնետեր	**2024թ. , %**	**2023թ. , %**
«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ	75.00	81.61
Société de Promotion et de Participation pour la Coopération Economique («Proparco»)	10.00	-
Sacam International SAS	2.24	4,55
Այլ	12.76	13.84
Ընդամենը	**100.0**	**100.0**

Բաժնետերերի կառուցվածքը.
- **«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ**. Բանկի ամենախոշոր բաժնետերն է և չունի մեկ վերահսկող կողմ: «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ - հիմնադրվել է 2017թ. մայիսի 6-ին՝ Բանկի նախկին բաժնետերեր հանդիսացող Գյուղական փոխօգնության 10 ասոցիացիաների կողմից, որոնք նախկինում հանդիսանում էին Բանկի ուղղակի բաժնետեր: Այս ասոցիացիաները գործում են որպես ոչ կառավարական կազմակերպություններ (ՀԿ) Հայաստանի 10 մարզերում, ստեղծվել են գյուղատնտեսության զարգացմանը նպաստելու համար և միասին վերցրած ունեն մոտավորապես 75,420 անդամ:
- **«Société de Promotion et de Participation pour la Coopération Economique» («Proparco»).** Ֆրանսիական զարգացման ֆինանսավորման կառույց է, որը հանդիսանում է Զարգացման ֆրանսիական գործակալության («AFD») դուստր ձեռնարկություն, և զբաղվում է զարգացող երկրներում մասնավոր ներդրումների խթանմամբ: Այն աջակցում է այնպիսի ոլորտային

ծրագրերի, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, ենթակառուցվածքները և վերականգնվող էներգիան՝ զարգացող շուկաների տնտեսական աճը խթանելու նպատակով:
- **«SACAM International»-ը** ֆրանսիական օրենսդրության համաձայն հիմնադրված ընկերություն է և ամբողջությամբ պատկանում է «SAS Rue de la Boétie» հոլդինգային ընկերությանը, որը վերահսկում է «Crédit Agricole SA»-ի կապիտալը:
- **Այլ բաժնետերերը** ներառում են իրավաբանական և ֆիզիկական անձինք, ներառյալ աշխատակիցները, որոնք միասին տիրապետում են բաժնետոմսերի մնացած մասին:

Բանկի բաժնետոմսերը ցուցակված են Հայաստանի ֆոնդային բորսայում:

Խումբն ունի ներդրումների պորտֆել և ռազմավարական շահեր: Խմբի նշանակալի գործընկերներից է **«Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն**, որտեղ Խումբին է պատկանում բաժնետոմսերի 49%-ը:

Ներկայացման արժույթ: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով («ՀՀ դրամ»), եթե այլ բան նշված չէ:

1 Խմբի գործառնական միջավայրը

Ընդհանուր

Բնապահպանական, սոցիալական և կառավարում (ԲՍԿ): 2023թ. Խումբն իրականացրել է կլիմայի փոփոխության ազդեցության գնահատում Բանկի գյուղատնտեսական պորտֆելի որակական ցուցանիշների վրա, որի արդյունքների համաձայն, ՀՀ պաշտոնական տվյալներով կլիմայի փոփոխության մինչև 2030թ. կանխատեսումային տվյալները էական ազդեցություն չեն ունենա գյուղատնտեսական վարկերի պորտֆելի որակը բնութագրող փոփոխականների վրա: Քանի որ այս կանխատեսումներում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել, 2024թ, համար լրացուցիչ երկարաժամկետ կանխատեսումային վերլուծությունները անհրաժեշտ չեն համարվել: Այնուամենայնիվ, Խումբը ապագայում կարող է անհրաժեշտության դեպքում վերանայել իր վերլուծությունը:

Պատերազմ Ռուսաստանի և Ուկրաինայի միջև. 2022թ. փետրվարից հետո, Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև ռազմական հակամարտության պատճառով մի շարք երկրներ պատժամիջոցներ սահմանեցին Ռուսաստանի Դաշնության դեմ: Հակամարտությունը ազդում է ոչ միայն երկու երկրների տնտեսական ակտիվության վրա, այլև համաշխարհային տնտեսության վրա: Պատժամիջոցների հետևանքով աշխարհի շատ երկրներում ապրանքների և պարենային ապրանքների գները բարձրացել են, ռեսուրսների մատակարարման միջև հաստատված կապերը խաթարվել են, գնաճը նույնպես ազդում է գների վրա, և վերլուծաբանները կանխատեսում են նաև տնտեսական հետևանքներ համաշխարհային տնտեսության ոլորտների համար:

Ռուսաստան-Ուկրաինա պատերազմի բռնկումից ի վեր ԵՄ արտահանման հոսքերի կողմնորոշվածությունը շարունակաբար ավելի մեծ ծավալով փոխվում է դեպի Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի այլ տնտեսություններ: Այս կողմնորոշվածության փոփոխությունը խթանել է հարակից առևտրային և տրանսպորտային ծառայությունները, կրճատել է մրցակցությունը դեպի Ռուսաստան հայրենական արտադրանքի արտահանման համար և տարածաշրջանում ակտիվացրել է նախկինում պասիվ ներդրումները:

2022թ. մարտից ԵՄ-ի առևտրային պատժամիջոցները գրեթե կիսով չափ կրճատել են բլոկի ապրանքների արտահանումը Ռուսաստան և Բելառուս:

Կարճաժամկետ հեռանկարում հակամարտությունը բանակցային ճանապարհով կարգավորելու հավանականությունը մնում է ցածր, և կարելի է ակնկալել երկարատև պատերազմ և առևտրային պատժամիջոցների շարունակում: Սա, ամենայն հավանականությամբ, երկարատև ազդեցություն կունենա համաշխարհային առևտրի օրինաչափությունների վրա: Առևտրային հոսքերի փոփոխությունը և տնտեսական ակտիվության ներհոսքը Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում կայուն ազդեցություն կունենա ենթակառուցվածքների զարգացման, ՏՏ և արտադրության ոլորտների վրա: Կառավարությունները պետք է զգուշորեն հավասարակշռեն Ռուսաստանի հետ կապերի պահպանման տնտեսական օգուտները՝ երկրորդական պատժամիջոցներից խուսափելու համար:

Թեև Ռուսաստանից դրամական փոխանցումների ներհոսքի անկումը շարունակվում է, Հայաստանի տնտեսությունը 2024թ. գրանցել է կայուն աճ՝ 5.9% (2023թ.՝ 8.7%): Ըստ տնտեսության ոլորտների վերլուծելիս՝ տնտեսական ակտիվությունը կշարունակի պայմանավորված լինել շինարարության, առևտրի և արդյունաբերության ոլորտների աճով:

Խումբը իր PD-ի կանխատեսումները և ԱՎԿ-ի հաշվարկները պատրաստելիս հաշվի է առել վերը նշված դիտարկումներն ու ակնկալիքները:

Հայաստանը վերջին տարիներին ենթարկվել է մի շարք էական սոցիալ-քաղաքական և տնտեսական ցնցումների, ընդ որում, 2020թ.՝ երկակի ուժով՝ հաշվի առնելով COVID-19 համավարակի մարտահրավերները և Ադրբեջանի հետ լարվածության մեծացումը: Առանձնահատուկ ուշադրության արժանի իրադարձություններից է 2023թ. ավելի քան 100,000 էթնիկ հայերի ներհոսքը Լեռնային Ղարաբաղից Հայաստան՝ պայմանավորված անվտանգային լարվածության աճով՝ Ադրբեջանի կառավարության կողմից Լեռնային Ղարաբաղը լիովին վերահսկողության տակ վերցնելու հետևանքով:

Ըստ կարգավորող մարմնի գնահատականների, չնայած վերջին երկու տարիներին թողարկման ճեղքվածքը դրական է եղել, այն այժմ հիմնականում կրճատվել, և ակնկալվում է, որ ՀՆԱ-ն կվերադառնա իր ներուժի մակարդակին: Միևնույն ժամանակ, ԿԲ-ի թողարկման ճեղքվածքի գնահատականները արտացոլում էին ոչ ներառական աճը՝ հաշվի առնելով ապագա տնտեսական պայմանների վերաբերյալ երկարատև անորոշությունները: Այս դինամիկան կապված է ոչ կառուցվածքային աճի հետ, քանի որ վերջին տնտեսական ընդլայնման մեծ մասը կարող է պայմանավորված լինել ժամանակավոր կամ նեղ ոլորտային գործոններով, այլ ոչ թե արտադրողականության, կարողությունների և երկարաժամկետ աճի բաղադրիչների կայուն բարելավմամբ:

Ակնկալվում է, որ 2025թ.-ին գնաճը կհասնի 2.8 տոկոսի՝ տոկոսադրույքների կրճատման և արժույթի թուլացման պատճառով:

Ապագայի կանխատեսումների առումով, թեև տնտեսական հեռանկարը շարունակում է դրական մնալ՝ 2025թ. 5% կայուն աճի կանխատեսումներով, երկարաժամկետ աճը շարունակում է մնալ սահմանափակված՝ ելնելով համակարգային մի շարք խնդիրներից, ինչպիսիք են Հայաստանի կախվածությունը ապրանքների արտահանումից, լոգիստիկ մարտահրավերները և Ադրբեջանի հետ շարունակվող աշխարհաքաղաքական լարվածությունը: Այս գործոնները կշարունակեն ռիսկ ներկայացնել, հատկապես տարածաշրջանային անվտանգության զարգացող դինամիկայի ներքո:

Fitch Ratings-ը հաստատել է Հայաստանի երկարաժամկետ արտարժույթով թողարկողի դեֆոլտի վարկանիշը (IDR) «BB-»՝ կայուն կանխատեսմամբ, 2025թ. հունվարի 24-ին:
Ընթացիկ և ապագա տնտեսական իրավիճակի երկարաժամկետ ազդեցությունները դժվար է գնահատել, և ղեկավարության ներկա ակնկալիքներն ու գնահատականները կարող են տարբերվել իրական արդյունքներից:

Ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) չափման նպատակով Խումբն օգտագործում է հիմնավորելի կանխատեսումային տեղեկատվություն, ներառյալ մակրոտնտեսական ցուցանիշների պաշտոնական կանխատեսումներ հուսալի աղբյուրներից: Այնուամենայնիվ, ինչպես ցանկացած տնտեսական կանխատեսումներում, այս կանխատեսումների գծով ևս՝ ենթադրությունները և դրանց տեղի ունենալու հավանականությունը բնորոշվում է անորոշության բարձր աստիճանով, ուստի փաստացի արդյունքները կարող են էապես տարբերվել կանխատեսումներից: Ծանոթագրություն 4-ը ներառում է ավելի մանրամասն տեղեկատվություն այն մասին, թե ինչպես է Խումբը կանխատեսումային տեղեկատվությունը ներառել ակնկալվող վարկային կորուստների չափման մոդելներում:

2 Պատրաստման հիմքը

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀՄՍԽ կողմից հրապարակված՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան (այսուհետ՝ «ՖՀՄՍ հաշվառման ստանդարտներ»):

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, փոփոխված՝ իրական արժեքով ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչմամբ,

տարածքների և սարքավորումների (հող, շենք և փոխադրամիջոց) վերագնահատմամբ, ֆինանսական գործիքների՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով ("FVTPL") և իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով դասակարգմամբ («FVOCI») և սովորական բաժնետոմսերի իրական արժեքով դասակարգմամբ՝ աշխատակիցների բաժնեմասնակցության ծրագրի համար: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական սկզբունքները ներկայացված են ստորև: Այդ սկզբունքները հետևողականորեն կիրառվել են այն բոլոր ժամանակաշրջանների համար, որոնք ներկայացված հաշվետվություններում, եթե այլ բան նշված չէ:

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները հասցեագրված են դրանց առաջնային օգտագործողներին, որոնք են՝ ներդրողները, որոնք վարկով տրամադրում կամ հատկացնում են կապիտալ հաշվետու կազմակերպությանը: Այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում ենթադրվել է, որ դրանց առաջնային օգտագործողները տիրապետում են բավարար գիտելիքների բիզնեսի և տնտեսական գործունեության վերաբերյալ և կատարում են տեղեկատվության հանգամանալից վերանայում և վերլուծություն: Այնուամենայնիվ լինում են դեպքեր, երբ նույնիսկ իրազեկ և հանգամանալից օգտագործողները կարող են կարիք ունենալ խորհրդատուի օգնության՝ այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բարդ տնտեսական երևույթների մասին տեղեկատվությունը ըմբռնելու համար:

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների նպատակն է՝ բացահայտել միայն այն տեղեկատվությունը, որը ղեկավարությունը համարում է էական առաջնային օգտագործողների համար: Ղեկավարությունը ձգտում է չնվազեցնել այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հասկանալիությունը՝ էական տեղեկատվությունը ոչ էական տեղեկատվությամբ քողարկելու միջոցով: Հետևաբար, համապատասխան բացահայտումներին վերաբերող ծանոթագրություններում բացահայտվում են միայն հաշվապահական հաշվառման քաղաքականության էական դրույթները, ըստ կիրառելիության:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական դրույթներ

Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում. Ասոցիացված կազմակերպություն-ներում ներդրումները հաշվառվում են բաժնեմասնակցության մեթոդով և սկզբնապես ճանաչվում են ձեռքբերման արժեքով՝ ներառյալ գուդվիլը:

Հաշվեկշռային արժեքի ապագա փոփոխությունները արտացոլում են համախմբումից հետո ասոցիացված կազմակերպության զուտ ակտիվներում Խմբի մասնաբաժնի փոփոխությունները: Խմբի մասնաբաժինը ասոցիացված կազմակերպության շահույթում կամ վնասում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների համախմբված հաշվետվությունում, իսկ պահուստների փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Իրական արժեքի չափում. Խումբը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով պահվող ֆինանսական գործիքները և ոչ ֆինանսական ակտիվները չափում է իրական արժեքով՝ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Իրական արժեքը չափվում է ՖՀՄՍ 13-ի պահանջներին համապատասխան: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքները բացահայտված են Ծանոթագրություն 34-ում:

Սկզբնական ճանաչում. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների բոլոր կանոնավոր գնումներն ու վաճառքները ճանաչվում են գործարքի ամսաթվին, այսինքն՝ այն ամսաթվին, երբ Խումբը պարտավորվում ձեռք բերել ակտիվը կամ պարտավորությունը: Կանոնավոր են համարվում ֆինանսական ակտիվների և պարտավորությունների այնպիսի գնումները կամ վաճառքները, որոնք պահանջում են ակտիվի մատակարարում տվյալ շուկայում գործող նորմերով կամ գործարար սովորույթներով սահմանված ժամկետի ընթացքում:

Սկզբնական չափում. Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական գործիքների դասակարգումը կախված է դրանց պայմանագրային պայմաններից և գործիքների կառավարման բիզնես մոդելից: Ֆինանսական գործիքներն ի սկզբանե չափվում են իրենց իրական արժեքով և որը ճշգրտվում է գործարքին ուղղակիորեն վերագրելի միջնորդավճարների և ծախսերի չափով

այն գործիքների դեպքում, որոնք իրական արժեքով չեն վերագնահատվում շահույթի կամ վնասի միջոցով:

Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական գործիքի իրական արժեքի լավագույն ապացույցը գործարքի գինն է: Եթե Խումբը գտնում է, որ սկզբնական ճանաչման ժամանակ իրական արժեքը տարբերվում է գործարքի գնից, և եթե այդ իրական արժեքը հիմնված է շուկայում նմանատիպ ակտիվի կամ պարտավորության գնանշված գնի վրա, կամ հիմնված է գնահատման տեխնիկայի վրա, որն օգտագործում է միայն դիտարկելի շուկաների տվյալները, ապա սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը ճանաչում է իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերությունը շահույթում կամ վնասում. բոլոր մյուս դեպքերում, ֆինանսական գործիքի սկզբնական չափումը ճշգրտվում է այնպես, որ սկզբնական ճանաչման ժամանակ իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերությունը փոխանցվի ապագա ժամանակաշրջաններին: Սկզբնական ճանաչումից հետո Խումբը ճանաչում է հետաձգված տարբերությունը որպես շահույթ կամ վնաս, միայն այն դեպքում, երբ մուտքային տվյալները դառնում են դիտարկելի կամ եթե գործիքը ապաճանաչվում է:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների չափման կատեգորիաներ. Խումբը դասակարգում է իր բոլոր ֆինանսական ակտիվները՝ հիմնվելով ակտիվների կառավարման բիզնես մոդելի և ակտիվի պայմանագրային պայմանների վրա, չափումն իրականացնելով՝

- Ամորտիզացված արժեքով
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով,
- Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Խումբը իր ածանցյալ և առևտրային պորտֆելը դասակարգում և չափում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Խումբը դասակարգում է Visa C-ի բաժնետոմսերը որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող պարտքային գործիքներ: Խումբը կարող է հաշվառել ֆինանսական գործիքները իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, եթե այդ կերպ վերանում է կամ զգալիորեն նվազեցվում են չափման կամ ճանաչման անհամապատասխանությունները:

Ֆինանսական պարտավորությունները, բացի վարկային հանձնառություններից և երաշխիքների պայմանագրերից, չափվում են ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, երբ դրանք պահվում են վաճառքի համար, ածանցյալ գործիքներ են կամ կիրառվում է իրական արժեքով հաշվառում:

Բանկերի նկատմամբ պահանջները, հաճախորդներին տրված վարկեր, ներդրումային արժեթղթերը չափվում են ամորտիզացված արժեքով

Խումբը չափում է բանկերի նկատմամբ պահանջները, հաճախորդներին տրված վարկեր, ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթերը միայն այն դեպքում, եթե միաժամանակ բավարարվում են հետևյալ երկու պայմանները՝

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ֆինանսական ակտիվները պահել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով.
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և դրա չմարված մասի դիմաց տոկոսների վճարումներ (SPPI):

Այս պայմանների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 4-ում:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ. Խումբը կիրառում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով պարտքային գործիքների դասակարգում, եթե միաժամանակ առկա են հետևյալ երկու պայմանները.

- Գործիքը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ինչպես պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը, այնպես էլ ֆինանսական ակտիվների վաճառքը,
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բավարարում են SPPI ստուգման չափանիշներին:

Երաշխիքներ, ակրեդիտիվներ և վարկային պարտավորություններ. Խումբը տրամադրում է ֆինանսական և կատարողական երաշխիքներ, ակրեդիտիվներ և վարկային պարտավորություններ:
Երաշխիքի պայմանագրերը ֆինանսական հաշվետվություններում սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, որը ստացված վարձատրությունն է: Սկզբնական ճանաչումից հետո ամեն երաշխիքի համար Խմբի պարտավորությունը չափվում է հետևյալ գումարներից առավելագույնի չափով. սկզբնական ճանաչված արժեք՝ հանած կուտակված ամորտիզացիա, և ԱՎԿ պահուստ:

Վարկավորման չօգտագործված պարտավորվածությունները և ակրեդիտիվները պարտավորվածություններ են, որի շրջանակներում պարտավորվածության տևողության ընթացքում Խումբը հաճախորդին պետք է տրամադրի վարկ՝ նախապես սահմանված պայմաններով: Ինչպես ֆինանսական երաշխիքի պայմանագրերի դեպքում՝ այդ պայմանագրերը ընդգրկված են ակնկալվող վարկային կորուստների պահանջների մեջ:

Ֆինանսական վարձակալության համար տրված կանխավճարներ. Խումբը վարձակալներից ստացված կանխավճարները և մատակարարներին տրված կանխավճարները դիտարկում է որպես դրամական հոդվածներ և ճանաչում է դրանց գծով ֆինանսական պարտավորությունները և ֆինանսական ակտիվները:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերադասակարգում. Խումբը չի վերադասակարգում իր ֆինանսական ակտիվները՝ դրանց սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն բացառիկ հանգամանքների, որոնց դեպքում Խումբը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ. Դրամական միջոցներ և դրանց համարժեքները ներառում են կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, բանկերում Նոստրո հաշիվները և ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցները, ներառյալ պարտադիր պահուստները ՀՀ դրամով՝ զերծ պայմանագրային սահմանափակումներից: Երեք ամսից ավելի ժամկետով սահմանափակված միջոցները բացառվում են դրամական միջոցներից և դրանց համարժեքներից, ինչպես ֆինանսական վիճակի մասին, այնպես էլ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում:

Դրամական միջոցները և դրամական միջոցների համարժեքները հաշվառվում են ԱՀ-ում, քանի որ. (i) դրանք պահվում են պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով, և այդ դրամական միջոցների հոսքերն իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և տոկոսագումարի վճարում, և (ii) դրանք չեն որոշված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Պարտադիր դրամական մնացորդներ ԿԲ-ում. ԿԲ-ում պարտադիր դրամական մնացորդները հաշվառվում են ամորտիզացված արժեքով և ներկայացնում են անտոկոս պարտադիր պահուստային ավանդներ, որոնք հասանելի չեն Խմբի ամենօրյա գործունեությունը ֆինանսավորելու համար, և, հետևաբար, չեն համարվում դրամական միջոցների և դրանց համարժեքների մաս դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունում:

Հետգնման ու հակադարձ հետգնման պայմանագրեր և արժեթղթերի գծով փոխառության գործառնություններ. Վաճառքի և հետգնման պայմանագրերը («ռեպո») դիտվում են որպես ապահովված ֆինանսավորման գործարքներ: Վաճառքի և հետգնման պայմանագրերով վաճառված արժեթղթերը շարունակում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում և եթե ստացողը պայմանագրով կամ գործարար սովորույթի համաձայն իրավունք ունի դրանք վաճառել կամ վերագրավադրել, վերադասակարգվում են որպես վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է բանկերի կամ հաճախորդների միջոցների կազմում: Հետադարձ վաճառքի պայմանագրով արժեթղթերի ձեռքբերումը (հակադարձ ռեպո) արտացոլվում է բանկերում տեղաբաշխված միջոցների կամ հաճախորդներին տրված վարկերի կազմում՝ կախված իրավիճակից: Վաճառքի գնի և ձեռք բերման գնի միջև տարբերությունը դիտարկվում է որպես տոկոսային եկամուտ և հաշվեգրվում ռեպո պայմանագրի ժամկետի ընթացքում՝ արդյունավետ եկամտաբերության մեթոդով:

Արժեթղթերը, որոնք փոխառության են տրվել գործընկերներին, շարունակվում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում: Փոխառությամբ ներգրավված

արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում միայն երրորդ անձանց վաճառքի դեպքում: Այս դեպքում առքուվաճառքի գործարքները հաշվառվում են ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում՝ եկամուտների կազմում՝ հանած առևտրային արժեթղթերի հետ կապված գործառնությունների ծախսերը: Այդպիսի արժեթղթերի վերադարձի պարտավորությունը արտացոլվում է առևտրային գործառնությունների գծով պարտավորություններում՝ իրական արժեքով:

Փոխառություններ. Փոխառությունները ներառում են ՀՀ ԿԲ-ի նկատմամբ պարտավորությունները, բանկերի միջոցները, հաճախորդների հաշիվները, այլ փոխառություններ, թողարկված պարտատոմսերը: հաշվետվությունում: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Օգուտները և վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում, երբ փոխառությունները ապաճանաչվում են, ինչպես նաև ամորտիզացիայի գործընթացում:

Ստորադաս վարկեր. Ստորադաս պարտքը հաշվառվում է ամորտիզացված արժեքով:

Թողարկված պարտքային արժեթղթեր. Թողարկված պարտքային արժեթղթերը ներառում են մուրհակները, Խմբի կողմից թողարկված պարտատոմսերը: Պարտքային արժեթղթերը ներկայացվում են ամորտիզացված արժեքով:

Վարձակալություն

Խումբը՝ որպես վարձակալ. Խումբը կիրառել է ճանաչման և չափման միասնական մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների: Խ Խումբը ճանաչում է վարձակալության գծով պարտավորություններ՝ վարձակալության գծով վճարումներ կատարելու համար և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ, որոնք ներկայացնում են պայմանագրի հիմքում ընկած ակտիվները օգտագործելու իրավունքը:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ. Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների գումարը, սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումներ, վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումներ:

Վարձակալության վճարների ներկա արժեքը հաշվարկելիս Խումբը օգտագործում է սկզբնական կիրառման ամսաթվին լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, եթե վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել:

Կարճաժամկետ վարձակալություն և ցածրարժեք ակտիվների վարձակալություն. Խումբը կիրառում է կարճաժամկետ վարձակալությունների ճանաչման բացառությունը կարճաժամկետ վարձակալությունների համար (այն վարձակալությունները, որոնց վարձակալության ժամկետը մեկնարկի ամսաթվի դրությամբ 12 ամիս է կամ դրանից պակաս, և չեն պարունակում գնման օպցիոն): Խումբը կիրառում է նաև ցածրարժեք ակտիվների վարձակալության ճանաչման բացառությունը այն ակտիվների վրա, որոնք համարվում են փոքրարժեք (2,500 հազ. ՀՀ դրամը չգերազանցող):

Գործառնական – Խումբը՝ որպես վարձատու. Վարձակալական եկամուտը ճանաչվում է գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում է այլ եկամտի կազմում համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում, քանի որ գործառնական բնույթի է: Գործառնական վարձակալության բանակցությունների և պայմանավորվածությունների գծով կրած սկզբնավորման ուղղակի ծախսումները ավելացվում են տրամադրված ակտիվի հաշվեկշռային արժեքին և ճանաչվում են որպես ծախս վարձակալության ժամկետի ընթացքում նույն հիմունքով, որը կիրառվում է վարձակալական եկամուտը ճանաչելիս:

Ֆինանսական – Խումբը՝ որպես վարձատու. Ֆինանսական վարձակալության ժամկետի մեկնարկի պահից Խումբը ճանաչում է ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ՝ վարձակալությունում զուտ ներդրումներին հավասար գումարով

Ֆինանսական եկամտի ճանաչումը հիմնված է ժամանակացույցի վրա, որը սահմանում է հաստատուն պարբերական տոկոսադրույք է վարձատուի կողմից վարձակալության ներքո զուտ ներդրումների դիմաց: Վարձակալությունից ստացված ֆինանսական եկամուտը գրանցվում է «Այլ տոկոսային հասույթի» կազմում՝ շահույթում կամ վնասում: Սկզբնական ուղղակի ծախսումները ներառվում են ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների սկզբնական գնահատման մեջ:

Վարկային կորստի պահուստը ճանաչվում է ընդհանուր ԱՎԿ մոդելի համաձայն: ԱՎԿ-ը որոշվում է նույն կերպ, ինչ ամորտիզացված արժեքով չափվող վարկերի և փոխառությունների դեպքում: Տոկոսային եկամուտը ճանաչվում է համախառն հաշվեկշռային արժեքով, բացառությամբ Փուլ 3-ի արժեզրկված վարկերի, որոնց դիմաց տոկոսային եկամուտը ճանաչվում է զուտ հաշվեկշռային արժեքով:

Վերակառուցված/Վերաֆինանսավորված վարկեր. Հնարավորության դեպքում Խումբը փորձում է վերակառուցել վարկերը՝ գրավի առարկայի առգրավման փոխարեն: Դա կարող է տեղի ունենալ վճարումների ժամկետների երկարաձգման կամ նոր պայմաններով վարկային պայմանագրի կնքման միջոցով:

Խումբը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, ինչպիսին է հաճախորդին տրված վարկը, երբ պայմաններն այն աստիճան են վերանայվել, որ այն դարձել է հիմնովին նոր վարձակալություն, և տարբերությունը ճանաչվում է որպես ապաճանաչումից օգուտ կամ վնաս այն չափով, որքանով արժեզրկումից կորուստը դեռ չի ճանաչվել: Նոր ճանաչված վարկերը ակնկալվող վարկային կորուստների չափման նպատակով դասակարգվում են 1-ին փուլում, քանի դեռ նոր վարկը չի համարվում ձեռք բերված կամ ստեղծված արժեզրկված (POCI): Երբ Խումբը գնահատում է՝ արդյոք պետք է ապաճանաչել հաճախորդին տրված վարկը թե ոչ, հաշվի է առնում, մասնավորապես, հետևյալ գործոնները՝

- Վարկի արժույթի փոփոխությունը,
- վարկի գործընկերոջ փոփոխությունը,

Եթե փոփոխությունն այնպիսին է, որ գործիքն այլևս չի բավարարում SPPI չափանիշին:

Այն փոփոխությունների համար, որոնք չեն հանգեցնում ապաճանաչման, Խումբը նաև վերագնահատում է, թե արդյոք եղել է վարկային ռիսկի զգալի աճ կամ արդյոք ակտիվները պետք է դասակարգվեն որպես արժեզրկված: Երբ ակտիվը դասակարգվում է որպես արժեզրկված, այն պետք է մնա 3-րդ փուլում: 3-րդ փուլի վարկերը կարող են վերադասակարգվել, եթե բավարարվեն հետևյալ պայմանները.

1. **Ամսական մարման ժամանակացույցով վարկեր** – Հաճախորդն ամբողջությամբ մարում է ժամկետանց գումարը, այնուհետև կատարում է մայր գումարի և տոկոսների 6 անընդմեջ վճարում՝ համաձայն մարման վերանայված ժամանակացույցի, ընդ որում ոչ ժամկետանց օրերը պետք է գերազանցեն 7 օրացուցային օրը: Բացի այդ, վարկը կարող է վերադասակարգվել միայն այն դեպքում, եթե տվյալ պահին չկան այլ գործոններ, որոնք պահանջում են ավելի խիստ փուլի դասակարգում:
2. **Ճկուն մարման ժամանակացույցով վարկեր** – Հաճախորդն ամբողջությամբ մարում է ժամկետանց գումարը, այնուհետև հաջորդ 6-12 ամիսների ընթացքում կատարում է մայր գումարի և տոկոսների վճարումներ ըստ ժամանակացույցի, ընդ որում ոչ ժամկետանց օրերը պետք է գերազանցեն 7 օրացուցային օրը: Բացի այդ, վարկը կարող է վերադասակարգվել միայն այն դեպքում, եթե տվյալ պահին չկան այլ գործոններ, որոնք պահանջում են ավելի խիստ փուլի դասակարգում:

Եթե վարկի պայմանները բազմաթիվ անգամ ենթարկվել են վերանայման, ապա ամենավերջին վերանայումը կնշանակի փորձաշրջանի սկիզբ: Այդ դեպքում, մարումների ժամանակացույցը վերականգնվում է, և պետք է կատարվեն հաճախորդի բոլոր վարկերի համար պահանջվող վճարումները:

Եթե փորձաշրջանի ընթացքում առաջանում է ուշացում, ապա փորձաշրջանի հաշվարկը վերսկսվում է այն օրվանից, երբ վերսկսվում են ըստ ժամանակացույցի մարումները:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Դուրսգրում Ֆինանսական ակտիվները ամբողջությամբ կամ մասամբ դուրս են գրվում այն ժամանակ, երբ Խումբը սպառել է դրանց վերականգնման բոլոր գործնական հնարավորությունները և եզրակացրել է, որ չկան այդպիսի ակտիվների վերականգնման հիմնավորված ակնկալիքներ: Դուրսգրումն իրենից ներկայացնում է ակտիվի ապաճանաչում: Խումբը կարող է դուրս գրել դեռևս հարկադիր բռնագանձման գործընթացում գտնվող ֆինանսական ակտիվները, այն դեպքում, երբ Խումբը փորձում է բռնագանձել պայմանագրային պարտավորության գումարները՝ առանց վերականգնման ողջամիտ ակնկալիքի:

Եթե դուրս գրվող գումարը գերազանցում է կուտակված կորուստների պահուստը, տարբերությունը նախ ավելացվում է պահուստին, որը այնուհետև կիրառվում է համախառն հաշվեկշռային արժեքի հանդեպ:

Հարկում. Շահութահարկի գծով ընթացիկ ծախսը հաշվարկվում է ՀՀ օրենսդրության համաձայն:

Ընթացիկ հարկը ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա ակնկալվող շահութահարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ, ինչպես նաև նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջինները հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հիմնական միջոցներ. Սկզբնական ճանաչման ժամանակ հիմնական միջոցները արտացոլվում են սկզբնական արժեքով առանց ամենօրյա սպասարկման ծախսերի՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումը: Այդ գումարը ներառում է սարքավորման փոխարինման ժամանակ կատարված ծախսերը, եթե դրանք բավարարում են ճանաչման չափանիշներին:

Սկզբնական արժեքով սկզբնական ճանաչումից հետո հողը, շենքերը և փոխադրամիջոցները արտացոլվում են վերագնահատված արժեքով: Վերագնահատումն իրականացվում է բավարար պարբերականությամբ, որպեսզի վերագնահատված ակտիվի իրական արժեքը էականորեն չտարբերվի դրա հաշվեկշռային արժեքից:

Հիմնական միջոցների միավորի նկատմամբ սեփական կապիտալում ներառված վերագնահատումից ածն ուղղակիորեն փոխանցվում է չբաշխված շահույթին, երբ ակտիվն ապաճանաչվում է:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով՝ ակտիվների ներքոնշյալ օգտակար ծառայության գնահատված ժամկետների ընթացքում՝

	Տարիներ
Շենքեր	46
Սարքավորումներ	7-20
Տրանսպորտային միջոցներ	8
Այլ	7-15

Վարձակալված գույքի վրա կատարված բարելավումները կապիտալացվում և ամորտիզացվում են վարձակալության ժամկետի և դրանց օգտակար ծառայության ժամանակահատվածից նվազագույնով՝ գծային հիմունքներով:

Ակտիվի մնացորդային արժեքները, օգտակար ծառայության ժամկետները և մաշվածության հաշվարկման մեթոդները վերանայվում և, եթե անհրաժեշտ է, փոփոխվում են յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում:

Վերանորոգումների և արդիականացման հետ կապված ծախսումները ծախսագրվում են կատարման ժամանակ և ներառվում են այլ գործառնական ծախսերի կազմում բացառությամբ, եթե դրանք որակավորվում են որպես կապիտալացվող:

Ոչ նյութական ակտիվներ. Ամորտիզացիան հաշվարկվում է գծային հիմունքով՝ ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ընթացքում՝ հետևյալ կերպ. Գնահատված օգտակար ծառայության ժամկետը 1-ից 10 տարի է:

Բռնագանձված ակտիվներ. Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և զուտ իրացվելի արժեքի նվազագույնով:

Բաժնետիրական կապիտալ. Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը վերաբերող ուղղակի ծախսերը, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության միավորման դեպքերի, արտացոլվում են սեփական կապիտալում որպես թողարկման գծով մուտքերից նվազեցում: Իրական արժեքի այն մասը, որը գերազանցում է թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքը, գրանցվում է որպես էմիսիոն եկամուտ:

Շահաբաժիններ. Հաշվետու ամսաթվի դրությամբ շահաբաժինները նվազեցվում են սեփական կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն միայն այն դեպքում, երբ դրանք հայտարարվել են մինչև հաշվետու ամսաթիվը ներառյալ: Մինչև հաշվետու ամսաթիվը առաջարկված կամ հաշվետու ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը առաջարկված կամ հայտարարված շահաբաժինները բացահայտվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում:

Հավատարմագրային կառավարման շրջանակներում գտնվող ակտիվներ. Հավատարմագրային կառավարման շրջանակներում գտնվող ակտիվները չեն արտացոլվում Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում, քանի որ չեն հադիսանում Խմբի ակտիվներ:

Տոկոսային և համանման եկամուտ և ծախս. Խումբը հաշվարկում է տոկոսային եկամուտ ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվների համախառն արժեքի նկատմամբ, բացառությամբ արժեզրկված ակտիվների: Հաշվարկի ժամանակ հաշվի են առնվում ֆինանսական գործիքի գծով բոլոր պայմանագրային պայմանները (օրինակ՝ ժամկետից շուտ մարման իրավունքը) և միջնորդավճարների գծով կամ լրացուցիչ ծախսերը, որոնք անմիջականորեն կապված են գործիքի հետ և որոնք արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մաս են կազմում, սակայն հաշվի չեն առնվում ապագա վնասները: Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքները ճշգրտվում են Խմբի կողմից միջոցների ելքերի կամ մուտքերի գնահատումների վերանայման դեպքում: Ճշգրտված հաշվեկշռային արժեքը հաշվարկվում է սկզբնական արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա, իսկ հաշվեկշռային արժեքի փոփոխությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ կամ ծախս:

Եթե Փուլ 3-ում դասակարգված ֆինանսական ակտիվի գծով վարկային ռիսկը հետագայում բարելավվի այնպես, որ ակտիվն այլևս վարկային արժեզրկված չլինի, և բարելավումը հնարավոր լինի օբյեկտիվորեն վերագրել իրադարձության, որը տեղի է ունեցել այն բանից հետո, երբ ակտիվը սահմանվել է որպես վարկային արժեզրկված (այսինքն ակտիվը դառնում է վերականգնման ենթակա), ակտիվը վերադասակարգվում է 3-րդ փուլից և տոկոսային հասույթը հաշվարկվում է՝ կիրառելով EIR-ը համախառն հաշվեկշռային արժեքի վրա: Լրացուցիչ տոկոսային եկամուտը, որը նախկինում շահույթում և վնասում չէր ճանաչվել՝ ելնելով ակտիվի Փուլ 3 բնույթից, սակայն որը ներկայումս ակնկալվում է ստանալ ակտիվի վերականգնումից հետո, ճանաչվում է որպես արժեզրկման հակադարձում:

Ֆինանսական վարձակալության դիմաց տրված կանխավճարներից և ֆինանսական վարձակալության գծով ճանաչված հասույթից տոկոսային հասույթը ճանաչվում է շահույթի կամ վնասի համախմբված հաշվետվությունում «Այլ տոկոսային հասույթ» տողում՝ պայմանագրային տոկոսադրույքով:

Հաճախորդներին տրված վարկերի տոկոսային եկամուտը ներկայացվում է համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ «Տոկոսային հասույթ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով» հոդվածում:

Միջնորդավճարների գծով եկամուտ. Հաճախորդներին մատուցվող տարբեր ծառայություններից համախմբված ստանում է միջնորդավճարների գծով եկամուտ: Միջնորդավճարների գծով եկամուտը կարող է բաժանվել հետևյալ երկու խմբի.

Միջնորդավճարների գծով եկամուտ, որը ստացվում է որոշակի ժամանակահատվածում մատուցվող ծառայություններից

Միջնորդավճարների գծով եկամուտը, որը ստացվում է որոշակի ժամանակահատվածում մատուցվող ծառայություններից, հաշվեգրվում է այդ ժամանակահատվածի ընթացքում, քանի որ համապատասխան կատարողական պարտավորությունները բավարարված են: Այս վճարները ներառում են միջնորդավճարներ տարբեր գործունեության տեսակներից, ներառյալ քարտերի թողարկումը և ձեռքբերումը, դրամական փոխանցումները, երաշխիքների և ակրեդիտիվների տրամադրումը, հաշվի սպասարկումը և նմանատիպ եկամուտներ: Վարկերի տրամադրման գծով պարտավորության դիմաց միջնորդավճարները, եթե վարկի օգտագործման հավանականությունը բարձր է, և վարկերի հետ կապված այլ միջնորդավճարները հետաձգվում են (վարկերի տրամադրման հետ կապված ցանկացած լրացուցիչ ծախսումների հետ միասին) և ճանաչվում են որպես վարկի արդյունավետ տոկոսադրույքի ճշգրտում:

Միջնորդավճարների գծով եկամուտ՝ մատուցված միջնորդային ծառայությունների գծով

Երրորդ անձի անունից գործարքի բանակցություններն անցկացնելու և մասնակցելու համար (օրինակ՝ երբ Խմբի կատարողական պարտավորությունն է բաժնետոմսերի կամ այլ արժեթղթերի առքը, կամ ընկերության առք ու վաճառքի համաձայնագրի կնքումը) ստացված կոմիսիոն վճարները ճանաչվում են այդ գործարքի ավարտից հետո:

Հաճախորդների հավատարմության ծրագրեր

Խումբն առաջարկում է հաճախորդների հավատարմության մի շարք ծրագրեր: Նման ծրագրերի հաշվապահական հաշվառումը տարբերվում է՝ կախված նրանից, թե ով է ճանաչվում որպես հաճախորդ, և/կամ Խումբը որպես գործակալ, թե որպես պայմանագրի գլխավոր կողմ է հանդես գալիս: Միավորների վրա հիմնված ծրագրերի դեպքում, Խումբը, ընդհանուր առմամբ, ճանաչում է պարտավորություն կուտակված միավորների համար, որոնք ակնկալվում է, որ օգտագործվելու են հաճախորդների կողմից, որը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով, երբ միավորները լրանում են: Պլաստիկ քարտերով գործառնություններից քեշբեքերը նվազեցնում են միջնորդավճարների գծով եկամուտը:

Շահաբաժիններից եկամուտ

Եկամուտը ճանաչվում է, երբ հաստատվում է Խմբի վճարումը ստանալու իրավունքը:

Արտարժույթի փոխարկում. Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով, որը Բանկի և նրա դուստր ձեռնարկությունների գործառնական արժույթն է: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված գործարքների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության «Փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտներ/(վնասներ)» հոդվածում:

Արտարժույթով գործարքի պայմանագրային փոխարժեքի և գործարքի օրվա դրությամբ Կենտրոնական բանկի փոխարժեքի տարբերությունները ներառված են Զուտ օգուտ /(վնաս) արտարժույթի առքուվաճառքից տողում ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական փոխարժեքները 2024թ. դեկտեմբերի 31-ին և 2023թ. դեկտեմբերի 31-ին կազմել են համապատասխանաբար 396.56 ՀՀ դրամ և 404.79 դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց, և 413.89 ՀՀ դրամ և 447.90 ՀՀ դրամ 1 եվրոյի դիմաց:

Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ. Խմբի աշխատակիցները (ներառյալ ղեկավարները) կարող են վարձատրություն ստանալ բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների տեսքով: Այսպիսով աշխատակիցները ծառայություններ են մատուցում բաժնային գործիքների դիմաց (բաժնետոմսով մարվող գործարքներ) վարձատրության նկատառումով:

Բաժնային գործիքներով մարվող գործարքներ

Բաժնային գործիքներով մարվող գործարքների արժեքը որոշվում է իրական արժեքով այն ամսաթվի դրությամբ, երբ վարձատրությունը տրամադրվում է համապատասխան գնահատման մոդելի կիրառմամբ, որի հետագա մանրամասները տրված են Ծանոթագրություն 25-ում:

Այդ ծախսը ճանաչվում է անձնակազմի ծախսերում՝ սեփական կապիտալի համապատասխան աճի հետ միասին այն ժամանակաշրջանի ընթացքում, որում ծառայությունը մատուցվել է և անհրաժեշտության դեպքում, կատարողականի պայմանները կատարվել են (տրամադրման ժամանակաշրջանում):

Ծախս չի ճանաչվում այն վարձատրությունների համար, որոնք, ի վերջո, չեն առաջացնում իրավունք, քանի որ շուկայական պայմանները և/կամ ծառայության պայմանները չեն կատարվել: Այն դեպքում, երբ վարձատրությունը ներառում է շուկայական կամ իրավունք չառաջացնող պայման, գործարքները համարվում են կատարված՝ անկախ նրանից, թե շուկայական կամ իրավունքի առաջացման պայմանը բավարարված է թե ոչ, պայմանով, որ կատարողական և/կամ ծառայության բոլոր մյուս պայմանները բավարարված են:

Երբ բաժնային գործիքներով մարվող գործարքի պայմանները փոփոխվում են, ճանաչված նվազագույն ծախսը չփոփոխված գործարքի իրական արժեքն է տրամադրման ամսաթվի դրության, պայմանով, որ պահպանվում են գործարքի իրավունքի առաջացման սկզբնական պայմանները: Լրացուցիչ ծախսը, որը չափվում է փոփոխման ամսաթվի դրությամբ, ճանաչվում է ցանկացած փոփոխության համար, որը մեծացնում է բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքի ընդհանուր գումարի իրական արժեքը կամ այլ կերպ ձեռնտու է աշխատողին: Եթե գործարքը չեղարկվում է կազմակերպության կամ գործընկերոջ կողմից, վարձատրության իրական արժեքի ցանկացած մնացած տարր ճանաչվում է ծախս անմիջապես շահույթի կամ վնասի միջոցով:

4 Առանցքային հաշվապահական դատողություններ և գնահատումներ

Խումբը կատարում է գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների և հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա: Գնահատումները և դատողությունները շարունակական կերպով վերանայվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ինչպիսիք են հետագա իրադարձությունների ակնկալիքները, որոնք առկա պայմաններում տրամաբանական են համարվում: Գնահատումներից բացի, ղեկավարությունը կատարում է նաև որոշակի այլ դատողություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գործընթացում: Դատողությունները, որոնք առավել նշանակալի ազդեցություն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված արժեքների վրա, և գնահատականները, որոնք կարող են հիմք հանդիսանալ հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներում նշանակալի ճշգրտման համար, հետևյալն են. հողի, շենքերի և փոխադրամիջոցների վերագնահատում:

Գույքի իրական արժեքը որոշվում է շուկայական համադրելի մեթոդի կիրառմամբ: Սա նշանակում է, որ գնահատողի կողմից կատարված գնահատումները հիմնված են շուկայական գործարքների գների վրա, էական ճշգրտմամբ՝ հաշվի առնելով կոնկրետ գույքի բնույթը, գտնվելու վայրը կամ վիճակը: Խումբը յուրաքանչյուր տարի գնահատում է շուկայի փոփոխությունները՝ էական փոփոխությունների տեսանկյունից, և ներգրավում է անկախ փորձագետների՝ իր տարածքների և փոխադրամիջոցների գնահատման համար, ըստ անհրաժեշտության և կիրառելիության (ծանոթագրություն 34):

Իրական արժեքի չափում. Եթե համախմբված ֆինանսական հաշվետվություններում արտացոլվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը հնարավոր չէ որոշել ակտիվ շուկայի գների հիման վրա, ապա այն որոշվում է տարբեր գնահատման

մոդելների կիրառմամբ, ներառյալ՝ մաթեմատիկական մոդելները: Այդպիսի մոդելների համար ելակետային տվյալները որոշվում են որպես դիտարկվող շուկաների տվյալներ, եթե դա հնարավոր է: Հակառակ դեպքում իրական արժեքի որոշման համար անհրաժեշտ է կիրառել դատողություններ: Լրացուցիչ տեղեկատվություն ներկայացված է Ծանոթագրություն 34-ում:

Ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստներ. Ֆինանսական ակտիվների բոլոր կատեգորիաներում արժեզրկումից կորուստների չափումը պահանջում է դատողություն, մասնավորապես, ապագա դրամական հոսքերի և գրավի արժեքների գումարի և ժամկետների գնահատում արժեզրկումից կորուստները և վարկային ռիսկի զգալի աճի գնահատականը որոշելիս: Այս գնահատումները պայմանավորված են մի շարք գործոններով, որոնց փոփոխությունները կարող են հանգեցնել տարբեր մակարդակների պահուստների: Բացի այդ, գործունեության լայնածավալ խափանումները կարող են առաջացնել իրացվելիության խնդիրներ որոշ կազմակերպությունների և սպառողների համար: Խմբի ԱՎԿ հաշվարկները ելնում են բարդ մոդելներից, որոնց հիմքում ընկած են մի շարք ենթադրություններ՝ փոփոխական մուտքային տվյալների ընտրության և նրանց փոխկապակցվածության վերաբերյալ: ԱՎԿ մոդելների տարրերը, որոնք համարվում են հաշվապահական դատողություններ և գնահատումներ, ներառում են.

- Վիճակագրական մոդելներ դեֆոլտի հավանականությունը (PD), դեֆոլտի դեպքում գործիքի արժեքը (EAD) և դեֆոլտի դեպքում կորստի չափը (LGD) խմբային հիմունքով գնահատելու համար,
- Ֆինանսական ակտիվների սեգմենտավորումը, երբ դրանց ԱՎԿ-ն հաշվարկված է խմբային հիմունքով,
- ԱՎԿ մոդելների մշակումը, ներառյալ տարբեր բանաձևերը և մուտքային տվյալների ընտրությունը,
- Մակրոտնտեսական սցենարների և տնտեսագիտական մուտքային տվյալների միջև կապվածության որոշումը, ինչպիսիք են գործազրկության մակարդակը և գրավի արժեքները, և ազդեցությունը դեֆոլտի հավանականության (PD), դեֆոլտի դեպքում գործիքի իրական արժեքի (EAD) և դեֆոլտի դեպքում կորստի չափի (LGD) վրա,
- Հեռանկարային մակրոտնտեսական սցենարների ընտրությունը և դրանց հավանականության կշիռը՝ տնտեսական տվյալները ԱՎԿ մոդելների մեջ արտացոլելու համար

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված վարկերի և ֆինանսական վարձակալության արժեզրկման գծով պահուստը կազմել է 7,251,520 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 6,048,341 հազ. ՀՀ դրամ): Մանրամասները ներկայացված են Ծանոթագրություններ 12 և 13:

Կապակցված կողմերի հետ գործարքների սկզբնական ճանաչում. Բնականոն գործունեության ընթացքում Խումբը գործարքի մեջ է մտնում իր կապակցված կողմերի հետ: ՖՀՄՍ 9-ը պահանջում է ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչում՝ հիմնված նրանց իրական արժեքի վրա: Կիրառվում է դատողություն՝ որոշելու, թե արդյոք գործարքները գնահատված են շուկայական կամ ոչ շուկայական տոկոսադրույքներով, եթե այդ գործարքների համար ակտիվ շուկա առկա չէ: Դատողության համար հիմք է հանդիսանում չկապակցված կողմերի հետ նմանատիպ գործարքների գնահատումը և արդյունավետ տոկոսադրույքով վերլուծությունները: Կապակցված կողմերի հաշվեկշռի պայմաններն ու դրույթները բացահայտվում են Ծանոթագրություն 36-ում:

5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին

Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2024թ. հունվարի 1-ից.

Փոփոխություններ ՖՀՄՍ 16-ում Վարձակալություն. Վարձակալության պարտավորություն վաճառքի և հետադարձ վարձակալության ժամանակ (թողարկվել է 2022թ. սեպտեմբերի 22-ին և ուժի մեջ է մտնում 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Փոփոխությունները վերաբերում են վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքներին, որոնք բավարարում են ՖՀՄՍ 15-ի պահանջները՝ վաճառք հաշվառվելու համար: Փոփոխությունները պահանջում են, որ վաճառող-վարձակալը հետագայում չափի գործարքից բխող պարտավորությունները այն կերպ, որ չճանաչի իր կողմից պահպանված օգտագործման իրավունքի հետ կապված որևէ շահույթ կամ վնաս: Սա նշանակում է նման շահույթի հետաձգում, նույնիսկ եթե պարտավորության էությունը կայանում է փոփոխական վճարումներում, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքաչափից: Հետևաբար, այս

փոփոխությունը որևէ ազդեցություն չի ունեցել սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների դասակարգումը – ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ (ի սկզբանե թողարկվել է 2020թ. հունվարի 23-ին և հետագայում թողարկման ամսաթիվը փոփոխվել է 2020թ. հուլիսի 15-ին և 2022թ. հոկտեմբերի 31-ին, ուժի մեջ է մտնում 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Այս փոփոխություններով պարզաբանվում է, թե պարտավորությունները երբ պետք է դասակարգվեն որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ: Ինչպես և ֆինանսական հաստատությունների մեծ մասը, Խումբը ներկայացնում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ ըստ իրացվելիության, այլ ոչ թե ակտիվների և պարտավորությունների՝ ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգման միջոցով: Հետևաբար, այս փոփոխությունը որևէ ազդեցություն չի ունեցել սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխություններ ՀՀՄՍ 7-ում «Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն» և ՖՀՄՍ 7-ում «Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ. Մատակարարների ֆինանսական պայմանագրեր» (թողարկվել է 2023թ. մայիսի 25-ին): Ի պատասխան ֆինանսավորման պայմանագրերի ոչ համարժեք կամ ապակողմնորոշիչ բացահայտման վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների մտահոգություններին, 2023թ. մայիսին ՀՀՄՍԽ-ն փոփոխություններ է կատարել ՀՀՄՍ 7-ում և ՖՀՄՍ 7-ում՝ պահանջելով բացահայտել կազմակերպության մատակարարների ֆինանսական պայմանագրերը (ՄՖՊ): Այս փոփոխություններով պահանջվում է, որպեսզի կազմակերպությունը բացահայտի մատակարարների այն ֆինանսական պայմանագրերը, որոնք ֆինանսական հաշվետվություններ օգտագործողներին հնարավորություն կտան գնահատել այդ պայմանագրերի ազդեցությունը կազմակերպության պարտավորությունների և դրամական միջոցների հոսքերի վրա և կազմակերպության իրացվելիության ռիսկի վրա: Լրացուցիչ բացահայտման պահանջների նպատակն է բարձրացնել մատակարարների ֆինանսական պայմանագրերի թափանցիկությունը: Փոփոխությունները չեն ազդում ճանաչման կամ չափման սկզբունքների վրա, այլ միայն բացահայտման պահանջների վրա:
Փոփոխությունն էական ազդեցություն չի ունեցել սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Հրապարակվել են 2025թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո տարեկան ժամանակահատվածների համար պարտադիր մի շարք նոր ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնց վաղ կիրառում չի իրականացվել Ընկերության կողմից:

Փոփոխություններ ՀՀՄՍ 21-ում «Փոխանակելիության բացակայություն» (թողարկվել է 2023թ. օգոստոսի 15-ին և ուժի մեջ է մտնում 2025թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): 2023թ. օգոստոսին ՀՀՄՍԽ-ն փոփոխություններ է կատարել ՀՀՄՍ 21-ում, որը նպատակ ունի օգնել կազմակերպություններին գնահատելու երկու արժույթների միջև փոխանակելիությունը և որոշել սփոթ փոխարժեքն այն դեպքում, երբ փոխանակելիություն առկա չէ: Փոփոխությունները ազդում են կազմակերպության վրա այն ժամանակ, երբ ընկերությունն ունի գործարք կամ գործառնություն արտարժույթով, որը չափման ամսաթվին որոշակի նպատակով չի կարող փոխանակվել այլ արժույթի: ՀՀՄՍ 21-ի փոփոխությունները չեն ներկայացնում սփոթ փոխարժեքը գնահատելու վերաբերյալ մանրամասն պահանջներ: Փոխարենը, սահմանվում է շրջանակ, որի համաձայն կազմակերպությունը կարող է որոշել սփոթ փոխարժեքը գնահատման ամսաթվի դրությամբ: Նոր պահանջները կիրառելիս չի թույլատրվում համեմատական տեղեկատվության վերաներկայացում: Անհրաժեշտ է ազդեցության ենթարկվող գումարները փոխարկել սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ գնահատված սփոթ փոխարժեքներով՝ չբաշխված շահույթի կամ կուտակային փոխարժեքային տարբերությունների պահուստի ճշգրտմամբ: Խումբը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ . ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ (թողարկվել է 2024թ. մայիսի 30-ին և ուժի մեջ է մտնում 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): 2024թ. մայիսի 30-ին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է փոփոխություններ ՖՀՄՍ 9-ում և

ՖՀՄՍ 7-ում՝ հետևյալ նպատակներով.

(ա) պարզաբանել որոշ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ճանաչման և ապաճանաչման ամսաթիվը, սահմանելով նոր բացառություն էլեկտրոնային դրամական փոխանցումների համակարգի միջոցով մարվող որոշ ֆինանսական պարտավորությունների համար.
(բ) պարզաբանել և լրացուցիչ ուղեցույց ներկայացնել՝ բացառապես մայր գումարի և տոկոսների վճարման չափանիշին ֆինանսական ակտիվի համապատասխանությունը գնահատելու համար.
(գ) ավելացնել նոր բացահայտումներ պայմանագրային ժամկետներ ունեցող որոշակի գործիքների գծով, որոնք կարող են առաջացնել դրամական միջոցների հոսքերի փոփոխություն (օրինակ՝ բնապահպանական, սոցիալական և կառավարման (ԲՍԿ) նպատակների իրագործմանը կապակցված որոշ գործիքներ). և
(դ) թարմացնել իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով (FVOCI) չափվող բաժնային գործիքների բացահայտումները:

Խումբը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 18. «Ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում» (թողարկվել է 2024թ. ապրիլի 9-ին և ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): 2024թ. ապրիլին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է նոր ստանդարտ՝ ՖՀՄՍ 18 «Ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում», որը առանձնահատուկ անդրադառնում է շահույթի կամ վնասի մասին հաշվետվություններին առնչվող թարմացումներին: ՖՀՄՍ 18-ում ներկայացված առանցքային նոր հասկացությունները առնչվում են հետևյալին՝

- շահույթի կամ վնասի հաշվետվության կառուցվածքը.
- ֆինանսական հաշվետվություններում պահանջվող բացահայտումները շահույթի կամ վնասի չափման որոշակի դիրքերի գծով, որոնք ներկայացվում են կազմակերպության ֆինանսական հաշվետվություններից դուրս (այսինքն՝ ղեկավարության կողմից սահմանված չափման դիրքերը). և
- համախմբման և տարանջատման ընդլայնված սկզբունքները, որոնք կիրառելի են հիմնական ֆինանսական հաշվետվությունների, և ընդհանուր առմամբ ծանոթագրությունների նկատմամբ:

ՖՀՄՍ 18-ը կփոխարինի ՀՀՄՍ 1-ին. ՀՀՄՍ 1-ում ներառված սկզբունքներից շատերը պահպանվում են՝ սահմանափակ փոփոխություններով: ՖՀՄՍ 18-ը չի ազդի ֆինանսական հաշվետվությունների հոդվածների ճանաչման կամ չափման վրա, սակայն կարող են փոփոխվել կազմակերպության կողմից որպես «գործառնական շահույթ կամ վնաս» ներկայացվող դիրքերը: ՖՀՄՍ 18-ը կկիրառվի 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Այն կիրառելի է նաև համեմատական տեղեկատվության նկատմամբ: Խումբը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 19. Հրապարակային հաշվետվողականության պահանջ չունեցող դուստր ձեռնարկություններ. Բացահայտումներ (թողարկվել է 2024թ. մայիսի 9-ին և ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՖՀՄՍ 19-ը իրավասու դուստր ձեռնարկություններին հնարավորություն է տալիս ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտները կիրառել կրճատված բացահայտումներով: Խումբը իրավասու չէ կիրառել սույն ստանդարտով սահմանված բացահայտման կրճատված պահանջները:

ՖՀՄՍ 14. «Կարգավորող հետաձգված հաշիվներ» (թողարկվել է 2014թ. հունվարի 30-ին): ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտները առաջին անգամ կիրառող կազմակերպություններին ՖՀՄՍ 14-ը հնարավորություն է ընձեռում շարունակել դրույքաչափերի կարգավորման հետ կապված գումարների ճանաչումը իրենց նախորդ հաշվապահական հաշվառման ստանդարտի պահանջների համաձայն: Այնուամենայնիվ, ՖՀՄՍ Հաշվապահական հաշվառման ստանդարտներն արդեն կիրառող և այդ գումարները չճանաչող կազմակերպությունների հետ համադրելիությունը մեծացնելու նպատակով, ստանդարտը

պահանջում է դրույքաչափերի կարգավորման ազդեցությունը ներկայացնել այլ հոդվածներից առանձին: Այն կազմակերպությունը, որն իր ֆինանսական հաշվետվությունները արդեն ներկայացնում է ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն, իրավասու չէ կիրառել ստանդարտը: Այս ստանդարտի ուժի մեջ մտնելու ամսաթիվը դեռ պետք է որոշվի ՀՀՄՍԽ-ի կողմից:

«Ակտիվների վաճառք կամ հատկացում՝ ներդրողի և ասոցիացված կազմակերպությունների կամ համատեղ ձեռնարկումների միջև» - փոփոխություններ ՖՀՄՍ 10-ում և ՀՀՄՍ 28-ում (թողարկվել են 2014թ. սեպտեմբերի 11-ին, և ուժի մեջ են մտնում ՀՀՄՍԽ-ի կողմից որոշվելիք ամսաթվին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Այս փոփոխությունները վերաբերում են ներդրողի և իր ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկումների միջև ակտիվների վաճառքին կամ հատկացմանը վերաբերող՝ ՖՀՄՍ 10-ի և ՀՀՄՍ 28-ի պահանջների միջև գոյություն ունեցող անհամապատասխանությանը: Փոփոխությունների կիրառման հիմնական հետևանքն այն է, որ շահույթը կամ վնասը ճանաչվում է ամբողջությամբ այն դեպքում, երբ գործարքը առնչվում է ձեռնարկատիրական գործունեությանը: Շահույթը կամ վնասը ճանաչվում է մասնակիորեն այն դեպքում, երբ ակտիվը չի առնչվում ձեռնարկատիրական գործունեությանը, նույնիսկ եթե այդ ակտիվները պատկանում են դուստր կազմակերպությանը: 2015թ. ՀՀՄՍԽ-ն որոշել է անորոշ ժամանակով հետաձգել այս փոփոխությունների ուժի մեջ մտնելու ժամկետը:

ՖՀՄՍ հաշվառման ստանդարտների տարեկան բարելավումներ (թողարկվել է 2024թ, հուլիսին և ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ից): ՖՀՄՍ 1-ով պարզաբանվել է, որ ՖՀՄՍ հաշվառման ստանդարտներին անցնելուց հետո հեջը պետք է դադարեցվի, եթե այն չի համապատասխանում «որակավորման չափանիշներին», այլ ոչ թե հեջի հաշվառման «պայմաններին»: Սա նպատակ ունի լուծել ՖՀՄՍ 1-ի և ՖՀՄՍ 9-ի հեջի հաշվառման պահանջների միջև անհամապատասխանության հետևանքով առաջացող հնարավոր տարընթերցումը: ՖՀՄՍ 7-ով պահանջվում են օգուտի կամ վնասի բացահայտումներ՝ կապված այն ֆինանսական ակտիվների ապաճանաչման հետ, որտեղ կազմակերպությունը ունի ընթացիկ մասնակցություն, այդ թվում, պահանջվում է բացահայտել՝ արդյոք իրական արժեքի չափումները ներառում են «նշանակալի ծավալով ոչ դիտարկելի մուտքային տվյալներ»: Այս նոր ձևակերպումը փոխարինում է «նշանակալի մուտքային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա» արտահայտությանը: Փոփոխության նպատակն է՝ ձևակերպումը համապատասխանեցնել ՖՀՄՍ 13-ին: Բացի այդ, պարզաբանվել են ՖՀՄՍ 7-ի կիրառման ուղեցույցի որոշ օրինակներ և ավելացվել է տեքստ այն, որ օրինակները հնարավոր է՝ չարտացոլեն ՖՀՄՍ 7-ի նշված պարբերությունների բոլոր պահանջները: ՖՀՄՍ 16-ում կատարվել է փոփոխություն՝ պարզաբանելով, որ երբ վարձակալը որոշում է, որ վարձակալության գծով պարտավորությունը մարվել է համաձայն ՖՀՄՍ 9-ի, ապա վարձակալը պետք է կիրառի ՖՀՄՍ 9-ի ուղեցույցը՝ արդյունքում առաջացող շահույթը կամ վնասը ճանաչելու համար: Այս պարզաբանումը վերաբերում է վարձակալության գծով պարտավորություններին, որոնք մարվել են կազմակերպության կողմից այդ փոփոխությունը առաջին անգամ կիրառելու հաշվետու տարեկան ժամանակաշրջանի սկզբում կամ դրանից հետո: ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 15-ի միջև անհամապատասխանությունը վերացնելու նպատակով այժմ պահանջվում է, որ առևտրային դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվեն «ՖՀՄՍ 15-ի կիրառման միջոցով որոշված գումարով» այլ ոչ թե «գործարքի գնով» (ինչպես սահմանված է ՖՀՄՍ 15-ում)»: ՖՀՄՍ 10-ի փոփոխությամբ օգտագործելով պակաս միանշանակ ձևակերպում «դե-ֆակտո գործակալ» հանդիսացող կազմակերպության համար, և պարզաբանվել է, որ ՖՀՄՍ 10-ի Բ74 պարագրաֆում նկարագրված հարաբերությունը միայն մեկ օրինակ է այն հանգամանքներից, որոնց դեպքում պահանջվում է դատողություն՝ որոշելու, թե արդյոք կողմը հանդես է գալիս որպես դե ֆակտո գործակալ: ՀՀՄՍ 7-ում կատարվել է ճշտում՝ հեռացվել են «ինքնարժեքի մեթոդի» վկայակոչումները, որը հանվել է ՖՀՄՍ հաշվառման ստանդարտներից 2008թ. մայիսին, երբ ՀՀՄՍԽ-ն հրապարակեց «Ներդրման արժեքը դուստր ձեռնարկությունում, համատեղ վերահսկվող կազմակերպությունում կամ ասոցիացված կազմակերպությունում»:

Բացառությամբ վերը նշված դեպքերի, չի ակնկալվում, որ սույն նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները որևէ էական ազդեցություն կունենան Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

7 Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն

Կառավարման նպատակներով Խումբը կազմված է հինգ գործառնական սեգմենտներից՝ ըստ մատուցվող պրոդուկտների և ծառայությունների՝ հետևյալ կերպ.

Մանրածախ բանկային գործունեություն	-	Ֆիզիկական անձ հաճախորդների սպառողական վարկերի և հիփոթեքային վարկերի տրամադրում, ավանդների և ընթացիկ հաշիվների բացում և սպասարկում, կրեդիտ քարտերի գործիքներ, դրամական փոխանցումներ, արտարժույթի փոխանակման գործարքներ և այլն:
Կորպորատիվ բանկային գործունեություն	-	Կորպորատիվ և ինստիտուցիոնալ հաճախորդներին առևտրային վարկերի և այլ վարկային միջոցների տրամադրում, ավանդների և ընթացիկ հաշիվների բացում և սպասարկում, դրամական փոխանցումներ, արտարժույթի փոխանակման գործարքներ և այլն:
Գյուղատնտեսություն	-	Գյուղատնտեսական ոլորտի հաճախորդներին վարկերի տրամադրում, ավանդների և ընթացիկ հաշիվների բացում և սպասարկում, դրամական փոխանցումներ, արտարժույթի փոխանակման գործարքներ և այլն:
Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն	-	Գանձապետական և ֆինանսական, ներդրումային բանկային ծառայություններ և այլ կենտրոնացված գործառնություններ:
Ֆինանսական վարձակալություն	-	Կորպորատիվ և ֆիզիկական անձ հաճախորդներին ֆինանսական վարձակալության գծով ծառայությունների մատուցում:

Ղեկավարությունը առանձին վերահսկում է յուրաքանչյուր սեգմենտի գործառնական և ֆինանսական արդյունքները՝ ռեսուրսների բաշխման և կատարողականի գնահատման վերաբերյալ որոշումներ կայացնելու համար: Խումբը չափում է զուտ տոկոսային եկամուտը և ոչ տոկոսային եկամուտը հետևյալ սեգմենտներից յուրաքանչյուրի համար՝ մանրածախ բանկային գործունեություն, կորպորատիվ բանկային գործունեություն, գյուղատնտեսություն և առևտրային և ներդրումային բանկային գործունեություն: Ոչ տոկոսային ծախսերը բաշխվում են՝ ըստ յուրաքանչյուր սեգմենտի զուտ տոկոսային եկամտի և ոչ տոկոսային եկամուտների համամասնության: Ֆինանսական վարձակալության սեգմենտի համար (ԱԿԲԱ Լիզինգ Վարկային կազմակերպություն ՓԲԸ) Խումբը կիրառում է լրիվ առանձնացված չափում: Շահութահարկը կառավարվում է Խմբի մակարդակով և համապատասխանաբար բաշխվում ըստ գործառնական սեգմենտների:

Գործառնական սեգմենտների միջև տրանսֆերային գնագոյացումը, ինչպես երրորդ կողմերի հետ գործարքներում, համապատասխանում է շուկայական պայմաններին:

Տոկոսաբեր ակտիվները ներառում են հաճախորդներին տրված վարկերը, ածանցյալ ֆինանսական ակտիվները, ներդրումային արժեթղթերը, այլ բանկերի նկատմամբ պահանջները և ֆինանսական վարձակալության դեբիտորական պարտքերը:

Տոկոսաբեր ֆինանսական պարտավորությունները ներառում են հաճախորդների ավանդները, փոխառու միջոցները, ստորադաս փոխառությունները, բանկերի ավանդներն ու մնացորդները և թողարկված պարտքային արժեթղթերը:

Հետևյալ աղյուսակները ներկայացնում են շահույթի կամ վնասի և որոշակի ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն Խմբի գործառնական սեգմենտների համար:

2024թ. *Հազ. ՀՀ դրամ*	**Մանրածախ բանկային գործունեություն**	**Կորպորատիվ բանկային գործունեություն**	**Գյուղատնտեսություն**	**Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն**	**Ֆինանսական վարձակալություն**	**Ընդամենը**
Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ	33,246,179	24,701,325	16,514,255	5,182,288	-	**79,644,047**
Այլ տոկոսային եկամուտ	-	-	-	173,483	12,351,284	**12,524,767**
Տոկոսային ծախս	(12,017,065)	(11,083,114)	(7,219,544)	(1,967,903)	(5,317,135)	**(37,604,761)**
Զուտ տոկոսային եկամուտ	**21,229,114**	**13,618,211**	**9,294,711**	**3,387,868**	**7,034,149**	**54,564,053**
Վարկային կորստի ծախս/ (հակադարձում)	(1,450,436)	(1,258,582)	(837,257)	1,297,304	(101,067)	**(2,350,038)**
Զուտ տոկոսային եկամուտ վարկային կորստի գծով ծախսից հետո	**19,778,678**	**12,359,629**	**8,457,454**	**4,685,172**	**6,933,082**	**52,214,015**
Միջնորդավճարների գծով եկամուտ	6,470,669	4,544,490	3,477,892	-	213,757	**14,706,808**
Միջնորդավճարների գծով ծախս	(3,168,834)	(2,032,768)	(1,387,406)	-	(10,476)	**(6,599,484)**
Զուտ վնաս իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից	-	-	-	581,991	-	**581,991**
Զուտ օգուտ /(վնաս) արտարժույթի առքուվաճառքից	2,469,163	1,583,937	1,081,070	-	(138,729)	**4,995,441**
Զուտ վնաս/օգուտ փոխարժեքային տարբերություններից	8,107	5,066	3,467	1,920	40,165	**58,725**
Ասոցիացված կազմակերպությունների շահույթի մասնաբաժին	-	-	-	1,211,887	-	**1,211,887**
Այլ արժեզրկման և պահուստների հակադարձում/(ծախս)	(42,368)	(27,178)	(18,550)	-	-	**(88,096)**
Այլ եկամուտներ	228,738	146,733	100,147	-	361,535	**837,153**
Ոչ տոկոսային եկամուտ	**5,965,475**	**4,220,280**	**3,256,620**	**1,795,798**	**466,252**	**15,704,425**
Անձնակազմի գծով ծախսեր	(8,712,640)	(5,611,169)	(3,964,415)	(2,193,366)	(540,885)	(21,022,475)
Մաշվածություն և ամորտիզացիա	(1,569,425)	(1,010,750)	(714,118)	(395,095)	(139,448)	(3,828,836)
Այլ գործառնական ծախսեր	(1,031,636)	(664,401)	(469,414)	(259,709)	(137,285)	(2,562,445)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(2,184,482)	(1,406,864)	(993,980)	(549,933)	(225,690)	(5,360,949)
Ոչ տոկոսային ծախս	**(13,498,183)**	**(8,693,184)**	**(6,141,927)**	**(3,398,103)**	**(1,043,308)**	**(32,774,705)**
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը	**12,245,970**	**7,886,725**	**5,572,147**	**3,082,867**	**6,356,026**	**35,143,735**
Շահութահարկի գծով ծախս	(2,221,952)	(1,430,996)	(1,011,030)	(559,366)	(1,155,302)	(6,378,646)
Տարվա շահույթ	**10,024,018**	**6,455,729**	**4,561,117**	**2,523,501**	**5,200,724**	**28,765,089**
Սեգմենտի տոկոսաբեր ակտիվներ	227,573,018	223,128,263	85,508,751	64,909,885	93,105,821	**694,225,738**
Սեգմենտի տոկոսակիր պարտավորություններ	318,552,790	220,441,140	38,685,201	85,847,282	83,983,358	**747,509,771**

2023թ. *Հազ. ՀՀ դրամ*	**Մանրածախ բանկային գործունեություն**	**Կորպորատիվ բանկային գործունեություն**	**Գյուղատնտեսություն**	**Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն**	**Ֆինանսական վարձակալություն**	**Ընդամենը**
Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ	28,000,085	20,492,082	17,208,308	3,150,617	-	**68,851,092**
Այլ տոկոսային եկամուտ	-	-	-	254,916	10,190,524	**10,445,440**
Տոկոսային ծախս	(9,701,551)	(8,977,050)	(7,464,598)	(1,217,267)	(4,679,844)	**(32,040,310)**
Զուտ տոկոսային եկամուտ	**18,298,534**	**11,515,032**	**9,743,710**	**2,188,266**	**5,510,680**	**47,256,222**
Վարկային կորստի ծախսերի հակադարձում / (վարկային կորստի ծախս)	(829,185)	249,674	95,114	1,182,871	(132,944)	**565,530**
Զուտ տոկոսային եկամուտ վարկային կորստի գծով ծախսից հետո	**17,469,349**	**11,764,706**	**9,838,824**	**3,371,137**	**5,377,736**	**47,821,752**
Միջնորդավճարների գծով եկամուտ	6,231,889	3,526,644	3,179,472	-	159,681	**13,097,686**
Միջնորդավճարների գծով ծախս	(2,309,226)	(1,453,166)	(1,229,631)		(22,600)	**(5,014,623)**
Զուտ վնաս իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից	-	-	-	400,019	-	**400,019**
Զուտ օգուտ /(վնաս) արտարժույթի առքուվաճառքից	2,555,306	1,562,598	1,344,690		(128,830)	**5,333,764**
Զուտ վնաս/օգուտ փոխարժեքային տարբերություններից	(33,833)	(20,689)	(17,804)		44,481	**(27,845)**
Ասոցիացված կազմակերպությունների շահույթի մասնաբաժին	-	-	-	1,019,338	-	**1,019,338**
Այլ արժեզրկման և պահուստների հակադարձում/(ծախս)	1,302,189	796,303	685,256	-	-	**2,783,748**
Այլ եկամուտներ	343,133	210,265	180,568	-	119,951	**853,917**
Ոչ տոկոսային եկամուտ	**8,089,458**	**4,621,955**	**4,142,551**	**1,419,357**	**172,683**	**18,446,004**
Անձնակազմի գծով ծախսեր	(8,317,880)	(5,332,747)	(4,550,111)	(1,559,164)	(565,925)	**(20,325,827)**
Մաշվածություն և ամորտիզացիա	(1,526,309)	(933,355)	(803,196)	-	(49,928)	**(3,312,788)**
Այլ գործառնական ծախսեր	(1,363,374)	(833,718)	(717,454)	-	(117,970)	**(3,032,516)**
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(2,172,071)	(1,328,246)	(1,143,017)	-	(188,113)	**(4,831,447)**
Ոչ տոկոսային ծախս	**(13,379,634)**	**(8,428,066)**	**(7,213,778)**	**(1,559,164)**	**(921,936)**	**(31,502,578)**
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը	**12,179,173**	**7,958,595**	**6,767,597**	**3,231,330**	**4,628,483**	**34,765,178**
Շահութահարկի գծով ծախս	(2,600,411)	(1,590,180)	(1,368,425)	-	(813,400)	**(6,372,416)**
Տարվա շահույթ	**9,578,762**	**6,368,415**	**5,399,172**	**3,231,330**	**3,815,083**	**28,392,762**
Սեգմենտի տոկոսաբեր ակտիվներ	154,976,483	202,038,959	98,183,895	25,973,391	83,406,426	**564,579,154**
Սեգմենտի տոկոսակիր պարտավորություններ	234,329,339	30,947,988	27,613,614	59,720,467	76,548,946	**429,160,354**

Խումբն իր հիմնական գործունեությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում: Խումբը Հայաստանից դուրս չունի ոչ ընթացիկ ակտիվներ, բացի ֆինանսական գործիքներից, որոնք ներկայացված են ծանոթագրություն 10-ում: Խումբը չունի Խմբի ընդհանուր տոկոսային եկամտի 10%-ից ավելին ապահովող հաճախորդներ:

Որպես բանկային գործունեության շուկայի ակտիվ մասնակից, Խումբն ունի վարկային ռիսկի զգալի կենտրոնացում այլ ֆինանսական հաստատությունների գծով: Ընդհանուր առմամբ, ֆինանսական հաստատությունների նկատմամբ վարկային ռիսկի ենթարկվածությունը գնահատվել է 168,464,386 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 160,788,935 հազ. ՀՀ դրամ), որը ներառում է դրամական միջոցներ և դրանց համարժեքները, բանկերում տեղաբաշխված ավանդները և բանկերի նկատմամբ այլ պահանջները, հետգնման գծով դեբիտորական պարտքերը և ֆինանսական ածանցյալ գործիքները:

Սեգմենտների հաշվառման նպատակով 2024թ. և 2023թ. համախմբված ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ կիրառվել են հետևյալ միջսեգմենտային բացառումները և ճշգրտումները.

Հազ. ՀՀ դրամ	**2024թ.**	**2023թ.**
Ներխմբային վարկերի բացառում	(50,850,400)	(52,705,304)
Ներխմբային վարձակալության բացառում	-	(19,206)
Տոկոսային հասույթ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	(3,520,599)	(3,621,106)
Միջնորդավճարների գծով եկամուտ	(215,255)	(191,954)
ՖՀՄՍ 16՝ ներխմբային վարձակալության պայմանագրերի հետ կապված ծախսերի և եկամուտների բացառում	-	(2,095)

2024թ. դեկտեմբերի 31-ին և 2023թ. ավարտված տարվա համար ՖՀՄՍ 15-ի շրջանակներում հաճախորդների հետ պայմանագրերից ստացված հասույթի սեգմենտային բաշխումը հետևյալն է.

2024թ. *Հազ. ՀՀ դրամ*	**Մանրածախ բանկային գործունեություն, բացի գյուղատնտեսությունից**	**Կորպորատիվ բանկային գործունեություն**	**Գյուղատնտեսություն**	**Ֆինանսական վարձակալություն**	**Ընդամենը**
Միջնորդավճարների գծով եկամուտ					
Պլաստիկ քարտերի սպասարկում	5,091,935	3,576,175	2,736,842		**11,404,952**
Դրամական փոխանցումներ	473,312	332,418	254,399		**1,060,129**
Բանկային հաշիվների սպասարկման վճարներ	260,778	183,150	140,165		**584,093**
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	-	281,338			**281,338**
Կանխիկացման ծառայություններ	200,731	140,978	107,890		**449,599**
Այլ	318,305	223,552	171,083	213,757	**926,697**
Ընդամենը հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ	**6,345,061**	**4,737,611**	**3,410,379**	**213,757**	**14,706,808**

2023թ. *Հազ. ՀՀ դրամ*	**Մանրածախ բանկային գործունեություն, բացի գյուղատնտեսությունից**	**Կորպորատիվ բանկային գործունեություն**	**Գյուղատնտեսություն**	**Ֆինանսական վարձակալություն**	**Ընդամենը**
Միջնորդավճարների գծով եկամուտ					
Պլաստիկ քարտերի սպասարկում	4,374,095	2,475,313	2,231,636	-	**9,081,044**
Դրամական փոխանցումներ	570,138	322,643	290,881	-	**1,183,662**
Բանկային հաշիվների սպասարկման վճարներ	286,993	162,410	146,422	-	**595,825**
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	-	1,004,237	-	-	**1,004,237**
Կանխիկացման ծառայություններ	230,348	130,355	117,523	-	**478,226**
Այլ	286,601	162,188	146,222	159,681	**754,692**
Ընդամենը հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ	**5,748,175**	**3,252,909**	**3,936,921**	**159,681**	**13,097,686**

8 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են.

Հազ. ՀՀ դրամ	**2024թ.**	**2023թ.**
Դրամական միջոցներ դրամարկղում	26,853,397	22,665,289
Ընթացիկ հաշիվներ Կենտրոնական բանկում, ներառյալ պարտադիր պահուստները (չսահմանափակված մաս, տես Ծանոթագրություն 10)	71,346,538	38,560,913
Ընթացիկ հաշիվներ այլ բանկերում		
- վարկանշված BBB-(Baa3) և բարձր	1,004,207	10,847,364
- վարկանիշը՝ BBB-(Baa3) -ից ցածր և	2,288,519	1,429,994
Կարճաժամկետ ավանդներ այլ բանկերում		
- վարկանիշը՝ BBB-(Baa3) և բարձր	4,567,681	4,663,224
Արժեզրկում	(30,273)	(6,935)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**106,030,069**	**78,159,849**

Վարկի որակը որոշելու համար Բանկը հիմնականում օգտագործում է Moody's վարկանիշային գործակալության վարկանիշները, սակայն կարող են օգտագործվել նաև այլ միջազգային վարկանիշային գործակալությունների վարկանիշներ: Միջազգային վարկանիշային գործակալությունների վարկանիշների բացակայության դեպքում դիտարկվում է երկրի վարկանիշը, սակայն կարող է կիրառվել նաև երկրի վարկանիշից ցածր վարկանիշ:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկում ընթացիկ հաշիվները ներառում են պարտադիր պահուստ՝ 28,131,042 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 26,139,452 հազ. ՀՀ դրամ):

Բանկերը պարտավոր են ունենալ դեպոնացված դրամական միջոցներ (պարտադիր պահուստ) ՀՀ ԿԲ-ում ՀՀ դրամով ներգրավված գումարների 4%-ի չափով (2023թ. ՝ 4%) և արտարժույթով ներգրավված գումարների 18%-ի չափով (2023թ. ՝ 18%):

Նոր ակտիվներ	22,733			**22,733**
Ժամկետանց ակտիվներ	(25,789)	(416)	(1,912)	**(28,117)**
Տեղափոխումներ Փուլ 1	186	(186)	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 2	(282)	282	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 3	(845)	(67)	912	**-**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ	(146)	190	1,346	**1,390**
ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ	(22,187)	(477)	(651)	**(23,315)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	406	6	25	**437**
31 դեկտեմբերի 2023թ.	**63,357**	**(1,573)**	**4,203**	**65,987**

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում երաշխիքների և ակրեդիտիվների հետ կապված համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ-ի փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Երաշխիքներ և ակրեդիտիվներ *Հազ. ՀՀ դրամ*	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Համախառն հաշվեկշռային արժեքը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ	**31,257,294**	**573,493**	**292,629**	**32,123,416**
Ստեղծված կամ նոր ձեռք բերված երաշխիքներ և ակրեդիտիվներ	29,639,881	-	-	**29,639,881**
Ժամկետը լրացած կամ մարված երաշխիքներ և ակրեդիտիվներ	(23,595,156)	(123,493)	(242,502)	**(23,961,151)**
Տեղափոխումներ Փուլ 1	-	-	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 2	(68,010)	68,010	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 3	(548,707)	(450,000)	998,707	**-**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(3,292)	-	-	**(3,292)**
31 դեկտեմբերի 2024թ.	**36,682,010**	**68,010**	**1,048,834**	**37,798,854**

Երաշխիքներ և ակրեդիտիվներ *Հազ. ՀՀ դրամ*	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
ԱՎԿ 2024թ. հունվարի 1-ի դրությամբ	**8,750**	**9**	**5**	**8,764**
Ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա ազդող փոփոխություններ.				
Ստեղծված կամ նոր ձեռք բերված երաշխիքներ և ակրեդիտիվներ	353	-	-	**353**
Ժամկետը լրացած կամ մարված երաշխիքներ և ակրեդիտիվներ	(8,620)	(2)	(4)	**(8,626)**
Տեղափոխումներ Փուլ 1	-	-	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 2	(1)	1	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 3	(5)	(7)	12	**-**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ	-	-	(5)	**(5)**
ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ	(65)	-	-	**(65)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	-	-	-	**-**
ԱՎԿ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**412**	**1**	**8**	**421**

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում երաշխիքների և ակրեդիտիվների հետ կապված համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ-ի փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Երաշխիքներ և ակրեդիտիվներ *Հազ. ՀՀ դրամ*	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Համախառն հաշվեկշռային արժեքը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ	**23,551,514**	**8,800**	**326,847**	**23,887,161**
Ստեղծված կամ նոր ձեռք բերված երաշխիքներ և ակրեդիտիվներ	27,997,976	-	-	**27,997,976**
Ժամկետը լրացած կամ մարված երաշխիքներ և ակրեդիտիվներ	(19,444,488)	(8,800)	(308,433)	**(19,761,721)**
Տեղափոխումներ Փուլ 1	-	-	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 2	(573,493)	573,493	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 3	(274,215)	-	274,215	**-**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	-	-	-	**-**
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**31,257,294**	**573,493**	**292,629**	**32,123,416**

Երաշխիքներ և ակրեդիտիվներ *Հազ. ՀՀ դրամ*	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
ԱՎԿ 2023թ. հունվարի 1-ի դրությամբ	**1,896**	**-**	**8**	**1,904**
Ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա ազդող փոփոխություններ.				
Ստեղծված կամ նոր ձեռք բերված երաշխիքներ և ակրեդիտիվներ	9,558			**9,558**
Ժամկետը լրացած կամ մարված երաշխիքներ և ակրեդիտիվներ	(2,637)	-	(8)	**(2,645)**
Տեղափոխումներ Փուլ 1	-	-	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 2	(13)	13	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 3	(5)	-	5	**-**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ	-	(4)	-	**(4)**
ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ	(49)	-	-	**(49)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	-	-	-	**-**
ԱՎԿ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**8,750**	**9**	**5**	**8,764**

27 Զուտ տոկոսային եկամուտ

Զուտ տոկոսային եկամուտը ներառում է.

Հազ. ՀՀ դրամ	**2024թ.**	**2023թ.**
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր	70,281,544	63,387,477
Հակադարձ հետգնման պայմանագրերով ստացվելիք գումարներ	3,994,841	2,345,126
Պահանջներ բանկերի նկատմամբ	1,133,912	861,244
Այլ	46,578	190,862
	75,456,875	**66,784,709**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ		
Պարտքային գործիքներ	4,187,172	2,066,383
Տոկոսային հասույթ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	**79,644,047**	**68,851,092**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	12,351,284	10,190,524
Այլ տոկոսային եկամուտ	173,483	254,916
Այլ տոկոսային եկամուտ	**12,524,767**	**10,445,440**
Ընդամենը տոկոսային եկամուտ	**92,168,814**	**79,296,532**
Տոկոսային ծախս		
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	26,480,071	22,561,711
Այլ փոխառու միջոցներ և ստորադաս փոխառություններ, բացառությամբ վարձակալության պարտավորությունների	8,334,913	7,651,536
Թողարկված պարտքային արժեթղթեր	2,310,867	1,351,543
Հետգնման պայմանագրերով վճարման ենթակա գումարներ	1,979	199,908
Այլ	35,255	40,960
Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային ծախս	**37,163,085**	**31,805,658**
Վարձակալության գծով պարտավորություններ	441,676	234,652
Տոկոսային ծախս	**37,604,761**	**32,040,310**
Զուտ տոկոսային եկամուտ	**54,564,053**	**47,256,222**

28 Միջնորդավճարների գծով եկամուտ

Զուտ միջնորդավճարները ներառում են.

Հազ. ՀՀ դրամ	**2024թ.**	**2023թ.**
Պլաստիկ քարտերի սպասարկման և գործարքների վճարներ	11,404,952	9,081,044
Դրամական փոխանցումներ	1,060,129	1,183,662
Ընթացիկ հաշվի վճարներ	584,093	595,825
Կանխիկացման ծառայություններ	449,599	478,226
Միջնորդավճարներ՝ որպես ապահովագրական գործակալ հանդես գալու գծով	430,960	368,697
Այլ	281,981	226,314
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	281,338	1,004,237
Միջնորդավճարներ վարձակալության սարքավորումների մատակարարներից	213,756	159,681
Միջնորդավճարների գծով եկամուտ	**14,706,808**	**13,097,686**
Պլաստիկ քարտերի սպասարկում	6,057,748	4,629,582
Այլ	356,997	238,148
Դրամական փոխանցումներ	184,739	146,893
Միջնորդավճարների գծով ծախս	**6,599,484**	**5,014,623**
Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ	**8,107,324**	**8,083,063**

29 Այլ եկամուտներ

Հազ. ՀՀ դրամ	**2024թ.**	**2023թ.**
Հողի և շենքերի վաճառքից օգուտ	489,167	-
Կրեդիտորական պարտքերի դուրսգրումից եկամուտ	18,256	95,566
Ստացված փոխհատուցում	13,386	27,841
Այլ ակտիվների վաճառքից ստացված միջոցներ, զուտ	12,229	134,566
Շահաբաժիններ	2,174	3,185
Ստացված տույժեր և տուգանքներ	773	1,394
Քարտով գործարքներից ստացված եկամուտ, զուտ	743	117,195
Այլ	300,425	474,170
Ընդամենը այլ եկամուտ	**837,153**	**853,917**

30 Այլ գործառնական ծախսեր

Գործառնական այլ ծախսերը ներառում են.

Հազ. ՀՀ դրամ	**2024թ.**	**2023թ.**
Երաշխիքային վճարներ ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին	838,384	693,668
Ծրագրային ապահովման և սպասարկման վճարներ	297,735	402,060
Շահութահարկից բացի այլ հարկեր	290,353	173,077
Հիմնական միջոցների օտարումից վնաս	198,323	209,150
Վարկի հավաքագրման գծով ծախսեր	174,648	265,840
Ինկասացիոն ծախսեր	150,917	205,715
Ֆինանսական համակարգի հաշտարարի վճարումներ	145,257	112,250
Արժեթղթերի ռեեստրի վարման վճար	19,724	17,576
Վճարված տույժեր և տուգանքներ	10,560	2,317
Այլ	436,544	950,863
Այլ գործառնական ծախսեր	**2,562,445**	**3,032,516**

31 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

Հազ. ՀՀ դրամ	**2024թ.**	**2023թ.**
Վերանորոգում և սպասարկում	1,437,348	1,279,709
Գովազդային և մարքեթինգային ծառայություններ	888,284	879,396
Կապ	497,759	414,612
Կառավարչական այլ ծախսեր	495,010	280,121
Ծրային ապահովման սպասարկման ծախս	359,532	430,600
Կոմունալ ծառայություններ և գրասենյակային պարագաներ	443,592	266,559
Անվտանգություն	282,344	324,206
Ապահովագրություն	233,335	221,366
Ներկայացուցչական ծախսեր	83,869	248,736
Գործառնական վարձակալության գծով ծախս	33,944	23,446
Այլ	605,932	462,696
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	**5,360,949**	**4,831,447**

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար Խումբը ճանաչել է զրո ՀՀ դրամ կարճաժամկետ վարձակալության և 7,741 հազ. ՀՀ դրամ ցածրարժեք ակտիվների վարձակալության գծով ծախսեր (2023թ.՝ 5,048 հազ. ՀՀ դրամ կարճաժամկետ վարձակալության գծով ծախս և 18,398 հազ. ՀՀ դրամ՝ ցածրարժեք ակտիվների վարձակալության գծով ծախս):

«Այլ» տողը ներառում է 2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար Խմբին մատուցված աուդիտորական ծառայությունները՝ 57,240 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 57,240 հազ. ՀՀ դրամ), աուդիտ չհանդիսացող հավաստիացման ծառայությունները՝ 38,683 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 7,200 ՀՀ դրամ) և աուդիտ չհանդիսացող այլ ծառայությունները՝ զրո (2023թ. 1,172 հազ. ՀՀ դրամ): Բոլոր գումարները ներառում են ԱԱՀ:

32 Այլ արժեզրկման և պահուստների (ծախս)/հակադարձում

Հազ. ՀՀ դրամ	**2024թ.**	**2023թ.**
Բռնագանձված ակտիվների արժեզրկման գծով (ծախս)/հակադարձում	(88,096)	123,303
Պարտավորությունների պահուստի հակադարձում/(ծախս):	-	2,663,662
Ոչ նյութական ակտիվների արժեզրկման գծով ծախս	-	(3,217)
Այլ արժեզրկման և պահուստների գծով ծախս	**(88,096)**	**2,783,748**

33 Ռիսկերի կառավարում

Ներածություն. Խմբի ռիսկերի կառավարման համակարգը, Խմբի ռազմավարությանը համահունչ, ներառում է ռիսկերի կառավարման նորարարական և միջազգային գործիքներ, ռիսկերի կառավարման սկզբունքները սահմանող փաստաթղթեր և Խմբում ռիսկի մշակույթի պահպանման և տարածմանն ուղղված գործողություններ: Ռիսկը բնորոշ է Խմբի գործունեությանը և կառավարվում է ռիսկի նույնականացման, չափման, կառավարման, մոնիտորինգի և հաշվետվության համակարգերի շարունակական գործընթացի միջոցով, և վերահսկվում է ղեկավարության կողմից: Այս գործընթացը կարգավորվում է ռիսկերի սահմանաչափերով, ինչը ենթակա է մշտական վերահսկողության: Խմբում կատարվում է ռիսկի ազդեցության կառավարման պատասխանատվության բաշխում, ընդ որում յուրաքանչյուր անձ պատասխանատու է իր իրավասության ներքո գտնվող ռիսկերի համար:

Հիմնական ռիսկերը, որոնց ենթակա է Խումբը, վարկային, իրացվելիության, շուկայական (որը ներառում է առևտրային և ոչ առևտրային ռիսկերը) և գործառնական ռիսկերն են: Բացի այդ, Խումբը ուշադրությամբ հետևում նոր առաջացող ռիսկերին, ինչպիսիք են կիբերանվտանգության սպառնալիքները, և ապահովում է ռիսկերի կառավարման գործելակերպը կարգավորող չափանիշների պահպանումը: Կանոնավոր կերպով իրականացվում են այս ռիսկերի քանակական գնահատումներ՝ որոշումների կայացման գործընթացներին օժանդակելու և Խմբի շահութաբերությունն ու կայունությունը պահպանելու նպատակով:

Ռիսկերի նույնականացում. Ռիսկերի նույնականացումը Խմբի ներսում շարունակական գործընթաց է և իրականացվում է ռիսկերի կանոնավոր գնահատման, պորտֆելների շարունակական մոնիտորինգի, նոր բիզնես գործունեության և գործընթացների ռիսկերի գնահատման, բարդ և արտասովոր բիզնես գործարքների ռիսկերի գնահատման և ընդհանուր ռիսկի պրոֆիլի կանոնավոր մոնիտորինգի միջոցով:

Ռիսկերի չափման և կառավարման համակարգեր. Խումբը կիրառում է հատուկ մոտեցում տարբեր տեսակի ռիսկերի վերլուծության և գնահատման համար՝ օգտագործելով վիճակագրական մոդելներ, զգայունության վերլուծություններ և վերահսկելով հիմնական ռիսկերի ցուցանիշները: Անհրաժեշտության դեպքում Խումբը ձեռնարկում է համապատասխան միջոցներ՝ հնարավոր ռիսկերը լուծելու համար: Այս մոդելները ենթարկվում են կանոնավոր հակադարձ թեստավորման և վավերացման՝ դրանց ճշգրտությունը հաստատելու համար: Խումբը նաև իրականացնում է սթրես թեստային վերլուծություններ՝ գնահատելու ծայրահեղ, ցածր հավանականության իրադարձությունների ազդեցությունը: Ռիսկերի կառավարման իր համապարփակ ռազմավարության ներքո Խումբը օգտագործում է ածանցյալ գործիքներ և այլ ֆինանսական գործիքներ՝ տոկոսադրույքների, արտարժույթի, սեփական կապիտալի շուկաների, վարկային ռիսկերի և ակնկալվող գործարքների հետ կապված ռիսկերի հեջավորման համար: Ավելին, Խումբն ակտիվորեն օգտագործում է վարկային ռիսկի մեղմման տարբեր գործիքներ:

Ռիսկերի մոնիտորինգ և վերահսկում. Խումբը հիմնականում մշտադիտարկման է ենթարկում և վերահսկում է ռիսկերը՝ պահպանելով նախատեսված սահմանաչափերը, որոնք որոշվել են ըստ Խմբի բիզնես ռազմավարության, շուկայական պայմանների և ռիսկի ախորժակի, առանձնահատուկ ուշադրություն դարձնելով կոնկրետ ճյուղերին՝ օպտիմալ դիվերսիֆիկացման մակարդակի հասնելու համար: Բացի այդ, Խումբը շարունակաբար գնահատում է իր ընդհանուր ռիսկ կրելու կարողությունը՝ կապված բոլոր ռիսկերի տեսակների և գործունեության բոլոր ռիսկերի ազդեցության հետ: Պարբերական ծանուցումներ են տրվում ռիսկի սահմանաչափերի խախտման դեպքում՝ ելնելով խախտման տեսակից և հրատապությունից: Այս ծանուցումները փոխանցվում են Խմբի համապատասխան ստորաբաժանումներին, ինչպես նաև գլխավոր գործադիր տնօրենին՝ քննարկելու և համապատասխան գործողություններ ձեռնարկելու համար:

Ռիսկերի կառավարման հաշվետվության համակարգ. Բոլոր բիզնես ուղղությունների համապատասխան տվյալները ուսումնասիրվում և մշակվում են ռիսկերը բացահայտելու, կառավարելու և մեղմելու և դրանք Խմբի յուրաքանչյուր կազմակերպության համար ռիսկերի ախորժակին համապատասխանեցնելու նպատակով: Բանկն ունի երկու հիմնական հաշվետվության գիծ՝ Ռիսկերի կառավարման հանձնաժողով՝ Գործադիր ղեկավարությանը և Ռիսկերի կառավարման հանձնաժողով՝ Խորհրդին: Ռիսկերի կառավարման հանձնաժողովին ներկայացվող հաշվետվությունը ներառում է ընդհանուր վարկային ռիսկի ենթարկվածության վերլուծություն, մանրամասն մակրոտնտեսական վերլուծություն, վարկերի համակենտրոնացման սահմանաչափերի մշտադիտարկում, ճեղքվածքների (GAP) վերլուծություն, VaR գնահատում, իրացվելիության գործակիցներ և նպատակային ցուցանիշների վերլուծություն, սթրես թեստ վերլուծություն, ընդհանուր ռիսկի ախորժակի վերահսկում և Խմբի յուրաքանչյուր կազմակերպության ռիսկերի պրոֆիլի փոփոխություններ:

Ռիսկերի կառավարման հանձնաժողովը քննարկում է ռիսկերի հետ կապված էական խնդիրները և հաստատում քայլերը՝ ուղղված դրանց նվազեցմանը և կառավարմանը: Խորհուրդը եռամսյակային կտրվածքով ստանում է ռիսկերի համապարփակ հաշվետվություն, որը ներկայացնում է առանցքային տվյալներ՝ ընդհանուր ռիսկի ենթարկվածությունը գնահատելու և տեղեկացված որոշումներ կայացնելու համար: Ռիսկերի մանրամասն հաշվետվությունները պատրաստվում և տարածվում են կազմակերպության բոլոր մակարդակներում՝ ապահովելով կիրառելի և արդիական տեղեկատվության հասանելիություն յուրաքանչյուր ստորաբաժանման համար:

Բանկի ռիսկերի կառավարման կառուցվածքը.

Խորհուրդ. կրում է կազմակերպության ներսում ռիսկերի հայտնաբերման և վերահսկման հիմնական պատասխանատվությունը: Այնուամենայնիվ, առկա են առանձին անկախ մարմիններ, որոնք պատասխանատու են ռիսկերի կառավարման և մոնիթորինգի համար: Բանկի խորհուրդը պատասխանատու է ընդհանուր ռիսկերի կառավարման քաղաքականության, ռիսկերի կառավարման ռազմավարության և սկզբունքների հաստատման համար: Խորհուրդը վերահսկում է ռիսկերի կառավարումը՝ հաստատելով ռիսկերի ախորժակի շրջանակը, վերահսկողության շրջանակը և ռիսկերի կառավարման համապատասխան քաղաքականությունն ու սահմանաչափերը:

Խորհրդին առընթեր Ռիսկերի կառավարման հանձնաժողով. աջակցում է Խորհրդին՝ Բանկի ռիսկերի պրոֆիլը և սահմանված ռիսկի ախորժակի համեմատ արդյունքները վերահսկելու նպատակով: Խորհրդին առընթեր Ռիսկերի կառավարման հանձնաժողովը կանոնավոր կերպով վերանայում է ռիսկերի կառավարման հաշվետվությունը և Խորհրդին է ներկայացնում բացահայտումներ և առաջարկություններ ռիսկի ընդհանուր բնութագրի և շուկայի իրավիճակի վերաբերյալ:

Գլխավոր գործադիր տնօրեն. Գլխավոր գործադիր տնօրենը պատասխանատվություն է կրում ռիսկերի կառավարման ընդհանուր գործընթացի մշտադիտարկման և կառավարման համար՝ շարունակաբար գնահատելով կազմակերպության ռիսկերի պրոֆիլը, վերահսկելով ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ռիսկերի կառավարման շրջանակը ինտեգրելով կազմակերպության ռազմավարությունում և բիզնես գործընթացներում:

Ռիսկերի կառավարման հանձնաժողով (գործադիր ղեկավարությանը). Ռիսկերի կառավարման հանձնաժողովն ընդհանուր պատասխանատվություն է կրում Բանկի ռազմավարությանը և Ռիսկերի կառավարման շրջանակին ռիսկի պրոֆիլի համապատասխանությունը ստուգելու համար:

Ռիսկերի կառավարման և համապատասխանության ստորաբաժանում. Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը պատասխանատու է բոլոր տեսակի ռիսկերի սահմանման, գնահատման, վերահսկողության և կառավարման համար: Անկախ վերահսկման գործընթաց ապահովելու համար, յուրաքանչյուր քայլից հետո ներկայացվում է հաշվետվություն: Ռիսկերի կառավարման և համապատասխանության բաժինը վերահսկում է Բանկի բոլոր կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումները՝ ռիսկերի բացահայտման և կառավարման ուղղությամբ:

Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժին. Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինը պատասխանատու է Բանկի ակտիվների և պասիվների և ընդհանուր ֆինանսական կառուցվածքի կառավարման համար: Այն նաև գլխավորապես պատասխանատու է Բանկի ֆինանսավորման, իրացվելիության և տոկոսադրույքի ռիսկերի համար:

Ներքին աուդիտ. Բանկի կողմից իրականացվող ռիսկերի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Բանկի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի ստորաբաժանումը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Ներքին Աուդիտի հանձնաժողովին:

Դուստր կազմակերպությունում գործում է Բանկի ռիսկերի կառավարման կառուցվածքին համանման կառուցված, որը համահունչ է իր կոնկրետ գործառույթներին և կազմակերպչական կառուցվածքին: Թեև նրա դերերն ու պարտականությունները կարող են տարբեր լինել՝ ելնելով իր շրջանակից և գործողություններից, այն սովորաբար առաջնորդվում է որոշումների կայացման, ռիսկերի կառավարման և գործառնական վերահսկողության այնպիսի, որոնք համանման են Բանկի սկզբունքներին:

Խումբը ենթարկվում է ռիսկի մի քանի տեսակների, որոնց ամենատարածված տեսակները ներկայացված են ստորև:

Պարտքային ռիսկ

Վարկային ռիսկը առաջանում է այն ժամանակ, երբ մի կողմը չի կատարում մյուս կողմի նկատմամբ ունեցած ֆինանսական պարտավորությունները: Վարկային ռիսկը կարող է դրսևորվել հետևյալ ձևերով.

- Պարտապանը չի վճարում վարկի տոկոսները կամ մայր գումարը (սնանկության ռիսկ կամ դեֆոլտի ռիսկ)
- Պարտապանի կամ կոնտրագենտի վարկանիշը իջեցվում է (վարկանիշի նվազման ռիսկ)՝ ինչը վկայում է ռիսկի աճի մասին, որը կարող է անմիջապես հանգեցնել վարկին հարակից ապահովության միջոցի արժեքի կորստի. և
- Շուկայական առևտրի դեպքում կոնտրագենտը չի կատարում իր պարտավորությունները (կոնտրագենտի ռիսկ), ներառյալ մարումը:

Խումբը կառավարում և վերահսկում է վարկային ռիսկը՝ բանկի և նրա դուստր կազմակերպության համար սահմանելով ռիսկի ախորժակը, հանդուրժողականությունը և կարողությունների սահմանաչափերը: Իր ռիսկի ախորժակի մասին հաշվետվությունում կազմակերպությունը սահմանում է վարկային ռիսկի համապատասխան սահմանաչափեր՝ համակենտրոնացման ռիսկը կառավարելու և վարկային պորտֆելի օպտիմալ դիվերսիֆիկացման մակարդակ ապահովելու համար:

Խումբը հաստատել է վարկային որակի ստուգման գործընթաց՝ ապահովելու գործընկերների վարկունակության հնարավոր փոփոխությունների վաղ բացահայտումը, ներառյալ գրավների պարբերաբար վերանայումը: Վարկերի որակի ստուգման գործընթացը Խմբին թույլ է տալիս գնահատել հնարավոր վնասը այն ռիսկերի հետևանքով, որոնց նկատմամբ այն զգայուն է, և ձեռնարկել ուղղիչ գործողություններ:

Խումբը ներդրել է վարկային ռիսկերի կառավարման համապարփակ համակարգ, որը բաժանված է երկու լրացուցիչ ոլորտների.

- Վարկային ռիսկերի կառավարման համակարգ անհատական մակարդակում
- Վարկային ռիսկերի կառավարման համակարգ՝ պորտֆելի մակարդակում

Անհատական մակարդակում վարկային ռիսկի կառավարման համակարգը ներառում է հաճախորդի վարկունակության գնահատման համակարգեր, կորպորատիվ հաճախորդների վարկանիշային համակարգեր, ինչպես նաև կիրառական և վարքագծային միավորների մոդելների հիման վրա ստեղծված ֆինանսական և տնտեսական վերլուծական ավտոմատացված

համակարգեր, որոնք ներդրվել են Խմբի բոլոր երեք բիզնես ուղղությունների համար՝ (Մանրածախ, կորպորատիվ և գյուղատնտեսական):

Վարկային պորտֆելի մակարդակում ռիսկերի կառավարման համակարգը ներառում է ինչպես ակնկալվող, այնպես էլ անսպասելի կորուստների գնահատում: Վերջինիս հիման վրա Կազմակերպությունը հաշվարկում է իր տնտեսական կապիտալը վարկային ռիսկի համար: ՖՀՄՍ 9-ի տեսանկյունից Կազմակերպությունը կիրառում է վարկային պորտֆելի սեգմենտավորում և մշակում մոդելներ յուրաքանչյուր հատվածի համար PD, LGD և EAD գնահատելու համար:

Ածանցյալ ֆինանսական գործիքների ռիսկը. Ածանցյալ ֆինանսական գործիքներից ծագող վարկային ռիսկը ցանկացած պահի սահմանափակվում է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված դրական իրական արժեքով:

Վարկային պարտավորությունների հետ կապված ռիսկեր. Խումբը իր հաճախորդներին տրամադրում է բանկային երաշխիքների և ակրեդիտիվների ստացման հնարավորություն, որոնց գծով Խմբի մոտ կարող է անհրաժեշտություն ծագել հաճախորդների անունից կատարելու վճարումներ: Հաճախորդները վճարումները կատարում են պայմանագրերում ամրագրված պայմանների համաձայն: Խումբը կրում է ռիսկեր, որոնք համարժեք են վարկային ռիսկերին, և նվազեցվում են նույն ընթացակարգերի և ռիսկի վերահսկման քաղաքականության վարման շնորհիվ:

Վարկային ռիսկի առավելագույն չափը ֆինանսական գործիքների գծով. Ռիսկի առավելագույն չափը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության տարրերի վրա, ներառյալ ածանցյալ գործիքները, զտման և գրավի պայմանագրերի միջոցներով ռիսկը մեղմացնելու ազդեցությունից առաջ, ներկայացված է հաշվեկշռային արժեքով:

Իրական արժեքով ներկայացված ֆինանսական գործիքների դեպքում, հաշվեկշռային արժեքը արտահայտում է ընթացիկ վարկային ռիսկը, բայց ոչ ռիսկի առավելագույն չափը, որը կարող է առաջանալ արժեքի փոփոխությունից:

Ֆինանսական գործիքների յուրաքանչյուր մակարդակի վարկային ռիսկի առավելագույն չափի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է առանձին ծանոթագրություններում: Ապահովման միջոցների և ռիսկի նվազեցման այլ մեթոդների ազդեցությունը ներկայացված է Ծանոթագրություններ 12-ում և 13-ում:

Արժեզրկման գնահատում. Խումբը հաշվարկում է ակնկալվող վարկային կորուստը (ԱՎԿ) հավանականությամբ կշռված երեք սցենարների միջոցով՝ գնահատելու դրամական միջոցների ակնկալվող պակասը՝ զեղչված սկզբնավորման պահին արդյունավետ տոկոսադրույքով (EIR): Դրամական միջոցների պակասորդը սահմանվում է որպես կազմակերպությանը վճարման ենթակա պայմանագրային դրամական միջոցների հոսքերի և ակնկալվող դրամական միջոցների հոսքերի միջև տարբերությունը, որը կազմակերպությունն ակնկալում է ստանալ՝ հաշվի առնելով հնարավոր վարկային ռիսկը: ԱՎԿ-ի հաշվարկների մեխանիզմը մանրամասն ներկայացված է ստորև՝ առանցքային բաղադրիչներով, ներառյալ.

PD — Դեֆոլտի հավանականությունը (PD) ներկայացնում է սահմանված ժամանակային տիրույթում դեֆոլտի հավանականության գնահատումը: Դեֆոլտ կարող է առաջանալ գնահատված ժամանակահատվածի ցանկացած պահի, եթե գործիքը շարունակում է մնալ պորտֆելում և նախկինում չի ապաճանաչվել:

EAD — Դեֆոլտի դեպքում գործիքի արժեքը (EAD)ապագա դեֆոլտի ամսաթվի դրությամբ գործիքի գնահատված արժեքն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո ակնկալվող փոփոխությունների ազդեցությունը, Սա ներառում է մայր գումարի և տոկոսների պլանավորված կամ չպլանավորված մարումները, պարտավորված միջոցների ակնկալվող գումարները և բաց թողնված վճարումների արդյունքում կուտակված տոկոսները:

LGD — Դեֆոլտի դեպքում կորստի չափը դրամական միջոցների կորստի գնահատումն է, որն առաջանում է, երբ որոշակի պահի տեղի է ունենում դեֆոլտ: Դա պայմանագրային դրամական միջոցների հոսքերի և այն դրամական միջոցների հոսքերի տարբերությունն է, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավների իրացումից միջոցները: Սովորաբար, LGD-ն արտահայտվում է որպես դեֆոլտի դեպքում գործիքի արժեքից (EAD) տոկոս

ԱՎԿ պահուստը հիմնվում է վարկային վնասների վրա, որոնք ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի կյանքի ընթացքում (ակտիվի կյանքի ընթացքում ակնկալվող վարկային վնաս կամ ԱԿԱՎԿ): Այն դեպքում, եթե առկա չէ վարկային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչումից հետո, ապա պահուստը հիմնվում է 12 ամսվա ընթացքում ակնկալվող վարկային վնասի վրա (12ամԱՎԿ): 12ամԱՎԿ-ը ԱԿԱՎԿ-ի այն մասն է, որը ներկայացնում է ֆինանսական գործիքի գծով պարտավորությունների չկատարման դեպքերի արդյունք հանդիսացող ԱՎԿ-ները, որոնք հնարավոր են հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում: Ինչպես ԱԿԱՎԿ-ն, այնպես էլ 12ամԱՎԿ-ն հաշվարկվում են անհատական կամ խմբային հիմունքով՝ ելնելով ֆինանսական գործիքների համապատասխան պորտֆելի բնույթից:

Խումբը սահմանել է քաղաքականություն՝ գնահատելու յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի վարկային ռիսկի զգալի աճի հայտանիշները՝ սկզբնական ճանաչման պահից ի վեր, հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացորդային ժամկետի ընթացքում տեղի ունեցող դեֆոլտի ռիսկի փոփոխությունը: Վերոնշյալ գործընթացի հիման վրա, Խումբը խմբավորում է իր վարկերը՝ ըստ փուլերի, ինչպես նկարագրված է ստորև.

Փուլ 1. Վարկերի սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը պահուստ է ճանաչում 12 ամսվա ԱՎԿ-ի հիման վրա: 1-ին փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից:

Փուլ 2. Երբ գործիքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, Խումբը պահուստը ճանաչում է վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների (ԱԿԱՎԿ) համար: 2-րդ փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից:

Փուլ 3. Արժեզրկված համարվող վարկեր:

POCI. Ձեռք բերված կամ ստեղծված՝ արժեզրկված (POCI) ակտիվները ֆինանսական ակտիվներ են, որոնք արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ: Տվյալ ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է վարկային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա: ԱՎԿ-ն միայն ճանաչվում կամ ապաճանաչվում է այնքանով, որքանով որ հետագայում փոխվում է ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների գնահատականը:

Դեֆոլտի սահմանումը. Խումբը ֆինանսական գործիքը համարում է դեֆոլտի ենթարկված և, հետևաբար, Փուլ 3 (վարկային տեսանկյունից արժեզրկված) ԱՊԿ-ի հաշվարկների համար բոլոր այն դեպքերում, երբ.

- վարկառուի պայմանագրային վճարումների գծով ավելի քան 90 օր կետանցը.
- տվյալ վարկառուի բոլոր պարտավորությունները, եթե դրանցից առնվազն մեկը Բանկում և/կամ այլ ֆինանսական կազմակերպություններում 90 օրից ավելի ժամկետանց է (ներառյալ ֆիզիկական անձի և անհատ ձեռնարկատիրոջ պատկանելությունը).
- տվյալ վարկառուի բոլոր պարտավորությունները, եթե փոխկապակցված անձանց պարտավորություններից առնվազն մեկը Բանկում 90 օրից ավելի ժամկետանց է.
- վարկառուի անբարենպաստ ֆինանսական վիճակի պատճառով վերաֆինանսավորված կամ վերանայված ակտիվներ, որոնք Բանկում ավելի քան 30 օր ժամկետանց են:

Ֆինանսական գործիքը նաև համարվում է արժեզրկված՝ հիմք ընդունելով սահմանված այլ քանակական և որակական գործոններ, ինչպիսիք են.

- փոխկապակցված անձանց տրամադրված վարկերի որակը.
- վերանայման կարգավիճակը.
- ֆինանսական մոնիտորինգի արդյունքները, որոնք հաստատվում են ղեկավարության կողմից:
- վարկի ապահովման նվազեցում՝ գրավատուի կողմից գրավի լրիվ կամ մասնակի կորստի, ֆիզիկական վնասի կամ ապօրինի վաճառքի կամ շուկայական արժեքի նվազման պատճառով վարկի ապահովության գործակցի նվազման հետևանքով.
- վարկերի կենտրոնացում այլ անձանց, ներառյալ ընտանիքի անդամների մոտ, վարկառուի կողմից վարկերի մարումից հրաժարում և 30-ից ավելի ժամկետանց օրերի առկայություն. Այս

չափանիշը վերագրվում է բոլոր այն վարկերին, որոնց նկատմամբ կիրառվում է մոնիտորինգի եզրակացությունը:
- ֆորս-մաժորային հանգամանքները՝ վարկառուի կամ միակ սեփականատիրոջ մահը, հաշմանդամությունը, ծանր հիվանդությունները: Այս չափանիշը կիրառվում է հաճախորդի բոլոր վարկերի նկատմամբ, և
- բնական աղետներ կամ համաճարակներ. Այս չափանիշը վերագրվում է բոլոր այն վարկերին, որոնց նկատմամբ կիրառվում է մոնիտորինգի եզրակացությունը:

Հաճախորդի անվճարունակության որակական գնահատման շրջանակներում Խումբը նաև դիտարկում է մի շարք դեպքեր, որոնք կարող են վկայել վճարելու անհավանականության մասին՝ հիմնվելով ղեկավարության դատողության վրա: Երբ նման իրադարձություններ են տեղի ունենում, Խումբը դիտարկում է, թե արդյոք այդ իրադարձությունը պետք է հանգեցնի նրան, որ հաճախորդը պետք է դիտարկվի որպես չկատարված և հետևաբար գնահատվի որպես Փուլ 3 ԱՎԿ-ի հաշվարկների համար, թե արդյոք 2-րդ փուլը տեղին է:

Ընկերության քաղաքականությունն է ֆինանսական գործիքը դիտարկել որպես «վերականգնված» և, հետևաբար, վերադասակարգմամբ դուրս բերել 3-րդ փուլից, երբ դեֆոլտի չափանիշներից ոչ մեկը գոյություն չունի առնվազն վեց ամիս անընդմեջ և կետանցի օրերի թիվը չի գերազանցել յոթ օրացուցային օրը:: Ակտիվի վերականգնումից հետո այն 2-րդ կամ 1-ին փուլ դասակարգելու որոշումը կախված է վարկառուի կողմից պարտքի սպասարկման օրինաչափությունից և գնահատման ամսաթվի դրությամբ այլ ոչ առաջնային ՎՌՆԱ (SICR) չափանիշների առկայությունից:

Հաճախորդներին տրված վարկեր

Խմբավորում. Հաճախորդներին տրված 1-ին և 2-րդ փուլերի վարկերի, ինչպես նաև 3-րդ փուլի վարկերի համար, որոնք առանձին-առանձին ենթակա չեն արժեզրկման, Խումբը հաշվարկում է ԱՎԿ-ը պորտֆելի մակարդակով: Բանկի կողմից առանձնացված են հետևյալ պորտֆելները, որոնք, PD PIT մատրիցները գնահատելու նպատակով հետագայում բաժանվում են ավելի փոքր թիրախային խմբերի:
- Կորպորատիվ վարկեր.
- Սպառողական վարկեր.
- Գյուղատնտեսական վարկեր.
- Հիփոթեքային վարկեր.

Դեֆոլտի հավանականության գնահատման գործընթացը

Գանձապետական և միջբանկային հարաբերություններ. Խմբի գանձապետական և միջբանկային հարաբերությունները և գործընկերները իրենցից ներկայացնում են ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպություններ, բանկեր, բրոքերներ-դիլերներ, արտարժույթի առքուվաճառք իրականացնող ընկերություններ և քլիրինգային ընկերություններ: Այս հարաբերությունների առումով Խմբի ֆինանսական ռիսկերի կառավարման բաժինը գնահատում է հրապարակայնորեն հասանելի տեղեկատվությունը, մասնավորապես ֆինանսական տեղեկատվությունը և այլ արտաքին տվյալներ, օր՝ արտաքին վարկանիշները:

Հաճախորդներին տրված վարկերի գծով դեֆոլտի հավանականությունը հիմնվում է անցյալ ժամանակաշրջանների տեղեկությունների վրա և հաշվարկվում է հավանականության փոփոխության մատրիցաներով՝ հիմք ընդունելով վարկային պորտֆելների ժամկետայնության վերաբերյալ առկա տեղեկությունները: Հավանականությունները հաշվարկվում են որպես 12 ամիս ժամանակաշրջանի ընթացքում դեֆոլտ կատեգորիաների միջև փոխանցվող վարկերի մասնաբաժինը ընդհանուր վարկերի նկատմամբ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ: Դեֆոլտի հավանականությունը հաշվարկելիս Խումբը դիտարկում է կանխատեսվող մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք ունեն էական ազդեցություն դեֆոլտի հավանականության վրա՝ հաշվարկված ըստ ժամանակային շարքերի ռեգրեսիայի վերլուծության: Դեֆոլտի հավանականության կանխատեսումները գնահատվում են՝ հիմնվելով պաշտոնապես հասանելի հեռանկարային մակրոտնտեսական պարամետրերի վրա: Ժամանակային շարքի ռեգրեսիոն վերլուծությունը գնահատվում է հետևյալ ոլորտներով՝ գյուղատնտեսություն, բիզնես, սպառողական և հիփոթեքային վարկեր, որոնց արդյունքն այնուհետև աստիճանական իջեցվում է

մինչև վարկերի կանխորոշված ենթախմբեր՝ հասնելու դեֆոլտի հավանականության PIT անցումային մատրիցներին:

Հիմք ընդունելով ընտրված մակրոտնտեսական պարամետրերի պատմական կանխատեսումների գնահատված շեղումը փաստացի միտումներից, հեռանկարային մակրոտնտեսական զարգացման երեք սցենարներ ուղղված են երեք PD PIT անցումային մատրիցների վերջնական արդյունքին, որոնք կշռված են 15%, 70% հավանականություններով՝. լավատեսական, բազային և հոռետեսական սցենարներին համապատասխան:

Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը (EAD) իրենից ներկայացնում է արժեզրկման գնահատման ենթակա ֆինանսական գործիքների համախառն հաշվեկշռային արժեքը, որը հաշվի է առնում ինչպես հաճախորդի ունակությունը մեծացնելու իր վարկի գումարը առաջիկա դեֆոլտի դեպքում, այնպես էլ հնարավոր վաղաժամկետ մարումները: Փուլ 1-ում գտնվող ակտիվների համար Խումբը գնահատում է 12 ամսվա ընթացքում հնարավոր դեֆոլտի հավանականությունը: Փուլ 2-ին, Փուլ 3-ին և POCI դասին պատկանող ֆինանսական ակտիվների համար դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը դիտարկվում է գործիքների ողջ կյանքի տևողության ընթացքում տեղի ունեցող դեպքերի համար:

Դեֆոլտի ժամանակ կորստի չափը. Խումբը դեֆոլտի ժամանակ կորստի չափը հաշվարկելու նպատակով օգտագործում է դեֆոլտի ամսաթվից հետո վերականգնումների վերաբերյալ պատմական տվյալները բոլոր դեֆոլտի ենթարկված վարկերի կտրվածքով: Դեֆոլտի ժամանակ կորստի չափը հաշվարկելու համար PD PIT-ի գնահատման համար օգտագործվող նախնական խմբավորումը հետագայում ենթարկվում է ենթախմբավորման ՝ ըստ գրավի տեսակի: Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը հավաքագրվում է դեֆոլտի ամսաթվից հետո ՝ ըստ LGD խմբերի: Ժամանակային կտրվածքով վերջին ժամկետանց վարկերի համար հնարավոր վերադարձի հավանականությունը գնահատվում է նախկինում ժամկետանց վարկերի պորտֆելյացիայի զարգացման գործակցով: Տվյալ շրջանակներում հաշվի են առնվում հավաքագրման քաղաքականության ցանկացած փոփոխություն: Հավաքագրվում է դեֆոլտի ամսաթվից հետո դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը և զեղչվում դեֆոլտի ամսաթվի դրությամբ՝ միջին արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի օգտագործմամբ, յուրաքանչյուր LGD խմբի գծով: Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է բոլոր տեսակի դրամական ներհոսքերը ժամկետանց վարկերի գծով (վարկերի մարումից ստացված միջոցներ, երաշխավորից ստացված միջոցներ, գրավի առարկայի վաճառքից ստացված միջոցներ և այլն):

Վարկային ռիսկի զգալի աճ. Խումբը սահմանել է քաղաքականություն՝ գնահատելու յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի վարկային ռիսկի զգալի աճի հայտանիշները՝ սկզբնական ճանաչման պահից ի վեր հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացորդային ժամկետի ընթացքում տեղի ունեցող դեֆոլտի ռիսկի փոփոխությունը: .: Խմբի կողմից օգտագործվող օբյեկտիվ չափանիշը վարկերի ժամկետանց օրերի մասին տեղեկատվությունն է: Խումբը եզրակացնում է, որ կա ակտիվների վարկային ռիսկի զգալի աճ, երբ փոխառուի այդ ակտիվների հետ կապված վճարումները ժամկետանց են ավելի քան 30 օրով:

Բանկի ղեկավարությունը նաև հաշվի է առնում հետևյալ գործոնները՝ վարկային ռիսկի աճը որոշելու համար.

- Հայաստանի այլ ֆինանսական հաստատություններում վարկառուի ժամկետանց օրերը.
- Նախասահմանված փոխկապակցված կողմերի ժամկետանց օրերը.
- Վարկառուի ֆինանսական պայմաններում զգալի դժվարությունները.
- Վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով առաջացած վարկի պայմանների վերանայումը.
- Վարկառուի գործունեության ֆինանսական մոնիտորինգի արդյունքը.

Կանխատեսումային տեղեկատվություն և բազմակի տնտեսական սցենարներ

ԱՎԿ մոդելներում Խումբը հիմնվում է կանխատեսումային տեղեկատվության լայն շրջանակի վրա, մասնավորապես այնպիսի տնտեսական ելակետային տվյալների, ինչպիսիք են՝

2024թ.

- Համախառն ներքին արդյունքի աճ, %

- ՀՀ դրամ/ԱՄՆ դոլարի փոխարժեք, միջին ամսական
- ՀՀ դրամ-ԱՄՆ դոլարի փոխարժեք, տարեվերջին
- Արդյունաբերական արտադրանքի ծավալ, տարեկան աճ %
- Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալ, տարեկան աճ %
- Ծառայությունների ծավալ (առանց առևտրի), տարեկան աճ %
- ՀՀ պետական բյուջե, դեֆիցիտ/ավելցուկ.

2023թ.
- Համախառն ներքին արդյունքի աճ, %
- ՀՀ դրամ/ԱՄՆ դոլարի փոխարժեք, միջին ամսական
- ՀՀ դրամ-ԱՄՆ դոլարի փոխարժեք, տարեվերջին
- Արտահանման աճ %, մլն ԱՄՆ դոլար
- Արդյունաբերական արտադրանքի ծավալ, տարեկան աճ %
- Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալ, տարեկան աճ %
- Ծառայությունների ծավալ (առանց առևտրի), տարեկան աճ %
- ՀՀ պետական բյուջե, դեֆիցիտ/ավելցուկ.

Խումբը կանխատեսումային տեղեկատվությունը ստանում է երրորդ կողմի աղբյուրներից (Տնտեսական հետախուզության գրասենյակ, ՀՀ ԿԲ, ինչպես նաև ՀՀ Ֆինանսների նախարարություն): 15%, 70% և 15% հավանականությունները վերագրվում են համապատասխան սցենարներից յուրաքանչյուրին՝ լավատեսական, բազային և հոռետեսական սցենարներին:

Աղյուսակները ցույց են տալիս 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՎԿ հաշվարկների համար օգտագործվող տնտեսական սցենարներից յուրաքանչյուրում օգտագործված հիմնական կանխատեսումային տնտեսական փոփոխականների/ենթադրությունների արժեքները: Մակրո-փոփոխականները ընտրվում են հետահայաց ընտրության մեթոդով, և յուրաքանչյուր պարամետր ընտրվում է՝ ելնելով դրա վիճակագրական նշանակությունից:

Աղյուսակները ցույց են տալիս 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՎԿ հաշվարկների համար օգտագործվող տնտեսական սցենարներից յուրաքանչյուրում օգտագործված հիմնական կանխատեսումային տնտեսական փոփոխականների/ենթադրությունների արժեքները:

Հիմնական ցուցանիշներ	**ԱՎԿ սցենար**	**Վերագրված հավանակա-նություն, %**	**2025**	**2026**	**2027**
ՀՀ դրամ/ԱՄՆ դոլարի փոխարժեք, միջին ամսական	Լավատեսական	15%	349.83	382.14	372.44
	Ելակետային	70%	377.04	437.84	456.93
	Հոռետեսական	15%	404.26	463.80	487.15
Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալ, տարեկան աճ %	Լավատեսական	15%	6.00%	6.60%	7.30%
	Ելակետային	70%	0.50%	0.20%	0.30%
	Հոռետեսական	15%	-5.00%	-6.20%	-6.70%
ՀՀ պետական բյուջե, դեֆիցիտ/ավելցուկ.	Լավատեսական	15%	(380,460)	(312,542)	(227,633)
	Ելակետային	70%	(615,800)	(553,900)	(472,700)
	Հոռետեսական	15%	(851,140)	(795,258)	(717,767)
Ծառայությունների ծավալ (առանց առևտրի), տարեկան աճ %	Լավատեսական	15%	10.87%	11.87%	12.22%
	Ելակետային	70%	5.30%	5.60%	5.50%
	Հոռետեսական	15%	-0.27%	-0.67%	-1.22%
Արդյունաբերական արտադրանքի ծավալ, տարեկան աճ %	Լավատեսական	15%	6.67%	7.03%	7.59%
	Ելակետային	70%	4.00%	3.70%	3.80%
	Հոռետեսական	15%	1.33%	0.37%	0.01%
ՀՀ դրամ-ԱՄՆ դոլարի փոխարժեք, տարեվերջին	Լավատեսական	15%	349.88	382.20	372.49
	Ելակետային	70%	377.1	437.9	457
	Հոռետեսական	15%	404.32	463.87	487.22
Համախառն ներքին արդյունքի աճ, %	Լավատեսական	15%	10.43%	11.07%	11.70%
	Ելակետային	70%	4.90%	4.60%	4.60%
	Հոռետեսական	15%	-0.63%	-1.87%	-2.50%

Աղյուսակները ցույց են տալիս 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՎԿ հաշվարկների համար օգտագործվող տնտեսական սցենարներից յուրաքանչյուրում օգտագործված հիմնական կանխատեսումային տնտեսական փոփոխականների/ենթադրությունների արժեքները:

Հիմնական ցուցանիշներ	ԱՎԿ սցենար	Վերագրված հավանակա-նություն, %	2024	2025	2026
ՀՀ դրամ/ԱՄՆ դոլարի փոխարժեք, միջին ամսական	Լավատեսական	15%	368.46	353.87	383.03
	Ելակետային	70%	389.24	394.94	448.73
	Հոռետեսական	15%	410.02	438.27	521.53
Արտահանում, %	Լավատեսական	15%	-5.76%	6.77%	8.44%
	Ելակետային	70%	-9.50%	2.60%	4.00%
	Հոռետեսական	15%	-13.24%	-1.57%	-0.44%
Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալ, տարեկան աճ %	Լավատեսական	15%	6.24%	7.07%	7.34%
	Ելակետային	70%	2.50%	2.90%	2.90%
	Հոռետեսական	15%	-1.24%	-1.27%	-1.54%
ՀՀ պետական բյուջե, դեֆիցիտ/ավելցուկ.	Լավատեսական	15%	(115,920)	(131,975)	(146,097)
	Ելակետային	70%	(302,500)	(319,700)	(334,500)
	Հոռետեսական	15%	(489,080)	(507,425)	(522,903)
Ծառայությունների ծավալ (առանց առևտրի), տարեկան աճ %	Լավատեսական	15%	9.44%	9.67%	9.54%
	Ելակետային	70%	5.70%	5.50%	5.10%
	Հոռետեսական	15%	1.96%	1.33%	0.66%
Արդյունաբերական արտադրանքի ծավալ, տարեկան աճ %	Լավատեսական	15%	9.72%	9.10%	8.18%
	Ելակետային	70%	6.20%	6.10%	5.50%
	Հոռետեսական	15%	2.68%	3.10%	2.82%
ՀՀ դրամ-ԱՄՆ դոլարի փոխարժեք, տարեվերջին	Լավատեսական	15%	368.52	353.92	383.09
	Ելակետային	70%	389.30	395.00	448.80
	Հոռետեսական	15%	410.08	438.34	521.61
Համախառն ներքին արդյունքի աճ, %	Լավատեսական	15%	9.84%	9.87%	9.84%
	Ելակետային	70%	6.10%	5.70%	5.40%
	Հոռետեսական	15%	2.36%	1.53%	0.96%

Մակրոտնտեսական ելակետային ենթադրություններին վերագրված կշռի փոփոխությունը 10%-ով դեպի անմիջական հոռետեսական ուղղությամբ՝ կհանգեցնի 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՎԿ-ի աճի 18,238 հազ. ՀՀ դրամով (2023թ.՝ 15,471 հազ. ՀՀ դրամով): Լավատեսական ենթադրությունների ուղղությամբ համապատասխան փոփոխությունը կհանգեցնի ԱՎԿ-ի նվազմանը 15,019 հազ. ՀՀ դրամով 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (2023թ.՝ 13,793 հազ. ՀՀ դրամով):

PD-ի գնահատումների 10% աճը կհանգեցնի 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող վարկային կորուստների ընդհանուր պահուստի աճի՝ 176,960 հազ. ՀՀ դրամի չափով (2023թ.՝ 168,005 հազ. ՀՀ դրամ): PD-ի գնահատումների 10% նվազումը կհանգեցնի 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող վարկային կորուստների ընդհանուր պահուստի նվազման՝ 176,960 հազ. ՀՀ դրամի չափով (2023թ.՝ 168,005 հազ. ՀՀ դրամ): LGD-ի գնահատումների 10% աճը կհանգեցնի 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող վարկային կորուստների ընդհանուր պահուստի աճի՝ 495,152 հազ. ՀՀ դրամի չափով (2023թ.՝ 497,460 հազ. ՀՀ դրամ): LGD-ի գնահատումների 10% նվազումը կհանգեցնի 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող վարկային կորուստների ընդհանուր պահուստի նվազման՝ 496,544 հազ. ՀՀ դրամի չափով (2023թ.՝ 499,140 հազ. ՀՀ դրամ):

Վարկի որակը ֆինանսական ակտիվների դասի համար Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է տեղեկատվություն իրավաբանական և ֆիզիկական անձանց զուտ վարկերի և ֆինանսական վարձակալությունից դեբիտորական պարտքերի վերաբերյալ 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

2024թ. *Հազ. ՀՀ դրամ*	**Ծան.**		**Բարձր կարգ**	**Ստանդարտ Դաս**	**Ենթաստանդարտ Կարգ**	**Արժեզրկված**	**Ընդամենը**
Հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով	**12**						
Կորպորատիվ վարկեր		Փուլ 1	153,530	216,651,673	-	-	**216,805,203**
		Փուլ 2	-	-	3,113,823	-	**3,113,823**
		Փուլ 3	2,677	-	-	3,206,559	**3,209,236**
		POCI	-	-	-	-	**-**
Գյուղատնտեսական վարկեր		Փուլ 1	366,696	82,876,374	-	-	**83,243,070**
		Փուլ 2	-	-	834,303	-	**834,303**
		Փուլ 3	-	-	-	1,431,376	**1,431,376**
Սպառողական վարկեր		Փուլ 1	4,216,812	125,403,005	-	-	**129,619,817**
		Փուլ 2	5,172	-	1,190,617	-	**1,195,789**
		Փուլ 3	33,632	-	-	2,096,008	**2,129,640**
Վարկային քարտեր		Փուլ 1	1,031,049	12,353,401	-	-	**13,384,450**
		Փուլ 2	4,079	-	133,702	-	**137,781**
		Փուլ 3	9,965	-	-	342,834	**352,799**
Հիփոթեքային վարկեր		Փուլ 1	-	79,069,484	-	-	**79,069,484**
		Փուլ 2	-	-	726,827	-	**726,827**
		Փուլ 3	-	-	-	937,653	**937,653**
		POCI	-	-	-	18,781	**18,781**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	12	Փուլ 1	-	92,015,673	-	-	**92,015,673**
		Փուլ 2	-	-	654,387	-	**654,387**
		Փուլ 3	-	-	-	435,761	**435,761**
Ընդամենը			**5,823,612**	**608,369,610**	**6,653,659**	**8,468,972**	**629,315,853**

2023թ. *Հազ. ՀՀ դրամ*	**Ծան.**		**Բարձր կարգ**	**Ստանդարտ Դաս**	**Ենթաստանդարտ Կարգ**	**Արժեզրկված**	**Ընդամենը**
Հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով	**12**						
Կորպորատիվ վարկեր		Փուլ 1	171,666	181,919,226	-	-	**182,090,892**
		Փուլ 2	-	-	3,750,067	-	**3,750,067**
		Փուլ 3	-	-	-	4,738,955	**4,738,955**
		POCI	-	-	-	-	**-**
Գյուղատնտեսական վարկեր		Փուլ 1	701,738	83,536,755	-	-	**84,238,493**
		Փուլ 2	-	-	949,173	-	**949,173**
		Փուլ 3	-	-	-	1,628,665	**1,628,665**
Սպառողական վարկեր		Փուլ 1	3,212,308	104,992,424	-	-	**108,204,732**
		Փուլ 2	16,197	-	1,473,999	-	**1,490,196**
		Փուլ 3	19,006	-	-	2,002,259	**2,021,265**
Վարկային քարտեր		Փուլ 1	863,206	10,885,987	-	-	**11,749,193**
		Փուլ 2	2,544	-	163,080	-	**165,624**
		Փուլ 3	6,188	-	-	348,322	**354,510**
Հիփոթեքային վարկեր		Փուլ 1	-	52,441,478	-	-	**52,441,478**
		Փուլ 2	-	-	577,610	-	**577,610**
		Փուլ 3	-	-	-	768,803	**768,803**
		POCI	-	-	-	29,681	**29,681**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	12	Փուլ 1	-	82,769,521	-	-	**82,769,521**
		Փուլ 2	-	-	206,263	-	**206,263**
		Փուլ 3	-	-	-	430,642	**430,642**
Ընդամենը			**4,992,853**	**516,545,391**	**7,120,192**	**9,947,327**	**538,605,763**

Ստորև բերված աղյուսակները ներկայացնում են հաճախորդներին տրված վարկերի և ֆինանսական վարձակալության դեբիտորական պարտքերի միջին PD-ները՝ ըստ ելակետային սցենարի՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

2024թ.	**Կարգ**	**Միջին PD**
Կորպորատիվ վարկեր	Ստանդարտ	0.78%
	Ենթաստանդարտ	7.27%
	Դեֆոլտ	100.00%
Գյուղատնտեսական վարկեր	Ստանդարտ	0.78%
	Ենթաստանդարտ	4.13%
	Դեֆոլտ	100.00%
Սպառողական վարկեր	Ստանդարտ	1.59%
	Ենթաստանդարտ	21.33%
	Դեֆոլտ	100.00%
Վարկային քարտեր	Ստանդարտ	1.17%
	Ենթաստանդարտ	16.69%
	Դեֆոլտ	100.00%
Հիփոթեքային վարկեր	Ստանդարտ	0.35%
	Ենթաստանդարտ	9.82%
	Արժեզրկված	100.00%
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	Ստանդարտ	0.88%
	Ենթաստանդարտ	11.72%
	Դեֆոլտ	100.00%
2023թ.	**Կարգ**	**Միջին PD**
Կորպորատիվ վարկեր	Ստանդարտ	1.0%
	Ենթաստանդարտ	6.1%
	Դեֆոլտ	100.0%
Գյուղատնտեսական վարկեր	Ստանդարտ	0.8%
	Ենթաստանդարտ	4.6%
	Դեֆոլտ	100.0%
Սպառողական վարկեր	Ստանդարտ	1.4%
	Ենթաստանդարտ	17.7%
	Դեֆոլտ	100.0%
Վարկային քարտեր	Ստանդարտ	1.1%
	Ենթաստանդարտ	15.5%
	Դեֆոլտ	100.0%
Հիփոթեքային վարկեր	Ստանդարտ	0.8%
	Ենթաստանդարտ	9.1%
	Դեֆոլտ	100.0%
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	Ստանդարտ	1.1%
	Ենթաստանդարտ	9.1%
	Դեֆոլտ	100.0%

* Բարձր կարգի վարկերը, որոնք ապահովված են դրամական միջոցների գրավով, չեն պարունակում դեֆոլտի հավանականություն (PD), քանի որ դրանց համար անհրաժեշտ չէ ակնկալվող վարկային կորստի (ԱՎԿ) հաշվարկ: Բարձր կարգի վարկերի ենթարկվածությունը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 5,823,612 հազ. ՀՀ դրամ (պայմանագրի գումարը՝ 10,503,012 հազ. ՀՀ դրամ, այդ վարկերի դրամական միջոցներով ապահովվածությունը կազմել է 11,771,894 հազ. ՀՀ դրամ):

Վարկի որակը ֆինանսական ակտիվների դասի համար Ստորև ներկայացված ֆինանսական ակտիվների վարկային որակը կառավարվում է Խմբի կողմից՝ հիմնվելով արտաքին վարկանիշների վրա: Չվարկանշված ազդեցությունները դասակարգվում են Ստանդարտ դասում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք արժեզրկված չեն:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Հազ. ՀՀ դրամ	Ծան.		Բարձր դաս	Ստանդարտ կարգ	Ենթա-ստանդարտ դաս	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (առանց կանխիկ միջոցների)	8	Փուլ1	836,549	77,442,541	927,855	**79,206,945**
Պահանջներ բանկերի նկատմամբ	10	Փուլ 1	630,373	80,916,055	-	**81,546,428**
Ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթեր	11	Փուլ 1	-	45,608,635	-	**45,608,635**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	11	Փուլ 1	-	13,265,904	-	**13,265,904**
Ընդամենը			**1,466,922**	**217,233,135**	**927,855**	**219,627,912**

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

Հազ. ՀՀ դրամ	Ծան.		Բարձր դաս	Ստանդարտ կարգ	Ենթա-ստանդարտ դաս	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (առանց կանխիկ միջոցների)	8	Փուլ 1	9,530,941	45,280,966	689,588	**55,501,495**
Պահանջներ բանկերի նկատմամբ	10	Փուլ 1	4,187,341	95,279,638	-	**99,466,979**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	11	Փուլ 1	-	18,534,900	-	**18,534,900**
Ընդամենը			**13,718,282**	**159,095,504**	**689,588**	**173,503,374**

Ստորև ներկայացված է Խմբի դասակարգման համակարգի և գործընկերների արտաքին վարկանիշների համեմատությունը 2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

2024: **Արտաքին միջազգային վարկանիշային գործակալության (Moody's) վարկանիշ**	**Ներքին վարկանիշի նկարագրությունը**	**PD**
Aaa-ից A3	Բարձր կարգ	0-0.05%
Baa1-ից B3	Ստանդարտ	0.17% -3.15%
Caa1-ից Ca	Ենթաստանդարտ կարգ	8.94%
C	Արժեզրկված	100%

2023թ. **Արտաքին միջազգային վարկանիշային գործակալության (Moody's) վարկանիշ**	**Ներքին վարկանիշի նկարագրությունը**	**PD**
Aaa-ից A3	Բարձր կարգ	0-0.05%
Baa1-ից B3	Ստանդարտ	0.17% -3.22%
Caa1-ից Ca	Ենթաստանդարտ դաս	9.09%
C	Արժեզրկված	100%

Իրացվելիության ռիսկ և ֆինանսավորման կառավարում:

Խումբը ենթարկվում է իրացվելիության ռիսկի՝ ինչպես ֆինանսավորման, այնպես էլ առևտրային իրացվելիության ռիսկի առումով: Ֆինանսավորման իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը կարող է չունենալ բավարար իրացվելի դրամական միջոցներ և ակտիվներ՝ իր պարտավորությունները կատարելու համար:

Առևտրային իրացվելիության ռիսկը ակտիվների արժեքի կորստի ռիսկն է, երբ շուկաները ժամանակավոր սեղմվում են, ինչը կարող է ստիպել Խմբին կիրառել անսովոր ցածր գին կամ զրկել Խմբին ցանկացած գնով ակտիվը դրամական միջոցների և ֆինանսավորման վերածելու հնարավորությունից:

Խմբի ներսում սթրեսային սցենարը, որը ընկած է մոդելի հիմքում և կարևոր է կառավարման նպատակների համար, հաշվի է առնում ինչպես Խմբին բնորոշ սթրեսային դեպքերը, այնպես էլ ավելի լայնածավալ շուկայական ճգնաժամերը:

Ֆինանսավորման իրացվելիության ռիսկը սահմանափակելու համար ղեկավարությունը դիվերսիֆիկացնում է ֆինանսավորման աղբյուրները, ի լրում իր հիմնական ավանդային բազայի: Այդ գործընթացը ներառում է ակնկալվող դրամական միջոցների գնահատում և առաջնակարգ ապահովման միջոցի առկայություն, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորման ստացման համար:

Առևտրային իրացվելիության ռիսկը սահմանափակելու համար Խումբը պահպանում է բարձր իրացվելի և տարաբնույթ ակտիվների պորտֆել (բարձր իրացվելի ակտիվներ), որոնք կարող են հեշտությամբ իրացվել դրամական միջոցների հոսքերի չնախատեսված ընդհատման դեպքում:

Խումբը ունի նաև վարկային գծեր, ինչից այն կարող է օգտվել իրացվելիության կարիքների դեպքում: Բացի այդ, Խումբը ՀՀ ԿԲ-ում պահում է դրամային ավանդ (պարտադիր պահուստ), որի գումարը կախված է ներգրավված միջոցների ծավալից:

Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է Խմբի կողմից՝ հիմնվելով Կենտրոնական բանկի կողմից սահմանված իրացվելիության որոշակի գործակիցների վրա: Ի հավելումն նորմատիվային իրացվելիության ցուցանիշի, Խումբը իր «Ռիսկի ախորժակի մասին» հաշվետվությունում սահմանում է իրացվելիության ռիսկի ախորժակը, հանդուրժողականությունը, կարողությունների մակարդակները և իրացվելիության ռիսկի այլ համապատասխան սահմանաչափեր: Իրացվելիության ընդունելի մակարդակը պահպանելու համար Խումբը պահում է բարձր իրացվելի ակտիվներ, ներառյալ դրամական միջոցներ, նոստրո հաշիվներ, Հայաստանի կառավարության կողմից թողարկված պարտքային արժեթղթեր և կորպորատիվ պարտքային արժեթղթեր, որոնց համար առկա է ակտիվ և իրացվելի շուկա, որոնք գրավադրված չեն կամ որոնց օգտագործումը որևէ կերպ սահմանափակված չէ: Ցպահանջ վճարման ենթակա պարտավորությունները ներառում են հաճախորդների ընթացիկ հաշիվները և ցպահանջ ավանդները, ինչպես նաև ցանկացած այլ պարտավորություն, որը ենթակա է ցպահանջ վճարման:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ այս գործակիցները հետևյալն էին.

	Սահմանաչափ	2024թ. , %	2023թ. , %
Ն2.1-Ընդհանուր իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/ընդհանուր ակտիվներ)	Նվազագույնը 15%	25.36%	23.97%
Ն2.2-Ընթացիկ իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ)	Նվազագույնը 60%	107.39%	102.95%

Ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծություն . Ստորև ներկայացվում է դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների՝ պայմանագրային չզեղչված պարտավորությունների հիման վրա. Պարտավորությունները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, դասակարգվում են այնպես, ինչպես եթե մարման պահանջը ներկայացված լիներ ամենավաղ հնարավոր ամսաթվով: Սակայն Խումբը գտնում է, որ շատ հաճախորդներ չեն պահանջի վճարումը այն ամենավաղ հնարավոր ամսաթվի դրությամբ, որով Խումբը պարտավորված կլինի կատարել վճարումը, և աղյուսակը չի արտացոլում ակնկալվող դրամական

հոսքերը՝ հաշվարկված Խմբի կողմից՝ անցյալ ժամանակաշրջաններում ավանդները պահանջելու պատմական վիճակագրության հիման վրա:

39 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում 96
40 Կապիտալի համարժեքություն 97
41 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր 98

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ Բաժնետերերին և Խորհրդին

Մեր կարծիքը

Մեր կարծիքով, համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ի (այսուհետ՝«Բանկ») և նրա դուստր ձեռնարկությունների (այսուհետև միասին՝ «Խումբ») համախմբված ֆինանսական վիճակն առ 2023թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև Խմբի՝ այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքները և համախմբված դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ՖՀՄՍ հաշվապահական ստանդարտների:

Աուդիտի առարկան

Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են.

- ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունն՝ առ 31 դեկտեմբերի 2023թ.,
- այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի մասին համախմբված հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը.
- այդ ամսաթվին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, և
- համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության էական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Կարծիքի հիմքը

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Անկախություն

Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից թողարկված՝ Պրոֆեսիոնալ հաշվապահների միջազգային վարքագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտների) («ՀԷՄՍԽ Վարքագիրք») սկզբունքների, ինչպես նաև Աուդիտորի Պրոֆեսիոնալ Էթիկայի Վարքագրքի և Աուդիտորի անկախության գծով էթիկական պահանջների, որոնք կիրառելի են Հայաստանի Հանրապետությունում համախմբված ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ: Մենք կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ ՀԷՄՍԽ Վարքագրքին համապատասխան:

Մեր աուդիտի մոտեցումը

Նկարագիր



- Խմբի ընդհանուր էականությունը. 1,738,000 հազ. ՀՀ դրամ, որը ներկայացնում է մոտավորապես 5%-ը Խմբի 2023թ. շահույթ մինչև շահութահարկով հարկումից (ԵՄՀ):
- Մենք ամբողջ ծավալով աուդիտորական աշխատանք ենք իրականացրել Խմբի երկու նշանակալի բաղադրիչների գծով: Երրորդ բաղադրիչը գնահատվել է որպես ոչ նշանակալի, որի գծով համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի տեսանկյունից էական գործարքներ տեղի չեն ունեցել: Մեր աուդիտի շրջանակը ապահովել է մոտավորապես 100% ծածկույթ Խմբի տոկոսային և միջնորդավճարների եկամտի գծով և մոտավորապես 100% ծածկույթ Խմբի շահույթ մինչև շահութահարկով հարկումի գծով:
- Համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում առավել բարձր նշանակալիություն ունեցող աուդիտի հարց է համարվել հաճախորդներին տրված վարկերի գծով ակնկալվող վարկային կորստի պահուստը:

Մեր աուդիտի նախագծման շրջանակներում մենք սահմանել ենք էականությունը և գնահատել ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը: Մասնավորապես, մենք դիտարկել ենք այն ոլորտները, որտեղ ղեկավարությունը կատարել է սուբյեկտիվ դատողություններ, օրինակ, նշանակալի հաշվապահական գնահատումների առնչությամբ, որոնք պահանջում են ենթադրություններ և իրենց էությամբ անորոշ ապագա իրադարձությունների դիտարկում: Ինչպես մեր բոլոր աուդիտների դեպքում, մենք նաև անդրադարձել ենք ղեկավարության կողմից ներքին հսկողության շրջանցման ռիսկերին, ներառյալ, ի թիվս այլ հարցերի, դիտարկել ենք, թե արդյոք առկա են կողմնակալության վկայություններ, որոնք պարունակում են խարդախության հետևանքով էական խեղաթյուրման ռիսկ:

Էականություն

Մեր աուդիտի շրջանակի վրա ազդեցություն է ունեցել մեր կողմից էականության սկզբունքի կիրառումը: Աուդիտը նախագծում է այնպես, որ ձեռք բերվի ողջամիտ հավաստիացում առ այն, թե արդյոք համախմբված ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից: Խեղաթյուրումներ կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով: Խեղաթյուրումները համարվում են էական, եթե կարելի է ողջամտորեն ակնկալել, որ դրանք առանձին, կամ միասին վերցված, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա օգտագործողների կողմից կայացվող տնտեսական որոշումների վրա:

Մեր մասնագիտական դատողության հիման վրա մենք սահմանել ենք էականության որոշակի քանակական շեմեր, ներառյալ՝ Խմբի գծով ընդհանուր էականությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, որպես ամբողջություն, ինչպես ներկայացված է ստորև բերված աղյուսակում: Դրանց միջոցով, որակական նկատառումների հետ միասին, մենք որոշել ենք մեր աուդիտի շրջանակը և մեր աուդիտորական ընթացակարգերի բնույթը, ժամկետները և ծավալը, և գնահատել ինչպես առանձին, այնպես էլ միասին վերցված՝ խեղաթյուրումների ազդեցությունը, եթե առկա է, համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա, որպես ամբողջություն:

Խմբի գծով ընդհանուր Էականությունը	1,738,000 հազ. ՀՀ դրամ
Ինչպես է այն որոշվել	տարեկան ԾՄՀ-ի 5%-ը
Էականության համեմատական մեծության որոշման հիմնավորումը	Մենք որպես համեմատական մեծություն ընտրել ենք ԾՄՀ-ն, քանի որ, մեր կարծիքով, դա այն չափորոշիչն է, որի միջոցով Խմբի կատարողական արդյունքները առավել հաճախ գնահատվում են օգտագործողների կողմից, և հանդիսանում է համընդհանուր ընդունված չափանիշ: Մենք ընտրել ենք 5%-ը, ինչը համապատասխանում է ֆինանսական ծառայությունների ոլորտի՝ շահույթ հետապնդող ընկերությունների համար օգտագործվող քանակական Էականության շեմերին:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, ըստ մեր մասնագիտական դատողության, առավել նշանակալի են եղել ընթացիկ ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ընդհանուր առմամբ համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում և հաշվետվությունների վերաբերյալ կարծիքի ձևավորման համար, և մենք չենք արտահայտում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ:

Աուդիտի առանցքային հարց	Ինչպես է առանցքային հարցը դիտարկվել մեր աուդիտի ընթացքում
Դաշնախորհներին տրված վարկերի գծով ակնկալվող վարկային կորստի պահուստ Տե՛ս Ծանոթագրություն 4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական դրույթներ, Ծանոթագրություն 5. Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գծով առանցքային գնահատականներ և դատողություններ և Ծանոթագրություն 12. Դաշնախորհներին տրված վարկեր Մենք առանձնահատուկ անդրադառնձել ենք այս ոլորտին, քանի որ դաշնախորհներին տրված վարկերի գծով ակնկալվող վարկային կորուստների («ԱՎԿ») պահուստների վերաբերյալ ղեկավարության գնահատումները և ենթադրությունները բարդ են և պահանջում են դատողության զգալի աստիճան: Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», ղեկավարությունից պահանջվում է գնահատել ԱՎԿ պահուստ՝ համապատասխան այն կորուստներին, որոնք ակնկալվում է, որ տեղի կունենան Փուլ 1 վարկերի գծով առաջիկա 12 ամիսների ընթացքում, և Փուլ 2 և 3 վարկերի գծով՝ ֆինանսական ակտիվի ողջ տևողության ընթացքում: Ղեկավարությունը նաև հաշվի է առնում ապագա տարբեր մակրոտնտեսական պայմանների ազդեցությունը ԱՎԿ-ի որոշման հարցում:	Մենք պատկերացում ենք ձեռք բերել և գնահատել ենք ԱՎԿ պահուստի որոշման հիմնական հսկողությունների նախագծման վերաբերյալ, և ստուգել ենք դրանց գործառնական արդյունավետությունը: Այդ հսկողությունները ներառում էին, մասնավորապես. • Մոդելի կատարողական արդյունքների մշտադիտարկման նկատմամբ հսկողությունը, ներառյալ քաղաքականության և մոդելների պարբերական վերանայումները, փաստացի արդյունքների համեմատ մոդելի գնահատումների ստուգումները և մոդելի մեթոդաբանության փոփոխությունների հաստատումը, այդ թվում՝ հիմնական չափորոշիչների հաշվարկների նկատմամբ հսկողությունը հաշվարկային գործիքի միջոցով, • ԱՎԿ հաշվարկման և արդյունքների վերլուծության նկատմամբ հսկողությունը, և • ԱՎԿ հաշվարկների համան տվյալների փոխանցման նկատմամբ հսկողությունը: Ի լրումն, մենք իրականացրել ենք ստորև նկարագրված բովանդակային ընթացակարգերը:

Ղեկավարությունը մշակել և ներդրել է մի շարք մոդելներ՝ ՖՀՄՍ 9-ի պահանջներին և կառավարման քաղաքականությանը համապատասխանության ապահովման նպատակով: Մասնավորապես, ղեկավարությունը մոդելների առնչությամբ կիրառել է դատողություն այն իրավիճակներում, երբ համարվել է, որ անցյալ փորձը չի արտացոլում ապագա արդյունքները՝ սահմանափակ կամ թերի տվյալների պատճառով:

ԱՎԿ-ի որոշման համար մենք ամենանշանակալի ենք դիտարկել հետևյալը.

- ԱՎԿ-ի որոշման համար օգտագործվող չափորոշիչների գնահատման առնչությամբ ղեկավարության կողմից կիրառված մոդելի մեթոդաբանությունների և առանցքային դատողությունների և ենթադրությունների տեղին լինելը.
- Վարկային ռիսկի նշանակալի աճի բացահայտման համար կիրառվող դատողության չափանիշները, ներառյալ՝ խմբի պորտֆելներին առնչվող վարկառուների վարկունակության որակական գնահատումը.
- Առանցքային ենթադրություններ, որոնք կիրառվել են դեֆոլտի դեպքում կորստի և դեֆոլտի հավանականության որոշման ժամանակ, և.
- Հեռանկարային տեղեկատվության հետ կապված առանցքային ենթադրությունների գնահատումը, ներառյալ սցենարային կշիռների և մակրոտնտեսական փոփոխականների տեղին լինելը:

Մենք գնահատել ենք ղեկավարության կողմից մշակված ՖՀՄՍ 9-ի ներքո ԱՎԿ մոդելավորման մեթոդաբանությունների տեղին լինելը՝ ներգրավելով վարկային ռիսկերի մոդելավորման մեր մասնագետներին և կիրառելով ոլորտի մեր գիտելիքները: Մասնավորապես, գնահատել ենք վարկային ռիսկի նշանակալի աճը արձանագրելու նպատակով ղեկավարության կողմից սահմանված դատողության չափանիշները (կորպորատիվ, ՓՄՁ և մանրածախ պորտֆելների համար կիրառելի), ինչպես նաև դեֆոլտի դեպքում կորստի և դեֆոլտի հավանականության որոշման ժամանակ կիրառված առանցքային դատողությունները և ենթադրությունները:

Մենք կատարել ենք ԱՎԿ հաշվարկի անկախ ստուգում և գնահատել ենք ԱՎԿ-ի հաշվարկների համապատասխանությունը հաստատված մոդելային մեթոդաբանություններին:

Մենք ղեկավարության հետ քննարկել ենք մակրոտնտեսական մոդելների համապատասխանության, ինչպես նաև յուրաքանչյուր մակրոտնտեսական սցենարի համար կիրառված կշիռների հիմնավորվածությունը:

Մենք նաև առանձին գնահատել ենք արժեզրկված վարկերը, որոնք հաշվառված են որպես անհատապես արժեզրկված՝ Փուլ 3 վարկեր: Մենք քննադատական մոտեցմամբ գնահատել ենք չափորոշիչների գնահատման նպատակով ղեկավարության կողմից կիրառված մեթոդաբանության, դատողությունների և ենթադրությունների ողջամտությունը, և գնահատել ենք մուտքային տվյալների ճշգրտությունը և հաշվարկների ճշտությունը:

Մենք նաև գնահատել ենք բացահայտումների ճշգրտությունն ու ամբողջականությունը:

Ինչպես ենք մենք մշակել խմբի աուդիտի շրջանակը

Մենք խմբի աուդիտի շրջանակը մշակել ենք այնպես, որ իրականացվող ընթացակարգերի ծավալը բավարար լինի կարծիք արտահայտելու համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ, որպես ամբողջություն՝ հաշվի առնելով խմբի կառուցվածքը, հաշվապահական հաշվառման գործընթացները և հսկողությունը, ինչպես նաև խմբի գործունեության ոլորտը:

Խումբն իր գործունեությունը հիմնականում իրականացնում է Հայաստանում: Խմբի հիմնական գործառնությունները առնչվում են բանկային և լիզինգային ոլորտներին: Բանկային գործունեությունը կազմում է խմբի ամենամեծ բաղադրիչը, որը ներկայացնում է խմբի ընդհանուր ակտիվների մոտավորապես 88%-ը և խմբի շահույթ՝ մինչև շահութահարկով հարկումի 86%-ը: Խմբի գործունեության մնացած 12-14%-ը հիմնականում վերագրելի է լիզինգային բիզնեսին: Խմբի աուդիտի թիմը կատարել է անհրաժեշտ աուդիտորական ընթացակարգեր ինչպես բանկային, այնպես էլ լիզինգային բաղադրիչների գծով:

Մեր աուդիտի մոտեցումը և թիմը ձևավորվել են խմբի կառուցվածքն արտացոլելու տեսանկյունից: Երկու նշանակալի հաշվետու միավորների նկատմամբ իրականացված մեր ընթացակարգերի հիման վրա մեր աուդիտի շրջանակը և ծածկույթը կազմել է խմբի եկամտի և ընդհանուր ակտիվների մնծության մոտավորապես 100%-ը:

Այլ տեղեկատվություն

Այլ տեղեկատվության համար պատասխանատու է ղեկավարությունը: Այլ տեղեկատվությունը ներառում է Տարեկան հաշվետվությունը (առանց համախմբված ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացության), որը ակնկալվում է, որ մեզ կներկայացվի այս աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի ներառում այլ տեղեկատվությունը, և մենք այդ տեղեկատվության վերաբերյալ չենք արտահայտելու որևէ տեսակի հավաստիացման գծով եզրահանգում:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի առնչությամբ մեր պատասխանատվությունն է՝ ծանոթանալ վերոնշյալ այլ տեղեկատվությանը, դրա հասանելիության դեպքում, և այդպիսով դիտարկել, թե արդյոք առկա է էական անհամապատասխանություն այլ տեղեկատվության և համախմբված ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում մեր կողմից ձեռք բերված տվյալների միջև, և՝ արդյոք այլ տեղեկատվությունը առերևույթ պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Եթե Տարեկան հաշվետվությանը ծանոթանալու արդյունքում մենք եզրահանգենք, որ դրանում առկա է էական խեղաթյուրում, մեզնից պահանջվում է այդ խնդիրը հաղորդել կառավարման օղակներում գտնվող անձանց:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պարտականությունները համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ հաշվապահական ստանդարտների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու, համապատասխան դեպքերում՝ անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Խմբի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները՝ ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալների հետևանքով առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կբացահայտի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով, և համարվում են էական, երբ ողջամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կարող են ազդեցություն ունենալ օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի շրջանակներում, մենք աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն, մենք.

- Որոշում և գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումների ռիսկը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում՝ մեր աուդիտորական կարծիքը արտահայտելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի բարձր է սխալի հետևանքով առաջացածի համեմատ, քանի որ խարդախությունը կարող է ներառել դավադրություն, կեղծիք, դիտավորյալ բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին վերահսկողության շրջանցում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Խմբի գործունեության անընդհատությունը պահպանելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մենք պարտավոր ենք մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են հանգեցնել նրան, որ Խումբը դադարեցնի անընդհատության սկզբունքով գործունեությունը:
- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, այդ թվում՝ բացահայտումները ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավարար չափով պատշաճ աուդիտորական ապացույցներ Խմբի կազմում գտնվող կազմակերպությունների կամ տնտեսական գործունեության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվություններ վերաբերյալ աուդիտորական կարծիք արտահայտելու համար: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի ուղղորդման, վերահսկողության և կատարման համար: Մենք հանդիսանում ենք միակ պատասխանատուն մեր արտահայտած աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Մենք նաև հայտարարում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց, որ մենք կատարել ենք անկախության վերաբերյալ համապատասխան էթիկական պահանջները, և նրանց հաղորդում ենք բոլոր այն հարաբերությունների և այլ հարցերի վերաբերյալ, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, ազդում են մեր անկախության վրա, և, անհրաժեշտության դեպքում, ձեռնարկվում են գործողություններ՝ սպառնալիքները վերացնելու կամ երաշխիքներ կիրառելու ուղղությամբ:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդված հարցերից մենք առանձնացնում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում և, հետևաբար հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ կարգավորող ակտերով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ, խիստ բացառիկ հանգամանքներում, մենք գտնում ենք, որ տվյալ հարցը աուդիտորական եզրակացությամբ ներկայացնելը նպատակահարմար չէ, քանի որ կարելի է ողջամտորեն ակնկալել, որ նման ներկայացման բացասական հետևանքները կգերակշռեն դրա հանրային շահ պարունակող օգուտների նկատմամբ:

Այս Անկախ աուդիտորական եզրակացություն համար հիմք հանդիսացած աուդիտորական աշխատանքների գծով պատասխանատու աուդիտոր է հանդիսանում Լևան Կանկավան:

Լևան Կանկավա
Պատասխանատու աուդիտոր

Նինո Կադագիշվիլի
Տնօրեն

29 ապրիլի 2024թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն

PricewaterhouseCoopers Armenia LLC

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	78,159,849	88,369,285
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	9	199,957	363,284
Պահանջներ բանկերի նկատմամբ	10	99,410,514	50,806,230
Ներդրումային արժեթղթեր	*11*		
- Բանկի կողմից պահվող		21,422,936	17,622,138
- վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված		-	6,019,389
Հաճախորդներին տրված վարկեր	12	455,199,337	408,439,245
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	13	83,406,426	53,423,221
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	37	1,775,530	1,362,224
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	14	27,110,978	25,360,445
Այլ ակտիվներ	17	17,108,253	13,173,420
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**783,793,780**	**664,938,881**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Բանկերից ներգրավված միջոցներ	18	1,152,894	9,937,634
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	19	503,231,650	424,168,945
Թողարկված պարտքային արժեթղթեր	20	21,087,118	6,206,060
Այլ փոխառու միջոցներ	21	95,125,094	84,323,152
Ընթացիկ հարկային պարտավորություններ	15	3,812,792	4,698,987
Հետաձգված հարկային պարտավորություններ	15	732,149	1,016,530
Այլ պարտավորություններ	23	12,880,467	17,380,413
Ստորադաս վարկեր	22	12,661,577	7,805,036
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**650,683,741**	**555,536,757**
ԿԱՊԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ	24	55,000,000	55,000,000
Էմիսիոն եկամուտ	24	1,750,000	1,750,000
Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գծով պահուստ	25	3,517,422	3,076,495
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ		3,909,911	4,985,941
Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ		151,526	877,300
Չբաշխված շահույթ		68,781,180	43,712,388
Ընդամենը կապիտալ		**133,110,039**	**109,402,124**
ԸՆԴԱՄԵՆԸ ԿԱՊԻՏԱԼ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**783,793,780**	**664,938,881**

Հաստատվել է հրապարակման համար և ստորագրվել է Բանկի տնօրինության անունից 2024թ. ապրիլի 29-ին

Հակոբ Անդրեասյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Գլխավոր հաշվապահ

6-98 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Հազ. ՀՀ դրամ	**Ծան.**	**2023թ.**	**2022թ.**
Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ	27	68,851,092	52,264,734
Այլ տոկոսային եկամուտ	27	10,445,440	5,852,766
Տոկոսային ծախս	27	(32,040,310)	(24,304,560)
Զուտ տոկոսային եկամուտ		**47,256,222**	**33,812,940**
Վարկային կորստի գծով ծախսի հակադարձում	16	565,530	2,286,215
Զուտ տոկոսային եկամուտ վարկային կորստի գծով ծախսից հետո		**47,821,752**	**36,099,155**
Միջնորդավճարների գծով եկամուտ	28	13,097,686	9,659,855
Միջնորդավճարների գծով ծախս	28	(5,014,623)	(3,623,931)
Զուտ օգուտ/(վնաս)՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից		400,019	(115,359)
Զուտ օգուտ արտարժույթի առքուվաճառքից		5,333,764	13,516,463
Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից		(27,845)	(433,735)
Ասոցիացված կազմակերպությունների շահույթի մասնաբաժին	37	1,019,338	736,475
Այլ արժեզրկման և պահուստների հակադարձում/(ծախս)	32	2,783,748	(3,283,385)
Այլ եկամուտ	29	853,917	1,448,285
Ոչ տոկոսային եկամուտ		**18,446,004**	**17,904,668**
Անձնակազմի գծով ծախսեր		(20,325,827)	(16,716,813)
Մաշվածություն և ամորտիզացիա	14	(3,312,788)	(2,606,948)
Այլ գործառնական ծախսեր	30	(3,032,516)	(2,437,261)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	31	(4,831,447)	(3,925,140)
Ոչ տոկոսային ծախս		**(31,502,578)**	**(25,686,162)**
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը		34,765,178	28,317,661
Շահութահարկի գծով ծախս	15	(6,372,416)	(5,747,221)
Հաշվետու տարվա շահույթ		**28,392,762**	**22,570,440**
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ			
Բազային և նոսրացված, մայր կազմակերպության բաժնետերերին վերագրելի, ՀՀ դրամ	24	5,162.32	4,103.72

6-98 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	2023թ.	2022թ.
Հաշվետու տարվա շահույթ		**28,392,762**	**22,570,440**
Այլ համապարփակ եկամուտ			
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների գծով իրական արժեքի փոփոխություն		(981,961)	(318,240)
Ներառյալ՝ ակնկալվող վարկային կորուստների պահուստի փոփոխությունները		(735,920)	158,454
Շահութահարկ այլ համապարփակ եկամտի տարրերի գծով	15	176,753	57,283
Հաջորդ ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող զուտ այլ համապարփակ եկամուտ		**(805,208)**	**(260,957)**
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ			
Շենքերի և փոխադրամիջոցների վերագնահատում	14	-	1,977,001
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային գործիքների գծով շահույթ/(վնաս)		705	(3,104)
Շահութահարկ այլ համապարփակ եկամտի տարրերի գծով	15	(127)	(355,301)
Ընդամենը հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ		**578**	**1,618,596**
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող			
Ասոցիացված կազմակերպությունների այլ համապարփակ եկամտի մասնաբաժին		96,166	(53,122)
Շահութահարկ այլ համապարփակ եկամտի տարրերի գծով	15	(17,310)	9,562
Ընդամենը ասոցիացված կազմակերպությունների այլ համապարփակ համապարփակ եկամտի մասնաբաժին		**78,856**	**(43,560)**
Տարվա այլ համապարփակ վնաս՝ առանց հարկերի		**(725,774)**	**1,314,079**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ		**27,666,988**	**23,884,519**

Հազ. ՀՀ դրամ	Բաժնե-տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գծով պահուստ	Հիմնական միջոցների վերա-գնահա տումից աճ	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների վերագնահատման պահուստ	Չբաշխված շահույթ*	Ընդամենը կապիտալ
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**55,000,000**	**2,500,000**	**2,452,257**	**3,479,525**	**1,184,362**	**23,577,223**	**88,193,367**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք							
Հաշվետու տարվա շահույթ	-	-	-	-	-	22,570,440	22,570,440
Այլ համապարփակ եկամուտ	-	-	-	1,621,141	(307,062)	-	1,314,079
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	**-**	**-**	**-**	**1,621,141**	**(307,062)**	**22,570,440**	**23,884,519**
Հիմնական միջոցների վաճառքի արդյունքում վերագնահատման ավելցուկի փոխանցումը չբաշխված շահույթին	-	-	-	(114,725)	-	114,725	-
Գործարքներ սեփականատերերի հետ՝ ուղղակիորեն գրանցված կապիտալում							
Գլխավոր պահուստի համալրում էմիսիոն եկամտի հաշվին	-	(750,000)	-	-	-	750,000	-
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-	-	-	(3,300,000)	(3,300,000)
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	**-**	**(750,000)**	**-**	**-**	**-**	**(2,550,000)**	**(3,300,000)**
Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ (Ծան. 25)	-	-	624,238	-	-	-	624,238
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**55,000,000**	**1,750,000**	**3,076,495**	**4,985,941**	**877,300**	**43,712,388**	**109,402,124**
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Հաշվետու տարվա շահույթ	-	-	-	-	-	28,392,762	28,392,762
Այլ համապարփակ վնաս	-	-	-	-	(725,774)	-	(725,774)
Հիմնական միջոցների վաճառքի արդյունքում վերագնահատման ավելցուկի փոխանցումը չբաշխված շահույթին	-	-	-	(1,076,030)	-	1,076,030	-
Գործարքներ սեփականատերերի հետ՝ ուղղակիորեն գրանցված կապիտալում							
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-	-	-	(4,400,000)	(4,400,000)
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	**-**	**-**	**-**	**-**	**-**	**(4,400,000)**	**(4,400,000)**
Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ (Ծան. 25)	-	-	440,927	-	-	-	440,927
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**55,000,000**	**1,750,000**	**3,517,422**	**3,909,911**	**151,526**	**68,781,180**	**133,110,039**

* Չբաշխված շահույթը ներառում է Բանկի Գլխավոր պահուստը՝ 8,250,000 հազ. ՀՀ դրամի չափով:

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	2023թ.	2022թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Ստացված տոկոսներ (հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով)		65,435,119	49,369,597
Ստացված այլ տոկոսներ		10,445,440	6,102,070
Վճարված տոկոսներ		(29,840,347)	(23,532,053)
Ստացված միջնորդավճարներ		13,097,686	9,659,855
Վճարված միջնորդավճարներ		(5,014,623)	(3,623,931)
Զուտ (ելք)/մուտք շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ածանցյալ ֆինանսական գործիքներից		(663,718)	196,755
Զուտ մուտքեր փոխարժեքային տարբերություններից		5,333,764	13,516,463
Վճարված այլ գործառնական ծախսեր		(2,985,401)	(2,318,819)
Ստացված այլ եկամուտ		854,113	235,468
Աշխատավարձ և աշխատակազմին վճարված այլ գումարներ		(18,700,666)	(14,460,895)
Վճարված այլ ընդհանուր վարչական ծախսեր		(3,755,177)	(3,925,140)
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունները		**34,206,190**	**31,219,370**
Գործառնական ակտիվների զուտ (ավելացում)/ նվազում			
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ		317,095	396,989
Պահանջներ բանկերի նկատմամբ		(48,347,859)	(32,847,258)
Հաճախորդներին տրված վարկեր		(40,369,750)	(84,018,496)
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ		(30,196,753)	(22,270,275)
Այլ ակտիվներ		(1,262,502)	(2,693,895)
Գործառնական պարտավորությունների զուտ աճ/(նվազում)			
Բանկերից ներգրավված միջոցներ		(8,637,177)	8,738,065
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ		71,747,907	116,891,930
Այլ պարտավորություններ		(5,658,758)	3,453,298
(Գործառնական գործունեությամբ օգտագործված)/ ստացված զուտ դրամական միջոցներ մինչև շահութահարկը		**(28,201,607)**	**18,869,729**
Վճարված շահութահարկ		(7,383,676)	(2,687,672)
Գործառնական գործունեությամբ (օգտագործված)/ստացված զուտ դրամական միջոցներ		**(35,585,283)**	**16,182,057**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(2,444,064)	(3,466,341)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր		1,217,572	53,404
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում		(13,364,866)	(6,195,291)
Ներդրումային արժեթղթերի վաճառք		16,049,251	2,944,680
Ստացված շահաբաժիններ	37	701,763	539,806
Ներդրումային գործունեությամբ ստացված/(օգտագործված) զուտ դրամական միջոցներ		**2,159,656**	**(6,123,742)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից			
Թողարկված պարտքային արժեթղթերից մուտքեր	38	18,339,013	2,191,500
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	38	(3,684,744)	(789,212)
Այլ փոխառությունների ներգրավումից մուտքեր	38	34,345,599	34,288,004
Այլ փոխառությունների մարում	38	(27,032,928)	(37,932,197)
Ստացված ստորադաս վարկեր		4,479,000	-
Վճարված շահաբաժիններ	24	(4,400,000)	(3,300,000)
Ֆինանսական գործունեությամբ ստացված/(օգտագործված) զուտ դրամական միջոցներ		**22,045,940**	**(5,541,905)**
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		1,123,990	(12,664,004)
Արժեզրկման պահուստի փոփոխությունների ազդեցությունը		46,259	68,891
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում		(10,209,436)	(8,078,703)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբին		88,369,285	96,447,988
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջին	**8**	**78,159,849**	**88,369,285**

6-98 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Ներածություն

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀՄՄԽ-ի կողմից հրապարակված Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն, («ՖՀՄՄ հաշվառման ստանդարտներ»), «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ի («Բանկ») և նրա դուստր ձեռնարկությունների համար («Խումբ»):

«ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ն մայր կազմակերպությունն է Խմբում, որը բաղկացած է Բանկից և իր դուստր կազմակերպություններից՝ «ԱԿԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ից և «ԱԿԲԱ Տեխնոլաբ» ՍՊԸ-ից: Բանկը ձևավորվել է 1995թ.-ին, որպես միացյալ սեփականությամբ կոոպերատիվ բանկ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության, և 2006թ.-ին վերակազմակերպվել է որպես փակ բաժնետիրական ընկերություն: Բանկը հետագայում վերակազմավորվել է բաց բաժնետիրական ընկերության և 2021թ. ներկայացրել է նախնական հրապարակային առաջարկ, որից հետո Բանկի բաժնետոմսերը ցուցակվել են Հայաստանի ֆոնդային բորսայում (AMX): Բանկը գործունեություն է իրականացնում ՀՀ Կենտրոնական բանկի (այսուհետ՝ «ԿԲ») կողմից տրված ընդհանուր բանկային լիցենզիայի հիման վրա և հանդիսանում է ՀՀ ավանդների ապահովագրության պետական համակարգի անդամ:

Հիմնական գործունեության նկարագրություն. Բանկն ընդունում է բնակչությունից ավանդներ, տրամադրում է վարկեր և իրականացնում է դրամական փոխանցումներ Հայաստանի Հանրապետության տարածքում և ՀՀ տարածքից դուրս, իրականացնում է արտարժույթի փոխանակման գործարքներ և մատուցում է այլ բանկային ծառայություններ իր կորպորատիվ և ֆիզիկական անձ հաճախորդներին: Բանկի գլխամասային գրասենյակը գտնվում է Երևան քաղաքում, և այն ունի 65 մասնաճյուղեր (ներառյալ՝ գլխամասը) Երևանում և ՀՀ այլ մարզերում:

Իրավաբանական հասցեն և գործունեության վայրը. Բանկի գրանցման իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 0002, Արամի փողոց 82-84:

«ԱԿԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպությունը՝ «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ դուստր ձեռնարկությունը, հիմնադրվել է 2003թ.-ի մարտի 30-ին որպես փակ բաժնետիրական ընկերություն Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Ընկերության հիմնական գործունեությունը ֆինանսական վարձակալության գծով գործառնություններն են իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների հետ: Ընկերությունն ունի վարկային կազմակերպության լիցենզիա՝ տրված ՀՀ Կենտրոնական բանկի կողմից: Ընկերությունը համախմբվում է սույն ֆինանսական հաշվետվություններում: Բանկին է պատկանում «ԱԿԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ բաժնետոմսերի 100%-ը:

2021 թվականի դեկտեմբերի 23-ին Բանկը հիմնադրել է ԱԿԲԱ ՏԵԽՆՈԼԱԲ ՍՊԸ կրթական կենտրոնը, որի բաժնետոմսերի 100%-ը պատկանում է Բանկին: Կենտրոնի նպատակն է՝ իրականացնել կրթական ծրագրեր և ներգրավել որակյալ մասնագետների:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են.

Բաժնետեր	**2023, %**	**2022, %**
«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ	81.61	83.80
Sacam International SAS	4,55	4,55
Այլ	13.84	11.65
Ընդամենը	**100.0**	**100.0**

«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ-ն Խմբի մայր կազմակերպությունն է և չունի մեկ վերահսկող կողմ: «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ- հիմնադրվել է 2017թ. մայիսի 6-ին՝ Բանկի նախկին բաժնետերեր հանդիսացող Գյուղական փոխօգնության 10 ասոցիացիաների կողմից, որոնք ներկայումս հանդիսանում են «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ-ի բաժնետերեր: Գյուղական փոխօգնության միավորումները («Միավորումներ») Հայաստանի Հանրապետության 10 մարզերում գործող հասարակական կազմակերպություններ են, որոնք ստեղծվել են մարզերում գյուղատնտեսությունը զարգացնելու նպատակով: Նշված 10 միավորումները միասին ունեն 72,850 անդամ: Այլ տողում ներկայացված Բանկի բաժնետոմսերը ցուցակված են Հայաստանի ֆոնդային բորսայում:

Ներկայացման արժույթ. Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով («ՀՀ դրամ»), եթե այլ բան նշված չէ:

1 Խմբի գործառնական միջավայրը

Ընդհանուր դրույթներ

Բնապահպանական, սոցիալական և կառավարում (ԲՍԿ): 2023թ. Խումբն իրականացրել է կլիմայի փոփոխության ազդեցության գնահատում Բանկի գյուղատնտեսական պորտֆելի որակական ցուցանիշների վրա, որի արդյունքների համաձայն,ՀՀ պաշտոնական տվյալներով կլիմայի փոփոխության մինչև 2030թ. կանխատեսումային տյվյալները էական ազդեցություն չեն ունենա գյուղատնտեսական վարկերի պորտֆելի որակը բնութագրող փոփոխականների վրա: Միևնույն ժամանակ, Խմբի կողմից իրականացված վերլուծությունը հետագայում կարող է վերագնահատվել:

Պատերազմ Ռուսաստանի և Ուկրաինայի միջև. 2022թ. փետրվարից հետո, Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև ռազմական հակամարտության պատճառով մի շարք երկրներ պատժամիջոցներ սահմանեցին Ռուսաստանի Դաշնության դեմ: Հակամարտությունը ազդում է ոչ միայն երկու երկրների տնտեսական ակտիվության վրա, այլև համաշխարհային տնտեսության վրա: Պատժամիջոցների հետևանքով աշխարհի շատ երկրներում ապրանքների և պարենային ապրանքների գները բարձրացել են, ռեսուրսների մատակարարման միջև հաստատված կապերը խաթարվել են, գնաճը նույնպես ազդում է գների վրա, և վերլուծաբանները կանխատեսում են նաև տնտեսական հետևանքներ համաշխարհային տնտեսության ոլորտների համար:

Ռուսաստան-Ուկրաինա պատերազմի բռնկումից ի վեր ԵՄ արտահանման հոսքերի կողմնորոշվածությունը շարունակաբար ավելի մեծ ծավալով փոխվում է դեպի Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի այլ տնտեսություններ: Այս կողմնորոշվածության փոփոխությունը խթանել է հարակից առևտրային և տրանսպորտային ծառայությունները, կրճատել է մրցակցությունը դեպի Ռուսաստան հայրենական արտադրանքի արտահանման համար և տարածաշրջանում ակտիվացրել է նախկինում պասիվ ներդրումները:

2022թ. մարտից ԵՄ-ի առևտրային պատժամիջոցները գրեթե կիսով չափ կրճատել են բլոկի ապրանքների արտահանումը Ռուսաստան և Բելառուս:

Ռուս-ուկրաինական պատերազմի բանակցային ճանապարհով կարգավորման հավանականությունը կարճաժամկետ հեռանկարում մնում է ցածր, ինչը վկայում է երկարատև հակամարտության և առևտրային պատժամիջոցների շարունակման վերաբերյալ: Առևտրային ուղիների կողմնորոշումների փոփոխությունը և տնտեսական ակտիվության ներհոսքը կունենան ավելի երկարաժամկետ ազդեցություն՝ նաև ներկայիս պատերազմի շրջանակներից դուրս: Ակտիվանում են նախկինում պասիվ վիճակում գտնվող ներդրումները ենթակառուցվածքների, SS-ի և արտադրության բնագավառներում: Ենթակառուցվածքի և/կամ տեղական արտադրության ցանկացած բարելավում խթանում է երկարաժամկետ աճի ներուժը: Երկրների կառավարությունները ստիպված են հաշվի առնել Ռուսաստանի և մնացած աշխարհի հետ կապերի պահպանման և հավելյալ տնտեսական օգուտներ քաղելու միջև առկա նուրբ սահմանները՝ երկրորդական պատժամիջոցներից խուսափելու համար:
Հայաստանի համար կանխատեսվում է, որ 2024-2025թթ. աճը կպահպանվի տարեկան 4.5 տոկոսի մակարդակով: Չնայած սպասվում է Ռուսաստանից դրամական փոխանցումների ներհոսքի հետագա թուլացում , վերաարտահանումը և զբոսաշրջությունը կշարունակեն նպաստող գործոններ հանդիսանալ տնտեսական ակտիվության համար: Այնուամենայնիվ, երկարաժամկետ աճին կխոչընդոտեն ապրանքային կախվածությունը, տրանսպորտային կապերի և լոգիստիկ շղթաների խաթարումները և Հայաստանի և Ադրբեջանի միջև հնարավոր շարունակական աշխարհաքաղաքական լարվածությունը (Համաշխարհային բանկի հունվարի 2024թ. կանխատեսում):

Խումբը իր PD-ի կանխատեսումները և ԱՎԿ-ի հաշվարկները պատրաստելիս հաշվի է առել վերը նշված դիտարկումներն ու ակնկալիքները:

Հայաստանը վերջին տարիներին զգալի սոցիալ-քաղաքական և տնտեսական ցնցումներ է ապրել: Այս իրադարձությունները ներառել են 2020թ. COVID-19 համաճարակի և Ադրբեջանի հետ հակամարտությունը, և ավելի քան 100,000 էթնիկ հայերի տեղահանումը և անցումը ՀՀ տարածք՝ 2023թ.-ին:

Չնայած այս մարտահրավերներին, տնտեսությունը շարունակել է ցուցաբերել դիմակայունությունը, ինչը կարելի է վերագրել մակրոտնտեսական ճկուն քաղաքականությանը, ներառյալ գնաճի ակտիվ թիրախավորմանը, հարկաբյուջետային պարտավորությունների կատարմանը և ֆինանսական հատվածի արդյունավետ վերահսկողությանը: Հայաստանի աճի տեմպերն արագացել են 2022թ.-ին (ՀՆԱ-ի 12.6% աճ), որոնք պահպանվել են կայուն 2023թ. ընթացքում (ՀՆԱ-ի 8.7% աճ), ինչին նպաստել են նաև արտարժույթի փոխարժեքը, միգրանտների և բիզնեսի ներհոսքը՝ հիմնականում Ռուսաստանից: Գնաճը, որը գագաթնակետին էր հասել ուկրաինական պատերազմի հետևանքով, արագ կերպով նվազել է: Այնուամենայնիվ, տարածաշրջանային մակարդակում անվտանգային իրավիճակը զգալիորեն վատթարացավ 2023թ. սեպտեմբերին այն բանից հետո, երբ Ադրբեջանի կառավարությունը լիակատար վերահսկողության տակ առավ Լեռնային Ղարաբաղը, ինչը պատճառ դարձավ դեպի Հայաստան մոտ 100,000 էթնիկ հայերի արտագաղթին: Կառավարությունն ապահովել է արագ արձագանք՝ քաղաքականության պատշաճ միջոցներով տեղահանված անձանց անմիջական կարիքներինաջակցելու համար:

S&P Global Ratings-ը 2024 թվականի փետրվարի 23-ին հաստատել է Հայաստանի համար իր «BB-/B» երկարաժամկետ և կարճաժամկետ, արտարժույթով և տեղական արժույթով արտահայտված սուվերեն վարկերի վարկանիշները: Երկարաժամկետ վարկանիշների կանխատեսումը կայուն է. Fitch Ratings-ը հաստատել է Հայաստանի երկարաժամկետ արտարժույթով թողարկողի դեֆոլտի վարկանիշը (IDR) «BB-»՝ կայուն կանխատեսմամբ, 2024թ. հունվարի 26-ին:
Ընթացիկ և ապագա տնտեսական իրավիճակի երկարաժամկետ ազդեցությունները դժվար է գնահատել, և ղեկավարության ներկա ակնկալիքներն ու գնահատականները կարող են տարբերվել իրական արդյունքներից:

Ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) չափման նպատակով Խումբն օգտագործում է հիմնավորելի կանխատեսումային տեղեկատվություն, ներառյալ մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումներ: Այնուամենայնիվ, ինչպես ցանկացած տնտեսական կանխատեսումներում, այս կանխատեսումների գծով ևս՝ ենթադրությունները և դրանց տեղի ունենալու հավանականությունը բնորոշվում է անորոշության բարձր աստիճանով, ուստի փաստացի արդյունքները կարող են էապես տարբերվել կանխատեսումներից: Ծանոթագրություն 4-ը ներառում է ավելի մանրամասն տեղեկատվություն այն մասին, թե ինչպես է Խումբը կանխատեսումային տեղեկատվությունը ներառել ակնկալվող վարկային կորուստների չափման մոդելներում:

2 Պատրաստման հիմքը

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀՄՍԽ կողմից հրապարակված՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝«ՖՀՄՍ ստանդարտներ»):

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, փոփոխված՝ իրական արժեքով ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչմամբ, տարածքների և սարքավորումների (հող, շենք և փոխադրամիջոց) վերագնահատմամբ, ֆինանսական գործիքների՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով (“FVTPL”) և իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով դասակարգմամբ («FVOCI») և սովորական բաժնետոմսերի իրական արժեքով դասակարգմամբ՝ աշխատակիցների բաժնեմասնակցության ծրագրի համար: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական սկզբունքները ներկայացված են ստորև: Այդ սկզբունքները հետևողականորեն կիրառվել են այն բոլոր ժամանակաշրջանների համար, որոնք ներկայացված հաշվետվություններում, եթե այլ բան նշված չէ:

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները հասցեագրված են դրանց առաջնային օգտագործողներին, որոնք են՝ ներդրողները, որոնք վարկով տրամադրում կամ հատկացնում են կապիտալ հաշվետու կազմակերպությանը: Այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում ենթադրվել է, որ դրանց առաջնային օգտագործողները տիրապետում են բավարար գիտելիքների բիզնեսի և տնտեսական գործունեության վերաբերյալ և կատարում են տեղեկատվության հանգամանալից վերանայում և վերլուծություն: Այնուամենայնիվ լինում են դեպքեր, երբ նույնիսկ իրազեկ և հանգամանալից օգտագործողները կարող են կարիք ունենալ խորհրդատուի օգնության՝ այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բարդ տնտեսական երևույթների մասին տեղեկատվությունը ըմբռնելու համար:

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների նպատակն է՝ բացահայտել միայն այն տեղեկատվությունը, որը ղեկավարությունը համարում է էական առաջնային օգտագործողների համար: Ղեկավարությունը ձգտում է չնվազեցնել այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հասկանալիությունը՝ էական տեղեկատվությունը ոչ էական տեղեկատվությամբ քողարկելու միջոցով: Հետևաբար, համապատասխան բացահայտումներին վերաբերող ծանոթագրություններում բացահայտվում են միայն հաշվապահական հաշվառման քաղաքականության էական դրույթները, ըստ կիրառելիության:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական դրույթներ

Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում Ասոցիացված կազմակերպություններում ներդրումները հաշվառվում են բաժնեմասնակցության մեթոդով և սկզբնապես ճանաչվում են ձեռքբերման արժեքով՝ ներառյալ գուդվիլը:

Հաշվեկշռային արժեքի ապագա փոփոխությունները արտացոլում են համախմբումից հետո ասոցիացված կազմակերպության զուտ ակտիվներում Խմբի մասնաբաժնի փոփոխությունները: Խմբի մասնաբաժինը ասոցիացված կազմակերպության շահույթում կամ վնասում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների համախմբված հաշվետվությունում, իսկ պահուստների փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Իրական արժեքի չափում. Խումբը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով պահվող ֆինանսական գործիքները և ոչ ֆինանսական ակտիվները չափում է իրական արժեքով՝ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Իրական արժեքը չափվում է ՖՀՄՍ 13-ի պահանջներին համապատասխան: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքները բացահայտված են Ծանոթագրություն 34-ում:

Սկզբնական ճանաչում. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների բոլոր կանոնավոր գնումներն ու վաճառքները ճանաչվում են գործարքի ամսաթվին, այսինքն՝ այն ամսաթվին, երբ Խումբը պարտավորվում ձեռք բերել ակտիվը կամ պարտավորությունը: Կանոնավոր են համարվում ֆինանսական ակտիվների և պարտավորությունների այնպիսի գնումները կամ վաճառքները, որոնք պահանջում են ակտիվի մատակարարում տվյալ շուկայում գործող նորմերով կամ գործարար սովորույթներով սահմանված ժամկետի ընթացքում:

Սկզբնական չափում. Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական գործիքների դասակարգումը կախված է դրանց պայմանագրային պայմաններից և գործիքների կառավարման բիզնես մոդելից: Ֆինանսական գործիքներն ի սկզբանե չափվում են իրենց իրական արժեքով և որը ճշգրտվում է գործարքին ուղղակիորեն վերագրելի միջնորդավճարների և ծախսերի չափով այն գործիքների դեպքում, որոնք իրական արժեքով չեն վերագնահատվում շահույթի կամ վնասի միջոցով:

Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական գործիքի իրական արժեքի լավագույն ապացույցը գործարքի գինն է: Եթե Խումբը գտնում է, որ սկզբնական ճանաչման ժամանակ իրական արժեքը տարբերվում է գործարքի գնից, և եթե այդ իրական արժեքը հիմնված է շուկայում նմանատիպ ակտիվի կամ պարտավորության գնանշված գնի վրա, կամ հիմնված է գնահատման տեխնիկայի վրա, որն օգտագործում է միայն դիտարկելի շուկաների տվյալները, ապա սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը ճանաչում է իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերությունը շահույթում կամ վնասում. բոլոր մյուս դեպքերում, ֆինանսական գործիքի սկզբնական չափումը ճշգրտվում է այնպես, որ սկզբնական ճանաչման ժամանակ իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերությունը փոխանցվի ապագա ժամանակաշրջաններին: Սկզբնական ճանաչումից հետո Խումբը ճանաչում է հետաձգված տարբերությունը որպես շահույթ կամ վնաս, միայն այն դեպքում, երբ մուտքային տվյալները դառնում են դիտարկելի կամ եթե գործիքը ապաճանաչվում է:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների չափման կատեգորիաներ. Խումբը դասակարգում է իր բոլոր ֆինանսական ակտիվները՝ հիմնվելով ակտիվների կառավարման բիզնես մոդելի և ակտիվի պայմանագրային պայմանների վրա, չափումն իրականացնելով՝
ամորտիզացված արժեք, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Խումբը իր ածանցյալ և առևտրային պորտֆելը դասակարգում և չափում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Խումբը դասակարգում է Visa C-ի բաժնետոմսերը որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող պարտքային գործիքներ: Խումբը կարող է հաշվառել ֆինասական գործիքները իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, եթե այդ կերպ վերանում է կամ զգալիորեն նվազեցվում են չափման կամ ճանաչման անհամապատասխանությունները:

Ֆինանսական պարտավորությունները, բացի վարկային հանձնառություններից և երաշխիքների պայմանագրերից, չափվում են ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, երբ դրանք պահվում են վաճառքի համար, ածանցյալ գործիքներ են կամ կիրառվում է իրական արժեքով հաշվառում:

Պահանջներ բանկերի նկատմամբ, հաճախորդներին տրված վարկեր, ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթեր

Խումբը չափում է բանկերի նկատմամբ պահանջները, հաճախորդներին տրված վարկերը, ամորտիզացված արժեքով, ներդրումային արժեթղթերը ամորտիզացված արժեքով են հաշվառվում միայն այն դեպքում, եթե միաժամանակ բավարարվում են հետևյալ երկու պայմանները՝

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ակտիվը պահել պայմանագրային դրամական հոսքեր հավաքագրելու համար և
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են (SPPI):

Այս պայմանների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 4-ում:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ Խումբը կիրառում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով պարտքային գործիքների դասակարգում, եթե միաժամանակ առկա են հետևյալ երկու պայմանները.

- Գործիքը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ինչպես պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը, այնպես էլ ֆինանսական ակտիվների վաճառքը,
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բավարարում են SPPI ստուգման չափանիշներին:

Խումբը տրամադրում է ֆինանսական և կատարողական երաշխիքներ, ակրեդիտիվներ և վարկային պարտավորություններ:

Երաշխիքի պայմանագրերը ֆինանսական հաշվետվություններում սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, որը ստացված վարձատրությունն է: Սկզբնական ճանաչումից հետո ամեն երաշխիքի համար Խմբի պարտավորությունը չափվում է հետևյալ գումարներից առավելագույնի չափով. սկզբնական ճանաչված արժեք՝ հանած համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված կուտակված ամորտիզացիա, և ակնկալվող վարկային կորուստների պահուստ:

Վարկավորման չօգտագործված պարտավորվածությունները և ակրեդիտիվները պարտավորվածություններ են, որի շրջանակներում պարտավորվածության տևողության ընթացքում Խումբը հաճախորդին պետք է տրամադրի վարկ՝ նախապես սահմանված պայմաններով: Ինչպես ֆինանսական երաշխիքի պայմանագրերի դեպքում՝ այդ պայմանագրերը ընդգրկված են ակնկալվող վարկային կորուստների պահանջների մեջ:

Ֆինանսական վարձակալության համար տրված կանխավճարներ. Խումբը վարձակալներից ստացված կանխավճարները և մատակարարներին տրված կանխավճարները դիտարկում է որպես դրամական հոդվածներ և ճանաչում է դրանց գծով ֆինանսական պարտավորությունները և ֆինանսական ակտիվները:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերադասակարգում. Խումբը չի վերադասակարգում իր ֆինանսական ակտիվները՝ դրանց սկզբնական ճանաչումից հետո,

բացառությամբ այն բացառիկ հանգամանքների, որոնց դեպքում Խումբը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ Դրամական միջոցներ և դրանց համարժեքները ներառում են կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, բանկերում Նոստրո հաշիվները և ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցները, ներառյալ պարտադիր պահուստները ՀՀ դրամով՝ զերծ պայմանագրային սահմանափակումներից: Երեք ամսից ավելի ժամկետով սահմանափակված միջոցները բացառվում են դրամական միջոցներից և դրանց համարժեքներից, ինչպես ֆինանսական վիճակի մասին, այնպես էլ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում:

Դրամական միջոցները և դրամական միջոցների համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, քանի որ. (i) դրանք պահվում են պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով, և այդ դրամական միջոցների հոսքերն իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և տոկոսագումարի վճարում, և (ii) դրանք չեն որոշված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Պարտադիր դրամական մնացորդներ ԿԲ-ում. ԿԲ-ում պարտադիր դրամական մնացորդները հաշվառվում են ամորտիզացված արժեքով և ներկայացնում են անտոկոս պարտադիր պահուստային ավանդներ, որոնք հասանելի չեն Խմբի ամենօրյա գործունեությունը ֆինանսավորելու համար, և, հետևաբար, չեն համարվում դրամական միջոցների և դրանց համարժեքների մաս դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունում:

Հետգնման ու հակադարձ հետգնման պայմանագրեր և արժեթղթերի գծով փոխառության գործառնություններ Վաճառքի և հետգնման պայմանագրերը («ռեպո») դիտվում են որպես ապահովված ֆինանսավորման գործարքներ: Վաճառքի և հետգնման պայմանագրերով վաճառված արժեթղթերը շարունակում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում և եթե ստացողը պայմանագրով կամ գործարար սովորույթի համաձայն իրավունք ունի դրանք վաճառել կամ վերագրավադրել, վերադասակարգվում են որպես վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է բանկերի կամ հաճախորդների միջոցների կազմում: Հետադարձ վաճառքի պայմանագրով արժեթղթերի ձեռքբերումը (հակադարձ ռեպո) արտացոլվում է բանկերում տեղաբաշխված միջոցների կամ հաճախորդներին տրված վարկերի կազմում՝ կախված իրավիճակից: Վաճառքի գնի և ձեռք բերման գնի միջև տարբերությունը դիտարկվում է որպես տոկոսային եկամուտ և հաշվեգրվում ռեպո պայմանագրի ժամկետի ընթացքում՝ արդյունավետ եկամտաբերության մեթոդով:

Արժեթղթերը, որոնք փոխառության են տրվել գործընկերներին, շարունակվում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում: Փոխառությամբ ներգրավված արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում միայն երրորդ անձանց վաճառքի դեպքում: Այս դեպքում առքուվաճառքի գործարքները հաշվառվում են ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում՝ եկամուտների կազմում՝ հանած առևտրային արժեթղթերի հետ կապված գործառնությունների ծախսերը: Այդպիսի արժեթղթերի վերադարձի պարտավորությունը արտացոլվում է առևտրային գործառնությունների գծով պարտավորություններում՝ իրական արժեքով:

Փոխառություններ. Փոխառությունները ներառում են ՀՀ ԿԲ-ի նկատմամբ պարտավորությունները, բանկերի միջոցները, հաճախորդների հաշիվները, այլ փոխառություններ, թողարկված պարտատոմսերը: հաշվետվությունում: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Օգուտները և վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում, երբ փոխառությունները ապաճանաչվում են, ինչպես նաև ամորտիզացիայի գործընթացում:

Ստորադաս վարկեր. Ստորադաս պարտքը հաշվառվում է ամորտիզացված արժեքով:

Թողարկված պարտքային արժեթղթեր. Թողարկված պարտքային արժեթղթերը ներառում են մուրհակները, Խմբի կողմից թողարկված պարտատոմսերը: Պարտքային արժեթղթերը ներկայացվում են ամորտիզացված արժեքով:

Վարձակալություն

Խումբը՝ որպես վարձակալ. Խումբը կիրառել է ճանաչման և չափման միասնական մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների: Խ Խումբը ճանաչում է վարձակալության գծով պարտավորություններ՝ վարձակալության գծով վճարումներ կատարելու համար և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ, որոնք ներկայացնում են պայմանագրի հիմքում ընկած ակտիվները օգտագործելու իրավունքը:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ. Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների գումարը, սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումներ, վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումներ:

Վարձակալության վճարների ներկա արժեքը հաշվարկելիս Խումբը օգտագործում է սկզբնական կիրառման ամսաթվին լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, եթե վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել:

Կարճաժամկետ վարձակալություն և ցածրարժեք ակտիվների վարձակալություն. Խումբը կիրառում է կարճաժամկետ վարձակալությունների ճանաչման բացառությունը կարճաժամկետ վարձակալությունների համար (այն վարձակալությունները, որոնց վարձակալության ժամկետը մեկնարկի ամսաթվի դրությամբ 12 ամիս է կամ դրանից պակաս, և չեն պարունակում գնման օպցիոն): Խումբը կիրառում է նաև ցածրարժեք ակտիվների վարձակալության ճանաչման բացառությունը այն ակտիվների վրա, որոնք համարվում են փոքրարժեք (2,500 հազ. ՀՀ դրամը չգերազանցող):

Գործառնական – Խումբը՝ որպես վարձատու Վարձակալական եկամուտը ճանաչվում է գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում է այլ եկամտի կազմում համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում, քանի որ գործառնական բնույթի է: Գործառնական վարձակալության բանակցությունների և պայմանավորվածությունների գծով կրած սկզբնավորման ուղղակի ծախսումները ավելացվում են տրամադրված ակտիվի հաշվեկշռային արժեքին և ճանաչվում են որպես ծախս վարձակալության ժամկետի ընթացքում նույն հիմունքով, որը կիրառվում է վարձակալական եկամուտը ճանաչելիս:

Ֆինանսական – Խումբը՝ որպես վարձատու Ֆինանսական վարձակալության ժամկետի մեկնարկի պահից Խումբը ճանաչում է ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ՝ վարձակալությունում զուտ ներդրումներին հավասար գումարով

Ֆինանսական եկամտի ճանաչումը հիմնված է ժամանակացույցի վրա, որը սահմանում է հաստատուն պարբերական տոկոսադրույք է վարձատուի կողմից վարձակալության ներքո զուտ ներդրումների դիմաց: Վարձակալությունից ստացված ֆինանսական եկամուտը գրանցվում է «Այլ տոկոսային հասույթի» կազմում՝ շահույթում կամ վնասում: Սկզբնական ուղղակի ծախսումները ներառվում են ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների սկզբնական գնահատման մեջ:

Վարկային կորստի պահուստը ճանաչվում է ընդհանուր ԱՎԿ մոդելի համաձայն: ԱՎԿ-ը որոշվում է նույն կերպ, ինչ ամորտիզացված արժեքով չափվող վարկերի և փոտվությունների դեպքում: Տոկոսային եկամուտը ճանաչվում է համախառն հաշվեկշռային արժեքով, բացառությամբ Փուլ 3-ի արժեզրկված վարկերի, որոնց դիմաց տոկոսային եկամուտը ճանաչվում է զուտ հաշվեկշռային արժեքով:

Վերանայված վարկեր Հնարավորության դեպքում Խումբը ձգտում է վերանայել վարկերը, այլ ոչ թե բռնագանձել գրավադրված գույքը: Դա կարող է լինել վճարումների ժամկետները երկարաձգելու կամ նոր պայմաններով վարկային պայմանագրի կնքման միջոցով:

Խումբը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, ինչպիսին է հաճախորդին տրված վարկը, երբ պայմաններն այն աստիճան են վերանայվել, որ այն դարձել է հիմնովին նոր վարձակալություն, և տարբերությունը ճանաչվում է որպես ապաճանաչումից օգուտ կամ վնաս այն չափով, որքանով արժեզրկումից կորուստը դեռ չի ճանաչվել: Նոր ճանաչված վարկերը ակնկալվող վարկային

կորուստների չափման նպատակով դասակարգվում են 1-ին փուլում, քանի դեռ նոր վարկը չի համարվում ձեռք բերված կամ ստեղծված արժեզրկված (POCI): Երբ Խումբը գնահատում է՝ արդյոք պետք է ապաճանաչել հաճախորդին տրված վարկը թե ոչ, հաշվի է առնում հետևյալ գործոնները՝

- Վարկի արժույթի փոփոխությունը,
- Վարկի գործընկերոջ փոփոխությունը,

Եթե փոփոխությունն այնպիսին է, որ գործիքն այլևս չի բավարարում SPPI չափանիշին:

Այն փոփոխությունների համար, որոնք չեն հանգեցնում ապաճանաչման, Խումբը նաև վերագնահատում է, թե արդյոք եղել է վարկային ռիսկի զգալի աճ կամ արդյոք ակտիվները պետք է դասակարգվեն որպես արժեզրկված: Երբ ակտիվը փոփոխության արդյունքում դասակարգվում է որպես արժեզրկված, այն պետք է մնա 3-րդ փուլում: Որպեսզի վերակառուցված վարկը վերադասակարգվի 3-րդ փուլից, պետք է բավարարվեն ստորև նշված պայմանները.

- Ամսական վճարումների գրաֆիկով վարկերի դեպքում, ժամկետանց գումարները ամբողջությամբ վճարվել են, մայր գումարի և տոկոսների 3 անընդմեջ վճարումներ կատարվել են `փոփոխված վճարման ժամանակացույցի համաձայն, և 7 օրից ավել ժամկետանց օրեր չկան.
- Ճկուն վճարման գրաֆիկով վարկերի դեպքում, ժամկետանց գումարներ ամբողջությամբ վճարվել են, այնուհետև մայր գումարի և տոկոսների հերթական վճարումները կատարվել են նվազագույնը 6 ամիս փորձաշրջանի համար `փոփոխված վճարման ժամանակացույցի համաձայն, և 7 օրից ավել ժամկետանց օրեր չկան:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Դուրսգրում Ֆինանսական ակտիվները ամբողջությամբ կամ մասամբ դուրս են գրվում այն ժամանակ, երբ Խումբը սպառել է դրանց վերականգնման բոլոր գործնական հնարավորությունները և եզրակացրել է, որ չկան այդպիսի ակտիվների վերականգնման հիմնավորված ակնկալիքներ: Դուրսգրումն իրենից ներկայացնում է ակտիվի ապաճանաչում: Խումբը կարող է դուրս գրել դեռևս հարկադիր բռնագանձման գործընթացում գտնվող ֆինանսական ակտիվները, այն դեպքում, երբ Խումբը փորձում է բռնագանձել պայմանագրային պարտավորության գումարները՝ առանց վերականգնման ողջամիտ ակնկալիքի:

Եթե դուրս գրվող գումարը գերազանցում է կուտակված կորուստների պահուստը, տարբերությունը նախ ավելացվում է պահուստին, որը այնուհետև կիրառվում է համախառն հաշվեկշռային արժեքի հանդեպ:

Հարկում. Շահութահարկի գծով ընթացիկ ծախսը հաշվարկվում է ՀՀ օրենսդրության համաձայն:

Ընթացիկ հարկը ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա ակնկալվող շահութահարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ, ինչպես նաև նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջինները հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հիմնական միջոցներ. Սկզբնական ճանաչման ժամանակ հիմնական միջոցները արտացոլվում են սկզբնական արժեքով առանց ամենօրյա սպասարկման ծախսերի՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումը: Այդ գումարը ներառում է սարքավորման փոխարինման ժամանակ կատարված ծախսերը, եթե դրանք բավարարում են ճանաչման չափանիշներին:

Սկզբնական արժեքով սկզբնական ճանաչումից հետո հողը, շենքերը և փոխադրամիջոցները արտացոլվում են վերագնահատված արժեքով: Վերագնահատումն իրականացվում է բավարար պարբերականությամբ, որպեսզի վերագնահատված ակտիվի իրական արժեքը էականորեն չտարբերվի դրա հաշվեկշռային արժեքից:

Հիմնական միջոցների միավորի նկատմամբ սեփական կապիտալում ներառված վերագնահատումից ածն ուղղակիորեն փոխանցվում է չբաշխված շահույթին, երբ ակտիվն ապաճանաչվում է:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով՝ ակտիվների ներքոնշյալ օգտակար ծառայության գնահատված ժամկետների ընթացքում՝

	Տարիներ
Շենքեր	46
Սարքավորումներ	5-10
Փոխադրամիջոցներ	7-10
Այլ	7-10

Վարձակալված ակտիվի բարելավումները կապիտալացվում և ամորտիզացվում են վարձակալության ժամկետի և դրանց օգտակար ծառայության ժամանակահատվածից նվազագույնով՝ գծային հիմունքներով:

Ակտիվի մնացորդային արժեքները, օգտակար ծառայության ժամկետները և մաշվածության հաշվարկման մեթոդները վերանայվում և, եթե անհրաժեշտ է, փոփոխվում են յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում:

Վերանորոգումների և արդիականացման հետ կապված ծախսումները ծախսագրվում են կատարման ժամանակ և ներառվում են այլ գործառնական ծախսերի կազմում բացառությամբ, եթե դրանք որակավորվում են որպես կապիտալացվող:

Բռնագանձված ակտիվներ. Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և զուտ իրացվելի արժեքի նվազագույնով:

Բաժնետիրական կապիտալ. Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը վերաբերող ուղղակի ծախսերը, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության միավորման դեպքերի, արտացոլվում են սեփական կապիտալում որպես թողարկման գծով մուտքերից նվազեցում: Իրական արժեքի այն մասը, որը գերազանցում է թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքը, գրանցվում է որպես Էմիսիոն եկամուտ:

Շահաբաժիններ. Հաշվետու ամսաթվի դրությամբ շահաբաժինները նվազեցվում են սեփական կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն միայն այն դեպքում, երբ դրանք հայտարարվել են մինչև հաշվետու ամսաթիվը ներառյալ: Մինչև հաշվետու ամսաթիվը առաջարկված կամ հաշվետու ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը առաջարկված կամ հայտարարված շահաբաժինները բացահայտվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում:

Հավատարմագրային կառավարման շրջանակներում գտնվող ակտիվներ. Հավատարմագրային կառավարման շրջանակներում գտնվող ակտիվները չեն արտացոլվում Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում, քանի որ չեն հադիսանում Խմբի ակտիվներ:

Սեգմենտային հաշվետվություն Խմբի սեգմենտների հաշվառումը հիմնված է հետևյալ գործառնական սեգմենտների վրա. մանրածախ բանկային գործունեություն, կորպորատիվ բանկային գործունեություն, գյուղատնտեսություն, առևտրային և ներդրումային բանկային գործունեություն և ֆինանսական վարձակալություն:

Տոկոսային և համանման եկամուտ և ծախս. Խումբը հաշվարկում է տոկոսային եկամուտ ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվների համախառն արժեքի նկատմամբ, բացառությամբ արժեզրկված ակտիվների: Հաշվարկի ժամանակ հաշվի են առնվում ֆինանսական գործիքի գծով բոլոր պայմանագրային պայմանները (օրինակ՝ ժամկետից շուտ մարման իրավունքը) և միջնորդավճարների գծով կամ լրացուցիչ ծախսերը, որոնք անմիջականորեն կապված են գործիքի հետ և որոնք արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մաս են կազմում, սակայն հաշվի չեն առնվում ապագա վնասները: Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքները ճշգրտվում են Խմբի կողմից

միջոցների ելքերի կամ մուտքերի գնահատումների վերանայման դեպքում: Ճշգրտված հաշվեկշռային արժեքը հաշվարկվում է սկզբնական արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա, իսկ հաշվեկշռային արժեքի փոփոխությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ կամ ծախս:

Եթե Փուլ 3-ում դասակարգված ֆինանսական ակտիվի գծով վարկային ռիսկը հետագայում բարելավվի այնպես, որ ակտիվն այլևս վարկային արժեզրկված չլինի, և բարելավումը հնարավոր լինի օբյեկտիվորեն վերագրել իրադարձության, որը տեղի է ունեցել այն բանից հետո, երբ ակտիվը սահմանվել է որպես վարկային արժեզրկված (այսինքն ակտիվը դառնում է վերականգնման ենթակա), ակտիվը վերադասակարգվում է 3-րդ փուլից և տոկոսային հասույթը հաշվարկվում է՝ կիրառելով EIR-ը համախառն հաշվեկշռային արժեքի վրա: Լրացուցիչ տոկոսային եկամուտը, որը նախկինում շահույթում և վնասում չէր ճանաչվել՝ ելնելով ակտիվի Փուլ 3 բնույթից, սակայն որը ներկայումս ակնկալվում է ստանալ ակտիվի վերականգնումից հետո, ճանաչվում է որպես արժեզրկման հակադարձում:

Ֆինանսական վարձակալության դիմաց տրված կանխավճարներից և ֆինանսական վարձակալության գծով ճանաչված հասույթից տոկոսային հասույթը ճանաչվում է շահույթի կամ վնասի համախմբված հաշվետվությունում «Այլ տոկոսային հասույթ» տողում՝ պայմանագրային տոկոսադրույքով:

Հաճախորդներին տրված վարկերի տույժերից տոկոսային եկամուտը ներկայացվում է համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ «Տոկոսային հասույթ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով» հոդվածում:

Միջնորդավճարների գծով եկամուտ. Հաճախորդներին մատուցվող տարբեր ծառայություններից համախմբված ստանում է միջնորդավճարների գծով եկամուտ: Միջնորդավճարների գծով եկամուտը կարող է բաժանվել հետևյալ երկու խմբի.

Միջնորդավճարների գծով եկամուտ, որը ստացվում է որոշակի ժամանակահատվածում մատուցվող ծառայություններից

Միջնորդավճարների գծով եկամուտը, որը ստացվում է որոշակի ժամանակահատվածում մատուցվող ծառայություններից, հաշվեգրվում է այդ ժամանակահատվածի ընթացքում, քանի որ համապատասխան կատարողական պարտավորությունները բավարարված են: Նման հոդվածները ներառում են միջնորդավճարների գծով եկամուտը ակտիվների կառավարման, պահառության և կառավարման ու խորհրդատվական այլ ծառայությունների համար միջնորդավճարները: Վարկերի տրամադրման գծով պարտավորության դիմաց միջնորդավճարները, եթե վարկի օգտագործման հավանականությունը բարձր է, և վարկերի հետ կապված այլ միջնորդավճարները հետաձգվում են (վարկերի տրամադրման հետ կապված ցանկացած լրացուցիչ ծախսումների հետ միասին) և ճանաչվում են որպես վարկի արդյունավետ տոկոսադրույքի ճշգրտում:

Միջնորդավճարների գծով եկամուտ՝ մատուցված միջնորդային ծառայությունների գծով

Երրորդ անձի անունից գործարքի բանակցություններն անցկացնելու և մասնակցելու համար (օրինակ՝ երբ Խմբի կատարողական պարտավորությունն է բաժնետոմսերի կամ այլ արժեթղթերի առքը, կամ ընկերության առք ու վաճառքի համաձայնագրի կնքումը) ստացված կոմիսիոն վճարները ճանաչվում են այդ գործարքի ավարտից հետո:

Հաճախորդների հավատարմության ծրագրեր

Խումբն առաջարկում է հաճախորդների հավատարմության մի շարք ծրագրեր: Նման ծրագրերի հաշվապահական հաշվառումը տարբերվում է՝ կախված նրանից, թե ով է ճանաչվում որպես հաճախորդ, և/կամ Խումբը որպես գործակալ, թե որպես պայմանագրի գլխավոր կողմ է հանդես գալիս: Միավորների վրա հիմնված ծրագրերի դեպքում, Խումբը, ընդհանուր առմամբ, ճանաչում է պարտավորություն կուտակված միավորների համար, որոնք ակնկալվում է, որ օգտագործվելու են հաճախորդների կողմից, որը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով, երբ միավորները լրանում են: Պլաստիկ քարտերով գործառնություններից քեշբեքերը նվազեցնում են միջնորդավճարների գծով եկամուտը:

Շահաբաժիններից եկամուտ

Եկամուտը ճանաչվում է, երբ հաստատվում է Խմբի վճարումը ստանալու իրավունքը:

Արտարժույթի փոխարկում. Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով, որը Բանկի և նրա դուստր ձեռնարկության գործառնական արժույթն է: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված գործարքների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության «Փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտներ/(վնասներ)» հոդվածում:

Արտարժույթով գործարքի պայմանագրային փոխարժեքի և գործարքի օրվա դրությամբ Կենտրոնական բանկի փոխարժեքի տարբերությունները ներառված են Զուտ օգուտ /(վնաս) արտարժույթի առքուվաճառքից տողում ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական փոխարժեքները 2023թ. դեկտեմբերի 31-ին և 2022թ. դեկտեմբերի 31-ին կազմել են համապատասխանաբար 404.79 ՀՀ դրամ և 393.57 դրամ 1 ԱՄՆ դոլարի և 447.90 ՀՀ դրամ և 420.06 ՀՀ դրամ 1 եվրոյի դիմաց:

Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ. Խմբի աշխատակիցները (ներառյալ ղեկավարները) վարձատրություն են ստանում բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների տեսքով: Այսպիսով աշխատակիցները ծառայություններ են մատուցում բաժնային գործիքների դիմաց (բաժնետոմսով մարվող գործարքներ) վարձատրության նկատառումով:

Բաժնային գործիքներով մարվող գործարքներ

Բաժնային գործիքներով մարվող գործարքների արժեքը որոշվում է իրական արժեքով այն ամսաթվի դրությամբ, երբ վարձատրությունը տրամադրվում է համապատասխան գնահատման մոդելի կիրառմամբ, որի հետագա մանրամասները տրված են Ծանոթագրություն 25-ում:

Այդ ծախսը ճանաչվում է անձնակազմի ծախսերում՝ սեփական կապիտալի համապատասխան աճի հետ միասին այն ժամանակաշրջանի ընթացքում, որում ծառայությունը մատուցվել է և անհրաժեշտության դեպքում, կատարողականի պայմանները կատարվել են (տրամադրման ժամանակաշրջանում):

Ծախս չի ճանաչվում այն վարձատրությունների համար, որոնք, ի վերջո, չեն առաջացնում իրավունք, քանի որ շուկայական պայմանները և/կամ ծառայության պայմանները չեն կատարվել: Այն դեպքում, երբ վարձատրությունը ներառում է շուկայական կամ իրավունք չառաջացնող պայման, գործարքները համարվում են կատարված՝ անկախ նրանից, թե շուկայական կամ իրավունքի առաջացման պայմանը բավարարված է թե ոչ, պայմանով, որ կատարողական և/կամ ծառայության բոլոր մյուս պայմանները բավարարված են:

Երբ բաժնային գործիքներով մարվող գործարքի պայմանները փոփոխվում են, ճանաչված նվազագույն ծախսը չփոփոխված գործարքի իրական արժեքն է տրամադրման ամսաթվի դրության, պայմանով, որ պահպանվում են գործարքի իրավունքի առաջացման սկզբնական պայմանները: Լրացուցիչ ծախսը, որը չափվում է փոփոխման ամսաթվի դրությամբ, ճանաչվում է ցանկացած փոփոխության համար, որը մեծացնում է բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքի ընդհանուր գումարի իրական արժեքը կամ այլ կերպ ձեռնտու է աշխատողին: Եթե գործարքը չեղարկվում է կազմակերպության կամ գործընկերոջ կողմից, վարձատրության իրական արժեքի ցանկացած մնացած տարր ճանաչվում է ծախս անմիջապես շահույթի կամ վնասի միջոցով:

4 Առանցքային հաշվապահական դատողություններ և գնահատումներ

Խումբը կատարում է գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների և հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա: Գնահատումները և դատողությունները շարունակական կերպով վերանայվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ինչպիսիք են հետագա իրադարձությունների ակնկալիքները, որոնք առկա պայմաններում տրամաբանական են համարվում: Գնահատումներից բացի, ղեկավարությունը կատարում է նաև որոշակի այլ դատողություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գործընթացում: Դատողությունները, որոնք առավել

նշանակալի ազդեցություն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված արժեքների վրա, և գնահատականները, որոնք կարող են հիմք հանդիսանալ հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներում նշանակալի ճշգրտման համար, հետևյալն են. հողի, շենքերի և փոխադրամիջոցների վերագնահատում:

Գույքի իրական արժեքը որոշվում է շուկայական համադրելի մեթոդի կիրառմամբ: Սա նշանակում է, որ գնահատողի կողմից կատարված գնահատումները հիմնված են շուկայական գործարքների գների վրա, էական ճշգրտմամբ՝ հաշվի առնելով կոնկրետ գույքի բնույթը, գտնվելու վայրը կամ վիճակը: Խումբը յուրաքանչյուր տարի գնահատում է շուկայի փոփոխությունները՝ էական փոփոխությունների տեսանկյունից, և ներգրավում է անկախ փորձագետների՝ իր տարածքների և փոխադրամիջոցների գնահատման համար, ըստ անհրաժեշտության և կիրառելիության (ծանոթագրություն 34):

Իրական արժեքի չափում. Եթե համախմբված ֆինանսական հաշվետվություններում արտացոլվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը հնարավոր չէ որոշել ակտիվ շուկայի գների հիման վրա, ապա այն որոշվում է տարբեր գնահատման մոդելների կիրառմամբ, ներառյալ՝ մաթեմատիկական մոդելները: Այդպիսի մոդելների համար ելակետային տվյալները որոշվում են որպես դիտարկվող շուկաների տվյալներ, եթե դա հնարավոր է: Հակառակ դեպքում իրական արժեքի որոշման համար անհրաժեշտ է կիրառել դատողություններ: Լրացուցիչ տեղեկատվություն ներկայացված է Ծանոթագրություն 32-ում:

Ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստներ: Ֆինանսական ակտիվների բոլոր կատեգորիաներում արժեզրկումից կորուստների չափումը պահանջում է դատողություն, մասնավորապես, ապագա դրամական հոսքերի և գրավի արժեքների գումարի և ժամկետների գնահատում արժեզրկումից կորուստները և վարկային ռիսկի զգալի աճի գնահատականը որոշելիս: Այս գնահատումները պայմանավորված են մի շարք գործոններով, որոնց փոփոխությունները կարող են հանգեցնել պահուստների տարբեր մակարդակների: Բացի այդ, գործունեության լայնածավալ խափանումները կարող են առաջացնել իրացվելիության խնդիրներ որոշ կազմակերպությունների և սպառողների համար: Խմբի ԱՎԿ հաշվարկները ելնում են բարդ մոդելներից, որոնց հիմքում ընկած են մի շարք ենթադրություններ՝ փոփոխական մուտքային տվյալների ընտրության և նրանց փոխկապակցվածության վերաբերյալ: ԱՎԿ մոդելների տարրերը, որոնք համարվում են հաշվապահական դատողություններ և գնահատումներ, ներառում են.

- Վիճակագրական մոդելներ դեֆոլտի հավանականությունը (PD), դեֆոլտի դեպքում գործիքի արժեքը (EAD) և դեֆոլտի դեպքում կորստի չափը (LGD) խմբային հիմունքով գնահատելու համար,
- Ֆինանսական ակտիվների սեգմենտավորումը, երբ դրանց ԱՎԿ-ն հաշվարկված է խմբային հիմունքով,
- ԱՎԿ մոդելների մշակումը, ներառյալ տարբեր բանաձևերը և մուտքային տվյալների ընտրությունը,
- Մակրոտնտեսական սցենարների և տնտեսագիտական մուտքային տվյալների միջև կապվածության որոշումը, ինչպիսիք են գործազրկության մակարդակը և գրավի արժեքները, և ազդեցությունը դեֆոլտի հավանականության (PD), դեֆոլտի դեպքում գործիքի իրական արժեքի (EAD) և դեֆոլտի դեպքում կորստի չափի (LGD) վրա,
- Հեռանկարային մակրոտնտեսական սցենարների ընտրությունը և դրանց հավանականության կշիռը՝ տնտեսական տվյալները ԱՎԿ մոդելների մեջ արտացոլելու համար

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված վարկերի և ֆինանսական վարձակալության արժեզրկման գծով պահուստը կազմել է 6,048,341 հազ. ՀՀ դրամ (2022թ.՝ 5,982,161 հազ. ՀՀ դրամ): Մանրամասները ներկայացված են Ծանոթագրություններ 12 և 13:

Կապակցված կողմերի հետ գործարքների սկզբնական ճանաչում: Բնականոն գործունեության ընթացքում Խումբը գործարքի մեջ է մտնում իր կապակցված կողմերի հետ: ՖՀՄՍ 9-ը պահանջում է ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչում՝ հիմնված նրանց իրական արժեքի վրա: Կիրառվում է դատողություն՝ որոշելու, թե արդյոք գործարքները գնահատված են շուկայական կամ ոչ շուկայական տոկոսադրույքներով, եթե այդ գործարքների համար ակտիվ շուկա առկա չէ: Դատողության համար հիմք է հանդիսանում չկապակցված կողմերի հետ նմանատիպ գործարքների գնահատումը և արդյունավետ տոկոսադրույքով վերլուծությունները: Կապակցված կողմերի հաշվեկշռի պայմաններն ու դրույթները բացահայտվում են Ծանոթագրություն 36-ում:

5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին

Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտել 2023թ. հունվարի 1-ից.

ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր» (թողարկվել է 2017թ. մայիսի 18-ին և ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՖՀՄՍ17-ը փոխարինում է ՖՀՄՍ 4-ին, որը թույլ էր տալիս ընկերություններին կիրառել ապահովագրական պայմանագրերի համար գործող հաշվապահական հաշվառման գործելակերպը: Սա ներդրողների համար դժվարեցնում էր համեմատումը և համադրումը այլ առումներով նմանատիպ ապահովագրական ընկերությունների ֆինանսական արդյունքների հետ: ՖՀՄՍ17-ը մեկ միասնական սկզբունքի վրա հիմնված հաշվապահական ստանդարտ է՝ ապահովագրողի կողմից պահվող բոլոր տեսակի ապահովագրության պայմանագրերի, այդ թվում վերաապահովագրության պայմանագրերի հաշվառումը իրականացնելու համար: Ստանդարտը պահանջում է, որ ապահովագրության պայմանագրերի խմբերը ճանաչվեն և չափվեն (i) ապագա դրամական միջոցների հոսքերի՝ ռիսկով ճշգրտված ներկա արժեքով (պայմանագրերի կատարման դրամական հոսքեր)՝ հաշվի առնելով պայմանագրերի կատարման դրամական հոսքերի վերաբերյալ առկա ողջ տեղեկատվությունը, որը համահունչ է դիտարկելի շուկայական տեղեկատվությանը, գումարած՝ (եթե արժեքը պարտավորություն է) կամ հանած՝ (եթե արժեքը ակտիվ է) (ii) պայմանագրերի խմբի չբաշխված շահույթի գումարը (պայմանագրերի ծառայության մարժա): Ապահովագրողները արտացոլում են ապահովագրական պայմանագրերի մեկ խմբից ստացված շահույթը այն ժամանակահատվածում, որի ընթացքում դրանք ապահովում են ծածկույթ և ազատվում են ռիսկից: Եթե պայմանագրերի խումբը հանդիսանում է կամ դառնում է ոչ շահութաբեր, Ընկերությունը անմիջապես ճանաչում է վնաս: Խումբը ստանդարտը կիրառել է իր կողմից թողարկվող որոշակի կատարողական երաշխիքների նկատմամբ, որոնք չեն համապատասխանում վարկային պարտավորության սահմանմանը: Ստանդարտի ընդունումը էական ազդեցություն չի ունեցել սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ-ի գործնական ուղեցույց 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության գծով տեղեկատվության բացահայտում (թողարկվել է 2021թ. փետրվարի 12-ին և ուժի մեջ է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 1-ում տեղի են ունեցել փոփոխություններ, որոնցով կազմակերպություններից պահանջվում է բացահայտել իրենց հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթների փոխարեն: Փոփոխությունները պարունակում են հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվության սահմանումները:

Փոփոխություններ ՀՀՄՍ 8-ում. Հաշվապահական հաշվառման գնահատումների որոշում (թողարկվել է 2021թ. փետրվարի 12-ին և ուժի մեջ է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 8-ի փոփոխությունը պարզաբանում է, թե ինչպես պետք է կազմակերպությունները տարբերակեն հաշվապահական հաշվառման քաղաքականության և հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունները: Փոփոխությունների ընդունումը էական ազդեցություն չի ունեցել սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:
Միևնույն գործարքից առաջացած ակտիվների և պարտավորությունների գծով հետաձգված հարկ – Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում (թողարկվել է 2021թ. մայիսի 7-ին, ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 12-ի փոփոխությունները հստակեցնում են հետաձգված հարկի հաշվառման եղանակները այնպիսի գործարքների համար, ինչպիսիք են վարձակալությունը և ապագործարկման պարտավորությունները: Փոփոխությունն էական ազդեցություն չի ունեցել սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում Շահութահարկ. Միջազգային հարկային բարեփոխում – Երկրորդ բաղադրիչի մոդելային կանոններ (հրապարակված է 2023թ. մայիսի 23-ին): 2023թ. մայիսին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է «Շահութահարկ» ՀՀՄՍ 12-ի նեղ շրջանակի փոփոխությունները: Այս փոփոխությունները կատարվել են Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀՁԿ) կողմից միջազգային հարկային բարեփոխումների արդյունքում հրապարակված Երկրորդ բաղադրիչի մոդելային կանոնների առաջիկայում սպասվող

ներդրմանը նախապատրաստվելու համար: Փոփոխությունն էական ազդեցություն չի ունեցել սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Հրապարակվել են 2024թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո տարեկան ժամանակահատվածների համար պարտադիր մի շարք նոր ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնց վաղ կիրառում չի իրականացվել Ընկերության կողմից:

Փոփոխություններ ՖՀՄՍ 16-ում Վարձակալություն. Վարձակալության պարտավորություն վաճառքի և հետադարձ վարձակալության ժամանակ (թողարկվել է 2022թ. սեպտեմբերի 22-ին և ուժի մեջ է մտնում 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Փոփոխությունները վերաբերում են վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքներին, որոնք բավարարում են ՖՀՄՍ 15-ի պահանջները՝ վաճառք հաշվառվելու համար: Խումբը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների դասակարգումը – ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ (ի սկզբանե թողարկվել է 2020թ. հունվարի 23-ին և հետագայում թողարկման ամսաթիվը փոփոխվել է 2020թ. հուլիսի 15-ին և 2022թ. հոկտեմբերի 31-ին, ուժի մեջ է մտնում 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Այս փոփոխություններով հստակեցվում է, որ պարտավորությունների՝ որպես կարճաժամկետ կամ երկարաժամկետ դասակարգումը պայմանավորված է հաշվետու ժամանակաշրջանի վերջում գոյություն ունեցող իրավունքներով: Պարտավորությունները երկարաժամկետ են, եթե կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ըստ էության ունի դրանց մարումն առնվազն 12 ամսով հետաձգելու իրավունք: Ուղեցույցն այլևս չի սահմանում այդ իրավունքի անվերապահ լինելու պահանջ: Խումբը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխություններ ՀՀՄՍ 7-ում «Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն» և ՖՀՄՍ 7-ում «Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ. Մատակարարների ֆինանսական պայմանագրեր» (Թողարկվել է 2023թ. մայիսի 25-ին): Ի պատասխան ֆինանսավորման պայմանագրերի ոչ համարժեք կամ ապակողմնորոշիչ բացահայտման վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների մտահոգություններին, 2023թ. մայիսին ՀՀՄՍԽ-ն փոփոխություններ է կատարել ՀՀՄՍ 7-ում և ՖՀՄՍ 7-ում՝ պահանջելով բացահայտել կազմակերպության մատակարարների ֆինանսական պայմանագրերը (ՄՖՊ): Բացահայտման նոր պահանջները կգործեն 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Խումբը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխություններ ՀՀՄՍ 21-ում «Փոխարինակելիության բացակայություն» (թոզարկվել է 2023թ. օգոստոսի 15-ին): 2023թ. օգոստոսին ՀՀՄՍԽ-ն փոփոխություններ է կատարել ՀՀՄՍ 21-ում, որը նպատակ ունի օգնել կազմակերպություններին գնահատելու երկու արժույթների միջև փոխանակելիությունը և որոշել սփոթ փոխարժեքն այն դեպքում, երբ փոխանակելիություն առկա չէ: Բացահայտման նոր պահանջները կգործեն 2025թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար:

Բացառությամբ վերը նշված դեպքերի, չի ակնկալվում, որ սույն նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները որևէ էական ազդեցություն կունենան Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

7 Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն

Կառավարման նպատակներով Խումբը կազմված է հինգ գործառնական սեգմենտներից՝ ըստ մատուցվող պրոդուկտների և ծառայությունների՝ հետևյալ կերպ.

Մանրածախ բանկային գործունեություն	Ֆիզիկական անձանց ավանդներ, սպառողական վարկերի տրամադրում, օվերդրաֆտների, վարկային քարտերի սպասարկում և դրամական փոխանցումներ:
Կորպորատիվ բանկային գործունեություն	Կորպորատիվ և ինստիտուցիոնալ հաճախորդներին վարկերի և այլ վարկային գործիքների տրամադրում, ավանդների և ընթացիկ հաշիվների բացում և սպասարկում:
Գյուղատնտեսություն	Գյուղատնտեսական ոլորտի հաճախորդներին վարկերի տրամադրում, ավանդների և ընթացիկ հաշիվների բացում և սպասարկում:
Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն	Գանձապետական և ֆինանսական, ներդրումային բանկային ծառայություններ և այլ կենտրոնական գործառնություններ:
Ֆինանսական վարձակալություն	Կորպորատիվ և անհատ հաճախորդներին ֆինանսական վարձակալության գծով ծառայությունների մատուցում:

Խմբում գործառնական որոշումներ կայացնող հիմնական անձը գլխավոր գործադիր տնօրենն է:

Ռեսուրսների բաշխման և գործունեության գնահատման նպատակով ղեկավարությունը հետևում է իր բիզնես միավորների գործառնական արդյունքներին առանձին-առանձին: Խումբն իրականացնում է զուտ տոկոսային և ոչ տոկոսային եկամուտների առանձին չափում մանրածախ բանկային, կորպորատիվ բանկային, գյուղատնտեսության և առևտրի և ներդրումային բանկային սեգմենտների համար: Ոչ տոկոսային ծախսերի բաշխման նպատակով Խումբը մոտավոր հաշվարկում է զուտ տոկոսային եկամտի և ոչ տոկոսային եկամտի համամասնությունը յուրաքանչյուր սեգմենտի համար: Լիզինգի սեգմենտի համար (ԱԿԲԱ Լիզինգ դուստր ձեռնարկություն) Խումբն իրականացվում է ամբողջությամբ առանձնացված չափում: Շահութահարկը կառավարվում է Խմբի մակարդակով և բաշխվում է գործառնական սեգմենտների միջև:

Գործառնական սեգմենտների միջև տրանսֆերային գնագոյացումը, ինչպես երրորդ կողմերի հետ գործարքներում, համապատասխանում է շուկայական պայմաններին:

Տոկոսաբեր ակտիվները ներառում են հաճախորդներին տրված վարկերը, ածանցյալ ֆինանսական ակտիվները, ներդրումային արժեթղթերը, այլ բանկերի նկատմամբ պահանջները և ֆինանսական վարձակալության դեբիտորական պարտքերը:
Տոկոսնակիր ֆինանսական պարտավորությունները ներառում են ավանդներ, փոխառու միջոցներ, այլ բանկերի թղթակցային հաշիվներ և թողարկված պարտքային արժեթղթեր:

Հետևյալ աղյուսակները ներկայացնում են եկամուտների և շահույթի և որոշակի ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն Խմբի գործառնական սեգմենտների վերաբերյալ:

2023թ. *Հազ. ՀՀ դրամ*	**Մանրածախ բանկային գործու-նեություն**	**Կորպո-րատիվ բանկային գործունե-ություն**	**Գյուղա-տնտեսու-թյուն**	**Առևտրային և ներդրու-մային բանկային գործու-նեություն**	**Ֆինան-սական վարձա-կալություն**	**Ընդամենը**
Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ	28,000,085	20,492,082	17,208,308	3,150,617	-	**68,851,092**
Այլ տոկոսային եկամուտ	-	-	-	254,916	10,190,524	**10,445,440**
Տոկոսային ծախս	(9,701,551)	(8,977,050)	(7,464,598)	(1,217,267)	(4,679,844)	**(32,040,310)**
Զուտ տոկոսային եկամուտ	**18,298,534**	**11,515,032**	**9,743,710**	**2,188,266**	**5,510,680**	**47,256,222**
Վարկային կորստի ծախսերի հակադարձում / (վարկային կորստի ծախս)	(829,185)	249,674	95,114	1,182,871	(132,944)	**565,530**
Զուտ տոկոսային եկամուտ վարկային կորստի գծով ծախսից հետո	**17,469,349**	**11,764,706**	**9,838,824**	**3,371,137**	**5,377,736**	**47,821,752**
Միջնորդավճարների գծով եկամուտ	6,231,889	3,526,644	3,179,472	-	159,681	**13,097,686**
Միջնորդավճարների գծով ծախս	(2,309,226)	(1,453,166)	(1,229,631)		(22,600)	**(5,014,623)**
Զուտ վնաս իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից	-	-	-	400,019	-	**400,019**
Զուտ օգուտ /(վնաս) արտարժույթի առքուվաճառքից	2,555,306	1,562,598	1,344,690		(128,830)	**5,333,764**
Զուտ վնաս/օգուտ փոխարժեքային տարբերություններից	(33,833)	(20,689)	(17,804)		44,481	**(27,845)**
Ասոցիացված կազմակերպությունների շահույթի մասնաբաժին	-	-	-	1,019,338	-	**1,019,338**
Այլ արժեզրկման և պահուստների հակադարձում/(ծախս)	1,302,189	796,303	685,256	-	-	**2,783,748**
Այլ եկամուտ	343,133	210,265	180,568	-	119,951	**853,917**
Ոչ տոկոսային եկամուտ	**8,089,458**	**4,621,955**	**4,142,551**	**1,419,357**	**172,683**	**18,446,004**
Անձնակազմի գծով ծախսեր	(8,317,880)	(5,332,747)	(4,550,111)	(1,559,164)	(565,925)	**(20,325,827)**
Մաշվածություն և ամորտիզացիա	(1,526,309)	(933,355)	(803,196)	-	(49,928)	**(3,312,788)**
Այլ գործառնական ծախսեր	(1,363,374)	(833,718)	(717,454)	-	(117,970)	**(3,032,516)**
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(2,172,071)	(1,328,246)	(1,143,017)	-	(188,113)	**(4,831,447)**
Ոչ տոկոսային ծախս	**(13,379,634)**	**(8,428,066)**	**(7,213,778)**	**(1,559,164)**	**(921,936)**	**(31,502,578)**
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը	**12,179,173**	**7,958,595**	**6,767,597**	**3,231,330**	**4,628,483**	**34,765,178**
Շահութահարկի գծով ծախս	(2,600,411)	(1,590,180)	(1,368,425)	-	(813,400)	**(6,372,416)**
Տարվա շահույթ	**9,578,762**	**6,368,415**	**5,399,172**	**3,231,330**	**3,815,083**	**28,392,762**
Սեգմենտի տոկոսաբեր ակտիվներ	**154,976,483**	**202,038,959**	**98,183,895**	**25,973,391**	**83,406,426**	**564,579,154**
Սեգմենտի տոկոսակիր պարտավորություններ	**234,329,339**	**30,947,988**	**27,613,614**	**59,720,467**	**76,548,946**	**429,160,354**

2022թ. *Հազ. ՀՀ դրամ*	**Մանրածախ բանկային գործունեություն**	**Կորպորատիվ բանկային գործունեություն**	**Գյուղատնտեսություն**	**Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն**	**Ֆինանսական վարձակալություն**	**Ընդամենը**
Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ	19,587,306	13,938,461	15,880,325	2,858,642	-	**52,264,734**
Այլ տոկոսային եկամուտ	-	-	-	130,202	5,722,564	**5,852,766**
Տոկոսային ծախս	(6,669,927)	(6,567,713)	(7,431,082)	(1,137,339)	2,498,499)	**(24,304,560)**
Զուտ տոկոսային եկամուտ	**12,917,379**	**7,370,748**	**8,449,243**	**1,851,505**	**3,224,065**	**33,812,940**
Վարկային կորստի ծախսերի հակադարձում / (վարկային կորստի ծախս)	1,173,104	350,093	797,322	(108,012)	73,708	**2,286,215**
Զուտ տոկոսային եկամուտ վարկային կորստի գծով ծախսից հետո	**14,090,483**	**7,720,841**	**9,246,565**	**1,743,493**	**3,297,773**	**36,099,155**
Միջնորդավճարների գծով եկամուտ	5,142,169	1,990,132	2,378,905	-	148,649	**9,659,855**
Միջնորդավճարների գծով ծախս	(1,627,073)	(928,419)	(1,064,267)	-	(4,172)	**(3,623,931)**
Զուտ օգուտ՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից	-	-	-	(115,359)	-	**(115,359)**
Զուտ օգուտ արտարժույթի առքուվաճառքից	6,484,007	3,327,322	3,852,680	-	(147,546)	**13,516,463**
Զուտ վնաս/օգուտ փոխարժեքային տարբերություններից	(223,357)	(114,617)	(132,715)	-	36,954	**(433,735)**
Ասոցիացված կազմակերպությունների շահույթի մասնաբաժին	-	-	-	736,475	-	**736,475**
Այլ եկամուտ	656,459	336,866	390,057	-	64,903	**1,448,285**
Ոչ տոկոսային եկամուտ	**10,432,205**	**4,611,284**	**5,424,660**	**621,116**	**98,788**	**21,188,053**
Անձնակազմի գծով ծախսեր	(7,425,992)	(3,734,430)	(4,442,759)	(716,054)	(397,578)	**(16,716,813)**
Մաշվածություն և ամորտիզացիա	(1,222,831)	(627,506)	(726,584)	-	(30,027)	**(2,606,948)**
Այլ գործառնական ծախսեր	(1,104,020)	(566,537)	(655,989)	-	(110,715)	**(2,437,261)**
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(1,795,437)	(921,343)	(1,066,817)	-	(141,543)	**(3,925,140)**
Այլ արժեզրկման և պահուստների գծով ծախս	(1,558,071)	(799,537)	(925,777)	-	-	**(3,283,385)**
Ոչ տոկոսային ծախս	**(13,106,350)**	**(6,649,353)**	**(7,817,927)**	**(716,054)**	**(679,863)**	**(28,969,547)**
Շահույթ/(վնաս)մինչև շահութահարկով հարկումը	**11,416,337**	**5,682,772**	**6,853,299**	**1,648,555**	**2,716,698**	**28,317,661**
Շահութահարկի գծով ծախս	(2,468,973)	(1,266,974)	(1,467,020)	-	(544,254)	**(5,747,221)**
Տարվա շահույթ/(վնաս)	**8,947,364**	**4,415,798**	**5,386,279**	**1,648,555**	**2,172,444**	**22,570,440**
Սեգմենտի տոկոսաբեր ակտիվներ	**159,718,236**	**117,732,694**	**130,988,315**	**25,358,661**	**53,423,221**	**487,221,127**
Սեգմենտի տոկոսակիր պարտավորություններ	**185,737,575**	**21,898,804**	**24,474,199**	**99,752,380**	**51,229,395**	**383,092,353**

Խումբն իր հիմնական գործունեությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում: Խումբը Հայաստանից դուրս չունի ոչ ընթացիկ ակտիվներ, բացի ֆինանսական գործիքից, որը ներկայացված է ծանոթագրություն 10-ում: Խումբը չունի հաճախորդներ, որոնց եկամուտները գերազանցում են Խմբի ընդհանուր հասույթի 10%-ը

Որպես բանկային գործունեության շուկայի ակտիվ մասնակից, Խումբն ունի վարկային ռիսկի զգալի կենտրոնացում այլ ֆինանսական հաստատությունների գծով: Ընդհանուր առմամբ, ֆինանսական հաստատությունների նկատմամբ վարկային ռիսկի ենթարկվածությունը գնահատվել է 177,770,320 հազ. ՀՀ դրամ (2022թ.՝ 139,538,799 հազ. ՀՀ դրամ), որը ներառում է դրամական միջոցներ և դրանց համարժեքները, բանկերում տեղաբաշված ավանդները և բանկերի նկատմամբ այլ պահանջները, հետգնման գծով դեբիտորական պարտքերը և ֆինանսական ածանցյալ գործիքները:

2023թ. դեկտեմբերի 31-ին և 2022 թ. ավարտված տարվա համար ՖՀՄՍ 15-ի շրջանակներում հաճախորդների հետ պայմանագրերից ստացված հասույթի սեգմենտային բաշխումը հետևյալն է.

2023թ. *Հազ. ՀՀ դրամ*	**Մանրածախ բանկային գործունեություն, բացի գյուղատնտեսությունից**	**Կորպորատիվ բանկային գործունեություն**	**Գյուղատնտեսություն**	**Ֆինանսական վարձակալություն**	**Ընդամենը**
Միջնորդավճարների գծով եկամուտ					
Պլաստիկ քարտերի սպասարկում	4,374,095	2,475,313	2,231,636	-	**9,081,044**
Դրամական փոխանցումներ	570,138	322,643	290,881	-	**1,183,662**
Բանկային հաշիվների սպասարկման վճարներ	286,993	162,410	146,422	-	**595,825**
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	-	-	1,004,237	-	**1,004,237**
Կանխիկացման ծառայություններ	230,348	130,355	117,523	-	**478,226**
Այլ	286,601	162,188	146,222	159,681	**754,692**
Ընդամենը հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ	**5,748,175**	**3,252,909**	**3,936,921**	**159,681**	**13,097,686**

2022թ. *Հազ. ՀՀ դրամ*	**Մանրածախ բանկային գործունեություն, բացի գյուղատնտեսությունից**	**Կորպորատիվ բանկային գործունեություն**	**Գյուղատնտեսություն**	**Ֆինանսական վարձակալություն**	**Ընդամենը**
Միջնորդավճարների գծով եկամուտ					
Պլաստիկ քարտերի սպասարկում	3,260,740	1,261,978	1,508,506	-	**6,031,224**
Դրամական փոխանցումներ	759,127	293,799	351,193	-	**1,404,119**
Բանկային հաշիվների սպասարկման վճարներ	152,003	58,828	70,321	-	**281,152**
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	-	-	568,406	-	**568,406**
Կանխիկացման ծառայություններ	395,570	153,094	183,001	-	**731,665**
Այլ	267,424	103,499	123,717	148,649	**643,289**
Ընդամենը հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ	**4,834,864**	**1,871,198**	**2,805,144**	**148,649**	**9,659,855**

8 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են.

Հազ. ՀՀ դրամ	**2023թ.**	**2022թ.**
Առձեռն դրամական միջոցներ	22,665,289	21,703,944
Ընթացիկ հաշիվներ Կենտրոնական բանկում, ներառյալ պարտադիր պահուստները (չսահմանափակված մաս, տես Ծանոթագրություն 10)	38,560,913	58,759,074
Ընթացիկ հաշիվներ այլ բանկերում		
- վարկանիշը՝ BBB-(Baa3) և բարձր	10,847,364	1,243,082
- վարկանիշը՝ BBB-(Baa3) -ից ցածր և առանց վարկանիշի	1,429,994	6,716,379
Կարճաժամկետ ավանդներ այլ բանկերում		
- վարկանիշը՝ BBB-(Baa3) և բարձր	4,663,224	-
Արժեզրկում	(6,935)	(53,194)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**78,159,849**	**88,369,285**

Վարկերի որակը բացահայտելու համար Բանկը օգտագործում է Moody's վարկանիշային գործակալության վարկանիշները:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկում ընթացիկ հաշիվները ներառում են պարտադիր պահուստ՝ 26,139,452 հազ. ՀՀ դրամ (2022թ.՝ 19,602,439 հազ. ՀՀ դրամ):

Բանկերը պարտավոր են ունենալ դեպոնացված դրամական միջոցներ (պարտադիր պահուստ) ՀՀ ԿԲ-ում ՀՀ դրամով ներգրավված գումարների 4%-ի չափով (2022թ.՝ 4%) և արտարժույթով ներգրավված գումարների 18%-ի չափով (2022թ.՝ 18%):

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ բանկերում 9,530,941 հազ.ՀՀ դրամ ընթացիկ հաշիվների 78%-ը կազմում են մեկ օտարերկրյա բանկում թղթակցային հաշվի մնացորդները (2022 թ.՝ 5,322,574 հազ.ՀՀ դրամի 67%-ը՝ մեկ օտարերկրյա բանկում):

Արտարժույթով ներգրավված գումարներից բանկերը պարտավոր են գումարների 6%-ը պահպանել տեղական արժույթով (2022թ.՝ 6%) որպես դրամական միջոցների ավանդ ԿԲ-ում, իսկ 12%-ը (2022թ.՝ 12%)՝ արտարժույթով:

Ավելին, սահմանափակված է պահուստավորված գումարները արտարժույթով հանելու բանկերի հնարավորությունը, ուստի Խումբը արտարժույթով ավանդադրված պարտադիր պահուստները դասակարգում է որպես պահանջներ բանկերի նկատմամբ (Ծանոթագրություն 10):

Դրամական միջոցների համարժեքների բոլոր մնացորդները բաշխվում են 1-ին փուլին: Ստորև ներկայացված է տարվա ընթացքում ԱՎԿ-ի փոփոխությունների վերլուծությունը.

Հազ. ՀՀ դրամ	**2023թ.**	**2022թ.**
ԱՎԿ պահուստ հունվարի 1-ի դրությամբ	53,194	133,293
ԱՎԿ փոփոխություններ	(46,192)	(68,891)
Արտարժույթի ճշգրտումներ	(67)	(11,208)
Առ 31 դեկտեմբերի	**6,935**	**53,194**

Դրամական միջոցների և դրանց համարժեքների վարկային որակի մասին տեղեկատվությունը ներկայացված է «Ռիսկերի կառավարում» Ծանոթագրություն 33-ում:

9 Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Խումբը օգտագործում է ածանցյալ ֆինանսական գործիքները առևտրային նպատակներով: Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս որպես ակտիվներ և պարտավորություններ ներկայացված ածանցյալ ֆինանսական գործիքների իրական և անվանական արժեքները.

Հազ. ՀՀ դրամ	2023թ.		2022թ.	
	Անվանական արժեք	Իրական արժեք	Անվանական արժեք	Իրական արժեք
Ակտիվներ				
Ածանցյալ ֆինանսական գործիքներ				
Տոկոսադրույքի սվոփ	4,189,455	190,192	5,673,542	327,011
Արժութային սվոփ	8,577,752	9,765	2,136,573	36,273
	12,767,207	199,957	7,810,115	363,284
Պարտավորություններ				
Ածանցյալ ֆինանսական գործիքներ				
Արժութային սվոփ/ պարտավորություններ	-	58,552	-	-

10 Պահանջներ բանկերի նկատմամբ

Բանկերի նկատմամբ պահանջների կազմը

Հազ. ՀՀ դրամ	2023թ.	2022թ.
Պահանջներ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ		
Վարկային քարտերով գործառնությունների գծով դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում	6,005,000	2,777,500
Արտարժույթով պարտադիր պահուստներ ՀՀ ԿԲ-ում (Ծան. 8)	26,827,740	21,675,649
Ընդամենը	**32,832,740**	**24,453,149**
Պահանջներ այլ բանկերի նկատմամբ		
Հայկական բանկեր		
- վարկանիշը՝ Ba1-ից Ba3	-	199,889
Օտարերկրյա բանկեր		
- վարկանիշը՝ AA1-ից AA3	20,240	950,933
- վարկանիշը՝ A1-ից մինչև A3	4,167,101	203,028
Թղթակցային հաշիվներ և օվերնայթ տեղաբաշխումներ այլ բանկերում	163,157	-
Ընդամենը պահանջներ այլ բանկերի նկատմամբ	**4,350,498**	**1,353,850**
Այլ դեբիտորական պարտքեր		
Չմարված գործարքներ	208,919	22,273,672
Դրամական փոխանցումների համակարգերից ստացվելիք գումարներ	1,914,392	1,852,078
Պլաստիկ քարտերով գործարքներից ստացվելիք գումարներ	125,360	425,196
Հակադարձ հետգնման պայմանագրերով ստացվելիք գումարներ		
Հայաստանի բանկերից ստացվելիք գումարներ	60,035,070	559,459
Պահանջներ բանկերի նկատմամբ՝ մինչև արժեզրկումը	99,466,979	50,917,404
Արժեզրկում	(56,465)	(111,174)
Ընդամենը պահանջներ բանկերի նկատմամբ	**99,410,514**	**50,806,230**

2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ում պարտադիր պահուստները ներառում են արտարժույթով արտահայտված պահուստներ 26,827,740 հազ. ՀՀ դրամի չափով (2022 թ.՝ 21,675,649 հազ. ՀՀ դրամ) (տես Ծանոթագրություն 8):

Չմարված գործարքների մեջ ներառված գումարը դեկտեմբերի 31-ի դրությամբ չի հաշվարկվել Խմբի ԿԲ հաշվում: Այս գումարը մուտքագրվել է հունվարի առաջին աշխատանքային օրը որպես դրամական միջոց Խմբի ընթացիկ հաշվին:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 4,187,341 հազ. դրամ (2022թ.՝ 1,134,283 հազ. դրամ) ավանդների տեսքով տեղաբաշխված է միջազգայնորեն ճանաչված չորս ՏՀՁԿ բանկերում (2022թ.՝ երեք), որոնք հանդիսանում են Խմբի հիմնական գործընկերները միջազգային գործառնությունների իրականացման գծով:

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում բանկերի նկատմամբ պահանջների հետ կապված ԱՎԿ-ի փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	**Փուլ 1**	**Ընդամենը**
ԱՎԿ պահուստ առ 1 հունվարի 2023թ.	**(111,174)**	**(111,174)**
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	(56,465)	**(56,465)**
Մարված ակտիվներ	111,174	**111,174**
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**(56,465)**	**(56,465)**

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում բանկերի նկատմամբ պահանջների հետ կապված ԱՎԿ-ի փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	**Փուլ 1**	**Ընդամենը**
ԱՎԿ պահուստ առ 1 հունվարի 2022թ.	**56,016**	**56,016**
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	111,174	**111,174**
Մարված ակտիվներ	(56,016)	**(56,016)**
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**111,174**	**111,174**

Հազ. ՀՀ դրամ	**2023թ.**	**2022թ.**
	Փուլ 1	**Փուլ 1**
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**31,257,294**	**573,493**	**292,629**	**32,123,416**

Երաշխիքներ և ակրեդիտիվներ *Հազ. ՀՀ դրամ*	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
ԱՎԿ պահուստ 2023թ. հունվարի 1-ի դրությամբ	1,896	-	8	**1,904**
Ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա ազդող փոփոխություններ.				
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	9,558			**9,558**
Մարված ակտիվներ	(2,637)	-	(8)	**(2,645)**
Տեղափոխումներ Փուլ 1	-	-	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 2	(13)	13	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 3	(5)	-	5	**-**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը				
ԱՎԿ ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ	-	(4)	-	**(4)**
ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ	(49)	-	-	**(49)**
Արտարժույթի ճշգրտումներ	-	-	-	**-**
Ընդամենը տեղափոխումներ՝ ժամանակաշրջանի ընթացքում վարկային կորստի գծով պահուստի վրա ազդեցությամբ.	**8,750**	**9**	**5**	**8,764**

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում երաշխիքների և ակրեդիտիվների հետ կապված համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ-ի փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Երաշխիքներ և ակրեդիտիվներ *Հազ. ՀՀ դրամ*	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Համախառն հաշվեկշռային արժեքը 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	13,888,264	5,000	237,458	**14,130,722**
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	20,904,641	-	-	**20,904,641**
Մարված ակտիվներ	(10,871,975)	(5,000)	(154,983)	**(11,031,958)**
Տեղափոխումներ Փուլ 1	-	-	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 2	(8,800)	8,800	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 3	(244,372)	-	244,372	**-**
Արտարժույթի ճշգրտումներ	(116,246)	-	-	**(116,246)**
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**23,551,512**	**8,800**	**326,847**	**23,887,159**

Երաշխիքներ և ակրեդիտիվներ *Հազ. ՀՀ դրամ*	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
ԱՎԿ պահուստ 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**1,608**	**-**	**9**	**1,618**
Ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա ազդող փոփոխություններ.				
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	1,833	-	-	**1,833**
Մարված ակտիվներ	(1,476)	-	(6)	**(1,482)**
Տեղափոխումներ Փուլ 1	-	-	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 2	-	-	-	**-**
Տեղափոխումներ Փուլ 3	(6)	-	6	**-**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը				
ԱՎԿ ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ	-	-	-	**-**
ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ	(61)	-	-	**(61)**
Արտարժույթի ճշգրտումներ	(3)	-	-	**(3)**
Ընդամենը տեղափոխումներ՝ ժամանակաշրջանի ընթացքում վարկային կորստի գծով պահուստի վրա ազդեցությամբ.	**1,896**	**-**	**8**	**1,904**

27 Զուտ տոկոսային եկամուտ

Զուտ տոկոսային եկամտի կազմը.

Հազ. ՀՀ դրամ	**2023թ.**	**2022թ.**
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր	63,387,477	50,498,995
Հակադարձ հետգնման պայմանագրերով ստացվելիք գումարներ	2,345,126	281,069
Պահանջներ բանկերի նկատմամբ	861,244	165,688
Այլ	190,862	1,460
	66,784,709	**50,947,212**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ		
Պարտքային գործիքներ	2,066,383	1,317,522
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	**68,851,092**	**52,264,734**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	10,190,524	5,722,526
Այլ տոկոսային եկամուտ	254,916	130,240
Այլ տոկոսային եկամուտ	**10,445,440**	**5,852,766**
Ընդամենը տոկոսային եկամուտ	**79,296,532**	**58,117,500**
Տոկոսային ծախս		
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	22,561,711	15,689,446
Այլ փոխառու միջոցներ և ստորադաս փոխառություններ, բացառությամբ վարձակալության պարտավորությունների	7,651,536	7,105,788
Թողարկված պարտքային արժեթղթեր	1,351,543	252,100
Հետգնման պայմանագրերով վճարման ենթակա գումարներ	199,908	475,780
Այլ	40,960	673,756
Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային ծախս	**31,805,658**	**24,196,870**
Վարձակալության գծով պարտավորություններ	234,652	107,690
Տոկոսային ծախս	**32,040,310**	**24,304,560**
Զուտ տոկոսային եկամուտ	**47,256,222**	**33,812,940**

28 Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ

Միջնորդավճարների գծով զուտ եկամտի կազմը.

Հազ. ՀՀ դրամ	**2023թ.**	**2022թ.**
Պլաստիկ քարտերի սպասարկման և գործարքների վճարներ	9,081,044	6,031,224
Դրամական փոխանցումներ	1,183,662	1,404,119
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	1,004,237	568,406
Ընթացիկ հաշվի վճարներ	595,825	281,152
Կանխիկացման ծառայություններ	478,226	731,665
Միջնորդավճարներ՝ որպես ապահովագրական գործակալ հանդես գալու գծով	368,697	225,424
Այլ	226,314	269,216
Միջնորդավճարներ վարձակալության սարքավորումների մատակարարներից	159,681	148,649
Միջնորդավճարների գծով եկամուտ	**13,097,686**	**9,659,855**
Պլաստիկ քարտերի սպասարկում	4,629,582	3,093,747
Այլ	238,148	213,371
Դրամական փոխանցումներ	146,893	316,813
Միջնորդավճարների գծով ծախս	**5,014,623**	**3,623,931**
Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ	**8,083,063**	**6,035,924**

29 Այլ եկամուտ

Հազ. ՀՀ դրամ	**2023թ.**	**2022թ.**
Այլ ակտիվների վաճառքից ստացված միջոցներ, զուտ	134,566	55,708
Քարտով գործարքներից ստացված եկամուտ, զուտ	117,195	1,937
Կրեդիտորական պարտքերի դուրսգրումից եկամուտ	95,566	33,326
Ստացված փոխհատուցում	27,841	-
Շահաբաժիններ	3,185	9,199
Ստացված տույժեր և տուգանքներ	1,394	1,077
Հողի և շենքերի վաճառքից օգուտ	-	1,212,817
Այլ	474,170	134,221
Ընդամենը այլ եկամուտ	**853,917**	**1,448,285**

30 Այլ գործառնական ծախսեր

Գործառնական այլ ծախսերը ներառում են.

Հազ. ՀՀ դրամ	**2023թ.**	**2022թ.**
Երաշխիքային վճարներ ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին	693,668	485,210
Վարկի հավաքագրման գծով ծախսեր	265,840	367,100
Հիմնական միջոցների օտարումից վնաս	209,150	150,469
Ինկասացիոն ծախսեր	205,715	232,930
Շահութահարկից բացի այլ հարկեր	173,077	342,734
Ֆինանսական համակարգի հաշտարարի վճարումներ	112,250	78,848
Անդամակցության վճարներ	402,060	45,480
Արժեթղթերի ռեեստրի վարման վճար	17,576	13,288
Վճարված տույժեր և տուգանքներ	2,317	8,433
Այլ	950,863	712,769
Այլ գործառնական ծախսեր	**3,032,516**	**2,437,261**

31 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

Հազ. ՀՀ դրամ	**2023թ.**	**2022թ.**
Գովազդային և մարքեթինգային ծառայություններ	879,396	851,345
Վերանորոգում և սպասարկում	1,279,709	854,401
Ծրագրային ապահովման սպասարկման ծախս	430,600	484,258
Կապ	414,612	358,370
Անվտանգություն	324,206	303,442
Կառավարչական այլ ծախսեր	280,121	110,150
Կոմունալ ծառայություններ և գրասենյակային պարագաներ	266,559	254,504
Ապահովագրություն	221,366	190,012
Ներկայացուցչական ծախսեր	248,736	172,932
Գործառնական վարձակալության գծով ծախս	23,446	58,671
Այլ	462,696	287,055
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	**4,831,447**	**3,925,140**

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար Խումբը ճանաչել է 5,048 հազ. ՀՀ դրամ կարճաժամկետ վարձակալության և 18,398 հազ. ՀՀ դրամ ցածրարժեք ակտիվների վարձակալության գծով ծախսեր (2022թ.՝ 6,381 հազ. ՀՀ դրամ կարճաժամկետ վարձակալության գծով ծախս և 52,290 հազ. ՀՀ դրամ՝ ցածրարժեք ակտիվների վարձակալության գծով ծախս):

«Այլ» տողը ներառում է 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող ֆինանսական տարվա համար Խմբին մատուցված աուդիտորական ծառայությունների վճարը՝ 77,880 հազ. ՀՀ դրամի չափով (2022թ.՝ 90,128 հազ. ՀՀ դրամ), աուդիտ չիանդիսացող՝ հավաստման ծառայություններ՝ 7,200 հազ. ՀՀ դրամի չափով (2022թ.՝ զրո) և աուդիտ չիանդիսացող այլ ծառայություններ՝ 1,172 հազ. ՀՀ դրամի չափով (2022թ.՝ զրո): Բոլոր գումարները ԱԱՀ ներառյալ են:

32 Այլ արժեզրկման և պահուստների հակադարձում/(ծախս)

	2023թ.	2022թ.
Պարտավորությունների գծով պահուստի հակադարձում/(ծախս) (ծանոթագրություն 23)	2,663,662	(2,666,591)
Ոչ նյութական ակտիվների արժեզրկման գծով ծախս	(3,217)	(591,800)
Բռնագանձված ակտիվների օտարումից միջոցներ	123,303	(24,994)
Այլ արժեզրկման և պահուստների գծով ծախս	**2,783,748**	**(3,283,385)**

33 Ռիսկերի կառավարում

Ռիսկը բնորոշ է Խմբի գործունեությանը, սակայն այն կառավարվում է ռիսկերի շարունակական նույնականացման, չափման և մոնիտորինգի գործընթացի միջոցով, որը վերահսկվում է կազմակերպության շրջանակներում համապատասխան ստորաբաժանումների կողմից՝ հստակ դերերի բաշխմամբ: Այս գործընթացը կարգավորվում է ռիսկերի սահմանաչափերով, ինչը ենթակա է մշտական վերահսկողության: Խմբում կատարվում է ռիսկի ազդեցության կառավարման պատասխանատվության բաշխում, ընդ որում յուրաքանչյուր անձ պատասխանատու է իր իրավասության ներքո գտնվող ռիսկերի համար:

Հիմնական ռիսկերը, որոնց ենթակա է Խումբը, վարկային, իրացվելիության, շուկայական (որը ներառում է առևտրային և ոչ առևտրային ռիսկերը) և գործառնական ռիսկերն են: Բացի այդ, Խումբը ուշադրությամբ հետևում նոր առաջացող ռիսկերին, ինչպիսիք են կիբերանվտանգության սպառնալիքները, և ապահովում է ռիսկերի կառավարման գործելակերպը կարգավորող չափանիշների պահպանումը: Կանոնավոր կերպով իրականացվում են այս ռիսկերի քանակական գնահատումներ՝ որոշումների կայացման գործընթացներին օժանդակելու և Խմբի շահութաբերությունն ու կայունությունը պահպանելու նպատակով:

Ռիսկերի հայտնաբերման և վերահսկման հիմնական պատասխանատվությունը կրում է Բանկի խորհուրդը: Այնուամենայնիվ, առկա են առանձին անկախ մարմիններ, որոնք պատասխանատու են ռիսկերի կառավարման և մոնիթորինգի համար:

. Բանկի խորհուրդը պատասխանատու է ընդհանուր ռիսկերի կառավարման քաղաքականության, ռիսկերի կառավարման ռազմավարության և սկզբունքների հաստատման համար:

. Վերանայում և հաստատում է ստանդարտները և վարկային ռիսկի կառավարումը կարգավորող այլ փաստաթղթերը: Սահմանում է վարկային ռիսկի ենթարկվածության համապատասխան սահմանաչափերը, ներառյալ ճգնաժամային իրավիճակներում կիրառվող սահմանափակումները՝ ելնելով կազմակերպության չափից, բարդության աստիճանից և ֆինանսական վիճակից, և նախագծում է համապատասխան հաստատման ընթացակարգեր, որոնց միջոցով կարգավորում են սահմանաչափի գերազանցման դեպքերը:

Գլխավոր գործադիր տնօրենը պատասխանատվություն է կրում ռիսկերի ընդհանուր գործընթացը վերահսկելու և կառավարելու համար:

. Ռիսկերի կառավարման հանձնաժողովն ընդհանուր պատասխանատվություն է կրում ռիսկերի ռազմավարության մշակման և իրականացման սկզբունքների, շրջանակների, քաղաքականության և սահմանաչափերի մշակման համար: Այն պատասխանատու է ռիսկերի հիմնարար խնդիրների համար և կառավարում ու վերահսկում է ռիսկերի հետ կապված համապատասխան որոշումները:

. Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը պատասխանատու է բոլոր տեսակի ռիսկերի սահմանման, գնահատման, վերահսկողության և կառավարման համար: Անկախ վերահսկման գործընթաց ապահովելու համար, յուրաքանչյուր քայլից հետո ներկայացվում է հաշվետվություն:

Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինը պատասխանատու է Խմբի ակտիվների և

պասիվների և ընդհանուր ֆինանսական կառուցվածքի կառավարման համար: Այն նաև պատասխանատու է Խմբի ֆինանսավորման և իրացվելիության ռիսկերի համար:

Խմբի կողմից իրականացվող ռիսկերի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Խմբի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի ստորաբաժանումը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Ներքին Աուդիտի հանձնաժողովին:

. Տարբեր ռիսկերի վերլուծության և գնահատման ժամանակ Խումբն ընդունում է անհատական մոտեցում՝ կիրառելով վիճակագրական մոդելներ, զգայունության վերլուծություններ, ինչպես նաև վերլուծելով տարբեր ռիսկային ցուցանիշների դինամիկան և անհրաժեշտության դեպքում ձեռնարկելով համապատասխան միջոցներ: Մոդելները լրացուցիչ հակադարձ փորձարկում են անցնում՝ վավերականության ստուգման նպատակով: Խումբը նաև կիրառում է վատագույն դեպքի սցենարներ, որոնք կառաջանան այն դեպքում, երբ ծայրահեղ դեպքերը, որոնք քիչ հավանական է, որ տեղի կունենան, փաստացի տեղի են ունենում:

Ռիսկերի դիտարկումը և վերահսկումը հիմնականում իրականացվում է Խմբի կողմից հաստատված սահմանաչափերի հիման վրա: Այս սահմանաչափերը արտացոլում են Խմբի գործարար ռազմավարությունը և շուկայական միջավայրը, ինչպես նաև այն ռիսկի մակարդակը, որը Խումբը պատրաստ է ընդունել՝ լրացուցիչ շեշտադրելով տնտեսության ընտրված ոլորտները: Բացի այդ, Խումբը դիտարկում և գնահատում է ընդհանուր ռիսկին ենթարկվելու առավելագույն մակարդակը բոլոր տեսակի ռիսկերի և գործունեությունների գծով:

Բոլոր բիզնես ուղղություններին վերաբերող վարկային ռիսկի մասին տեղեկատվությունը ուսումնասիրվում և մշակվում է ռիսկերը վերլուծելու, վերահսկելու և վաղ հայտնաբերելու համար: Այս տեղեկատվությունը ներկայացվում և բացատրվում է Գլխավոր գործադիր տնօրենին, Ռիսկերի կառավարման հանձնաժողովին և բոլոր բիզնես ստորաբաժանումների ղեկավարներին: Ռիսկերի կառավարման հանձնաժողովին ներկայացված հաշվետվությունը ներառում է ընդհանուր վարկային ռիսկին ենթարկվածության վերլուծություն, վարկերի համակենտրոնացման սահմանաչափերի դիտարկման արդյունքները, ճեղքվածքների (GAP) վերլուծություն, VaR գնահատում, իրացվելիության գործակիցներ և նպատակային ցուցանիշների վերլուծություն, սթրես թեստ վերլուծություն, ընդհանուր ռիսկի ախորժակի վերահսկում և ռիսկերի պրոֆիլի փոփոխությունները: Եռամսյակային կտրվածքով կազմակերպվում է ոլորտային, հաճախորդների և բիզնեսի ռիսկերի մանրամասն զեկուցում:

Ռիսկերի կառավարման հանձնաժողովը քննարկում է ռիսկերի հետ կապված էական խնդիրները և հաստատում քայլերը՝ ուղղված դրանց նվազեցմանը և կառավարմանը: Խորհուրդը եռամսյակային կտրվածքով ստանում է ռիսկերի համապարփակ հաշվետվություն, որը պարունակում է կարևոր տեղեկատվություն Խմբի ռիսկերի գնահատման և որոշումներ կայացնելու համար:

Ռիսկերի մանրամասն հաշվետվությունները պատրաստվում և տարածվում են կազմակերպության բոլոր մակարդակներում՝ ապահովելով կիրառելի և արդիական տեղեկատվության հասանելիություն յուրաքանչյուր ստորաբաժանման համար:

Պարբերական ծանուցումներ են տրվում ռիսկի սահմանաչափերի խախտման դեպքում՝ ելնելով խախտման տեսակից և հրատապությունից: Այս ծանուցումները փոխանցվում են Խմբի համապատասխան ստորաբաժանումներին, ինչպես նաև գլխավոր գործադիր տնօրենին՝ քննարկելու և համապատասխան գործողություններ ձեռնարկելու համար:

Որպես իր ընդհանուր ռիսկերի կառավարման մաս, Խումբն օգտագործում է ածանցյալ գործիքներ և այլ գործիքներ՝ տոկոսադրույքների և արտարժույթի փոխարժեքի փոփոխություններից առաջացող ռիսկը, կապիտալի և վարկային ռիսկերը, ինչպես նաև կանխատեսվող գործարքներից առաջացող ռիսկերը կառավարելու համար:

Խումբն ակտիվորեն օգտագործում է գրավ՝ իր վարկային ռիսկերը նվազեցնելու համար:

Ռիսկերի գերկենտրոնացում. Ռիսկի համակենտրոնացումը ի հայտ է գալիս այն դեպքում, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են համանման գործունեություն, կամ երբ գործունեությունը վարում են մեկ աշխարհագրական տարածաշրջանում, կամ երբ գտնվում են համանման տնտեսական գործոնների ազդեցության ներքո, որոնց հետևանքով իրենց պարտավորությունների կատարումը համանման կերպ է արձագանքում տնտեսական, քաղաքական և այլ պայմանների փոփոխությանը: Ռիսկի համակենտրոնացումը արտացոլում է Խմբի գործունեության արդյունքների համեմատական զգայունությունն այն պայմանների նկատմամբ, որոնք ազդում են որոշակի ոլորտի կամ աշխարհագրական տարածաշրջանի վրա:

Ռիսկի գերկենտրոնացումից խուսափելու նպատակով Խմբի քաղաքականությունը և ընթացակարգերը ներառում են յուրահատուկ սկզբունքներ, որոնք ուղղված են առավելագույն կերպով դիվերսիֆիկացված պորտֆելի ապահովմանը: Վարկային ռիսկերի հայտնաբերված համակենտրոնացումները համապատասխանաբար վերահսկվում և կառավարվում են:

Վարկային ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը կարող է կրել վնաս, հաճախորդների կամ գործընկերների կողմից պարտավորությունների չկատարման դեպքում: Խումբը իրականացնում է վարկային ռիսկի վերահսկում և կառավարում՝ սահմանելով ռիսկի այն սահմանաչափը, որը պատրաստ է ընդունել անհատական գործընկերների և աշխարհագրական ու տնտեսական համակենտրոնացումների համար, ինչպես նաև դիտարկելով զգայունությունը նման սահմանաչափերի նկատմամբ:

Խումբը հաստատել է վարկային որակի ստուգման գործընթաց՝ ապահովելու գործընկերների վարկունակության հնարավոր փոփոխությունների վաղ բացահայտումը, ներառյալ գրավների պարբերաբար վերանայումը: Վարկերի որակի ստուգման գործընթացը Խմբին թույլ է տալիս գնահատել հնարավոր վնասը այն ռիսկերի հետևանքով, որոնց նկատմամբ այն զգայուն է, և ձեռնարկել ուղղիչ գործողություններ:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ. Ածանցյալ ֆինանսական գործիքներից ծագող վարկային ռիսկը ցանկացած պահի սահմանափակվում է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված դրական իրական արժեքով:

Վարկային պարտավորությունների հետ կապված ռիսկեր. Խումբը իր հաճախորդներին ընձեռում է երաշխիքների և ակրեդիտիվների ստացման հնարավորություն, որոնց գծով Խմբի մոտ կարող է անհրաժեշտություն ծագել հաճախորդների անունից կատարելու վճարումներ: Հաճախորդները վճարումները կատարում են պայմանագրերում ամրագրված պայմանների համաձայն: Խումբը կրում է ռիսկեր, որոնք համարժեք են վարկային ռիսկերին, և նվազեցվում են նույն ընթացակարգերի և ռիսկի վերահսկման քաղաքականության վարման շնորհիվ:

Վարկային ռիսկի առավելագույն չափը ֆինանսական գործիքների գծով Ռիսկի առավելագույն չափը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության տարրերի վրա, ներառյալ ածանցյալ գործիքները, զտման և գրավի պայմանագրերի միջոցներով ռիսկը մեղմացնելու ազդեցությունից առաջ, ներկայացված է հաշվեկշռային արժեքով:

Իրական արժեքով ներկայացված ֆինանսական գործիքների դեպքում, հաշվեկշռային արժեքը արտահայտում է ընթացիկ վարկային ռիսկը, բայց ոչ ռիսկի առավելագույն չափը, որը կարող է առաջանալ արժեքի փոփոխությունից:

Ֆինանսական գործիքների յուրաքանչյուր մակարդակի վարկային ռիսկի առավելագույն չափի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է առանձին ծանոթագրություններում: Ապահովման միջոցների և ռիսկի նվազեցման այլ մեթոդների ազդեցությունը ներկայացված է Ծանոթագրություններ 12-ում և 13-ում:

Արժեզրկման գնահատում. Խումբը հաշվարկում է ակնկալվող վարկային կորուստը (ԱՎԿ) հավանականությամբ կշռված երեք սցենարների միջոցով՝ գնահատելու դրամական միջոցների ակնկալվող պակասը՝ զեղչված սկզբնավորման պահին արդյունավետ տոկոսադրույքով (EIR): Դրամական միջոցների պակասուրդը սահմանվում է որպես կազմակերպությանը վճարման ենթակա պայմանագրային դրամական միջոցների հոսքերի և ակնկալվող դրամական միջոցների հոսքերի միջև տարբերությունը, որը կազմակերպությունն ակնկալում է ստանալ՝ հաշվի առնելով հնարավոր վարկային ռիսկը: ԱՎԿ-ի հաշվարկների մեխանիզմը մանրամասն ներկայացված է ստորև՝ առանցքային բաղադրիչներով, ներառյալ.

PD	Դեֆոլտի հավանականությունը (PD) ներկայացնում է սահմանված ժամանակային տիրույթում դեֆոլտի հավանականության գնահատումը: Դեֆոլտ կարող է առաջանալ գնահատված ժամանակահատվածի ցանկացած պահի, եթե գործիքը շարունակում է մնալ պորտֆելում և նախկինում չի ապաճանաչվել:
EAD	Դեֆոլտի դեպքում գործիքի արժեքը (EAD) ապագա դեֆոլտի ամսաթվի դրությամբ գործիքի գնահատված արժեքն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո ակնկալվող փոփոխությունների ազդեցությունը, Սա ներառում է մայր գումարի և տոկոսների պլանավորված կամ չպլանավորված մարումները, պարտավորված միջոցների ակնկալվող գումարները և բաց թողնված վճարումների արդյունքում կուտակված տոկոսները:
LGD	Դեֆոլտի դեպքում կորստի չափը (LGD) դրամական միջոցների կորստի գնահատումն է, որն առաջանում է, երբ որոշակի պահի տեղի է ունենում դեֆոլտ: Դա պայմանագրային դրամական միջոցների հոսքերի և այն դրամական միջոցների հոսքերի տարբերությունն է, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավների իրացումից միջոցները: Սովորաբար, LGD-ն արտահայտվում է որպես դեֆոլտի դեպքում գործիքի արժեքից (EAD) տոկոս

ԱՎԿ պահուստը հիմնվում է վարկային վնասների վրա, որոնք ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի կյանքի ընթացքում (ակտիվի կյանքի ընթացքում ակնկալվող վարկային վնաս կամ ԱԿԱՎԿ): Այն դեպքում, եթե առկա չէ վարկային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչումից հետո, ապա պահուստը հիմնվում է 12 ամսվա ընթացքում ակնկալվող վարկային վնասի վրա (12ամԱՎԿ): 12ամԱՎԿ-ը ԱԿԱՎԿ-ի այն մասն է, որը ներկայացնում է ֆինանսական գործիքի գծով պարտավորությունների չկատարման դեպքերի արդյունք հանդիսացող ԱՎԿ-ները, որոնք հնարավոր են հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում: Ինչպես ԱԿԱՎԿ-ն, այնպես էլ 12ամԱՎԿ-ն հաշվարկվում են անհատական կամ խմբային հիմունքով՝ ելնելով ֆինանսական գործիքների համապատասխան պորտֆելի բնույթից:

Խումբը սահմանել է քաղաքականություն՝ գնահատելու յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի վարկային ռիսկի զգալի աճի հայտանիշները՝ սկզբնական ճանաչման պահից ի վեր, հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացորդային ժամկետի ընթացքում տեղի ունեցող դեֆոլտի ռիսկի փոփոխությունը: Վերոնշյալ գործընթացի հիման վրա, Խումբը խմբավորում է իր վարկերը՝ ըստ փուլերի, ինչպես նկարագրված է ստորև.

Փուլ 1:	Վարկերի սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը պահուստ է ճանաչում 12 ամսվա ԱՎԿ-ի հիման վրա: 1-ին փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից:
Փուլ 2:	Երբ գործիքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, Խումբը պահուստը ճանաչում է վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների (ԱԿԱՎԿ) համար: 2-րդ փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից:
Փուլ 3:	Վարկերը համարվում են արժեզրկված:
POCI:	Ձեռք բերված կամ ստեղծված՝ արժեզրկված (POCI) ակտիվները ֆինանսական ակտիվներ են, որոնք արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ: Տվյալ ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է վարկային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա: ԱՎԿ-ն միայն ճանաչվում կամ ապաճանաչվում է այնքանով, որքանով որ հետագայում փոխվում է ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների գնահատականը:

Դեֆոլտի սահմանումը. Խումբը ֆինանսական գործիքը համարում է դեֆոլտի ենթարկված և, հետևաբար, Փուլ 3 (վարկային տեսանկյունից արժեզրկված) ԱՊԿ-ի հաշվարկների համար բոլոր այն դեպքերում, երբ.

- վարկառուի պայմանագրային վճարումների գծով ավելի քան 90 օր կետանցը.
- տվյալ վարկառուի բոլոր պարտավորությունները, եթե դրանցից առնվազն մեկը Բանկում և/կամ այլ ֆինանսական կազմակերպություններում 90 օրից ավելի ժամկետանց է (ներառյալ ֆիզիկական անձի և անհատ ձեռնարկատիրոջ պատկանելությունը).
- տվյալ վարկառուի բոլոր պարտավորությունները, եթե փոխկապակցված անձանց պարտավորություններից առնվազն մեկը Բանկում 90 օրից ավելի ժամկետանց է.
- վարկառուի անբարենպաստ ֆինանսական վիճակի պատճառով վերաֆինանսավորված կամ վերանայված ակտիվներ, որոնք Բանկում ավելի քան 30 օր ժամկետանց են:

Խումբը բանկերում տեղաբաշխված գումարները համարում է դեֆոլտի ենթարկված և անմիջապես ձեռնարկում է քայլեր, եթե գործընկերը հաշվետու ամսաթվի վերջի դրությամբ չի վճարել հաշվեգրված տոկոսների (արժեկտրոնի) և/կամ վարկի մայր գումարը ավելի քան 15 աշխատանքային օր:

Ֆինանսական գործիքը նաև համարվում է արժեզրկված՝ հիմք ընդունելով սահմանված այլ քանակական և որակական գործոններ, ինչպիսիք են.

- փոխկապակցված անձանց տրամադրված վարկերի որակը,
- վերանայման կարգավիճակը,
- ֆինանսական մոնիտորինգի արդյունքները, որոնք հաստատվում են ղեկավարության կողմից:
- վարկի ապահովման նվազեցում՝ գրավատուի կողմից գրավի լրիվ կամ մասնակի կորստի, ֆիզիկական վնասի կամ ապօրինի վաճառքի կամ շուկայական արժեքի նվազման պատճառով վարկի ապահովության գործակցի նվազման հետևանքով.
- վարկերի կենտրոնացումը այլ անձանց, ներառյալ կենտրոնացումը ընտանիքի անդամների շրջանում վարկառուի կողմից վարկերի մարումից հրաժարվելը և 30-ից ավելի ժամկետանց օրերի առկայությունը. Այս չափանիշը վերաբերվում է բոլոր վարկերին, որոնց նկատմամբ կիրառվում է մոնիտորինգի եզրակացությունը.
- ֆորս-մաժորային հանգամանքները՝ վարկառուի կամ միակ սեփականատիրոջ մահը, հաշմանդամությունը, ծանր հիվանդությունները: Այս չափանիշը կիրառվում է հաճախորդի բոլոր վարկերի նկատմամբ, և
- բնական աղետներ կամ համաճարակներ. Այս չափանիշը վերագրվում է բոլոր այն վարկերին, որոնց նկատմամբ կիրառվում է մոնիտորինգի եզրակացությունը:

Հաճախորդի անվճարունակության որակական գնահատման շրջանակներում Խումբը նաև դիտարկում է մի շարք դեպքեր, որոնք կարող են վկայել վճարելու անհավանականության մասին՝ հիմնվելով ղեկավարության դատողության վրա: Երբ նման իրադարձություններ են տեղի ունենում, Խումբը դիտարկում է, թե արդյոք այդ իրադարձությունը պետք է հանգեցնի նրան, որ հաճախորդը պետք է դիտարկվի որպես չկատարված և հետևաբար գնահատվի որպես Փուլ 3 ԱՎԿ-ի հաշվարկների համար, թե արդյոք 2-րդ փուլը տեղին է:

Խմբի քաղաքականությունն է ֆինանսական գործիքը դիտարկել որպես «վերականգնված» և, հետևաբար, վերադասակարգմամբ դուրս բերել 3-րդ փուլից, երբ դեֆոլտի չափանիշներից ոչ մեկը գոյություն չունի առնվազն վեց ամիս անընդմեջ: Ակտիվի վերականգնումից հետո այն 2-րդ կամ 1-ին փուլ դասակարգելու որոշումը կախված է վարկառուի կողմից պարտքի սպասարկման օրինաչափությունից և գնահատման ամսաթվի դրությամբ այլ ոչ առաջնային ՎՈՒՆԱ (SICR) չափանիշների առկայությունից:

Դեֆոլտի հավանականության գնահատման գործընթացը

Գանձապետական և միջբանկային հարաբերություններ. Խմբի գանձապետական և միջբանկային հարաբերությունները և գործընկերները իրենցից ներկայացնում են ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպություններ, բանկեր, բրոքերներ-դիլերներ, արտարժույթի առքուվաճառք իրականացնող ընկերություններ և քլիրինգային ընկերություններ: Այս հարաբերությունների առումով Խմբի ֆինանսական ռիսկերի կառավարման բաժինը գնահատում է հրապարակայնորեն հասանելի տեղեկատվությունը, մասնավորապես ֆինանսական տեղեկատվությունը և այլ արտաքին տվյալներ, օր՝ արտաքին վարկանիշները:

Հաճախորդներին տրված վարկեր

Խմբավորում. Հաճախորդներին տրված 1-ին և 2-րդ փուլերի վարկերի, ինչպես նաև 3-րդ փուլի վարկերի համար, որոնք առանձին-առանձին ենթակա չեն արժեզրկման, Խումբը հաշվարկում է ԱՎԿ-ը պորտֆելի մակարդակով: Բանկի կողմից առանձնացված են հետևյալ պորտֆելները, որոնք, PD PIT մատրիցները գնահատելու նպատակով հետագայում բաժանվում են ավելի փոքր թիրախային խմբերի:

- Կորպորատիվ վարկեր,
- Սպառողական վարկեր,
- Գյուղատնտեսական վարկեր,
- Հիփոթեքային վարկեր:

Հաճախորդներին տրված վարկերի գծով դեֆոլտի հավանականությունը հիմնվում է անցյալ ժամանակաշրջանների տեղեկությունների վրա և հաշվարկվում է հավանականության փոփոխության մատրիցաներով՝ հիմք ընդունելով վարկային պորտֆելների ժամկետայնության վերաբերյալ առկա տեղեկությունները: Հավանականությունները հաշվարկվում են որպես 12 ամիս ժամանակաշրջանի ընթացքում դեֆոլտ կատեգորիաների միջև փոխանցվող վարկերի մասնաբաժինը ընդհանուր վարկերի նկատմամբ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ: Դեֆոլտի հավանականությունը հաշվարկելիս Խումբը դիտարկում է կանխատեսվող մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք ունեն էական ազդեցություն դեֆոլտի հավանականության վրա՝ հաշվարկված ըստ ժամանակային շարքերի ռեգրեսիայի վերլուծության: Դեֆոլտի հավանականության կանխատեսումները գնահատվում են՝ հիմնվելով պաշտոնապես հասանելի հեռանկարային մակրոտնտեսական պարամետրերի վրա: Ժամանակային շարքի ռեգրեսիոն վերլուծությունը գնահատվում է հետևյալ ոլորտներով՝ գյուղատնտեսություն, բիզնես, սպառողական և հիփոթեքային վարկեր, որոնց արդյունքն այնուհետև աստիճանական իջեցվում է մինչև վարկերի կանխորոշված ենթախմբեր՝ հասնելու դեֆոլտի հավանականության PIT անցումային մատրիցներին:

Հիմք ընդունելով ընտրված մակրոտնտեսական պարամետրերի պատմական կանխատեսումների գնահատված շեղումը փաստացի միտումներից, հեռանկարային մակրոտնտեսական զարգացման երեք սցենարներ ուղղված են երեք PD PIT անցումային մատրիցների վերջնական արդյունքին, որոնք կշռված են 15%, 70% և 15% հավանականություններով՝. լավատեսական, բազային և հոռետեսական սցենարներին համապատասխան:

Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը. Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը (EAD) իրենից ներկայացնում է արժեզրկման գնահատման ենթակա ֆինանսական գործիքների համախառն հաշվեկշռային արժեքը, որը հաշվի է առնում ինչպես հաճախորդի ունակությունը մեծացնելու իր վարկի գումարը առաջիկա դեֆոլտի դեպքում, այնպես էլ հնարավոր վաղաժամկետ մարումները: Փուլ 1-ում գտնվող ակտիվների համար Խումբը գնահատում է 12 ամսվա ընթացքում հնարավոր դեֆոլտի հավանականությունը 12ամԱՎԿ հաշվարկելու նպատակով: Փուլ 2-ին, Փուլ 3-ին և POCI դասին պատկանող ֆինանսական ակտիվների համար դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը դիտարկվում է գործիքների ողջ կյանքի տևողության ընթացքում տեղի ունեցող դեպքերի համար:

Դեֆոլտի ժամանակ կորստի չափը. Խումբը դեֆոլտի ժամանակ կորստի չափը հաշվարկելու նպատակով օգտագործում է դեֆոլտի ամսաթվից հետո վերականգնումների վերաբերյալ պատմական տվյալները բոլոր դեֆոլտի ենթարկված վարկերի կտրվածքով: Դեֆոլտի ժամանակ կորստի չափը հաշվարկելու համար PD PIT-ի գնահատման համար օգտագործվող նախնական խմբավորումը հետագայում ենթարկվում է ենթախմբավորման ՝ ըստ գրավի տեսակի: Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը հավաքագրվում է դեֆոլտի ամսաթվից հետո ՝ ըստ LGD խմբերի: Ժամանակային կտրվածքով վերջին ժամկետանց վարկերի համար հնարավոր վերադարձի հավանականությունը գնահատվում է նախկինում ժամկետանց վարկերի պոպուլյացիայի զարգացման գործակցով: Տվյալ շրջանակներում հաշվի են առնվում հավաքագրման քաղաքականության ցանկացած փոփոխություն: Հավաքագրվում է դեֆոլտի ամսաթվից հետո դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը և զեղչվում դեֆոլտի ամսաթվի դրությամբ՝ միջին արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի օգտագործմամբ, յուրաքանչյուր LGD խմբի գծով: Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է բոլոր տեսակի դրամական ներհոսքերը ժամկետանց վարկերի գծով (վարկերի մարումից ստացված միջոցներ, երաշխավորից ստացված միջոցներ, գրավի առարկայի վաճառքից ստացված միջոցներ և այլն):

Վարկային ռիսկի զգալի աճ. Խումբը սահմանել է քաղաքականություն՝ գնահատելու յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի վարկային ռիսկի զգալի աճի հայտանիշները՝ սկզբնական ճանաչման պահից ի վեր հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացորդային ժամկետի ընթացքում տեղի ունեցող դեֆոլտի ռիսկի փոփոխությունը: .: Խմբի կողմից օգտագործվող օբյեկտիվ չափանիշը վարկերի ժամկետանց օրերի մասին տեղեկատվությունն է: Խումբը եզրակացնում է, որ կա ակտիվների վարկային ռիսկի զգալի աճ, երբ փոխառուի այդ ակտիվների հետ կապված վճարումները ժամկետանց են ավելի քան 30 օրով:

Բանկի ղեկավարությունը նաև հաշվի է առնում հետևյալ գործոնները՝ վարկային ռիսկի աճը որոշելու համար.

- Հայաստանի այլ ֆինանսական հաստատություններում վարկառուի ժամկետանց օրերը.
- Նախասահմանված փոխկապակցված կողմերի ժամկետանց օրերը.
- Վարկառուի ֆինանսական պայմաններում զգալի դժվարությունները.
- Վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով առաջացած վարկի պայմանների վերանայումը.
- Վարկառուի գործունեության ֆինանսական մոնիտորինգի արդյունքը.

Կանխատեսումային տեղեկատվություն և բազմակի տնտեսական սցենարներ

ԱՎԿ մոդելներում Խումբը հիմնվում է կանխատեսումային տեղեկատվության լայն շրջանակի վրա, մասնավորապես այնպիսի տնտեսական ելակետային տվյալների, ինչպիսիք են՝

2023թ.

- ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք, միջին ամսական,
- Արտահանում, %,
- Գյուղատնտեսական արտադրության տարեկան աճ.
- ՀՀ պետական բյուջե, դեֆիցիտ/ավելցուկ;
- Ծառայությունների տարեկան աճ.
- Արդյունաբերական արտադրության տարեկան աճ.
- ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք, տարեվերջ
- ՀՆԱ աճ,%;

2022թ.

- Արդյունաբերական արտադրության տարեկան աճ.
- Սպառողական գների գնաճ.
- Ներմուծման տարեկան աճ.
- Ծառայությունների տարեկան աճ.
- ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք, տարեվերջ
- Գյուղատնտեսական արտադրության տարեկան աճ.
- ՀՀ պետական բյուջե, դեֆիցիտ/ավելցուկ;
- Մ2 դրամական պաշարների աճ.

Խումբը կանխատեսումային տեղեկատվությունը ստանում է երրորդ կողմի աղբյուրներից (Տնտեսական հետախուզության գրասենյակ, ՀՀ ԿԲ, ինչպես նաև ՀՀ ՖՆ): 15%, 70% և 15% հավանականությունները վերագրվում են համապատասխան սցենարներից յուրաքանչյուրին՝ լավատեսական, բազային և հոռետեսական սցենարներին:

Աղյուսակները ցույց են տալիս 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՎԿ հաշվարկների համար օգտագործվող տնտեսական սցենարներից յուրաքանչյուրում օգտագործված հիմնական կանխատեսումային տնտեսական փոփոխականների/ենթադրությունների արժեքները: Մակրո-փոփոխականները ընտրվում են հետահայաց ընտրության մեթոդով, և յուրաքանչյուր պարամետր ընտրվում է՝ ելնելով դրա վիճակագրական նշանակությունից: ԱՎԿ-ի հակադարձումը պայմանավորված է բարենպաստ մակրոտնտեսական պայմաններով և վերականգնումներով:

Հիմնական ցուցանիշներ	ԱՎԿ սցենար	Վերագրված հավանակա-նություն, %	2024թ.	2025թ.	2026
ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք, միջին ամսական;	Լավատեսական	15%	368.46	353.87	383.03
	Ելակետային	70%	389.24	394.94	448.73
	Հոռետեսական	15%	410.02	438.27	521.53
Արտահանում, %	Լավատեսական	15%	-5.76%	6.77%	8.44%
	Ելակետային	70%	-9.50%	2.60%	4.00%
	Հոռետեսական	15%	-13.24%	-1.57%	-0.44%
Գյուղատնտեսական արտադրության տարեկան աճ, %	Լավատեսական	15%	6.24%	7.07%	7.34%
	Ելակետային	70%	2.50%	2.90%	2.90%
	Հոռետեսական	15%	-1.24%	-1.27%	-1.54%
ՀՀ պետական բյուջե, դեֆիցիտ/ավելցուկ.	Լավատեսական	15%	(115,920)	(131,975)	(146,097)
	Ելակետային	70%	(302,500)	(319,700)	(334,500)
	Հոռետեսական	15%	(489,080)	(507,425)	(522,903)
Ծառայությունների տարեկան աճ, %	Լավատեսական	15%	9.44%	9.67%	9.54%
	Ելակետային	70%	5.70%	5.50%	5.10%
	Հոռետեսական	15%	1.96%	1.33%	0.66%
Արդյունաբերական արտադրության տարեկան աճ, %	Լավատեսական	15%	9.72%	9.10%	8.18%
	Ելակետային	70%	6.20%	6.10%	5.50%
	Հոռետեսական	15%	2.68%	3.10%	2.82%
ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք, տարեվերջ	Լավատեսական	15%	368.52	353.92	383.09
	Ելակետային	70%	389.30	395.00	448.80
	Հոռետեսական	15%	410.08	438.34	521.61
ՀՆԱ-ի աճ, %	Լավատեսական	15%	9.84%	9.87%	9.84%
	Ելակետային	70%	6.10%	5.70%	5.40%
	Հոռետեսական	15%	2.36%	1.53%	0.96%

Աղյուսակները ցույց են տալիս 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՎԿ հաշվարկների համար օգտագործվող տնտեսական սցենարներից յուրաքանչյուրում օգտագործված հիմնական կանխատեսումային տնտեսական փոփոխականների/ենթադրությունների արժեքները:

Հիմնական ցուցանիշներ	ԱՎԿ սցենար	Վերագրված հավանակա-նություն, %	2023թ.	2024թ.	2025թ.
Արդյունաբերական արտադրության տարեկան աճ, %	Լավատեսական	15%	9.92%	9.01%	7.81%
	Ելակետային	70%	5.70%	5.90%	5.20%
	Հոռետեսական	15%	1.48%	2.79%	2.59%
Սպառողական գների գնաճ, %(cum)	Լավատեսական	15%	1.60%	1.29%	1.02%
	Ելակետային	70%	3.90%	4.00%	4.00%
	Հոռետեսական	15%	6.20%	6.71%	6.98%
Ներմուծման տարեկան աճ, %	Լավատեսական	15%	5.56%	7.51%	8.40%
	Ելակետային	70%	1.80%	3.30%	3.90%
	Հոռետեսական	15%	-1.96%	-0.91%	-0.60%
Ծառայությունների տարեկան աճ, %	Լավատեսական	15%	7.76%	8.11%	8.50%
	Ելակետային	70%	4.00%	3.90%	4.00%
	Հոռետեսական	15%	0.24%	-0.31%	-0.50%
ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք, տարեվերջ	Լավատեսական	15%	427.12	407.58	383.29
	Ելակետային	70%	446.30	447.60	443.70
	Հոռետեսական	15%	465.48	489.49	510.13
Գյուղատնտեսական արտադրության տարեկան աճ, %	Լավատեսական	15%	8.36%	8.61%	8.70%
	Ելակետային	70%	1.40%	1.80%	2.70%
	Հոռետեսական	15%	0.84%	0.19%	-0.30%
ՀՀ պետական բյուջե, դեֆիցիտ (-) / ավելցուկ (+), մլն. ՀՀ դրամ	Լավատեսական	15%	(116,679)	(78,440)	(17,090)
	Ելակետային	70%	(292,200)	(273,300)	(225,567)
	Հոռետեսական	15%	(467,721)	(468,160)	(434,043)
M2 դրամական պաշարների աճ, %	Լավատեսական	15%	18.73%	13.28%	13.43%
	Ելակետային	70%	14.90%	9.20%	9.20%
	Հոռետեսական	15%	11.07%	5.12%	4.97%

Մակրոտնտեսական ելակետային ենթադրություններին վերագրված կշռի փոփոխությունը 10%-ով դեպի անմիջական հոռետեսական ուղղությամբ՝ կհանգեցնի 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՎԿ-ի աճի 15,471 հազ. ՀՀ դրամով (2022 թ.՝ 30,973 դրամով): Լավատեսական ենթադրությունների ուղղությամբ համապատասխան փոփոխությունը կհանգեցնի ԱՎԿ-ի նվազմանը 13,793 հազ. ՀՀ դրամով 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (2022 թ.՝ 25,785 հազ. ՀՀ դրամով):

PD-ի գնահատումների 10% աճը կհանգեցնի 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող ընդհանուր վարկային կորուստների 168,005 հազ. ՀՀ դրամի չափով (2022 թ.՝ 174,216 հազ. ՀՀ դրամ) ընդհանուր գումարի աճի: PD-ի գնահատումների 10% նվազումը կհանգեցնի 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող ընդհանուր վարկային կորստի պահուստների 168,005 հազ. ՀՀ դրամի նվազմանը (2022 թ.՝ 471,191 հազ.ՀՀ դրամ): LGD-ի գնահատումների 10% աճը կհանգեցնի 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 497,460 հազ. ՀՀ դրամի ընդհանուր ակնկալվող վարկային կորուստների չափի ավելացմանը (2022 թ.՝ 376,340 հազ. ՀՀ դրամ): LGD-ի գնահատումների 10% նվազումը կհանգեցնի 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 499,140 հազ.ՀՀ դրամ ընդհանուր ակնկալվող վարկային կորուստների նվազմանը (2022 թ.՝ 376,220 հազ. ՀՀ դրամ):

Վարկի որակը ֆինանսական ակտիվների դասի համար Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է տեղեկատվություն իրավաբանական և ֆիզիկական անձանց զուտ վարկերի և ֆինանսական վարձակալությունից դեբիտորական պարտքերի վերաբերյալ 2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

2023թ. *Հազ. ՀՀ դրամ*	**Ծան.**		**Բարձր կարգ**	**Ստանդարտ Կարգ**	**Ենթաստ անդարտ Կարգ**	**Արժե-զրկված**	**Ընդամենը**
Հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով	**12**						
Կորպորատիվ վարկեր		Փուլ 1	171,666	181,919,226	-	-	**182,090,892**
		Փուլ 2	-	-	3,750,067	-	**3,750,067**
		Փուլ 3	-	-	-	4,738,955	**4,738,955**
		POCI	-	-	-	-	**-**
Գյուղատնտեսական վարկեր		Փուլ 1	701,738	83,536,755	-	-	**84,238,493**
		Փուլ 2	-	-	949,173	-	**949,173**
		Փուլ 3	-	-	-	1,628,665	**1,628,665**
Սպառողական վարկեր		Փուլ 1	3,212,308	104,992,424	-	-	**108,204,732**
		Փուլ 2	16,197	-	1,473,999	-	**1,490,196**
		Փուլ 3	19,006	-	-	2,002,259	**2,021,265**
Վարկային քարտեր		Փուլ 1	863,206	10,885,987	-	-	**11,749,193**
		Փուլ 2	2,544	-	163,080	-	**165,624**
		Փուլ 3	6,188	-	-	348,322	**354,510**
Հիփոթեքային վարկեր		Փուլ 1	-	52,441,478	-	-	**52,441,478**
		Փուլ 2	-	-	577,610	-	**577,610**
		Փուլ 3	-	-	-	768,803	**768,803**
		POCI	-	-	-	29,681	**29,681**
Ոսկու գրավադրմամբ վարկեր		Փուլ 3	-	-	-	-	**-**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	12	Փուլ 1	-	82,769,521	-	-	**82,769,521**
		Փուլ 2	-	-	206,263	-	**206,263**
		Փուլ 3	-	-	-	430,642	**430,642**
Ընդամենը			**4,992,853**	**516,545,391**	**7,120,192**	**9,947,327**	**538,605,763**

2022թ. *Հազ. ՀՀ դրամ*	**Ծան.**		**Բարձր կարգ**	**Ստանդարտ Կարգ**	**Ենթաստ անդարտ Կարգ**	**Արժե-զրկված**	**Ընդամենը**
Հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով	**12**						
Կորպորատիվ վարկեր		Փուլ 1	-	139,023,947	-	-	**139,023,947**
		Փուլ 2	-	-	4,426,855	-	**4,426,855**
		Փուլ 3	-	-	-	3,395,604	**3,395,604**
		POCI	-	-	-	21,311	**21,311**
Գյուղատնտեսական վարկեր		Փուլ 1	-	104,516,713	-	-	**104,516,713**
		Փուլ 2	-	-	1,368,169	-	**1,368,169**
		Փուլ 3	-	-	-	1,880,967	**1,880,967**
Սպառողական վարկեր		Փուլ 1	2,114,998	93,362,575	-	-	**95,477,573**
		Փուլ 2	-	-	1,995,818	-	**1,995,818**
		Փուլ 3	-	-	-	2,307,086	**2,307,086**
Վարկային քարտեր		Փուլ 1	712,319	10,458,618	-	-	**11,170,937**
		Փուլ 2	-	-	218,235	-	**218,235**
		Փուլ 3	-	-	-	429,087	**429,087**
Հիփոթեքային վարկեր		Փուլ 1	-	40,897,873	-	-	**40,897,873**
		Փուլ 2	-	-	654,365	-	**654,365**
		Փուլ 3	-	-	-	622,267	**622,267**
		POCI	-	-	-	32,303	**32,303**
Ոսկու գրավադրմամբ վարկեր		Փուլ 3	-	-	-	135	**135**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	12	Փուլ 1	-	52,353,433	-	-	**52,353,433**
		Փուլ 2	-	-	762,854	-	**762,854**
		Փուլ 3	-	-	-	306,934	**306,934**
Ընդամենը			**2,827,317**	**440,613,159**	**9,426,296**	**8,995,694**	**461,862,466**

Ստորև բերված աղյուսակները ներկայացնում են հաճախորդներին տրված վարկերի և ֆինանսական վարձակալության դեբիտորական պարտքերի միջին PD-ները՝ ըստ ելակետային սցենարի՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

2023թ.	**Կարգ**	**Միջին PD**
Կորպորատիվ վարկեր	Ստանդարտ	1.0%
	Ենթաստանդարտ	6.1%
	Արժեզրկված	100.0%
Գյուղատնտեսական վարկեր	Ստանդարտ	0.8%
	Ենթաստանդարտ	4.6%
	Արժեզրկված	100.0%
Սպառողական վարկեր	Ստանդարտ	1.4%
	Ենթաստանդարտ	17.7%
	Արժեզրկված	100.0%
Վարկային քարտեր	Ստանդարտ	1.1%
	Ենթաստանդարտ	15.5%
	Արժեզրկված	100.0%
Հիփոթեքային վարկեր	Ստանդարտ	0.8%
	Ենթաստանդարտ	9.1%
	Արժեզրկված	100.0%
Ոսկու գրավով վարկեր	Ստանդարտ	-
	Ենթաստանդարտ	-
	Արժեզրկված	100.0%
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	Ստանդարտ	1.1%
	Ենթաստանդարտ	9.1%
	Արժեզրկված	100.0%

2022թ.	Կարգ	Միջին PD
Կորպորատիվ վարկեր	Ստանդարտ	1.2%
	Ենթաստանդարտ	5.2%
	Արժեզրկված	100.0%
Գյուղատնտեսական վարկեր	Ստանդարտ	1.2%
	Ենթաստանդարտ	5.5%
	Արժեզրկված	100.0%
Սպառողական վարկեր	Ստանդարտ	1.8%
	Ենթաստանդարտ	12.9%
	Արժեզրկված	100.0%
Վարկային քարտեր	Ստանդարտ	1.4%
	Ենթաստանդարտ	10.1%
	Արժեզրկված	100.0%
Հիփոթեքային վարկեր	Ստանդարտ	0.3%
	Ենթաստանդարտ	8.4%
	Արժեզրկված	100.0%
Ոսկու գրավով վարկեր	Ստանդարտ	-
	Ենթաստանդարտ	-
	Արժեզրկված	100.0%
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	Ստանդարտ	1.3%
	Ենթաստանդարտ	6.7%
	Արժեզրկված	100.0%

* Բարձր կարգի վարկերը, որոնք ապահովված են դրամական միջոցների գրավով, չեն պարունակում դեֆոլտի հավանականություն (PD), քանի որ դրանց համար անհրաժեշտ չէ ակնկալվող վարկային կորստի (ԱՎԿ) հաշվարկ: Բարձր կարգի վարկերի վրա ազդեցությունը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 4,992,853 հազ. ՀՀ դրամ (պայմանագրի գումարը՝ 9,750,506 հազ. ՀՀ դրամ, այս վարկերի դիմաց դրամական միջոցների գրավը կազմում է հազ. 11,079,765 ՀՀ դրամ):

Վարկի որակը ֆինանսական ակտիվների դասի համար Ստորև ներկայացված ֆինանսական ակտիվների վարկային որակը կառավարվում է Խմբի կողմից՝ հիմնվելով արտաքին վարկանիշների վրա: Չվարկանշված ազդեցությունները դասակարգվում են Ստանդարտ դասում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք արժեզրկված չեն:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

Հազ. ՀՀ դրամ	Ծան.		Բարձր կարգ	Ստանդարտ կարգ	Ենթա-ստանդարտ կարգ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (առանց կանխիկ միջոցների)	8	Փուլ 1	9,530,941	45,280,966	689,588	**55,501,495**
Պահանջներ բանկերի նկատմամբ	10	Փուլ 1	4,187,341	95,279,638	-	**99,466,979**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	11	Փուլ 1	-	18,534,900	-	**18,534,900**
Ընդամենը			**13,718,282**	**159,095,504**	**689,588**	**173,503,374**

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

Հազ. ՀՀ դրամ	Ծան.		Բարձր կարգ	Ստանդարտ կարգ	Ենթա-ստանդարտ կարգ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (առանց կանխիկ միջոցների)	8	Փուլ 1	897,726	65,820,809	-	**66,718,535**
Պահանջներ բանկերի նկատմամբ	10	Փուլ 1	-	50,917,404	-	**50,917,404**
Ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթեր	11	Փուլ 2	-	-	169,536	**169,536**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	11	Փուլ 1	-	21,285,791	-	**21,285,791**
Ընդամենը			**897,726**	**138,024,004**	**169,536**	**139,091,266**

Ստորև ներկայացված է Խմբի դասակարգման համակարգի և գործընկերների արտաքին վարկանիշների համեմատությունը 2023թ. և 2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ.

2023թ.

Արտաքին միջազգային վարկանիշային գործակալության (Moody's) վարկանիշ	Ներքին վարկանիշի նկարագրությունը	PD
Aaa-ից A3	Բարձր կարգ	0-0.05%
Baa1-ից B3	Ստանդարտ	0.17% -3.22%
Caa1-ից Ca	Ենթաստանդարտ կարգ	9.09%
C	Արժեզրկված	100%

2022թ.

Արտաքին միջազգային վարկանիշային գործակալության (Moody's) վարկանիշ	Ներքին վարկանիշի նկարագրությունը	PD
Aaa-ից A3	Բարձր կարգ	0-0.05%
Baa1-ից B3	Ստանդարտ	0.2-3.2%
Caa1-ից Ca	Ենթաստանդարտ կարգ	9.6%
C	Արժեզրկված	100%

Իրացվելիության ռիսկ և ֆինանսավորման կառավարում: Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը չի կարողանա սահմանված ժամկետներում կատարել իր վճարային պարտավորությունները՝ բնականոն և անկանխատեսելի պայմաններում: Հիմնվելով իրացվելիության ռիսկի սեփական մոդելի վրա՝ բանկը կիրառում է մի շարք գործիքներ՝ իրացվելիության ռիսկերը վերահսկելու և կառավարելու համար: Բանկի ներսում սթրեսային սցենարը, որը ընկած է մոդելի հիմքում և կարևոր է կառավարման նպատակների համար, հաշվի է առնում ինչպես բանկին բնորոշ սթրեսային դեպքերը, այնպես էլ ավելի լայնածավալ շուկայական ճգնաժամերը:

Այս ռիսկը սահմանափակելու համար ղեկավարությունը կազմակերպել է դիվերսիֆիկացված ֆինանսավորման աղբյուրներ՝ ի լրումն իր հիմնական ավանդների բազայի: Այդ գործընթացը ներառում է ակնկալվող դրամական միջոցների գնահատում և առաջնակարգ ապահովման միջոցի առկայություն, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորման ստացման համար:

Խումբը ունի բարձր իրացվելի և տարատեսակ ակտիվների պորտֆել, ինչը դրամական միջոցների հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում հեշտությամբ կիրացվի:

Խումբը ունի նաև վարկային գծեր, ինչից այն կարող է օգտվել իրացվելիության կարիքների դեպքում: Բացի այդ, Խումբը ՀՀ ԿԲ-ում պահում է դրամային ավանդ (պարտադիր պահուստ), որի գումարը կախված է հաճախորդներից ներգրավված միջոցների ծավալից:

Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է Խմբի կողմից՝ հիմնվելով Կենտրոնական բանկի կողմից սահմանված իրացվելիության որոշակի գործակիցների վրա: Այս նպատակով բարձր իրացվելի ակտիվները ներառում են դրամական միջոցներ, նոստրո հաշիվներ, Հայաստանի կառավարության կողմից թողարկված պարտքային արժեթղթեր և այլ կորպորատիվ պարտքային արժեթղթեր, որոնց համար առկա է ակտիվ և իրացվելի շուկա, որոնք գրավադրված չեն կամ որոնց օգտագործումը որևէ կերպ սահմանափակված չէ: Ցպահանջ վճարման ենթակա պարտավորությունները ներառում են հաճախորդների ընթացիկ հաշիվները և ցպահանջ ավանդները, ինչպես նաև ցանկացած այլ պարտավորություն, որը ենթակա է ցպահանջ վճարման:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ այս գործակիցները հետևյալն էին.

	Սահմանաչափ	2023, %	2022, %
Ն2.1-Ընդհանուր իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/ընդհանուր ակտիվներ)	Նվազագույնը 15%	23.97%	20.51%
Ն2.2-Ընթացիկ իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ)	Նվազագույնը 60%	102.95%	72.5%

Ֆինանսական պարտավորությունների վերլուծություն ըստ պայմանագրային մարման ժամկետների. Ստորև ներկայացվում է դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների՝ պայմանագրային չզեղչված պարտավորությունների հիման վրա. Պարտավորությունները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, դասակարգվում են այնպես, ինչպես եթե մարման պահանջը ներկայացված լիներ ամենավաղ հնարավոր ամսաթվով: Սակայն Խումբը գտնում է, որ շատ հաճախորդներ չեն պահանջի վճարումը այն ամենավաղ հնարավոր ամսաթվի դրությամբ, որով Խումբը պարտավորված կլինի կատարել վճարումը, և աղյուսակը չի արտացոլում ակնկալվող դրամական հոսքերը՝ հաշվարկված Խմբի կողմից՝ անցյալ ժամանակաշրջաններում ավանդները պահանջելու պատմական վիճակագրության հիման վրա:

31 դեկտեմբերի 2023թ. *Հազ. ՀՀ դրամ*	**Մինչև 3 ամիս**	**3 - 12 ամիս**	**1 - 5 տարի**	**Ավելի քան 5 տարի**	**Ընդամենը**
Ֆինանսական պարտավորություններ					
Բանկերից ներգրավված միջոցներ	1,153,556	-	3,278	16,432	**1,173,266**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	259,169,479	173,990,944	81,680,292	14,019,859	**528,860,574**
Թողարկված պարտքային արժեթղթեր	150,974	119,102	20,817,043	-	**21,087,119**
Ստորադաս վարկեր	162,275	599,589	10,212,355	5,223,430	**16,197,649**
Այլ փոխառու միջոցներ, բացառությամբ վարձակալության պարտավորությունների	4,609,294	20,471,538	65,204,618	16,425,210	**106,710,660**
Այլ ֆինանսական պարտավորություններ	8,850,003	-	-	-	**8,850,003**
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	274,095,581	195,181,173	177,917,586	35,684,931	**682,879,271**
Վարկերի և վարկային գծերի պարտավորություններ	29,184,533	-	-	-	**29,184,533**
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	32,123,416	-	-	-	**32,123,416**

31 դեկտեմբերի 2022թ. *Հազ. ՀՀ դրամ*	**Մինչև 3 ամիս**	**3 - 12 ամիս**	**1 - 5 տարի**	**Ավելի քան 5 տարի**	**Ընդամենը**
Ֆինանսական պարտավորություններ					
Բանկերից ներգրավված միջոցներ	9,663,807	199,387	78,254	-	**9,941,448**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	218,766,167	135,280,953	74,824,334	6,709,127	**435,580,581**
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	912,878	-	-	**912,878**
Ստորադաս վարկեր	25,998	3,793,384	9,500,314	-	**13,319,695**
Այլ փոխառու միջոցներ, բացառությամբ վարձակալության պարտավորությունների	3,772,330	22,689,277	69,664,264	3,503,205	**99,629,075**
Այլ ֆինանսական պարտավորություններ	13,341,098	-	-	-	**13,341,098**
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	245,569,399	162,875,878	154,067,166	10,212,332	**572,724,775**
Վարկերի և վարկային գծերի պարտավորություններ	30,658,218	-	-	-	**30,658,218**
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	23,887,159	-	-	-	**23,887,159**

2023թ. դեկտեմբերի 31-ի վարձակալության պարտավորությունների վերլուծությունը հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	**Մինչև 1 տարի**	**1 - 2 տարի**	**2- 3 տարի**	**3 -4 տարի**	**4 - 5 տարի**	**Ավելի քան 5 տարի**	**Ընդամենը**
Վարձակալության գծով պարտավորություններ	684,290	622,763	415,345	351,449	263,791	558,733	**2,896,371**

2022թ. դեկտեմբերի 31-ի վարձակալության պարտավորությունների վերլուծությունը հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	**Մինչև 1 տարի**	**1 - 2 տարի**	**2- 3 տարի**	**3 -4 տարի**	**4 - 5 տարի**	**Ավելի քան 5 տարի**	**Ընդամենը**
Վարձակալության գծով պարտավորություններ	141,021	163,982	76,090	668,774	2,252	521,520	**1,573,639**

Ժամկետայնության վերլուծությունը չի արտացոլում ընթացիկ հաշիվների և կայունության նախորդ ժամանակաշրջանների տվյալները: Նրանց լուծարումը նախկին ժամանակաշրջաններում տեղի է ունեցել ավելի երկար ժամանակահատվածում, քան նշված է վերը նշված աղյուսակներում: Այս մնացորդները ներառված են վերը նշված աղյուսակներում երեք ամսից պակաս ժամկետում վճարման ենթակա գումարներում:

Վերոնշյալ աղյուսակում ներառված են ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները: Հայաստանի օրենսդրությանը համապատասխան, Բանկը պարտավոր է ավանդատուի պահանջով մարել ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները: Այս ավանդները դասակարգված են վերը նշված աղյուսակում՝ ըստ իրենց սահմանված մարման ժամկետների:

Շուկայական ռիսկ. Շուկայական ռիսկը պոտենցիալ ֆինանսական վնասի ռիսկն է, որը պայմանավորված է շուկայական գների (տոկոսադրույքներ, ապրանքներ, վարկային սպրեդներ, փոխարժեքներ և սեփական կապիտալի գներ) կամ այլ պարամետրերի փոփոխություններով, որոնք ազդում են գների վրա, ինչպես, օրինակ, տատանումները և հարաբերակցությունները:

Տոկոսադրույքի ռիսկ. Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում: Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս ֆինանսական արդյունքների մասին Խմբի համախմբված հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքի հնարավոր հավանական փոփոխությունների նկատմամբ, բոլոր այլ փոփոխական մեծությունները հաստատուն լինելու դեպքում:

Շահույթի կամ վնասի մասին համախմբված հաշվետվության զգայունությունը իրենից ներկայացնում է տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունների ազդեցությունը մեկ տարվա զուտ տոկոսային եկամտի վրա, որը հաշվարկվել է դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա լողացող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների նկատմամբ: Կապիտալի զգայունությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսադրույքների թույլատրելի փոփոխությունների հանդեպ հաշվարկվում է՝ վերագնահատելով ֆիքսված տոկոսադրույքով իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները՝ հիմնվելով այն ենթադրության վրա, որ առկա են եկամտաբերության կորի զուգահեռ տեղաշարժեր:

Արժույթ	**2023թ.**		
	Ելակետերի աճ	**Զուտ տոկոսային եկամտի զգայունությունը**	**Սեփական կապիտալի զգայունությունը**
ՀՀ դրամ	1.50%	53,509	53,509
ԱՄՆ դոլար	1.25%	(213,754)	(213,754)
եվրո	1.25%	(97,248)	(97,248)

Արժույթ	**2023թ.**		
	Ելակետերի նվազում	**Զուտ տոկոսային եկամտի զգայունությունը**	**Սեփական կապիտալի զգայունությունը**
ՀՀ դրամ	1.50%	(53,509)	(53,509)
ԱՄՆ դոլար	1.25%	213,754	213,754
եվրո	1.25%	97,248	97,248

Արժութային ռիսկ. Արժութային ռիսկն արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է: Տնօրինությունը սահմանել է արտարժութային դիրքերի ավելի խիստ սահմանաչափեր, քան ԿԲ կողմից սահմանված նորմատիվներն են: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են այն արժույթները, որոնցով դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը ունի էական արժութային դիրքեր: Կատարված վերլուծությունը արտահայտում է դրամի նկատմամբ՝ արտարժույթի փոխարժեքի հնարավոր տատանումների ազդեցությունը ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության վրա, երբ այլ փոփոխական արժեքները հաստատուն են (կախված արտարժույթի փոխարժեքի փոփոխության նկատմամբ ոչ առևտրային դրամական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի զգայունությունից): Կապիտալի վրա ազդեցությունը չի տարբերվում ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության վրա ազդեցությունից: Բացասական գումարները արտացոլում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազումը, դրական գումարները՝ պոտենցիալ զուտ աճը: Տնօրինությունը սահմանել է արտարժույթի և տոկոսադրույքի ռիսկի թույլատրելի ռիսկի սահմանաչափ: Բանկի խորհուրդը նաև հաստատել է ռիսկի ախորժակի, ռիսկի հանդուրժողականության և ռիսկատարության սահմանաչափերը տարբեր IRR և FX սահմանաչափերի գծով:

	2023թ.		2022թ.	
Արժույթ	**Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն %**	**Ազդեցությունը մինչև հարկումը շահույթի վրա**	**Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն %**	**Ազդեցությունը մինչև հարկումը շահույթի վրա**
ԱՄՆ դոլար	20.00%	(2,130,690)	20.00%	(681,457)
ԱՄՆ դոլար	(20.00%)	2,130,690	(20.00%)	681,457
եվրո	20.00%	568,966	8.50%	151,054
եվրո	(20.00%)	(568,966)	(8.50%)	(151,054)

Նախքան LIBOR-ի գործածումից դուրս գալը Խումբը կնքել է պայմանագրերում փոփոխություններ LIBOR-ը փոխարինելով այլընտրանքային հենանիշային դրույքով, և դրա համապատասխան պայմանագրեր են ստորագվել բոլոր վարկատուների հետ: Լողացող տոկոսադրույքով վարկերը կապակցվել են 6-ամսյա SOFR տոկոսադրույքների հետ, որոնք հրապարակվում են CME-ի կողմից ԱՄՆ դոլարով վարկերի և EURIBOR-ի կողմից՝ եվրոյով վարկերի համար: Նույն հենանիշային դրույքաչափերը կիրառվում են Բանկի կողմից հաճախորդներին տրամադրվող լողացող տոկոսադրույքով ենթավարկերի նկատմամբ:

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս Խմբի վրա ազդեցությունը 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարում:

31 դեկտեմբերի 2023թ. *Հազ. ՀՀ դրամ*	**Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ՝ հաշվեկշռային արժեք**	**Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ՝ հաշվեկշռային արժեք**	**Ածանցյալ գործիքներ՝ անվանական արժեք**
EURLIBOR	1,166,833	8,946,688	946,688
SOFR ԱՄՆ դոլար (6 ամիս)	11,157,803	28,258,147	9,829,575
ԱՄՆ գանձապետական պարտատոմսեր	12,009,079	8,441,784	-

Գործառնական ռիսկ. Գործառնական ռիսկը համակարգի խափանման, ներքին գործընթացների անհամապատասխանության կամ ձախողման, աշխատակազմի կողմից թույլ տրված սխալների, խարդախությունների կամ արտաքին գործոնների հետևանքով հնարավոր կորուստի ռիսկն է: Երբ ներքին վերահսկողության համակարգը դադարում է գործել, գործառնական ռիսկերը կարող են վնաս հասցնել համբավին, ունենալ իրավական հետևանքներ կամ բերել ֆինանսական վնասներ: Խումբը չի ենթադրում, որ բոլոր գործառնական ռիսկերը վերացված են, սակայն ներքին վերահսկողության համակարգի օգնությամբ և հնարավոր ռիսկերի որոշման և համապատասխան ռեակցիայի միջոցով Խումբը կարող է կառավարել նման ռիսկերը: Խումբը գործառնական ռիսկերի կառավարման շրջանակներում ընդունել է եռաստիճան պաշտպանության մեխանիզմ:

Պաշտպանության առաջին աստիճանը ապահովում են հաճախորդների սպասարկման աշխատակազմը և գործառնական կառավարման խումբը, պաշտպանության երկրորդ աստիճանը ապահովվում է ռիսկերի կառավարման և համապատասխանության գործառույթների կողմից, ներքին աուդիտի գործառույթով ապահովվում է պաշտպանության երրորդ աստիճանը:

Գործառնական ռիսկերի կառավարման համակարգը ներառում է հետևյալ հիմնական ասպեկտները՝ ռիսկերի քարտեզագրում, միջադեպերի վերլուծություն և մշտական վերահսկողության գործառույթ: Ներքին վերահսկողության համակարգը ընդգրկում է պարտավորությունների արդյունավետ բաժանման, մուտքի թույլատվության, համադրման և հաստատման ընթացակարգեր, աշխատակազմի ուսուցում և գնահատում: Տնօրինությունը սահմանել է նաև գործառնական ռիսկի ռիսկի ախորժակի սահմանաչափ:

34 Իրական արժեքի չափում

Իրական արժեքի չափման գործընթաց. Խմբի ղեկավարությունը սահմանում է ինչպես իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, օրինակ՝ չգնանշվող առևտրային, իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող արժեթղթերի, ածանցյալ ֆինանսական գործիքների, ներդրումային գույքի և շենքերի համար, այնպես էլ իրական արժեքի ոչ պարբերաբար չափման քաղաքականությունը, օրինակ՝ վաճառքի համար պահվող ակտիվների համար:

Արտաքին գնահատողները ներգրավվում են նշանակալի ակտիվների գնահատման համար, ինչպիսիք են հողը և շենքերը, փոխադրամիջոցները: Արտաքին գնահատողների ներգրավումը որոշվում է ղեկավարության կողմից: Ընտրությունը կատարվում է՝ հիմնվելով այնպիսի չափանիշների վրա, ինչպիսիք են շուկայի մասին տեղեկացվածությունը, վարկանիշը, անկախությունը և մասնագիտական ստանդարտների պահպանումը:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին ղեկավարությունը վերլուծում է այն ակտիվների և պարտավորությունների արժեքների փոփոխությունները, որոնք ենթակա են վերագնահատման Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն: Այս վերլուծության համար ղեկավարությունը ստուգում է հիմնական տվյալները, որոնք կիրառվել են նախորդ գնահատման ժամանակ՝ համադրելով գնահատման հաշվարկի տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի հետ: Ղեկավարությունը Խմբի անկախ գնահատողների հետ միասին համեմատում է յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական արժեքի փոփոխությունը յուրաքանչյուր համապատասխան արտաքին աղբյուրների հետ՝ որոշելու համար տվյալ փոփոխության հիմնավորված լինելը:

Իրական արժեքի հիերարխիա. Խումբն օգտագործում է ֆինանսական գործիքների իրական արժեքների բացահայտման և գնահատման մեթոդների հետևյալ հիերարխիան ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշելու և բացահայտելու համար:

- 1-ին մակարդակ – համանման ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկայում գնանշված գներ (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ. գնահատման այլ մեթոդ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալները, որոնք ունեն նշանակալի ազդեցություն իրական արժեքի գնահատման համար, ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից:
- 3-րդ մակարդակ. մոդելներ, որոնք օգտագործում են մոդելներ, որոնք ունեն նշանակալի ազդեցություն գրանցված իրական արժեքի վրա, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա:

Իրական արժեքի բացահայտման նպատակով Խումբը որոշել է ակտիվների և պարտավորությունների դասեր՝ հիմնվելով ակտիվի կամ պարտավորության բնույթի, բնութագրերի և ռիսկերի և իրական արժեքի հիերարխիայի մակարդակի վրա, ինչպես նկարագրված է վերևում:

Հազ. ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2023թ.	**Իրական արժեքի չափում՝ օգտագործելով**			
	Ակտիվ շուկաների գնանշումներ (Մակարդակ 1)	**Նշանակալից դիտարկելի ելակետային տվյալներ (Մակարդակ 2)**	**Նշանակալից ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (Մակարդակ 3)**	**Ընդամենը**
Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ				
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ				
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	199,957	-	**199,957**
Բաժնային գործիքներ	2,775,053	-	-	**2,775,053**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
Պարտքային գործիքներ	-	18,534,900	-	**18,534,900**
Բաժնային գործիքներ	11,343	-	-	**11,343**
Չգնանշված բաժնային արժեթղթեր – տեղական ընկերություններ	-	-	101,640	**101,640**
Ոչ ֆինանսական ակտիվներ				
Հիմնական միջոցներ - հող և շենքեր, տրանսպորտային միջոցներ	-	-	11,929,139	**11,929,139**
Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	22,665,289	55,494,560	-	**78,159,849**
Պահանջներ բանկերի նկատմամբ	-	32,832,740	66,577,774	**99,410,514**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	-	-	83,406,426	**83,406,426**
Այլ ֆինանսական ակտիվներ	-	-	2,781,553	**2,781,553**
Հաճախորդներին տրված վարկեր	-	-	455,199,337	**455,199,337**
Պարտավորություններ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	-	189,413,283	313,818,367	**503,231,650**
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	21,087,118	-	**21,087,118**
Բանկերից ներգրավված միջոցներ	-	428,504	724,390	**1,152,894**
Ստորադաս վարկեր	-	-	12,661,577	**12,661,577**
Այլ փոխառու միջոցներ	-	-	95,125,094	**95,125,094**
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	-	8,850,003	**8,850,003**

Հազ. ՀՀ դրամ **31 դեկտեմբերի 2022թ.**	**Իրական արժեքի չափում՝ օգտագործելով**			
	Ակտիվ շուկաների գնանշումներ (Մակարդակ 1)	**Նշանակալից դիտարկելի ելակետային տվյալներ (Մակարդակ 2)**	**Նշանակալից ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (Մակարդակ 3)**	**Ընդամենը**
Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ				
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ				
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	363,284	-	**363,284**
Բաժնային գործիքներ	2,153,118	-	-	**2,153,118**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
Պարտքային գործիքներ	-	21,285,791	-	**21,285,791**
Բաժնային գործիքներ	10,638	-	-	**10,638**
Չգնանշված բաժնային արժեթղթեր – տեղական ընկերություններ	-	-	101,640	**101,640**
Ոչ ֆինանսական ակտիվներ				**-**
Հիմնական միջոցներ - հող և շենքեր, տրանսպորտային միջոցներ	-	-	12,824,138	**12,824,138**
Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	21,703,944	66,665,341	-	**88,369,285**
Պահանջներ բանկերի նկատմամբ	-	24,453,149	26,353,081	**50,806,230**
Ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթեր	-	-	90,340	**90,340**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	-	-	53,423,221	**53,423,221**
Այլ ֆինանսական ակտիվներ	-	-	1,528,986	**1,528,986**
Հաճախորդներին տրված վարկեր	-	-	408,439,245	**408,439,245**
Պարտավորություններ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	-	179,310,388	244,858,557	**424,168,945**
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	6,206,060	-	**6,206,060**
Բանկերից ներգրավված միջոցներ	-	6,444,304	3,493,330	**9,937,634**
Ստորադաս վարկեր	-	-	7,805,036	**7,805,036**
Այլ փոխառու միջոցներ	-	-	84,323,152	**84,323,152**
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	-	13,341,098	**13,341,098**

Իրական արժեքով չհաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը. Ստորև բերված է Խմբի ֆինանսական գործիքների հաշվեկշռային արժեքների և իրական արժեքների համեմատությունն ըստ դասերի, որոնք իրական արժեքով չեն հաշվառվում ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում: Աղյուսակը չի ներառում ոչ ֆինանսական ակտիվների և ոչ ֆինանսական պարտավորությունների իրական արժեքները:

Հազ. ՀՀ դրամ	2023թ.			2022թ.		
	Հաշվե-կշռային արժեք	Իրական արժեք	Չճանաչ-ված օգուտ/ (վնաս)	Հաշվե-կշռային արժեք	Իրական արժեք	Չճանաչ-ված օգուտ/ (վնաս)
Ֆինանսական ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	78,159,849	78,159,849	-	88,369,285	88,369,285	-
Պահանջներ բանկերի նկատմամբ	99,410,514	99,410,514	-	50,806,230	50,806,230	-
Ներդրումային արժեթղթեր - ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթեր	-	-	-	90,340	90,340	-
Հաճախորդներին տրված վարկեր	455,199,337	455,199,337	-	408,439,245	407,495,077	(944,168)
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	83,406,426	83,406,426	-	53,423,221	53,423,221	-
Այլ ֆինանսական ակտիվներ	2,781,553	2,781,553	-	1,528,986	1,528,986	-
Ֆինանսական պարտավորություններ			-			
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	503,231,650	503,231,650	-	424,168,945	424,168,945	-
Թողարկված պարտքային արժեթղթեր –	21,087,118	21,087,118	-	6,206,060	6,206,060	-
Բանկերից ներգրավված միջոցներ	1,152,894	1,152,894	-	9,937,634	9,937,634	-
Ստորադաս վարկեր	12,661,577	12,661,577	-	7,805,036	7,805,036	-
Այլ փոխառու միջոցներ	95,125,094	95,125,094	-	84,323,152	84,323,152	-
Այլ ֆինանսական պարտավորություններ	8,850,003	8,850,003	-	13,341,098	13,341,098	-
Ընդամենը իրական արժեքի չճանաչված փոփոխություն			-			**(944,168)**

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքները մոտ են դրանց հաշվեկշռային արժեքներին:

Գնահատման մեթոդաբանություն և ենթադրություններ Ստորև նկարագրված են այն մեթոդներն ու ենթադրությունները, որոնք օգտագործվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում իրական արժեքով արտացոլված ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը որոշելու համար, ինչպես նաև իրական արժեքով չարտացոլված այն հոդվածների իրական արժեքը որոշելու համար, որոնց իրական արժեքը բացահայտվում է:

Ակտիվներ, որոնց իրական արժեքը մոտ է հաշվեկշռային արժեքին

Բարձր իրացվելի կամ կարճաժամկետ մարման ժամկետով (երեք ամսից պակաս) ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համար ենթադրվում է, որ դրանց հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին: Այս ենթադրությունը կիրառվում է նաև ցպահանջ ավանդների և անժամկետ խնայողական հաշիվների նկատմամբ:

Ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափումը

Գույքի իրական արժեքը որոշվել է շուկայական համադրելի մեթոդի կիրառմամբ: Հողի և շենքերի գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում: Սա նշանակում է, որ գնահատողի կողմից կատարված գնահատումները հիմնված են շուկայական գործարքների գների վրա, Էական ճշգրտմամբ՝ հաշվի առնելով կոնկրետ գույքի բնույթը, գտնվելու վայրը կամ վիճակը: Այդ ակտիվների իրական արժեքները գնահատվում են անկախ, մասնագիտական որակավորում ունեցող և անհրաժեշտ լիցենզիաների տիրապետող՝ գույքի գնահատողների կողմից իրականացված գնահատումների հիման վրա: Նշանակալից ելակետային տվյալները և ենթադրությունները մշակվում են ղեկավարության հետ սերտ խորհրդակցությամբ: Լրացուցիչ տեղեկություններ ներկայացված են ստորև:

Հող և շինություններ

Գրասենյակի հողերի և շենքերի իրական արժեքները գնահատվում են եկամտի և շուկայական մոտեցումներով: Եկամուտի մոտեցումը կիրառվել է վարձակալությունից ստացված եկամտի գնահատված հոսքի կապիտալացմամբ՝ առանց կանխատեսվող գործառնական ծախսերի, օգտագործելով շուկայական եկամտաբերությունից բխող զեղչման դրույքաչափը, որը ենթադրվում է նմանատիպ անշարժ գույքի գծով վերջին գործարքներից: Երբ փաստացի վարձավճարը էականորեն տարբերվում է գնահատված վարձավճարներից, ճշգրտումներ են կատարվում վարձակալության գնահատված արժեքի նկատմամբ: Վարձակալված գույքից դրամական միջոցների ներհոսքը գնահատելիս հաշվի է առնվում զբաղվածության ներկա մակարդակը, առկա վարձակալության պայմանները և ապագա վարձակալություններից վարձակալական վճարների ակնկալիքները շենքերի շահագործման մնացած տևողության ընթացքում:

Առավել նշանակալի ելակետային տվյալները, որոնցից որևէ մեկը դիտարկելի չէ, վարձակալության գնահատված արժեքն է, թափուրության մակարդակի և զեղչի դրույքաչափի վերաբերյալ ենթադրությունները: Գնահատված իրական արժեքը մեծանում է, եթե գնահատված վարձակալությունը մեծանում է, թափուրության մակարդակը նվազում է կամ եթե զեղչման տոկոսադրույքը (շուկայական եկամտաբերությունը) նվազում է: Ընդհանուր գնահատումները զգայուն են բոլոր երեք ենթադրությունների նկատմամբ: Ղեկավարությունը համարում է, որ ողջամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրությունների շրջանակը ամենամեծն է վարձակալության արժեքների և թափուրության մակարդակների համար, և որ կա նաև փոխկապակցվածություն այս տվյալների միջև:

Շուկայական մոտեցումն արտացոլում է նմանատիպ գույքի համար վերջին շուկայական գործարքների դիտարկելի գները և ներառում է գույքին բնորոշ գործակիցներով ճշգրտումներ՝ ներառյալ չափը, գտնվելու վայրը, շենքի շինարարական-ինժեներական առանձնահատկությունները, տեխնիկական (ֆիզիկական) վիճակը, ծանրաբեռնվածությունը և օգտագործման նպատակը:

Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներից է՝ ճշգրտումը գույքին բնորոշ գործակիցներով: Այս ճշգրտման չափն ու ուղղությունը կախված է նմանատիպ գույքի դիտարկելի շուկայական գործարքների քանակից և բնութագրերից, որոնք օգտագործվում են որպես գնահատման մեկնարկային կետ: Չնայած այս ելակետային տվյալը սուբյեկտիվ դատողության արդյունք է, ղեկավարությունը գտնում է, որ ընդհանուր առմամբ ողջամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրությունները էական ազդեցություն չեն ունենա գնահատման վրա:

Շենքերի իրական արժեքը դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում՝ հաշվի առնելով գնահատման տեխնիկայի դիտարկելի ելակետային տվյալների նշանակալից դիտարկելի ճշգրտումները (գործակիցները): Համաձայն Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ գնահատման ենթակա գույքը վերագնահատվում է 3 տարին մեկ անգամ, եթե շուկայում էական շեղումներ տեղի չեն ունենում: 2023թ.-ի համար կատարվել է ուսումնասիրություն և ըստ հաշվարկների էական շեղումներ չեն արձանագրվել: 1,225,965 հազ. ՀՀ դրամ ընդհանուր գումարում միջին կշռված շեղումը կազմում է 13.8%:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ. Ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք գնահատվում են օգտագործելով շուկայական ելակետային տվյալներ, հիմնականում տոկոսային և արժութային սվոպեր են և արտարժութային ֆորվարդ պայմանագրեր: Ամենահաճախ կիրառվող գնահատման մեթոդները ներառում են ֆորվարդների գնորոշման և սվոփ մոդելներ՝ օգտագործելով ներկա արժեքի հաշվարկներ: Այս մոդելները հաշվի են առնում տարբեր ելակետային տվյալներ, ինչպիսիք են՝ գործընկերների վարկունակությունը, արտարժույթի սփոթ և ֆորվարդ դրույքները և տոկոսադրույքի կորը:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ Գնահատման մեթոդների և գնորոշման մոդելների միջոցով գնահատված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերը հիմնականում բաղկացած են ՀՀ Կառավարության պարտատոմսերից: Այդ արժեթղթերը գնահատվում են եկամտաբերության կորի միջոցով, ինչը ընդգրկում է շուկայի կողմից դիտարկելի և ՀՀ ԿԲ կողմից հրապարակված տվյալներ:

35 Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս ակտիվների և պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ դրանց ակնկալվող վերականգնման կամ մարման ժամկետների:

Խմբի պայմանագրային չզեղչված պարտավորությունների մարման վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է Ծանոթագրություն 33-ում՝ «Ռիսկերի կառավարում»:

Հազ. ՀՀ դրամ	2023թ.			2022թ.		
	Մինչև մեկ տարի	Ավելի քան 1 տարի	Ընդամենը	Մինչև մեկ տարի	Ավելի քան 1 տարի	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	78,159,849	-	78,159,849	88,369,285	-	**88,369,285**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	199,957	-	199,957	36,273	327,011	**363,284**
Պահանջներ բանկերի նկատմամբ	62,018,357	37,392,157	99,410,514	25,255,153	25,551,077	**50,806,230**
Ներդրումային արժեթղթեր	5,860,266	15,562,670	21,422,936	6,472,071	17,169,456	**23,641,527**
Հաճախորդներին տրված վարկեր	143,455,276	311,744,061	455,199,337	125,673,430	282,765,815	**408,439,245**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	22,914,591	60,491,835	83,406,426	13,192,596	40,230,625	**53,423,221**
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	-	1,775,530	1,775,530	-	1,362,224	**1,362,224**
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	27,110,978	27,110,978	-	25,360,445	**25,360,445**
Այլ ակտիվներ	14,504,430	2,603,823	17,108,253	13,173,420	-	**13,173,420**
Ընդամենը	**327,112,726**	**456,681,054**	**783,793,780**	**272,172,228**	**392,766,653**	**664,938,881**

Հազ. ՀՀ դրամ	2023թ.			2022թ.		
	Մինչև մեկ տարի	Ավելի քան 1 տարի	Ընդամենը	Մինչև մեկ տարի	Ավելի քան 1 տարի	Ընդամենը
Բանկերից ներգրավված միջոցներ	1,152,894	-	1,152,894	9,863,194	74,440	**9,937,634**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	420,892,284	82,339,366	503,231,650	347,776,839	76,392,106	**424,168,945**
Թողարկված պարտքային արժեթղթեր	269,143	20,817,975	21,087,118	4,023,967	2,182,093	**6,206,060**
Այլ փոխառու միջոցներ	24,413,714	70,711,380	95,125,094	23,311,073	61,012,079	**84,323,152**
Ստորադաս վարկեր	105,126	12,556,451	12,661,577	89,389	7,715,647	**7,805,036**
Ընթացիկ հարկային պարտավորություններ	3,812,792	-	3,812,792	4,698,987	-	**4,698,987**
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	732,149	732,149	-	1,016,530	**1,016,530**
Այլ պարտավորություններ	12,880,467	-	12,880,467	17,380,413	-	**17,380,413**
Ընդամենը	**463,526,420**	**187,157,321**	**650,683,741**	**407,143,862**	**148,392,895**	**555,536,757**
Զուտ	**(136,413,694)**	**269,523,733**	**133,110,039**	**(134,971,634)**	**244,373,758**	**109,402,124**

Ժամկետայնության վերլուծությունը չի արտացոլում հաճախորդների ընթացիկ հաշիվների և ավանդների կայունության նախորդ ժամանակաշրջանների տվյալները: Նրանց լուծարումը նախկին ժամանակաշրջաններում տեղի է ունեցել ավելի երկար ժամանակահատվածում, քան նշված է վերը նշված աղյուսակներում: Այս մնացորդները վերը նշված աղյուսակներում ներառված են մինչև մեկ տարի սյունակում:

Համաձայն Հայաստանի օրենսդրության, Խումբը պարտավոր է ավանդները մարել ավանդատուի պահանջով: Տես Ծանոթագրություն 19:

31 դեկտեմբերի 2023թ. *Հազ. ՀՀ դրամ*	**Խնդրահարույց/ ժամկետանց վարկեր**	**Ժամկե-տային**	**Ցպահանջ և մինչև 1 ամիս**	**1-ից 3 ամիս**	**3-ից 12 ամիս**	**1-ից 5 տարի**	**ավելի քան 5 տարի**	**Անժամկետ**	**Ընդամենը**
Ֆինանսական ակտիվներ									
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ			78,159,849						**78,159,849**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ			199,957						**199,957**
Պահանջներ բանկերի նկատմամբ			62,018,357	-	-	-	-	37,392,157	**99,410,514**
Ներդրումային արժեթղթեր			8,070	154,501	5,697,695	10,886,221	1,788,413	2,888,036	**21,422,936**
Հաճախորդներին տրված վարկեր	644,010	8,250,895	15,114,543	21,631,499	97,814,329	190,109,274	121,634,787	-	**455,199,337**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	18,284	903,685	3,530,502	4,218,431	14,243,689	54,803,538	5,688,297	-	**83,406,426**
Այլ ակտիվներ	-	-	2,781,553	-	-	2,603,823	-	11,722,877	**17,108,253**
Ընդամենը	**662,294**	**9,154,580**	**161,812,831**	**26,004,431**	**117,755,713**	**258,402,856**	**129,111,497**	**52,003,070**	**754,907,272**
Ֆինանսական պարտավորություններ									
Բանկերից ներգրավված միջոցներ			851,071	-	301,823	-	-	-	**1,152,894**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ			205,366,218	48,932,110	166,593,956	77,765,752	4,573,614	-	**503,231,650**
Թողարկված պարտքային արժեթղթեր - ՀՀ պարտատոմսեր			-	150,042	119,101	20,817,975	-	-	**21,087,118**
Այլ փոխառու միջոցներ			1,377,464	4,462,755	18,573,495	58,809,216	11,902,164	-	**95,125,094**
Այլ ֆինանսական պարտավորություններ			3,601,395	-	5,248,608	-	-	-	**8,850,003**
Ստորադաս վարկեր			-	-	105,126	1,791,600	10,764,851	-	**12,661,577**
Ընդամենը	**-**	**-**	**211,196,148**	**53,544,907**	**190,942,109**	**159,184,543**	**27,240,629**	**-**	**642,108,336**
Իրացվելիության կուտակային բացը	**662,294**	**9,154,580**	**(49,383,317)**	**(27,540,476)**	**(73,186,396)**	**99,218,313**	**101,870,868**	**52,003,070**	**112,798,936**
Իրացվելիության կուտակային բացը			**(39,566,443)**	**(67,106,919)**	**(140,293,315)**	**(41,075,002)**	**60,795,866**	**112,798,936**	

31 դեկտեմբերի 2022թ. *Հազ. ՀՀ դրամ*	**Խնդրահարույց/ժամկետանց վարկեր**	**Ժամ**	**Ցպահանջ և մինչև 1 ամիս**	**1-ից 3 ամիս**	**3-ից 12 ամիս**	**1-ից 5 տարի**	**Ավելի քան 5 տարի**	**Անժամկետ**	**Ընդամենը**
Ֆինանսական ակտիվներ									
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ			88,369,285						**88,369,285**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ			36,273			327,011			**363,284**
Պահանջներ բանկերի նկատմամբ			25,255,153			1,097,928		24,453,149	**50,806,230**
Ներդրումային արժեթղթեր			8,033	4,799,078	1,664,959	14,208,066	695,994	2,265,396	**23,641,527**
Հաճախորդներին տրված վարկեր	436,221	11,686,759	9,192,960	19,252,386	96,791,863	212,841,439	57,528,223	709,394	**408,439,245**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	10,020	218,607	1,819,257	2,525,913	8,618,799	40,230,625	-	-	**53,423,221**
Այլ ակտիվներ	-	-	2,781,553	-	-	-	-	-	**2,781,553**
Ընդամենը	**446,241**	**11,905,366**	**127,462,515**	**26,577,377**	**107,075,621**	**268,705,069**	**58,224,217**	**27,427,939**	**627,824,345**
Ֆինանսական պարտավորություններ									
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ				9,863,194	-	-	74,440	-	**9,937,634**
Թողարկված պարտքային արժեթղթեր - ՀՀ պարտատոմսեր				194,380,096	22,903,718	130,493,026	71,613,816	4,778,290	**424,168,945**
Բանկերից ներգրավված միջոցներ			-	-	4,023,967	2,182,093	-	-	**6,206,060**
Ստորադաս վարկեր			846,791	3,751,451	18,712,831	55,716,333	5,295,746	-	**84,323,152**
Այլ փոխառու միջոցներ			6,676,121	3,998,386	2,761,354	-	-	-	**13,435,861**
Այլ ֆինանսական պարտավորություններ			-	77,345	12,044	7,715,647	-	-	**7,805,036**
Ընդամենը	**-**	**-**	**211,766,202**	**30,730,900**	**156,003,222**	**137,302,329**	**10,074,036**	**-**	**545,876,688**
Իրացվելիության կուտակային բացը	**446,241**	**11,905,366**	**(84,303,687)**	**(4,153,523)**	**(48,927,601)**	**131,402,740**	**48,150,181**	**27,427,939**	**81,947,657**
Իրացվելիության կուտակային բացը			**(71,952,080)**	**76,105,603)**	**(125,033,204)**	**6,369,536**	**54,519,717**	**81,947,656**	

36 Կապակցված կողմերի բացահայտումներ

Համաձայն «Կապակցված կողմերի բացահայտումներ» ՀՀՄՍ 24-ի, կողմերը համարվում են փոխկապակցված, եթե կողմերից մեկն ունի մյուս կողմին վերահսկելու կամ ֆինանսական կամ գործառնական որոշումներ կայացնելիս զգալի ազդեցություն գործադրելու կարողություն: Յուրաքանչյուր հնարավոր փոխկապակցված կողմի հարաբերություն դիտարկելիս ուշադրություն է դարձվում հարաբերության բնույթի, այլ ոչ միայն իրավական ձևի վրա:

Կապակցված կողմերը կարող են այնպիսի գործարքներ իրականացնել, որոնք չէին իրականացվի չկապակցված կողմերի միջև, և կապակցված կողմերի միջև իրականացվող գործարքների գներն ու պայմանները կարող են տարբերվել չկապակցված կողմերի հետ գործարքների գներից և պայմաններից:

Կապակցված կողմերի հետ գործառնությունների գծով մնացորդները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկայացված են ստորև.

Հազ. ՀՀ դրամ	2023թ.			2022թ.		
	Մայր ընկերություն	**Առանցքային ղեկավար անձնակազմ և նրանց ընտանիքի մերձավոր անդամներ**	**Ասոցիացված ընկերու-թյուններ**	**Մայր ընկերություն**	**Առանցքային ղեկավար անձնակազմ և նրանց ընտանիքի մերձավոր անդամներ**	**Ասոցիացված ընկերու-թյուններ**
Համախառն չմարված վարկեր հունվարի 1-ի դրությամբ	2,127,184	971,585	-	768,800	346,064	-
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	638,672	941,667	-	2,123,658	1,283,469	-
Տարվա ընթացքում մարված վարկեր	(583,349)	(752,215)	-	(768,800)	(658,991)	-
Այլ փոփոխություններ	92,645	3,490	-	3,526	1,043	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված վարկեր, համախառն	2,275,152	1,164,527	-	2,127,184	971,585	-
Հանած՝ արժեզրկման գծով պահուստը առ 31 դեկտեմբերի	(6,754)	(3,185)	-	(6,315)	(2,657)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված վարկեր, զուտ	2,268,398	1,161,342	-	2,120,869	968,928	-
Վարկերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը	8.5%	6.6%	-	8.5.	5.1%	-
Ընթացիկ հաշիվներ և ավանդներ առ1 հունվարի	159	1,547,505	1,656,557	937,666	894,529	282,320
Տարվա ընթացքում ներգրավված ընթացիկ հաշիվներ և ավանդներ	4,640,042	4,450,085	1,484,712	3,519,277	4,389,706	2,218,059
Տարվա ընթացքում մարված ընթացիկ հաշիվներ և ավանդներ	(4,080,144)	(4,400,884)	(991,300)	(4,435,395)	(3,750,199)	(849,483)
Այլ փոփոխություններ	2,307	63,703	2,041	(21,389)	13,469	5,661
Ընթացիկ հաշիվներ և ավանդներ առ 31 դեկտեմբերի	**562,364**	**1,660,409**	**2,152,010**	**159**	**1,547,505**	**1,656,557**

Կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները ներառում են 2024-2039թթ. մարման ժամկետով և 2%-ից 22% տոկոսադրույքով վարկեր, 7.2% միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքով:

Կապակցված կողմերի գործարքներից առաջացող եկամուտներն ու ծախսերը հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2023թ.			31 դեկտեմբերի 2022թ.		
	Մայր ընկերություն	**Առանցքային ղեկավար անձնակազմ և նրանց ընտանիքի մերձավոր անդամներ**	**Ասոցիացված ընկերություններ**	**Մայր ընկերություն**	**Առանցքային ղեկավար անձնակազմ և նրանց ընտանիքի մերձավոր անդամներ**	**Ասոցիացված ընկերություններ**
Տոկոսային եկամուտ վարկերի գծով	181,451	49,049	-	1,980	46,223	-
Տոկոսային ծախս ավանդների գծով	76,885	121,975	153,363	106,577	117,999	76,854

Առանցքային ղեկավար անձնակազմին փոխհատուցումը.

Հազ. ՀՀ դրամ	**2023թ.**	**2022թ.**
Աշխատավարձեր և այլ կարճաժամկետ փոխհատուցումներ	2,893,964	2,560,687
Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ	274,738	1,140,099
Ընդամենը առանցքային ղեկավար անձնակազմին փոխհատուցումներ	**3,168,702**	**3,700,786**

37 Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում

Խումբն ունի բաժնեմաս «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ում, որտեղ Խմբին է պատկանում բաժնետոմսերի 49%-ը (31 դեկտեմբերի 2022թ.՝ 49%): Խմբի ասոցիացված կազմակերպությունը հիմնադրվել է 2013թ.-ին և կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ: Ասոցիացված կազմակերպության հիմնական գործունեությունը պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կառավարումն է: Ասոցիացված կազմակերպության գործունեությունը վերահսկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներդրման հաշվեկշռային արժեքը կազմել է 1,775,530 հազ. ՀՀ դրամ (2022 թ.՝ 1,362,224 հազ. ՀՀ դրամ):

Ստորև ներկայացված է էական ասոցիացված կազմակերպությունների ամփոփ ֆինանսական տեղեկատվությունը

	2023թ.	2022թ.
Ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	94,346	24,649
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,052,954	1,624,416
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	1,520,541	1,321,606
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	150,710	26,363
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	63,499	108,778
Հետաձգված հարկային ակտիվ	11,589	9,086
Այլ ակտիվներ	420,289	301,408
Ընդամենը ակտիվներ	**4,313,928**	**3,416,306**
Պարտավորություններ		
Վարձակալության գծով պարտավորություն	78,505	117,236
Վճարման ենթակա շահութահարկ	423,786	296,100
Վճարման ենթակա գումարներ և հաշվեգրված ծախսեր	188,104	222,921
Ընդամենը պարտավորություններ	**690,395**	**636,257**
Զուտ ակտիվներ	**3,623,533**	**2,780,049**
Խմբի մասնաբաժինը զուտ ակտիվներում	**1,775,530**	**1,362,224**

	2023թ.	2022թ.
Կառավարման վճարներից եկամուտ	3,858,149	2,906,850
Տոկոսային եկամուտ	121,328	92,664
Եկամուտ ֆինանսական խորհրդատվությունից	24,890	20,246
Այլ եկամուտ	1,539	1,707
Զուտ վնաս արտարժութային գործարքներից	(2,053)	(12,990)
Տոկոսային ծախս վարձակալության պարտավորությունների գծով	(12,453)	(16,068)
Անձնակազմի գծով ծախսեր	(289,911)	(187,793)
Միջնորդավճարների գծով ծախս	(580,633)	(499,171)
Վարչական և այլ ծախսեր	(546,794)	(451,239)
Շահույթ մինչև հարկումը	**2,574,062**	**1,854,206**
Շահութահարկի գծով ծախս	(493,781)	(353,503)
Տարվա շահույթ	**2,080,281**	**1,500,703**
Այլ համապարփակ եկամուտ		
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումների գծով չիրացված օգուտ/(վնաս)	188,871	(108,401)
Տարվա այլ համապարփակ եկամուտ/(վնաս)՝ հարկումից հետո	**188,871**	**(108,401)**
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	**2,269,152**	**1,392,302**

Ասոցիացված կազմակերպության շահույթում կամ վնասում և այլ համապարփակ եկամտում խմբի մասնաբաժինը հետևյալն է.

	2023թ.	2022թ.

Հաշվետու տարվա շահույթ	**1,019,338**	**736,475**
Այլ համապարփակ եկամուտ/(վնաս)	92,546	(53,122)
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	**1,111,884**	**683,353**

Խումբը 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար ստացել է 698,577 հազ. ՀՀ դրամ շահաբաժիններ (2022թ.՝ 539,806 հազ. ՀՀ դրամ):

38 Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորությունների փոփոխություններ

Հազ. ՀՀ դրամ	**Ծան.**	**Թողարկված պարտքային արժեթղթեր**	**Այլ փոխառություններ**	**Ստորադաս վարկեր**	**Ընդամենը պարտավորություններ ֆինանսավորման գործունեությունից**
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**20, 21,22**	**5,068,908**	**92,331,761**	**9,794,000**	**107,194,669**
Թողարկումից մուտքեր		2,191,500	34,288,004	-	**36,479,504**
Մարում		(789,212)	(37,932,197)	-	**(38,721,409)**
Վճարված տոկոսներ		(251,934)	(4,881,936)	(2,059,282)	**(7,193,152)**
Անկանխիկ գործարքներ					
Արտարժույթի փոխարկում		(265,302)	(5,052,890)	(1,968,650)	**(7,286,842)**
Վարձակալության պարտավորություններ (ՖՀՄՍ 16)		-	503,590	-	**503,590**
Հաշվեգրված տոկոսներ		252,100	5,066,820	2,038,968	**7,357,888**
Հաշվեկշռային արժեքը 31 դեկտեմբերի 2022թ. դրությամբ	**20, 21,22**	**6,206,060**	**84,323,152**	**7,805,036**	**98,334,248**
Թողարկումից մուտքեր		18,339,013	34,345,599	-	**52,684,612**
Մարում		(3,684,744)	(27,032,928)	4,479,000	**(26,238,672)**
Վճարված տոկոսներ		(1,351,193)	(5,832,291)	(1,852,532)	**(9,036,016)**
Անկանխիկ գործարքներ					
Արտարժույթի փոխարկում		226,439	1,445,312	361,804	**2,033,555**
Վարձակալության պարտավորություններ (ՖՀՄՍ 16)		-	2,092,983	-	**2,092,983**
Տոկոսային ծախս		1,351,543	5,783,267	1,868,269	**9,003,079**
Հաշվեկշռային արժեքը 31 դեկտեմբերի 2023թ. դրությամբ	**20,21,22**	**21,087,118**	**95,125,094**	**12,661,577**	**128,873,789**

«Այլ» տողը ներառում է հաշվեգրված, բայց դեռ չվճարված տոկոսների ազդեցությունը թողարկված պարտքային արժեթղթերի, այլ փոխառու միջոցների և ստորադաս վարկերի վրա: Խումբը դասակարգում է վճարված տոկոսագումարները որպես գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր:

39 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Հիմնական հաշվանցման և համանման պայմանագրերի ներքո հաշվանցման ենթակա ֆինանսական գործիքները հետևյալն են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակները	**Համախառն գումարներ մինչև հաշվանցումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվու-թյունում**	**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված համախառն գումարներ**	**Զուտ գումարը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցումից հետո**	**Հիմնական հաշվանցման և համանման պայմանագրերի ներքո հաշվանցման ենթակա գումարներ՝ չհաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում**		**Զուտ ազդեցու-թյան չափը**
Հազ. ՀՀ դրամ				*Ֆինանսա-կան գործիքներ*	*Ստացված դրամական միջոցներ ի գրավ*	
ԱԿՏԻՎՆԵՐ						
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ						
Տոկոսադրույքի սվոփ	194,548	(4,356)	190,192	190,192	-	-
Արժութային սվոփ	9,765	-	9,765	9,765	-	-
Ներդրումային արժեթղթեր						
Առուվաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված	-	-	-	-	-	-
Պահանջներ բանկերի նկատմամբ						
Հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրեր այլ բանկերի հետ	60,035,070	-	60,035,070	60,035,070	-	-
Հաճախորդներին տրված վարկեր						
Հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրեր	5,676,969	-	5,676,969	5,676,969	-	-
Ընդամենը հիմնական հաշվանցման և համանման պայմանագրերի ներքո հաշվանցման ենթակա ակտիվներ	**65,916,352**	**(4,356)**	**65,911,996**	**65,911,996**	**-**	**-**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ						
Բանկերից ներգրավված միջոցներ						
Վաճառքի և հետգնման պայմանագրեր այլ բանկերի հետ	-	-	-	-	-	-
Ընդամենը հիմնական հաշվանցման և համանման պայմանագրերի ներքո հաշվանցման ենթակա պարտավորություններ	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**

Հիմնական հաշվանցման և համանման պայմանագրերի ներքո հաշվանցման ենթակա ֆինանսական գործիքները հետևյալն են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակները	**Համախառն գումարներ մինչև հաշվանցումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում**	**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված համախառն գումարներ**	**Զուտ գումարը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցումից հետո**	**Հիմնական հաշվանցման և համանման պայմանագրերի ներքո հաշվանցման ենթակա գումարներ՝ չհաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում**		**Զուտ ազդեցության չափը**
Հազ. ՀՀ դրամ				*Ֆինանսական գործիքներ*	*Ստացված դրամական միջոցների գրավ*	
ԱԿՏԻՎՆԵՐ						
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ						
Տոկոսադրույքի սվոփ	333,748	(6,737)	327,011	327,011	-	-
Արժութային սվոփ	36,273	-	36,273	36,273	-	-
Ներդրումային արժեթղթեր						
Առուվաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված	6,019,389	-	6,019,389	6,019,389	-	-
Պահանջներ բանկերի նկատմամբ						
Հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրեր այլ բանկերի հետ	559,459	-	559,459	559,459	-	-
Հաճախորդներին տրված վարկեր						
Հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրեր	1,956,613	-	1,956,613	1,956,613	-	-
Ընդամենը հիմնական հաշվանցման և համանման պայմանագրերի ներքո հաշվանցման ենթակա ակտիվներ	**8,905,482**	**(6,737)**	**8,898,745**	**8,898,745**	**-**	**-**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ						
Բանկերից ներգրավված միջոցներ						
Վաճառքի և հետգնման պայմանագրեր այլ բանկերի հետ	(6,026,642)	-	(6,026,642)	(6,026,642)	-	-
Ընդամենը հիմնական հաշվանցման և համանման պայմանագրերի ներքո հաշվանցման ենթակա պարտավորություններ	**(6,026,642)**	**-**	**(6,026,642)**	**(6,026,642)**	**-**	**-**

40 Կապիտալի համարժեքություն

Խումբը կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են՝ ապահովել Խմբի կապիտալի համարժեքությունը վերահսկողի կողմից սահմանված պահանջներին, և Խմբի կայուն վարկային վարկանիշի և ուժեղ կապիտալի ցուցանիշների պահպանումը՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու նպատակով:

Խումբը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումներ տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Խումբը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

ՀՀ Կենտրոնական բանկը սահմանում և վերահսկում է Բանկի կապիտալի նկատմամբ պահանջները:

Խումբը որպես կապիտալ է ճանաչում այն հոդվածները, որոնք կարգավորման համաձայն սահմանվում են որպես կապիտալ վարկային կազմակերպությունների համար: ՀՀ ԿԲ-ի՝ կապիտալի նկատմամբ պահանջների համաձայն, որոնք հիմնված են Բազելյան համաձայնագրի դրույթների վրա, Բանկի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցությունը (նորմատիվային կապիտալի գործակից) պետք է գերազանցի սահմանված նվազագույն մակարդակը: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս նվազագույն մակարդակը կազմում էր 11% (2022թ. դեկտեմբերի 31՝ 12%): Խումբը 2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պահպանում է կանոնադրական կապիտալի գործակցի գծով պահանջը:

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս կապիտալի համարժեքության կազմը, որը հաշվարկվել է ըստ ՀՀ Կենտրոնական բանկի կանոնակարգի՝ հետագա փոփոխություններով, ներառյալ շուկայական ռիսկերը ներառող փոփոխությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Հազ. ՀՀ դրամ	**2023թ. (աուդիտ չանցած)**	**2022թ. (աուդիտ չանցած)**
1-ին դասի կապիտալ	122,505,579	91,866,748
2-ին դասի կապիտալ	15,241,604	11,744,252
Ընդամենը կապիտալ	**137,747,183**	**103,611,000**
Ընդամենը ռիսկով կշռված ակտիվներ	**698 734 440**	**610,690,247**
Ընդամենը կապիտալ՝ արտահայտված որպես ռիսկով կշռված ակտիվների տոկոս (ընդհանուր կապիտալի ցուցանիշ)	**19.71%**	**16.97%.**

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկերի կշռման գործակիցների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի ու պայմանագրային կողմի հետ կապված վարկային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականները՝ հաշվի առնելով ցանկացած գրավ կամ երաշխիք: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային պարտավորությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր վնասի՝ առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

41 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի պարտատոմսերի ծրագրային ազդագիրը գրանցվել է 2024թ. ապրիլի 10-ին՝ առավելագույնը երեսուն միլիոն ԱՄՆ դոլար և երեսուն միլիարդ ՀՀ դրամ: Առաջին տեղաբաշխումները կկազմեն 5,000,000 ԱՄՆ դոլար և 3,000,000,000 ՀՀ դրամ, համապատասխանաբար 4.5% և 9.5% արժեկտրոնային տոկոսադրույքներով, 30 ամիս շրջանառության ժամկետով:

Հաշվետու ժամանակաշրջանից հետո կամ հաշվետվության ամսաթվի դրությամբ տեղի չեն ունեցել այլ նշանակալի իրադարձություններ, որոնք ենթակա են ներկայացման այս ֆինանսական հաշվետվություններում: